


www.syuniacyerkir.am Սյունյաց երկիր

Եվ բառերի համար քո
մարմարյա...

125 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԾՆՎԵՑ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՀԱՅ
ԱՐՁԱԿԱԳԻՐ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԸ






Ակսել Բակունցի կիսանդրին: Գտնվում է Գորիս քաղաքում, Բակունցի անվան հրապարակում:
Յուզարձանը տեղադրվել է 1964 թվականին:
Ընդգրկված է Գորիսի պատմության և
մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում:
Զանդակագործ՝ ՀՀ ժողովրդական նկարիչ
Գրիգոր Բադալյան:



**ՀԱՄՈ
ՍԱՀՅԱՆ**

*Դու յոթնապատիկ անմեղ նահատակ,
Անհուն, անեղծ այս երկնքի տակ
Որտեղ որոնեմ հանգրվանք քո,
Որ գամ, խոնարհվեմ մի ուշ երեկո,
Գրկեմ շիրիմը քո նվիրական
Եվ այն լիանամ ես աշխական
Մանուշակների անարատ ցողով,
Կորուսող ողբամ ծիրանի փողով:*

ԳՈՂԱՐԱԿԵՐՑ ՀՈՒՇԱՐՁԱՆ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՅԻՆ



Ա.Բ.-ին

...Եվ բառերի համար քո մարմարյա,
 Հնամենի, բուրյան, որպես մեր հին
 Քարաքանդակ անդուռ մատուռների
 Անջընջելի գրերն հնադարյան, –
 Եվ մյուռոնի նման սրբազնագույն
 Քո երգերի մաքուր սկիհներում պահված՝
 Խորհուրդների համար մշտահիշմա,
 Որպես խորհուրդը մեր նաիրական ոգու, –
 Քո «Միրհավի» համար– և լուսեղեն՝
 Արփենիկի հուշով սրբագործված հավետ,
 «Ալպիական ծաղկի» այն բուրավետ,
 Որ բուրելու է հա՛ր աննյութեղեն, –
 Եվ վերջապես քո վեհ, հերոսական
 «Սերմնացանի» համար, որ ձեռքերով վսեմ
 Սև ցելերի վրա մեր գոյության այս սև
 Շաղում է շողք ու սերմ անանձնական, –
 Այս ամենի համար, – և Ծիրանի

Հագարամյա փողի՜ համար քո այն,
 Որ դարերով տենչած խաղաղության
 Երգն է հնչում, – և մեր ժողովուրդը քանի
 Ունի գեթ ափ մի հող արեգակի ներքո՝
 Հնչելու է երգեր եղբայրական, –
 Այս ամենի համար, ճ, խեղճ իմ բարեկամ,
 Ես քեզ օրհնում եմ արդ իմ անաղարտ երգով...
 Այս ամենի համար, – և քո եղբրական
 Տառապանքի համար, որ արդ կրկին
 Վեհություն է խառնում քո անաղարտ երգին–
 Ես քեզ պարզում եմ ձեռք եղբայրական...
 Եվ ներբողում եմ քեզ ահա կրկին անեղծ
 Իմ շուրթերով, ինչպես օրեր առաջ, –
 Երբ դեռ դու այն էիր մի անարատ,
 Եվ ես ընկերն էի քո բանաստեղծ...

ԵՐԻՇԵ ՉԱՐԵՆՑ, 14.10.1936

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՅԱՆ՝ ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԱԳՔԵՐՈՎ



▲ Ռոբերտ
Կամոյան,
«Բակունյան»,
կտավ,
յուղաներկ,
100-70 սմ



Յեղիսակ՝
Գևորգ
Խանադյան


◀ Անհայտ
հեղինակ



ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՅԱՆ՝ ՊԵՐՍՈՆԱԿԱՆ ՄԵԼՈՒՆԵՐԻ ԱՍԻՄԵՏԻԿ



▲ Ակսել Բակունյանի դիմանկարը (1932), հեղինակ՝ Փալուս Թերլեմեզյան



▲ Հեղինակ՝ Մելքոն Յովհաննիսյան




▶ Հեղինակ՝ Ժիրայր Մարտիրոսյան, 2009թ.

▼ Հեղինակ՝ Յենոնիկ Մամյան



▶ Ակսել Բակունյանը մոր հետ, 1960-ականներ, հեղինակ՝ Մարիամ Ասլամազյան






ԱԿՍԵԼ ԲՍԿՈՆՑԻ ԾՆՆՂԱՎԱՅՐ ԳՈՐԻՍԸ

**... Ինձ հասկանալի
է, թե որտեղից են
Ակսելի սքանչելի
սյուժեները, լեզուն:
Այդ բոլորը Գորիսի
աննման բնությունն
է նվիրել նրան:**

Մարտիրոս Սարյան



ԱՎՍԵԼ ԲԱԿՈՒՆՅԻ ՇՆՆՂԱՎԱՅՐ ԳՈՐԻՍԸ



▲ **ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐՅԱՆ,**
Գորիս, 1935թ.



▲ **ԳՈՐԻՍԸ ՊԱՐՈՆՅԱՆ-ՅՈՎԱՍԵՓՅԱՆ,**
բնանկար Գորիսից, 1954թ., կտավ,
յուղաներկ, 50x60 սմ

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐՅԱՆ, Կյանքը Գորիսի
վիմալոր ժայռերում, 1939թ., կտավ
յուղաներկ, 55x65 սմ ▼



▲ **ԺԻՂԱՅՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**



ԳԱՐԻԵԼ ԳՅՈՒՐՅԱՆ, Առավոտը
հին Գորիսում, 1954թ., կտավ,
յուղաներկ, 83x105 սմ ▼



▲ **ՄԵՂՐԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ,** Հին Գորիսը. երեկո,
1940թ., կտավ, յուղաներկ, 68x83 սմ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ.
Ինքը հայոց երկիրն էր,
մեր հողն ու հերկը...

125 տարի առաջ ծնվեց Ակսել Բակունցը...

ՍԱՄՎԵԼ
ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հոբելյանն առիթ օգտագործելով՝ ուզում ենք, Նախնառաջ, գլուխ խոնարհել հայ արձակի աստեղային ճամփորդ, մեր մշակույթի գորավար, մեր ընթացքի առջևից այսօր էլ քայլող Ակսել Բակունցի հիշատակի ու կերպարի առջև: Հոբելյանն առիթ է նորից և նորովի արժևորելու մեծագույն հայ արձակագրի արվեստը, նրանով ներշնչվելու և վեհացնող վայելք ապրելու համար:

Ծնարիտ խոսք կա՝ կան անուններ, որոնք ինքնին վեհություն են և խորհրդանիշ: Կան անհատներ, որոնք այս կամ այն ոլորտում ուղենշել և ուղենշում են ազգային մեր ընթացքը: Հայ գրականության և հայ մշակույթի համար այդպիսի մի ուղենիշ-գազաթ է Ակսել Բակունցը:

Այնպես որ՝ բարեբախտություն է մեզ համար՝ տասնհինգ տարի հետո կրկին անդրադառնալ նրա ստեղծագործություններին, ներկայացնել նրա կերպարի, նրա հանճարեղ գործերի մեր ընկալումը:

Այնուպես աշխարհի մթին կիրճերից բարձրացավ նրա գրանիտե հասակը, և կարողացավ տասը տարվա ընթացքում իր հավերժական տեղը գտնել մեր գրականության Մասյաց գազաթին: Նա դարձավ արևելահայ արդի արձակի հիմնադիրը: Եվ մինչև հիմա անխախտ մնաց առաջապահի նրա դիրքը:

Անշուշտ, նա գիտեր Նախնախնամության կողմից իրեն վերապահված առաքելությունը: Եվ իզուր չէ, որ բանտային խուղում անգամ, ականատեսների վկայությամբ, հիշում էր Վահան Տերյանի երկաթագիր խոսքը՝ կարծեք

իր համար գրված.

«Դու նահատակ պիտի լինես,
Մարգարե ու մարտիրոս,
Խարույկ ու խաչ պիտի ելնես
Ոչ իբրև ստրուկ, այլ՝ հերոս»:

Ակսել Բակունցը տասնամյակներ շարունակ եղել և մնում է հայ գրականության և ընդհանրապես հայ մշակույթի բացառիկ արժեքներից մեկը: Տասը տարվա ընթացքում նա հրատարակեց երկու տասնյակի հասնող գրքեր՝ գեղարվեստական, գյուղատնտեսական և թարգմանական: Շատ-շատ գործեր էլ մնացին կիսատ, մի մասն էլ կորավ:


Պատմվածքների հրատարակված ժողովածուներն են՝ «Մթնածորը» (1927), «Սպիտակ ձի» (1929), «Անձրևը» (1935), «Սև ցեղերի սերմնացանը» (1933), «Քեռի Դավոն» (1936), բնարական պատկերներ՝ «Աշտուղ», «Անտառում» և «Աղոթքը»: 1920-30-ականներին հրատարակվել են նաև գեղարվեստական արժեք ունեցող ակնարկներ, տպավորություններ:

Արձակի փոքր տեսակի (պատմվածք, նորավեպ) հետ մեկտեղ Բակունցը ծավալվել է նաև վեպերում ու վիպակներում: Խոսքը Նախնառաջ երկու ավարտուն վիպակի մասին է՝ «Հովնաթան Մարչ» (1927), «Կյորես» (1936): Ինչպես և՛ հատվածաբար մեզ հասած (ըստ վկայությունների՝ ավարտած) երեք վեպի մասին՝ «Կարմրաբար» (1929), «Որդի որոտման» (1932), «Խաչատուր Աբովյան» (1934-35):

Իհարկե, հնարավոր չէր այդ ստեղծագործությունների գոնե մի մասի վրա շատ թե քիչ հանգամանալից հայացք ձգել, բայց հրապարակվող նյութերում ընթերցողը կգտնի անդրադարձներ:

Շատ կուզենայինք անդրադառնալ բակունցագիտության անցած ճանապարհին, բայց նման հնարավորություն (թերթի ծավալի սահմանափակ լինելու պատճառով) չունեցանք: Այդուհանդերձ հարկ ենք համարում նշել այն գրականագետների անունները, ովքեր տասնամյակների ընթացքում զբաղվել են Բակունցի ստեղծագործությունների ու-





ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

Մոնումենտալ արվեստ (Ակսել Բակունցի կիսանդրին Գորիսում)	2
Դու յոթնապատիկ անմեղ նահատակ (Համո Սահյան)	2
Գոհարակերտ հուշարձան Ակսել Բակունցին (Եղիշե Զարենց, Ա. Բ.-ին)	3
Ակսել Բակունցը՝ գեղանկարիչների աչքերով	4
Ակսել Բակունցի ծննդավայր Գորիսը (լուսանկարներ և գեղանկարներ)	6

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ակսել Բակունց. ինքը հայոց երկիրն էր, մեր հողն ու հերկը... (Սամվել Ալեքսանյան)	8
---	---

ԴՐԱԳՆԵՐ Ա. ԲԱԿՈՒՆՑԻ ԿՅԱՆՔԻՑ

Ակսել Բակունցի ընտանիքը	16
Իմ համառոտ կենսագիրը (Ակսել Բակունց)	18
Ինքնակենսագրություն (Ակսել Բակունց)	19
Արձակագրի այրունակիցները (Արմինե Ավագյան)	20
Գևորգյան ճեմարանի դասախոսները Բակունցի ուսումնառության տարիներին	21

ԳՐԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐ և ԳՐԱԿԱՆ ԿԱԴՐԵՐ

Աշխարհագրացումով Բակունցը հարազատ է Թումանյանին, բայց խառնվածքով և գեղարվեստական մտածողությամբ հաճախ հիշեցնում է Տեղյանին (Հրանտ Թամրազյան)	22
Ակսել Բակունցի համար հայկական պատմության ամենագրավիչ կերպարն էր Խաչատուր Աբովյանը (Սուրեն Աղաբաբյան)	23
Մեծ բարեկամություն. Զարենց և Բակունց (Ռաֆայել Իշխանյան)	26
Ակսելյան քանդակներ (Գուրգեն Մահարի)	32

ԲԱՆԱՍԵՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԲԱԿՈՒՆՑԻՆ

Եղիշե Զարենց (Ա.-ին, Ակսելին՝ «Մթնածոր» կարդալուց հետո, Դեպի լյառը Մասիս (հատված), Թուրք Ակսել Բակունցին՝ գրված Լենինգրադից)	34
Համո Սահյան (Ակսել Բակունցին, Միրիավի կանչն ես տանում դարերին)	35
Գուրգեն Մահարի (Բակունցի անմեղ հիշատակին, Ակսելին)	36
Վահրամ Ավագան (Ակսել Բակունցին, Գորիսում)	36
Վահագն Դավթյան (Չանգեզուրում)	37
Ալբերտ Իսախանյանը՝ Բակունցի հիշատակին	37
Քաջիկ Միքայելյան (Զբոլորեց տարին...)	37
Ակսել Բակունցի լուսանկարները	38

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

Ակսել Բակունցի կյանքի և ստեղծագործության հիմնական տարեթվերը (Դավիթ Գասպարյան)	40
---	----




ԴՐԱԳՆԵՐ Ա. ԲԱԿՈՒՆՑԻ ԿՅԱՆՔԻՑ

Ակսել Բակունցի ընտանիքը

16

ԽՈՍՔ ԲԱԿՈՒՆՑԻ ՍՏԵՐԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մատենախոսություն ըստ Հրանտ Մաթևոսյանի	48
Բնաշխարհի հազարամյա գիրքը (Դավիթ Գասպարյան)	51
Բյուրեղ Բակունց (Հակոբ Կարապետ)	54
«Մենք» պարբերականը (Փարիզ, 1932 թ.) Բակունցի «Մթնածոր» ժողովածուի մասին (Շառառ Նարդուկ)	55
Շարունակվում է Շենի հին կոնիքը... (Կիմ Աղաբաբյան)	56
Ձիապատկերի գունաձևումների խորհրդաբանությունը. Ա. Բակունց, Հ. Մաթևոսյան, Մ. Գալշոյան (Արմենուհի Արզումանյան)	64
Բակունցը՝ կինոսցենարիստ (Վահրամ Օրբելյան)	68
Կանայք Ակսել Բակունցի կյանքում (Թեհմինա Մարության)	70



ԱԿՍԵՆ ԲԱԿՈՒՆՑԻ ՀԵՏՔԵՐՈՎ

1932թ. եղավ Բղենո Նորավանքի վերահայտնությունը, եղավ վերին պարգևումով՝ Ակսել Բակունցի կողմից

124

ԿՈՐՈՒՅԱԼ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԻՊԱՍՔ	
Եղեռնական իրադարձությունների արձագանքները Ակսել Բակունցի արձակում (Ժենյա Քալանթարյան).....	77
Ծիրանի փողը (Ակսել Բակունց)	83
ԹԵ ԻՆՉՊԵՍ ՄԱՐԵՑ ՀԱՅ ԱՐՁԱԿԻ ԱՄԵՆԱՇՈՂՈՒՆ ԱՍՏԴԸ	
Ակսել Բակունց, մեղադրական գործ 4131, ֆոնդ 3036, ութ հատորով, 384 վավերագիր (Դ. Գասպարյան)	87
Ակսել Բակունցի կնոջ ցուցմունքները (Վարվառա Հիվիշյան–Բակունց).....	93
Ակսել Բակունցի բանտային կյանքից (Գուրգեն Մանուկյան).....	97
ՍՅՈՒՆԻՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԸՇԳՐՏՈՒՄԸ՝ ՄԵԾ ԻՇԽԱՆԱՍԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԶԱԿԱՏԵՆ	
Չանգեզուրի և Զյուրդիստանի սահմանագծման հանձնաժողովում Հայաստանի հողօդկումի ներկայացուցիչ Ակսել Բակունցի զեկուցագրերը.....	99
ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԸ՝ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԲԱՆ ՈՒ ՊԱՏՄԱԲԱՆ	
Ճառ խորհրդային գրողների համամիութենական առաջին համագումարում (կրճատումներով).....	103
Բակունցը հայ գրականության լեզվի մասին (Ռաֆայել Իշխանյան).....	105
ԲԱԿՈՒՆՑԱՊԱՏՈՒՄ. ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ԷՋԵՐ	
1926-ի ուշ գարնանը կամ ամռանը Բակունցը երկրաբան Տիգրան Ջրբաշյանի հետ այցելեց Մեղրիի պատմական հնավայրեր.....	110
Կուրիսեցի Անդրեասի դիմումը (Ակսել Բակունց).....	111
Մեղրու «Գյուղատնտեսի այգին», որը հիմնվել է Ակսել Բակունցի հոգածությամբ (Գևորգ Մարգարյան).....	113
Վահրավարում Բակունցին հետաքրքրում էր Կարմիր վանքը (Վահրամ Օրբելյան)	114
Ներքին Հանդում (Լենդորոշ Հակոբջանյան)	116
Կապանցի Արտաշես Ծատուրյանի հուշերը	117

Հայրուրամյա պատերազմ... օրեր և մարդիկ (Գրիշա Սմբատյան)	119
Արևը բարձրանում է սարից... (Համո Սահյան)	120
ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՀԵՏՔԵՐՈՎ122	
ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ...	
Հի մամռոտովի դեպի այս հուշարձանը տանող ճամփան... (Լ. Կարակելյան).....	126
Հայ արձակի մեծանուն վարպետ Ակսել Բակունցի ծննդյան 120-ամյակը (Ն. Միրզոյան)	128
Չրոյցներ Ակսել Բակունցի մասին՝ Մեծ Իշխանասար կատարած ուխտագնացության ընթացքում (Սամվել Ալեքսանյան)	131
Հայոց Արցախում ամեն տարի նշվում էր Ակսել Բակունցի ծննդյան օրը.....	132
13 հունիսի 2022 թ., Արցախի պատվիրակությունը Գորիսում վերջին անգամ մասնակցեց Բակունցին նվիրված ամենամյա տոնակատարությանը	133
ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՏՈՒՆ–ԹԱՆԳԱՐԱՆԸ	
Ակսել Բակունց -125. տոն, որ միշտ մեզ հետ է... (Սուսաննա Բաբաջանյանի հարցազրույցը Վարդան Սարգսյանի հետ).....	135
Ակսել Բակունցի տուն–թանգարանի բացումը.....	138
Ակսել Բակունցի ձեռագիր մատուցներից	139
Պատառիկներ Ակսել Բակունցի տուն–թանգարանի հուշամատյանից	140
Ակսել Բակունցի ոգեղեն օջախում (Սերժ Մանուկյան)....	141
Լուսանկարներ տուն–թանգարանից.....	144
ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՎԵՐԺԱՑՈՒՄ	
Ակսել Բակունցին նվիրված տոն խարկովում. բացվեց հուշաքար (Ն. Միրզոյան)	146
Բակունցի կիսանդրին՝ Գորիսի Ա. Բակունցի անվան դպրոցի բակում	148
Հուշատախտակի տեղադրում Գորիսում.....	149
Ազգային գրադարանում տեղադրվեց Ակսել Բակունցի կիսանդրին.....	150

Համարը տպագրվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (նախարար՝ Ժաննա Անդրեասյան), ՀՀ Ազգային գրադարանի (տնօրեն՝ Աննա Չուլյան), Գորիսի համայնքապետարանի (համայնքապետ՝ Առուշ Առուշանյան) հովանավորությամբ, որի համար երախտագիտություն ենք հայտնում նրանց:

Սյունյաց երկիր	📍 3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:	☎ (+374 285) 5 25 63 (+374 91) 45 90 47 (+374 77) 45 90 47	✉ syuniacyerkir@mail.ru 🌐 www.syuniacyerkir.am
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԸ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:	Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Գրանցման վկայական՝ 01Մ 000231:	Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 19 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1000: Ստորագրված է տպագրության 25.05.2024թ.:	

9 Ի տումնասիրմամբ և հանրայնացմամբ:

Առաջին հոդվածների և ուսումնասիրությունների հեղինակներն էին (1925-30-ական թվականներին) Արտաշես Կարինյանը, Արսեն Տերտերյանը, Հարություն Սուրխաթյանը, Խորեն Սարգսյանը, Ռաֆայել Աթայանը, Արշակ Չոպանյանը, Շավարշ Նարդուկին, Պետրոս Չարոյանը և ուրիշ երախտավորներ:

Բակունցագիտության նոր փուլ սկսվեց 1950-ականների վերջին, որի առաջնեկը «Ակսել Բակունցի ստեղծագործությունը. հոդվածների ժողովածու»-ն էր: Այնուհետև ընթերցողի սեղանին դրվեցին Ռաֆայել Իշխանյանի, Սուրեն Աղաբաբյանի, Էդուարդ Ջրբաշյանի, Հրանտ Թամրազյանի և ուրիշների հոդվածներն ու ուսումնասիրությունները:

Այնուհետև՝ Վաղիմիր Ղազախեցյան, Սերգեյ Աթաբեկյան, Կիմ Աղաբեկյան, Ժելյա Զալախարյան...

Բակունցագիտության մեջ 1970-ականներից սկսած նոր խոսք ասաց Դավիթ Գասպարյանը: Առանձին պետք է դիտել նրա վաստակը՝ իր բերած կենսագրական նորություններով և գրողի անտիպ ժառանգության հավաքական աշխատանքով: Այս տեսակետից հսկայական նոր նյութեր են պարունակում նրա «Փակ դռների գաղտնիքը. Հարենցը, Բակունցը և մյուսները» (1994), «Ակսել Բակունց. ժառանգություն» (1999), «Ալեքսանդր (Ակսել) Ստեփանի Բակունց. մեղադրական գործ N4131» (1999), «Ակսել Բակունց. կյանքը և ստեղծագործությունը» (2009) աշխատությունները: Նա է հայտնաբերել և հրապարակել «Խաչի ստրուկները» համր ֆիլմի սցենարը, Բակունցի կնոջ՝ Վարվառա Չիվիչյանի հույժ կարևոր «Ցուցմունքները»: Հրջանառության մեջ է դրել Ակսել Բակունցի կորած համարվող «Հայկական մանրէ» վիպակի հետ կապված իրողությունները: Հայտնի է, որ տպագրության է պատրաստել Բակունցի անտիպ նյութերի ժողովածու՝ որպես գրողի բառահատույանը լրացնող հինգերորդ հատոր:

Արցախի Հանրապետությունում ևս կային գրականագետներ, ովքեր զբաղվում էին բակունցագիտությամբ: Նրանցից մեկը Նարինե Հովհաննիսյանն է, ում ատենախոսության թեման էր «Մարդու և բնության պատկերման արվեստը Բակունցի արձակում»: Հետագայում գրքի վերածված ատենախոսության որոշ բաժիններ լրամշակվել և հրատարակվել են առանձին-առանձին՝ «Ակսել Բակունցը և ազգային գաղափարախոսությունը», Ակսել Բակունցի «Խաչատուր Աբովյան» վեպը», «Հայ կնոջ կերպարը Ակսել Բակունցի արձակում»:

Բակունցագիտության մեջ յուրօրինակ տեղ են զբաղեցնում գրողին նվիրված բանաստեղծությունները, որոնցից

մի բանիսը ներկայացնում ենք ընթերցողին: Խոսքը մասնավորապես եղիշտ Զարենցի, Գուրգեն Մահարու, Համո Սահյանի, Վահագն Դավթյանի, Վահրամ Ավագանի և Ալբերտ Իսախանյանի բանաստեղծությունների մասին է: Դրանց թվում է Զարենցի գոհարակերտ հուշարձանը՝ նվիրված Ա. Բ-ին՝ «Եվ բառերի համար թո մարմարա...»:

Բակունցի ստեղծագործությունների վերաբերյալ գնահատող խոսք են ասել Եղիշտ Զարենցը, Ավետիք Իսահակյանը, Գուրգեն Մահարին, Մկրտիչ Արմենը, Մարիետա Շահինյանը, Սամուիլ Մարշակը, Յուրի Սամարինը, Սերո Խանգադյանը...

Այսօր կուգենայիսք առանձնացնել Ավետիք Իսահակյանի, Մարտիրոս Սարյանի և Սերո Խանգադյանի գնահատանքի խոսքերը:

Ավետիք Իսահակյան. «Նրա ստեղծագործությունների վրա... անհատական կնիքն է դրված, այնքան թարմ են և ինքնուրույն և զգացված ամեն մի պատկերն ու արտահայտությունը... Այս ժողովածուի («Սև ցեղերի սերմնացանը») մեջ կան շատ մեծ վարպետությամբ ստեղծված պատմվածքներ: Գեղեցիկ են շատ «Սպիտակ ձի», «Ծիրանի փողը», «Բրուտի տղան»: Այնքան նուրբ են հյուսված այս պատմվածքները, մանավանդ «Միրիադ», «Բրուտի տղան», այնպես նուրբ, կարծես հեթիաթ են, կարծես երազ են տեսնում, այնպես կախարդորեն հավիվում են իրար մեջ անցյալն ու ներկան, որ հուշը դառնում է ներկա և իրական ներկան դառնում է երազ...»:

«Հայաստանում կա մի գրող, որի բառերը երգում են կոմիտասյան հանգով և փայլատակում Սարյանի կտավների բոլոր գույներով: Դա Ակսել Բակունցն է: Նա մեր արձակի ամենատաղանդավոր ներկայացուցիչն է»:

Մարտիրոս Սարյան. «... Մշտապես, ներհուն և թախծոտ հայացքով նա ասես հավաքել էր ուզում նորածագ արևի փրկարար գործությունը և կիզել ինչ-որ անլուծելի գաղտնիքների հանգույցը: Մինչև այսօր էլ այրում են մեր հոգին սրբազան երդման պես անարատ նրա «Ծիրանի փողը», «Խոնարհ աղջիկը», «Միրիադ», «Սև ցեղերի սերմնացանը» և, վերջապես, իր՝ Խաչատուր Աբովյանի նման ողբերգականորեն անավարտ «Խաչատուր Աբովյանը»: Հավերժ սիրելի և աչքերիս առջև կենդանի կանգնած Ակսելի յուրաքանչյուր բառի ու դարձվածքի մեջ մերթ մրմնջում են, մերթ՝ երգում Հայաստան աշխարհի երկնահաս լեռներն ու անդնդախոր վիհերը, անհուն երկինքն ու արագավազ գետերը, և այդ ամենից վեհ ու պայծառ Հայաստանի հրաշք արևը»:

Սերո Խանգադյան. «Ակսել Բակունցը հայ գրականության ծիրանի փողն է՝ իր երբեք չմարող ելևէջներով: Մեր բարձրիկ լեռնաշխարհի, մեր խո-

րունկ ծորերի, մեր բարուժայռ հողի այդ քնքուշ միրիադ-երգի ծայրը լսելի, հարագատ ու մայուն է ոչ միայն Մթնածորի ու Այու սարի լանջերին, այլև տափաստանների ու ծովերի լայնքերում: Բակունցը Եղիշտ պատմիչ-վիպասանի նորոգված ոգին է, մեծ մանրանկարիչ Սարգիս Պիծակի գույների նովելային վերածնունդը, Խաչատուր Աբովյանի «Վերքի» առաջին վիպասանողը»:

Մի դիտարկում է՝ Բակունցի ստեղծագործությունը (որոշ գրականագետների կողմից) զուգահեռվել է նորվեգացի մեծ գրող Կնուտ Համսունի (1859-1952թթ.), ռուս մեծ բնախոս-գրող Միխայիլ Պրիշվինի (1873-1954 թթ.) և ռուս գրող Կոնստանտին Պաուստովսկու (1892-1968 թթ.) ստեղծագործությունների հետ:

* * *

Բակունցի գրական ակունքները... Գրականագիտության մեջ այդ հարցի շուրջ բանավեճի մասնակիցների մեծ մասի կարծիքով Բակունցի արվեստը Թումանյանի ավանդների ստեղծագործական շարունակությունն է: Ըստ Սուրեն Աղաբաբյանի՝ Բակունցի հերոսները կարծես Թումանյանի հերոսներն են նոր պայմաններում:

Մինևոյն ժամանակ՝ խառնվածքով ու գեղարվեստական մտածողությամբ Բակունցը հաճախ հիշեցնում է Տերյանին:

Այդ բոլորով հանդերձ՝ Բակունց արձակագիրը շարունակում է հայ ռեալիզմի ավանդները, բերում ուրույն բովանդակություն՝ ստեղծելով նոր դպրոց հայ արձակի մեջ՝ առայսօր ազդելով գրական ճաշակի վրա:

Հարցը ներկայացնում ենք ըստ գրականագետ Հրանտ Թամրազյանի:

Ուշագրավ է նաև Սուրեն Աղաբաբյանի դիտարկումը՝ «Ակսել Բակունցի համար հայկական պատմության ամենագրավիչ կերպարն էր Խաչատուր Աբովյանը»: Չմոռանալ՝ Բակունցը մասնակցեց նաև «Աբովյանի հարցի» գիտական լուծմանը, որը, իհարկե, ոչ միանշանակ ընդունվեց:

Համարում կարևորել ենք Բակունցի գրական կապերը, այդ տեսակետից առանձնացրել Զարենց-Բակունց բարեկամությունն ու գրական կապերը: Երկու մեծ, անկրկնելի և անմահ գրողների՝ փոխադարձ սիրո ու հարգանքի վրա հիմնված մաքուր ու անխաղաղ բարեկամության մասին շատերն են գրել: Նախընտրեցինք սակայն Սուրեն Աղաբաբյանի խոսքը՝ «Ակսել Բակունց» մենագրությունից:

* * *

Համարի խնդիրներից մեկն էլ, անշուշտ, Բակունցի կենսագրությունն ու ստեղծագործությունների մատենագիտությունը ներկայացնելն է:

Երկու հարցն էլ տարիների ընթացքում գրականագետներից շատերի ու-

շաղկապայան են արժանացել: Առավել ուշագրավ է Ռաֆայել Իշխանյանի մենագրությունը՝ «Ակսել Բակունց. կենսագրություն և մատենագիտություն» (Երևան-1960): Սակայն կենսագրությունն ու մատենագիտությունը (ըստ այդ մենագրության) առանձին-առանձին չգետնեցինք համարում, որի համար երկու պատճառ կար: Նախ՝ ծավալը մեծ էր և մեր թերթի տվյալ համարի ձևաչափին չհամապատասխանող: Երկրորդ, այդ աշխատանքը կատարվել էր 1950-ականների վերջին, որից հետո, բնականաբար, հարստացել էր մատենագիտությունը, իսկ կենսագրությանն առնչվող փաստերն ու հանգամանքներն ավելի էին ճշգրտվել:

Եվ ուրեմն՝ գրողի կենսագրությունն ու մատենագիտությունը (լրագրի ձևաչափին համապատասխան) ներկայացնելու ողջամիտ տարբերակը բնասպիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանի ուսումնասիրությունն էր՝ «Ակսել Բակունցի կյանքի և ստեղծագործության հիմնական տարեթվերը»:

Դրան ավելացրել ենք դրվագներ Բակունցի կենսագրությունից՝ լուսանկարներ և տեքստեր, այդ թվում՝ գրողի կողմից 1924 թ. փետրվարի 24-ին գրված «Իմ համառոտ կենսագիրը» և 1932 թ. մայիսի 5-ին գրված «Ինքնակենսագրությունը»:

Ներկայացվող նյութերի թվում է «Արձակագրի արյունակիցները...» հոդվածը՝ տարիներ առաջ մեր պարբերականի կողմից պատրաստված:

Համարի տարբեր բաժիններում, բնականաբար, անդրադարձներ են կատարվում Բակունցի ստեղծագործություններին: Այդ ամենի հետ մեկտեղ՝ առանձին մի բաժնում ներկայացնում ենք հոդվածներ գրողի ստեղծագործությունների մասին: Շատ ենք ափսոսում, որ համարի նախապատրաստության ընթացքում հավաքված կամ պատրաստված մեծաթիվ հոդվածներից մի քանիսն են միայն տեղ գտել համարում: Դրանք են Հրանտ Մաթևոսյանի երեք անդրադարձը, Դավիթ Գասպարյանի «Բնաշխարհի հագարամյա գիրքը», սիյուռնալայ գրող, հրապարակախոս Հակոբ Կարապետյանի հոդվածը՝ «Բյուրեղ Բակունց», սիյուռնալայ գրող, հրատարակիչ Շավարշ Նարդունու հոդվածը «Մթնածոր» ժողովածուի մասին, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կիմ Աղաբեկյանի հոդվածը՝ «Շարունակվում է Շենի հին կռիվը», բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմենուհի Արզումանյանի հոդվածը՝ «Ձիապատկերի գունաձևումների խորհրդաբանությունը. Ա. Բակունց, Յ. Մաթևոսյան, Մ. Գալշոյան», բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Թեմիմա Մարությանի հոդվածը՝ «Կանայք Ակսել Բակունցի կյանքում»:

Համարում որոշակի անդրադարձ է կատարվում կորուսյալ հայրենիքի թեմային, քանզի Արևմտյան Հայաստանին՝ Երկիր Նաիրին վիճակված ճակատագիրն այսօր էլ ուղեկցում է մեզ, որի ամենաողբերգական օրինակը հայոց Արցախի հետ տեղի ունեցածն է:

Բակունցն էր, որ գրականության մեջ թարմ պահեց կորուսյալ հայրենիքի հիշատակը՝ սկիզբ դնելով թեմատիկ-գաղափարական ավանդույթի, որը հետագայում հիմք դարձավ գրական արգասավոր շարժման: Հողի կանչ, հողի պաշտամունք, Երկրի կարոտ... Ահա այդ թեման է իշխում «Ծիրանի փողը», «Լառ Մարգարը», «Սև հացը» պատմվածքներում, «Քեռի Դավն» ակնարկ-պատմվածքում, «Արմաշ» ակնարկում... Թեման չի շրջանցվել «Կարմրաբար» վեպում, «Կյորեն» քրոնիկոնում:

Թեման համարում ներկայացնում է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ժնյա Քալանթարյանը:

Ներկայացնում ենք նաև «Ծիրանի փողը» պատմվածքն ամբողջապես: Դա էլ պատահական ընտրություն չէ: Հենց այդ պատմվածքում է Բակունցը համարձակվում խոսք բացել կորուսյալ Սասունի մասին, հայրենագրված ողբերգական հետևանքների մասին, հայրենի հողի կարոտի և կանչի մասին, հողերի ու հիշատակների մասին, հայրենի եզերք վերադառնալու սպասումի մասին:

Բակունցը չէր կարող չգիտակցել, որ դրանով ինքն իրեն հարվածի տակ է դնում, բայց չընկրկեց ու գնաց ճշմարտության ճանապարհով...

Բակունցը որոշակի ներդրում ունի գրաքննադատության ոլորտում: Հիշենք նրա հոդվածներից մի քանիսը՝ «Հորձա՛նք», «Թե՛ փորձանք», «Միբայել Նալբանդյանը որպես պամֆլետիստ», «Ջոնաթան Սվիֆթը և նրա գիրքը», Լ. Գոգոլի «Տարաս Բուլբա»-ն և այլն: Դրանց, իհարկե, չենք անդրադարձել:

Մինչդեռ ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում Բակունցի ճառը խորհրդային գրողների համամիութենական առաջին համագումարում (կրճատումներով):

Բակունցը, առանց չափազանցության, այսօրվա գրական հայերենի ճարտարապետներից է: Կարևորելով այդ հարցը՝ ներկայացնում ենք Ռաֆայել Իշխանյանի հեղինակած հոդվածը՝ «Բակունցը հայ գրականության լեզվի մասին»:

Նա մարտնչում էր գրականության լեզվի ժողովրդական ոգու, ժողովրդական սկզբունքների հաղթանակի համար, ինչը ենթադրում էր բառապաշարի հարստացում նաև բարբառների հաշվին: Իսկ Կյորենի լեզվի մասին առանձնահատուկ գործվածքով էր խոսում՝ «...Չունեիր ու

չխմիր, այլ միայն այդ լեզվով խոսերիր կամ լսերիր, թե ինչպե՛ս քաղցր ու նուրբ ինչո՞ւններով խոսում է լվացարարուհի Մինան, ինչպե՛ս էր ծոր տալիս, ասես ոչ թե խոսում, այլ ճախարակի առաջ բարակ երգ էր ասում ու բառերը Նստում էին, ինչպես փափուկ մալանջներ... Այդ լեզուն չէր, այլ կարոտ, տխրություն, զայրույթ, այդպես Դաթիկի ծորում երգում էր կաթավը և մթնում կարկաչում էր Ցուրտ աղբյուրը...»: Բայց և ցավով էր նկատում իր կողմից փառաբանված գործիչան բարբառի կործանումը. «Այդքան գեղեցիկ և ինչեղ էր Կյորենի լեզուն: Նա մի չքնաղ գորգ էր՝ նախշերով և վարդ ծաղիկներով մի հին գորգ, ինչպես Մինայի աղջիկ ժամանակ գործած գորգը, որ փռված էր Հաստ Ներսես բեյի դահլիճում: Ինչքան հնամում և մաշվում էր, այնքան շքեղանում էին գորգի գույները, և պատահում էր, որ Մինան, երբ այդ հին գորգը տանում էր գետը և լվանում էր, Մինան լաց էր լինում, և Նրա հետ լաց էր լինում Կյորենի լեզուն...»:

Բակունցը որոշակի հետք է թողել նաև թարգմանչական արվեստում: Դրա լավագույն օրինակն է Նիկոլայ Գոգոլի «Տարաս Բուլբա» վեպի թարգմանությունը (1934 թ.): Ի դեպ, գրել է նաև վեպի հայերեն թարգմանության բառարանը: Բակունցն էր, որ առաջաբանով (Նախաշավիղ) և ծանոթագրություններով, գրական հայերենի փոխադրեց Վարդան Այգեկցու «Աղվեսագիրքը»:

«Վա՛յ ինձ, ով իմ որդիներ, որ աշխարհի պիտի գաք ինձնից հետո, որովհետև ցանկանում եմ ձեզ տեսնել և չեմ կարող, քանի որ գերեզմանի մեջ արդեն հող եմ դարձել: Ապա ուրեմն այս գրքով կխոսեմ ձեզ հետ միևնույն հինգ և միևնույն յոթ սերունդ և հողով կմամ ձեր մեջ», – այսպես ավանդել է Վարդան Այգեցին, մի վանական, ով հեղինակել է բազմաթիվ առակախառն քարոզներ և որի անունով են կոչել միջնադարյան հայ առակների և մանրավեպերի ձեռագիր ժողովածուները, մերթ անկանելով «Գիրք առակաց ասացեալ վարդապետին Վարդանայ ի պետս հոգւոյ և մարմնոյ պիտանի», մերթ՝ «Վարդան Այգեցի վարդապետի ասացեալ» և մերթ՝ «Վարդանագիրք»:

«Նախաշավիղում» Բակունցը նշում է՝ «...Մենք հաճախ գերադասել ենք առակների այն վարիանտները, որոնք «գրեհիկ» հայերեն են և բովանդակությամբ՝ ավելի հարուստ: Առակների մեկնաբանությունները չենք բերել, համարելով հնացած ավելորդաբանություն: Համարյա անփոփոխ են վերնագրերը: Բացի այդ, աշխատել ենք ըստ կարելույն պահել բնագրի ոճը, միաժամանակ նպաստակ դնելով նյութը մատչելի դարձնել ընթերցողների լայն խավերին»:

Բակունցի ժառանգության մեջ բավականին տեղ են գրա-



կում հրապարակախոսական էջերը, գյուղատնտեսության և գյուղի հարցերին նվիրված ակնարկները, նամակներն ու պաշտոնական գրությունները, լրագրային հրապարակումները:

Բակունցը զգալի ավանդ է ներդրել նաև հայկական կինեմատոգրաֆիայի ձևավորման մեջ. այդ մասին է Վահրամ Օրբելյանի հոդվածը՝ «Բակունցը՝ կինոսցենարիստ»:

1920-30-ականներին հայ ժողովուրդն ունեցավ իր տաղանդավոր գավազներից շատերի կորուստը: Զարեցն էր ասում՝ հողմը բշեց ու տարավ՝ նաիրյան հունդը, որ արմատ չձգի մայր հողի մեջ... Ազգային այդ ողբերգության կրողներից մեկն էր Ակսել Բակունցն էր:

Հավատաքննության ենթարկված Ակսել Բակունցի ողբերգական բռնամահը չէր կարող տեղ չգտնել համարում: Իհարկե, չափազանց դժվար էր առանց կսկիծի ու ցավի թերթել նրա կյանքի այդ ժամանակաշրջանին առնչվող նյութերը, բայց...

Մի բանի հրապարակմամբ կամեցանք ցույց տալ, թե ինչպես մեծ գրողը դարձավ արյունոտ խրախճանքի ու կամայականության զոհ:

Այդ նյութերին ծանոթանալիս, իհարկե, Բակունցի կերպարի հանդեպ մեր սերն իրոք անսահման է դառնում:

Մյուս կողմից՝ ինքներս մեզ հարց ենք տալիս՝ կկարողանա՞նք անցյալում թողնել հավատաքննությունը, թե՞ կշարունակենք շունչ տալ դրա նոր դրսևորումներին: Կկարողանա՞նք տեղ չթողնել, որ մեր առջև նույնպես չծառանա Աթա ապորն ուղղված հարցը՝ «... Թե հայերը թուրքի են սպանում, ախր դուք էլ հայ եք, բա ձեզ ինչո՞ւ են սպանում»:

Բակունցի ողբերգական բռնամահի հանգամանքներին ընթերցողը կարող է ծանոթանալ Դավիթ Գասպարյանի ուսումնասիրությունից՝ «Ակսել Բակունց. մեղադրական գործ 4131, ֆոնդ 3036, ութ հատորով, 384 վավերագիր», Ակսել Բակունցի կնոջ՝ Վարվառա Զիվիշյանի ցուցմունքներից (15.09.1954 թ.) և Գուրգեն Մանուկյանի՝ Բակունցի բանտային կյանքին առնչվող հուշագրությունից:

Ներկայացվող նյութերը, կարծում ենք, ամբողջական պատկերացում են տալիս այն մասին, թե ինչպես մարեց հայ արձակի ամենաշողուն աստղը:

Բակունցը երկրի համար աղետալի ժամին ոչ միայն եղավ ռազմաճակատի առաջնագծում, այլև մասնակցեց պատերազմներից հյուծված, եղեռնից ջլատված հայրենիքի վերականգնմանը:

Հետաքրքիր դրվագ՝ այդ շրջանին առնչվող: 1920-ականներին նա կազմեց մի աշխարհագիր, որի համաձայն Զանգեզուրը (առանց Մեղրիի) զբաղեցնում էր

4152 քառ. կմ տարածք՝ վարչականորեն բաժանված Գորիսի, Կապանի և Սիսիանի գավառակների, բաղկացած Գորիս քաղաքից և 137 գյուղից: Յոթ ամիս անց Բակունցն ուղղում է կատարում աշխարհագրի մեջ՝ գյուղերի թիվն ավելացնելով 20-ով: Բայց դա տեքստային վրիպակի շտկում չէր: Այդ ժամանակ Կովկասի կառավարիչների որոշմամբ փոփոխություններ էին կատարվում Անդրֆեդերացիայի երեք հանրապետության սահմանների մեջ: Բակունցն այդ նպատակով ստեղծված պետական հանձնաժողովի անդամ էր: Եվ նրան, երկրամասի անգերազանցելի իմացության շնորհիվ, հաջողվում է չափարարներին համոզել՝ սահմանաթերթը տեղադրելու այնպես, որ Զանգեզուրից (հատկապես Կապանի տարածաշրջանից) օտարված քսան գյուղ վերստին համարվեն Հայաստանի մաս:

Մեր ժամանակների համար հույժ կարևոր պատմական այդ անցքի վրա լույս սփռելու նպատակով ներկայացնում ենք Զանգեզուրի և Զյուլդիստանի սահմանագծման հանձնաժողովում Հայաստանի հողժողովի ներկայացուցիչ Ակսել Բակունցի զեկուցագրերը:

Բակունցի գործերն ունեն նաև պատմական ընդգծված տեսանկյուն, ավելի ճիշտ՝ դրանց մի մասը հայ գյուղի պատմական անցյալի տարեգրումն է, յուրօրինակ սկզբնաղբյուր՝ 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի Սյունիքի համար: Վերը թերթեցնեք նրա ցանկացած գործ «Գավառական նամակներից», «Մեր գյուղերում» ակնարկաշարից: Եվ կհամոզվենք վերստին՝ հանձին Բակունցի գործ ունենք մեծ հետազոտողի և վավերագրողի հետ: Դժվար է պատկերացնել, որ այսօրվա կամ ապագայի պատմագիրը երբևէ կկարողանա թղթին հանձնել Գորիսի, Սիսիանի, Կապանի այդ ժամանակվա լիարժեք պատմությունը՝ առանց Բակունցի ստեղծագործությունների պատշաճ իմացության: Նա, հիրավի, մեր բնաշխարհի, մեր երկրամասի բացառիկ գիտնակ էր: Ուշագրավ են նաև դարերի խորքից եկող տեղանունները, որոնք արտահայտվել են նրա ստեղծագործություններում, որոնք հավաքելու, ի մի բերելու և տեղորոշելու, ստուգաբանելու պարագայում կունենանք պատմաաշխարհագրական մի բացառիկ հանրագիտարան Սյունիքի մասին:

Բակունցի ողբերգական բռնամահից անցել է 87 տարի, բայց նրան հիշում են Սյունիքի ամենատարբեր բնակավայրերում, նրա մասին սերնդեսերունդ փոխանցված հիշողություններ են շրջանառվում:

Մեղրիում, օրինակ, հիշում են, որ 1926 թ. Բակունցը երկրաբանների հետ այցելել է իրենց տարածաշրջան: Հիշում

են գրողի ակնարկը՝ կուրիսեցի Անդրեասի մասին: Մեղրեցիները գիտեն, որ իրենց «Գյուղատնտեսի այգին» հիմնվել է Բակունցի հոգածությամբ: Հիշում են Վահրամարում...

Բազմաթիվ են Բակունցի հետ կապված հիշողությունները Կապանի տարածաշրջանին և մասնավորապես Ներքին Հանդիս, Ծավին, Հիկահողին առնչվող:

Հիշում են Սիսիանի տարածաշրջանում. դրա լավագույն օրինակը Համո Սահյանի ակնարկն է՝ «Արևը բարձրա՛նում է սարից»:

Եվ, որ հետաքրքիր է, գյուղերում հանդիպած շատ-շատ մարդիկ դարձել են նրա հերոսների նախատիպեր:

Հիշողություն և հուշարձանացում... 1964 թվականին Գորիսում բացվեց Ակսել Բակունցի հրաշալի հուշարձանը, քանդակագործ՝ ՀՀ վաստակավոր նկարիչ Գրիգոր Բադալյան: Այդ մասին է «Սովետական Հայաստան» թերթի 1964 թ. հունիսի 16-ի հրապարակումը:

Գրողի կիսանդրին է՝ Գորիսի Ակսել Բակունցի անվան դպրոցի բակում, քանդակագործ՝ Միքայել Ղուկասյան:

Բակունցի կիսանդրու տեղադրումն է Ազգային գրդարանում (7 հոկտեմբերի 2016թ.), քանդակագործ՝ Գեոտիկ Բադալյան, հովանավոր՝ Սուրեն Խաչատրյան:

Խարկովի Վ. Դոկուչանի անվան ագրարային համալսարանում Բակունցի հուշաքարի բացման արարողությունն է (25 մայիսի 2019 թ.), որին մասնակցում էր նաև Գորիսի պատմիկությունը:

Հուշատախտակի տեղադրումն է Գորիսի Կոմիտասի փողոցի այն շենքի պատին (13 հունիսի 2019 թ.), որտեղ գործել է քաղաքի երբեմնի ծխական դպրոցը, որտեղ 1905–10 թթ. ուսում է ստացել Բակունցը:

Ժամանակ առ ժամանակ Գորիսում անց են կացվել գիտաժողովներ՝ նվիրված Բակունցի գրական ժառանգությանը: Ուշագրավ էին հատկապես գրողի 110 և 120 ամյակներին նվիրված գիտաժողովները՝ գրականագիտության երևելի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Բակունցի տարեդարձերի առիթով մշտապես միջոցառումներ են կազմակերպվել հայոց Արցախում, ինչը ևս մեկ անգամ վկայում է, որ Մթնածորից միևնույն Մռավ հայրուր տարի շարունակ հնչում էր Միրհավի կանչը...

Բակունցի տարեդարձերի առիթով գրեթե միշտ Գորիս էր այցելում հայոց Արցախի պատմիկությունը: Երբեք չենք մոռանա 2022 թ. հունիսի 13-ը. որևէ մեկի մտքով չէր անցնում, որ Արցախի պատմիկությունը վերջին անգամ է այցելում Գորիս, որ ամիսներ հետո հայոց հնամենի այդ երկրամասը շրջափակված մեջ է հայտնվելու, ավելի ուշ՝ հայաթափ-

վելու, որ մեր մեծ բարեկամ Վարդան Յակոբյանը հրաժեշտ է տալու երկրային կյանքին և նրա շիրիմը նույնպես մնալու է բռնազավթված, դավաճանված, ուրացված Արցախում:

Գործում նաև ավանդույթի ուժ են ձեռք բերել Բակունցի մանկության հետքերով, գրողին առնչվող վայրերով շրջագայություն-ուխտագնացությունները: Դրանցից մեկը՝ կապված Մեծ Իշխանասար կատարած ուխտագնացության հետ (5 հուլիսի 2020 թ.), ներկայացնում ենք համարում: Ըստ Վախթանգ Անանյանի՝ Իշխանասարը և նրա մերձակայքը Բակունցի պաշտելի վայրերից էին: Ինքը՝ Բակունցն էր ասում Վախթանգ Անանյանին՝ «... Ախ, ուրիշ բան չեմ ուզում, քեզ հետ ձիերից իջնե՛նք Իշխանասարի անմահական աղբյուրներից մեկի մոտ, ծաղիկների վրա փռե՛նք մեր յափնջիները և չոբե՛նք, խմե՛նք քթաքաղ գուլաջուր...»:

Ներկայացնում ենք Ակսել Բակունցի տուն-թանգարանը, որը, Սիլվա Կապուտիկյանի բնորոշմամբ՝ «...Սրբություն է մեզ համար, կրկնակի սրբություն, որովհետև փոխարինում է նաև Բակունցի շիրմին»:

Թանգարանը լուսանկարներով ցուցադրելուց բացի ներկայացնում ենք տուն-թանգարանի բացման տարեգրությունը (17 սեպտեմբերի 1970 թ.):

Թանգարանն ունի հուշամատյան՝ երեք գրքով: Համարը պատրաստելու ընթացքում ծանոթացանք հուշամատյանի գրառումներին: Համարում գետնից կարողացանք միայն բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Մարգարյանի, բանաստեղծ Սիլվա Կապուտիկյանի, գրող և հրապարակախոս Վարդգես Պետրոսյանի, բանաստեղծի եղբայր Վահան Բակունցի գրառումները:

Հուշամատյանի երեք գրքին ծանոթանալիս ուշագրավ մի հանգամանք նկատեցինք՝ հանրապետությունում, Արցախում հավանաբար չկա մի բնակավայր, որի ներկայացուցիչներն այցելած չլինեն տուն-թանգարան և իրենց տպավորություններն արտահայտած չլինեն: Դա ևս վկայություն է այն իրողության, որ Բակունցը վայելել ու վայելում է համաժողովրդական սեր ու հարգանք:

Մի փոքր ավելի ընդարձակ է Սերժ Մանուկյանի տպավորությունը (մամուլում հրապարակված), ով եկել էր Աշտարակից՝ տուն-թանգարանին նվիրելու Յենրիկ Մամյանի հեղինակած գեղանկարը:

Բակունցի ձեռագիր մատույներից ենք (թանգարանում պահվող) մի քանիսը ներկայացնում:

Եվ, իհարկե, տուն-թանգարանի վաղից Վարդան Սարգսյանի հետ հարցազ-

րույցն է, որ վարում է Սուսաննա Բաբաջանյանը:

Տուն-թանգարանի գործունեության մեջ, հատկապես վերջին շրջանում, զգալի տեղ է զբաղեցնում գրականագիտական բաղադրիչը, որը պայմանավորված է Թեմիկա Մարությանի աշխատանքով: Որքան տեղյակ ենք՝ այսպիսի սկզբունք է որդեգրել երիտասարդ գրականագետը՝ «Մեր խնդիրը ոչ թե պետք է լինի գրողի կյանքի դաժան պատմությունը ներկայացնելը, այլ ցույց տալը՝ ո՞րն է նրա կենդանության գաղտնիքը, ինչո՞ւ են մայրուն նրա երկերը»:

Բակունցագիտության ոլորտում նրա ուշագրավ հոդվածներից են՝ «Կանայք Ակսել Բակունցի կյանքում», «Ակսել Բակունց-Հայկ Դանդաշյան. թանգարանի նվիրյալները», «Յո՛ւ երթաս, Սիրաս», «Հովհաննես Թումանյան-Ակսել Բակունց. կենսագրական նոր փաստեր և առնչություններ»:

Բակունցը որքան հմայիչ է իր ստեղծագործություններում, նույնքան է՝ կյանքում՝ որպես մարդ:

Ասել է՝ որքան շատ բան կարող ենք վերցնել Բակունցի գեղարվեստական ժառանգությունից, նույնքան (գուցե և ավելի) կարող ենք սովորել Բակունցից՝ որպես բարձր բարոյականության տեր, մարդկանց ցավերով ու հոգսերով ապրող, զգայուն և չափազանց բարի մարդուց:

Դրանում ևս մեկ անգամ համոզվում ենք, երբ ծանոթանում ենք ժամանակակիցների հուշերին:

Հարկ ենք համարում երախտագիտության խոսք ասել լուսահոգի Նինա Հովսեփյանի, Ցուլիետա Թուկայանի և Քաջիկ Միքայելյանի հասցեին, ովքեր ժամանակին հավաքեցին և 1999 թ. հրատարակեցին «Ակսել Բակունցը ժամանակակիցների հուշերում» գրքույկը:

Ցավով, այդ հուշերից մի քանիսը կարողացանք ընդգրկել համարում՝ Արտաշես Ծատուրյան (Ակսել Բակունցի մասին), Գուրգեն Մահարի (Ակսելյան քանդակներ), Գուրգեն Մանուկյան (Ակսել Բակունցի բանտային կյանքից), Վարվառա Բակունց-Հիվիջյան (Ցուցմունքներ)...

Ակսել Բակունցին Լենինգրադից հղած «թղթում» Հարենցն ուշագրավ միտք է հայտնում՝ «Մենք շատ էինք անփոյթ մեր հանճարի հանդեպ»:

Այդ եզրահանգումը, առանց վերապահումի, կարող ենք օգտագործել և՛ Հարենցի, և՛ Բակունցի պարագայում:

Մեր սերնդի խնդիրն է՝ գոնե ուշացումով լրացնել չարվածը, բաց թողնվածը:

Բակունցն արիսիվ չունի, ամեն ինչ, կարծեք, հրո ճարակ է դարձել:

Դեռևս գտնված չէ գրողի գերեզմանը,

և այդ ուղղությամբ աշխատանք չի տարվում:

Որոնողական պատշաճ աշխատանք չի տարվել և տարվում նրա կորսված ձեռագրերը, անտիպները՝ հայտնաբերելու ուղղությամբ:

Բակունցի հիշատակն առ այսօր պատշաճորեն հավերժացված չէ մայրաքաղաքում:

Անհրաժեշտ է ի մի բերել ժամանակ առ ժամանակ անցկացվող գիտաժողովներում և այլ առիթներով Բակունցի ստեղծագործությունների մասին հնչող զեկուցումները, հրապարակվող հոդվածները, ուսումնասիրությունները և դրանք հրատարակել առանձին ժողովածուով:

«Բրուտի տղան» պատմվածքում Բակունցը մտահոգություն-ցանկություն է հայտնում՝ «Ուզում եմ, որ այս անգարդ տողերը մնան այնքան, որքան կմա մեր քարափը»:

Այսօր վերստին կարող ենք փաստել՝ այդ ցանկությունն իրականություն է դարձել: Եվ 125 տարի անց Ակսել Բակունցի անունն ու վաստակը, ինչպես ալպիական ծաղիկները, թարմ ու բուրավետ են...

Տասնամյակներ շարունակ երբեմն թվում էր, թե կորուսյալ հայրենիքի մասին Բակունցի մտածումները մնացել են հեռավոր անցյալում: Սակայն Արցախյան ողբերգությունը ստիպեց նորովի հիշել և նորովի իմաստավորել կորուսյալ հայրենիքի վերաբերյալ ակսելյան մտքերը: Դրա արտահայտություններից է համարի վերջին էջը՝ հայոց սրբազան լեռան՝ Արարատի պատկերով և հայրենակարոտ Հագրոյի խոսքով, որի հանդեպ հայ ժողովրդի որևէ սերունդ (ներկայում և ապագայում) չպետք է կորցնի հավատը՝ «Էսօր դուժման է մեր լեռան վրա, վաղը նորից արև կլինի»:

Նորովի է իմաստավորվում նաև Նախրապան Պետու կերպարը... «Այու սարի լանջին հիմա մի կտոր տեղ կա, որ կանաչն ավելի փարթամ է, ավելի մուգ: Փարթամ կանաչի տակ փտում են ոսկորները Պետու»: Այդպես է՝ հող հայրենին ավելի է կարծրանում, ավելի է հայրենանում ու քաղցրանում իր Նահատակ գավակների արյամբ...

Եվ ինչպիսի փորձություններով էլ անցնենք, միևնույն է, հայոց երկրի ու հայոց արժանապատվության համար Նահատակված ամեն մի հայորդու անուն (ի վերջո) սրբություն է լինելու, ոգեշնչման աղբյուր, և նրանց շիրմների շուրջը կանաչն ավելի փարթամ է լինելու, ավելի մուգ, ինչպես մահակը գենթով փոխարինած, թուրքի գնդակից խրամատում գոհված Պետու դեպքում, ում մահով գյուղը նույնիսկ լաց չեղավ, քանզի հոգսեր շատ ուներ...

||

ԴՐՎԱԳՆԵՐ Ա.ԲԱԿՈՒՆԳԻ ԿՅԱՆՔԻՑ Ակսել Բակունցի ընտանիք



◀ Ակսել Բակունցը
ծնողների՝ Ստեփան
Թևոյանի և
Բոխչազյուկի հետ



▲ Ակսել և Վահան
Բակունցներ



▶ Բակունցը մոր
հետ

ԴՐՎԱԳՆԵՐ Ա.ԲԱԿՈՒՆՅԻ ԿՅԱՆՔԻՑ

Ակսել Բակունյի ընտանիք



▲ Բակունյի ընտանիք



Ակսել Բակունյի որդի՝
Սևադա Բակունյը



Բակունյը, կինը
և որդին ▶



ԴՐԱՍՏԱՆԵՐ Ա. ԲՍԿՈՒՆՅԻ
ԿՅՈՒՆՔԻՑ

Իմ համառոտ կենսագիրը

Ծնվել եմ 1899թ. Գորիսում: Ծնողներս եղել են ընչազուրկ բաղաբացիներ: Սովորել եմ բաղաբի դպրոցում, ավարտել եմ 1910 թ. և մտել ճեմարան (Էջմիածնում): 1914թ. ծանոթացել եմ դաշնակցության գործունեության հետ, 1915թ. օգոստոսին բանտարկվել եմ Գորիսում, Շուշվա «Փայլակ» թերթում Գորիսի ադմինիստրացիայի հասցեին ֆելիետոն գրելու համար:

Ընտանիքի ծանր նյութական վիճակը ստիպում էր ինձ ծառայության մտնել շատ կանուխ, դեռ 1912թ. (բաղաբի գրադարանում, ռեպետիտոր և այլն): Բանտարկությունից հետո ութ ամիս պաշտոնավարել եմ Չանգեզուրի Լոր գյուղում, որպես ուսուցիչ: 1916թ. աշնանը շարունակել եմ ընդհատված ուսումս, մինչև 1917թ. (ճեմարանը ավարտել եմ 1917թ.):

1917թ. փետրվարյան հեղաշրջումից հետո մինչև 1917 թ. նոյեմբերը եղել եմ Չանգեզուրում, դաշնակցական կոմիտեի անդամ, շրջիկ - հրահանգիչ, կոմիտեի բարտուղար. Չանգեզուրի կողմից մասնակցել եմ 1917 թ. ապրիլի վերջին Բաքվի դաշնակցական կոմիտեի ռայոնական ժողովին: Դեկտվարել եմ Սահմանադիր ժողովի ընտրությունները Դափանի շրջանում: Այդ ժամանակաշրջանում (15-17 թթ.) աշխատակցել եմ «Հորիզոնին» և «Աշխատավորին»: 1917 թ. վերջին (նոյեմբեր) եկել եմ Երևան, ապա Էջմիածին (ճեմարան), ուր կուսակցության հրահանգի համաձայն, ճանապարհվել եմ Երզրում, որպես կամավոր: Սովորել եմ Երզրումի պեճոնայա Կոմանդա-ում, մասնակցել եմ Երզրումի դաշնակցական կոմիտեի աշխատանքին՝ մասնավոր բանակի մեջ: Երզրումից անցել եմ Մամախաթուն և Բայբուրդ, մասնակցելով բոլոր կռիվներին:

Մինչև 1918թ. հոկտեմբերը եղել եմ բանակի շարքերում, որպես զինվոր



... Խարկովում ծառայել եմ պետական հիմնարկներում, տարել եմ կուլտուր-կրթական աշխատանք, կազմակերպել եմ մի շարք դասախոսություններ, ակտիվ մասնակցություն ցույց տվել Խարկովի Շահումյանի անվան բանակումբի աշխատանքին:

”

մասնակցել եմ Երզրում-Սարիղամիշ-Դարս-Սեյմ-Արդահան և մինչև Սարդարապատ եղած կռիվներին և ապա հայ-տաճկական առաջին հաշտությունից հետո (1918 թ.) ենթարկվել զորացրման ու փոխադրվել Երևան: Դարսում եղած ժամանակ մասնակցել եմ «Ռազմիկ» թերթի խմբագրման աշխատանքներին: Երևանում տեղավորվեցի «Լույս» տպարանում սրբագրիչի պաշտոնով, ապա սրբագրում էի «Չանգը» (դաշնակցության Երևանի կոմիտեի օրգան): Եղել եմ «Չանգի» խորհրդակցորդ, «Հառաջ»-ի խմբագրության թարգման և լրատու, «Հայաստանի աշխատավորի» խմբագրության աշխատակից: Դաշնակցական պառլամենտում մինչև 1919 թ. հոկտեմբերը եղել եմ Նիստերի արձանագրող (ստենոգրաֆիստ):

Այդ ժամանակ, և մասնավոր պառլամենտի աշխատանքների ընթացքում, իմ առաջ առաջացել էր տարակուսանք ու դժգոհություն դաշնակցության հանդեպ: Օգտվելով այն վատ տպավորությունից, որ թողել էր դաշնակցության կալիցիան ժողովրդական կուսակցության հետ երիտասարդ դաշնակցականների վրա, մի փոքր խմբակի հետ մեզ հաջողվեց կազմել ժողովրդական մի ցույց ընդդեմ «Ժողովրդական» կուսակցության (կադետների): Այդ ցույցը, ինչպես և շատ ինցիդենտներ, դաշնակցության ներ-

կուսակցական մի շարք հարցեր ու նրա վարած քաղաքականությունը, պատճառ դարձան, որ 1919թ. նոյեմբերին հեռանայի Հայաստանից դեպի Թիֆլիս: Թիֆլիսում մտել եմ Թիֆլիսի պոլիտեխնիկումի գյուղատնտեսական ֆակուլտետը, միևնույն ժամանակ և պաշտոնավարել եմ Մոսկվայի կոմիտեի որբերի գիմնազիայում: Աղբյուրների խորհրդայնացումից անմիջապես հետո անցել եմ Ռուսաստան (1920թ.) և հաստատվել Խարկովում:

Խարկովում 1920թ. մտել եմ Ուկրաինայի գյուղատնտեսական ինստիտուտը և ավարտել 1923 թ. հուլիսին: Խարկովում ծառայել եմ պետական հիմնարկներում, տարել եմ կուլտուր-կրթական աշխատանք, կազմակերպել եմ մի շարք դասախոսություններ, ակտիվ մասնակցություն ցույց տվել Խարկովի Շահումյանի անվան բանակումբի աշխատանքին:

1923 թ. դեկտեմբերին ընկեր Գուրգեն Խարմանդարյանի աջակցությամբ, Խարկովում փորձել եմ նախաձեռնել լիկվիդացիոն շարժում դաշնակցականների մեջ: Այդ շարժումը, սակայն հաջողության չհասնեց:

1923 թ. հուլիսի վերջերին վերադարձել եմ Հայաստան:

Երկրի վիճակին, մասնավոր դաշնակցության վերջին տարիների գործունեության հետ տեղի ու տեղը ծանո-

ԴՐԱՍԳՆԵՐ Ա. ԲԱԿՈՒՆՅԻ ԿՅՈՒՆՔԻՑ

Ինքնակենսագրություն

Ծնվել եմ 1899 թ., Գորիս: Ծնողներս ունեցել են և՛ հող, և՛ հարստություն, բայց ես չեմ տեսել ինչ այդ հողը, և ո՛չ հարստությունը: Ես հիշում եմ մի զարհուրելի չքավորություն, «մի տուն լիքը մանուկներ», և այդ՝ զավառական քաղաքում, որտեղ հասարակական դիրքը որոշում էին կուպեցի արշիներ և ցիտակների ցիտեր:

1905-ին գնացել եմ ծխական դպրոց: Գնացել եմ, այսինքն՝ իմ կամքով և իմ նախաձեռնությամբ: Սովորել եմ 5 տարի՝ հայոց լեզու, մի քիչ ռուսերեն, մի քիչ աշխարհագրություն, բավական շատ հայոց պատմություն, և՛ երգ, և՛ վայելագրություն: Կար աշակերտների մի կատեգորիա, որ ձրի էր գնում տոնածառի, թռչակ էր վճարում, գրքերը դարձնում էր տալիս: Եվ այդ բոլորը որպես «ազգային բարեգործություն», նվաստացնող պոնապոյով: Ես այդ ցանկում էի:

Այսպես կոչված, «առաջադեմ» աշակերտ էի և ավարտելուց ստացա «Վարդանի Ավարայրի դաշտում» նկարը և «Ծաղկեփունջ» գիրքը: 1910 թվի ամռանը «Սասուն» գրախանութում (այդ մեր քաղաքի ազգային ինտելիգենցիայի հավաքատեղին էր) որոշեցին ինձ ուղարկել Էջմիածին՝ ճեմարան (մայրս ասում էր՝ Էջմիածի, և լաց էր լինում, որ գնում եմ «հայոց Յայրիկի» մոտ):

1910 թվին «ուսումնական» (այդպես էի արտասանում այն ժամանակ) ճեմարան: 1915-16 ուսումնական տարում, գաղթի պատճառով, փակվել էր ճեմարանը, և ես այդ տարին ուսուցիչ «հրավիրվեցի» Չանգեզուրի Լոր գյուղը: Ամռանը ես «չարություն» էի արել, որ և կարելի էր հաշվել իմ գրական մկրտությունը, եթե չհաշվենք «Հիմար մարդը» վերնագրով մի հեքիաթ, որ 1911 թվին տպեց «Աղբյուր» ամսագիրը: Այդ ամառ ես ֆելիետոն էի տպել Շուշվա կարծեմ սոցիալ-դեմոկրատական «Փայլակ» թերթում, մեր քաղաքագլխի և զավառական աղմկահարուցիչի դեմ: Ինձ բանտարկեցին, եղավ «փոթորիկ», և ես բանտարկության 34-րդ օրը ազատվեցի, որպեսզի ուսուցիչ գնամ այն հեռու գյուղը՝ Լորը:

Առաջին անգամ ճանաչեցի գյուղը, նրա մարդկանց: Հետո շատ անգամ այդ թվի հիշողությունները օգնել են ինձ:

1917 թվին ավարտեցի ճեմարանը: Ամռանը՝ հասարակական աշխատանք, աշնանը՝ ազգային զորամասերում զինվոր մինչև 1918-ի հունիսը (Երզրում-Կարս-Սարդարապատ): 18-19-ը՝ Երևանում սրբազորից թերթերի և ռեպորտյոր: 19-20 թվի հունիսը՝ ուսանող Պոլիտեխնիկումի և դասատու որբային գիմնազիոնի (Թիֆլիս), 20 – 23 թիվը՝ ուսանող Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտի: 1923 թվից հետո՝ ազրոնում:



1924 թ. դեկտեմբերին «Մարտակոչում» տպվեց իմ առաջին «Գավառական նամականիս»: Գրել եմ երեք գիրք՝ «Հովնաթան Մարջ», «Սթնածոր» և «Սպիտակ ձին», և անավարտ տպած «Կարմրաբար» վեպը: Առայժմ:

Ա. ԲԱԿՈՒՆՅ
5.V.32 թ.

թանալուց հետո, դաշնակցության հետ ունեցած կապերի խզումից բացի, ուրիշ ուղի էլ չկար:

Երևանից ճանապարհվեցի Չանգեզուր, ուր մնացի մոտ երկու ամիս (դասախոսում էի Չանգեզուրի ուսուցչական դասընթացներում): Մինչև Երևան վերադառնալը ես ուշիմ և մանրամասն քննել եմ գյուղացիների վիճակը, գյուղերում մնացած հատուկները դաշնակցական գործիչներից հարցրել եմ դեպքերի ու դեմքերի նկարագիրը, և այդ ամենը ինձ

համոզեց, որ փետրվարյան ավանտյուրայից հետո դաշնակցության վտարումը Հայաստանից եղել է ամենահեղափոխական էլը Հայաստանի աշխատավորության պատմության:

Այդ բոլորի արդյունքը Չանգեզուրի դաշնակցության նախկին կենտրոնի ծանոթ կոչն էր, և այն շարժումը, որ ծավալվեց ամբողջ Հայաստանում և որի բնական հանգումը եղավ 1923 թ. Նոյեմբերի 20-ի Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը: Այդ համագումարի կազմակերպման մեջ ես ցույց եմ տվել ակտիվ մասնակցություն և որպես նախագահ ղեկավարել եմ նախաձեռնող բյուրոյի աշխատանքը մինչև համագումար: Համագումարից հետո ես մինչև այժմ էլ աշխատում եմ Հոգեփրկչի սերմնաբուծարանում, որպես գյուղատնտես, միևնույն ժամանակ հետևում Նոյեմբերի 20-ի համագումարի սղագիր հաշվետվության հրատարակմանը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱԿՈՒՆՅ
1924 թ., ՓԵՏՐՎԱՌԻ 24

ԴՐԱՎԱԳՆԵՐ Ա. ԲԱԿՈՒՆՑԻ ԿՅԱՆՔԻՑ

Արձակագրի արյունակիցները...

Բակունցի հայրական և մայրական կողմից այժմ էլ Գորիսում ապրող ազգականներ կան, որոնք, Ակսելի անունը լսելով, միանգամից պայծառանում ու հաճույքով են խոսում մեծ գրողի հետ իրենց ազգակցական կապի մասին:

Բակունց ազգանունը. նախկինում՝ վտանգ, հիմա՝ հպարտություն

Ակսել Բակունցի հորեղբոր՝ Ավագի ծոռան՝ Ռուբիկ Բակունցի տանը գրուցում ենք Ռուբիկի և մյուս հորեղբոր՝ Ավետիսի ծոռ Արմիկի հետ...

Պատմում են բակունցների գերդաստանից, ու քանի որ Ակսելի կյանքը շուտ է ընդհատվել, ավելի շատ՝ նրա եղբայրներից ու նրանց ժառանգներից:

Նրանց ձեռքին է նաև Արմիկի կազմած՝ Բակունցների տոհմածառի նորագված տարբերակը: Ու երբ խոսում են այստեղ չլված Ստեփան դայու և Բոխազյուկ մայրիկի հինգ դստերի և չորս որդիների մասին, Ա.Բակունցի տուն-թանգարանի տնօրեն Զ.Միքայելյանն ուղղում է, որ իրականում նրանք 10 զավակ են ունեցել. Վահանի հուշերում Սերգեյ անունով վաղամեռիկ եղբոր մասին տեղեկություններ կան:

Ազգականները պատմում են, որ Ակսելի կնոջ՝ Վարյայի և որդու՝ Սևադայի աճյունները երևանում են հանգում, իսկ եղբայրները՝ Արտավազը, Գրիգորը և Վահանը, մահացել ու իրենց վերջին հանգիստն են գտել Ռուսաստանում:

Արմիկը հիշում է, որ երբ Վահանը գալիս էր Գորիս, ինքը պատանի էր, ու իրեն էր ասում՝ ուղեկցիր հին գյուղը: Այնտեղ՝ եկեղեցու մոտ, հին գերեզմաններ կան, որտեղ հիմնականում բակունցներ են թաղված: «Վայիս էր, մի չոփ վերցրած, բացում-նայում գերեզմանաքարերը, տեսնելու, թե ում տղան կամ թոռն է այդտեղ հանգչում»:

Ռուբիկը հայտնի բրուտ Ավագի տոհմի ժառանգն է, որը նախատիպ է եղել «Բրուտի տղան» պատմվածքի համար: Նշում է, որ ընտանիքի ավանդույթով իր պապն էլ, հայրն էլ բրուտներ են եղել, ինքը սպորտն ընտրեց...

Ռ.Բակունցը պատմում է, որ Ակսելին բռնելուց հետո բակունցների տոհմին, նրա ազգականներին էլ շատ են նեղել: Օրինակ, իր հորը հեռացրել են կուսակցությունից, ազատել աշխատանքից, հե-


տո վերականգնվել է: Նույնիսկ Միջին Ասիայում Բակունցի հորեղբոր (Հայրապետի) որդիներին են նեղել...

Իսկ Արմիկն այն ժամանակների մթնոլորտին առավել բնորոշ մի պատմություն է անում: «Փաստորեն, Բակունցի արդարացումից առաջ մեր ընտանիքում ծնված երեխաները խաչատրյան ազգանունն են կրում: Երբ 1947թ. ծնվում է ավագ քույրս, և հայրս ուզում է ազգանունը Բակունց գրանցել, ՉԱԳՍ-ում զգուշացնում են, թե մտքիցդ հանիր, չի լինի, սպառնում են հորս»:

Հայրը չի ցանկացել, կողքինները խորհուրդ են տվել, թե մի արա, մեկ է՝ աղջիկ է, վաղը, մյուս օրը կամուսանա, ազգանունը կփոխի... Ու խաչատրյան է դրել հոր՝ խաչատուրի անունով: Երկրորդն էլ է աղջիկ ծնվել: Մինչ այդ՝ 1947թ., հայրը պատահաբար կարողացել էր խուսափել աքսորից: Ու երկրորդ աղջկա ծննդյան ժամանակ արդեն ազգանվան հարցը չի բննարկվել, խաչատրյան է գրանցել: 1952-ին ծնվել է Արմիկի ավագ եղբայրը՝ Սուրիկը, հայրն այդ ժամանակ երկար կռիվներ է տվել: Այս անգամ սպառնացել են, թե ձեռներդ կկապենք, կտանկոյուններից կհեռացնենք: Ու էլի հանուն երեխաների գիշել է: Եվ միայն 1955-ին ծնված Սպարտակը և 1959-ին ծնված Արմիկն արդեն Բակունց ազգանունն են ստացել:

Արթին պապի օջախում

Գտնվում ենք Վերիշենում՝ Բակունցի մորական պապի՝ հայտնի Հարությունի կամ ինչպես Բակունցն է իր գրականության մեջ օգտագործել, Արթին պապի տանը... Այստեղ Ակսելն իր մանկության և պատանեկության շատ օրեր է անցկացրել, այս օջախում են ծնվել որոշ պատմվածքների պլուծներ ու մտահղացումներ («Ձմռան մի գիշեր»)... Իսկ պապն ու մորեղբայրը՝ Եգորը, «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքի հերոսների նախատիպերն են դարձել: Իհարկե, տունն այն ժամանակ այս տեսքը չի ու-



Ա. Բակունցի տոհմածառը

նեցել, տարիների ընթացքում մասեր են ավելացրել, ձևափոխել: Այժմ այստեղ իր ընտանիքով բնակվում է Հրաչիկ Խուրշուդյանը, որն Ակսելի մորեղբոր՝ Ղազարի թոռն է (Արթին պապի ծոռը): Ի դեպ, նրա հայր Սամսոնը նույնպես գնդակահարվել է 1937-ին...

Ութսունմեկամյա Հրաչիկ Խուրշուդյանը հիշում է, թե ինչպես էր Ակսելը գալիս պապոնց տուն, նաև գրելու համար կյուրթեր էր հավաքում Վերիշենում, բայց այն ժամանակ ինքը փոքր էր, դրանից շատ բան չէր հասկանում: Ավելի լավ հիշում է Ակսելի եղբայրների՝ Վահանի, Գրիշային, Արտավազիին:

Լավ հիշում է միայն Բոխազյուկի պատմածը, թե ինչպես է Ակսելի կինը վերադարձել աքսորից: Վարյան հետո ասել էր, որ մտադրված էր գնալ Գորիսի տունը և տեսնել՝ որդին՝ Սևադայն, կա՞ր, թե՞ չէ: Եթե գտներ նրան, ասելու էր, որ ինքը Վարյան է, եթե ոչ՝ հեռանալու էր...

Եկել և տեսել է, որ տան այգում Բոխազյուկը բանջարեղեն է վաճառում: Հարցրել է՝ մայրիկ, սա ո՞ւմ տունն է, Ակսել Բակունցի տո՞ւնն է: Մայրիկը վախեցել է, տարիներով սիրտը մտած ահից մտածել է, թե տեսնես էլի ինչ են ուզում, կարո՞ղ է գան, իրեն էլ տանեն, Սևադային էլ, որ այդ ժամանակ այգում գորտ էր բռնել և «վիրահատում»: Երբ Վարյան հարցրել է, մտո՞ւմ է Բակունցի որդին, ո՞ւր է: Տասն ասել է, թե բոստանում ծառերի տակ է... Ու այդ ժամանակ նոր Վարյան «մամա» է ծկթացել...

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ
«ՅՈՒՆԻՅԱՏ ԵՐԿԻՐ»
N13, 8 ՀՈՒՆԻՍԻ 2009թ.

ԴՐՎԱԳՆԵՐ Ա.ԲԱԿՈՒՆՑԻ ԿՅԱՆՔԻՑ

*Հնոքաց եեմարանի դասախոսները Բակունցի
ուսումնառության փուլերին*



Հակոբ Մանանդյան



Մանուկ Աբեղյան



Գրիգոր Նափանցյան




Կոմիտաս



Հովհաննես Հովհաննիսյան



ԳՐԱԿԱՆ ԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ



Աշխարհագրագուժով Բակունցը հարազատ է Թումանյանին, բայց խառնվածքով և գեղարվեստական մտածողությամբ հաճախ հիշեցնում է Տերյանին

ՀՐԱՆ ԹԱՄՐԱՅԱՆ

...Մեզանում վեճեր են գնում Բակունցի գրական ակունքների և ուսումնառության շուրջը: Երկար ժամանակ նրան համարում էին իմպրեսիոնիզմի հետևորդ, ոճն ու կերպարվարման եղանակը կապելով օտարների հետ: Ուրիշները Բակունցի արվեստը համարում են Թումանյանի ավանդների ստեղծագործական շարունակություն նոր կյանքի պայմաններում: Ս. Աղաբաբյանը, օրինակ, գտնում է, որ Բակունցի հերոսները կարծես Թումանյանի հերոսներն են կյանքի նոր պայմաններում:

Բակունցի հերոսները, իրոք, գյուղի հասարակ մարդիկ են, իրենց սովորական կենցաղով և մշտական ցավերով: Նրանց մեջ, Թումանյանի պես, նոր գրողը ձգտում է հայտնաբերել կյանքի պոետիկ: Բայց նույն Բակունցի պոետիկան շատ կողմերով նորություն է մեր արձակի մեջ: Ճիշտ է, լիրիկան, երևույթների արագ ու նուրբ ընկալումը, հոգեբանական նրբերանգները և կատարման ձևը անհայտ չէին մեր արձակին, բայց ամբողջության մեջ այդ բոլորը ավելի թանձր որակ են ստանում հենց Բակունցի մոտ:

Աղաբաբյանը իրավացի է. Բակունցը, իհարկե, մայրենի գրականության հարազատ ծնունդն է, նա սկսում է այնտեղից, որտեղ վերջացնում էր Թումանյանը: Նա չէր կարող կրկնել Թումանյանին, որը, կարելի է ասել, գրեթե սպառել էր իր գյուղի թեման, արտացոլել գյուղի հոգմահարումը, նահապետական աշխարհի քայքայումը, մարդկանց գլխին եկող մշտական աղետները: Բակունցը շարունակում է Թումանյանին, ցույց տալով գյուղական կյանքում և հոգեբանության մեջ տեղի ունեցող նոր երևույթներն ու փոփոխությունները: Կարելի է ասել, որ Բակունցի ամենամոտ խախտողը Թումանյանն է: Ձևի և խոսքի կոպտության իմաստով էլ Բակունցը չէր կարող ինչ-որ բան չսովորել



Վահան Տերյան

Թումանյանից («Գիթորը», «Մերոնք», բանի որ նախորդը նոր խոսք էր ասել նաև արձակի փոքր ձևի մեջ):

Բայց մի՞թե նրա վրա որևէ հետք չի թողել իմպրեսիոնիզմը: Դե՞ որ այս մեթոդը չի ենթադրում միայն հետադեմ գաղափարախոսություն, այլ նաև աշխարհի ընկալելու ձև է և գրական նորագույն կուլտուրա: Դի կարելի ասել, թե նորագույն ոճը փոխարինելու էր գալիս ռեալիզմին, բայց կարելի է ասել՝ ինչ-որ կողմերով այն հարստացնում էր գրականության հնարավորությունները: Բակունցի խառնվածքի յուրահատկությունները, բանաստեղծական զգացմունքը, բնության նուրբ ընկալումը, նրբագծեր ստեղծելու ընդունակությունը որոշ առումով նրան մղում են դեպի իմպրեսիոնիզմը, որը ինչ-որ չափով նպաստում էր այդ հատկանիշների զարգացմանը: Արվեստագետը, որոշ դրական կողմեր վերցնելով իմպրեսիոնիստներից, այնուամենայնիվ, աշխարհայացքի ու պատկերացումների մեջ հեռու էր այդ գաղափարախոսությունից, որը մարդուն կտրում է հասարակական միջավայրից և մղում նրան դեպի կուսա-



Հովհաննես Թումանյան

կան բնություն:

Իմպրեսիոնիզմը անտեսում է հասարակական միջավայրի դերը մարդու ճակատագրի մեջ: Բակունցը, հակառակը, ընտրում է կյանքի մարդկանց, հոգսի մեջ գտնվող հասարակ հերոսներին:

Բակունցի մասին խոսելիս, որքան էլ անսովոր թվա, պետք է հիշել նաև Վահան Տերյանին: Թեև Բակունցը շարունակում է պատկերել Թումանյանի հերոսներին՝ կյանքի նոր պայմաններում, աշխարհագրագուժով հարազատ է Թումանյանին, բայց խառնվածքով և գեղարվեստական մտածողությամբ հաճախ հիշեցնում է Տերյանին:

Ո՞րն է Տերյանի տաղանդի ուժը. նուրբ զգացողությունը, հոգու նրբերանգների ընկալումը: Նա չունի Թումանյանի գեղարվեստական ռեյիտները և հզոր կենսաուժը, բայց լավ է գգում հոգիների անտեսանելի կապերը: Բակունցն էլ խու-

սափում է ռեյիեֆներին, մեծ կոնտրաստներից, որոնում է անվերջ «փոքրացող» գեղեցկություններ, որոնք նոր կողմից են ցույց տալիս հոգեկան աշխարհի հարստությունը: Ձևի մեջ էլ նա բարձրանում է Տերյանի բարձունքները, որովհետև հոգեբանական «փոքրը» ցույց տալու համար գտնում է համապատասխան նրբին հնարներ: Նրա պատկերներն ու համեմատությունները, լեզուն ու խոսքը խորապես համապատասխանում են բովանդակությանը:

Այս նրբացումը, դիտողականության սրումը, հոգու նորանոր երանգների որոնումը և հայտնաբերումը բնորոշ էին XX դարի սկզբի համաշխարհային արձակին ու բանաստեղծությանը: Դա ինչ-որ հեղինակների նախասիրությունը չէր, ոչ էլ սոսկ հայկական մի երևույթ: Բայց մարդագիտության զարգացման ճանապարհին Տերյանը և Բակունցը՝ իրենց խառնվածքով և մտածողության եղանակով, բնածին հակումներով և նախասիրությամբ, հենց այն անհատներն էին, որոնք ի վիճակի էին հարստացնել հայ գեղարվեստական մտածողությունը, յուրովի բերել և հաստատել այդ նվաճումները:

Այս հանգամանքը բնավ չի ենթադրում, թե նոր ուղղությունը և մտածողությունը սահմանափակում էին արտացոլման նախկին հայտնի եղանակները, մեծ ռեյիեֆների, թանձր կերպավորման, արտաքին և ներքին զորեղ կոնֆլիկտների մեծ ավանդները: Սա նշանակում էր ոչ թե մերժում, այլ հարստացում, նոր երանգների և հնարավորությունների հայտնաբերում, որն, անշուշտ, պետք է առավել ազդեցություն գործեր գրական սերունդների գրելաձևի և մտածողության վրա:

Այս բոլորից հետո բնական հարց է ծագում՝ ի վերջո, ի՞նչ ուղղություն ունի Բակունցի արձակը. նոր արձակագիրը շարունակում է հայ ռեալիզմի ավանդները, բերում է ուրույն բովանդակություն, իր խառնվածքով ու գրական ոճով հարստացնում ազգային գրականությունը, ստեղծելով նոր դպրոց: Թումանյանը դպրոց չունեցավ: Այնինչ Տերյանը, մի շարք հարցերում զիջելով Թումանյանին և Խաչատրյանին, դարձավ նոր դպրոցի հիմնադիր: Նրանից սկիզբ առավ Չարենցը: Տերյանի ազդեցությունը շատ ուժեղ էր 10-20-ական թվականների բոլոր բանաստեղծների վրա (Գառնիկ Զալալյան, Արմ. Տիգրանյան, Ազատ Վշտունի, Ն. Չարյան, Գ. Սարյան և այլն):

Այդպես էլ Բակունցը ... Նա նոր դպրոց բացեց հայ արձակի մեջ: Նրա ազդեցությունը ակներև է Մահարու, Արմենի և 30-ական թվականների գրեթե բոլոր երիտասարդ արձակագիրների վրա: Այսօր էլ Բակունցը ազդում է գրական ճաշակի վրա:

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՌԻՅՈՒՆ»

ԳՐԱԿԱՆ ԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

ՍՈՒՐԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ. «ԱԿՍԵԼ ԲԱԿՈՆԵՑԻ համար հայկական պատմության ամենագրավիչ կերպարն էր Խաչատուր Աբովյանը»

Հատված Ս.Աղաբաբյանի
«Ակսել Բակունց»
մենագրությունից



...3 ուրաքանչյուր գրող ունի իր նվիրական անունը ժողովրդի պատմության մեջ: Ակսել Բակունցի համար հայկական պատմության ամենագրավիչ կերպարն էր Խաչատուր Աբովյանը, որի մասին նա ասում է. «Հիմալայի ֆիզիկա՝ ոչ միայն իր գրական նշանակությամբ, այլև իր կյանքով»:

Մեծ խորհուրդ է պարունակում այն փաստը, որ Բակունցի ստեղծագործության կարապի երգը եղավ ազգային կյանքի վերածնության և ժողովրդի բաղադրական զարթոնքի շեփորահար Խաչատուր Աբովյանին նվիրված անավարտ վեպը:

Այդ վեպից «Խորհրդային գրականություն» հանդեսի 1935 թվականի երեք համարներում (NN 1, 2, 3) տպագրվել է երեք ամբողջական, ավարտված հատված: Առաջին հատվածը, որ կոչվում է «Դեպի լյառն Մասիս», Բակունցի ծրագրած վեպի նախերգանքն է և նվիրված է Արարատի գագաթը բարձրանալու պատմությանը: Մյուսը՝ «Լիբեր Արմենիեր» խորագրով, վերաբերում է Աբովյանի կենսագրության համար կարևոր ուսում-

նառության շրջանին, ռուսահայ առաջադեմ երիտասարդության գաղափարական օրրան Դորպատի միջավայրին, իսկ երրորդ՝ «Գործ Մայրանա, դստեր Սկրտումի» հատվածը նվիրված է պարսկական տիրապետությունից ազատագրված Երևանի նահանգի իրադարձություններին, երբ օտարությունից հայրենիք դարձած Աբովյանը վարում էր Երևանի նահանգի գավառական դպրոցի տեսուչի պաշտոնը:

Բակունցը պատմական վեպ գրելուն ձեռնամուխ եղավ այն շրջանում՝ 30-ական թվականների սկզբին, երբ խորհրդային հասարակության գիտակցության մեջ, ճիշտ է, ցավազին և դժվարին վերապրումներով, հաճախ ոչ հիմնական ուղիներով, այլ թևանցիկ նրբաշավիղներով, որոնվում էին ժողովուրդների ներկան ու ապագան նրանց անցած ճանապարհի հետ կապող գլխավոր հանգույցները: Դա նշանակում էր հաղթահարել պատմության անշարժության կամ «կտրուկ» սահմանազատման գոեհիկ ու ոչ պատմական հայացքը, որ այն շրջանառություն ուներ հեղափոխությանը հաջորդած առաջին տասնամյակում:

30-ական թվականներին սկզբնավորվում է մի նոր շրջան արվեստագիտության մեջ: Այս շրջանի բնորոշ գիծն այն էր, որ չնայած սուր տարաձայնություններին, նոր ժամանակն էր ուղղություն տալիս, ճշտում ու սրբագրում, հերքելով՝ հաստատում, իսկական, եղծումներից ու կեղծումներից բեռնաթափված ճշմարտությունը Աբովյանի լուսավորական գործունեության պատմական նշանակության մասին:

«Աբովյանի հարցի» գիտական լուծմանը մասնակցում է նաև Ակսել Բակունցը, ստանձնելով պատմաբանասերի դեր: 1932 թվականին Աբովյանի «անհայտացման» առեղծվածի մասին նա հատուկ գիտական հետազոտություն է գրում և հրատարակում առանձին գրքով: Աշխատությունը կոչվում է «Խաչատուր Աբովյանի «անհայտ բացակայումը» արխիվային նոր վավերագրերի ու

«անհայտ նամակների հիման վրա»: Բակունցի հետազոտությունը ծնվեց գրականագիտության մեթոդը վերաիմաստավորելու, պատմական օրենքները մեթոդի հիմքը դարձնելու, սոցիոլոգիական ու փիլիսոփայական տեսակետները պատմությամբ ստուգելու, փաստը, թվականը, վկայությունը գիտության հիմնականիսքը դարձնելու շրջադարձի օրերին:

Դա շրջադարձ էր այն իմաստով, որ պատմագրությունը սկսում է թոթափել մտածողության վերացականությունն ու սխեմատիզմը, կասկածի տակ է առնում վաղեմի կոնցեպցիաների իրավացիությունը, ձգտում է պատմության փաստերի ու սոցիոլոգիական բացատրությունների զուգակցմանը:

Հայ պատմագրության մեթոդի նորացման արտահայտություններից մեկն էլ Բակունցի գիրքն էր: Անկարևոր չէ այն փաստը, որ Բակունցի աշխատությունը խորհրդային ժամանակաշրջանում լույս տեսած առաջին մենագրությունն է Արևիկյանի մասին և խորհրդային արվեստագիտության աչքի ընկնող նշանաձողը:

«Խաչատուր Աբովյանի «անհայտ բացակայումը» ուսումնասիրությունը նվիրված է երկու գլխավոր, արմատական հարցի պարզաբանման:

Առաջին հարցը Աբովյանի «անհայտ բացակայումի» առեղծվածի նոր բացատրության փորձն է, երկրորդը՝ Աբովյանի աշխարհայացքի ու քաղաքական դիրքորոշման վերագնահատության խնդիրը: Առաջին հարցի պատասխանը Բակունցի գրքի թույլությունն է՝ «աքիլլեսյան գարշապարը», երկրորդինը՝ նրա կարևորագույն ծառայությունը արվեստագիտությանը:

Որո՞ւք են Բակունցի ուսումնասիրության այդ երկու կողմերը:

Աբովյանի անտիպ հիշատակարանների, նամակագրության, նրա գեղարվեստական ստեղծագործության առանձին տվյալների, նորահայտ արխիվային վավերագրերի, ժամանակակիցների հիշողությունների ու ժողովրդի մեջ շրջող գրույցավանդությունների հիման վրա Բակունցը մեկ առ մեկ քննում է Աբովյանի անհայտացման վերաբերյալ գոյություն ունեցող, հանրածանոթ ու անծանոթ ենթադրությունները «սև կառնիքի» քաղաքական աքսորի լեգենդը, ինքնասպանության՝ «գլուխը մահու տալու» տեսակետը, սիրային հողի վրա նրա դեմ կազմակերպված դավադրության վերսիսան և այլն. ու առաջադրում է «անհայտ բացակայումի» կամ «կամովին հեռանալու» մի նոր տեսակետ, որը հանգում է հետևյալին. Աբովյանն իր կյանքի վերջին շրջանում հուսախաբվում է ռուսական զենքի հաղթությունից, առհասարակ Ռուսաստանի դիրքորոշումից սպասած իր քաղաքականսոցիալական

ծրագրերի ու ակնկալությունների մեջ, և առնելով «անհանգիստ ժամանակի»՝ 1848 թվականի եվրոպական հեղափոխության համբավը, «շարժվում է տեղից», հայ փախստական գյուղացիության մի մեծ խմբի հետ հեռանում է «ռուսական պետության սահմաններից»՝ Արաքսի մյուս ափը: Աբովյանի «հարկադրյալ փախուստը», նրա գաղափարական «շրջադարձը» Բակունցը չի կապում որևէ քաղաքական խմբակցության գործունեության հետ, այլ նրա անցումը դիտում է որպես «Հայաստանի ներսի մասում»՝ պապենական հողերում երկրագործությամբ զբաղվելու նպատակով արված քայլ:

Բակունցը գրում է, որ Աբովյանը կյանքի վերջին շրջանում «անձնական հուսախաբություն» էր ապրում, որի գլխավոր պատճառն այն էր, որ «ցարական ռեժիմը հայոց ազգի»՝ այսինքն նախկին «Հայկական մարզի» գյուղացիության համար ակնկալած բարիքների փոխարեն բերեց կնուտ և աղքատություն»:

Հուսախաբությանը հետևեց «փախուստը այն միջավայրից, որտեղ այլևս ոչ մի կռվան չուներ»:

Իսկ ի՞նչ գործ ունեն այստեղ 1848 թվականի եվրոպական շարժումները: Այս հարցին Բակունցի տված պատասխանից պարզվում է, որ «հեղափոխության լուրը միայն առիթ էր, արտաքին հարված, որը նրան տեղից շարժեց այնպիսի նպատակով, որ անմիջական ոչ մի կապ չուներ 1848 թվի հեղափոխության հետ»:

Իսկ փաստացի ի՞նչ տվյալներով է պարզաբանում Բակունցը Աբովյանի «շրջադարձը»՝ նրա հարկադրյալ փախուստը: Նա հենվում է գերազանցորեն այն մի քանի վկայությունների վրա, որ պարունակում է «Ժողովրդի մտածումը» կոչված գրի առնված փաստաթուղթը (նամակը)՝ Աբովյանի «չերեպալու» պատճառի մասին: Նամակագրի ենթադրյալ հույսը՝ «ռուստը», թե մի օր Աբովյանը կերևա, նրա հավաստիացումը, թե նրան տեսել են այս ու այն վայրերում (Ակոռի, Կարս, Գյանջա և այլն), Բակունցը դարձնում է «գորեղ փաստարկներ», խորամուխ չլինելով դրանցում



Խաչատուր Աբովյան

ընդգծված ցանկության, հույսի և ոչ թե հավաստիության մեջ: Մերձակա մյուս փաստարկը, թե պաշտոնական գրագրություններում Աբովյանին դիտում են որպես «անհայտ բացակայող» (այդպիսիք էին կոչվում նրանք, «որոնց մասին հաստատ տեղեկություն ունեն, թե անվտանգ անցել են սահմանը»), նույնպես չէր ամրապնդում առաջարկված հիպոթեզը: Եվ, վերջապես, Բակունցի մեջբերած գերմանացի ճանապարհորդների տեղեկությունները՝ Մորից Վազների և Ֆր. Բոդենշտեդի թողած վավերագրերը, ընդգծում են Աբովյանի անբավականությունն իր միջավայրից ու նրա «անանձնական» հուսահատությունը, բայց չեն բացատրում անհայտացման նոր ուղիներ:

Բակունցի նոր տեսակետը քննություն չբռնեց:

Պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը 1933 թվականին հրատարակված «Աբովյան» պատասխան գրքում իրավացիորեն նոր վերսիսան համարում է ավելի «վիպական-բեյտրիստիկական», քան գիտականորեն համոզիչ տեսակետ, որ առաջ չի շարժում Աբովյանի «անհայտացման» առեղծվածի լուծումը, այլ «Արաքսի մի ափից տեղափոխում է մյուս ափը», դարձյալ անպատասխան թողնելով հարյուրամյա վաղեմություն ունեցող գաղտնիքը: Պատմաբանը սրամտորեն Աբովյանի կորստյան առեղծվածը համեմատում է մեռնող և վերադարձող հերոսների (Ար-

տավազ, Միեր և այլն) ժողովրդական առասպելաբանության հետ և դրանով բացատրում «ժողովրդի մտածումների» մեջ անդրադարձած «հեռանալու և մի օր երևալու» մոտիվը:

Բակունցի առաջ քաշած էմիգրացիայի տեսակետը և փաստական առումով, և մասնավոր՝ իբրև եզրակացություն, սխալ էր ու գիտականորեն չհիմնավորված: «Առեղծվածի» լուծման նախկին ուղիների բանասերը հավելում էր մի նոր առեղծված:

Իսկ ո՞րն է Բակունցի ուսումնասիրության դրական տեսնեցը՝ «փախուստի» լեզվերի և առհասարակ հնացած տեսակետներին ներուստ հակադրվող կոնցեպցիան: Դա Աբովյանի ժառանգության ու գործունեության ներքին բովանդակությունը որոշելու հարցում Բակունցի հանդես բերած պատմական խորաթափանցությունն է:

Հարուստ փաստարկումներով ու վավերագրերով ներկայացնելով Աբովյանի հերոսական մաքառման ուղին, նրա պայքարն ընդդեմ ցարական չինովնիկության, էջմիածնի հոգևորականության, հայ վաճառականության «ոսկե գահի», Բակունցն այդ ակտիվ ու հետևողական օպոզիցիայի հիմքում տեսնում է գյուղացիական դեմոկրատիայի հետ Աբովյանի ունեցած մերձավորագույն առնչությունները: Սույն բացատրությունը այսօր այնքան անառարկելի ճշմարտություն է, որ ոչ մի տեղ և ոչ ոքի կողմից չի վիճարկվում, բայց Բակունցի աշխատության լույս ընծայման շրջանում, երբ գեեհիկ սոցիոլոգիզմը իշխող դիրքեր էր գրավել ոչ միայն գիտության, այլև հասարակական գիտակցության մեջ, դա գիտական ու բարոյական իսկական խիզախություն էր: Իհարկե, Բակունցը մենակ չէր և ոչ էլ առաջինն էր այդ տեսակետով ասպարեզ գալիս: Իր թիկունքում նա ուներ դեմոկրատական մտքի ավանդությունները՝ Միքայել Նալբանդյանից մինչև Յովհաննես Թումանյան, որոնք ի դեմս Աբովյանի տեսնում էին հայ ժողովրդի կյանքի դեմոկրատական վերածնության սկզբնավորողին ու մեծ ժողովրդասերին, հայրենիքի անշահախնդիր զավակին և բռնության ու ստրկության դեմ մաքառող նպատակին: Բակունցն առաջինն էր խորհրդահայ բանասերների մեջ. այս դեպքում գործը հանդես էր գալիս այդպիսի կոչումով, և նախապաշարված մտքերի դիմադրությունը հաղթահարելով, Աբովյանի պատմականորեն ճշգրիտ արժեքավորումն էր բերում, նրա աշխարհայացքը կապելով դեմոկրատիայի գաղափարական տրամադրությունների, գյուղացիության ու արհեստավորության անմիջական կենսական շահերի, նրանց քաղաքացիական ընդվզումների հետ:

Եվ որքան էլ Բակունցը ճշմարիտ չէր «փախուստի» վերաբերյալ հարուցած են-

թադրություններով ու ապացույցներով, այդուամենայնիվ, հենց այն պարագան, որ «անհայտ բացակայման» գաղտնիքի համար նա ոչ թե ինչ-որ զուտ հոգեբանական պատճառաբանություններ էր որոնում նախորդ վերծանողների պես, այլ դա կապում էր Աբովյանի դարաշրջանի քաղաքական հանգամանքների հետ, վկայում է բակունցյան կոնցեպցիայի առաջադիմական եությունը: Այս եզրակացությունը Բակունցի հետազոտության դրական արժեքն էր՝ գիտականորեն ճշմարիտ ու պատմականորեն ավելի արդարացի, քան Աշոտ Յովհաննիսյանի կոնցեպցիան, որ նա առաջադրեց «Աբովյան» պատասխան գրքում:

«Խաչատուր Աբովյանի «անհայտ բացակայումը» հետազոտությունը՝ վերագնահատության սլաքով, յուրատեսակ տակտիկական քայլ էր Բակունցի կողմից՝ ավելի խոր, իսկական արմատներով ու բնորոշ կապակցություններով հասկանալու Աբովյանի անձնավորությունն ու նրա ժամանակը, ավելի ճիշտ ըմբռնելու պատմության զարգացման գլխավոր ուղիությունը՝ հակասություններով ու զիզ-զազներով, և ճիշտ որոշելու նշանավոր անհատի պատմական գործողության եությունը:

Բակունցը հավատացած էր, որ գրականության և գիտության մեթոդների միջև չեն կարող լինել մեծ տարբերություններ, որ վեպ գրելով նա պետք է հաստատի իր գիտական կոնցեպցիայի ճշգրտությունը, վերջինիս միջոցով էլ հարստացնի իր գեղարվեստական կոնցեպցիան: Բակունցի գիտական աշխատությունն ու վեպը նույն նյութի մշակման տարբեր ձևերն են և ոչ թե մտածողության տարբեր եղանակների դրսևորումներ:

Գիտական-բանասեր նախապատրաստեց, նախորդեց արվեստագետին ոչ միայն սեփական գեղագիտական կոնցեպցիայի որոնումներով, այլև վիպական անհրաժեշտ նյութի հայթայթումով: Ուրիշ խոսքով՝ գիտական ուսումնասիրության արդյունքները կոչված էին Բակունցի արձակը սնելու ոչ միայն գաղափարներով, այլև պատմական հավաստիությունները հղող աղբյուրներով, փաստերով ու եղելություններով:

Ի՞նչ նշանակություն էր տալիս Բակունցը պատմական աղբյուրներին, ինչպիսի հարաբերություն էր նա ենթադրում պատմական փաստի, իրական տվյալի ու գրական հորինումի միջև, ինչպիսի մոտեցում էր մշակել ժողովրդի անցյալին նվիրված գրվածքի պատմական նյութի ճշգրտության հարցի կապակցությամբ:

Այս հարցերի պատասխանների համար ունենք երկու կարևոր աղբյուր: Առաջինը՝ անավարտ վեպի հատվածներն են, երկրորդը՝ Ն. Վ. Գոգոլի «Տարաս Բուլբա» էպոպեայի հայերեն թարգմանության հա-

մար Բակունցի գրած առաջաբանն է:

Անդրադառնալով Գոգոլի գրվածքի ստեղծագործական պատմությանը, նրա ակունքներին ու կազմավորման տարրերին, Բակունցն ասում է. ««Տարաս Բուլբայի» մեջ հիշատակված հերոսներից շատերը ոչ միայն պատմական անձնավորություններ են, որոնց մասին Գոգոլը տեղեկություններ է հավաքել հին տարեգրությունից, այլև ոմանք եղել են հեղինակի նախահայրերն ու նրանց մասին ավանդել է տոհմական քրոնիկան... Գոգոլի ստեղծագործության համար պատկերների, ոճի և նյութի անսպառ աղբյուր էին այն անգիր վեպերն ու զրույցները, որ նա լսում էր բանուրիստներից ու շնորհալի պատմող ծերունի կոզակներից: Եվ «Տարաս Բուլբայի» շատ էջեր, հատկապես պատերազմի նկարագրությունները, ամբողջովին, երբեմն ընտրությամբ, առնված են այդ անհայտ պատմիչների ավանդած պատմություններից»:

Գոգոլի երկի իրապատումն հիմքերը մատնացույց անելով, Բակունցը չի մոռանում նշել նաև «ոչ իրապատում» պարագան, բովանդակության այն հարստությունը, որ «Տարաս Բուլբան» դարձնում է գեղարվեստական խոսքի անկրկնելի կոթողներից մեկը: «Նրա (Գոգոլի.՝ Ս. Ա.) հանճարեղ երևակայությունը պիտի ստեղծեր և հագնար այն ամենով, ինչ ամենից չքնաղն է ««Տարաս Բուլբայի» մեջ, ստեպը արևով ողողված, նրա անսահման հարթությունը, որտեղ Գոգոլի երևակայությունը, ինչպես սանձակոտոր նժույգ, կարող էր անարգել խայտալ. նա կարող էր ճախրել, ինչպես հպարտ ուրուր, նա հողմի նման կանցներ Դնեպրի առափնյա եղեգների վրայով, վարար ջրերի հետ, կաղվեր Սև ծովի վրա և ոչ մեկը չի թողել այնպիսի էջեր, որտեղ լիներ այդքան արև, այդպիսի սանձարձակ տարերք և այդ տարերքի նման ոյուցագուններ»:

Այս մեջբերումներից պարզ է դառնում, որ «Տարաս Բուլբայի» գրավիչ հատկություններն են դիտվում, մի կողմից՝ պատմական նյութի հավաստիությունը ««տեղեկություններ է բաղել տարեգրություններից», «ավանդել է բրոնխիկան», «աղբյուր էին անգիր վեպերն ու զրույցները», մյուս կողմից՝ ստեղծագործական երևակայությամբ կերտված գեղարվեստական պատկերը ««Երևակայությունը... սանձակոտոր նժույգ»»:

Բակունցի դատողություններից պարզվում է նաև, որ նույնը չեն խնդիրները, որ դրվում են պատմաբանի և այն արվեստագետի առաջ, հանդես է գալիս պատմական թեմայով: Պատմությունը գեղարվեստական ստեղծագործության մեջ հանդես է գալիս միանգամայն ուրույն բնույթով ու ձևով, ժանրային ու ոճական նկարագրով:

ԳՐԱԿԱՆ ԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԻՏ

Մեծ բարեկամություն

ԶԱՐԵՆՑ ԵՎ ԲԱԿՈՒՆՑ

Հատված «Մեր ինքնության գլխավոր նշանը» գրականագիտական հետազոտություններից)



ՈԱՖԱՅԵԼ ԻՇԽԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, լեզվաբան, գրականագետ, մատենագետ

«Մեծ բարեկամներ էին Ակսել Բակունցը ու Եղիշե Չարենցը: Նրանց բարեկամությունը շատ էր հիշեցնում Հովհաննես Թումանյանի և Ղազարոս Աղայանի մտերմությունը: Նրանց բարեկամությունն սկսվեց ծանոթության րոպեից և տևեց մինչև վերջ, որն ունեցավ տասը-տասնմեկ տարվա կյանք, բովանդակային, լեզուն, վճռական տարիներ, տարիներ բեղմնավոր տրեւոյան և ստեղծագործական վերելքի»¹:

Այս վկայությունը պատկանում է Գուրգեն Մահարուն, մի մարդու, ով, թերևս, ամենից ավելի իրավասու է այդպիսի վկայություն տալու, քանի որ եղել է ոչ միայն երկու գրողներին միմյանց ծանոթացնողը, նրանց գրչակիցն ու բարեկամը, այլ նաև նրանց մտերմությունը մյուսներից ավելի մոտ դիտելու բախտն ունեցողը:

Երբ է սկիզբ առել այդ բարեկամությունը: Կարելի է ասել՝ Նախքան երկու գրողների անձնական ծանոթությունը:

Ըստ տեղեկությունների, Նախքան Չարենցի հետ ծանոթանալը Բակունցը նրան, իբրև ստեղծագործողի, արդեն լավ գիտեր: Գ. Մահարին հիշում է իր ունեցած մի գրույցը Բակունցի հետ, որ կայացել է իրենց ծանոթացման առաջին իսկ օրը. Բակունցն ասում է. «Ես գյուղատնտես եմ, ագրոնոմ, գրականությամբ զբաղվում եմ իմիջիայլոց»: Մահարի. «Կարծում եմ ընդհակառակը»: Բակունց. «Կյանքը ցույց կտա: Ովքե՞ր կան, նորերից: Չարենցից բացի ոչ ոքի չգիտեմ»²:

Այս խոսակցությունը պետք է տեղի ունեցած լինի 1925-ին, և, անշուշտ, այն ժամանակ, երբ Չարենցն ու Բակունցը դեռևս անձամբ չէին ծանոթացել: Հայտնի է, որ Նախքան նրանց ծանոթանալը Չարենցը բարձր է գնահատել Ակսելի տաղանդը, թեև Բակունցը դեռևս որևէ գիրք չէր հրատարակել, միայն պարբերականների էջերում էր հանդես գալիս: Մահարին վկայում է, որ Չարենցն ուզում էր դեռևս անձանոթ Ակսելին դարձնել իր կազմակերպած «Նոյեմբեր» միության անդամ. «Իմ դարդս Ակսելն է: Նա էլ որ միացավ մեզ, էլ դարդ չունեմ»³:

Ըստ Մահարու, այս խոսքերն ասվելու օրն էլ երկու գրողները միմյանց հետ ծանոթանում են. «Եկավ Ակսելը: Ծանո-

Մինչև Երևանում հաստատվելը, Բակունցը մամուլում տպագրել էր իր լավագույն երկերից միայն մի քանիսը. պատմվածքներից՝ «Վանդուկ Բադին», «Գյուլբահարի համար»-ը, ակնարկներից՝ «Արտեփան», «Գավառական Նամականի» շարքը: 1926 թվականին տպագրվեցին բակունցյան առաջնակարգ այնպիսի երկեր, ինչպիսիք են «Օրանջիան», «Մրցողը», «Միրհավը», «Ծիրանի տափը», «Մթնածոլը» և այլն: 1927 թ. «Խորհրդային Հայաստանի» հունվարի 1-ի և 4-ի համարներում տպագրվեց «Ալփական մանուշակը»:



թացան: «Ավանդական գիշեր» Զանգի ափին: Այս անգամ չորսով» (Չարենց, Մահարի, Արմեն, Բակունց):

Մահարին դարձյալ չի նշում թվականը, հիշում է, որ ամառ է եղել («Շոգ, ամառային, երևանյան գիշեր»): Դա պետք է եղած լինի 1926 թ. ամռանը: Ըստ դիվանական մի փաստաթղթի՝ 1926-ի սեպտեմբերի 5-ին Չարենցն ու Բակունցը արդեն իբրև մտերիմ ընկերներ երևանում միասին թատրոն են գնացել, դրանից առաջ այցելած են եղել մի ծանոթի՝ Նրա տանը: Բակունցը Չարենցի հետ է եղել այն հայտնի արկածի ժամանակ, որը Չարենցի բանտարկության պատճառ դարձավ, իբրև վկա ցուցմունքներ է տվել. այդ բոլորը Նույն 1926 թ.:

Փաստաթղթերն ու հուշերը վկայում են, որ Նրանց «անծանոթ» բարեկամությունը սերտ ընկերության է փոխվել հենց ծանոթացման պահից, այսինքն՝ 1926 թվականի ամռան այն գիշերից:

Բակունցը երևանում հաստատվել էր Նույն 1926 թվականի մարտին: Նա Գորիսից եկել էր համահայաստանյան գյուղատնտեսական համագումարին մասնակցելու՝ որպես Զանգեզուրի ներկայացուցիչ և աշխատանքի էր հրավիրվել Հոգեժողովմատում, իբրև հողվարչության պետի տեղակալ: Շուտով նա երևան է տեղափոխում իր ընտանիքը: Նախապես բնակվել է Կոնդում, ապա 1927 թ. երկու սենյակ է ստացել Նալբանդյան փողոցի Նորակառույց միհարկանի շենքում (№ 96): Այդ բնակարանն էլ դարձավ Բակունցի ու Նրա գրչակիցների, հատկապես Չարենցի, հանդիպումների, գրույցների ու վեճերի «սրահը»:

1926 թ. իբրև հողժողովմատի ներկայացուցիչ Բակունցը շարունակել է շրջագայել Հայաստանի մի շարք շրջաններում, բայց և դարձյալ ժամանակ է գտել զբաղվելու գրական գործով, ու այդ թվականը գրած երկերի քանակի տեսակետից ամենաբեղմնավորն է եղել Նրա ամբողջ ստեղծագործական կյանքում:

Երկու գրողների սկսված ընկերության մի արդյունքն էլ եղավ այն, որ Չարենցի միջոցով Բակունցը, որ մինչ այդ առհասարակ առնչություն չուներ Երևանի գրական շրջանների հետ, սկսեց ներքաշվել գրական կյանքի մեջ: Ճիշտ է, նա մինչև վերջ էլ մնաց գրական վեճերին ու խմբակային բաշխումներին ամենաքիչ մասնակցողներից մեկը, հասարակական վայրերից խուսափող, բայց և փաստ է, որ մասամբ գրականությամբ զբաղվող գյուղատնտեսը սկսած 1926 թվականից դարձավ մասամբ գյուղատնտեսությամբ զբաղվող գրող: Այս գործում վճռական էր Չարենցի դերը:

Մինչև Երևանում հաստատվելը, Բակունցը մամուլում տպագրել էր իր լավագույն երկերից միայն մի քանիսը. պատմվածքներից «Վանդունց Բադին»,

«Գյուլբահարի համար»-ը, ակնարկներից՝ «Արտեմիան», «Գավառական Նամակա-նի» շարքը: 1926 թվականին տպագրվեցին Բակունցյան առաջնակարգ այնպիսի երկեր, ինչպիսիք են «Օրանջիան», «Մրո-ցը», «Միրհավը», «Ծիրանի տափը», «Մթնածորը» և այլն: 1927 թ. «Խորհրդային Հայաստանի» հունվարի 1-ի և 4-ի համարներում տպագրվեց «Ալպիական մանուշակը»:

1927 թ. լույս տեսած «Մթնածոր» ժողովածուն մամուլում հրապարակված մի քանի տասնյակ բակունցյան երկերի հատընտիրն էր. հավաքված 18 պատմվածքները (միայն երեքն էին առաջին անգամ հրապարակված) գրողի տաղանդին առավել բնորոշ ստեղծագործություններն էին՝ հայ գյուղի մարդկանց հոգեբանության ակնյայտ նկարահանումներով, քնարականությամբ ու քնարական բնապատկերներով, և ամենը հագեցած իր՝ Բակունցի խոսքով ասած, մի «պայծառ տիրություն»-ով: Ժողովածուի հրապարակ գալով Բակունցի ստեղծագործական դեմքը միանգամից որոշ դարձավ: Մամուլում հաճախ երևացող Նոր ու Նորոգվող գյուղի պատկերմանը նվիրված առօրյա ակնարկների ու պատմվածքների բազմությունից առանձնացավ ինքնօրինակ բովանդակությամբ հարուստ մի աշխարհ՝ «Մթնածոր» բնորոշ անունով: Սկսվեց Ակսելի գնահատման Նոր շրջան: Դրան մասնակցեց նաև Չարենցը: Ակսելին՝ «Մթնածորը» կարդալուց հետո, – այս վերնագիրն ունի այժմ արդեն հայտնի չա-րենցյան բառատուրք.

Քո «Մթնածորում» թախիծ է ծորում, Ու կարոտ՝ մանկույթ հարազատ ձորի, – Աշխատիր, սակայն, որ մութ այդ ձորում Քո պայծառ ուղին անդարձ չկորի (4, 414):

«Մթնածորն» այսպես է գնահատել 1927 թվականի Չարենցը: Մթնածորյան թախիծը, Նրա աղբյուրը բանաստեղծը ճիշտ է ընկալել և զգուշացրել է արել բարեկամին: Կա բանաստեղծության նաև Նախնական տարբերակը՝

Մթնածորում
Մութն է ծորում
Օճորքից. –
Նա չի՞ արդյոք
Տալիս մորմոք
Քո երգին: –
Այնտեղ դեռ կան
Մռայլ խութեր
Ու հերկեր, –
Բայց այնտեղից, որ դուրս ելար –
Պայծառ երգեր դու կերգես: (4,572):

Երկու տարբերակների բովանդակությունը ընդհանուր է՝ թախիծի ընդգծմամբ և մութ ձորում ուղին չկորցնելու վերաբերյալ զգուշացմամբ, այնտեղից դուրս ելնելու մարդանքով:

Այս բնույթի գրական վերապահում, կարծում եմ, Չարենցը չէր անի 30-ական

թվականներին, երբ Նրա գեղագիտական պատկերացումների մեջ բեկում էր կատարվել: 1936 թ. Բակունցի գնահատմանը նվիրած իր ծոն-բանաստեղծության մեջ («Եվ բառերի համար քո մարմար-յա...») Չարենցը Նույն «Մթնածորի» երկերը շատ բարձր է գնահատել՝ առանց վերոհիշյալ վերապահության: «Մթնածորը» գնահատող բանաստեղծության մտերմական այդ վերապահությունը առնչված է այն օրերին եղած որոշ մտայնության, ինչպես նաև չարենցյան այն պատկերա-ցումների հետ, որոնք շուտով փոփոխում պիտի ապրեին (բայց և չարենցյան զգուշացումը մարգարեական եղավ):

Չարենցը շուրջ քառորդ դարի ստեղծագործական ճանապարհ է անցել: Դա եղել է նաև ստեղծագործական զարգացում՝ մերթ աստիճանական, մերթ կտրուկ անցումներով: Բնականաբար, բուն այդ զարգացման և Նրա երանգների գլխավոր պատճառը պետք է փնտրել իր՝ բանաստեղծի խառնվածքի, Նրա տաղանդի բնույթի մեջ: Կարևոր են, օրինակ, չարենցյան ինքնավերլուծումներն ու ինքնավերագնահատումները, անընդհատ մտածումները մարդկանց, կյանքի, աշխարհի վերաբերյալ: Բայց և միաժամանակ այդ զարգացումը չէր կարող ինչ-որ չափով չափազանցվել «դոսից». և չի կարելի ուշադրության չառնել բանաստեղծի գրական ու անձնական ամենից ավելի մտերիմ բարեկամների դերը:

Չարենցի գրական վաստակին ամեն մի ծանոթացողի համար ակնհայտ է դառնում, որ 1920-ական թվականների վերջին, հատկապես 1929 թվականին բանաստեղծը գեղագիտական լուրջ վերանայումներ կատարեց. դրանց վկայությունն է 1930 թ. լույս տեսած «Եպի-թական լուսաբացը»: Նախ՝ դեռևս 1910-ական թթ. սաղմնային վիճակում եղած տարբերային որոշ պատկերացումներ «Եպիթական լուսաբացի» մեջ որոշակի ձևավորում ու Նոր որակ ստացան, ապա, որ հիմնականն է, կա Նորացում առհասարակ՝ բանաստեղծի զարգացման Նոր որակի ազդարարում: Չարենցյան այդ վերագնահատումները ցայտուն են դրսևորված «Ես այն չեմ այլևս», «Թուղթ բանաստեղծ բարեկամիս՝ NN-ին, գրված Երևանից», «Խոհ», «Մուսայիս», «Թուղթ Ակսել Բակունցին, գրված Լենինգրադից» բանաստեղծություններում: Դրանցում Չարենցը մասնավորապես գրում է, որ ինքն առաջ հախուռն էր «ինչպես պղտոր գետ, Եվ սրտով թեթև և երգով շռայլ» (4,17), որ արդեն դարձել է ծանր ու ժլատ, չի վատնում իրեն «թռվունկ խոսքով, – Այսպես ցողունն է հանդում ծանրանում, Երբ լցվում է ձուլ իմաստուն հասկով» (4,17): Կամ՝ «Լսիր, անգին, Պիտի ասեմ, Որ առաջվա Չարենցը չեմ... Սիրտըս էլ չի Այնքան շռայլ, ծանր է դարձել ու քիչ ժլատ»: Նա գրում է նաև, որ

Ինքն այլևս «ամեն ինչի չի արձագանքում», որ իր սիրտը չի հանդում, «ինչպես դաշտերում նոսրացվալենի», և որ դաշտ է ելնում «թմբուկի փոխարեն ծեռքերին պահած խոհում ծանրացած քնար պղնձի» (4, 18): Իր այդ փոփոխության մի կարևոր իմաստն է համարում այն ըմբռնումը, որ չնայած հասարակական փոթորիկներին, «Մարդը էլի մնում է մարդ, Որ ունի սեր, որ ունի սիրտ: Կարող էս դու՛ երգիր նրան՝ իր հույզերով մեծ ու մանրիկ»: (4, 30): Բանաստեղծը մերժում է «Ճանդաներին աղմկալի» ոգով գերի դառնալը (4, 30) և ճիշդ արձակելը (4, 29): Նա խիստ քննադատական հայացքով է նայում ժամանակի գրական անդաստանին և շեփորների ու ծնծղաների բանաստեղծության մեջ ուշագրավ քիչ բան է տեսնում. «Մեր երգերում՝ սակայն չկա Այսօր ոչ սեր, ոչ խոի, ոչ կյանք», «Պոետների մի ողջ բանակ, Սակայն երգեր քիչ կան այսօր, Այլ կա հաճախ թուղթ և թանաք» (4, 27): Զարենցը փորձում է հեռանալ «բարձրաշառաչ» երգերից՝ գրելով. «Ազատվել եմ ահա փորձում այդ մարմաջից»:

Այնուհետև, Զարենցը չափազանց կարևոր է համարում բանաստեղծի պատասխանատվությունը իր երկի, խոսքի նկատմամբ. «Խոսքը թույլն է նույն, Որ պահանջում է ջանք ու քրտնաջան լարում»: Նա դատապարտում է անփույթ, անսթափ վերաբերմունք բառի, խոսքի, ուստի և տաղանդի նկատմամբ. «Չենք սովորել դեռ մեր յուրաքանչյուր բառին նայել սիրով այս վեհ, այս խստությամբ ազնիվ» (4, 37), «Մենք չե՛նք եղել արդյոք զարմանալի անհոգ, Զարմանալի անփույթ, հաճախ թեթև» (4, 34), «Իսկ մենք ասում ենք դեռ, զարմանալի թեթև Այն փոշեպատ մաշված ուղիների հունով, Որ հունն է բույս մտքի, տրաֆարետի սերտած, Երկու խղճուկ հանգի, երկու կոշտած Դատողության» (4, 35): Եվ նորից ուղեկցում է. «Խոսքը թույլն է նույն՝ Դիմարող, համառ, – և եթե մենք Չիրկիզենք նրան մեր խոհերի հունում, Աշխատանքով անդուլ թե չծուլենք նա կխամրի, հանգած, կնոսրանա, կփխրանա ինչպես մզած պտուղ» (4, 34): Եզրակացնում է. Հասել ենք մենք արդեն այն սահմանին, որից Սկսվում է մի նոր ու դժվարին վերելք (4, 37):

Զարենցի շրջապատում ո՞ր հեղինակը կարող էր ամենից ավելի շատ ազդակ հանդիսանալ բանաստեղծի այս բնույթի ներքին զարգացման: Այդպիսի մեկը նախ ինքը հեռու պետք է լիներ «շեփորաթմբուկային անսիրտ ու անսեր» գրականությունից և խոսքի նկատմամբ «անհոգ, անփույթ» վերաբերմունքից: Այդպիսին պետք է խստապահանջ, «ծանր ու ժլատ» լիներ իր բառի, գեղարվեստական խոսքի նկատմամբ և այն ստեղծելիս ճաշակած

լիներ «ջանք ու քրտնաջան լարում»: Վերջապես, այդպիսի մեկը պետք է շատ մտերիմ լիներ Զարենցին, շրջապատում ամենից ավելի մեծ հեղինակությունը բանաստեղծի համար:

Չայնը դարձյալ տանք Մահարուն. «Ամենայն օր, դուրս գալով Նալբանդյան նրբանցքից, ես պիտի անցնեի Նրա (Բակունցի – Ռ. Ի.) տան մոտով, դուրս պիտի գար նա՝ մի ծխախոտ վառելով, պիտի գնայինք Զարենցի մոտ, Զարենցը պիտի հարցներ. – Ի՞նչ կա-չկա, տղեք ջան, – հետո պիտի գար Արմենն իր ամեհի բատով, և սկսվեր 4-ի զրույցը... Ինչի՞ մասին էինք խոսում մենք. Բենվիլստոտ Զեյնու և ողբերգական Կոմիտասի՞ մասին, ժամանակակից գրական անառողջ երևույթների՞՝ «գրական փոշտացիների», թե՞ Աբովյանի, Սիամանյոյի ու Սայաթ-Նովայի մասին, Երևանի ապագայի կամ գուցե Եսենինի ու Չվարթնոցի՞ մասին... Խոսակցության տոն տվողը Զարենցն էր, որը սակայն իր ոչ մի դրույթը վերջնական և վավերական չէր համարում, մինչև չստանար Բակունցի հավանությունը»:

Յիմա էլ լսենք, թե ինչ է գրում մի այլ ժամանակակից՝ Վ. Նորենցը. «1920 և 1930-ական թվականներին Եղիշե Զարենցի շուրջ համախմբված գրական ընկերներից՝ Ակսել Բակունցը ամենահավասարակշռված և կազմակերպված բնավորության տեր գրողն էր, սակավախոս ու ծանրաբար: Նրա խոսքը միշտ հեղինակավոր էր և հուզիչ, խոր և իմաստալից»⁸: Խոսք տանք նաև Վ. Ալազանին. «Ակսելով հիացած էին շատերը, այդ թվում Եղիշե Զարենցը: 1926 թվականին, հենց Եղիշե Զարենցի միջոցով, ես բախտ ունեցա ծանոթանալու վերին աստիճանի հմայիչ այդ մարդու և մեծ գրողի հետ»: «Բակունցը խիստ քննադատում էր որոշ մտավորականների մոտ նկատվող բացասական երևույթները և խարազանում դրանք: Այդ նպատակով՝ նա որոշել էր գրել սատիրական մի վեպ՝ «Երիմեյան բացի» վերնագրով: Ոգևորվելով Բակունցի նախաձեռնությունից՝ Զարենցն էլ որոշել էր նույն հարցի մասին գրել սատիրական մի պոեմ՝ «Վայ-վայ ցեղի պատմությունը» վերնագրով»⁹: Վերջապես, մի ժամանակակից հուշ էլ բերենք երկու գրողների անձնական հարաբերության ուշագրավ կողմին վերաբերող. «Ակսելը... բնավորությամբ կազմակերպված մարդ լինելով, չափի զգացումը չէր կորցնում նույնիսկ «կատաղի խնջույքների» ժամանակ: Իր այդ բնավորությամբ զսպում էր Զարենցի հախուռն բռնկումները և նրա համար մի տեսակ սրտակից դայակի դեր էր ստանձնել»¹⁰:

Այս վկայությունները, ինչպես և մի



շարք ուրիշները, միմյանց սոսկ լրացնում են, և բոլորը միևնույնը վկայում այն մասին, թե Զարենցն իր շրջապատի գրողներից ամենից ավելի ում կարծիքը կարող էր հաշվի առնել, և թե նրա տաղանդի նոր զարգացումների ժամանակ՝ 1929–30 թվականներին բանաստեղծի վրա ամենից ավելի ում խոսքերն ու խրախույսները կարող էին ազդել: Արդյոք ակսելյան այդ ազդակը նկատի չունե՞ր բանաստեղծը, երբ իր վերափոխման մասին գրում էր. «Գզվեց ինձ սիրով մի ձեռք հայրենի, Եվ ես մի գիշեր իմաստուն դարձա» (4, 18):

Յիշենք նաև Զարենցի վերափոխման ազդարարող «Եպիբական լուսաբացի» Բակունցին նվիրած օրինակի վրա հեղինակի արած մակագրությունը. «Սիրելի Ակսելյին, միակ բարեկամս» (5.1.30 թ.):

Չենք ուզում բերված վկայությունները վերլուծելով մանրամասնել ու մանրացնել. կարծում ենք, յուրաքանչյուր ներհուն ընթերցող բերվածից կեզրակացնի Զարենցի ստեղծագործական կյանքում նրա գրական ու անձնական ամենասիրելի ու ամենահեղինակավոր բարեկամի խաղացած դերի մասին:

Կարևոր է, որ Բակունցի գրական երկերը՝ գրված 1929–30 թվականներից առաջ, այդ ժամանակ և հետո, իրենց բնույթով հակապատկերն են գրական այն որակի, որը քննադատում էր Զարենցը 1929 թվականին, և օրինակն են այն մյուս որակի, որին ձգտելը Զարենցը ամենակարևորն էր համարում: Ուշագրավ է նաև, որ չարենցյան այդ քննադատությունն էլ, գնահատականն էլ ամենից ավելի խտացված տեղ են գտել «Թուղթ Ակսել Բակունցին» բանաստեղծություն-նամակի մեջ:

Երկու գրողների բարեկամությունը սկզբից և եթե այնպիսի հունի մեջ է ընկնում, որ փոխադարձ ազդեցությունները միմյանց վրա անխուսափելի էին: Ստորև



ընդհանրությամբ այն հայացքների, որ նրանք ունեին գրականության ու արվեստի զարգացման ուղիների մասին: Երկուսն էլ՝ փոխադարձաբար գիտակցում էին միմյանց մեծությունը, առանց ավելորդ սիրաշահումների: Սակայն այնքան տարբեր էին նրանք իրենց մարդկային բնավորության գծերով, վարվեցողությամբ ու կենցաղով: Բնավորությունների այդ տարբերությունը ամենահին չէր խանգարում նրանց բարեկամությանը»¹²:

Այնպիսի պատկերացում ունեմ, որ 1920-ական թվականների երկրորդ կեսին Չարենցի համար Ակսելը մի տեսակ գյուտ է եղել՝ ոչ միայն իբրև հայոց գրական երկնակամարում ծագած նոր ու թարմ աստղ, այլև որպես մի խրախուսական հենարան բանաստեղծի մեջ խմորվող գեղագիտական նոր պատկերացումներին:

ազատ էլք ու զարգացում տալու համար: Չետաբերական է, որ այդ խմորումների մասին Չարենցը բավական շատ գրել է նաև արդեն հիշատակված «Ես այն չեմ այլևս» բանաստեղծության մեջ, որը հասցեագրված է՝ «Պատասխան թշնամիներին»: Բանաստեղծը հանձին Բակունցի հոգեկան վստահելի խարսխակալ ունեցավ իր զարգացմանը շատ անգամ խանգարած կամ այդ զարգացումը շեղած քննադատներին՝ իր խոսքով ասած՝ թշնամիներին այլևս որևէ տուրք չտալու համար:

Ակներև են նաև երկու գրողների բարեկամության ստեղծագործական դրսևորումները. հիշենք, օրինակ, որ գրականության ազգային ձևերի որոնման ուղիներում երկուսն էլ սկսեցին եռանդով հետաքրքրվել հայ միջնադարով: Սկիզբը դրեց Բակունցը, որը Մատենադարանի ձեռագրերում որոնում էր հայ աշխարհիկ մի ոլորտագնացություն, իսկ ամենից շատ արձակի լեզվաոճի խտացման նմուշներ: Այդ ժամանակ էր, որ նա ոգևորվեց Վարդան Այգեկցու (իր անվանմամբ՝ Այգեցու) արձակով ու կատարեց նրա դասական փոխադրությունը նոր լեզվի, ինչպես և գրեց միջնադարյան պատմվածքների մի ամբողջ շարք (որոնց ձեռագրերը հետո ոչնչացվեցին): Չարենցն էլ ոգևորվեց Շնորհալու և Նարեկացու չափածոյով և միջնադարյան գույներին, ինչյուններին ժամանակակից ինչոդություն տալով, նրանցով անօրինակ վարպետությամբ տոգորեց «Գիրք ճանապարհի»-ի շատ էջեր: Չետաբերական է նաև, որ «Էպիքական լուսաբացում» Չարենցը նոր վերաբերմունք է արտահայտում գրականության մեջ թախծի, տխրության դերի նկատմամբ: Դիմելով իր մուսային, նա գրում է. «Չարմանալի հստակ բո երգերում Թախիժ, թախիժ կա ջինջ, անափ կարոտ: – Ինչքան եմ ես, գիտե՞ս, սիրում հիմա Ոգի», ոգի՞ սրբող, բայց չկրծող

Այդ ջինջ թախիժը քո խնդանման, Այդ տխրությունը քո ստեղծագործող» (4, 43): Ուրեմն, ըստ Չարենցի այս պատկերացման, թախիժն ու տխրությունը արվեստում կարող են ստեղծագործող տարր լինել: Այս ըմբռնմանը հասած բանաստեղծն այլևս կարող էր վերապահություն ունենալ «Մթնածորում» ծորող թախծի ու սփռված «պայծառ տխրության» վերաբերյալ:

Երկու գրողների 30-ական թթ. սկզբների պատկերացումներում ընդհանրություններ կան նաև հայրենիքի անցած ուղու գնահատման հարցերում: «Պատմության քառուղիներով» խորաթափանց վիպերգի մեջ տեղ գտած չարենցյան ներքին խորհուրդը այլ գույներով կարելի է գտնել բակունցյան որոշ մտորումներում:

Ընդհանուր էր նաև Աբովյանի նկատմամբ յուրովի հետաքրքրությունը: Այն սկիզբ է առել Աբովյանի կյանքին ու գործին Բակունցի տված նոր, ինքնօրինակ գնահատականով: Այգեկի վկայությամբ՝ Բակունցը Աբովյանի կյանքով սկսել է զբաղվել Աղասի Խանջյանի խորհրդով: 1932 թ. լույս տեսավ Բակունցի տքնաշան աշխատանքի արդյունքը՝ «Խաչատուր Աբովյանի «Անհայտ բացակայումը»: Այդ աշխատությունը գրողի ապագա վեպի պատմագիտական հիմնավորումն էր ու դիպաշարի գծապատկերը: Բակունցյան Աբովյանի մի գլխավոր առանձնահատկությունը՝ իր կյանքի ու ըմբռնումների տանջալի վերագնահատումն է, հիասթափությունը ցարական Ռուսաստանից ու Եջմիածնի դեկավարությունից և փախուստը կայսրության սահմաններից:

Կարդալով Չարենցի հաջորդ թվականին (1933) գրած «Դեպի լյառը Մասիս» վիպերգը՝ դժվար չէ նրանում նկատել Աբովյանի կյանքի բակունցյան նոր մեկնաբանման ելևեղումները. թե՛ Բակունցի «Անհայտ բացակայումն», թե՛ վիպերգի մեջ առկա է անհայտացմանը նախորդող անբուն, տագնապալի գիշերը, դուրսգալու, պարոտյան և այլ վերնուշեր, կասկած և հիասթափություն նախկին հավատի ու համոզումների նկատմամբ և այլն: Ու, ինչ խոսք, հատկանշական է, որ վիպերգը ձևավորվել է հենց Բակունցին՝ «Ակսել Բակունցին, պայծառ բարեկամին»: Միաժամանակ, վիպերգի վերջավորությունը և վերնագիրը, թերևս, բանավիճալի տարր են պարունակում: Հակառակ Բակունցի Աբովյանի, չարենցյան հերոսը Արաբսն անցնում է ոչ թե՛ հայացքն ուղղած Եվրոպային, այլ հայոց Արարատին և խորհրդանշորեն նրա փառքի ճանապարհն է բռնում: Այս բանավիճալի մասնակի տարրը առավել ևս ակնհայտ է դարձնում Բակունցի դերը չարենցյան մտահղացման ծագելու գործում: Ասում են, որ Չարենցի Աբովյան-հերոսի մեջ բավական զգալի է

խոսք կլինի Բակունցի վրա Չարենցի թողած ազդեցության մասին, իսկ այժմ ուզում եմ նշել, որ երկու գրողները թեև տարբեր էին իրենց մարդկային ու ստեղծագործական խառնվածքներով, բայց և ընդհանուր էլ շատ բաներ կային նրանց մեջ. նախ նրանք շրջապատում առանձնանում էին իրենց օժտվածության չափով, գրական ավելի բարձր ճաշակով, արվեստի հարցերի մեջ առավել խորանալու ձգտումով ու կարողությամբ, մանավանդ ամեն մի արվեստի ծաղկման համար ազգային հողը ամենագլխավոր նախապայմանը համարելու համոզմով: Մահարին, ինչպես վերը տեսանք, երկու գրողների մտերմությունը համեմատում է Աղայանի և Թումանյանի բարեկամության հետ: Մեզ թվում է, որ սխալված չենք լինի, եթե այն համեմատենք նաև Շիլլերի ու Գյոթեի հայտնի մտերմության հետ, երբ առկա էր շատ տարբեր ստեղծագործական խառնվածքների սերտ բարեկամություն:

Չարենցի ու Բակունցի խառնվածքային տարբերությունների մասին մի շարք հուշեր կան, միշտ գրեթե նույն բովանդակությամբ. բերում ենք դարձյալ Մահարուն ու Լորենցին, որոնք գուցե ամենահաջողներն են: Մահարի. «Տարբեր խառնվածքի մարդիկ էին Չարենցն ու Բակունցը: Չարենցը հախուռն էր, անմիջական, Բակունցը գուսպ ու ներհույս, Չարենցի մոտ ուժեղ էին անողորմ հումորն ու կտորով եզրակացությունները, Բակունցն ավելի ռոմանտիկ էր և հարուստ կախման կենտրոնով... Չնայած դրան, նրանք մի մեծ ներդաշնակություն էին և իրար հասկանում էին կես խոսքից: Ինչպես Չարենցն էր ընդունում Բակունցի հեղինակությունը, այնպես էլ Բակունցը՝ Չարենցին»¹³: Լորենց. «Եղիշե Չարենցի և Ակսել Բակունցի սրտագին բարեկամությունը հայտնի է: Երկու մեծատաղանդ գրողների մոտոկությունը պայմանավորված էր

հնքը՝ բանաստեղծը: Այր, բայց Բակունցի Աբովյանի մեջ էլ բավական շատ է հնքը՝ Բակունցը: Եվ ուրիշ ինչպե՞ս կարող էր լինել. մի՞թե կարող է մի գրողի հույզերն ու մտածումները ինչ-որ կերպ չմարմնանալ նրա որևէ գլխավոր, այն էլ դրական հերոսի մեջ: Այս իրողությունը, բնականաբար, չի բացառում Չարենցի մտահղացման բակունցյան ազդակի առկայության փաստը: Ի դեպ, քիչ ավելի ուշ Բակունցն իր վեպի այն գլուխը, ուր պատկերված է Աբովյանի և Պարոտի վերելքը դեպի Արարատ, վերնագրեց չարենցյան ձևով՝ «Դեպի լյառն Մասիս» և իբրև բնաբան դրեց Չարենցի խոսքերը՝ «Դեմը դաշտն էր անծայր...»:

Վերն ասվեց, որ Չարենցը ջանում էր ներբաշել Բակունցին գրական կյանքի մեջ և որ Ակսելը հոգեկան, գուցե հոգեբանական հենարան ու ազդակ եղավ բանաստեղծի ըմբռնումների նոր զարգացման շրջանում: Այժմ պետք է արձանագրենք, որ Չարենցն իր հերթին նույնպիսի, և գուցե ավելի մեծ չափով, հենարան է եղել Բակունցի տաղանդի ծաղկման համար: Երևի պատահական չէ, որ երկու գրողների ծանոթացման տարին ամենաբեղմնավորը եղավ Բակունցի կյանքում, և նրանց ընկերության այդ առաջին տարվա ընթացքում ստեղծվեցին բակունցյան լավագույն պատմվածքները, հրատարակության հանձնվեց գրողի առաջին ժողովածուն: Յիշենք նաև, որ Բակունցը շատ ավելի է գրավոր ու բանավոր «հարվածների» ենթարկվել, քան Չարենցը: Ուրեմն և, Բակունցին ավելի շատ էր պետք հոգեբանական մի գործը հենարան կամ վահան անողոք քննադատության նետերի դեմ: Այդպիսի հենարան ու վահան եղավ ամենից ավելի Չարենցը: Բակունցն ուներ նաև ուրիշ պաշտպաններ, այդ թվում Ա. Խանջյանն ու նրա մտերիմներից մի քանիսը, սակայն Չարենցը՝ ժամանակի հայ գրականության կենտրոնն ու ողնաշարը (Ա. Խանջյանի արտահայտությամբ), իբրև հոգեբանական հենարան ամենից ավելի գործել էր: Յիշենք միայն մի փաստ. 1933 թվականից սկսած Բակունցը լրագրերում, գրողների համագումարների ու ժողովների ամբիոններից, պաշտոնական որոշումներում խստագույնս մեղադրվում էր իր «ծիրանի փողի» համար: Ըստ հուշերի՝ գրողը հանգիստ է տարել այդ քննադատությունը¹³: Պատմում են, որ երբ նրան ակնարկում էին այդ քննադատության մասին, նա ասում էր. «Ես հրացանս կրակել եմ, հիմա մի ինչ ուզում է թող խոսի»: Յիշենք այս դիմակայումը պահպանվում էր նաև բարեկամների ու ամենից ավելի եղիշե Չարենցի դրական, բարձր կարծիքով ու խրախույսով «ծիրանի փողի» վերաբերմամբ: Այդ կարծիքը այսօր փաստվում է ոչ միայն հուշերով, այլ հենց Չարենցի տողերով, ուր

բակունցյան «ծիրանի փողը» համարված է հազարամյա, նաև հայ ժողովրդի դավաճան երազանքի, նրա խաղաղության ու եղբայրության ձգտման խորհրդանիշ: Եվ այդ տողերը գրվել են այն ժամանակ, երբ արդեն ոչ ոք Բակունցին պաշտպան չէր կանգնում. Չարենցը միակն էր:

Չարենցի դերը Բակունցի ստեղծագործական կյանքում նաև ուրիշ դրսևորումներ է ունեցել: «Երկիր Նաիրի» վեպը, որ Կարսի, նրա մարդկանց պատկերման միջոցով սկիզբ էր դնում Նաիրյան յուրօրինակ համայնապատկերի ստեղծման, ազդակ եղավ Չայաստանի այլ վայրերի համանման պատկերներ ստեղծելուն և ընդհանուր համայնապատկերը լայնացնելուն: Յայտնի է, որ այդ բանը ամեն կերպ խրախուսել է ինքը՝ Չարենցը: Այդպես երևան եկան Վ. Թորթվեցի «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա», Գ. Մահարու «Մանկություն, պատանեկություն, երիտասարդության սեմին», ավելի ուշ՝ «Այրվող այգեստանները», Մ. Արմենի «Երևանը» և «Յեղևար աղբյուրը», ինչպես նաև Ա. Բակունցի «Կյուրեսը», որը ծավալով ամենափոքրն էր, ավելի ճիշտ՝ ամենախտացվածը և, մեզ թվում է, երգիծանքի ու թախծի կամ ծիծաղի արցունքի բանաստեղծական միաձուլման տեսակետից լավագույնը թվարկվածների մեջ: Յենց այդ տեսակետից էլ «Կյուրեսը» առավել նման է «Երկիր Նաիրի»-ին, անշուշտ, Եական տարբերություններով հանդերձ:

Մեզ թվում է, որ Բակունցի «Բրուտի տղայի» (1931 թ.) մտահղացումը նույնպես չարենցյան ակունք ունի: Յիշենք մասնավորապես «Իմ ընկեր Լիպոն» (1928 թ.): Երկու դեպքում էլ քնարական հուզիչ խոսքը վերաբերում է մանկության ու մանուկ օրերի սիրելի ընկերոջը և ապա նրա սպանվելուն: Չարենցյան խոսքից եկող որոշ տպավորություններ են զգացվում նաև Բակունցի «Սև ցեղերի սերմնացանը» պատմվածքում (1933 թ. սեպտ.), որի վերնագիրն իսկ չարենցյան բնույթ ունի. հիշենք, որ բանաստեղծը մի շարք անգամ է իր և այլոց համար սերմնացան բառը ուղղակի և խորհրդանշական իմաստով գործածել. օրինակ, «Ես շոյվ եղա իբրև սերմնացան» (1929), «Չամայնական դաշտերի սերմնացաններ» (1933, հունիս), «Յոթը խորհուրդ գալիքի սերմնացաններին» (1933, փետր.) և այլն. «Եպիբական լուսաբացի»՝ Բակունցին նվիրած օրինակի մակագրությունն անգամ լրացված է Նարեկացու այն ասույթով, որտեղ առկա է՝ «ապագան սերմնաղ ունիքերի երկրի» խոսքը:

Երկու գրողների ստեղծագործական համագործակցությունը դրսևորվել է նաև ուրիշ շատ առիթներով, ինչպես, օրինակ՝ «Յոկտեմբեր-նոյեմբեր» տարեգիրքը (1932 թ.), «Նոյեմբեր» հանդեսի առաջին (և միակ) համարը (1932), «Չայ գրականության քրեստոմատիան» (1933)

համատեղ կազմելիս: Պետհրատում բաժնի վարիչ եղած ժամանակ Չարենցը հանձնարարում է Բակունցին Տ. Սվիճտի «Գուլիվերի ճանապարհորդություններ» թարգմանության խմբագրությունը և առաջաբան գրելը, նախաձեռնում է Ն. Գոգոլի «Տարաս Բուլբայի» հրատարակությունը՝ Բակունցի թարգմանությամբ ու առաջաբանով, հրատարակում գրողի «Սև ցեղերի սերմնացանը» ժողովածուն (1933):

«Սիրելի Ակսելին, որպես նշան գրական և անձնական անխախտ սիրո և բարեկամության: 1932, VII, 7»: Այսպես Չարենցը մակագրել է նույն տարին լույս տեսած իր երկերի ժողովածուի՝ ընկերոջը մատուցած օրինակը: Բանաստեղծը մինչև կյանքի վերջը նվիրված մնաց անխախտ սիրո ու բարեկամության այդ ուխտին: Ժամանակակիցների հրապարակված ու չհրապարակված հուշերում ուշագրավ շատ դրվագներ կան երկու գրողների անխախտ բարեկամությունից. հիշում են, օրինակ, թե որքան է Չարենցը սիրել Բակունցի բնակարանն այցելել և՛ գրուցելու, և՛ գվարճանալու, և՛ մանավանդ լսելու Կոմիտասի երգերը¹⁴, որոնք Բակունցի երգացանկի գլխավոր մասն են կազմել: Կամ թե՛ ինչպես էր Բակունցը հյուրանոցի սենյակում, ուր ապրում էր Չարենցը, հուզվում լսում բանաստեղծի նոր երկերի ընթերցումը, ինչպես նրանք միասին լսում էին Ռոմանոս Մելիքյանի նվագը, ու Բակունցն արտասվում էր¹⁵, և կամ տարբեր առիթներով ինչպիսի գզուշ հոգատարությամբ էր Բակունցը վերաբերվում իր ընկերոջը, նրա ոչ սթափ պահերին տուն ուղեկցում նրան և այլն:

Յիշում են, որ Բակունցը ժամանակակից բանաստեղծների մասին խոսելիս ասում էր. «Չարենցից հետո էլ ի՞նչ բանաստեղծություն»¹⁶: Ծայրահեղ է, բայց վավերական, քանի որ հաստատվում է Բակունցի պահպանված գրավոր ու բանավոր ելույթներով: Նշենք հայ գրականության լեզվի մասին գրողի հայտնած հետևյալ կարծիքը Չայաստանի գրողների համագումարում (1934 թ., հուլիսի 6-ին). «Ես, դժբախտաբար, մեր գրողների մեջ չեմ գտնում այնպիսին, որը լեզվի տեսակետից օրինակ լիներ, բացի ընկ. Չարենցի լեզվից, և այդ պատիվը պատկանում է մեր մեծ գրող Չարենցին»¹⁷: Կամ հիշենք Մոսկվայում հրապարակված մի ասուլիս, որտեղ Բակունցը հայ գրողներից միայն Չարենցին է հիշատակում հետևյալ կերպ. «Ռապալը գրողին գնահատում էր ոչ այնքան նրա ստեղծագործական ակտիվության համար, որքան գրական կազմակերպություններում գրողի ունեցած մասնակցության աստիճանով: Եվ մինչև այժմ էլ Մոսկվայում հայտնի են մի շարք այնպիսի ազգային գրողներ, որոնք չունեն իրական ստեղծագործական կշիռ, այն դեպքում, երբ մեր գրականությունը

իրոք առաջ շարժող որոշ գրողներ քիչ են հայտնի: Յիշենք Չարենցին: Այդ խոշորագույն բանաստեղծը՝ ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Միության համար, գրեթե անծանոթ է ռուս ընթերցողների լայն շրջանին, իսկ եթե հայտնի էլ է, ապա ավելի շատ որպես արձակագիր: Դա ավելի քան անարդար է»¹⁸:

Բակունցը իր «Պրովինցիայի մայրամուտում» Չարենցին հիշում է այսպես. «Ահա լուսավորվեցին այս փողոցի ծառերը, որոնց գեղեցկությունը վաղեմի մի օր գովել է այն նշանավոր պոետը, որի անունը մեզ համարձակություն ենք չենք ավելի մանրամասն նկարագրելու լուսաբացը...»¹⁹:

Ս. Մարշակը տարիներ անց վերհիշելով իր ծանոթությունը Ա. Բակունցի հետ՝ ընդգծում էր, թե նա անձնական խոսակցությունների ժամանակ շատ բարձր էր գնահատում Չարենցին (միայն այդ գնահատումն է հիշում)²⁰:

Երկու բարեկամների մեջ, անշուշտ, եղել են նաև տեսական ու անձնական անհամաձայնություններ, երբեմն որոշ անհարթություններ: Կարելի է հիշել 1934 թվականին տեղի ունեցած լեզվի հարցերին վերաբերող բանավեճի ժամանակ Չարենցի ու Բակունցի արտահայտած տարբեր տեսակետները: Չարենցն այն կարծիքին էր, որ հայ գրականության լեզվի մշակման թուլանյանական ուղին, իր խոսքով ասած, «պատմականորեն դատապարտված է մահվան» (6, 244 – 245), և որ հայ գրականության լեզուն զարգացել է ու պիտի զարգանա տեղյակական ուղիով (6, 245, 322): Բակունցը բանավիճելով Չարենցի հետ՝ այն կարծիքն էր հայտնում, որ ճիշտ չէ ասել, թե հայ գրականության «լեզուն զարգացել է Տերյանի ձևով»²¹ և որ ժամանակակից գրական լեզվի, Բակունցի խոսքով ասած, նախահայրը Թումանյանն է, ուստի «Թումանյանը այս տեսակետից ավելի շատ տվյալներ ունի օգտակար լինելու, քան Տերյանի լեզվաշինարարության փորձը»²²:

Այս բանավեճում նկատելի է կողմերից յուրաքանչյուրի ստեղծագործական և լեզվագեղագիտական հակումների դրսևորումը: Ընդ որում, Չարենցը, մեր կարծիքով, իրավացի էր և իրատես՝ պնդելով, որ հայ գրականության արևելյան հատվածի լեզվի զարգացումը, Տերյանի հանդեպ գալուց ի վեր, գերազանցապես զարգացել է տեղյակական հունով, բայց և բանաստեղծը կտրական էր այդ զարգացման ընթացքում թումանյանական ուղղության դերը անտեսելով (թեև Թումանյանի լեզուն առանձին վերցրած բարձր էր գնահատում): Բակունցը հագիվ թե հիմք ունենար 1920 թվականից հետո հայ գրականության լեզվի զարգացումը թումանյանական համարելու, թեև նա իրավացի էր, երբ կարևոր էր համարում հայ գեղարվեստական լեզուն հարս-

տացնելը՝ Թումանյանի լեզվաոճական գանձարանից օգտվելու միջոցով:

Չարենցի ու Բակունցի միջև մի հակառակություն է եղել 1935-ին: Այդ թվականի ապրիլին Չարենցին հեռացրել են գրողների միությունից. չենք քննում, թե որքան էր հիմնավոր այդ որոշումը, միայն հիշենք, որ այդ որոշման օգտին քվեարկել են նաև Չարենցի բարեկամները, այդ թվում Բակունցը: Այդ առթիվ Չարենցը գրել է «Ներքող երգողներին» մեծարժեք բանաստեղծությունը, որ սկսվում է այսպես.

Դո՛ւ, Ակսել, և՛ դո՛ւ, «Հայդուկ» Ալազան, Եվ դո՛ւ, Դերենիկ, և Նորենց դու «ծեր», – Դուք հերոսական կամքով՝ միաձայն ինձ դուրս եք անում միությունից «ձեր»...²³

Նույն թվականին Չարենցը մեկնում է Թիֆլիս և գանգատվում Ա. Խանջալից, այս դեպքում ևս չքննենք, թե ինչն էր դրդապատճառը, միայն ասենք, որ դա դուր չի գալիս Բակունցին և նույնպես առիթ է տալիս երկու բարեկամների որոշ կարճատև հակադրության:

Չարենցը 1937-ին մի պահ կասկածել է նաև, որ Բակունցին ասած որոշ մտքեր նա կարող էր հայտնած լինել քննչական մարմիններին, և իր այդ կասկածը հայտնել է Ա. Խանջալյանին, ինչպես և նախքան այդ գրել է Բակունցին նվիրած իր վերջին բանաստեղծության սևագիր առաջին տարբերակում²⁴: Իհարկե, Չարենցի կասկածը լիովին անհիմն էր, բայց զարմացնում է բանաստեղծի ներողատուությունը: «Ներքող երգողներին» բանաստեղծության մեջ նա գրում է իրեն վտարողներին ներելու իր պատրաստակամության մասին: Վերոհիշյալ սևագրում էլ Ակսելին ներելու մասին է մի քանի տեղ շեշտում: Առհասարակ Չարենցի բարոյա-քաղաքացիական կերպարը ուշագրավ շատ կողմեր ունի:

Չարենցը 1930-ական թվականների առաջին կեսին մնում էր հայ գրական կյանքի կենտրոնական դեմքը, բայց, միաժամանակ, ինչպես պատմական դեպքերի ընթացքը ցույց տվեց, նա ուղղակի բացառիկ եղավ քաղաքացիական արիության տեսակետից: Եվ դա ամենից ավելի արտահայտվեց իր գրական ու անձնական ամենասիրելի բարեկամին մինչև վերջ նվիրված մալու փաստով: «Օ, խեղճ իմ բարեկամ», – բացականչում է բանաստեղծը ընկերոջ «անհայտ բացակայման» առիթով և օրինում նրան իր երգով, պարզում ձեռք եղբայրական:

Սա սխրագործություն էր, որի նմանը կամ որի մի այլ օրինակը գոնե մեզ անծանոթ է անցած այն տարիներից: Դա այն ժամանակ էր, երբ պարբերականները և ժողովների արձանագրությունները լի էին Բակունցին դատապարտող գրություններով, երբ գրողի անունը առանց այսպանելու տալիս անգամ հավասար էր հան-


ցանքի: Չարենցը միակն էր, որ ոչ միայն չմիացավ ընդհանուր երգչախմբին, այլ գրեց Բակունցի լուսապայծառ արվեստն ու անձը զարմանալի ճշմարտացիությամբ գնահատող մի ներքող, որ այժմ էլ, երբ հատորներ են գրվել Բակունցի մասին, մնում է գրողի չգերազանցված գնահատականը: Այդպես, Բակունցը իր եղբրական վախճանից մի փոքր առաջ էլ իր անձով, արվեստով ու ճակատագրով Չարենցի հզոր, թեև ողբերգությամբ լի մի ներշնչման պատճառ դարձավ, և ստեղծվեց հայոց չափածոյի ամենից ավելի շողշողուն գոհարներից մեկը...

Ծանոթագրություն

- 1 «Ավանգարդ», 1959, № 128:
- 2 «Գրական թերթ», 1959, 26 43:
- 3 Գ. Մահարի, Չարենց նամե, Ե., 1968, էջ 51:
- 4 Նույն տեղում, էջ 52
- 5 Ե. Չարենցի երկերից օրինակները բերված են ըստ բանաստեղծի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության, քաղվածքների մոտ փակագծերում նշված է հատորը և էջը:
- 6 Ե. Չարենցի երկերի ժողովածուի 4-րդ հատորում այս տարբերակը ծանոթագրված է իբրև վերջ բերված քառատողի 2-րդ մաս (1, 52):
- 7 «Գրական թերթ», 1959, N 431
- 8 Վ. Նորենց, Յուշեր և արձագանքներ, Ե., 1968, էջ 1951
- 9 Վ. Ալազան, Յուշեր, Ե., 1967, էջ 276 – 277:
- 10 Վ. Անանյան, Լեռներ հայրենի, Ե., 1963, էջ 583–584:
- 11 «Ավանգարդ», 1959, N 128:
- 12 Վ. Նորենց, Յուշեր և արձագանքներ, էջ 202:
- 13 Տեն, օրինակ, Վ. Նորենց, Ն. տ., էջ 197–198:
- 14 Տեն, օրինակ, Վ. Արամունու և Գ. Մահարու հուշերը, «Խորհրդային դպրոց», 1959, № 43, «Գրական թերթ», 1959, № 43, Գ. Մահարի, Չարենց նամե, էջ 96:
- 15 «Գրական թերթ», 1959, № 43:
- 16 «Ավանգարդ», 1959, N 28:
- 17 Բակունցը գրականության մասին, Ե., 1959, էջ 125:
- 18 «Լիտերատուրնայա գազետա», 1934, № 104:
- 19 Գ. Մահարին էլ է վկայում, որ խոսքը Չարենցի մասին է («Ավանգարդ», Ն. տ.):
- 20 «Գրական թերթ», 1961, N 52:
- 21 Բակունցը գրականության մասին, էջ 121
- 22 Ն. տ., էջ 123
- 23 Կրճատումներով տպված է՝ Ե. Չարենց, Անտիպ և չհավաքված եկեր, Ե., 1983, էջ 92-95:
- 24 Ն. տ., էջ 569-50:

ԳՐԱԿԱՆ ԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ
ԳՐԱԿԱՆ ԿԱՊԻՏ

Ակսեյան քանդակներ



ԳՈՒՐԳԵՆ ՄԱՅԱՐԻ
Բանաստեղծ, արձակագիր,
գրականագետ

1.
«Խորհրդային Հայաստան» թերթի խմբագիր Եղիա Չուբարի տրամադրությունը բարձր է: Ժպտում է խորհրդավոր և վառում «Լարգիլե» ծխախոտը:

– Ի՞նչ կա:
– Ողջություն:
– Ոչինչ չե՞ս լսել:
– Ի՞նչ կա, – այս անգամ ես եմ հարցնում:

Նա վեր է կենում, դուրս է գալիս իր առանձնասենյակից: Ես հետևում եմ նրան: Դուրս է գալիս Աթոյան փողոցի վրա Նայող պատշգամբը:

Պատշգամբում վաղուց է, որ տեղ է գրավում խմբագրության լքված գրասենյակներից մեկը: Գրասենյակի վրա, ամբողջ հասակով, սեպտեմբերյան արևի տակ պառկել է մի երիտասարդ: Ննջում է: Գորշավուն կոստյում, խակի վերնաշապիկ: Գորշավուն փողկապ, կոշիկներ... Երկրորդ, երրորդ կարգի գործածության մոտեցող:

Այս ամենը ես նկատեցի, երբ ի պատասխան իմ հարցական հայացքի, Չուբարը պատասխանեց.

– Ակսեյ Բակունց:

Չարթեց, ժպտաց իր մուգ-կապույտ աչքերով, ժպտաց, այո, մանկական ժպիտով, թեթև իջավ գրասենյակից: Չուբարը ներկայացրեց ինձ:

– Չախլե տարել է, ահա բեզ՝ քո Ակսեյը: Մնացածը... դուք գիտեք: Ներս մտավ՝ իր պարտականությունը կատարած մարդու գոհունակությամբ:

Նա չափեց ինձ ուտից մինչև գլուխ և, ինչպես ինձ թվաց, թախիծով Նայեց իմ աչքերից ներս: Չեր կարող եմ իմ աչքում չնկատել հիացմունք և ուրախություն: Ես կարդացել էի նրա Նախամթնածուրյան ակնարկները և զգացել մեծ գրողի ներկայությունը, ես վաղուց փնտրում էի նրան, ուզում էի ծանոթանալ նրա հետ, սեղմել նրա այն ձեռքը, որով նա բռնում էր իր գրիչը:

Եվ ահա...

Վարը փողոցն էր, աղմկոտ Աթոյան-նը:

– Լավ փողոց է Աթոյանը, – ասաց նա և ավելացրեց, ասես ինքն իրեն, – միակ փողոցը:

Մի ծխախոտ վառեց, խոր շնչեց, լուցկին կոտրեց ու կրկնեց.

– Այո, միակ փողոցը:

Անհանգստացավ, Նայեց գրպակի ժամացույցը:

– Չնայի՞նք մի տեղ Նստե՞հիս:

– Չնայե՞ք, – ասացի ես նրան պատրաստակամ, – գնա՞նք «Նագասակի»:

– «Նագասակի», – ժպտաց, – այդ ի՞նչ «Նագասակի» է:

Քաղաքային բուլվարի դիմաց, Նեայան անկյուններից մեկն էր «Նագասակին», մասնավոր գարեջրատուն:

Գարեջուր և պիստակ, – ուրիշ ոչինչ:

2.

Պարզվեց, որ երկրորդ օրն է, ինչ հասել է Երևան:

– Ես գյուղատնտես եմ, ագրոնոմ, գրականությամբ զբաղվում եմ ի միջի այլոց:

– Կարծում եմ՝ ընդհակառակը: Կյանքը ցույց կտա: Ժպտաց: Տխրեց:

– Ովքե՞ր կան նորերից:

Ես տվի մի բանի անուն:

– Չարենցից բացի ոչ ոքի չգիտեմ:

Դեմիոճյա՞ն: Չորյա՞ն:

– Նրանք «պապուտչիկներ» են:

Չարմացա՞վ, թե զարմացած ձևացավ:

– Ի՞նչ բան է «պապուտչիկը»:

– «Ուղեկից», – բացատրում եմ ես:

Սրտանց ծիծաղեց:

– Յետաքրքիր է...

– Ձի ունե՞ս, – հանկարծ հարցրեց, –

կամ ունեցե՞լ ես:

– Ձի՞, – հանկարծակիի եկա ես, – ի՞նչ չունեմ: Իսկ ինչու՞ ես հարցնում:

– Իսկ ես ունեմ: Գյուղումն է: Ահա Նստել, բեզ հետ գարեջուր եմ խմում և շարունակ մտածում եմ դրա մասին, գարեջուր եմ խմում, իսկ դրան գարի տվե՞լ եմ, ջրե՞լ եմ...

Ես նրան ասացի, որ, ըստ երևույթին, նա գյուղատնտեսությամբ և արձակագրությամբ զբաղվում է ի միջի այլոց և որ նա հիմնականում... բանաստեղծ է:

– Ինչու՞, – հարցրեց ծիծաղելով:

– Այդպես կարող են տխրել միայն բանաստեղծները, – պատասխանեցի ես:

– Դեպի ձին տաժած մարդկային սերը իսկապես որ բանաստեղծական զգացմունք է, – հաստատեց նա՝ ամենայն լրջությամբ:

Մեր գրույցը լայնացավ, մեծացավ այդ փոքրիկ գարեջրատանը, ջերմացավ... սառը գարեջրով: Ինձ թվում էր, որ մենք տարիների ծանոթներ ենք: Խորունկ էր նա ու հմայիչ, հանդարտ ու հստակ:

Ուշ երեկոյան մենք կարողացանք բաժանվել:

3.

Թվում էր, թե կյանքը չէր կարող ունենալ ուրիշ ընթացք և այդպես էլ պիտի շարունակվեր... Ամենայն օր, դուրս գալով Նալբանդյան կրթանցքից, ես պիտի անցնեի նրա տան մոտով, դուրս պիտի գար նա՝ մի ծխախոտ վառելով, պիտի գնայի՞նք Չարենցի մոտ, Չարենցը պիտի հարցներ, – ի՞նչ կա-չկա, տղեք ջան, – հետո պիտի գար Արմենն իր ամեհի բասով և սկսվեր 4-ի գրույցը... Ինչի՞ մասին էինք խոսում մենք, Բենվինիստ Չելիսու և ողբերգական Կոմիտասի մասին՝ ժամանակակից գրական անառողջ երևույթների՝ «գրական փոշտացիների», թե՞

Աբովյանի, Սիամանթոյի ու Սայաթ-Նովայի մասին, Երևանի ապագայի կամ գուցե Եսենիի ու Չվարթնոցի՝ մասին... Խոսակցության տոն տվողը Չարենցն էր, ով սակայն իր ոչ մի դրույթը վերջնական և վավերական չէր համարում, մինչև չստանար Բակունցի հավանությունը: Բակունցը երկար խոսել չէր սիրում, վիճում էր՝ սակավադեպ, բայց երբ վիճում էր՝ վիճում էր անզիջում, շիտակ ու անսահանգ:

Լիրիկ էր ոչ միայն իր գրքում, այլև կյանքում: Մոլորություններ չուներ, եթե չհաշվենք ծխախոտը: Խմում էր առիթից առիթ և շատ հեռու էր առիթներ որոնելուց: Երբ բարձրանում էր տրամադրությունը, «չարություններ» չէր անում... Ամենամեծ «անկարգությունը», որ նա կարող էր թույլ տալ, դա այն էր, որ փողոցում կկռանար, կվերցներ մի հողակոշտ և ազահաբար կհամբուրեր:

– Ոչ մի հող այսպես չի բուրում, չէ...

Երբ Չարենցն անցնում էր ճակատային հարձակման՝ ապացուցելու համար իր գերազանցությունը, Արմենի հետ մենք լսում էինք համաձայնողական լռությամբ, բայց ահա նա անցնում էր Ակսելին՝ նրա հաշիվը նույնպես մաքրելու համար... Քաշում էր կեպին աչքերի վրա, ծիծաղից խեղդվում էր և բավականա՛նում ասելով.

– Դե լավ, եղիշ, ձեռք բաշի:

– Չէ, դու ինձ ասա, համաձայն ես, թե չէ:

– Համաձայն եմ, համաձայն:

– Ախր աչքերիդ տեսնում եմ, որ համաձայն չես, - չէր հանգստանում Չարենցը:

... Բարձր տրամադրության մի ուրիշ չափանիշ էլ ուներ Բակունցը. ինքն իրեն չափ էր տալիս և երգում էր Կոմիտասի երգերից: Հիշում եմ, մի անգամ, Չանգվի ձորից, լուսաբացին, եկանք Չարենցի համարը, հոգնած երեխայի նման Չարենցն անկողին նետվեց և քնեց, ես տեղավորվեցի դիվանի վրա, իսկ Ակսելը բաց պատուհանի դեմ կանգնած սկսեց չափ տալ և Կոմիտաս երգել: Երբ ես զարթնեցի, արևը բարձրացել էր Երևանի վրա: Քնից կշտացած զարթնեց Չարենցը, իսկ նա բաց պատուհանի դեմ կանգնած ոչ մի կերպ չէր կարող սպառել իր միակ՝ կոմիտասյան ռեպերտուարը:

Գրում էր աշակերտական տետրերի և զանազան չափսի տպարանական թղթերի վրա: Ձեռագիրը մաքուր էր, մարգարտաշար: Գրում էր արագ, առանց տանջանքի: Գրելուց հետո մաքրագրում էր և ոչնչացնում սևագրությունը: Մի անգամ հարցրի. «Ինչու՞ ես ոչնչացնում»: «Ինչու՞ պահեմ», - հարցիս հարցով պատասխանեց նա ու ես պատասխան չգտա:

Մեծ հարգանք չուներ դեպի պոեզիան: Ամեն անգամ, երբ հանդիպում էր

պարբերական մամուլում իմ բանաստեղծություններին, ներողամիտ ժպտում էր և ասում.

– Լոջացիր, շարունակիր արձակը:

Չեմ մոռանում նրա «Էքսպրոմտը»:

– Դու կարծում ես ես չեմ կարող բանաստեղծություն հորինել: - Խնդրեմ.

– Ես սիրում եմ լուսաբացը,

Լուսաբացը, նրա թացը:

Առունքի ինչ-որ լացը

Նա լարեց միտքը և վերջացրեց՝

«Մատնաբաշ հացը» պատահական հանգ չէր: Դժվար տարի էր:

Ծիծաղեց. - Ինչո՞ւ է վատ: ...Ուզում եմ մի մեծ պատմվածք գրել, - ասաց նա մի անգամ, - բերել, հասցնել մի հետաքրքրական հանգույցի և այդտեղ էլ վերջացնել, ավելացնելով՝ «բավական է, չեմ ուզում շարունակել...»:

Այդպես էլ եղավ. բանաբարավոր, մեծ գրողի կյանքը կտրվեց իր փայլուն ստեղծագործական մեծ հանգույցի վրա: Նա ստեղծեց իր աշխարհը, սակայն շատ հրաշալիքներ մնացին այդ աշխարհում թերի ու անավարտ:

4.

Ինչ-որ էլեգիական երանգ կար նրա թե՛ բայովածքի, թե՛ շարժումների, թե՛ խոսակցության տոնի և թե, նամանավանդ, նրա լռության մեջ: Մինչև անգամ, երբ մանկական պարծենկոտությամբ խոսում էր իր պապերի երկարակեցության և նրանց բացառիկ ամրակազմության մասին և եզրակացնում, որ ինքը երկար պիտի ապրի, չէիր հավատում նրան և զգում էիր, որ ինքն էլ չի հավատում իր ասածներին: Չէր սիրում երևալ հասարակական վայրերում ու երբ հանդիպում էր փողոցում, խնդրում, առաջարկում էր միշտ միևնույնը. «Բարձրանա՛նք Նորք, նստենք, զրից անենք»: Երբ արդյունքի չէր հասնում, հրաժեշտ էր տալիս ու գնում էր տուն:

Ժամանակակից ռուս գրողներից մեծ սիրով սիրում էր Պրիշվինին: Մոսկվայում օրերով լինում էր նրա մոտ ու մեծ ոգևորությամբ պատմում նրա մասին: Չարենցը գիտեր, որ Պրիշվինը նրա թուլությունն էր: Գրողների առաջին համագումարի օրերին, երբ Ակսելը կորչում էր, Չարենցը խանդում էր: Երբ երևում էր Ակսելը, անխուսափելի էր հետևյալ դիպլոգը.

– Ու՛ր էիր կորել:

– Պրիշվինի մոտ էի:

– Դու էլ մարդ ես գտել:

– Ռուս մեծագույններից է, մարդ, անտառային հեքիաթ, եղի՜շ:

– Թող, է՛, բարկանում էր Չարենցը: Իսկ երբ Ակսելը մի անգամ նորից «կորել էր», Չարենցն անկեղծացավ.

– Պրիշվինը մեծ, հետաքրքիր գրող է,

հետաքրքրական ֆիգուրա, և իզուր չէ, որ Ակսելը սիրում է նրան: Ընդհանուր

շատ բան կա նրանց միջև:

5.

Ես հաճախ, ուշ գիշերին անցնում եմ այն տան մոտով, ուր ապրում և ստեղծագործում էր մեծ, անկրկնելի, եղերական Ակսել Բակունցը: Նա հիմա լեգենդ է, երգ ու էլեգիա ու փողոցից այլևս չես տեսնի նրան իր համեստ, փոքրիկ սենյակում, նստած իր գրասեղանի մոտ, գրելիս կամ կարդալիս: Ես ուզում եմ նրան պատկերացնել վաթսուև տարեկան հասակում և դա ինձ ոչ մի կերպ չի հաջողվում: Ես վերջին անգամ նրան տեսա, երբ նա երեսուկյոթ տարեկան էր և այդպես էլ մնաց իմ հուշերում...

6.

...Հյուրանոցում, Չարենցի համարում, դաշնամուրի մոտ նստած էր Ռոմանոս Մելիքյանը և Չարենցի խնդրանքով նվագում էր Կոմիտասի երգերից և մեջընդմեջ երգում: Ըստ իր սովորության, հատակին, գորգի վրա նստել էր Ակսելը, մոխրամանը կողքին, ծխում և լսում էր Ռոմանոսին՝ ամբողջովին լսողություն դարձած: Հանկարծ նա վերկացավ տեղից և պատշգամբ դուրս եկավ: Քիչ հետո դուրս եկա և ես: Պատշգամբն այն ժամանակ նայում էր պարսկական մզկիթի և գետնափոր արևելյան բաղնիքների վրա: Աշնանային լուսնկա երեկո: Ես չհավատացի իմ աչքերին: Նա լալիս էր իսկական արցունքներով:

– Ու քեզ դեռ արձակագիր ես համարում, - ասացի ես մի բան ասած լինելու համար, ինքս էլ արտասվելու պատրաստ, - դու... ավելի վատն ես, քան ամենասենտիմենտալ բանաստեղծը...

– Ներս գնա, - ասաց նա երեխայի պես քիթը վեր բաշելով, - կանցնի... Սիրտս նման է է՛ն փլած տներ, Կուրբեր գերաններ, խախտեր է՛ն սներ, Բուն պիտի դնեն մեջ վայրի հավթեր...

Տո, լամ տևավեր:

Երբ վերջացավ երգն ու նվագը, նա ներս մտավ պատշգամբից, դաշնամուրի վրայից վերցրեց գլխարկը և անշշուկ, առանց ցնտսություն ասելու դուրս եկավ:

Տո, լամ տևավեր...

... Ու հիմա, երբ տարիների մեզ-մա-ռախտից հիշում եմ նրան, պատկերա՛նում է նա ինձ իր իմաստուն, խորաթափանց հայացքով և մանկական իր հստակ ժպիտով: Նա էր լուսավոր հանճարը զանգեզուրյան մութ ձորերի...

Մեզ հետ է նա, հայկական լեռնաշխարհի հզորաթև արծիվը, սև ցելերի վաստակավոր սերմնացանը, մեզ հետ է նա, ինչպես ինքն էր կոչում իրեն Ալեքսանդր Բակունց, որդի Ստեփանի, գեղջեն Գորիս:


//

Եղիշե Չարենց

Ա-ին

Մթնաձորում
Մուրն է ծորում
Օճորքից. -
Նա չի՞ արդյոք
Տալիս մորմոք
Քո երգին: -
Այնտեղ դեռ կա՞ն
Մռայլ խութեր ու հերկեր, -
Բայց այնտեղից որ դուրս եկար -
Պայծառ երգեր դու կերգես:

1927թ.



Ակսելին՝ «Մթնաձորը» կարդալուց հետո

Քո «Մթնաձորում» թախիծ է ծորում
Ու կարոտ՝ մանկույթ հարազատ ձորի, -
Աշխատի՛ր սակայն, որ մուրս այդ ձորում
Քո պայծառ ուղին անդարձ չկորի:

1927թ.

Դեպի Լյառը Մասիս

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՅԱՆ՝ ՊԱՅՏԱՌ
ԲԱՐԵԿԱՄԻՍ, ՀԱՏՎԱԾ

Նա դուրս եկավ տնից առավոտվա ծեղին,
Իր ետևից կամաց դուռը փակեց,
Վերջին անգամ նայեց իր տնակին -
Եվ քայլերը ուղղեց դեպի բաղերը: -
Ցուրտ էր: - Արևը դեռ հորիզոնից
Նոր էր փռել աղջամուղջը վաղնջական,
Եվ վաղ առավոտի ծիրանեգույն ֆոնին
Հեռվում երևում էր Մասիսը՝ կապույտ
շղարշ հագած...

11.20.1933թ

Օ, չե՛մ հավատում, թե Ակսելն անգամ,
Որ Եսավի պես, պժգնելի մի օր
Իր առաջնության իրավունքը բորբ
Եղծի. - հանուն ինչ-որ տենչի անձնական...
... Օ, չե՛մ հավատում, որ անգամ ահից
Խելահեղ դարձած այրն այդ խակապես
Ելնի շողոքորթ, իբրև սրիկա, -
Եվ շքե՛ղ ոգով իր հանճարափայլ
Դառնա մատնության մարգարե մռայլ...

Թուղթ Ակսել Բակունցին, գրված Լենինգրադից

Իմ սիրելի Ակսել՛, չեմ մոռացել ես քեզ...

Ահա նստած այստեղ, այս խստաշունչ հեռվում,
Մտաբերում, հիշում,- ու, տե՛ս - գրում եմ ես
Քեզ հանգավոր նամակ: Այս ավերում,
Հյուսիսային այս ցուրտ, դժկամ հեռունեքում
Եռում է կյանք մի այլ, անօրինակ ու նոր:-
Միայն Նևա՛ն է, որ իր դարավոր հունով
Քշում է ջուրն իր գորշ դեպի անհայտ ավեր,
Այս ծանրանիստ Նևան՝ անեզրական ու վեհ:

Տրված է մեզ երգի անեզրական շնորհք,
Տրված է թափ, թռիչք, մտքի խոյանք ու թև,-
Իսկ մենք սահում ենք դեռ, զարմանալի թեթև,
Այն փոշապատ, մաշված ուղիների հունով,
Որ հունն է բուրձ մտքի, տրաֆարետի, սերտած
Երկու խղճուկ հանգի, երկու կռտած
Դատողության,- (թեկուզ հիմնականում
Դատողությունն այդ վեհ է, սակայն հաճախ
Բզկտում են նրան, փետրահանում
Ու կմախքը նրա խեղճ ու կրակ
Թրջում ճղճիմ, հիմար հիացմունքի թուրով:-
Այդպես կարող է լույս ստոր՝ և՛ն հոգով
Անմտության, անշունչ հնչնախաղի փոխել
Հանճարեղ խոհն անգամ:- Այդպես ահա՛
Արծիվների թևե՛րն են մարդիկ կտրում մեկ-մեկ
Եվ վանդակում պահում նրանց կմախքը լույս
Փետրահանած ու մերկ):-
Հիմա խոհե՛ր կան՝ այդ արծիվների նման:-
Ու պոետներ բազում, որոնց համար
Հիմնականը փետո՛ւրն է - մի ամենի խանդով
Փետրաթափ են անում նրանց անդուլ:-
Այդ խոհերից վեհերը - աշխատանքն է գուցե:-

Կարդա՛ նրանց երգերը՝ աշխատանքին ձոնած,
Կարդա՛ սրտով մաքուր,- և ինձ ասա՛ հիմա՛
Աշխատե՛լ եմ նրանք երբևիցե...
Գիտե՛ն նրանք արդյոք, որ խոսքը - թո՛ւզն է նույն,
Որ պահանջում է ջանք ու քրտնաջան լարում,
Մաքառման շունչ ջերմին, հոգնության տենդ ու թույն,
Պահանջում է խոնջեմը

Մենք շա՛տ էինք անփույթ մեր հանճարի հանդեպ,
Մեր օրերի, գրչի, մեր խոհերի բազում:-
Վայե՛լ է մեզ լինել անինքնություն, անդեմ,
Եվ օրերում վատնել մեզ տրված գանձը գուր,
Ինչպես վատնել է այն ճորտը լեզենդական:-
Մենք երգեր ենք գրել:- Իմացե՛լ ենք, սակայն,
Որ խոսքը, շեշտը մեր յուրաքանչյուր,
Բաժանվելով մտքի՛ց մեր, մեր խոհերից -
Դառնում է ո՛չ թե լույս դատարկ հնչյուն,
Այլ բարձրացող, ելնող սերունդների
Սրտին, մտքին, ոգուն ու տենչանքին նետած
Մի դրոշակ, կամ սև նշավանքի նշան:-
Որ խոսքը, երգը մեր՝ մեր խոհերով նշած՝
Կամ կարող է լինել հուրհուր դրոշ,
Կամ անկումի ժամին մեր խոհերից պոկած
Ողորմելի մի լաթ, մի սև ծվեն, որով
Ցանկացել ենք մենք մեր եղկությունը ծածկել,
Մերկությունը ոգու ու անճարակ մտքի,
Որպեսզի սուր մի սև մեզ չծակե,
Որպեսզի միտքը մեր չբարձրանա ոտքի:-
Որ խոսքը - նյո՛ւթն է նույն, որ կոփում են սրանք,
Այս մկանուտ մարդիկ,- ու մեզանից
Պահանջում է նա սեր, ու տքնություն, ու ջանք,
Ու գերագույն լարում:- Եվ մենք քանի
Չենք սովորել դեռ մեր յուրաքանչյուր բառին
Նայել սիրով այս վեհ, այս խստությամբ ազնիվ,-
Դժվար թե խոսքը մեր հորիզոններ վառե
Եվ բարձրացող, ելնող սերունդներին հասնի...

ԼԵՆԻՆԳՐԱԴ, 16.10.1929

Համո Սահյան

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՆԳԻՆ

Քասուտա գետն է լեռներից հոսում
Եվ ձորերի մեջ զիւ զրնգում է,
Աթա ապերն է ծոր տալով խոսում,
Եվ Մեղրաքերծր դեռ դրնգում է:

Միանան գետի մեջ գորգ է լվանում,
Ուտքերը բաց են մինչև ծնկները,
Ինքն իր վշտի հետ զրույց է անում,
Զուրր տանում է արտասուքները:

Լորի հինավուրց բլրակի վրա
Մայրամուտի մեջ արձանացել է
Շիկնած հայացքն այն խոնարհ աղջկա,
Որ ամբողջ կյանքում քեզ ուղեկցել է:

Հնձան է մտնում ծեր Դիլան դային
Հոգում հեռավոր օրերի ցավը,
Եվ հուշերի մեջ թևին է տալիս
Իր ձեռից թռած ոսկե միրհավը:

Հազրոն նստել է օջախի քարին,
Հիշում է կորած երկիրն ու հողը,
Տխուր նայում է Հայկական Պարին
Եվ նայում է ծիրանի փողոց:

Ամեն մեկի մեջ մարմին է առած
Աշխարհի բարին ու բարությունը,
Եվ ես ամեն օր լսում եմ նրանց
Հավիտենական շնչառությունը...

1947c.



Միրհավի կանչն ես տանում դարերին

Դու ոչ թե խոսում, այլ երգում էիր,
Ականջ էր անում լեռնաշխարհը քեզ:
Մեղրաքերծի պես զրնգում էիր,
Զրնգում էիր Յուրտ աղբյուրի պես:

Ներդաշնակում էր քո երգը այնպես
կյանքի որոտն ու սոսափը կյանքի
Եվ ոլորվում էր հորովելի պես,
Հորովելի պես, բայց առանց հանգի:

Երգդ արտերի խոպանն էր հերկում
Ու տառապանքն էր հերքում
մառոնկալին:

Ծիրանի փողեր կային քո երգում
Եվ ալպիական ծաղիկներ կային:

Դու կանգնած էիր հայրենի հողին,
Նրանից բուսած ծառ էիր կարծես:

Գյազբեկի նման բարձր էր քո հոգին
Եվ խոր էր, խորունկ Մթնաձորի պես:

Դու քանդակեցիր անմահ կոթողներ,
Սրբատաշ տողեր քանդակեցիր դու,
Արևի շողեր, անձրևի քողեր,
Ծիրանի փողեր քանդակեցիր դու:
Իջար բարձրաբերձ Կաթավաթերդից,
Մարութա սարից իջար միգապատ,
Պաղ ջուր խմեցիր Բասուտա գետից,
Հասար Կարմրաքար ու հասար
Դորպատ:

Լացացրել է ինձ քո Վանդունց Բաղին,
Խոնարհ աղջիկն ինձ գերել է մանկույց.
Վրնջում է դեռ սպիտակ քո ձին
Իմ հուշերի մեջ, ով Ակսել Բակունց:

Արձագանքն էիր դու մեր ձորերի՝
Անտառներն ի վեր փռված սարերին...
Եվ շառաչի հետ այս մեծ օրերի
Միրհավի կանյն ես տանում դարերին:

1959

ԴԱՏԱԴՈՒՄ, ԵԳՐԱՎԱՅԻՆ ԴՏՈՂԱԴՐՈՒՄ


ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԲԱԿՈՒՆՑԻՆ

Բակունցի անմեռ
հիշատակինԳուրգեն
Մահարի

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԱԿՍԵԼ, ՉԵՄ ՄՈՌԱՑԵԼ
ԵՍ ՔԵՋ (Ե. Չարենց – «Էպիկական
լուսաբաց»)

Իջավ երեկոն: Աբովյանում
Զնգում է աշնան ոսկե ծնծղան,
Երկինքը – կապույտ ամպհովանի,
Ու Մասիսների սիլուետը լայն.
Ես դուրս եմ գալիս քայլամուր,
Քայլում եմ ծանոթ քո փողոցով,
Այրում է սիրտս խուլ մի մորմոք,
Թախիծ մի անծիր, ցավ մի խոցող:
Ես քեզ եմ հիշում, սիրվա՛ծ անուն,
Գրչի, խոհերի, երգի՛ եղբայր,
Աշուն է ահա Երևանում
Քո գրչով, սրտով, սիրով երգված.
Ահա և փողոցը Նալբանդյան,
Ահա այն տունն, ուր ապրում էիր
Սրտումդ այրող արև բանդած,
Գրում տողերդ աստեղային:
Վեհ Զանգեզուրը երգեցիր դու
Ու Մթնաձորի թախիծը դառն,
Ողբերգությունը Վանդունց Բաղու
Ու Օրանջիայի վարդերը վառ
Երգեցիր անկումը Հանավանքի,
Միրհավին՝ թռած անվերադարձ,
Ցավը ալաիական մանուշակի,
Ու խոնարհ աղջկա աչքերը թաց:
Երգեցիր ապա սև ցեղերի
Վաստակավոր, մեծ սերմնացանին,
Գործը երգեցիր մեծ Լենինին,
Ու հավատարիմ նրա ձայնին՝
Տքնությամբ համառ, ուժով լեցուն
Կառուցեցիր դու քանդակ-քանդակ
Վսեմ էպոպեն Քանաքեռու, –
Մի աշխարհ նոր ու ավանդական...

Դեռ շատ ծաղիկներ պիտ բուսնեին
Քո պարտեզներում, որ չբուսան,
Ու եղբայրության ընկուզենին
Դեռ պիտի ձգվեր երկնահասակ:
Սակայն այն, ինչ որ թողիր դու մեզ,
Որպես ավանդ ու ժառանգություն,
Կմնա հավետ անմահ, անկեղ
Մեր մեծ դպրության ոսկե գրքում:



... Զնգում է աշնան ոսկե ծնծղան
Հասել է առատ, անհուն մի բերք,
Երգով է ցնծում սիրտ ու հնձան,
Հորդել է ահա մի մեծ ցերեկ,
Ցնդում է մուժը Մթնաձորի,
Պողոտա է այժմ, ինչ որ կածան,
Ու քայլում ես դու մեզ հետ նորից,
Բերրի ցեղերի մեծ սերմնացան...

«ԵՐԵՎԱՆ», 24.10.1959, N211

ԱԿՍԵԼԻՆ

Լուսավո՛ր հանճար մութ ձորերի

Լեռնային աղբյուր հստա՛կ, հստա՛կ,
Արծիվ՝ հին վանքում ընկած գերի,
Լուսավանք, լեռան ուսին նստած...

Զա՛նգ ոսկեղեգվակ, կախա՛րդ վարպետ,
Թրատվա՛ծ երակ, վսեմ երդո՛ւմ,
Կոթո՛ղ վեհարար, անձեռակերտ,
Վարդավառ, գոլթա՛ն քնարերգու:

Դու գյո՛ւտ, մագաղա՛թ, վեմ ու մարմա՛ր,
Կարմի՛ր ուխտավոր, գրի՛չ, տրիբո՛ն,
Կանթե՛ղ մշտավառ, խարո՛ւյկ անմար:

Անճար նահատա՛կ, նշխար անմահ,
Սյո՛ւն ոսկեքանդակ, մե՛ծ դպրություն,
Վիրավոր արև, ընկած կամա՛ր:

Անավա՛րտ, բյուրե՛ղ զանգակատուն:

«ԱՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»

8 ՀՈՒՆԻՍԻ, 2009 թ., № 13 (185)

Վահրամ
Ալազան

Ակսել Բակունցին

Խաղաղ էիր որպես կեսօր
Ու խոր՝ որպես աստղոտ գիշեր,
Որոտանի նման հուզող
Եվ Խուստուփի նման ուժեղ:

Որպես սիրո ուղի անհաս,
Որպես շանթը՝ հայացք գերող,
Բոցկլտացիր, անցար անդարձ,
Մթնաձորի քո խութերով:

Անցար: Սակայն մնալով հար,
Զանգեզուրի պես մեծաշուք,
Որպես կյանքի այրող պահանջ,
Ու ծանրախոհ՝ որպես աշուն:
1956

Գործսում

Շրշում են շիկնած տերևներն աշնան,
Շշնջում են մեղմ գեփյուռի տաղով,
Պատմում են իրար՝ շուրթերով թոշնած –
– Բակո՛ւնցն է մի օր անցել այստեղով...


Ամպերը ճեղքած, երկինքն են միտում
Ժայռերը՝ որպես քարացած աղոթք,
Իրար են նայում հայացքով տրտում
– Բակո՛ւնցն է մի օր անցել այստեղով...

Աստղերն են փթթում ողկույզ առ ողկույզ,
Հովը ցրում է ամպերը աղոտ,
Դեռ մոնչում է Որոտանն անքուն
– Բակո՛ւնցն է մի օր անցել այստեղով...

Այստեղ ամեն ինչ հուշ է ու երագ...
Աղջիկներն անցան արծաթ ծիծաղով,
Կյանքը շուրթերին՝ ժպտացին իրար –
– Բակո՛ւնցն է մեզ հետ քայլում
այստեղով...:

1956

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԲԱԿՈՒՆՅՈՒՆ



Վահագն Դավթյան

Չանգեզուրում (Ակսել Բակունցի պայծառ հիշատակին)

Ահա նորից քայլում եմ ես
Կածաններով Զանգեզուրի,
Ոտքերիս տակ խենթ հեղեղներ
Ու ջրվեժներ կան շառաչուն,
Մի քնքշաբև ամպ է հավիում

Լույսերի մեջ ու լազուրի,
Ու քերծի տակ, բերանը բաց,
Մի քարանձավ է հառաչում:

Խորհում են լուռ ժայռերը շեկ
Իբրև բերդեր հնադարյան,
Խորշերի մեջ կայծակների
Բեկված սրեր, մարած շանթեր,
Ժայռերն ի վեր նռնենիններ՝
Բոցավառված ցուրդով արյան,
Ժայռերն ի վար՝ զմրուխտ մամուռ
Ու ցողերի աղամանդներ:

Իսկ ժայռի տակ՝ մի պաղ աղբյուր,
Աղբյուրի մեջ՝ ծաղկաթերթեր,
Որ մասրին է մեկ-մեկ թափում
Սեր գուշակող աղջկա պես,
Եվ արծիվներ քարաքանդակ,
Որ քամիներն են քանդակել
Պղնձագույն այս ժայռերից

Ու լեռներից այս վեհատես:
Խփելով բաշը քարերին,
Որոտան գետն է որոտում,
Սակայն բռնած նրա բաշից
Ծեր բրուտի ջահել տղան
Ուզում է այն սանձել այսօր,
Որ այս ձորի ստորոտում
Լույսի փոխի, փոխի ուժի,

Որ այն կրակ դարձած շողա:

Եվ անտառներ, և անտառներ
Խառն ու խռիվ գիսակներով,
Զրվեժների վրա ճերմակ՝
Կարմիր-կապույտ ծիածաններ,
Եվ կատարներ շանթակայուն՝
Ամպի լուսե պսակներով,
Ձորերն ի վար, ձորերն ի վեր
Ճանապարհներ կարծակնաձև:

Քայլում եմ ես ականջիս մեջ
Հեռու կանչերը «Միրհավի».
«Ալպիական մանուշակի»
Նրբին բուրմունքն իմ ռունգերում,
Օրորվում է աչքերիս դեմ
Մթնաձորի մուժը ծավի,
Բասուտա գետը լեռներից,
Ո՛չ, երկնքից լույս է բերում...

Քայլում եմ ես, քայլում եմ լուռ
Կածաններով ցողաշաղախ,
Կաղնիները ճամփիս վրա
Շառաչում են հպարտ ու վես,
Ու թվում է, թվում է ինձ,
Թե ուր որ է ահա-ահա
Դու դուրս կելնես անտառներից
Հեքիաթական այն Պանի պես...

«ԱՎԱՆԳԱՐԴ»,


25 Հունիսի 1960թ., N76

Ալբերտ Իսախանյանը՝ Բակունցի հիշատակին



Անաղմուկ բացել հնձանիդ դուռը,
Ո՞ր կածանով ես անդարձ հեռացել...
Քեզանից հետո՝
Տարիներ անվերջ
Սրսիսցել է Սոնան հնձանում,
Հին Դրնգանում կաքավն է թախծել,
Ամպ է ծանրացել Կաքավաբերդում,
Եվ մանուշակն է գիշերով լացել...
Քեզանից հետո՝
Տարիներ անվերջ
Որպես Խոնարհի՝ խոնարհ աղջիկներ
Քո Մթնաձորի հեքիաթն են հյուսել
Ու լույս են քաղել քո Մթնաձորից:
Քեզանից հետո՝
Հնձանդ հավետ բաց է մնացել
Եվ դեռ հորդո՞ւմ է խորքերում գինին:

Քաջիկ Միքայելյան



Զբոլորեց տարին...

Մթնաձորում պահված լավն ու բարին
Մոլորվեցին մռայլ գիշերներում,
Մարեց Դիլան դային՝
Անհետ տարավ իր հետ
Լաջվարդ շապիկ-շուքով
Սոնա բուրդով մի հուշ,
Ցող չէ, արցունք հագան
մանուշակներն ալպյան,
Խորշակահար, անգոր...
Օրանջիայի վայրի վարդերն հագան...
Լառ Մարգարն ու Հագրոն
Կորած Մեծ Հեքիաթի կարոտից ու
ցավից,
Եռալեզու օրվա ահ ու դավից

Մի անգամ էլ խռով ախ քաշեցին.
-Ինչ գուցեմ է, լառ...

Լուսապսակ, լավիկ իմ որբուկին
«Խաչեր» կանչող մի կին մորմոթել էր
մեկին...

Ախ, Բոխազգույ մայրիկ,
Ցավդ ինչպե՞ս պատմեմ՝ «Հո՞ր ա
Սանթրիս»:

Խոնարհ հարսեր սևաուգ եղերամայր եղան,
Գազպեն սարից մինչև գազաթը Մայր
լեռան

Սև ուրուրներ թռան,
Սևակներով երկնի երեսն ամռան...

Արթին պապի մամուռ շիրմաքարից
Ցավի մի շիթ ելավ,

Մերվեց սարեկ սյուքին,
- Իջավ սրնգահար սյունեցու սգին.

-Սարեր, սարդ տարան, սարեր, լավդ
տարան:

Հրազդանի ձորում, գուցե այլուր,
Կապուտաչա, հուրհեր հոգին հայոց
Ճարահատյալ՝ Նեռի կամքին հյու,
Անցավորի համար գերեզման էր փորել,
Իրեն տվել թևեր,


Թռել սառույցասիւրտ Սիսն ու Մասիսն ի վեր
Պատգամելու համար

Այս հինավուրց հողից ծնվող-սնվողներիս
Խորհրդակիր խոհեր...

Եվ մի պայծառ անուն, մի հավերժ հնոց...

Ալեքսանդր Բակունց՝ ի գեղջեն Գորիս,
Որդի Ստեփանի և ամենայն հայոց:

ԱԿՍԵՆ ԲԱԿՈՒՆՑԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ




▲ Ակսել Բակունցը խարկովում ուսանելու տարիներին 1920-1923թթ. ընկերոջ Վարդան Գիլանենցի հետ



Ակսել Բակունցը և Ժենյա Գյուզալյանը



ԱԿՍԵՆ ԲԱԿՈՒՆՅԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ



▲ Ակսել Բակունյանը գյուղատնտեսների հետ

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՆՆԵՑԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ՍՈՇԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ



ՂԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական
գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ արվեստի
վաստակավոր գործիչ

1899, 1 հունիս (նոր տոմարով 13 հունիս) - Գործում ծնվեց Ալեքսանդր Ստեփանի Թևոյանը: Հիմք՝ «Հափաբերական մատյանը»: Հայրը՝ Ստեփան Թևոյան (1869-1939), մայրը՝ Բոխագյուլ Խուրշուդյան (1878-1957): Ունեցել են բազմաթիվ տղաներ և աղջիկներ: Տարբեր աղբյուրներում նշվում են իրար չհամապատասխանող թվեր՝ 14, 12, 11, 10, որովհետև եղել են երեխաներ, որոնք վաղաժամ մահացել են: Ըստ Բակունցի տուն-թանգարանում ճշտված տվյալների՝ երեխաների թիվը եղել է 10-ը, որոնցից երեքը վաղաժամ մահացել են՝ Վարդանուշ, Աստղիկ, Աննա (1946-ին երևանում խեղդվել է ջրհեղեղի ժամանակ, «Մթնածորի «չարք»»-ը պատմվածքի հերոսուհու՝ Այայի նախակերպարը), Ալեքսանդր, Փառանձեմ, Արշալույս (Անթառամ, վաղաժամ մահացել է), Վահան, Սերգեյ (Սերյոժա, վաղաժամ մահացել է), Արտավազդ (Վլադիմիր), Գրիգոր (Վարուժան):

Եղբայրներից ավագն Ալեքսանդրն էր: Բակունց ազգանունը ծագում է տոհմական Բեգունց ձևից: Նախապապի անունը եղել է Բյագի: Հայրը, Բաքվում բախտը փորձելուց հետո, վերադարձել էր Գորիս: Նախրապան էր ու հանդապահ: Մայրը լվացք էր անում ունևորների դռանը:

1905-1910 - Ուսանել է Գորիսի ծխական երկսեռ հնգամյա դպրոցում: Եղել է

առաջադեմ աշակերտ: 13. 06. 2019-ին դպրոցի շենքի մոտ փակցվեց հուշատախտակ:

1910, 10 օգոստոս - Գորիսցիները 152 ստորագրությամբ «Խոնարի խնդիր» են հղում Ամենայն հայոց կաթողիկոս Մատթեոս Բ-ին՝ Բակունցին ընդունելու որպես Գևորգյան ճեմարանի գիշերօթիկի սան:

1910-1917 - Ուսանում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Փաստաթղթերում նրա ազգանունը նշված է Բեկյան: Ընդունվել է դասարանական բաժնի 3-րդ դասարանը:

1911 - ից - Մասնակցում է ճեմարանի երգչախմբի և գրական խմբակի պարապմունքներին:

1912 - Ուսմանը զուգընթաց, արձակուրդի ամիսներին Գորիսում աշխատել է գրադարանում և մասնավոր դասեր տվել:

1913, հոկտեմբեր - «Աղբյուր» մանկական հանդեսում Աշակերտ ստորագրությամբ տպագրվում է «Հիմար մարդը» հեքիաթը: Սրանով ազդարարվում է Ա. Բակունցի գրական գործունեության սկիզբը:

1915, 26 հուլիս - Շուշիի «Փայլակ» թերթում թեզ գնացող ստորագրությամբ տպագրվում է Բակունցի «Մատվեյ Մատվեիչը...» ֆեյիտոնը Գորիսի քաղաքագլխի և գավառական վարչության դեմ: Քաղաքագլուխ Մատթեոս Տեր-Գրիգորյանի կարգադրությամբ Բակունցը բանտարկվում է:

1915, 6 օգոստոս - Կալանավորվում է Գորիսի բանտում (բանտարկության ժամկետը նա հաշվում է 34 օր, որը ստույգ չէ), ժամկետն ավելի կարճ է եղել:

1915, 28 օգոստոս - Դիմում է Հայկական կենտրոնական կոմիտեին՝ հայ գաղթականներին օգնելու և հայրենիքին որևէ կերպ ծառայելու պատրաստակամությամբ:



1915, 6 սեպտեմբեր - Շուշիի «Փայլակ» թերթում Թեգ գնացող ստորագրությամբ, «Դեսից դենից» խորագրի ներքո, տպագրվում են Ա. Բակունցի «Հայի «ըօլան»» և «Երեխաները» մանրապատումները:

Նույն թերթում տպագրվում է նաև «Դպրոցի փակում» թղթակցությունը՝ Զարաշեն գյուղի ծխական դպրոցի փակման մտահոգությամբ (թվագրված է 30. VIII):

Նշվածները չեն ընդգրկվել գրողի որևէ հավաքածուի մեջ:

1915 - Ընդունվում է Հայ Հեղափոխական Դաշնակցության կուսակցության շաբաթը: Կուսակցության եռանդուն գործիչ է եղել մինչև 1919 թ.: 1936-1937 թթ. հարցաքննությունների ժամանակ հրաժարվել է կուսակցության անդամ լինելուց և հայտարարել՝ «...մինչև 1917 թ. նոյեմբեր ես եղել եմ հայ աշակերտական միության անդամ» (2.07.1937 թվականի «Դիմում»-ից):

1915, սեպտեմբեր – հոկտեմբեր – Ռուսաց լեզու է դասավանդում Տաթևի վանքապատկան դպրոցում: Դասավանդում է նաև Գորիսի կենտրոնական վարժարանում:

1915, նոյեմբեր – 1916, 28 մայիս - Ուսուցչություն է անում Սիսիանի շրջանի Լոր գյուղում: Մեծ եղեռնի ու գաղթի պատճառով այդ ուսումնական տարվա ընթացքում ճեմարանը փակ էր:

1916, ամառ - Գորիսում բեմադրվում է Նորվեգացի թատերագիր Բյոռնստեռնե Բյոռնսոնի (1832-1910) «Նորապսակներ» (1865) թատերգությունը: Բակունցը կատարում է Նորապսակ Ակսելի դերը: Դրանից հետո Ակսել անունը աստիճանաբար փոխարինում է Ալեքսանդրին և դառնում գրական ու քաղաքացիական անուն:

Տարբեր տարիների օգտագործել է հետևյալ ստորագրությունները՝ Ա., Ա. Բ., Ա. Բակունց, Ա. Ստեփանյան, Ագրոն, Ալ. Բակունց, Ալ. Ստեփանյան, Ակսել, Ակսել Բակունց, Ադ. Բակունց, Ադրան, Աշակերտ, Անդր. Ստեփանյան, Արտ. Ստեփանյան, Բ. Բակունց, Թեգ գնացող, Ստեփանյան:

1917, 26 մարտ - «Խնդիր» է հղում Գևորգյան ճեմարանի մանկավարժա-

կան խորհրդին՝ դասարանական բաժինն ավարտելուց հետո ուսումը շարունակելու լսարանական բաժնում: Ապրիլի 22-ին «Խնդիրը» հարգվում է, բայց ազգային և քաղաքական իրադարձությունների բերումով այլևս ի վիճակի չի լինում ուսումը շարունակել Էջմիածնում: 1918 թ. ապրիլի 20-ին լրացվում է Բակունցի վկայականը, ըստ որի՝ նա ճեմարանի դասարանական բաժինն ավարտել է «յոթ գովելի վարուք»:

1917, ապրիլի վերջ - Բաբվում մասնակցում է ՀՀԴ կոմիտեի շրջանային ժողովին, ղեկավարել է սահմանադիր ժողովի ընտրությունները Ղափանի շրջանում:

1917- Աշխատակցում է «Հորիզոն»-ին, «Աշխատավոր»-ին:

1917, 26 դեկտեմբեր - Որպես կամավոր մեկնել է Կարին (Երզրում)՝ միախառն գործող բանակին:

1918, հունվար- Որպես շարքային զինվոր Կարինում սովորել է «Учебная команда»-ում: Մասնակցել է մի շարք մարտերի. «... զինվոր 1917-1918 թթ. Տուրքեստանսկի գնդում (Երզրում), մասնակցել եմ Աշկալայի, Իլիջայի, Արդահանի և Սարդարապատի կռիվներին 1918 թ.» («Երկեր», հ.4, էջ 386):

1918, 21-29 մայիս - Ինչպես ինքն է նշում մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին:

1918, հոկտեմբեր - «Մինչև 1918 թ. հոկտեմբերը եղել եմ բանակի շարքերում <...> և ապա հայ-տաճկական առաջին հաշտությունից հետո (1918 թ.) ենթարկվել գործարարական և փոխադրվել Երևան» («Իմ համառոտ կենսագիրը»): Տարբեր առիթներով իր գործարարական ժամկետը Բակունցը նշել է 1918 թ. հունիս, օգոստոս, հոկտեմբեր ամիսները:

1918, հոկտեմբեր-նոյեմբեր - «Ժողովուրդ» թերթում լույս են տեսնում «Աղոթք», «Աշտուղ», «Անտառում» քնարական պատկերները: Ձևավորվում է գրողի ոճը՝ փաստական հիմք և խոր քնարականություն:

1918, հոկտեմբեր-դեկտեմբեր - «Լույս» տպարանի սրբագրիչ:

1918, դեկտեմբեր - 1919 մայիս - Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրող:

1919, սեպտեմբեր - 1920, մայիս - «Հայաստանի աշխատավոր» թերթի խմբագրության աշխատակից, լրագրող, որի էջերում Ակսել, Ա. Բ., Բ. ստորագրություններով հանդես է գալիս հոդվածներով: Տե՛ս հետևյալ համարները՝ 1919, թիվ 45, 20 ապրիլ, թիվ 46, 25 ապրիլ, թիվ 79, 24 հունիս, թիվ 86, 26 հունիս, թիվ 97, 17 հուլիս, թիվ 100, 19 հուլիս, թիվ 104, 24 հուլիս, թիվ 107, 31 հուլիս, թիվ 137, 6 սեպտեմբեր, թիվ 141, 13 սեպտեմբեր:

1919, 28 նոյեմբեր - Հոդվածով հանդես է գալիս Երևանի «Յառաջ» թեր-

թում (թիվ 262):

1919-1920 - Ուսանել է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի գյուղատնտեսական բաժանմունքում, միաժամանակ, որպես դասառու, աշխատել Մոսկվայի կոմիտեի որբերի գիմնազիայում, որը գտնվում էր Թիֆլիսի Օրթոճալա թաղամասում (հիմա՝ համալսարան, հիմնադրվել է 1816 թ.):

1920-1923 - Ուսանել է Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտում (համալսարան), մշակութային և կրթական աշխատանք տարել տեղի հայության շրջանում: Հայրենական պատերազմի ժամանակ բուհի արխիվը կորել է: Բակունցի ծննդյան 120-ամյակի կապակցությամբ՝ շրջանավարտի օրը՝ 25. 05. 2019-ին, տեղադրվում է հուշատախտակ. հայերեն՝ Ակսել Բակունց: Նկարը քարի վրա: Ուկրաիներեն՝ Ակսել Բակունց: Հայ գրող: Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտի շրջանավարտ:

1922 - Դոնբասի Պերվոմայսկ բնակավայրում տեղի է ունենում խտորջուրների հավաք. Ակսել Բակունցը և Արտաշես Գևորգյանը համոզում են հողատարածք վերցնել Հայաստանում և վերաբնակվել հայրենիքում: Գևորգյանը բանակցում է Անդրերկրյանի ղեկավարության (Մյասնիկյան) հետ: 1924-ին հարցը դրական լուծում է ստանում:

1922, 25 հունիս - Արտաշես Գևորգյանը, Պետրոս Տեր-Պետրոսյանը, Ստեփան Շաղիկյանը Թիֆլիսում ահաբեկությամբ սպանում են հայոց ցեղասպանության կազմակերպիչներից Զեմալ փաշային: Արտաշես Գևորգյանին և Ակսել Բակունցին 1937 թվականի արյունոտ ձեռքը գնդակահարում է միևնույն օրը՝ հունիսի 8-ին:

1923, 23 մարտ - Մոսկվայում վախճանվում է Հովհաննես Թումանյանը: Նրա դին գնացքով տեղափոխում են Թիֆլիս: Ապրիլի սկզբին Բակունցը Խարկովի հայության հետ կայարանում դիմավորում է գնացքը, կազմակերպում սգո հանրահավաք և հանդես գալիս հուզիչ խոսքով:

1923, 3 հունիս - Ուկրաինական ԽՍՀ այն ժամանակվա մայրաքաղաք Խարկովում ստեղծվում է Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) մասնաճյուղ: Նախագահ՝ պրոֆ. Սուրովիչ, քարտուղար՝ Ա. Բակունց:

1923, 13 հուլիս- Ավարտում է Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտը և վերադառնում Հայաստան: Հուլիսի 23-ին արդեն Գորիսում էր՝ հարազատների և հայրենակիցների շրջապատում:



1923, հուլիս-օգոստոս - Գորիսի ուսուցչական դասընթացներում դասավանդել է երկրագործական առարկաներ:

1923, 26 սեպտեմբեր - Դիմում է ներկայացնում ՀԽՍՀ հոգեփոխարին Արամայիս Երզնկյանին՝ աշխատանքի անցնելու պահանջով: Դիմումի մեջ կան կենսագրական մանրամասներ. «...իմ պատրաստակամությունն եմ հայտնում ծառայելու հողփոխարինին հանձնված խորհրդային տնտեսություններում: Պաշտոնավարել եմ Խարկովում կոնտրոլնո-смен- կայանում, աշխատել եմ Խարկովի փորձնական կայանում և ինստիտուտի կողմից հանձնարարություն ունեմ ուսումնասիրելու բամբակագործության պայմանները մեզ մոտ: Սույն ամառվա ընթացքում դասախոսել եմ Չանգեգուրի» գավառի ուսուցչական կուրսերում ընդհանուր երկրագործություն» («Երկեր», հ.4, էջ 381):

1923, 8 հոկտեմբեր - 1924, 1 հոկտեմբեր - Երևանում աշխատանքի է անցնում ՀԽՍՀ հողագործության ժողովրդական կոմիսարիատում՝ որպես սերմնաբուծարանի կառավարչի օգնական:

1923, 14-19 հոկտեմբեր - Երևանում մասնակցում է ՀԽՍՀ 3-րդ համագումարին: Ուկրաինայի մասնաճյուղի լիազորումով հանդես է գալիս հաշվետու զեկուցմամբ: Չեկուցումից. «Վերջացնելով խոսքս՝ Ուկրաինայի ՀԽՍՀ-ի կողմից ես այս համագումարին պարտք եմ համարում հայտնել հետևյալը. դուք ջրանցքներ եք շինում Հայաստանում, վերակենդանացնելու համար նրա խոպան դաշտերը: Թճի այս համագումարն էլ լինի մի մեծ ջրանցք, որով մեր գաղութների էներգիան գա, թափվի այս երկիրը» («Երկեր» հ.4, էջ 385): Համագումարում ընտրվում է ՀԽՍՀ-ի վարչության անդամ:

1923, 20-23 նոյեմբեր - Երևանում մասնակցում է Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարին: Այդ համագումարի ղեկավար կազմակերպիչն էր՝ նախագահը: Նոյեմբերի 20-ին հանդես է գալիս համագումարի բացման խոսքով, 21-ին՝ զեկուցմամբ: Խմբագրել և հետևել է «Նախկին շարքային դաշնակցականների համահայաստանյան համագումարի արձանագրությունները» (Երևան, 1923, 142 էջ) գրքի տպագրությանը: Համագումարի կապակցությամբ նոյեմբերի 20-ին լույս է տեսել Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը նախապատրաստող բյուրոյի «Լրաբեր» մեկօրյա թերթը: Թերթի հրատարակչական պարտականությունները կատարել է Բակունցը: Թերթում զետեղված է նրա «Ովքեր են հեռանում դաշնակցությունից» հոդվածը և «Բոլոր նախկին դաշնակցականներին» կոչը, որը, իրենից բացի, ստորագրել էին ևս 15 հոգի: Համագումարի նյութերն արտացոլվում են հանրապետական մամուլում:

1924, 1 մարտ - Երևանի պետական համալսարանի երկրագործության ամբիոնի ընթերակա:

1924, 29 օգոստոս - Լրացնում է ՀամԿ(Բ)Կ շարքերը որպես անդամության թեկնածու ընդունվելու հարցաթերթիկ: Սեպտեմբերի 16-ին հոգեփոխարին կոմբեյը մերժում է Բակունցի դիմումը: Հոկտեմբերի 29-ին Երևանի կոմիտեն «Ընդհանուր հիմունքներով» ընդունում է ՀամԿ(Բ)Կ շարքերը՝ որպես անդամության թեկնածու: ՀամԿ(Բ)Կ անդամ է ընդունվում 1930 թ. փետրվարի 23-ին: Հեռացվում է 1936 թ. օգոստոսի 9-ին:

1924, 14 հոկտեմբեր - Երևանում ամուսնանում է Նորնախիջևանցի Վարվառա (Վարյա) Հակոբի Չիվիջյանի հետ, որին ճանաչել էր Խարկովում:

1924, հոկտեմբեր - 1925, հուլիս - ՀԿ(Բ)Կ Չանգեգուրի գավառի գյուղատնտես: 1924 թ. հոկտեմբերի 18-ին հողփոխարին կոմիտեի գյուղվարչության պետին հղում է առաջին գրությունը. «Չանգեգուր իմ, արդեն ընդունել եմ և ծանոթացել գործերին», իսկ հոկտեմբերի 23-ին տեղեկացնում. «Չանգեգուր հասել եմ հոկտեմբերի 14-ին և 15-ից անցել եմ գործի...»:

1924-1925 - Լույս են տեսնում «Մարտակոչ»-ում՝ «Գավառական նամակների», «Խորհրդային Հայաստան»-ում՝ «Մեր գյուղերում» ակնարկաշարերը:

1925, 2-6 մարտ - Մասնակցել է ՀԽՍՀ գյուղատնտեսության աշխատողների 2-րդ համագումարին: Մարտի 3-ին հանդես է եկել զեկուցումով: Համագումարի նյութերի տպագրության ժամանակ, ինչ-որ մեկին նկատի ունենալով, արել է այսպիսի գրառում. «Անարյուն դեմք, գանգուր միտք: Ձայնը՝ մետաքս ու համեղ, անբաշ կաթի պես: Փափուկ, ինչպես տանտիկին», «Երկեր», հ. 4, էջ 620»:

1925, 4 հուլիս - Չանգեգուրի գավառային գործադիր կոմիտեի որոշմամբ նշանակվում է հողբաժնի վարիչի տեղակալ, այնուհետև՝ վարիչ:

1925, 20 օգոստոս - Ծնվում է միակ որդին Սևադան: Հետագայում բժիշկ-բնախոս: Ունեցել է երկու դուստր:

1925, 27 սեպտեմբեր - ՀԿ(Բ)Կ Չանգեգուրի գավառի ագիտբաժնի նիստում առաջարկել է նշել բերքի տոն: Նշանակվել է մրցանակային հանձնաժողովի նախագահ:

1925, 1 նոյեմբեր - «Մարտակոչ»-

ում տպագրած «Գրական հոսանքների բնութագրի շուրջը Հայաստանում» հոդվածի մեջ Արտաշես Կարինյանն անդրադառնում է նաև Բակունցի ստեղծագործությանը:

1926, մարտ - Երևանում մասնակցում է համահայաստանյան գյուղատնտեսական համագումարին, հանդես գալիս զեկուցումով:

1926, մարտ - Մշտական բնակություն է հաստատում Երևանում: Աշխատում է հողփոխարինում՝ որպես սերմնաբուծարանի վարչության պետի տեղակալ, հիմնադրում հողփոխարինի «Գյուղացու գրադարան» մատենաշարը և լույս ընծայում իր հեղինակած «Գալուստի վիկը», «Կարտոֆիլի մշակությունը», «Խոտորչուկի կոմունան» գրքույկները:

1926, մարտից հետո - Մտերմանում է Ե. Չարենցի, Գ. Մահարու, Մ. Արմենի հետ, որոնք Գ. Սարյանի, Ս. Տարոնցու, Վ. Նորենցի և այլոց հետ մեկտեղ հիմնել էին «Նոյեմբեր» գրական խմբակցությունը: Մտերմությունը վերածվում է գրական բարեկամության:

1926, 6 հունիս - «Խորհրդային Հայաստան»-ում (թիվ 132) տպագրվում է «Միրհավ» պատմվածքը:

1926, 10 հունիս - «Խորհրդային Հայաստան» օրաթերթը (թիվ 135) հայտարարություն է տպագրում, ըստ որի՝ Ակսել Բակունցը դարձել է «Նոյեմբեր» գրական խմբակցության անդամ:

1926, 5 սեպտեմբեր - Երևանում, ժամը 24-ի սահմաններում Նազան տեսակի ատրճանակից Չարենցը երկու կրակոցով (մեկը վրիպել է) վերք է պատճառում 16-ամյա Մարիանա Այվազյանին (բորսայի նախագահ Սարգիս Այվազյանի դուստրը, երգահան Արտեմի Այվազյանի քույրը), ում սիրահարված էր, բայց մերժված: Չարենցը ձերբակալվում է, նրա հանդեպ նույն օրը հարուցվում է քրեական գործ:

Ներկայացնում ենք Բակունցի հետ կապված դրվագը և նրա երկու ելույթները, որոնք զետեղված չեն նրա երկերում:

Կրակոցից առաջ Չարենցը պատահական տեսել էր Բակունցին և կանչել: Կրակոցից հետո Բակունցը փորձել է Այվազյանի ձեռքից խլել ատրճանակը, որպեսզի չկրակի Չարենցի վրա:

Սեպտեմբերի 6-ին՝ որպես վկա, հարցաքննվել է Ակսել Բակունցը. «Սրանից մոտ երկու շաբաթ առաջ Եղիշե Չարենցը ինձ ասել է, որ ինքը սիրահարված է մի ինչ-որ աղջկա վրա: Ես ենթադրում եմ, որ նա այդ աղջկա վրա սիրահարված պիտի լիներ մոտ մի ամիս, որովհետև մոտ մի ամիս է, որ նա անընդհատ հարբում է: Հարբած ժամանակ նա միշտ ասում էր, որ իրեն պիտի խփի, զանազան հայոյանքներ էր տալիս, դժգոհում էր շրջապատից, Երևանից: Երեկոյան ժամը 12-ին, երբ ես դուրս եկա Բակունցի ճաշարանից, բաղ.

[աբային] այգում հանդիպեցի Չարենցին: Միջ այդ երեք անգամ գնացել էի նրա տուն, սակայն նա տանը չէր: Նա անմիջապես ամուր բռնեց ձեռքս, «Ակսե՛, Ակսե՛, արի՛» ասելով՝ ատրճանակից երկու անգամ կրակեց: Կրակոցի ձայնին մի բաղաբացի, հետագայում իմացա՝ Այվազյանը, վրա հասավ և բռնելով Չարենցի բկից, գցեց գետին. ենթադրում եմ, որ նա ցանկանում էր ատրճանակը խլել Չարենցից: Չարենցը ինձ գոռաց, թե՛ բռնիր նրան. ես արդեն մեջ էի ընկել և բաժանում էի: Այդ մոմենտին եկան միլիցիաները և բաժանեցին: Քաղ.[աբացի] Այվազյանը ինձ ասաց, որ ես վրա լինեմ: Ես գիտեի, որ Չարենցը սիրահարված էր Այվազյանի աղջկան և այն ժամանակ, երբ կրակեց, ես տեսնելով այդ բաղաբացուն, ենթադրեցի, որ Այվազյանի աղջկա վրա կրակեց: Չգիտեմ Չարենցը այդ աղջկան նամակ գրե՞լ է, թե ոչ»:

1926 թ. նոյեմբերի 9-ին գործը քննում է Գլխավոր դատարանը: Առավոտյան ժամը 10-ին սկսված դռնբաց դատական նիստում ելույթ է ունենում նաև Ակսել Բակունցը. «Երբեմն Չարենցը հարբած վիճակում խոսում էր զանազան կանանց մասին, կազմում էր նրանց մասին կարծիքներ: Ես գիտեի, որ նա մի աղջկա սիրում է, բայց թե ում, չէր ասում: Լուրջ ժամանակ նա գրական-հասարակական հարցերի շուրջ խոսակցություն ունենում էր, սակայն ոչ սիրո, կանանց և այլ նման հարցերի: Դեպքի հանգամանքները սրանք են: Քաղաքային այգու ծառուղիում մի 5 բայի վրա հանդիպեցի Չարենցին ու, նրան տեսնել ցանկանալով, հարցրի՝ ո՞ւր է գնում: Նա ինձ ձայնեց՝ «Ակսե՛, Ակսե՛, արի՛ բան եմ ասում», - որից անմիջապես հետո լսեցի ատրճանակի երկու կրակոց: Նա չի ասել, թե՛ «ատրճանակը վերցրու, թե չե՛՛ նա կխլի ու ինձ կսպանի»: Քննիչի հարցումների նկատմամբ Չարենցը իրեն պահում էր անտարբեր: Այդ պահին ես կարծում եմ, որ նա պետք է հարբած լիներ: Ճիշտ է, նա ինձ ասել է, որ «կատարվածի մասին հայտնեք Աշոտ Յովհաննիսյանին»: Չարենցի հետ ծանոթ եմ ս.թ. մարտ ամսից»:

Նա երբեմն հայտարարում էր, որ ինքը սիրահարված է ինչ-որ արձանի վրա և այդ միջոցին, եթե մեկն ու մեկը ճգներ ապացուցեց, որ նման սեր գոյություն չունի, նա նրան կանվաներ կոպեկանոց մարդ և այլն: Նա շատ հաճախ արտասանում էր Եսենինի գրվածքներից՝ հիշելով նրան: Լինել դա փողոցում թե տանը, այլևայլ պայմաններում: Եթե այդ աղջիկը չլիներ անգամ, նա պետք է Եսենինին հիշեր: Կոնկրետ ես չգիտեի, թե նա որ աղջկա մասին էր խոսում: Աղջկա ով լինելը չգիտեի: Միլիցիաները – ներսում, Չարենցին քննողը թե ով էր, չգիտեմ, բայց մեկը այնտեղ հարց էր տալիս նրան, որին պատասխանում էր Եսենինի բանաստեղծություններով: Ես այդ պահին միջանցքում էի, որտեղ էլ լսեցի եր այդ:

ծուլություններով: Ես այդ պահին միջանցքում էի, որտեղ էլ լսեցի եր այդ:

1926, 10 սեպտեմբեր - նոյեմբեր - Որպես քաղաքացության պետի տեղակալ ներգրավվում է Չանգեզուրի և Քուրդիստանի «Աղբյուրների» խՍՀ Լաչինի շրջան» սահմանները ճշտող հանձնաժողովի կազմում: Այդ կապակցությամբ պահպանվել են համապատասխան գրություններ (տես՝ «Երկեր», հ. 4, էջ 480-484):

1926 - Հարություն Սուրխաթյանը իր կազմած «Հայ գրականություն» (Արևելահայ 19-րդ դարի և 20-րդ դարի առաջին քառորդ, արձակ և չափածո նմուշներ, հ. 2) գրքում գետնից դնում է «Տրախտորի մաշին» պատմվածքը:

1927, 1-4 հունվար - «Խորհրդային Հայաստան»-ում (թիվ 1-2) շարունակաբար տպագրվում է «Ալպիական մանուշակ» պատմվածքը, որը 1933 թ. վերջին խմբագրությամբ գետնից դնում է «Սև ցեղերի սերմանքները» ժողովածուի մեջ և նվիրված է հունվարի 1-ի գիշերը վախճանված Չարենցի կնոջ՝ «Արփենիկի հիշատակին»: Պահպանվել է Մորուս Հասարթյանի վկայությունը. ««Ալպիական մանուշակը», ի դեպ, այս անունն էր կրում նվիրված էր մի աղջկա, բայց Չարենցը թախանձագին խնդրանքով ուղղակի պահանջեց, որ Ակսելը այն նվիրի իր վաղամեռիկ կնոջ՝ Արփիկին» («Չարենցի հետ: Յուշեր», 1997, էջ 87):

1927, 1-2 փետրվար - «Խորհրդային Հայաստան»-ում (թիվ 24-25) շարունակաբար տպագրվում է «Խոնարհ աղջիկը» պատմվածքը:

1927, 29 մարտ - Արմավիրում «Սիրելի Ակսելին» ուղերձով Չարենցը գրում է «Այդ գունատ սուրբկերը» բանաստեղծությունը (տես՝ «Գիրք մաքուր ոգու», 2017, էջ 137-138): Չգուշացում էր՝ իրենց հետապնդող սև ուժերից:

1927- Պետհրատը լույս է ընծայում «Հովնաթան Մար» վիպակը:

1927 - Պետհրատը լույս է ընծայում «Մթնածոր» պատմվածքների ժողովածուն (184 էջ, 18 պատմվածք): Այդ գրքով նոր էլ է բացվում հայ արձակի պատմության մեջ: Գրքի կապակցությամբ Չարենցը գրում է «Ակսելին՝ «Մթնածորը» կարդալուց հետո» բանաստեղծությունը:

1927-1928 - Աշխատակցում է գյուղատնտեսական մամուլին՝ «Կարմիր ռազապար», «Գորիս», «Նոր ակոս», «Գյուղատնտեսական կյանք», «Կոլխոզնիկ», «Սոցիալիստական գյուղատնտեսություն»: Վարում է «Մաճկալ» օրաթերթի գյուղատնտեսական բաժինը:

1928, մարտի սկիզբ - Դիմում է ՀԿ(Բ) Կենտկոմ՝ ազատվելու հողօդակոմատում զբաղեցրած պաշտոնից և նվիրվելու «բացառապես» գրական աշխատանքի:

1928, 11 հոկտեմբեր - Բաբվում այցելում է «Կոմունիստ» հայկական թերթի

խմբագրություն, որի հոկտեմբերի 14-ի թիվ 240-ում տպագրում է նրա «Գրական կյանքը Երևանում» գրույցի շարադրանքը:

1928- «Նոր» հանդեսում (գիրք 1) տպագրվում է Խորեն Սարգսյանի «Ակսել Բակունց» ծանրակշիռ հոդվածը:

1928 - Արժանանում է «Տիգրան Կամսարական» գրական մրցանակի (Փարիզ): Այդ կապակցությամբ Լևոն Բաշալյանը հանդես է գալիս «Տիգրան Կամսարականի մրցանակը. Ատ. Չորյան և Ակսել Բակունց» հոդվածով («Ապագա», 1928, Փարիզ, թիվ 45, 15 սեպտեմբեր):

1928 - «Ծառուն աղան» և «Տրախտորի մաշին» պատմվածքները Չարենցը գետնից դնում է իր կազմած «Գրականության դասընթացի» մեջ (ուսման 6-րդ տարի):

1928 - Մասնակցում է Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի հիմնադրման աշխատանքներին և մի կարճ շրջան պաշտոնավարում այնտեղ:

1928 - Գևորգյան եղբայրների հետ Բակունցն այցելում է Ապարանի Ղարան-լուխ ծայրահեղ թշվառ գյուղը: Գրում է ակնարկ «Խորհրդային Հայաստան» թերթի համար: Տպագրությունը կասեցվում է և քննարկվում Կենտկոմում: Ակնարկը հայտնաբերված չէ:

1929, հունվար - «Նոր ուղի» ամսագրում՝ թիվ 1,2-3,4,5 տպագրվում են հատվածներ «Կարմրաբար» վեպից:

1929, 16 հոկտեմբեր - Չարենցը գրում է «Թուրք Ակսել Բակունցին, գրված Լենինգրադից» ծրագրային բանաստեղծությունը:

1929 - ԽՍՀՄ ժողովուրդների կենտրոնական հրատարակչությունը լույս է ընծայում «Սպիտակ ձին» պատմվածքների ժողովածուն (Մոսկվա, 72 էջ):

1929 - Ա. Բաբայանի ռուսերեն թարգմանությամբ լույս է տեսնում «Մթնածոր» ժողովածուն («Темное ущелье», Մոսկվա-Լենինգրադ, 208 էջ):

1929, 28 նոյեմբեր - «Խորհրդային Հայաստան»-ում լույս է տեսնում Բակունցի «Միջ. Նալբանդյանը որպես պամֆլետիստ» հոդվածը:

1929 - Հարություն Սուրխաթյանի «Հետհոկտեմբերյան հայ գրականություն (հ. 1, պրոլետարական գրականություն, Թիֆլիս) գրքում առանձին դիմանկարով տրվում է Ակսել Բակունցի ստեղծագործության վերլուծությունն ու գնահատականը:

1930, 5 հունվար - Նոր լույս տեսած իր «Եպիբական լուսաբաց» ժողովածուն Չարենցը մակագրում է Բակունցին՝ «Սիրելի



Ակսելին, միակ բարեկամիս» Լարեկացու այս տողերի հավելումով. «Մի եղեց անպատուղի փոքր վաստակոյս իբր ապաշան սերմանող անբերրի երկրի»:

1930 - Աղոթեցաներեն տպագրվում է «Իվան բեյը» պատմվածքը: Թարգմանիչ՝ Տ. Իսմիխանով (Բաբու, 30 էջ):

1930 - Բակունցի «Խաչի ստրուկները» սցենարով նկարահանվում է «Սև թևի տակ» համր կինոնկարը: Բեմադրիչ՝ Պ. Բարխուդարյան: Բեմարքը հրատարակել է Դավիթ Գասպարյանը՝ տես՝ «Փակ դռների գաղտնիքը», 1994, էջ 682-719:

1931 - Աշխատում է «Լոր ուղի» գրական-գեղարվեստական, քաղաքական, հասարակական ամսագրում:

1931, հուլիս - «Գրական դիրքերում» ամսագիրը հաղորդում է, որ այլ գրողների հետ մեկտեղ, սոցիալիստական իրականությունը ճանաչելու նպատակով, Բակունցը ևս կցվել է արդյունաբերական ձեռնարկություններից մեկին՝ Երևանի մեխանիկական իրերի գործարանին:

1931, աշուն - Խանջյանի աշակցությամբ մեկնում է Լենինգրադ-Պետերհոֆ: Նորաբաց գիտնականի տանը շարունակում է գրել «Կարմրաբար» վեպը, ինչպես նաև՝ մի քանի նոր պատմվածքներ:

1932-ի սկիզբ - 34(բ)4 Կենտկոմը որոշում է մեկ տարով գրողներին ազատել զբաղեցրած պաշտոնից, կյուբապես ապահովել, որպեսզի նրանք ամբողջովին նվիրվեն գրական աշխատանքի: Գրողներին խմբի մեջ էր նաև Բակունցը:

1932, 23 ապրիլ - Ընդունվում է 34(բ)4 Կենտկոմի «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» որոշումը: Նույն թվականի մայիսի 9-ին հրապարակվում է 34(բ)4 Կենտկոմի «Հայաստանի գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» որոշումը: Բակունցը ներգրավվում է գրողների միության կազմկոմիտեի մեջ: Գրական կազմակերպությունների վերակառուցման հարցերի մասին զեկուցում է Լենինականում:

1932, ապրիլ-մայիս - Փարիզի «Մենք» հանդեսի Դ-Ե միացյալ համարում Շավարշ Լարդունի գրախոսում է «Սթենաթոր» ժողովածուն:

1932, 30 մայիս - «Գրական թերթ»-ում տպագրվում է մի հատված Բակունցի «Որդի որոտման» վեպից:

1932, 7 հուլիս - Չարենցն իր «Երկեր» (1932) ժողովածուն ընծայագրում է Բակունցին՝ «Սիրելի Ակսելին, որպես նշան գրական և անձնական անխախտ սիրո և բարեկամության»:

1932 - Նույն տեսնում «Հոկտեմբեր-Նոյեմբեր» մեծադիր ու շքեղ տարեգիրքը Չարենցի, Բակունցի և Եղիա Չուբարի խմբագրությամբ: Տարեգրքում գետնոված է Բակունցի «Մուրոյի գրույցը» պատմվածքը և կենսագրությունը:

1932 - Պետհրատը լույս է ընծայում Բակունցի «Խաչատուր Աբովյանի «Անհայտ բացակայումը»... արխիվային նոր վավերագրերի և անհայտ նամակների հիման վրա ուսումնասիրությունը (62 էջ):

1933, 20 փետրվար - Չարենցը գրում է «Դեպի լյառը Մասիս» պոեմը՝ այսպիսի ընծայագրով. «Ակսել Բակունցին, պայծառ բարեկամիս»:

1933, մայիս - Գործուղվում է Բաբու՝ օգնելու տեղի հայերեն «Կոմունիստ» թերթի աշխատանքներին, կազմակերպելու տեղի հայ գրողների գործունեությունը: Ընկերակցում էր Ռաֆայել Աթալան: 34(բ)4 Կենտկոմում նամակ էին ստացել, թե «Կոմունիստ» թերթի լեզուն անթերի չէ:

1933, 21 ապրիլ - «Գրական թերթ» (թիվ 7) տպագրում է Մկրտիչ Արմենի «Չարենցի և հարակից խնդիրների մասին» հոդվածը, որը խտացնում էր Չարենցի, Բակունցի, Մահարու և Արմենի ծրագրային դրույթները գրական սկզբունքների հարցում: Թերթի նույն համարում հոդվածը ենթարկվում է ջարդարարության (Եղիա Չուբար, Գուրգեն Վանանդեցի): Հոդվածի քննադատությամբ հանդես է գալիս «Խորհրդային Հայաստան»-ը (9 հուլիս), որի խմբագրականում այն բնորոշվում է որպես «գրական քաղաքական կոպիտ սխալ»: Թերթի քննադատությունը հասցեագրվում է նաև Չարենցին ու Բակունցին:

1933, 20 օգոստոս - 34(բ)4 Կենտկոմն ընդունում է որոշում գրական խմբակային պայքարի դեմ: 5-րդ կետը լրիվ ուղղված է Բակունցի դեմ, որին «անթույլատրելի վարքագծի համար» արվում է «խիստ հանդիմանական» վերջին նախազգուշացումով, և նա ազատվում է գրողների միության կազմկոմիտեի կազմից:

1933, 25 օգոստոս - Կենտկոմի օգոստոսի 20-ի որոշումը քննարկվում է գրողների միության կազմկոմիտեի լիազորմար նիստում: Հրապարակվում է Բակունցի գրավոր դիմումը, ըստ որի՝ նա «...անվերապահորեն ընդունում է Կենտկոմի որոշմամբ մատնանշված սխալները»:

1933, 18 նոյեմբեր - 34(բ)4 Կենտկոմը որոշում է ընդունում «Հայպետհրատի արտադրանքի իրենդոգիական անկայունության մասին»: Դրանով արգելվում

են Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուն, Չարենցի և Բակունցի կազմած «Հայ գրականության քրեստոմատիան», Արմենի «Երևան» վեպը և այլ հրատարակություններ:

1933, 5 դեկտեմբեր - Երևանի կուսակցական կազմակերպության կոնֆերանսում Ադասի Խանջյանը քննադատում է Արմենի հիշյալ հոդվածը և Չարենցի ու Բակունցի դիրքորոշումը:

1933, 12 դեկտեմբեր - Նամակով Բակունցը դիմում է հանրապետության կուսակցական ու գրական ղեկավարությանը և հրապարակավ ընդունում իր գրական, քաղաքական մեղքերը: Սա թշնամիների սաղոսալն էր, որով հասունացրին «ժողովրդի թշնամու» նրա կերպարը:

1933 - Պետհրատը լույս է ընծայում «Սև ցեղերի սերմնացանը» պատմվածքների ժողովածուն (203 էջ): Գիրքը բացվում է «Ծիրանի փողը» պատմվածքով: Ամբողջությամբ գետնոված է 10 պատմվածք: Ձևավորումը՝ Հակոբ Կոչոյանի:

1933 - Բակունցի բեմարքով նկարահանվում է «Արևի զավակը» կինոդրաման: Բեմադրիչ՝ Պատվական Բարխուդարյան:

1933, հոկտեմբեր-դեկտեմբեր - «Անահիտ» (թիվ 3-4) հանդեսում տպագրվում է Արշակ Չոպանյանի «Աբովյանի անհայտացման առեղծվածը և պրոֆ. Ն. Աղոնց» հոդվածը՝ Բակունցի ուսումնասիրության և դրա շուրջ ծագած վեճերի մասին:

1934, 10-13 հունվար - 34(բ)4 9-րդ համագումարում Խանջյանը քննադատում է Չարենցին ու Բակունցին՝ «գրականության մեջ ազգային ձևի և սոցիալիստական բովանդակության հարցերում» ունեցած «սխալ տեսակետի» համար:

1934, մարտ-մայիս - «Անահիտ» հանդեսում (թիվ 3-4) տպագրվում է Պետրոս Չարոյանի «Ակսել Բակունց և իր «Սև ցեղերի սերմնացանը» ուսումնասիրությունը», որը 1935-ին Փարիզում լույս է տեսնում առանձին գրքով:

1934, 16 մայիս - «Գրական թերթ»-ի վերաբերյալ գրած մի զեկուցագրի մեջ Նաիրի Չարյանը քննադատում է «Չարենց-ակսելյան» խմբակի գործունեությունը:

1934, 20 մայիս - «Գրական թերթ»-ում (թիվ 14) տպագրվում է «Իրավան Չարսու բազար» հատվածը Աբովյանին նվիրված վեպից:

1934, 21 մայիս - ՀԽԳՄ կազմկոմիտեի նիստում հաստատվում է գրողների միության ընդունող հանձնաժողովի կազմը, որի մեջ էր նաև Բակունցը:

1934, 4 հունիս - Գրողների տանը բանախոսում է Վահրամ Ալազանի «Վաթսուններորդ հորիզոնում» վեպի լեզվի մասին:

1934, 8-13 հունիս - Գրողների տանը կազմակերպվում է ասուլիս նվիրված գրականության լեզվի հարցերին: Ի շարքում՝ ելույթ է ունենում նաև Բակունցը:

1934, 14 հունիս - Դիմում է ՀԽՍՀ կազմկոմիտեին՝ ընդունվելու գրողների միության անդամ:

1934, 22 հունիս - Տպագրության երաշխավորելու նպատակով Աղասի Խանյանը կարդում է Բակունցի «Սև ցեղերի սերմնացանը» գրքին նվիրված Ռաֆայել Աթայանի հոդվածի շարվածքը:

1934, 28 հունիս - Գրողների տանը Չարենցը բանախոսում է «Մեր գրական լեզվի զարգացման տեսնեցները և Դ. Դեմիրճյանի լեզուն» կյուբով: Բակունցը դժգոհ է մնում Չարենցի զեկուցումից և մի քանի առիթներով հայտնում իր նկատառումները: Դժգոհության պատճառն այն էր, որ գրական նոր լեզվի առաջատար իրեն հռչակելու փոխարեն Չարենցը նախապատվությունը տվել էր Դեմիրճյանին:

1934, 29 հունիս - «Խորհրդային Հայաստան»-ում (թիվ 148) տպագրվում է Ռաֆայել Աթայանի «Սև ցեղերի սերմնացանը» գրախոսությունը (տես նաև՝ «Գրական թերթ», 30 հունիս, թիվ 17):

1934, 9 հուլիս - Գրողների միության կոմիտեի Կապիտանի Զարյանը քաղաքական մեղադրանքներ է հասցնում Բակունցին, որին ի պատասխան Բակունցը բռնկվելով «հարվածում» է նրան: Նրանց միջև ծագած հակամարտությունն աստիճանաբար խորանում և ընդունում է շատ թշնամական լարված բնույթ: Զարյանը գաղափարապես (բուլշևիկյան դիրքերից) ամեն կերպ ջանում էր ոչնչացնել Բակունցին:

1934, 10 հուլիս - Նախորդ օրը տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ Բակունցը բացատրական նամակ է հասցեագրում հանրապետության ղեկավարությանը:

1934, 14 հուլիս - ԶԿ(Բ)Կ Կենտկոմը որոշում է ընդունում «Հայաստանի խորհրդային գրողների միության մասին», այլոց հետ մեկտեղ Բակունցը վերստին դատապարտվում է «խմբակային պայքար կազմակերպելու համար»:

1934, 21 հուլիս - Գրողների տանը հանդես է գալիս շուրջ երկու ժամ տևած «Տեղական նացիոնալիզմի մի քանի արտահայտությունները մեր գրականության մեջ» զեկուցումը: «Գրական թերթ»-ը տպագրում է զեկուցման շարադրանքը (տես՝ 24 հուլիս, թիվ 19):

1934, 23 հուլիս - «Խորհրդային Հայաստան» օրաթերթը տպագրում է «Դեպի ծավալուն ստեղծագործական ինքնաբերականություն» խմբագրականը, որի մեջ «Նացիոնալիզմի» մերկացման դիրքերից կոպիտ քննադատության է ենթարկվում Բակունցը:

1934, 1-6 օգոստոս - Հրավիրվում

է Հայաստանի խորհրդային գրողների առաջին համագումարը: Բակունցը ելույթ է ունենում համագումարի 8-րդ նիստում, վերջին օրը: Նրա ելույթի հակիրճ շարադրանքը տպագրվել է «Գրական թերթ»-ում (10 օգոստոս, թիվ 21): Ինքնաբերականության հետ մեկտեղ նա խոսում է նաև «մեր քննադատների ցածր կուլտուրական մակարդակի մասին», որոնք չեն կարողանում մտնել «երկի մեջ և երկի կառուցվածքից» բխեցնել եզրակացություններ: Արժանազան է նաև գրականության լեզվի հարցեր:

1934, 17 օգոստոս - սեպտեմբեր - Հրավիրվում է ԽՍՀՄ գրողների հիմնադիր համագումարը: Համագումարին հայ գրողների պատվիրակության կազմում Բակունցը մասնակցում է որպես պատգամավոր: Համագումարի բացման օրը «Լիտերատուրնայա գազետա»-ն տպագրում է Բակունցի հետ թերթի թղթակցի գրույցի շարադրանքը՝ «Հանուն ժանրերի բազմազանության» վերնագրով: Համագումարում ելույթ է ունեցել օգոստոսի 22-ին՝ 8-րդ նիստում: Ելույթը տպագրվել է «Լիտերատուրնայա գազետա»-ում (2 սեպտեմբեր), «Գրական թերթ»-ում (5 սեպտեմբեր), «Նա ռուբեժե Վոստոկ»-ում (15 սեպտեմբեր) և համագումարի սղագրությունն ի մի բերող գրքում (1934): Իր ելույթում նա խոսել է գրական ժանրերի մասին, կոչ արել վերանայել անցյալի «գրական վիթխարի ժառանգությունը» և դրանով «մեծ ու լայն ուղիներ գծել» ընթացիկ գրականության համար: Այդ նպատակով առաջնային է համարում դարձնել դեպի սկզբնաղբյուր՝ «դեպի ժողովրդական ստեղծագործությունը»:

1934 - Թիֆլիսում ռուսերեն առանձին գրքով լույս է տեսնում «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքը (19 էջ):

1934 - Թիֆլիսում ռուսերեն լույս է տեսնում «Յոթ պատմվածք» ժողովածուն (135 էջ):

1934 - Պետհրատը լույս է ընծայում Ն. Գոգոլի «Տարա Բուլբա» վիպակը՝ Բակունցի թարգմանությամբ, առաջաբանով և խմբագրությամբ (156 էջ):

1934 - Պետհրատը լույս է ընծայում Ջոնաթան Սվիֆթի «Գուլիվերի ճանապարհորդությունները»՝ Կարեն Սիբայեյանի թարգմանությամբ և Ակսել Բակունցի «Ջոնաթան Սվիֆթը և նրա գիրքը» առաջաբանով:

1934, 7 նոյեմբեր - «Գրական թերթ»-ը (թիվ 28) հաղորդում է, որ Հայաստանի խորհրդային գրողների համագումարից ստացած տպավորությունները համագումարի հյուր ժ. Բերնարդը հրատարակել է ժևի «Տրավայ» («Աշխատանք») թերթում, որի մեջ Բակունցին համարել է «ամենագեղարվեստական վիպագիրներից ու պատմվածագիրներից»:

1934, նոյեմբեր - «ՀՕԿ» ամսագրի 11-րդ համարում տպագրվում է Ավետիք

Խաչատրյանի «1934 թ. գրական հունձը խորհրդային Հայաստանում» հոդվածը, որի մեջ բարձր գնահատության խոսքեր կան Բակունցի հասցեին: Բակունցը հռչակվում է «մեր արձակի ամենատաղանդավոր ներկայացուցիչը»:

1935, հունվար - Բակունցի թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով պետհրատը լույս է ընծայում Վարդան Այգեկցու «Աղվեսագիրք» ժողովածուն (118 էջ): Մինչ գրքով լույս տեսնելը ութ առակ տպագրվել էր «Գրական թերթ»-ում (1934, 29 նոյեմբեր): Այս ամենի դեմ միտումնավոր հարձակումներ է գործում «Խորհրդային արվեստ» ամսագիրը (1935, թիվ 1, 2): Այդ հոդվածների հեղինակներն էին Ա. Վշտունյան (անստորագիր խմբագրական) և Նորայր Դաբադյանը: Այդ վեճին անդադրադնում է «Գրական թերթ»-ը (10 հունվար, թիվ 1):

1935, հունվար-փետրվար - Լույս են տեսնում Ն. Աբովյանի նվիրված պատմավեպի հատվածները՝ «Գործ Մայրանա դստեր Մկրտումի» («Խորհրդային գրականություն», թիվ 1), «Դեպի լյառն Մասիս» («Գրական թերթ», 7 փետրվար), «Լիբեր Արմենիեր» («Խորհրդային գրականություն», թիվ 2): Աբովյանի, Նալբանդյանի մասին վեպ ու պոեմ գրելու գաղափարը Չարենցին ու Բակունցին հուշել էր Խանյանը:

1935, 8 մարտ - Չարենցը դիմում է ՀԽՍՀ վարչությանը և հայտարարում «գրողների կորպորացիայից» դուրս գալու իր որոշման մասին: Այդ կապակցությամբ մարտի 11-ին և 13-ին տեղի են ունենում գրողների միության նիստեր: Խստիվ դատապարտվում է Չարենցի դիմումը: Դատապարտողների և Չարենցին գրողների միությունից հեռացնելու օգտին քվեարկողների մեջ էր նաև Բակունցը (նրա ելույթը տես՝ ԳԱԹ, ԶՖ, թիվ 9): Այդ արարքն ավելի ուշ պատճառաբանում է այսպես. «...այս ձմեռ ես աշխատում էի Էշմիաձում և մինչև 1935 թվի փետրվարը հազվադեպ էի բաղադրել, այսինքն՝ մինչև գրողների միությունից նրա հեռանալու դիմումը, ինչն էլ առիթ ծառայեց Չարենցի դեմ իմ ելույթին, որից հետո մեկընդմիջտ խզեցի կապերս նրա հետ» (հանրապետության ղեկավարությանը բանտից հասցեագրած «6. X. 1936» թվակիր դիմումից):

1935, 10-11 ապրիլ - Ելույթ է ունենում Հայկինոյի հարցերին նվիրված ասուլիսում:

1935 - Մոսկվայում ռուսերեն թարգմանությամբ լույս է տեսնում «Խոնարի աղջիկը» պատմվածքների ժ-



ղովածուն (Գոսլիտիզդատ, 206 էջ):

1935, 11 մայիս - «Խորհրդային Հայաստան»-ը (թիվ 107) տպագրում է «Անխնա պայքար ավելիականության դեմ» խմբագրականը Բակունցի դեմ:

1935, 20 մայիս - «Գրական թերթ»-ը (թիվ 11), ընդունելով «Խորհրդային Հայաստանի» քննադատությունը՝ «կուպիտ քաղաքական սխալներ» թույլ տալու մասին, նոր ջարդարարական հարձակման է անցնում Զարեկի և Բակունցի դեմ:

1935, 30 սեպտեմբեր - Գարնանը Խանջյանի արած առաջարկով Բակունցն սկսում է գրել «Չանգեզուր» բեմադրությունը: Հեղինակային տարբերակն ավարտում է 1936-ի հունվարի 23-ին, ըստ իր հիշատակարանի՝ «օգնականությամբ զանգեզուրցի մի խումբ կոմունարների, որոնց հեղինակը երախտապարտ է»:

1935, 20 հոկտեմբեր - «Լիտերատուրնայա գազետա»-ն տպագրում է Պ. Նեզամովի «ժյառ արձակ» գրախոսությունը Բակունցի «Խոնարի աղջիկը» ռուսերեն գրքի մասին:

1935, 1 դեկտեմբեր - «Լիտերատուրնայա գազետա»-ն տպագրում է Գ. Թաթուլովի «Տարածելով թևերը» հոդվածը, որի մեջ բարձր գնահատական է տրվում Բակունցի ստեղծագործությանը:

1935 - Պետհրատը տպագրում է Բակունցի «Անձրևը» պատմվածքների ժողովածուն (80 էջ):

1935 - Բակունցի բեմադրով (համահեղինակ՝ Ե. Գրեբներ) նկարահանվում է «Ալադյազ» ֆիլմը: Բեմադրիչ՝ Ջերգիզ ժամհարյան (1903-1984):

1936, 22 հունվար - Գրական ոճի և կյանքի միասնության մասին ելույթ է ունենում գրողների կուսակցական ժողովում:

1936, մինչև փետրվար - Պետհրատը լույս է ընծայում «Եղբայրության ընկուզենիներ» գիրքը (156 էջ), որի մեջ զետեղված էին համանուն պատմվածքը և «Կյորեն» վիպակը:

1936, փետրվար - ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի նախագահի տեղակալ Ալեքսանդր Մելիքը Խանջյանի ցուցումով պայմանագիր է կնքում Բակունցի հետ՝ Չանգեզուրի պատմական նշանակություն ունեցող վայրերի մասին «գիրք-ալբոմ» կազմելու համար: Բակունցն ստանում է նախատեսված 5.800 ռուբլուց 2.000-ը: Իրադարձությունների ողբերգա-

կան ընթացքը թույլ չի տալիս իրականացնել այս ծրագիրը:

1936, մարտ-ապրիլ - ՀԿ(Բ) Կենտկոմում մի քանի անգամ քննարկվել է «Չանգեզուր» բեմադրությունը: Արված դիտողությունների և առաջարկությունների համաձայն Բակունցը շարունակում է աշխատանքը՝ վերջնական տարբերակն ստեղծելու համար:

1936, 9 մայիս - Հայկինոյի հանձնարարությամբ Բակունցը երեք ամսով պետք է գործուղվեր Մոսկվա՝ «Չանգեզուր» բեմադրությունը լրամշակելու համար: Որդու հիվանդության պատճառով մեկնում է մայիսի կեսերին (հավանաբար 15-ին):

1936, 2 հունիս - Մոսկվայի «Նացիոնալ» հյուրանոցում Բակունցը հանդիպում է ՀԿ(Բ) Կենտկոմի առաջին քարտուղար Խանջյանի հետ: Քննարկում են Ներսիկ Ստեփանյանի ձեռքարկության հարցը, որը տեղի էր ունեցել մայիսի 21-ին: Խոսում են նաև «Չանգեզուր»-ի մասին: Ստեփանյանի ձեռքարկությունից հետո Մոսկվայում Բակունցի վրա սահմանվում է ԼԳԺԿ մարմինների հսկողություն:

1936, 4 հունիս - Գրողների միության ժողովը Բակունցին դատապարտում է որպես «ժողովրդի թշնամի»: Նրա դեմ խոսում են Վ. Նորենցը, Վ. Ալազանը, Յ. Մկրտչյանը, Ն. Չարյանը, Ն. Դաբաղյանը և ուրիշներ: Ժողովը որոշում է Բակունցին հեռացնել կուսակցությունից:

1936, 9 հուլիս - Գրողների միության ժողովը վերստին դատապարտում է Բակունցին: Ելույթ են ունենում Ն. Չարյանը, Յ. Սիրադը, Գ. Հովսեփյանը, Վ. Նորենցը, Յ. Գյուլիբեկյանը, Վ. Ալազանը, Յ. Մկրտչյանը, Ն. Դաբաղյանը և ուրիշներ:

1936, 9 հուլիս - Թիֆլիսում Բերիան սպանում է ՀԿ(Բ) Կենտկոմի առաջին քարտուղար Ադասի Խանջյանին:

1936, 14 հուլիս - Գրողների միության ժողովը դատապարտում է Խանջյանին և նրա կողմից «հովանավորված» Բակունցին:

1936, 30 հուլիս - Մոսկվայից Բակունցն անսպասելի մեկնում է: Հայաստանում նրան սպասում էին ԼԳԺԿ գործակալները: Հավանաբար հասել է մինչև Թիֆլիս, այնտեղից գնացել Դիլիջան, ուր վերջին հրաժեշտն է տվել ընտանիքին: «Չանգեզուր» նոր բեմադրությունը անավարտ: Հետագայում Բակունցի կյանքի հիման վրա «Չանգեզուր» բեմադրությունը և Վ. Սողովյովը: Նկարահանումներն ավարտվում են 1938-ին:

1936, 3 օգոստոս - Բակունցին ընդունել է ՀԿ(Բ) Կենտկոմի քարտուղար Ամատունին: Նրանց գրույցը սղագրվել է:

1936, 5, 7 օգոստոս - Երևանում, մինչև ձեռքարկությունը, Բակունցը հարցաքննվում է ԼԳԺԿ մարմինների կողմից:

1936, 9 օգոստոս - ՀԿ(Բ) Կենտկոմի բյուրոն որոշում է Բակունցին կուսակցությունից հեռացնելու և «հակահեղափոխական ազգայնամոլական գործունեության համար ձեռքարկվելու մասին»: Նույն օրը Բակունցը ձեռքարկվում է: Նրա դեմ մեղադրանք է հարուցվում ըստ ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 67, 68 հոդվածների: Հետագայում ավելացվում են նոր հոդվածներ՝ 19-65, 78: Բակունցը մեղադրվում է «խմբակային հանցավոր գործունեության մեջ»:

1936, 9 օգոստոս - 1937, 4 փետրվար - ԼԳԺԿ աշխատակիցների կողմից Բակունցը բազմիցս ենթարկվել է դաժանագույն հարցաքննությունների և առերեսումների: Նրա վրա գործադրել են ֆիզիկական բռնություններ:

1936, 10 օգոստոս - Երևան, Նալբանդյան 80 հասցեով խուզարկվել է Բակունցի բնակարանը: Ըստ արձանագրության՝ տարել են. վեց նամակ, երեք նոթատետր, մեկ ընդհանուր տետր, երկու ալբոմ, յոթ միավոր տարբեր գրառումներ, «Չանգեզուր» բեմադրության երեք «վարիանտ» և այլ նյութեր:

1936, սեպտեմբեր - Բանտում Բակունցին կինը՝ Վարվառա Հիվիջյանը այցելել է երեք անգամ և հետո, արդարացումից առաջ, հանդես եկել ցուցմունքներով (տես՝ Դ. Գասպարյան, «Հայ գրականություն», գիրք 5, 2017, էջ 322-331):

Առաջին տեսակցությունից հետո Բակունցի ուղարկած սպիտակեղենի վրա կինը հայտնաբերել է արյան հետքեր: Վերջին տեսակցության ժամանակ, ըստ նրա հուշերի, Բակունցն անճանաչելի էր, փոխված էր, կիսախելագարի պես էր՝ «կարծես ուրիշ մարդ էր»: Կինը նրան տարել է Սոպասանի պատմվածքների ռուսերեն ժողովածուն, որի մեջ զետեղված «Պարան» գործի առանձին տողերի վրա եղունգով նշումներ է արել իր հոգեկան զարհուրելի ծանր վիճակի մասին:

1936, օգոստոս - Ձեռքարկվում է Ա. Բակունցի կինը՝ Վարվառա Հիվիջյանը: ԼԳԺԿ ներքին բանտում նա նույն քանտիսցիայում է գտնվել Ներսիկ Ստեփանյանի և Ընձակ Վահանյանի կանանց հետ:

1936, 2 հոկտեմբեր - ՀԿ(Բ) Կենտկոմի առաջին քարտուղար Ամատունին զեկուցում է Երևանի կուսակցական կազմակերպության ակտիվի նիստում, հրապարակում ձեռքարկված Բակունցի «ցուցմունքը» և խիստ քննադատության ենթարկում նրան:

1936, 10 հոկտեմբեր - Բանտից «Դիմում» է հղում հանրապետության ղեկավարությանը՝ ապացուցելու իր անմեղությունը: «Դիմումից»։ «Ես Խորհրդային Հայաստանի լավագույն արձակագիրն եմ («Պրավդա», 1934), հայ խորհրդային գրականության կառքին լծված բեղաձի, թողեք, որ ես մնամ Խորհրդային Հայաստանի դռան հավատարիմ շունը»

(Դ. Գասպարյան, «Ալեքսանդր (Ակսել) Ստեփանի Բակունց. Մեղադրական գործ №4131», էջ 55):

1936, 14 հոկտեմբեր, գիշեր - Տնային կալանքի մեջ գտնվող Չարենցը գրում է «Ա. Բ.-ին» բանաստեղծությունը՝ նվիրված եղերաբախտ գրական բարեկամին:

1936-ի ընթացքում - Մամուլում Բակունցի դեմ ծայր է առնում խիստ քննդատություն: Լույս են տեսնում հետևյալ ջարդարարական հոդվածները՝

1. Ն. Չարյան, «Գրական լեզվի Նացիոնալիստական աղավաղումների դեմ («խորհրդային գրականություն», թիվ 3-4),

2. Ն. Չարյան, «Ընդդեմ Նացիոնալիզմի և տրոցկիզմի, հանուն սոցիալիստական մեծ գրականության» («Գրական սերունդ», թիվ 4),

3. Ն. Չարյան, «Կապը կտրած խմբապետը» («Գրական սերունդ», թիվ 5-6),

4. Ս. Կիրակոսյան, «Գոգոյի «Տարաս Բուլբակ» և Ա. Բակունցի Նացիոնալիստական-հակահեղափոխական կոնցեպցիան» («Գրական սերունդ», թիվ 5-6),

5. Խմբագրական, «Միշտ բարձր պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշմը» («Գրական թերթ», 25 օգոստոս, թիվ 19),

6. Ն. Չարյան, «Նացիոնալիստ խորհրդային գրողի դիմակով» («Գրական թերթ», 25 օգոստոս, թիվ 19):

7. Ն. Չարյան, «Նացիոնալիստ խորհրդային գրողի դիմակով» («Լիտերատուրնայա գազետա», 1 սեպտեմբեր), ռուսերեն:

8. Խմբագրական, «Բարձրացնել բոլշևիկյան զգաստությունը գրականության և արվեստի ֆրոնտում» («խորհրդային արվեստ», թիվ 15-16),

9. Խմբագրական, «Դեպի խորհրդային գրականության նոր վերելք («խորհրդային Հայաստան», 18 սեպտեմբեր),

10. Յ. Սիրաս, «Կուսակցության երկաթե կարգապահությամբ» («Գրական թերթ», 22 սեպտեմբեր),

11. Վ. Թերզիբաշյան, «Հակահեղափոխական Նացիոնալիստների գրական հնարքները» («Գրական թերթ», 1936, 12 հոկտեմբեր),

12. Վ. Մարգարյան, «Դաշնակ հակահեղափոխականի «գրական դեմքը» («խորհրդային արվեստ», թիվ 18):

1937, 17-21 ապրիլ - Գումարվում է հայ գրողների ընդհանուր ժողով: Ելույթ ունեցողներն այլոց հետ մեկտեղ դատապարտում են Բակունցին՝ որպես ազգայնամոլ, ահաբեկիչ, տրոցկիստ: Չեղանցել է ՊԼՈՒԴ Արվել: Մեղադրական խուֆ է ասել Վալերի Կիրպուտինը: Ելույթ ունեցողների մեջ են Յ. Զոհարը, Ս. Վախուկին, Ա. Ոսկերչյանը, Յ. Սիրասը, Ս. Կոթյունը, Ս. Սողոմոնյանը, Տ. Հախումյանը, Ս. Հակոբյանը և ուրիշներ: Ընդհանուր այս սև հորձանքին իրենց ձայնն են միացնում

Նաև Ավետիք Իսահակյանն ու Դերենիկ Դեմիրճյանը:

1937 - Բակունցի դեմ շարունակվում են ստոր և չարամիտ ելույթներն ու հողվածները: Ահա դրանցից մի քանիսը ևս.

1. Գ. Արով, ելույթ համամիութենական գրողների միության վարչության 4-րդ լիագումար նիստում («Գրական թերթ», 1937, 20 մարտ, թիվ 7),

2. Յ. Մամիկոնյան, «Նացիոնալիստական-տրոցկիստական «գրականության» դրոշակակիրը» («Գրական թերթ», 6 ապրիլ, թիվ 10),

3. Վ. Կիրպուտին, «Ստեղծագործական ոգևորությամբ դեպի նոր հաղթանակներ գրականության ֆրոնտում» («Գրական թերթ», 23 ապրիլ, թիվ 12),

4. Ասուր. Վեն. (Ասատուր Ասատրյան), «Գրականության դասագրքերը մաքրենք Նացիոնալիզմի կեղտից» («Գրական թերթ», 21 մայիս, թիվ 15):

1937, 26 մայիս - ՅԿ(Բ)Կ 10-րդ համագումարում Ամատունին խիստ քննադատության է ենթարկում Բակունցին և «Լոյտներ» խմբակցության գործունեությանը:

1937, 2 հուլիս - Փրկության հույսով բանտից երկու դիմում է հղում ՀԽՍՀ ներքին գործերի ժողկոմին:

1937, 3 հուլիս - Փրկության վերջին դիմումն է հղում ՀԽՍՀ ներքին գործերի ժողկոմին և վերահսկողության գծով անդրկովկասյան զինվորական հանձնաժողովի դատախազին: Բակունցն ամեն կերպ ջանում է ապացուցել իր անմեղությունը:

1937, 6 հուլիս - Մուղղուսին հաստատում է Բակունցի «Մեղադրական եզրակացությունը», ըստ որի՝ Նա «Իրեն մեղավոր ճանաչեց» որպես «հեղափոխական տրոցկիստական ազգայնամոլական կազմակերպության անդամ», «հակահեղափոխական գրողների կազմակերպության» ղեկավար, որը նպատակ ուներ սպանել Ստալինին և Բերիային, «կազմակերպությունը կապված էր Մոսկվայի «Միացյալ կենտրոնի» հետ»:

1937, 7 հուլիս - ԽՍՀՄ գերագույն դատարանի զինվորական հանձնաժողովի արտագնա նիստը փակ դատական խորհրդակցությամբ Բակունցի վերաբերյալ կայացնում է որոշում, որից հետո հրապարակվում է դատավճիռը:

Բակունցը դատապարտվում է պատժի առավելագույն չափի՝ զնդակահարության, անձնական ունեցվածքի բռնագրավումով:

1937, 8 հուլիս - Երևանում ի կատար է ածվում Բակունցի զնդակահարության դատավճիռը: Քսանիկից օր առաջ լրացել էր Նրա ծննդյան 38-րդ տարեկիցը:

Նույն օրը զնդակահարվում են Ներսիկ Ստեփանյանը, Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, Արտաշես Գևորգյանը և ուրիշներ:

Ըստ հուշագրի վկայության՝ Բակունցը զնդակահարվել է Երևանի Թոխմախ լճի շրջակայքում (տես՝ Վ. Ավագան, «Տառապանքի ուղիներով», 1990, էջ 64):

1937 - Վավկոտի տարբեր որոշումներով Բակունցի գրքերը հանվում են գրադարաններից, դադարեցվում է դրանց վաճառքը գրախանութներում: Համանման որոշումներ կայացվել էին նաև 1936-ին, ձերբակալությունից հետո:

1937, 17 սեպտեմբերի - Ձերբակալվում է Վարվառա Չիվիչյան-Բակունցը (1902-1965): Ազատվում և Գորիս է վերադառնում 1945-ին:

1945, դեկտեմբեր - ...Կը սիրեն այն առողջ թափը, որ կա Հայաստանին գրողներու մեջ: <...>: Լորերուն մեջ չկան կարևոր արձակագիրներ, կա շատ տաղանդավոր Ակսել Բակունցը, որ չգիտես ո՞րք է, թե սպանված: Շատ պիտի ցավեմ եթե օր մը իմանամ, որ սպանած են այն տաղանդը: Ան ընդունակ էր մեծ և անկախ գործեր տալու:

Համաստեղի 1945 թ. դեկտեմբերին (օրը Նշված չէ) գրած Նամակից՝ հասցեագրված Հովհաննես Ավագյանին. Համաստեղ, Նամակահի, Երևան, Մուղնի, 2003, էջ 76:

1955, 2 մարտ - ԽՍՀՄ գերագույն դատարանի գլխավոր զինվորական դատախազությունն արդարացնում է Բակունցին: Բակունցն անմեղ էր զնդակահարվել: Նրա դեմ հարուցված թիվ 4131 մեղադրական գործը կարճվում է:

1955 - Անվիշապես Բակունցի արդարացումից հետո լույս են տեսնում Նրա ժողովածուները՝

1. Երկեր, Ե., Հայպետհրատ, 1955, 688 էջ:

2. Ակսել Բակունցի ամբողջական գործը 3 հատորով: Լույս է տեսնում երկու հատոր: Հատոր Ա, Պատմվածքներ, Բեյրութ, 1955, 219 էջ: Հատոր Բ, Պատմվածքներ և վիպակներ, 1956, 171 էջ:

Տպագրվում են հոդվածներ և գրքեր Նրա մասին: Այդ թվում նաև ռուսերեն, որոնցից իշխատակելի է Կ. Չեխիսկու «Ակսել Բակունց» հոդվածը («Дружба народов», 1956, թիվ 5, էջ 165-168): Նույն Նրա գրքում «Литература народов СССР», М., 1957, с. 371-378:

Բակունցի մասին հոդվածով հանդես է գալիս նաև Վ. Կիրպուտինը, որը մահացու քննադատական խոսքեր էր ուղղել Նրան (տես «Գրական թերթ», 1937, թիվ 12, 23 ապրիլ): Հիմա Նոր պայմաններում նա հանդես է գալիս հետևյալ հրապարակմամբ՝ «Людоеды к простым людям» («Սեր հասարակ մարդկանց հանդեպ») - «Литературная газета», 29 մայիս, 1956:


Սկսվում է մեծ գրողի հետմահու կյանքը, որը շարունակվող տարեգրության պահանջ ունի ...

ԽՈՍՔ ԲԱԿՈՒՆՑԻ ԱՏԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մատենախոսություն ըստ Հրանտ Մաթևոսյանի

ՂՈՐԱՆՏ՝ ՀԱՄԱՇԱՆԳԻ
ԱՐԶԱԳԱՆՔՈՎ

Հայ դպրության մեջ Սյունիքը հազար հինգ հարյուր տարի հերոսանում էր, դավաճանում էր, իմաստանում էր, դառնում էր միջնաշխարհի, կուսաշխարհի, մենաշխարհի և սակայն մնում էր հայոց աշխարհագրական բազում աշխարհներից մեկը: Հետո Սյունիքով անցավ Ակսեյ Բակունցը, և այդ երկիրը բնակեցվեց զարմանալի թախծոտ, սրամիտ և արդար մարդկանց մի մեծ բազմությամբ. – Դիլան դայու երկար կյանքի համար միջնաշխարհի և դարձել եղած, անցած-գնացած մի կին, դարձել է, որովհետև եղել է միակը, և նրա ապրած այդ միակ օրը շաղախված է արյամբ. որտեղ Ավու հուշերի հովիտներում ապրում է կյանքի դաժան հրճվանքը՝ մի կապույտ ցախի համար կոիվը արջի հետ. Սաքանը քաղաքաբնակ կնոջ մերկ ազդր է տեսել և այլևս չի տեսնելու. Վանդուց Բադին մի անգամ հպարտացավ որդիով, գրեթե խրոխտացավ և ահա դարձյալ մտել է փայտի շալակի տակ, որդուն սպանել են. ծառի պես, խոտի պես, անմոռուհի անասունի պես հողից աճեց Պետին, մի անգամ թաքուն հրճվեց՝ երբ տուն ու կին ունենալու միտքը խլրտաց նրա երակներում, և ահա որպես հնձած խոտ անշշուկ ընկել է և իր ամիշն ու ոսկորները վերադարձնում է հողին, իսկ Խոնարի աղջիկը գրեթե մեղավոր է, քանի որ ուսուցիչը կպել է նրա ձեռքին և ասել «Խոնարիս...», և գյուղից հեռանալիս ուսուցիչը ձորի գլխից ձեռքով է արել դեպի արտը, ուր Խոնարից կանգնել էր՝ ձեռքին քաղիանի բիրը, կարմիր կակաչ և մոխրատու մի կապ. «Խոնարին իսկույն կռացավ արտի վրա». հետո անցավ տասներկու տարի, «դպրոցի բակում հավաքվել էին գյուղացիները: Խոսում էին հողի մասին, զանգատվում էին, որ հողը առաջվա բերքը չի տալիս: Այս տարվա ժանտախտից էին խոսում: Շատ կովեր են սատկել, ոմանք ցել անելու եզ չունեն: Հետո ինձ մոտեցավ մի կին, ցնցոտիների մեջ, ոտքերը բոբիկ, ոտքերի կաշին ճաքճած: Կնոջ փեշերից կախվել էին երեք կիսամերկ երեխա: Նրանք մերթ ինձ էին նայում, մերթ մորը:



Կինն արցունքն աչքերին չորս փուլ
ցորեն էր խնդրում, միջև հունձը:

– Հետո մի ճար կլինի, – ասաց:

Ամուսինն անցյալ տարի էր մեռել:
Ժանտախտից սատկել էր նրանց միակ
կովը: Իսկ տանն ուրիշ աշխատող չկա:

Ես ճանաչեցի Խոնարիին: Բայց չգիտեմ
նա ինձ ճանաչե՞ց...»:

Հանաչեց: Բակունցյան հերոսները
մեկ անգամ են «ճանաչում»:

Եվ ակսեյան աշխարհի այս բոլոր
բնակիչների ճակատին գրած է. ճաշակե-
լով ճաշակեցի զսակավ մի մեղր և ահա
մեռանիցեմ:

Նա գյուղատնտես էր և լրագրող. ուսուցանում էր, թե ինչպես է հարկավոր խնամել վիկի ցանքը և համրում էր, թե քանի մարդ ու գյուղ է մնացել հին խաչքարերի ու մատուռների երկրում եղեռնից ու քաղաքացիական կոիվներից հետո, նրա ակնարկները երբեմն ֆոտոմեղադրանքներ էին, երբեմն օգնության կանչեր, հաճախ՝ կոծա ֆեյիտոններ և նրանցում կարծես թե չկար ինքնակարող արվեստագետը: «Չսակավ մի մեղրը» ոչ թե գեղագիտական սկզբունք էր, այլ ժա-

մանակի իրականության ճշգրիտ պատկեր: Դժվար կյանք - լավի կարոտ-դժվար կյանք-խորտակված կարոտ փշալարն իր մեջ էր հավաքել բնորոշների մի մեծ բազմություն, որ իր ժամանակագրին ու կենսագրին պարտադրում էր իր կյանքի վերուվարների հետագիծը: «Չսակավ մի մեղրի» գեղագիտական «շատությունը» վրա հասավ որպես կուտակված կենսափորձի ինքնաբուխ ժայթքում՝ տեղափոխվելով բնորոշների կենսագրության ոլորտից արձակագրի պոետիկայի ոլորտ: Դա միջավայրի և անհատի, միջավայրի և «դեպքի» եթե ոչ հակադրման, ապա գոնե անհարիրության գեղագիտությունն էր՝ երբ միջավայրը իրենով, ինքնին «չուզենալով» ցայտունացնում է անհատի և «դեպքի» գույնը, նրանց դարձնելով կենտրոն, միակ, անկրկնելի: Դա բացարձակ սև ֆոնի վրա սպիտակ կետի գեղեցկությունն է, կամ, իր բառերով՝ «մի տան պատուհանից ճրագի սպիտակ լույս էր երևում, կարծես այդ մթին ստվերների մեջ մոլորվել էր մի մանրիկ աստղ»:

«Խոնարի աղջիկը» սիրո մասին է: Ես հավակնում եմ ընդգրկել ամբողջ այն բառամթերքը, որով շրջապատված է «մի քիչ հեռու կանգնել էր մի աղջիկ՝ պարանի չափ բարակ ճյուղը ձեռքին» նախադասությունը (այո, հենց նախադասությունը). ձմեռ, վիզը ծուռ որսորդ, հիշողությունը թուլացած ծերունի, ցեխ, աղբաջուր, երեխաներ, շարականի գիրք. «հայրը գնում էր առջևից՝ չոր ցախի կապը շալակին», «մյուսների պես ճուռիկն էլ մոտեցավ ձեռք տալու, տրեխի ծայրերն իրար դիպան, ճուռիկը փայտալվեց ծնկներիս», – մի խոսքով՝ հին գյուղ, հին գյուղի ձմեռ, գորշություն, «ուրա-տա-սը տարեկան մի տղա ցախ էր դարսում ձյունի վրա մեկնած պարանին», և այդ գորշության շնորհիվ գեղեցկություն ու սեր դարձող մի Խոնարի աղջիկ, որ «մի քիչ հեռու կանգնել էր՝ պարանի չափ բարակ ճյուղը ձեռքին»: Հրջանառության մեջ չեն դրվել սիրել բառը և աղջկա նկարագրական գովքը. այդպես՝ մեր հին շինարար-վարպետները վանքերի համար ոչ թե վիթխարի ու բազում զանգեր էին անում, այլ զգայուն արձագանքիչներ. ոչ թե նախազգարողում էին վանքերն ու իջևանատները, այլ միակ զարդը հնչեցնում էին զարդախմբերի ուժով: Բակունցն այդ վարպետների զուգահեռ սկիզբն է մեր արձակի մեջ:

Հաղթահարելով գեղեցիկ բառի խաղաղավանքը, նա հասավ ճշգրիտ բառի գեղեցկությանը, ավելին՝ վրիպած բառի ճշգրտությանը: Հաղթահարելով բուն կյանքին, կարևորին, կենտրոնին, կորիզին կարճ ճանապարհով հասնելու խաղաղականքը, նա վրիպած բառերով պատմեց երկրորդականի, կողմնակիի, քիչ, ոչ էականի, արձագանքի մասին, և այդ պատմությունները այսօր մեզ համար երկու

տասնյակի հասնող գյուղագործներ են, քանի որ անպտուղ չորացած կանայք պատերազմի մասին շատ ավելի են ասում, քան ինքնաթիռ-ռումբ-տոննա-բանակներ համապարփակ նկարագրությունը: Պատաստվակում՝ այլ գալակտիկաներից վերադարձող աստղագետներ մեր վիթխարի հողագնդից հիշում է սամիթի բույրը արևի տակ: Բակունցի գործերում «հիշատակվում է» ահա հենց այդ կարևոր երկրորդականը, հենց այդ երկրորդական մնայունը: Զի այդ շատությունը, անշարժության այդ թափը հիշեցնում է Սանահինի կամրջի բարձրաբանական աշուձները, այդ աշուձները, կամրջի որձաբարձ բազրիքներին, ճապարկված դարան են պահել, նրանք քար են, բայց և ոստյունի պատրաստ աշուձ:

Չարենցի զգայուն աչքը նրա գյուղագրության, գյուղականագրության, ակնարկների, թղթակցությունների, ձախողումների և շուրջ քսան բացարձակ գյուղագործների միջից առանձնացրել է այն մնայունը, ինչի համար որ մենք հիմա նրան մեծ ենք համարում.

... Եվ բառերի համար քո մարմնայն,
Հնամենի, բուրյան, որպես մեր հին
Քարաբանդակ անդուռ մատուռների
Անջնջելի գրերն հնադարյան...

«ՀԱՅԱՅԷ ԺՈՂՈՎՐԻՆ ԵՐԱՅԻՑ»

Անհավատալի է, բայց փաստ, մագորդաց միտքն ու սիրտը եղեռնից հետո կաթվածահար էին լինելու, բայց հառապել եղավ, Բակունցն այսպիսի մի պատկեր ունի - Պետու ընկած տեղը, նրա արյան ու ոսկրածուծի վրա, խոտն ավելի փարթամ է աճել. ահա, երեկվա արյան հովիտը մշակույթ էր ծաղկում՝ ստեղծագործում էին բոլորը՝ նկարիչները, ճարտարապետները, երաժիշտները, գրողները, և բոլորն էլ բանաստեղծ էին, բոլորն էլ լավ էին ստեղծագործում, նույնիսկ նրանք, ովքեր ի ծնե կարծես թե պիտի որ անպտուղ լինեին, դարևոր երազների ու իրական հայրենիքի կրողները փոխատուցվում էր իրենց հայրենիքով: Ահա, քանբարաշատ, գունագեղ, թեթևաշունչ Մահարին վկայում է, որ շատ ավելի Չարենցին ջգրացնելու համար Բակունցը խոստանում էր ապրել հարյուր տարի և վկայաբերում էր իննսուն տարեկան իր պապին, որ ատամով դեռ ընկույզ էր շարդում. չապրեց այդքան, նույնիսկ երկուսով՝ ինքն ու Չարենցը չապրեցին, երեքով՝ Մահարին, Բակունցը, Չարենցը՝ Մահարու հայտնի անհայտ տարիները հանած, ցուցե թե: Նրա ողբերգական բռնամարտը, որ միայն իր մահը չէր, այլև վախճանն էր շատ ու շատ սկիզբների, գերեզման իջեցրեց նաև մեր աստեղային ճամփորդին, և սա սոսկ խոսք է հանուն նրանց հավատարիմ գործընկերության փառաբանումի - սա Էություն է. իր բանասրկված, բանասրկված ընկերոջը, երբ ամեն ոք իր

կաշին փրկելու մասին էր մտածում, դեռևս դրսում գտնվող Չարենցն այսպես է բնութագրել. (Այնուհետև՝ Չարենցի ներքոյի ամբողջական տեքստը - խմբ.)

Բանասրկված Բակունցին հիմա-լիորեն վեհացնող այս հրաշք ներքող Բակունցից ավելի ներքող է առ ինքը՝ ջուտ պղնձակույի Չարենցը, նրա անկուտում առնականությունը, վերահաս օրերի ողբալիության նրա ֆիզիկական շոշափելիությանն առնչվող զգացողությունը, և այդ եղած անցածի, բայց հետևանքներով ամենևին էլ չանցածի, այսօր ամեն պահի իր մեծ բացակայությունն զգացնել տվողի ծանր ողբերգականությունը չեն ցանկանա հասկանալ մշակույթի գիտակից, թրծված թշնամիները, չար մարդիկ, այնպիսի մարդիկ, որ սպանելուց ու հորելուց հետո էլ դեռ երկար ժամանակ չարությամբ են նայում այն տեղին, ուր իրենց զոհն էր կանգնած:

Բակունցի անժամանակ բացակայում իր և իր ժամանակակիցների համար ողբերգություն լինելուց ավելի ողբերգություն էր հայ գրականության նրա հետնորդներին համար, սովետական ամբողջ գրականության համար, աշխարհի գրականության համար, քանի որ նրա բերանով մենք աշխարհին բան էինք ասելու, քանի որ այսօրվա փոխկապված, փոխշոշափված, փոխխնդրված աշխարհում տաղանդը կարող է մի ժողովրդի գավակ լինել, բայց ոչ երբեք միայն մի ժողովրդի սեփականություն, և ինչքան աղքատ կզգայինք հայ ընթերցողներս՝ եթե չլինեին ամերիկացի Ֆոլքները, իսպանախոս Մարկեսը, եթե կայացած չլիներ Տոլստոյի վիթխարի փաստը - երևի նույնքան աղքատ, ինչքան որ բակունցյան քարավանի զարկվելով վերոհիշյալ ժողովուրդներն են հայոց մի գեղեցիկ ու ճշմարիտ բան ունենալուց զրկվել:

Սա ավաղ չէ անժամանակ զոհված ջահիկների վրա առհասարակ և ոչ էլ մշակույթի թշնամիների առաջ տաղանդների վրա ձեռք չբարձրացնելու հայց, - փառք իրենց, ում վրա էլ նրանք ձեռք են բարձրացնում, Իսպանիայում Գարսիա Լորկա կլինի թե Հայաստանում Ակսել Բակունց, ժողովուրդը նրանց շեղումներն անտեսում, բծերը սրբում ու սրբացնում է, - սա նրա շիտակ հասակի հետ մեր կուզը շտկելու ցանկությունն է, սա խոսք է Միրհալի ու Սաբուի, Խոնարի աղջկա ու Տիգրանուհու, Չարքի ու Գյուլբախարի, Ծիրանի փողի ու Կյոթեսի, Պրովինցիայի մայրամուտի ու Աբովյան անավարտ վեպի հեղինակի մասին և խոր գիտակցումն այն բանի, որ այսօրվա աշխարհում պատրաստ կանգնած բանակների, բնական գիտությունների, հետախուզությունների ու տնտեսությունների գոտեմար-

տից ավելի մշակույթների պայքար է, և վայ այն ժողովուրդին, ում մշակույթը պայքարից պարտված կելի - դրանից հետո սպասվում է իրեն բուն ժողովրդի գլխովին ու անվերապահ անձնատրությունը: Այդ այդպես է և միայն այդ ու այդպես է, իսկ մեր մշակույթի գորավարը մշտնդից վերացվել է մարտի հենց սկզբում: Մենք նրան գորավար ենք համարում ոչ թե այն պատճառով, որ տեղներս նեղ է, տեղներս ինքուրեք լայն չէ, այլ որովհետև լեզուն ու ժողովուրդը ժամանակակիցների ու հետնորդների մեջ, Չարենցից բացի, և ոչ մեկին չի օժտել այնքան ու այնպես, ինչպես Բակունցին:

Նա աշխարհայացքային ու գեղագիտական Նոր սկիզբ էր, և հեռանկարային շատ երևույթներ, որոնք հետնորդներին աչքերի առջև անգամ հիսուն տարի հետո դժվար էին պարզվելու, մեզանից հիսուն տարի առաջ նրա գործում արդեն շուկն ու կերպարանք էին առնում. հապա մի հիշենք կավի և մետաղի, քսաներորդ դարի և միջնադարի, ազգային ու անհատական ներփակության և անազգ, անանհատ ամբոխային շքերթի բախումը «Պրովինցիայի մայրամուտում» կամ այսօր փառաբանվող ֆանտաստագորիկ պատկերների շղթայական անվերջությունը «Կյոթեսում» - և պարզ է դառնում, որ նրա համարյա թե յուրաքանչյուր գործը Նոր սկիզբ էր և որպես այդպիսին՝ բոլորին համար պարտադիր:

Ինչ որ ժողովուրդը տվել էր նրան ու նա վերադարձնելու էր և ինչ որ հասցրել է վերադարձնել՝ համեմատելու բաներ չեն, բայց և այդքանը, ինչ փրկվել է գյուղատնտեսի նրա զբաղվածությունից, հապա փակված գործից ու կյանքից, ավիրված արխիվներից, մի խոսքով նրա ոգևորված ժամանակակիցներից ու ժամանակից, որոնց համար կործանելն ու կառուցելը հավասարաչափ հեշտ էին երևում, և մանավանդ այն, ինչ նա հասցրել է մոմիկյան իր մատներով շտկել ու խմբագրել, նրան դասում են արդիական մշակույթի խոշորագույն վարպետների շարքը, քանի որ նրա վաստակի քչությունը լիովին փոխհատուցվում է Էպոխայի և Էպոխայիների պատկերման ճշգրտությամբ: Մի գրողի վերաբերյալ, որ չի գորել վերջացնելու սոցիալական թշնամանքի, համաշխարհային առաջին պատերազմի, ազգամիջյան ջարդերի ու քաղաքացիական կռիվների մասին «Կարմրաբար» Էպոպեան, մի գրողի՝ որ Սմոլնուց ու Դեր-Չորից հազարավոր վերստերով հեռու հայոց լեռներում հավաքում էր հեղափոխության ու եղեռնի ընդամենը հեռավոր, աղավաղված, գեղեցկական արձագանքները, մի գրողի՝ ում ձեռագիրն անընդհատ հիշեցնում է հայ միջնադարյան մանրանկարչություն





ու խաչքարային արվեստ,- Եպոխային ու ճշգրիտ Եպոխային ասելը անհերթելի կինչի նորագույն հետևորդների ականջին այն մարդկանց, ում համար ինտերնացիոնալիզմի հավերժորեն փրկարար դավանանքը բացառում էր ազգային արժանապատվության զգացումն ու դիմադրության ճիգերը և այսինչ կամ այնինչ օգտակար գաղափարի անվրեժ՝ հարյուրոտկոսանոց վիպային իրականացումը կենդանի - մարդկանց դարձնում էր շախմատային ֆիգուրներ, միտումնակիր այդ վեպերը՝ շախմատային խաղատախտակ, և ում համար գյուղի սոցիալիստական վերակառուցման բովանդակությունը անմնացորդ ամփոփվում էր կուսքիջ-գյուղ-խորհուրդ-կոլվարչություն-ժողովուրդ քառանկյունում, նրանք իրենք էին ուզում Եպոխային լինել և իրոք եղան, բայց միայն երկու օրով. հետո կենդանի կյանքը ուռճանալով վերափոխեց այդ իրականությունը, և այդ իրականությունը ճշտորեն վերարտադրող գրականությունը մնաց իր Եպոխայում, չնայած կարող էր պատահել, որ իրականությունը վերանար, իրականության գրականությունը մնար, թեզային՝ մտադրության էին և իրականությունը, և գրականությունը, և երկուսն էլ ետ մնացին, այսինչ Բակունցի սխալ, վրիպած, երկրորդական, կողմնակի կարևորի մասին «Գյուլբահարը» մնաց:

Սկզբունքայնորեն նոր էր Բակունցի հայացքը մարդկանց ու երևույթների, նոր էր այդ աշխարհայացքի բերած ոճը, նոր ու անսխալագույն էր ինքը Բակունց-գրողն ամբողջությամբ և որպես այդպիսին՝ հետևորդներին համար նախանշային է, բոլոր նախորդների մեջ թերևս ամենանախանշանայինը, ինչպես որ իր համար նախորդ բազում մեծերի մեջ նախանշանային էր Տերյանի «Երկիր Լաիրի» շարքը: Բակունցը նոր էր ոչ թե այնպես, ինչպես յուրաքանչյուր շատ թե քիչ օժտված ստեղծագործող է աշխարհին նայում, հիանում ու հիասթափվում, զարմանում ու զայրանում նորովի, այլ նոր էր Եպոխայնորեն, այսինքն թե իրենից առաջ, ինչքան էլ խոշոր անհատականություններ լինեին, չէին կարող ու չէին էլ տեսնում աշխարհն ու երևույթներն այնպես, ինչպես Բակունցը:

Դա՛ նրա այդ հայացքը, ազգերի զարթոնքների շրջանում իրենց խեղճ, կրոնական-սոցիալական-ազգային եռաշերտ դամբարանում թաղված ժամանակակիցների մեջ հին-հին դարերի հերոսականությունը ոգեկոչելու նախորդների հույսերից, որոնց վերքը դառն հիասթափությունն էր, հիշողություն անգամ չունեն և ոչ էլ սեր սիրուց այդ «խենթ-խեղճների», ովքեր ժողովրդի ուժին չէին հավատում, ժողովրդի փրկության գոր-

ծում նրա դերը հավասարեցնում էին գրողի, ժողովրդին դիմագրկում ու նրա ազատության գործը իրենց կյանքի-մահվան գործն էին համարում, ինչի վերջը դարձյալ խոր հիասթափությունն էր: Բակունցի այդ հայացքը ըստ էության հայացք էր դեպի ժողովուրդը կամ ժողովրդի վրա - դա հայացք է ժողովրդի ներսից, ասել է թե՛ նա ժողովրդին որպես մարտակույթի կամ փրկանյութի չի նայում, ժողովրդին պատրաստի ծրագրով չի մոտենում, այլ մեզ համար բացահայտում է կեցության խորհուրդը ժողովրդի մեջ, և այդ խորհուրդը բարի է, դարձյալ ասել է թե՛ ոչ թե նա է ժողովրդայնորեն տարազավորված խոսում ժողովրդի անունից, այլ շրջադարձորեն հակառակը՝ ժողովուրդը խոսում է նրա բերանով: Նրա կենդանի գեղարվեստը ելնում է նրա ռեպրտաժներից ու ակնարկներից և չէր կարող այլ լինել, քան է - բնորոշների բազմությունը նրան թույլ չի տալիս հեղինակային բռնությամբ արվող արվեստ ստեղծել, դա լինող արվեստ է, ինչը որ մեր դարի գրականության էությունն է:

Մենք երախտապարտ ենք նրան ծնող ժողովրդին, նրա ժամանակին ու նրա ժողովրդի լեզվին՝ դարի ամենախոշոր արվեստագետների կողքին հանձին նրա մեր առաքյալն ունենալու համար:

«ՆՐԱ ԺԻՏՈՒՄԸ ՎԵՐԱՃՈՒՄ ԵՐ ՀԱՍՏԱՏՈՒՄԻ»

Վաղուց անտի սկիզբ առած Արևմուտք-Ռուսաստան գոտեմարտի, եսի և մենքի հավիտենական գոտեմարտի՝ ուր եսը որդեգրվեց Արևմուտքից, իսկ մենքը ի սկզբանե ճակատագիրն էր յուրաքանչյուր արևելցու, համայնավարության և անհատապաշտության իմպերիալ գաղափարախոսությունների, ազգայնականության և միջազգայնականության գոտեմարտի մեջ՝ ուր երկուսն էլ իրենց ուրացումներով միտում էին բռնության ու բռնակալության,- իրենց Հայաստան հայրենիքի հետ՝ նրանք ստիպված էին, իր Հայաստան հայրենիքի հետ Ակսել Բակունցն ստիպված էր մնալ մենքի, Ռուսաստանի, համայնավարության, Արևելքի, միջազգայնականության ճամբարում, իրեն ստիպված էր ենթարկել հայրենիքի, հայրենաստեղծության այդ պարտադրանքին, որ պակաս բռնություն չէ որևէ այլ բռնությունից, և եթե այդ ճամբարին վիճակված էր անգամ ծանր ջախջախում, մղձավանջ ու խավար, Հարենցի խոսքերով՝ ասեղնագործել հայրենի գիշերվա խավարը:

Իր հայրենիքի հետ նա իրենով իր մեջ պետք է փորձության դներ իր ժամանակի ուղղափառ ամբողջ այդ առաքելականությունը. պետք է ուրանար ինքնին, ինքնաբավ, ինքնակա կյանքը և տրվեր գաղափարի վերին իմպերատիվին, պետք է մերժեր եսն ու եսի երեկվա ողջ

աշխարհը, եսը հանձներ հանրության զանգվածին և նոր աշխարհում գրողի իր աշխարհը հիմներ այդ զանգվածից ու այդ զանգվածով. իր, իր հայրենիքի և աշխարհի ողջ անցյալից նա պետք է հիշեր բաբելոնյան աշտարակաշինության առասպելը միայն՝ շրջանցելու համար անշրջանցելի՝ նոր աշտարակաշինության ձախողումը:

Այդ ամենը նրանք արեցին - ես և մենք, մարդ և համայնք, գաղափար և իրականություն, ազգայնականություն և միջազգայնականություն, ճշնում և պոռթկում, - այդ ամբողջը, իր իսկությունը փորձեց և ստուգեց Բակունցի գրականությամբ, փաստվեց ու հաստատվեց նրա դրոշմով, հաճախ էլ, եթե անգամ ներկայանում էր իրականության պատկերով, պատժվեց ու վտարվեց նրա գրքի սահմաններից, որովհետև հաճախ կեղծ է լինում հենց իրականությունը:

Ալեքսանդր Բակունցի գործով՝ մարտիկի և գյուղատնտեսի, նորոյա լուսավորչի և գիտնականի, ազգայնականի և միջազգայնականի, նորոյա աշտարակաշինության հավատավոր հիմնարկողի և գրողի իր կոչումով, իր իսկ հիմնարկածը տապալող գրական վաստակով ստույգ համապատկերի է գալիս առաջին համաշխարհայինի, եղեռնի, հեղափոխության, քաղաքացիական կռիվների, ամոքման ու վերածննդի ողբերգորեն հերոսական ջոկատ Եպոխան, որի յուրաքանչյուր դրվագը ճկվում ու տեսք էր առնում իր բոլոր որդիների ջանքով ու տանջանքով. այդտեղ և՛ անեղծ ավաղն է հին աշխարհի կործանման վրա, և՛ մաքուր ու միամիտ հույսը՝ թե հառնող ու շտկվող նորը ավելի լավն է լինելու, և՛ չար ծիծաղը այն արատի վրա, որ կործանվողին կործանումի տարավ, ե՛լ ժպիտով ու գորովով լեցուն սերը այն ամենի ու ամենքի վրա, ովքեր կրավորական, մի տեսակ բուսական, մի տեսակ անմասնակից մասնակիցներն են այս կյանքի, ասես ինքը երկիրը, ինքը հողն ու հերկն են և ոչ անգամ հերկողը:

Հավատավոր որպես առաջին քրիստոնյաները՝ մաքրակրոնի հավատավոր շիտակությամբ նա պետք է իր և իր հայրենիքի անցյալը զատեր, անցյալը վտարեր ներկայից: Բայց նրա ժխտումը վերաճում էր հաստատումի, նրա նորացումը երդում էր դառնում, նրա վանումը դառնում էր մերձեցումի հրավեր, իր երկրի ներկան նա լցնում էր անցյալով,- հենց ժխտումով, հենց մերժումով, հենց թեկուզ սուկ հիշատակությամբ նա լիիրավ, նրանք լիիրավ քաղաքացիություն էին շնորհում իրենց ու իրենց հայրենիքի երեկվա օրվան: Հար և նման մի բան իրենից ու իրենցից երկու հազարամյակ առաջ էր եղել՝ աստծուն հարություն ու հավիտենություն էին տվել սպանելով:

ԽՈՍՔ ԲԱԿՈՒՆՑԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բնաշխարհի հազարամյա գիրքը

Չեկուցում Ակսել Բակունցի ծննդյան 100-ամյակի հոբելյանական հանդիսավոր նիստում, Երևան, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոն, 12 հոկտեմբեր, 1999:



ՂԱԿԻՔ ԳԱՍՏՂԱՐՅԱԼ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ

Կան գրողներ, որոնց անունը տալիս անմիջապես պատկերացնում են ուրույն ու անկրկնելի մի աշխարհ, որը թեև հավերժորեն եղել է նրանցից առաջ ու հավերժորեն գոյություն կունենա նրանցից հետո, բայց որն իր առանձնահատուկ գեղեցկություններով բոլորին հայտնի է նրանց անունով և նրանց շնորհիվ: Այդպիսի գրող է Ակսել Բակունցը: Ինչպես Լոռին՝ Թումանյանի, Կարսը՝ Չարենցի, Վանը՝ Մահարու, Խարբերդը՝ Թոթովենցի, Երզնկան՝ Մնձուրու, այդպես էլ Բակունցի շնորհիվ հայ գրականության մեջ հավերժական գրանցում ստացավ Գորիսը, հինավուրց Սյունիքը՝ իր Մթնածորով, Կաթավաբերդով, Բասուտա գետով, իր բնաշխարհիկ մարդկանցով:

Լշում ենք մեծ գրողի, իր երկրի անմնացորդ նվիրյալի ու անմեղ նահատակի արժանավոր հոբելյանը:

Ակսել Բակունցը... Ամենալուսավոր, ամենապայծառ, «արցունքի պես ջինջ» գրողը, արձակի և ուրբեք բնաբերդուն, ամենադրամատիկ կերպարը ամբողջ 1930-ական թթ. գրական-հանրային անցում-դարձի մեջ:

Ակսել Բակունցը... Հայ գյուղերի վիշտն ու թախիծը, հայ մարդու խոնարհ ու տխուր կյանքի գեղագիրն ու օրհներ-

գուն, մեծ կարոտների ու անդառնալի կորուստների խնկարկուն, հավիտենական մոռացության մեջ թաղված մարդկանց հոգիների լուռության ունկնդիրն ու գաղտնիքների բանաստեղծը:

Նա, ով պիտի գար և հայ գրականության հնամյա գրքում գրանցեր Մթնածորն ու Կյորեսը՝ որպես գեղարվեստորեն նվաճված հայրենիքի մի եզերք:

Նա, ով պիտի գար ու խոսեր սարին ու քարին խառնված մարդկանց սիրուց ու կարոտից, ցավից ու տառապանքից, այդ սարին ու քարին ծովված հարազատ բարբառի զրնգուն մաքրությունից ու պարզ կա գեղեցկությունից:

Ակսել Բակունցը գրականություն մտավ իր երկրի ու իր բնաշխարհի ընդերքից՝ բերելով բարանձավների նախաստեղծ շունչն ու անցնող ժամանակների, անցնող սերունդների հոգու պատմության քարե մատյանը, որի մեջ արձանագրված է դարավոր ավանդույթի վերածված ժողովրդի կեցության իմաստությունը:

Ակսել Բակունցը գրականություն մտավ նաև հայ գեղարվեստի հարազատ գրկից, որի ճանապարհն ուղենշել էին Թումանյանն ու Տերյանը, նաև՝ Համաստեղն ու իր ժամանակի մյուս գրողները:

Բակունցին գրականության մեջ սպասում էին: Նա պիտի գար: Սպասողը ժամանակի գրական օրենսդիրն էր՝ Եղիշե Չարենցը: Բակունցը պիտի գար, պիտի ստեղծվեր նրանց գրական եղբայրությունը, և նրանք դժվարին ժամանակներում «մայրագյուղ» Երևանը տիրոջ պես պետք է դարձնեին մայրաքաղաք Երևան, իրենց կյանքի գնով իսկ պայքարելիս հայ գրականության արժանապատվության համար, ժամանակի պաշտոնական գաղափարախոսության ապագայի բարոգության դեմ կանգնեին որպես ընդդիմադիր ուժ, իրենց շուրջ համախմբելիս իրենց հոգին սին գաղափարների չծախած մի քանի այլ գրողների ու գրականագետների՝ Մահարի, Արմեն, Դաշտենց, Սուրխաթյան, և միասին կրեին հայ գրականության ծանր լուծը, որը թե՛ օրհնանք էր, թե՛ անեծք:

Ակսել Բակունցն ապրեց շուրջ քառորդ դար տևած ստեղծագործական մի կյանք. գրիչը ձեռքն առավ 1913-ին և վայր դրեց գեղակահարությունից հինգ օր առաջ՝ 1937 թ. հոկտիսի 3-ին, երբ փրկության հույսով շարադրում էր իր վերջին դիմումի՝ արյունով գրված տողերը: Կյանքի այդ կարճատև ակնթարթի մեջ նա ձևավորվեց որպես գրող ու քաղաքացի, որպես հայ մարդ ու հայ մտավորական և ստեղծեց ու ժողովուրդի հոգևոր պատմության մեջ ընթերցելի տառերով դաշեց իր կնիքը՝ Ակսել Բակունց՝ գրիչ և ծաղկող, ծնված Գորիս քաղաքում:

Ո՞վ էր նա, որստեղծեց եկավ և ի՞նչ արեց:

Բազմաճյուղ և աղբատ ընտանիքի զավակ էր: Կրթությունը ստացավ Գորիսի ծխական դպրոցում և Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1915-ի օգոստոսին՝ հայրենիքի համար օրհասական մի պահի, դիմեց Հայկական կենտրոնական կոմիտե՝ հայ գաղթականների օգնելու և հայրենիքին ինչով հնարավոր է ծառայելու պատրաստակամությամբ: «Պատրաստ եմ գործելու ուր որ կամենաք... Համաձայն եմ ամենածանր ու դժվարին աշխատանքը կատարելու», – գրում 16-ամյա պատանին:

Եվ եկավ այդ պահը: 1917-ին հրաժարվեց Գևորգյան ճեմարանում ուսումը շարունակելու հնարավորությունից և մեկնեց գործող բանակ: Երգումի գնդում եղել է շարքային զինվոր: Մասնակցել է Աշկառայի, Իլիջայի, Մամախաթունի, Արդահանի, Կարսի կռիվներին և Սարդարապատի հերոսամարտին: Չորացրվելուց հետո թղթակցել է լրագրերին: 1920-1923 թթ. ուսանել է Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտում: Վերադարձել է Գորիս և 1924-1926 թթ. աշխատել Զանգեզուրի գավառի գյուղատնտես, հողբաժնի վարիչ:

Այս տարիներին էլ եռանդով թղթակցում է մամուլին: «Խորհրդային Հայաստան» և «Մարտակոչ» լրագրերում տպագրվում են նրա «Գավառական նամակակի» և «Մեր գյուղերում» ակնարկաշարերը: Դրան հաջորդում են մեկը մյուսից չքննադատվածները՝ «Միրհավ»-ը, «Ալպիական մանուշակ»-ը, «Խոնարհ աղջիկ»-ը, «Մթնածորնի «չարք»-ը, «Սաբու», «Աբարու»...

1926 թ. մարտից Բակունցը վերջնականապես հաստատվում է Երևանում և աշխատում հողօգտակման: Բայց նա մայրաքաղաք էր եկել վերջնականապես գրականությանը նվիրվելու համար: 1927-ին լույս տեսան «Մթնածորն» ժողովածուն և «Հովնաթան Մարչ» վիպակը: 1928-ին ստիպված դիմեց հանրապետության ղեկավարությանը՝ ազատվելու զբաղեցրած պաշտոնից. «Թեկուզ կյուրական գրկանքի գնով՝ ես իմ պատրաստակամությունն եմ հայտնում բացառա-

← պես գրական ասպարեզում աշխատելու»:

Չբաղվեց և մեկը մյուսի ետևից լույս ընծայեց նորանոր երկեր: Մամուլում հրապարակվեցին հատվածներ «Կարմրաբար», «Որդի որոտման», «Խաչատուր Աբովյան» վեպերից: Լույս տեսան «Սպիտակ ձի», «Սև ցեղերի սերմացանը», «Անձրևը», «Եղբայրության ընկուզենիներ» ժողովածուները: Նրա գրքերն ու առանձին պատմվածքներ Լենինգրադում, Մոսկվայում, Թիֆլիսում լույս են տեսնում նաև ռուսերեն: Գրեց մի քանի շարժանկարների գրական բեմադրվածքներ, որոնք նկարահանվեցին: Ուսումնասիրություն հրատարակեց Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայության մասին: Թարգմանեց Գոգոլի «Տարաս Բուլբա»-ն, գրաբարից աշխարհաբարի փոխադրեց Ալեկսև Գրիգորի «Աղվեսագիրք» ժողովածուն: Ինչպես այս գրքերի, այնպես էլ Ջոնաթան Սվիֆթի «Գոլիվերի ճանապարհորդությունները» (թարգմանիչ՝ Կարեն Միքայելյան) վեպի համար գրեց առաջաբաններ: Խմբագրեց գրքեր, այդ թվում՝ Պուշկինի «Կապիտանի աղջիկը» և Ջավախիշվիլու «Արսեն Մարաբրեշի»-ն:

Ժամանակը գրական թռիչքի մեջ էր, թռիչքի մեջ էր նաև Ակսել Բակունցը: Ժամանակը եռում էր նաև գրական կյանքով ու գրական պայքարով: Բակունցն այդ կյանքի ու պայքարի կենտրոնական դեմքերից էր: 1933-ին լույս տեսավ Զարենցի, Բակունցի և Նրանց համախոհների ուղենշային ելույթը՝ Սկրուի Արմենի «Զարենցի և հարակից հարցերի մասին» հոդվածը, որը սոցիալիստական ռեալիզմի գաղափարական բռնատեսությանը հակադրում էր ազգային արժեքներին ու ավանդույթներին հավատարիմ մնալու դրույթը: Այդ ոգու բարձրագույն ծնունդն էին Բակունցի «Ծիրանի փողը» պատմվածքը, «Կյուրես» վիպակը, Զարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուն, Մահարու «Մանկություն և պատանեկություն», Թորոլենցի «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա», Արմենի «Յեղևար աղբյուր» վիպակները: Նույն այդ ոգով Բակունցը 1934-ին ելույթներ ունեցավ Հայաստանի և խորհրդային գրողների առաջին հիմնադիր համագումարներում:

Ազգային ոգու և բնաշխարհիկ արմատների համար 1930-ական թթ. սկզբից Բակունցն անընդհատ գտնվում էր պրոլետարական գրողների հարվածների տակ: Գրողը մի ձեռքով իր գործերն էր երկնում, մյուսով՝ պաշտպանվում հարձակումներից: Նրա դեմ ուղղված ՀԿ(Բ)Կ Կենտկոմի որոշումներն ու չարությունից կուրացած գրչակիցների արդեն բաղաբական բնույթ ստացած հոդվածները հաջորդում էին մեկը մյուսին: 1933 թ. ՀԿ(Բ)Կ Կենտկոմի մի որոշմամբ գաղափարական նկատառումներով Զարենցի «Գիրք ճանապարհի»-ի հետ մեկտեղ արգելվում է նաև Զարենցի ու Բակունցի կազմած «Հայ գրականության քրեստոմատի»-ն: Օրըստօրե նրա գրական, մարդկային ու քաղաքացիական վիճակն սկսում է ավելի ու ավելի ծանրանալ:

Կրա է հասնում 1936 թ. օգոստոսի 9-ի Բարդուղիմեոսյան գիշերը՝ անմեղ մարդկանց սպանողի օրը: Իր շատ ու շատ գրչակիցների հետ մեկտեղ նույն օրը ձերբակալվեց նաև Բակունցը: 11 ամիս շարունակ նա սոսկալի կտտանքների ենթարկվեց ՆԳԺԿ ՆԿԿ նկուղներում. անընդմեջ՝ հարցաքննություններ, մարմնական ու հոգեկան տանջանքներ, առերեսումներ: Բանտից չորս դիմում է հասցեագրել հանրապետության ղեկավարությանը, բայց՝ ապարդյուն:

Դրանցից մեկում գրում էր. «Ընկերներ, ծանր է,



Բակունցին գրականության մեջ սպասում էին: Նա պիտի գար: Սպասողը ժամանակի գրական օրենսդիրն էր՝ Եղիշե Չարենցը: Բակունցը պիտի գար, պիտի ստեղծվեր նրանց գրական եղբայրությունը, և նրանք դժվարին ժամանակներում «մայրագյուղ» Երևանը տիրոջ պես պետք է դարձնեին մայրաքաղաք Երևան, իրենց կյանքի գնով իսկ պայքարեին հայ գրականության արժանապատվության համար

”

շանո ծանր: <...>: Փաստը մնում է անշրջանցելի. ես մեկուսացված եմ <...> երկրի վրա աղմկում է ուրախությունը և, ինչպես կոճոններ ճոխ սեղանից, բեզ են հասնում առանձին անհատական պատառիկներ: Մտածում ես մեկ ժամ, երկու, երեք, մեկ օր, երկու օր, մտածում ես հիմարանալու աստճանի, միևնույն հիշողությունդ փող է գալիս և չգիտես՝ գիշեր է, թե՛ ցերեկ, միայն պարզ գիտակցում ես, որ կյանքը մնաց փակ դռան ետևում: <...>: Երբ ես հարցնում եմ, թե ի՞նչ է լինելու հետո, հուսահատվում եմ, գիտակցությունս մթազնում է, ջղածությունները խեղդում են կոկորդոս, դե, ինչպե՞ս դա ձեզ բացատրեմ: Ա՛յ, երբ մարդ խեղդվում է՝ նաև շնչահեղձ է լինում, և թայրտում, հույսի հետ մեկտեղ նա նաև մահվան հոտ է առնում:Նա-մակը նա վերջացնում է այս տողերով. «Ինձ գրելու և կարողալու հնարավորությունն տվեք, ինձ գիրք ու մատիտ տվեք: Որքան ժամանակով որ անհրաժեշտ կհամարեք, ինձ ուղարկեք Հայաստանի որևէ հեռավոր շրջանը <...>, միայն ես լսեմ կենդանի խոսքը, միայն ես կարողանամ աշխատել <...>, թողեք որ ես մնամ խորհրդային Հայաստանի դռան հավատարիմ շուկը»:

Զթողեցին: Բակունցը հույս ուներ, թե իրեն պիտի աքսորեն: Զաքսորեցին: Պնդակահարեցին 1937 թ. հուլիսի 8-ին: 25 օր առաջ լրացել էր կյանքի 38-րդ տարեդարձը: Եվ էլի մեջ էին նրան մեղադրում: Ահա տողեր նրա դատավճիռից. «Ամբաստանյալ Բակունցը գործուն մասնակից է հակահեղափոխական տրոցկիստական-գիտակցական ահաբեկչական կազմակերպության, որը 1934 թ. դեկտեմբերի 1-ին չարամտորեն սպանել է ընկ. Ս. Մ. Կիրովին և հետագա տարիներին նախատեսում էր ահաբեկչական գործողություններ՝ ընդդեմ ՀամԿ(Բ)Կ և խորհրդային կառավարության...»: Ահա այսպիսի անհեթեթությունները Բակունցի և նրա նման միլիոնավոր անմեղ մարդկանց ճակատագրեր որոշեցին:

Բակունցը մահվան դատապարտվեց 1937 թ. հուլիսի 7-ի առավոտյան ժամը 11:20-11:55-ը տևած դատական նիստի դատավճռով: Պնդակահարվեց հաջորդ օրը: Ըստ սահմանված կարգի՝ գնդակահարությունը պիտի իրականացվեր անմիջապես: Բայց Բակունցը մեկ ամբողջ ցերեկ և մեկ ամբողջ գիշեր սպասեց մահվան ու վերապրեց իր կյանքը: Այդ ցերեկն ու գիշերը նրա կյանքի վեպն են, նրա դառնալի

ողբերգությունը:

Այդ կյանքի վեպը հյուսվեց նրա բարձր ու առաքինի մարդկային կերպարի շուրջ: Այդ կյանքի վեպը հյուսվեց նրա խորունկ պատմվածքներով և գրվեց, իր իսկ խոսքերով ասած, բառերի այն ժառանգությունով, ինչ խստությամբ ու պարզությամբ կառուցվում էին եկեղեցիները, ինչ անխոս լռությամբ իրար հետ հաղորդակցվում էին բնաշխարհի մարդիկ: XX դարի հայ գրականությունն ի սկզբանե զարգացավ երկու ուղղությամբ. մեկը՝ դեպի բնաշխարհ, դեպի երկրի խորքը, մյուսը՝ դեպի մեծ աշխարհ, դեպի կյանքի նորագույն տեղաշարժերը: Դեմ դիմաց դրվեցին երկու քաղաքակրթություն, իրար շարունակող, բայցև տարբեր երկու աշխարհ, երկու ժամանակ: Մի կողմից՝ Թումանյան, մյուս կողմից՝ Տերյան, մի կողմից՝ Հակոբ Օջական, մյուս կողմից՝ Կոստան Չարյան, մի կողմից՝ Համաստեղ ու Մեծուրի, մյուս կողմից՝ Շահնուր, մի կողմից՝ Բակունց, մյուս կողմից՝ Զարենց: Մեր օրերում մի կողմից՝ Սահյան, մյուս կողմից՝ Սևակ, մի կողմից Հրանտ Մաթևոսյան, մյուս կողմից՝ Հակոբ Կարապետ: Սրանք հայ գրականության երկու թևերն են, որ միասնական թռիչքի մեջ կոչված էին տեսնելու և հայտնաբերելու ժամանակի մարդուն: Այս երկու թևերի միասնությունն առկա է աշխարհն ու բնաշխարհը ի մի բերող նրանց ներաշխարհի մեջ:

Բակունցն, ահա, գնաց դեպի բնաշխարհ, այդ աշխարհը պայմանականորեն կոչեց Մթնածոր և հայտնաբերեց այդ աշխարհի մարդկանց, նրանց կեցության կերպը, ամենակարևորը՝ այդ աշխարհի բարձրագույն գեղագիտությունը, որը մարդու հոգու մեջ ննջող և արտաքին աչքի համար գրեթե աննկատ գեղեցկությունն է: Կյանքի վերացական կամ տեսական պատկերացմանը նա հակադրեց կյանքի բնօրինակը, իրականությունից հեռացած ստեղծագործական հայացքը վերադարձրեց դեպի որոշակի մարդն ու որոշակի միջավայրը:

Բարձրակարգ արվեստագետ էր, բառերը ոչ թե շարադրում էր, այլ պատկեր առ պատկեր դրվագում, և դա թե՛ վիպական պատումի ժամանակ, թե՛ քնարական: Դրա շնորհիվ նա անսահման նրբություն ու անվերելի ճշգրտություն հաղորդեց հայ արձակին:

Լեռնային աղբյուրների պես մաքուր ու թափանցիկ են նրա պատմվածքները, լեռնային մարդկանց բնավորությունների պես պարզ ու անխառն, դրանով իսկ՝ հոգեբանորեն խոր ու դրամատիկ: Բակունցը կերպավորեց բնության և այդ բնությանը ծովված մարդկանց կյանքի «հազարամյա գիրքը», որի մեջ իրենց տեղն ունեն և՛ մթնածորյան «չարքերը», և՛ քրմուհու նմանվող խոնարհ գեղեցկուհիները, և՛ դեռևս նավասարդյան տոներ նշող արևորդիները, և՛ սերմնացաններն ու հնձվորները, և՛ Մինա բիբին ու Իվան բեյը...

Այդ աշխարհում նա հայտնաբերեց նաև Հագրոյին, այն անպարտ հային, որը պատմական ծննդավայրի կարոտով լեռների վրա հնչեցնում է իր ծիրանի փողը: Դա Պատմահոր ավանդած նույն եղեգան փողն է, որից ծնվեց Վահագն աստվածը: Հագրոյի՝ ծիրանի փողից էլ էր ծուխ ու բոց ելանում, ինչն ասես կրողալայ երկրի մրմունջն էր, և որից պիտի ծնվեին Նորոյա վահագնակերպ հերոսները:

Սա տեսակի հայտնաբերում է, որն ավելին է, քան սոսկ բարձրարժեք արձակը: Սա այն է, ինչ կոչվում է բնաշխարհի պատմություն, մարդկային ճակատագրերի և այդ ամենի հոգեբանական ու լեզվական արտահայտման հարազատություն: Սա ժողովրդի ինք-

Բակունցը կերպավորեց բնության և այդ բնությանը ծովված մարդկանց կյանքի «հազարամյա գիրքը», որի մեջ իրենց տեղն ունեն և՛ մթնածորյան «չարքերը», և՛ քրմուհու նմանվող խոնարհ գեղեցկուհիները, և՛ դեռևս նավասարդյան տոներ նշող արևորդիները, և՛ սերմնացաններն ու հնձվորները, և՛ Մինա բիբին ու Իվան բեյը...



նությունն է՝ սերված անցյալից ու պարզված գալիքին:

Ինչքան որ Բակունցը նրբագեղ ու խորունկ է պատմվածքներում, այնքան ընդգրկուն ու ծավալվող է վեպերում ու վիպակներում: Արձակի մեծ ձևերի մեջ նա նույնքան վարպետ է, որքան՝ մանրաբանական դրվագումներին:

Կարոտի կանչ է «Կյորես»-ը՝ համատարած սեր հեռացող ու անցյալ դարձող մարդկանց և օրերի հանդեպ: Եվ պատահական չէ, որ վիպակն ավարտվում է մայրենի լեզվի ու հարազատ բարբառի երկրպագությամբ՝ դառնալով մի տեսակ՝ վեհապանծ հիմներգություն. «Ինչ չենալ լեզու էր կյորեսերենը... Այդ լեզուն չէր, այլ կարոտ, տխրություն, զայրույթ. այդպես Ղաթրիկի ծորում երգում էր կաթավը, և մթնում կարկաչում էր Ցուրտ աղբյուրը...»: Սա Զարենցի «արևահամ բառի» այն ոգեղեն տարբերակ է, ինչն ամեն տեսակի կրոնատների դիմաց դնում է Տերյանի բանաձևած «Հոգևոր Հայաստանի» անկորնչելի իսկությունը:

Բակունցի բացվող-ծավալվող տաղանդը նրան հասցրեց «Կարմրաբար» և «Խաչատուր Աբովյան» վեպերին: Աբովյանի կերպարը ժամանակի առջև հառնեց՝ պատասխան տալու հիմնական հարցին՝ ո՞րն է ժողովուրդի պատմական ուղին, քանի որ նրա սերունդի ողջունած «ընծալ այգաբացը» նույն սերունդի աչքի առջև փոխվեց «արյունալի լեռնօրի»: Քանի որ այդ սերունդից յուրաքանչյուրը իր կյանքի օրինակով պիտի ասեր Զարենցի այս տողերը.

Եվ նոր հասկացար, որ երգելով քեզ

Գցելու են մի ամենի կրկես,


Ուր արյամբ են լոկ հռչակ նվաճում...

Եվ պատահական չէ, որ Աբովյանին հայացք ուղղելով՝ նույն հարցի պատասխանն էին որոնում ժամանակի հիմնական դեմքերը. Զարենցը՝ Բակունցին նվիրված «Դեպի լյառը Մասիս» պոեմում, Վաղարշակ Տեր-Վահանյանը՝ Աբովյանին նվիրված ուսումնասիրություններում, Մարիետա Շահինյանը, որ նույն այդ ժառանգության մտադիր էր գրել Աբովյանի մասին և Բակունցը՝ իր այս վեպում: Վեպից, դժբախտաբար, մեզ են հասել սոսկ առանձին հատվածներ: Նորահայտ փաստերը գալիս են վերջնականապես հաստատելու, որ Բակունցի այդ վեպն ավարտվել է, անգամ թարգմանվել ռուսերեն, բայց որի հետքերը տրորվել-կորել են 1937-ի հավատաբնական կրոնիկների տակ: Առայժմ գտնված չէ նաև Բակունցի հիշատակած մեկ այլ վիպակ՝ «Էրիմեյան մանրե» կամ «Հայկական մանրե» վերնագրով: Սա նշանակում է, որ մեր բանասիրությունը, ներդրում ունենալով հանդերձ Բակունցի ժառանգության գիտական ուսումնասիրության գործում, դեռևս անելիքներ ունի:

Ահա այսպես, մանրամասների ամբողջությամբ մեր առջև է կանգնում Ակսել Բակունցը՝ արդար ու անբասիր իր նկարագրով, անզուգական իր արվեստով և իր արվեստավոր երկերով, որոնք արժանի հուշարձան են նրա պայծառ անվանն ու մնայուն վաստակին:

ԽՈՍՔ ԲԱԿՈՒՆՅԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բյուրեղ Բակունց



ՀԱՎՈՐԵ ԿԱՐԱՊԵՆՏ

Սփյուռքահայ գրող, հրապարակախոս

Սենավոր գագաթ է Բակունցը: Նրանից առաջ և նրանից հետո արևելահայ արձակը երբեք չհասավ այն բարձունքին, որ Բակունցն էր՝ ինքնատիպ, բյուրեղ, գրեթե անառիկ: Այն օրերին, երբ սովետահայ գրականությունը նոր ու երբեմն էլ շինծու որոնումների մեջ էր, և երբ արևմտյան աշխարհը տակավին դեգերում էր ձևի ու բովանդակության միջև, Չանգեզուրի միջին կիրճերից բարձրացավ գրանիտե հասակը Բակունցի... Նա ցատկել էր դասականի այլևս ավացած ակոսների վրա և բացել միանգամայն մի նոր հորիզոն, ուր ձև ու նյութ, ոճ ու ապրում նոր տարածք էին ստացել՝ կերտելով նոր իրականություններ, որոնք որևէ առնչություն

Հայրենի աշխարհը ոչ ոք այնպես հարազատորեն չի պատկերել, ինչպես Մարտիրոս Սարյանն ու Ակսել Բակունցը: Երկուսի մոտ էլ անկախ է գույների շառաչը, ձևերի բրտությունն ու բնության վայրենի երգը:



չունեին միևնույն աղբյուրով ծնված իրականությունների հետ: Հանդես էր ելել մաքուր արվեստագետը, որը ոչ տալիք և ոչ էլ ստանալիք ուներ: Ինքն էր ու իր ներքին տիեզերքը, ներհայեցողության կիզակետը՝ զերծ գաղափարախոսական այն մարզանքներից, որոնց պատգամաբերը եղան այն օրերի սովետահայ գրողներից շատերը:

Բակունցի դեպքում գունատվում են բնորոշումները: Գյուղագիր, իրապա՞շտ, բնարակա՞ն, արդիակա՞ն, թե՞ ապագայապաշտ: Նա այս բոլորի համադրումն էր և դեռ ավելին: Ուլիլեմ Ֆոբսըրից գրեթե հիսուն տարի առաջ Սկսել Բակունցը գիտեր հողի մարդկանց մութ կրթերի կրակը: Հեմինգուեյը դեռ գրել չէր սկսել, երբ Բակունցը յուրացրել էր սիմվոլների խորհուրդը, իսկ Ալբեր Զամյուն դեռ սիգիֆյան մոծակները չէր ընկել, երբ Բակունցը գրել էր «Սպիտակ ձի»-ն: Նույնիսկ Տեյնս Տոյսը չէր միտքով ենթացիտակցականի հոսանքներում, երբ Բակունցը իր «Սև հաց» գործում արդեն դրսևորել էր իրերի ու երևույթների հարակցությունը անհատի ներաշխարհի հետ: Անակնկալ եղավ Բակունցը, մի բացարձակ ֆենոմեն, որը մեծ գաղտնիքի պես կախվել է հայ գրականության ճակատին: Ո՞ր և ինչպես ամփոփել նրան: Գրականագետների մի ամբողջ սերունդ կարող է զբաղվել Բակունցով և դեռ ծայրը չգտնել, որովհետև, իր սիրած բառով, «անկրկնելի» է նա: Եթե ստեղծագործությունը ոչնչից մի բան ստեղծել է և հանճարը՝ նոր ստեղծագործման ռաիվիրա, ապա Բակունցը հանդիսանում է արևելյան արձակի Պանը, հավերժական սրնգահարը, հանճարեղ պատանին: Եվ այս բոլորը 38 փոթորկահույզ տարիների ընթացքում, երբ դեռ մատաղ էր արվեստագետը, հեքավազ ու հալածական: Դեռ չէր հասունացել պտուղը, դեռ լիովին չէր մտել փորձառության դաշտը և որոշ էջերում նկատելի էր գրական կազմավորման պակասը, էլ չխոսեք հարկադրական տուրքի և միտումնավոր հանգույցների մասին: Եթե դաժանորեն չկտրվեր Բակունցի կյանքի թելը, հայ արդի գրականությունը շատ հավանաբար այսօր նոր մակարդակի հասած լիներ:

Հայրենի աշխարհը ոչ ոք այնպես հարազատորեն չի պատկերել, ինչպես Մարտիրոս Սարյանն ու Ակսել Բակունցը: Երկուսի մոտ էլ անկախ է գույների շառաչը,

ձևերի բրտությունն ու բնության վայրենի երգը: Երկու անգամ ես հպանցիկ կերպով եմ տեսել Հայաստանը, սակայն առավելաբար Բակունցի միջոցով է, որ զգացել եմ հայրենի երկրի կանչը, հողի լուռ խլրտումն ու լեռների քարացած աղաղակը: Բակունցի էջերում կյանքը ավելի իրական է, քան իրականությունը: Նյութական աշխարհի հետ զուգընթաց՝ նա բացում է մարդկանց հոգիների աշխարհը, ուր առօրյա հոգսերի հետ հարատևորեն միում են թե՛ կրթերը, լինելության ցավը, սիրո տագնապը, և դեռ վարք ու բարք ու ընկերային հասկացողությունների բախումը միշտ զուսպ, անկողմնակալ ու հեռու: Բակունցն իրեն չի պարտադրում: Իր նպատակը քարոզչություն չէ, ոչ էլ փրկություն: Հայրենիք իր աշխարհայեցողությունը: Սակայն գիտե՞ք, որ գործ ունե՞ք խստապահանջ արվեստագետի հետ: Մնացածը այնքան էլ կարևոր չէ: Հե՞ որ արվեստի գործը ինքնըստինքյան բաղադրական ժեստ է, թեկուզ ինչ սեռի էլ պատկանելիս լինի: Ինքն ու իր արվեստը: Նույնիսկ գոյութենապաշտական հետքեր կան իր գրվածքներում: Ողբերգության մշտառկա գիտակցություն: Պաղ ցատում և չավող ճիչ: «Միրհավ»-ը ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականության հազվագյուտ մի գոհար է, որի նկատմամբ հիացմունք պիտի արտահայտեին Սամուել Բեքեթն ու Ժան Ժոնեն: Ի՞նչ մնաց թեզ, Դիան դայի, այս փուլ աշխարհում: Մարդը միևնույն է՝ պիտի տառապի անհաս երազների հաճախանքից: Գոնե նրան տալիս Սոնայի լաջվարդ շապիկը: Հապա Սանդուխտի ողբերգությունը «Աբարում» պատմվածքում: Անկարելի է կարդալ «Ալպիական մանուշակ»-ը և չթախծել ի տես մարդ լինելու տառապանքի: Բակունցի արվեստի մեծությունը կայանում է նրանում, որ տեսակետ չի հայտնում, կողմ չի բռնում, կուրծք չի ծեծում: Ստեղծում է պատկերը և հետ քաշվում եզրակացությունը թողնելով ընթերցողին: Այդ պահանջում է խիզախություն, ինքնավստահություն և, ամենից կարևորը՝ ճշմարիտ արվեստագետի շաղախ և գրողի արժանապատվության գիտակցություն: Բակունցը, փաստորեն, ավելի քան կես դար առաջ էր իր ժամանակից: Իր արվեստի այլքը դեռ նոր է հասնում մեր գոյության ափերը, երբ արդի հայ գրողների մեծ մասը տակավին կառչած է մնում նախորդ դարի գրական հանգանակներին թե՛ որպես ձև և թե՛ որպես բովանդակություն:

Այս բոլորն ասելով՝ շեշտած ենք լինում Բակունցի ոճի կոռուպցիոնը, թեև երբեմն նա շռայլում է գույները բնության պատկերները վրձնելիս, սակայն ընդհանուր առմամբ ժուժկալ, սակավախոս, հետևաբար և ազդեցիկ: Ինչպիսի՞ բախտավորություն, որ Բակունցը զերծ է մնացել շաբլոն արտահայտություններից ու

ծեծված լուրջագետի, երբեմն ամեն ոք չանում էր մյուսին գերազանցել աժան հայրենասիրական մարտակոչերով: Բակունցը գերծ է նաև գեղապաշտական բռնազբոսիկ գայթակղությունից, այսպես ասած՝ գեղեցիկ բառերի գործածությունից: Ճարտարապետի նման առնում է բառը, ծեփում հարդով ու ցեխով և զգուշությամբ դնում շինության հիմքում: Իր մոտ չկան գրական խաղեր, մաշված մետաֆորներ կամ «գրականություն անելու» ճիգեր: Խոսքը հարուստ է, երբ հարազատ է: Բակունցի ոճային հմայքը հենց իր այդ պարզության մեջ է, որը պահանջում է բացարձակ անկեղծություն և արվեստի կատարյալ հասկացողություն: Եվ եթե հաճախ նրա լեզուն մոտենում է խոսակցական ժողովրդայինին, այդ ոչ թե զանգվածի մակարդակին իջնելու դրդումից է, այլ նյութի և պատկերի անմիջական պահանջից: Ոճային այս անսեղանության հիմքում, սակայն, առկա է նյութի ճարտարապետական բարդ կառուցը, այնքան կատարելագործված, որ ոյուրամատչելի է թվում, ուստի և ոյուրընթերցելի: Չգույշ պիտի լինել սակայն: Բակունցի կտրած ճամփան, ամեն մի էջը լեցուն է գրական գյուտերով, մեկը մյուսից ինքնատիպ, ինքնուրույն ու եզակի:

Արևելահայ արդի արձակի հիմնադիրն է Բակունցը և մինչև այսօր անխախտ պահում է հառաջապահի իր դիրքը: Բակունցից հետո տաղանդավոր բազմաթիվ արձակագիրներ են երևան եկել, ու սակայն նա մնում է անհասանելի մի գագաթ՝ միանգամայն անընթերցանելի, ինչպես Աբովյան, ինչպես դա Վինչի, ինչպես Բեթովյան: Կարելի է ազդվել Բակունցից, բայց միայն մի Բակունց ունի հայ գրականությունը՝ բակունցյան գրականությունը, որի ավիշից տակավին կարող է օգտվել մի ամբողջ դար:

Սակայն վերադառնալիս այն միտքին, որ Բակունցն է՝ գյուղացի մի տղա, Գևորգյան ճեմարան, կամավոր, գյուղական ուսուցիչ, հրապարակագիր, գրող, թարգմանիչ, բանասեր, բյուրոկրատ՝ ընկած մեծ ու փոքր հեղափոխությունների ու հեղաշրջումների արանքում: Նա հազիվ տասը տարի ժամանակ ունեցավ գրելու: Ու սակայն ինչպես եղավ, որ ներամիտի գյուղացի այդ տղան կարողացավ շոշափել ապագայի թևերը, ձերբագրավել գրական քարացած ավանդություններից և մեկ ուսույնով կառչել արդիականի պատվանդանից՝ իր ետին թողնելով նախանձի ու չարության դեղին հորձանուտը: Մնաց մենակ ու անընկեր: Արդեն ամբողջ միշտ էլ թշնամի է եղել արվեստագետին: Բակունցը մնաց աներեր՝ հավատարիմ այն միակ ճշմարտության, որ գրականությունն է և հենց հանուն այդ ճշմարտության էլ զոհվեց սովետահայ գրականության լավագույն ծաղիկը:

ԽՈՍՔ ԲԱԿՈՒՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Մենք» պարբերականը

■ Փարիզ 1932 թ. / Բակունցի «Մթնածոր» ժողովածուի մասին



ՇԱԽԱՐՀ ՆԱՐԴՈՒՄԻ

Փոքրիկ պատմածքներու հատոր մըն է այս, որ կը կրէ առաջին պատմածքին խորագիրը, ՄԹՆԱԶՈՐ, գեղեցկօրէն ընտրուած, որովհետեւ, իրապէս, այս գիրքը կը ներկայացնէ ձոր մը, անդնդային խորութեամբ եւ մթութեամբ: Հայկական լեռնաշխարհն է այդ, շանգեզուրը, գոր աշխարհագիրները կը նմանցնեն «լեռներու ալեկոծութեան» մը: Էժո՛ղիար ժայռերը, կարաւան առ կարաւան, կը մտնեն գիւղերէն ներս, ջուրերը կը փախչին սադանայի կամուրջներուն տակէն ու կը նետուին հսկայ բարձրութիւններ վար: Խորունկ անտառներ, ուր խնձոր կուտեն ու կը պտըտին արջերը: Այնտեղ կապրին նաեւ մարդիկ, հայ գիւղացիներ, որոնք կտրուած են ժամանակէն:

Ակսել Բակունց, որ կուգայ այս աշխարհէն (Չանգեզուր), ուզեր է վիպագրական իր ճարտարապետութիւնը պատշաճեցնել այն երեք տարրերուն, որոնք կը կազմեն հայկական լեռնաշխարհը, – հողը, կենդանիները եւ գիւղացիները: Այս պատճառով, եռանկիւնի մը կը նմանի իր վիպագրական այս գործը: Հաւասարակողմ եռանկիւն մըն է այդ, – կրնաք առնել, իր գործին մէջէն, միայն կողային արտայայտութիւնը, եւ ամբողջ պիտի գտնէք զայն: Կամ միայն կենդանապատմութիւնը, եւ դարձաւ ամբողջ պիտի գտնէք գործը: Երեք երեսի վրայ շինած այս վեպը գեղեցիկ արտայայտութիւնն է Թէնի տեսութեան, սակայն կարելի է ուրիշ ճամբով մըն ալ մօտենալ այս գործին: Ներքին ճամբով մը, ինչպէս կը թելադրէ արդի քննադատութիւնը:

Կ'երեսակայեմ՝ Բակունցը, որ մեկ

զգայարանք ունի, – աչքը: Հզօր գործիք մըն է այդ, մեկը արդի ժամանակներու ամենէն յարգի զգայարաններէն: Ահա թէ ինչո՛ւ աչքի դար կը կոչեն շատեր մեր ժամանակաշրջանը: Բակունց չափազանց զարգացնելով այդ զգայարանը, վերջապէս ուզելով սինեմա խաղալ՝ խցած ուրիշ ամեն զգայարանական պատուիւն, ինքզինք դատապարտած է համրութեան (mutisme):

Բակունց վարպետ արուեստագետն է համը գրականութեան, չափազանց ինքնատիպ, նոյնիսկ անկախ ֆրանսական «լուրջեան դպրոց» էն: Եթէ ֆրանսական դպրոցը կ'աշակերտի համը սինեմային. ինչպէս նաեւ հոգեբանական այն փորձերուն, որ կ'աշխատին պեղել մարդուն ինքնագիտակցական աշխարհը, Բակունցի համրութիւնը, ազդուած ըլլալով հանդերձ իր հողային ու կենդանական աշխարհէն, խորերէն եկած վարժութիւն մըն է արեւելքի մարդու: Արդարեւ չի խօսիր արեւելքին, եւ, զարմանալի՛ է, համը է նաեւ արեւելքի փիլիսոփան, (ան կը նայի, կը դիտէ իր ներսը – ներհայեցողութիւնը արեւելեան դպրոց մըն է):

Այս վարժութիւնը, սակայն, դաւաճանած է Բակունցի գործին, հոն՝ ուր, ամեն անգամ, կ'աշխատի «վերջացնել»: Արդարեւ Բակունց չի գիտեր «վերջացնել», բայց որքան գեղեցիկ են իր «սկսիլ»ները: Երկու նախադասութեամբ, ան արդէն հրաշալի մուտք մը կը կատարէ, շուտով մը կը հիւսէ հանգոյցը: Գրական հին ճարտարապետութենէն բոլորովին ձերբազատած է այն: Մարդ կը զարմանայ ու կը հարցնէ թէ, արաքան գեղեցիկ «սկիզբ» ու «հանգոյց» չինելէ յետոյ, Բակունց ինչպե՛ս չէ կրցեր «վախճան» մը տալ: Նոյնիսկ միջակ: Արդարեւ կիսաւարտ գործի տպաւորութիւն կը ձգեն իր պատմածքները, կամ վերջը յանկարծ խանգարած: Շեքսփիրեան վախճան մը չէր կրնար տալ, ծեւ մը որ շատ հասարակ դարձած է հիմա, կամ Տոպոյեւսկեան վախճան մը, որով տարուելու պատճառներ ալ ունէր: Արդեօք չուզե՞ց «վերջացնել», իմաստ մը չտալու համար իր գործողութիւններուն («բարոյական» կ'սեփն հիները), յանուն չեզոքութեան, որուն կը յարին երբեմն արուեստագետները, երբ կը սպառնայ վարչաձեւը:

Այսուհանդերձ մեծ արուեստագետ մը կը մնայ Բակունց, նոյնիսկ իր այս մեկ գապուն գործով:

ԽՈՍՔ ԲԱԿՈՒՆՅԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՅԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Շարունակվում է Շենի հին կռիվը...



ԿՐՍ ԱՐԱՐՄԵԿՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Բակունցը, ինչպես ճշմարիտ և բնատուր տաղանդ ունեցող գրողները, մեծ գրականություն է մտնում ծննդավայրից: Հենց ծննդավայրում է կազմավորվում նրա հոգեկերտվածքը, ուղղորդվում միտքն ու մտածումը, խմորվում ստեղծագործող անհատի ասելիքի բաղադրությունը, մարդկային խառնվածքն ու նկարագիրը: Մանկության տարիներից հայրենի եզերքում ունեցած շփումները, ստացած տպավորությունները, հուշերն ու հիշատակները, դեպքերն ու դիպվածները, կոշտ ու կոպիտ, նուրբ ու փափուկ հարաբերումները, ստացած դասերն ու լսած գրույցները մեծ հետք են թողնում նրա ներաշխարհում: Այս որակները հետագայում ամրակայվում են ճեմարանական միջավայրում: Պատանի Բակունցի զգայությունների աշխարհում բացվում են նոր պատուհաններ: Մանկության տարիների տպավորություններն ու նոր գիտելիքները, պատերազմական տարիներին՝ Կարինից մինչև Սարդարապատ անցած ճանապարհի, և ապա՝ քաղաքական վայրիվերումների փորձառությունները տիրական ազդեցություն են թողնում երիտասարդ մարդու հոգեկերտվածքի վրա:

Այս ամենը վարար հոսքերով ներծծվում է նրա հոգու ու արյան մեջ, այնպես, ինչպես սև ցեղերն են կլանում և իրենց մեջ պահում խոնավություն՝

առատ բերք ապահովելու երաշխիքով, ինչպես լեռնալանջին, կամ մեծ անտառից զատված հանդամիջյան ճանկեզրին վեհորեն կանգնած միայնակ կաղնին՝ հաղթահարելով հողի կարծրությունը, խորացնում է արմատները՝ սաղարթների ստվերում հանդի մշակներին հանգիստ պարգևելու համար: Բակունցը մեր արձակի այդ միայնակ կաղնին է, սև ցեղերի անօրինակ ու քաջարի սերմնացանը, ով իր գրական հերկերում ցանում է սիրո ու բարության, առաքինության ու նվիրումի, հույզերի ու զգացումների, թրթռացող ապրումների ծփացող գունախաղերով, լույսերով ու ջերմությամբ շաղախված սերմեր: Չարմանալի այդ պայծառ մարդը, ինչպես իր ստեղծագործությամբ, այնպես էլ քաղաքական նկարագրով, մարդկային խառնվածքով, մանավանդ իրականության և իրադարձությունների նույն ու հիմնարար ընկալումներով, լուրջ ու հավասարակշռված վարքաբանությամբ, իր սերերով ու մտահոգություններով էլ առանձնանում է իբրև խոշոր ու խորապես ինքնատիպ անհատականություն, ափեսի լցված անշեղ հայեցողությամբ: Նա ժողովրդի կեցության ու կացության, կարոտների ու ձգտումների, նրա մշակույթի ամսիջնորդ կողմն է: Ավելի ստույգ՝ իր ցավն ու տառապանքը, սերն ու կարոտը բխում են ժողովրդական ոգու ներքին շերտերից: Այս երևույթն աներկայորեն նկատելի է նույնիսկ նրա անկրկնելի բնապատկերների մեջ, որոնք շնչում են հայրենի և առավել խտացնում մեծ գրողի՝ մարդու նկատմամբ դրսևորած սերն ու կարեկցանքը: Սեփական փորձով գիտենք ընթերցողն ամեն անգամ Բակունցի էջերից դուրս է գալիս հարստացած, մաքրագործված ու նորացված և ամեն անգամ զգում, վերապրում գրողի տաղանդներն ու մտահոգությունները: «... Ուզում եմ, որ այս անգարդ տողերը մնա՝ այնքան, որքան կմնա մեր քարափը»: Տգնալայներն ու մտահոգություններն իրական էին, ցանկությունը՝ խմորված մեծ հավատքով: Ինքը գիտեր իր մեծությունը, հավատում էր քարափի ու ժողովրդի հավերժությանը: Համատարած երկյուղի ու վախի մեջ ժողովուրդը սրբությամբ պահեց իր պայծառ զավակի հիշատակը և գրական անկրկնելի ժա-

ռանգությունը: Նա այն սերմնացանն էր, ով «... արյունաքամ սողացել էր թաց հողի վրայով դեպի եղեգները, դեպի ջուրը, կոշտ մատներով չանգռել էր գետինը, ցեխոտել էր մատները և անզգայության մեջ ցեխոտ մատներով սեղմել էր թրատված ուսը: Հետո երեսնիվայր թաղվել էր սառը հողում՝ որպես ոսկեհատ սերմ»: (Ա., Բակունց, Երկեր, հ. 1, 1976 թ., էջ 331): Գրողը մշտապես իր հերոսների հետ էր, իրեն տեսնում էր նրանց մեջ, նրանց կրում իր մեջ, թիկունքում մշտապես զգում նրանց տաք շնչառությունը և նրանց ճակատագրի բեկբեկումները: Նա կյոթեսեցի բրուտ Ավագն է և սասունցի Հագրոն, Արթին պապն է և Աթա ապերը, Երանի Սեթն է և սիրահար Դիլանը... «Ցերեկը քարայրն ամայի էր, դուռը՝ կողպ: Բրուտ Ավագը նստում էր քարի գլխին, ինչպես մեկը այն հեքիաթային ձևերից, որ կերտել էր մուշտարերի քմահաճույքը: Այդ արձանացած մարդը ամայի ծորի վրա մաղում էր այն տխուր երգերից, որոնց հնչյունները մաքուր են, ինչպես արցունքը և հնամյա, ինչպես անտառի խշռոցը, գետի անվախճան զանգատը» (Բակունց, Երկեր, հ. 1, 1976 թ., էջ 251): Բակունցն այդ մեկն է: Այդ մեկն Բակունցն է, ով «Մի վիթխարի ծիրանի փող, առանց հին ահի ու նոր խնդությանը հնչեցնում է մեր արդար երգերը»: Բակունցը շատ կարճ ժամանակամիջոցում, մեղմ ու փափուկ ծավալումներով ստեղծեց իր խորապես ուրույն, մկանուտ ու անտրոնիկ ստեղծագործական աշխարհը՝ հայրենի եզերքից մինչև «հայոց լեռան նախաստեղծ կատարը», իր տարաբնույթ հերոսների և պատկերած իրականության գունագեղ ու հմայիչ պատկերասրահը: Մեր կողմից վկայակոչված վերոհիշյալ մեջբերումները կատարված են որոշակի դիտավորությամբ: Բակունցի երկերը գնահատելիս առաջին հերթին պետք է ճանաչել հեղինակին, նրա սերերի և մտահոգությունների աշխարհը: Այդ պարագայում հասկանալի կդառնա, որ ոչ միայն անարդար, այլև ուղղակի մոլորություն է մեծ գրողին «գյուղագիր» համարել: Բակունցը լայն ընդգրկումների հեղինակ է: Ճշմարիտ է՝ տիրապետող գյուղական միջավայրն է, բայց նա գրում է մարդու ճակատագրի, սոցիալ-քաղաքական, բարոյահոգեբա-

նական փուլումների մասին, լայնորեն բացում նրա զգայությունների աշխարհը, հայտնաբերում զարմանալի և զրնգացող գեղեցկություններ, ցավի ու տառապանքի այրող շիրթերով ջրդեղված պայծառ երազների մասին: Եվ այս ամենը ողորկված՝ մարդու նկատմամբ ունեցած խորունկ սիրով ու կարեկցանքով: Ասենք, նա ոչ թե «հղեպականացնում» է Միսա Բիբու գյուղական կենցաղը, այլ խորապես տազնապում է արմատներին խորթացած նրա թոռան անորոշ վիճակի համար: Անցյալը տխուր է, ներկան՝ անորոշ, գալիքը՝ անհայտ: Օտար քաղաքակրթությունների բռնի ներմուծումը նվաստացնում, պղտորում, աղավաղում է ենթակա ազգերի սովորություններն ու բարքերը, ջլատում ազգակցական, սոցիալ-հոգեբանական կապերը: Սա Բակունցի ստեղծագործություններում ելակետային դրույթ է: Բակունցը երբեք չգնաց ինքն իր դեմ, չդեգերեց գրական ու քաղաքական պարտադրված տեսությունների մոլոր ուղիներում, հեռու մնաց, չանդամակցեց տարափոխիկ հիվանդությունների նման տարածվող գրական խմբավորումներից որևէ մեկին, մնաց ինքն իր նման, անդավաճան իր ներքին ծայրին: Նկատված խոսք է՝ ոճը մարդն է: Երբեք չհիփովեց Բակունց մարդու ոճը: Նա մշտապես և բոլոր պարագաներում բացարձակապես նույն բյուրեղյա հոգու տեր մարդը: Մեծ գրողի երկերում առանձնանում է մի թեմատիկ թանձր շերտ՝ նվիրված Կյորենի և Կյորենեցիների, ասել է, թե Շենի՝ Գորիսի: Նոր ձևավորվող քաղաքային բարքերի դեմ վարած գոյատևման կռիվներին: Թեմայի այսօրինակ մասնավորումը չի սահմանափակում նյութի տարածական ամբողջականությունը: Բակունցյան՝ Կյորեն - Գորիս համադրումը մեր վիրավոր ու վերջաշատ հայրենիքի մանրակերտն է և հաստատում է մեծ գրողի տաղանդի գործավոր ուժն ու ստեղծագործական խիզախության առանձնահատկությունը: Քիչ է ասել, թե Կյորենն ու Կյորենեցիները մշտապես եղել են գրողի ուշադրության կենտրոնում: Բակունցի բոլոր երկերին էլ հատուկ են, այս դեպքում, Կյորենեցու կենսափիլիսոփայությունը, լեզվամտածողությունը, Կյորենեցիի հմայքը, ազգային ոգու համընդհանուր կոփվածքը:

Նույնիսկ կիրճերն ու լեռնապատկերները, քերծերն ու քարափները, անդունդ գլորվող քարերի արծազանքները, գետերի սառնությունն ու գահավիժման ձայները, թանձր լռությունն ու չասված խոսքերը, դաշտանակարներն ու քարքարոտ կածանները, փոշեպատ ճամփաները խոսում են Կյորենավարի: Պարզապես պետք է ընդգծել, որ Բակունցի գրականության ատաղձը, նրա հիմնական ակունքն իր հայրենի եզերքն է: Մեծ գրողը կարողանում է մասի մեջ տեսնել ամբողջը, սիրո մի համբույրի մեջ տեսնել մարդկային երջանկությունը, մի կայծի արցունքի մեջ տեսնել մերժված հոգիների տրտմությունն ու տխրությունը: Բակունցը նույնացել է իր բնաշխարհի և այնտեղ ապրող մարդկանց հետ, իսկ այդ բնաշխարհը բոլորովին էլ գավառ չէ, այլ ամբողջական հայրենիք է՝ իր փուլումներով, թանկագին կորուստներով, վիճակների անորոշությամբ, երկրի բախտով ապրող մարդկանցով: Բակունցի «Կյորենականում» լսվում է ոչ միայն եզերքի, այլև ամբողջ Հայաստան աշխարհի տնքոցը: «Աշխարհքս միշտ կմնա, ասա մարդը սևեղեն չմնա», տազնապում է Արթին պապը, տազնապում է և գրողը: Ինչպես Կյորենը և Կյորենեցիները, այնպես էլ Գորիսն ու գորիսեցիները Բակունցի ստեղծագործության մեջ արմատ են ձգել նրա գրական փորձառության առաջին շրջանում, ճեմարանական ուսումնառության տարիներին: Գրողի, ինչպես ինքն է նշում, «Գրական մկրտությունը» կարելի է համարել 1915-ին՝ հունիսի 26-ին (Շուշիի «Փայլակ» N 40 թերթում) լույս տեսած «Վոքրիկ ֆելիետոնը»՝ Թեգ գնացող ստորագրությամբ: Ֆելիետոնը գրված է Գորիսի քաղաքագլուխ Մաթվեյ Մաթվեյի և «գավառական ադմինիստրացիայի դեմ»: Գրողը երգիծում ու դատապարտում է քաղաքագլխի էժան փառասիրությունը, մեծամիտ հավակնոտությունը: Նա չի բավարարվում իրեն տրված պաշտոնով, և, որպեսզի հասարակությունը ճանաչի իր «անյայտութեամբ յայտնի» մարդուն, Մաթվեյից զավթում է քաղաքային ինքնավարության, կանանց ընկերության, աշակերտական խմբակցության, հասարակական կազմակերպությունների տեղական ճյուղերի նախագահական պաշտոնները: «Չէ՞ որ իրավունք ունեք... Չէ՞ որ Գորիսում նա նախագահությունը կապալով էր վերցրել»: Այս ֆելիետոնը Բակունցի տպագրած երկրորդ գրությունն է, որտեղ զգացվում են զուտ բակունցյան լեզվի ու ոճի տարրերը, երևույթները բացահայտելու ժողովրդական մտածողության և հոգեխառնվածքին հարազատ մոտեցումների, նրա գրողական ձեռագիրը: «Բայց Գորիսում ի՞նչ ասես, որ չի լինում»: Հայրենի քաղաքում ծավալվող իրադարձությունների նկատմամբ ունեցած այս զարմացական հայացքը դեռ երկար է ու-

ղեկցելու մեծ գրողին և «Կյորեն» վիպակում արտահայտվելու մի ուրիշ հնչեղանգով: Վերոհիշյալ «Վոքրիկ ֆելիետոնը» գրողի հեռագնա ճանապարհի առաջին քայլն էր, և քայլն արված էր՝ մեծամիտ և հավակնոտ, հասարակությունն այլասերող, նույն հասարակության տականքը մերանող քաղցենիության դեմ: Նկատենք, որ քաղաքագլխի պաշտոնը զբաղեցրած Մաթվեյից ֆելիետոնի էջերում այնպիսի ճշմարտացիությամբ և մեծ վարպետությամբ է ներկայացվում, որ թողնում է կատարյալ գրական կերպարի տպավորություն: Այսօր էլ նրանք կան, և այդ իրենց «անհայտությամբ հայտնի» պաշտոնավորներին կարելի է հանդիպել ամենուր: «Փոքրիկ ֆելիետոնին» հաջորդեցին փոքրիկ պատմվածքներ, գրական պատկերներ, ակնարկներ, որոնք ակնհայտորեն խոսում էին Բակունցի բնական տաղանդի և ստեղծագործական կարելիությունների մասին: Առաջինը «Վայլուն ապագա խոստացող» երիտասարդ գրողին նկատեց Առաջին Հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Կրացյանը: Բայց, դժբախտաբար, նրան չհաջողվեց իրականացնել Բակունցին եվրոպական կամ ամերիկյան կրթության տալու իր իսկ բռն ջանքերը (Այդ մասին տես՝ Սիմոն Կրացյան «Հին թղթեր նոր պատմության համար» գիրքը, Բեյրութ, 1962 թ.): Բակունցի ստեղծագործական ընդհանուր թեմատիկայի մեջ Կյորեն-գորիսյան թեման խստորեն պահպանելով գրողի վերակերտած գրական աշխարհի ընդհանուր մթնոլորտի ամբողջականությունը՝ հասցեագրվում է իր ծննդավայրում տեղի ունեցած սոցիալ-քաղաքական իրադարձությունների, համակարգային փոփոխությունների ընթացքի և թողած հետևանքների պատմությանը: Այս առումով գրական ճշմարիտ, հանրագումարային վկայություն է «Կյորեն» վիպակը, որին հասնելու ճանապարհն անցնում է տարաբնույթ պատումների միջով: Այդ պատումներից է «Հյուսիսային ձոր» ակնարկը: «Հյուսիսային ձորում, Միջին մահալայում և Գյումրի թաղում ընդհանուր է եղել և ընդ էլ կոտորած» (Բակունց, Երկեր, հ.1, 1976 թ., էջ 343), բայց «... երբ առաջին մոլորվել հրամայեց տափարակի վրա կառուցել քարե գորանոց, Հյուսիսային ձորի աստղը թեքվեց»: (Բակունց, Երկեր, հ.1, 1976 թ., էջ 343): Ինչպես հիշատակում է տարեգրությունը, «գյուղի մասսայական տեղափոխություն չի եղել»: Ասել է, թե Գորիսի կառուցապատումը սկզբնավորվել է մասնակի դիպվածով, բայց և որի արդյունքում գյուղը վերածվել է ավերականոցի: Այդ մասնակի դիպվածից հետո՝ 1926-ին, պետական որոշումով, Շենի ողջ բնակչությունը պարտադրված էր տե-





դպիտակվել Գորիս: Բակունցը ժամանակային տարբեր չափումների մեջ ներկայացնում է Շենի ամայացման տխուր պատմությունը: Նա մեկից ավելի անգամներ կրկնում է, որ Կյորեսի երեք թաղերից և ոչ մեկում «ոչ կռիվ է եղել և ոչ էլ կոտորած», բայց ամայացել է մի շեն բնակավայր, այնպես, ինչպես դա կատարվում է մեծ զուլումներից, կոտորածներից, բռնի տեղահանումներից հետո: Գյուլից Նախ հեռացան ոսկի ունեցողները: Գյուլի Նախկին կրպակատերերն էլ իրենց ունեցվածքով փոխադրվեցին քաղաք, նրանց հետևեցին ուրիշները: Գյուլն ունեզրկվեց, գյուղացին դարձավ վարձու աշխատող, մանր առևտրական, պարտքերի դիմաց վաճառքի հանեց ամբողջ ունեցվածքը: «Քաղաքը մեծացավ: Յուլմբայի ձորում, Միջին մահալայում, Գյուլնեյ թաղում մնացին հացթուխներ, զգրար կանայք, լվացարարներ, գորգագործ պառավներ, անտառից շալակով ուրիշի համար ցախ բերող մարդիկ, սրահ-նրահ դռանը օրահացի աշխատող աղջիկներ և մանուկներ, որոնց ամենամեծ հրճվանքը քաղաքում օրնիբուն լվացք անող մոր վերադարձն էր, գոզնոցի ծալքում համեղ պատառը: Այսպես հավելեց ձորի գյուլի աստղը»: Այս ակնարկային պատումի մեջ գրողը Յուլմբայի ձոր էր եկել պետական հանձնառությամբ՝ ժողով գումարել, համոզել երբեմնի շեն ու մարդաշատ գյուղում ապրող տանջահար մնացորդացը՝ փնտրել նոր գյուղատեղ: Բայց մեծ գրողն իրականության խորունկ դիտարկումներով, համակող սիրով ու թանձր թախիծով առավել տեսանելի է դարձնում երևույթի հեռագնա ողբերգականությունը: Հազար թելերով, հոգով ու մարմնով իր հանդ ու հողին հարազատացած մարդուն հանում են իր միջավայրից, խաթարում բնական զարգացման ընթացքը: Մարդը դադարում է գյուղացի լինելուց, բայց և քաղաքացի էլ չի դառնում: Կնշանակի, որ մարդու բաղադրարկական կարգավիճակի մեջ առաջ է գալիս մառախլապատ մի անորոշություն, որից դուրս գալու ուղիներ չկան: Երբեմն մի բառով, դիպուկ մի արտահայտությամբ գրողն ուղղակի տեսանելի է դարձնում կտրուկ պարտադրանքներով և կոպիտ միջամտություններով գյուղում կատարվող գործողությունների դաժան ընթացքը և ավելի բան տխուր հետևանքները: Մարդիկ հեռանում են, գյուղը դատարկվում է. «Այսպես էր սկսում իր ջուն վաչկատուն ցեղն անցած դարերում»: Դատարկվող գյուղի ավերակների վրա իջնում է ամայի տխրություն: Կյորես-գորիսյան տարեգրության ստուգապատում էջերից է «Յուլմբայի ձորը», որով ընդհանրացվում է Նաև Միջին մահալայում և Գյուլնեյ թաղի, ասել է, թե Շենի ամայացումը: Բնակա-

վայրերի այս կարգի փոխումները աղավաղում են դարերով համակարգված բարբերն ու սովորությունները, փոխվում է մարդը՝ աշխատանքի, հող ու հանդի, վար ու ցանքսի, արտի ու արոտի նկատմամբ ունեցած իր խորապես բնական վերաբերմունքով: Մարդը կտրվում, հեռանում է բնությունից՝ կորստի մատնելով մի ողջ մշակույթ: Սա է, որ մեծ ցավ է պատճառում գրողին՝ թանձրացնելով նրա տխրությունն ու կարեկցանքը Նույն մարդու նկատմամբ: «Բրուտի տղան» պատմվածքում արդեն որոշակիորեն զգացվում են աստիճանաբար կոշտացող, մի տեսակ արագություն հավաքող սոցիալ-քառյական, քաղաքացիական հարաբերությունները: Վաճառականների, խանութպանների, պաշտոնյաների երեխաները խորթանում են անգամ իրենց պատանեկության ընկերներից, իրենց պապերի լեզվից ու երգերից: «Ամառ երեկոները սափտակ շորերով աղջիկներ ու տղաներ գալիս են ու բարափի վրա նստում: Նրանք նվագում են մանդոլին, կիթառ, նրանք երգում են ռուսերեն, ապա բարձր ծիծաղում են, և ձորի բարանձավներում նրանց առույգ ծիծաղն արձագանք է տալիս ահավոր կերպով, ասես ձորը բռնում է նրանց հիմարության հանդեպ», – նկատում է գրողը: Քաղքեկն թանձր սահմանագիծ է քաշել, օտարացել երեկվա ընկերներից, հայրենական բարբերից ու սովորություններից, կորցրել տոհմիկ առաքինությունները: Անձանաչելի են դարձել երեկվա դասընկերուհիները՝ Սոնան, Մաշուն... Մենք կարող ենք վկայակոչել այլ պատմվածքներ, որոնց պատկերային համակարգում, հեղինակային միջամտությունների, հավելյալ բացատրությունների, տողերի և բառերի ելթատեքստում, խոսում լռության մեջ հասունանում է «Կյորես» վիպակի գաղափարն ու գրելու գրական-կենսական անհրաժեշտությունը:

Բակունցը ձգտում է փրկել «մոռացության խավար խորքում սուզվող» Կյորեսը և կյորեսցիներին և նրանց վարքն ու բարքը համադրել նոր ձևավորվող հասարակական ու քաղաքական հարաբերությունների բարոյահոգեբանական մթնոլորտի հետ: Մեծ գրողն իր ելույթներում և պատմվածքներում մի անգամ չէ, որ խոսել է գրողի դերի և գրականության նշանակության մասին: Գրողն իր ժամանակի պատմիչն է, հասարակաց դրսևորած վարք ու բարքի, կենցաղի, լայն առումով ազգային կյանքի և ժամանակի անմիջնորդ վկան: Մեծ գրողն աշխատում է այդ տագնապաշատ և անհանգիստ օրերի մեջ աստիճանաբար ահագնացող մակընթացության ու տեղատվության հորձանքից փրկել ժողովրդական կյանքն ու մարդկային հարաբերությունները կանոնակարգող այն բնականորեն ձևավորված որակները, որոնցով առաջնորդվել է

հայ հասարակայնությունը դարեր ի վեր: Նոր ձևավորվող քաղաքային հարաբերություններն աղավաղում, ախտահարում են Նաև կյորեսցիներին: Նահանջում է Կյորեսը, Նահանջում է կյորեսցին, Նահանջում է լեզուն, Նահանջում են բնաշխարհի բարբերն ու սովորությունները և դրանցով համակարգված Կյորեսի քաղաքակրթությունը: Իսկ այդ քաղաքակրթությունն իրապես մերանված է մարդու և հողի Նախապես դաշնությամբ, հանդ ու հողի ինքնատիպ բույրերով, լույսով ու ջերմությամբ, կարեկցանքով ու գթասրտությամբ, խղճով ու սիրով, ինքնաբավ աշխատանքով, ընտանի դարձած դժվարություններով, տոհմիկ առաքինություններով, տոհմիկ դաստիարակությամբ, մարդասիրությամբ, անխախտ ու անդավաճան բարեկամությամբ... Որակներ, որոնք հատուկ են կյորեսցիներին և որոնք ուղեկցել են մեծ գրողին՝ սկսած նրա վաղ մանկությունից: «Իբրև վաղեմի պատմագիր՝ դողացող ձեռքերով ես գրում եմ իմ պատմության վերջին էջերը: Հարկավոր է պատրույգ բարձրացնել, և միևնույն ժամանակ, ավարտել անկրկնելի օրերի պատմությունը» («Բրուտի տղան»): Պահի այսօրինակ զգացումը պայմանավորված է ինչպես պատանեկան տարիների հուշերը փրկելու քաղցրությամբ, այնպես էլ անցյալի և իր ապրած օրերի գեղարվեստական վավերացման անհրաժեշտության գրողական մտահոգությամբ: Նա ուղղակի լսում էր հողի ձայնը, զգում էր այդ հողի վրա օր-օրի ահագնացող խժժությունների տագնապը: Ազգային ավանդներն ու մեծ բարոյականությունը, բնաշխարհիկ սովորություններն ու տոհմիկ դաստիարակությունը ճեղքեր են տալիս, և այդ ճեղքերից ծլում են օտարամոլության, ասել է թե ինքնանվաստացման, ինքնաուրացման արատներն ու ախտերը՝ ինքնին գորացնելով դրսեկ գաղափարախոսությունը: Այս որոմի կրողը քաղքեկն էր, որի վրա հենվելով հին ու նոր մոլորվածները՝ գայթակղիչ խոստումներով, կեղծ հոգաբարության փաթեթավորված հրահանգավորումներով աստիճանաբար կրծում են տոհմաժողի արմատները... Ստեղծում ճահճային, ահ ու սարսափի մի մթնոլորտ, որտեղ պարտվում, զոհաբերվում են ազնիվ հոգիները: Մեծ գրողը շտապում էր «միևնույն ժամանակ» ամբողջացնել իր ասելիքը, մի բան, որ վիճակված չէր նրան: Նրա տարածը, անշուշտ, ավելի շատ էր, բան թողածը: Բայց և այնպես, Բակունցը հիմնավորապես տվեց իր ժամանակի անխաղաղ վկայությունը, իրականության մեջ ծավալվող դեպքերի, իրադարձությունների, դրանց հեռագնա զարգացումների խճճվածքում հուսահատ պայքարի ելած բնության ազատ որդիների կռիվը քաղքեկու դեմ: Եվ գրվեց «Կյորեսը»: Թվում է՝ բոլորովին

ել պատահական չէ, որ «Կյորենը» առաջին անգամ լույս տեսավ «Եղբայրության ընկուզենիներ» երկի հետ մի գրքով և վերջինիս խորագրով, 1936-ին: Աներկա է, որ այդ երկու երկերի միասնական հրատարակության գործում որոշակի դերակատարություն է ունեցել միտալուտ տաճարականների ներքին զգացողությունը:

Եվ, սակայն, նկատենք՝ «Եղբայրության ընկուզենիներ»-ում գրողը պատկերում է 1919-1920 թթ. իրադարձությունները, պատերազմական օրերի դրամատիկ անցքերը, ծանոթ իրականության մեջ մարդկանց ներհոգեկան ու մտային դեգերումները, սրամիտ հորինումներով դժվար կենցաղը տանելի դարձնող տխուր աշխուժությունը, նրանց ուժը և թուլությունը: Կարծում ենք՝ այս միասնական հրատարակությամբ գրողը ցանկացել է ընդարձակել, հավելյալ տեղեկությամբ հարստացնել «Կյորենի» համապատկերը, տալ հարազատ եզերքի առավել ամբողջական կենսագրությունը: Այս առումով միասնական հրատարակության մեջ «Եղբայրության ընկուզենիներ» պատմվածքն ընկալվում է իբրև նախադրույթ «Կյորեն» վիպակի համար: Ինքնին հասկանալի է, որ գրողն առաջնորդվել է այս տրամաբանությամբ, չնայած գիրքը բացվում է «Կյորեն» վիպակով, որտեղ նկարագրված դեպքերն ու իրադարձությունները, սակայն, հաջորդում են պատմվածքում կատարվող դեպքերին: Շուտանց բարատակ դարձել է հավաքատեղի: Այնտեղ մարդիկ զբաղվում էին ապրանքափոխությամբ, թուղթ էին խաղում, գրուցում, վիճում ամենատարբեր խնդիրների շուրջ, զայրույթով նեղանում իրարից, ներողամիտ կիսաժպիտներով ներում միմյանց: «Շուտանց նախկին հարդանոցում պատերազմական գործի հանճարեղ դեկլարաներ կային, ռազմական խորհուրդ», որ բնում էր պատերազմական խնդիրները: Հաճախ մի հատիկ արտահայտությամբ, մի փոքրիկ բնութագրումով դերավարվում, գրական կերպար է դառնում սովորական, առումի հոգսերով ապրող մարդ: Այս առումով հարուստ է Բակունցի պատկերասրահը և գունագեղ: Միջավայրը նույնն է, հոգսերն ու կարիքները՝ միանման, բայց մարդիկ առանձնանում են իրենց գործեակերպով, իրենց անհատականացված բնավորությամբ: Նա իր հերոսներին չի թելադրում, չի առաջնորդում, չի պարտադրում ինչ-ինչ գաղափարներ: Նա պարզապես շփվում է նրանց հետ, բացում նրանց արհեստի և զգայությունների աշխարհը, բաժանագրում նրանց վերաբերմունքը այս կամ այն խնդրի նկատմամբ: Բակունցը և՛ սիրում, և՛ կարեկցում էր նրանց: Մի անգամ էլ ուզում ենք շեշտել այս զարմանալի մարդու և գրողի, բառիս բուն իմաստով բնատուր տաղանդի, գրականության նկատմամբ

ունեցած անզիջում հավատարմությունը: Նա չարտոնեց պարտադրել իրեն ընթացիկ կյանքի «հերոսական առօրյայի», շողողուն ապագայի «հաղթական» տեսիլականը: Նա իր նկարագրած իրականությունը չաղավաղեց հանձնարարված պատվիրանների պղտորությամբ: Նրա առաջ կանգնած էր հազար ու մի հոգսերի խճճվածքում մոլորված և ելքեր փնտրող մարդը՝ իր ապրած դրամայով, ճակատագրի դառնությամբ: Ընդհանուր առմամբ կարապետյան մեջ Բակունցը գտնում էր, որ գրականության զարգացման ճշմարիտ ուղին վերադարձն է «... Դեպի ժողովրդական ստեղծագործության իսկական ու խոր արմատները»: Այսինքն՝ պետք է զգալ և ճանաչել ժողովրդական այն աշխարհագրությունը, որով կյանքի է կոչվել նրա գրական, մշակութային ժառանգությունը: Այս ելակետային դրույթն է ընկած նրա գրական կերպավորման հիմքում: Ինչպես գրողի, այնպես էլ նրա ստեղծած կերպարների կյանքը մշտապես եղել է, հակոբ Օշականի խոսքերով ասած, «կշռոյթին տակ իր ցեղին խոր օրենքներում»: Մտովի հիշենք այս գծի վրա Բակունցի շեղաշուք կերպարները և դրանց շարքում մեծ կյորենցուն՝ Աթա ապրող կոթողային, անխոցելի կերպարը՝ Շուտանց բարատակի ամենաերևելի, ամենահեղինակավոր մարդուն, ազգային բախտի ու ճակատագրի, արտաքին ու ներքին կռվազանությունների շուրջ ունեցած անհանգիստ ապրումներով: Նա իր փորձառությունը, հոգեկերտվածքով, բարոյական նկարագրով անցյալի ավանդների օրինապահ ժառանգորդն է: Հայ մարդու մի ինքնատիպ կերտվածք, որի հոգսերն ու ապրումները, դրսևորած վերաբերմունքն աշխարհի ու մարդու բախտի նկատմամբ, դժվարություններին ու փորձություններին դիմակայելու կամային որակներով, հուսահատներին հուսադրելու, բարոյական ու մարդասիրական աշխարհընկալումով, առաքինությամբ ու արդարադատությամբ խտացնում է մեր ժողովրդի կենսափիլիսոփայությունը: Աթա ապրելը հուսադրում, բաշխելում, դիմանալու և դիմադրելու կորով է ներշնչում հուսահատ սովյալներին, և մարդիկ հավատում են նրան. «ցորեն լեզու էր, որ նման էր ցորեն հացին»: Նա, իսկապես, հույսով ու հավատով կերակրում էր հասարակությանը: Բայց եղավ ամենասարսափելին: Երբ ապրելու, սովահարությունից փրկվելու հույսն այնքան մոտիկ էր, երևում էին «մուգ կանաչ դաղձի առաջին թփերը», «... Երբ օրում մեկը մյուսի հետևից մեռան հինգ երեխա, որից երկուսը մի տնից էին»: Հեղինակային նկարագրության մեջ էպիկական պատումի ուժը լիցքավորվում է մի նոր շնչառությամբ, որ թվում է՝ անցնում են դարերի միջով: Աթա ապրելը «այն լեռնեցի ծերունիներից է, որոնք... շատ անգամ են նայել

մահի երեսին», անցել բազմաթիվ փորձություններ, ահերի ու սարսափների, «թրատված և արնաշաղախ» դիակների միջով «առանց արցունքի և հուզմունքի», «բայց մի փոքր երեխայի լաց կարող էր նրանց հուզել»: Տանը սուգ բարձրացավ: Թշվառ մայրը ողբում, աղերսում էր արևին՝ «կյանք տալ սառած մանուկներին»: Սա որդեկորույս մոր ողբ է, հայ մայրերի ողբ, որ «լսելով նրանց, թվում է, թե մոլորվել են մի անտակ ձորում և ուր էլ գնաք բարձր ժայռեր են և փրկություն դուռ չկա»: Բայց «... այդպիսի ողբ չստաց Աթա ապրելը»: Աթա ապրող ողբն ամբողջական մի ասք է, մի զարմանալի, ողբերգական պատում, որ գալիս է դարերի խորքից, իր մեջ ներառում նոր ժամանակները, վերածում էպիկական մի համաձուլվածքի՝ մարդու անցած ճանապարհի և գալիք տաճարական շողարձակումով: «Այդ ողբ չէր, այլ ահավոր բողոք կապույտ երկնքին, բողոք, որին ձայնակցում էր ձմեռվա բնից զարթոնող բնությունը և բարե արծիվը, որ երգի աղմուկից դուրս էր թռել, բարե արծիվն իր թևերի վրա տանում էր մարդու բողոքը մահի դեմ»: Մտքի հուսահատ դեգերումները, զգայությունների աշխարհում խմորվող բախումներն ու բռնկումները, պահի ծանրությունն ու միտիկ ապրումները ծերունուն մղում են մենակության: «Գերեզմանատնից Աթա ապրելը գնաց Խուռուփի ձորը...»: Բնության մեջ ամեն գոյություն զբաղված է իր գործով. «Փմբք բեզ, որ ամեն բան կարգին սարքել են, միևնույն անգամ մոտենալ էլ անտես չես արել... - Ո՛ւմ հետ էր խոսում Աթա ապրելը՝ Աստծո՞, որ ապրում էր Խուռուփի ձորի արխաշում, հին թթենո՞ւ հետ էր, որի փչակում գուցե ապրում է այն հոգին, որ Աթա ապրող նման սպիտակամորուս ծերունի է և տրեխներ է հազնում և միևնույն անգամ արխալուղի գրպանում պղնձե բռնաբանման ունի: Ո՛ւմ հետ էր խոսում Աթա ապրելը, ինքն էլ չգիտեր...: Սա հուսահատության այն պահն է, որ պարզապես անտանելի է դարձնում ապրելը, մարդը երես է դարձնում կյանքից և ապավինում Գերագույն ուժին: Այս երևույթը, ընդհանրապես, ծանր նստվածք է թողել հայոց միստիցիզմի վրա: Աթա ապրելը ուղղակի հարաբերության մեջ է մտնում Աստծո կամ այն գերբնական ոգու հետ, որ կանոնակարգում է աշխարհի գործերը: Այլ կերպ չի լինի, որովհետև նա իրեն պատասխանատու է զգում ժողովրդի առաջ: -Մա՞հ էիր բաժանում, արժանի մարդու տայիր... Հրեն Գիշունց պառավը երկու տարի աղատ-պաղատում է՝ հոգին առնես... Հապա դու կույր էիր, բո ձեռքն ինչպես բարձրացավ անմեղ փոքրիկ տղայի վրա: Հիմա ես ինչ պատասխան տամ խալիսին: Առաջից սուր, հետևից սով. ձեռքդ պարանի ես





քցում, օձ է դառնում: Ո՛ր պիտի գնա ես ժողովուրդը, վերևից կոմիսարն է մեր գլխին կրակ թափում, ներքևից ես կրակն է մեզ խորովում: Ասա է, ասա...: Ուշադրություն դարձրեք «Ասա է, ասա» բառերի վրա, գայրության ինչպիսի շիկացում, ինչպիսի բողոք, մարտահրավեր նետելու ինչպիսի կիրք: Այդ համատարած տառապանքի ու նույնքան համատարած չարության մեջ անգամ մեծ բարություն սերմանելու առումով Աթա ապերը կանգնած է աստվածամերձ տարածքում, նրա հետ խոսում է Դու-ով և հաշիվ պահանջում: Խուռուփի ձորից հետո Աթա ապերը արդեն բլրի գագաթին է, որտեղից պարզորոշ երևում է գետահովտի վրա փռված քաղաքը, «...որ շլացնում է և հմայում է և ահ է ներշնչում նրան, և մոլորված եղջերուի նման միտք է անում ի՞նչ է այդ, թափափող, բարեկամ, թե՞ դարանամուտ որսորդ... Միտք է անում և իրեն զգում ծանոթ թավոտները»: Իսկ գյուղում իրարանցում էր: Չինվորներն ու գյուղացիները հարձակվել էին Մելքումովների հացի հորերի վրա, բայց հորերը դատարկ էին: Աթա ապերը հանդարտեցնում է խռովահույզ սովալներին, հորդորում, որ նրանց բռնած ճանապարհը սխալ է: Դեռ Շուրուց բարատակում էր նա Անդրին ու նրա նման ջահելներին խորհուրդ տալիս «ծռել» միայն խառնակության տանող իրենց ճանապարհը: Ճիշտ ուղին սրտի, սիրտ և միասնության ու աշխատանքի ճանապարհն է «մարդուն մարդ դարձնողը»: «Աշխատեք է՛, դուք էլ աշխատեք մելքումովների նման դիզեք»,- խորհուրդ էր տալիս Աթա ապերը: Եվ սակայն տիրող քար լուծության մեջ մարդիկ «օտար թվացին Աթա ապորը, ինչպես օտար ազգի մարդիկ»: Տանը «Օջախի առաջ Աթա ապերը միտք էր անում հին օրերից մինչև ներկան, նրան թվում էր, թե իր ամբողջ կյանքը եղել է մի արև ճանապարհի ծաղիկների մեջ, ասան աղբյուրների երկրում, որտեղ լեռնայանքին կարոտում է մորին, ծորերում՝ մոռը, և երբ կովերը տուն են գալիս, կաթը ցողի նման կաթլթում է ծաղիկների վրա»: Ինքնաբավության այս գեղեցիկ վերապրումը Նորից պղտորվում է, երբ նա «մտքով գնում է Ցուրտ աղբյուր»: Աղբյուրը և ընդհանրապես «Շահ յուրդի տախտերը» կորցրել են ոչ միայն նախկին գրավչությունը, այլև աշխատավոր մարդուն վարձահատույց լինելու հպարտությունը: Որտե՞ղ է, սակայն, չարիքի ակունքը, որտե՞ղ է թաղված կռվազանության հունը: «Աթա ապերը պտտվում է գետահովտի շուրջը, որտեղ փռված ընկած էր քաղաքը: Ամեն ինչ այնտեղից եկավ»: Քիչ վերևում մեջ բերված Աթա ապոր մտորումների մեջ եղած կասկածահարույց հարցականներն այստեղ արդեն որոշակիանում են: Իր

ապրած կյանքի գեղեցկությունը ստվերվում է գալիքի մռայլ պատկերներով: Նրա մահվան ցանկությունն օրհնության միջոցից գույներով է շաղախված, ու աղոթքի մրմունջներով այդ խառնակ աշխարհից պատվով հեռանալու բնական ցանկությամբ. «...Աթա... Դու ես ժամանակ պիտի մեռնիր, որ ի՞նչ կռիվ կար, ի՞նչ սով կար: ...Դու միայն կիմանայիր, որ աշխարհում թողել ես ցուրտ աղբյուրներ, ծաղկած սարեր և ախպեր մարդիկ... Շմտ ես ապրել, Աթա...»: Ծերության շեմին հասած մարդը հաճախ է վերհիշում, վերապրում իր անցած կյանքը և երագում կյանքից հեռանալ, ժողովրդի լեզվով ասած «չոր ու լի աչքով»: Միևնույն ժամանակ է գունաթափած բնության անամոք տիրությունն ու տկարացած, արմատներից հեռացած կռվազան մարդկանց բերած աղետները, որոնք ծանրացնում են Աթա ապոր տառապանքները, փակում դրանցից դուրս գալու ուղիները: Եվ գրողը հանձնարել է ներքառնությունը շարադրում է հերթական դրվագը, որն էլ պայմանավորում է այս զարմանալի ասքապատումի խորագիրը: Աթա ապերը և Օրուլը ծանոթ ու ճանաչ մարդիկ են, միասին հաց են կտրել, ուրախ օրեր են անցկացրել նույն սուփիի վրա, հոգսեր ու դժվարություններ են կիսել: Բարեկամություն է ստեղծվել ընտանիքների միջև, գնալ - գալ ունեն: Աթա ապերը գիտի հարևան ժողովրդի հետ ունեցած բարեկամության գինը: Ժողովուրդները հարատևում են բարեկամության, նեղության պահին իրար օգնելով: Թուրք Օրուլն էլ սովահար ընտանիք ունի: Նա ապավինել էր Աթա ապորը և եկել օգնություն խնդրելու: Մշտական շփումները վերածվում են ժողովրդական մի ինքնատիպ դիվանագիտության, դառնում համակցության կերպ, հարաբերվելու բարոյական նորմ, որ, սակայն, խաթարվում են օտար խաղերի խճճվածքով: Մենք անդրադարձանք գրողի կողմից մեծ վարպետությամբ դասողաված այն դրվագներին, որոնց միջով անցավ Աթա ապերը, բայց իր եռության ամենուր մնաց նույնը: Ասել է՝ ոչ թե հերոսն աճում է գրական տեքստի էջերում կատարվող դեպքերի ազդեցությամբ, այլ գրական տեքստում արձանագրվում են նրա մարդկային առաքինություններն ու խիղճը, ցավն ու կարեկցանքը, գայրության ու զարմանքը: Բոլոր պարագաներում գրողը բացահայտում է այդ խորապես բնաշխարհիկ մարդու մտածումների ուղղությունը, կենսափիլիսոփայության ակունքները՝ հյուսվածքոված ժողովրդական-համագային աշխարհագրությունը: Կարելի է տպավորել, թե ես հեռանում եմ ինձ առաջադրված նպատակի որոշակիությունից: Բայց դա այդպես չէ: Աթա ապերը մեր ժողովրդի կենսափիլիսոփայությունը խտացնող երևույթ է, որ իրմով

բերում է կյոթեսցիների անցած պատմության կենսափորձն ու վարքաբանությունը և նոր օրերի տագնապները: Բակունցյան հերոսների պանթեոնում Աթա ապերը մշտական ներկայություն է՝ իբրև իշխատակ ու պատգամ, իբրև ազգային կենսամտածողություն: Նա իր խղճով ապրած կյանքի ազնվությամբ, գալիք օրերի տագնապներով, անորոշության, կարոտության մեջ տարուբերվող մարդկանց հուսադրելու կարողությամբ, մարդու, աշխատանքի, արդարության, համերաշխության և նմանօրինակ որակներով օժտված հայ մարդու կատարյալ տեսակն է: Ես զգում եմ նրա շնչառությունը Բակունցի աշխատասենյակում և նաև աշխատասենյակից դուրս: Աթա ապերը սրտի մարդ է և սրտով էլ պայքարում է իրականության բռնի ու դաժան վերածնունդի դեմ: Եվ շարունակվում է, սերնդեսերունդ փոխանցվում է Օհան պապի թոռան մասին հյուսված այս մեծախորհուրդ ասքապատումը. –Մեր գյուղում կար մի Աթա ապեր... ողորմի նրան: Եվ ինչպես էպոսում է ասվում, մենք էլ դառնանք և ողորմի տանք Աթա ապորը և Նորից դառնանք և երիցս ողորմի տանք նրա կերպարն ստեղծող Ակսել Բակունցին: Մենք վերևում նշեցինք, որ այս պատմվածքը, իր ամբողջական և ավարտուն կառուցվածքով հանդերձ, մի ինքնատիպ նախադրության դեր է ստանձնում «Կյոթես» վիպակի համար: Ինչպես կերպարի հոգեբանական խառնվածքը, նրա կողմից առաջադրված հարցադրումները և մանավանդ պատասխանները գտնելու մտային որոնումները նրան տանում են, եթե ոչ նոր, բայց առավել լայն կենսատարածք: Եվ պատմվածքին զուգահեռ գրվում է «Կյոթես» վիպակը: Ավանդները, բարբերն ու սովորույթները, սերունդների տոհմիկ դաստիարակությունը, հարևանների հետ հարաբերվելու դիվանագիտությունը, աշխատանքի և արդարության նկատմամբ ունեցած բնաշխարհիկ զգացումը, բնական, ժողովրդի կենսափորձով հաստատագրված, հասարակական հարաբերությունները կանոնակարգող համակարգ է, որ աստիճանաբար փուլավորվում է նոր ու ներմուծովի համակարգի ինքնահաստատման դաժանության տակ: «Կար Գորիս և կար Կյոթես: Երկու տարբեր ժողովուրդ էին, և տարբեր էին նրանց լեզուները, սովորությունները, անունները, և մշտաբար կրակի նման նրանց միջև վառվում էր հին կռիվը: Թե ինչ ազգի մարդիկ էին և ինչ լեզվով էին խոսում նրանք, այնքան էլ հեշտ չի պատմել»: Հինը պաշտպանվում էր, նորը՝ հարձակվում: Եվ չէին հասկանում իրար լեզու: Ամեն կարգի հեղափոխություն էլ երկատում է ազգային միասնությունը, ժողովուրդը բաժանում հակամարտ մասերի, մեկին հանում մյուսի դեմ. «Գորիսեցիք խոսում են շան լեզ-

վով», «կյորիսեցիք՝ շենավարի»: Առաջին իսկ դրվագում գրողը մեծ վարպետությամբ բացում է հասարակական կյանքի վարագույրը և ցուցադրում երկփեղկված ժողովրդի հին, բայց և անգիշում կոիվը: Անցել են այն հին ու բարի ժամանակները, երբ կյորեսեցիք կարողանում էին զսպել քաղաքի հավակնոտությունը, փակել Կյորեսը կլանելու գորիսեցիների ախորժակը: Կյորեսը կարողանում էր դիմադրել, որովհետև «Շենն ուներ իր կտավագործները, իր դերձակները, իր իջևանատները... վաճառականների մեծ մասը դեռ «դարիբական» էր, այլ կյորեսեցի էր, այսինքն՝ վար ու ցանք ուներ և միևնույն անգամ ապրում էր Շենում, առևտուրն անելով Գորիսի շուկայում»: Ասել է թե կյանքի նորացումը, առաջխաղացումը բնականոն ընթացքի մեջ էին: Բայց շան լեզվով խոսող Բաղիրի թռուները, դրսեկ վաճառականները կործանում են «... հողագործների, բրուտների, ներկարարների, դարբինների և տավարածների ցեղային դինաստիան, որ ի դեպ գլխավորում էր բուն Կյորեսի և նրա միջնաբերդ Շենի կռիվը Գորիս քաղաքի և նրա «օտարականների» դեմ»: Հայրենիքի վաղվա օրով մտահոգ, արժանապատվությամբ ապրելու ոյուցազնական շնչով լիցքավորված մարդիկ հեռացել էին կյանքից: Պայքարի թափը թուլացել էր, այլևս Կյորեսն անկարող էր պայքարել: Երկրի աղը կազմող «ցեղային դինաստիայի» վերջին մոհիկանը Գյուրջի Օբին էր, որ հարբած հայիոյում եր «Կյորեսը կույր դանակով մորթողներին», ու որի վրա արդեն ծիծաղում էին գորիսեցիները, «ինչպես եթե հրապարակում կապիկ պար ածեին»: Իսկ Աթա ապերն ամեն անգամ քաղաքից վերադառնում էր ծանր տպավորություններով: Ազգային քաղաքացիական համակարգից նա դուրս էր շարտում քաղաքային բնակչությանը: Նրանց, որոնք խորթացել էին աշխատանքին, կտրվել էին հողից, դարձել գող ու ավազակ, անաշխատ եկամուտներով հարստացող խաբեբա ու թալանչի, «Նրանք մարդ պոկող ազգից են...» և եթե... «Նրանք հայ լինեն, ես հայությունից դուրս կգամ...»: Կյորես-Գորիս հակամարտությունը տարածվում է ամենուր, նույնիսկ նրանց ուխտատեղիներն առանձին էին: «... Նույնիսկ բահանները չէին կարողանում հաշտեցնել նրանց: Ծաղրով, ծիծաղով կյորեսեցիք բռնում էին բուլկի ուտողներին: Նրանց համար մեղք էր պղծված շուրթերով սրբատեղում աղոթք մրմնջալը կամ սուրբ բարը համբուրելը, և կյորեսեցի մի պառավ նրանց աղջիկների հետևից շարտում էր «Հողս գլխիդ, տեսնես բուլկարում քանիսին ես պաչպչել, էլ սուրբը քեզ հի՛նչ անի...»: Գրողը դրվագ առ դրվագ ցույց է տալիս Կյորեսի կործանման դաժան ու դժվարին ընթացքը: «Կյորեսը մեռնում է, ինչպես մեռնում է Խուռուկի ձորի վերջին կալ-

նին, «Անդունդ էր սուզվում հողագործների ազգը», իսկ նրա զայրացած ու զարմացած որդիները՝ հիասթափված ու հուսալքված, թողնում են պապենական հողը և գնում բախտ որոնելու ուրիշ հորիզոններում: Երկիրը դատարկվում էր իր աշխատավոր զավակներից: «... Հողը հողագործի ձեռքից գնում էր, և այդ անխուսափելի էր, ինչպես մահը, ինչպես արևի մայրամուտը...»: Բայց դեռ կային մարդիկ, որ մի թաքուն մտայնությամբ երացում էին, որ կյանքի քաղաքական վերափոխումը կներդաշնակվի բնական առաջընթացի հետ: Աթա ապերը «իբրև տեսիլք նկարագրում էր այն ժամանակը, որ քաղաքի տեղը ինքը կամ ուրիշ կյորեսեցի վար կանի», իսկ Գյուրջի Օբին ուղղակի սպառնում էր, թե մի օր հայրենիքից հեռացած բնիկները կվերադառնան գերությունից և «բուլկարի ծառերից մեկ-մեկ պաշտոնավորներին»: Բայց հենց այդ օրերին Միրումովների պարտքերի տակ կթած Ծմակի Խաչին, փրկության ոչ մի ելք չգտնելով, իրեն նետում է քերծից՝ գոռալով «Քանդվե՛ն դու, Գորիս»: Սարսափը արձագանքում է լեռներում, մտնում տներից ներս, կյորեսեցիների սրտերն ու մոթերը լցնում վախի ու տագնապի սարսուռներով: «Այդ դեպքից հետո Գյուրջի Օբին այլևս չեղևաց քաղաքի հրապարակում, և այնպիսի ահ պատեց Կյորեսին, ինչպես՝ եթե հանկարծ պայթեր լաստի խութը»: Հարկ չկա Բակունցի մասին ամեն անգամ խոսելիս այս իրողությունները վերագրել անցյալին: Այդպես էր երեկ, այդպես էր Բակունցի պարած ժամանակներում, դժբախտաբար այդպես է և այսօր: Բակունցը հանճարեղ ներքևատեսությամբ արձանագրում է ուրիշների «քաղաքակրթությամբ» առաջնորդվելու ազգակործան գործընթացը, որ միշտ էլ հանգեցնում է աղետավոր հետևանքների, երկփեղկում ազգային ոգու միասնականությունը, երկիրը բաժանում Կյորեսի և Գորիսի: Այդպես է եղել մեր պատմության շրջադարձային բոլոր փուլերում, երբ կյանքը վերափոխվելու բնական ընթացքը տեղափոխվում է օտար ռելսերի վրա, առաջնորդվում օտար գաղափարախոսությամբ: Կարողում են «Կյորեսը», և աչքերիդ առաջ հառնում են պատմության դասերը, անցյալ դարի խժոժությունները, կամայականություններն ու սպառնությունները, վախերն ու տագնապները, «օտար խաղերի» մեջ թաքտացող հասարակական կյանքը: Պարտադրված քաղաքակրթություններով առաջնորդվելը միշտ էլ ժողովրդին տարել է խեղճության և թշվառության, բարբերի ապականության, վարակել ինքնատարացման մանրեներով, ապաբարոյականացրել տոհմիկ առաքինությունները, նվաստացրել ու նսեմացրել մարդուն, խարխլել մարդեություն, մարդ-աշխատանք կապի ամբողջականությունը... մարդուն խորթաց-

րել հայրենիքին, արտամղել պանդխտության: Օտար քաղաքակրթության առաջին և հավատարիմ սպասարկուն քաղցենիությունն է, որ հանուն փողի փափկակենցաղ բարեկեցության վաճառում և հեռանում է հայրենական ակունքներից, հրաժարվում մայրենի լեզվից ու բարբերից: Նա, կորցնելով ազգային նկարագիրն ու ծախսելով հոգին, կազմալուծում է դիմադրողականության ոգին ու պայքարի կրողը: Այս և ազգային կյանքը նմանօրինակ ախտերից մանրագերծելու խորհուրդ ունի «Կյորես» վիպակը, որ գրվել է երեկ, բայց գիրքն է այսօրվա և գիրքն է վաղվա, որովհետև, չնայած Կյորեսը պարտվել է, բայց Գորիսի դեմ ունեցած նրա հին կռիվը դեռ շարունակվում է: Կյորեսը ազգային արժեքների կրողն է, որոնց շուրջ կարող են համախմբվել երկատված ազգի հակամետ հատվածները, բայց վերին խավը չունի այս գիտակցությունը, որի բացակայությունն էլ երգիծական պատումին հաղորդում է ցավի ու մորմոքի, անափ տխրությամբ շամանդաղված, ողբերգական շեշտադրումներով ընդգծված անանց տպավորություն: «Գորիս քաղաքի միջուկը, այսպես ասած պարունակությունը կազմում էին վաճառականները և պետական պաշտոնյաները՝ ոյուբանդարները և մեծամեծերը, ինչպես կասեր Աթա ապերը: Նրանք էին բուն օտարականները, որոնց դեմ կռվում էին իսկական Կյորեսը և նրա միջնաբերդը՝ Շենը»: Յուրաքանչյուր դրվագ սկսվում է քննարկվող նյութին հարկի նախադրույթով և ապա մանրամասնորեն քննվում առաջադրված խնդիրները: Ովքե՛ր են այդ վաճառականները, պետական պաշտոնյաները, որոնց դեմ կռվում է Կյորեսը: Գորիսի ընդարձակ զավառը «իբրև մեջ բաժանել էին վաճառականներն ու չինովնիկ մեծամեծերը», նրանցից ամեն մեկն ուներ «օրենքով» սեփականաշնորհված իր տարածքը և ինչպես ցանկանում, այնպես էլ վարվում էր այդ մահալում ապրող բնակչության հետ: Նրանք զբաղված էին առք ու վաճառքով, «Նրանց ձեռքում էր դրամը», «վաշխ էին առնում մանեթին երեսուն, քառասուն և ավելի»: Միրումով Կյուբին տղաներին դաստիարակում էր զայլային օրենքներով. «Որտեղից լացի ձայն լսես, ներս մտիդ, կամ մարդ է մեռել կամ սոված են, կամ տան տիրոջ ձեռքը նեղ տեղն է: Տ՛հր, պարտք տուր, չարմեխիր, Էսպես մեխիր, որ հուր հավիտյան դառնո՛ւ կլանի»: Հենց այս կերպ էլ նա մահվան դուռը հասցրեց Ծմակի Խաչուն: Կային առևտրականներ, որ «իրենց մահալում միահեծան տեր էին, բառիս լրիվ իմաստով: Նրանք դատ էին անում, եղբորը եղբորից բաժանում էին, խառնվում էին ամուսնության գործերի, կալանավո-



«... որում էին, ծեծում և արյան գին էին որոշում...»: «Առևտրականների չափ, գուցե և ավելի, Գորիսն ուներ բեյեր և պաշտոնյաներ», որոնք ևս ունեին «իրենց ազդեցության մահալներն ու գյուղերը»: Բեյերից ոմանք սերում էին հին ու նշանավոր տոհմերից, ոմանք էլ բեյեր էին դարձել կեղծ վկայություններով... և այլ ինչպիսի բեյեր չկային երանելի Գորիս քաղաքում: Բեյերի բույլը բռնեի նման վիստում էր պետական առյաններում: Աթա ապերը և ընդհանրապես կյոբեսեցիները ազգային արմատներից հեռացած, խաբեությամբ ու թալանով ապրող, հայրենական ակոսներում թույն կաթացնող այս մարդկանց են համարում օտարականներ և մշտաբորբոք պահում իրենց հին կոնիլը: Գրողն ամենայն մանրամասնությամբ և ճշգրտությամբ ընթերցողին տեսանելի էր դարձնում հայրենի քաղաքի հատակագիծը, նոր ու հին կառույցների, նշանավոր շենքերի տեղն ու դիրքը, տների ու այգիների համաչափ ու ինքնատիպ համայնապատկերը: Այս ամենի կողքին առանձնահատուկ դեր է ստանձնում շուկան, որտեղ ավելի ակնառու են աղբատության թշվառությունը և հարստության լկտիությունը, ազնվությունն ու խորամանկությունը, կեղծ, շինծու սիրալիությունն ու միամիտ հավատը, օտարականներն ու կյոբեսեցիները: Գավառի կենտրոնը Գորիսն էր, Գորիսի կենտրոնը՝ շուկան: Շուկա տանող ճանապարհների նկարագրությունն անգամ գրեզում է մի զարմանալի աշխուժությամբ, մրգերի, ապրանքների առատությամբ, անասունների բառաչով հանդիսավորությամբ, որ ընթերցողը մինչև տեղ հասնելը՝ իրեն զգում է շուկայական եռուզեռի մեջ: Շուկա մտնող յոթ ճանապարհներից գրողը նախընտրում է ջրաղացների կողքով բարձրացող այն հին ճանապարհը, որի վրա դեռ կան Կյորեսի հետքերը, ջրաղացապանը պատմում է չմոռացած հեքիաթները, խոսում անցած օրերի մասին և գտնում, որ «Դաթորիսի Աղալոյի մահից հետո Կյորեսում ապրելը հարամ էր», հիշում էր Ցուկ Օհանիս, «որի ձայնից Դրանգանի ձորում գազանները թաքնվում էին», և գտնում, որ «մարդ-օյանը քանի գնում հեռանում էր, այսինքն՝ փոքրանում և վայրենանում էր...»: Եվ բացի այդ՝ հին ճանապարհը Կյորեսն էր Գորիսի մեջ», որ իր «գերի երեխաներով» միացած «Շենի տղաների հետ» կռվում էին «բուլկի ուռուղների դեմ»՝ շարունակելով հին կռիվը, որ գալիս էր Դաթորիսի Աղալոյի առասպելական ժամանակներից: Ճանապարհն ավարտվում էր նոր շուկայի ծայրամասում ընկած, արհամարհված հին շուկայում, որտեղ մանր-մունր առևտուր էին անում բնիկ կյոբեսեցիները, և որոնց նոր շուկայի տները բշտում էին դեպի Շենը: Այդ հին շուկայում մարդիկ մեղմ են, հանգիստ ու

հանդարտ: Ավելի շուտ այն թողնում է խեղճ ու տխուր, բայց սրտակից մարդկանց զրուցարանի տպավորություն: Ասենք՝ Ավուց Ակու ամիի խանութը առևտրի համար չէ: Այստեղ հավաքվում են օտար ափերում բախտ որոնող կյոբեսեցիների՝ հարազատներին ուղարկված նամակները, փոխանցվում հասցեատերերին, և գրվում պատասխան նամակներ: Անցյալում էր մնացել այդ շուկայի հմայքը: Այսօր այնտեղ «առևտուր անելը հավասար է կոտոր ընկնելուն»: «Այլ է խական շուկան՝ Գորիսի սիրտը»: Այն մի քաղաք էր քաղաքի մեջ, որ տարածվում էր «Նազար բեյի տնից մինչև դավթարխանան, այնտեղից ուղիղ գծով մինչև Մաթևոս բեյի տունը, ապա մինչև դրոժիկայի գորանոցը և հայոց եկեղեցին»: Շուկայում եռում է կյանքը, աշխույժ առևտուր, հանդիպումներ, գրույցներ, նայվածքներ, խաբեբայություններ, հռչակավոր վաճառատներ...

«Կանչ, աղմուկ, շների կլանչոց»... Ժխոր, որ «համսում է մինչև Մեղրաբերծ», բայց «երբեմն հանկարծ լռում են, ինչպես ճնճուկների երամը, երբ գետնի երեսով անցնում է անգրի սովերը»: Սա այն դեպքերում, երբ հրապարակով անցնում են ոստիկաններն ու զինվորական ջոկատները: Կյորեսը մշտապես այդ սովերի տակ է, և պատահական չէ, որ մեջբերված Նախադասությունը նույն էջի վրա կրկնում է՝ ընդգծելով Կյորեսի անպաշտպանվածությունը: Այս ընդհանուր ժխորից անմասն է Պասաժը՝ կենտրոնական շուկայի զարդը: Այստեղ հիմնականում բաղբենին էր, և այստեղ չէր կարող հայտնվել սովորական մարդը, նրան անմիջապես դուրս էին շարտում: Պասաժում չէր վաճառվում տեղական ապրանք, այնտեղ գնորդները բեյեր էին ու չինովիկ մեծամեծերը: Պասաժում ամեն ինչ ազնիվ էր և ազնվացեղ, այնտեղ ռուսներն էին խոսում, նույնիսկ նրանք, որ չգիտեին այդ լեզուն: «Լյուդմիլա Լիվանս և բժիշկ Տիկրան Պետովիչի կինը՝ Սառա Կասպարովան, նաև մի փոքրիկ շնիկ՝ կապույտ ժապավենով» խանութ են մտնում, և խանութպանի խոջա հայրը զարմացած նայում է. — Փառք շատ, Աստված... Սա էլ կասի, որ շուն է և շան ազգից է... Խոջայի զարմանքը առավել շեշտավորվում է, երբ նրան դիմում են «Եփրեմ Լիկիտի» ձևով: Նրա ինքնասիրությունը շոյվում է. «Ուրեմն խոջա Մակիչը, Մուգամիս Մկրտիչը դառնալ Լիկիտ... Զեգ փառք Աստված...»: Լյուդմիլան, Պետովիչը, Կասպարովան, Լիկիտիչը, բոլորն էլ այդ փոքրիկ շան կարգավիճակում են և բաժանում են շնիկի կենսուրախ ճակատագիրը: Նրանք հեռացել են իրենց արմատներից և կորցրել իրենց տեսակի ազնվությունը: Բակունցի հումորը միաժալ չէ, այն ունի շերտեր, որոնք հավաստում են մեծ գրողի վերաբերմունքը Կյորեսի և Գորիսի նկատմամբ: Յգալ-

ցիկ, բայց մնայուն տպավորություն թողնող հեգնանքն ու երգիծանքը բացում են քաղբենիական ճահճում գուռաթափված, թարախակալ, բնավորություն դարձող մի արտասովոր սովորություն, որ հատուկ լինելով այդ խավի համար՝ միաժամանակ, այլասիրության և ինքնաօտարացման բացիկներ են տարածում հասարակական կյանքում: Բակունցն անընդհատ խտացնում է կյոբե, բացում հոգսերի ու կարոտությունների մեջ մոլորված մարդկանց ապրելակերպի և չինովիկ մեծամեծերի վայելքի լկտիությամբ համադրված նոր տարածքներ: Բացվող առավոտների հետ բացվում էին մսավաճառների խանութները: Առավոտ կանուխ թարմ մսի հոտ առած անտեր շների հետ խառնված՝ մարդիկ վիստում են խանութների առաջ: Նրանք «... միս չէին առնում, այլ փորոտիք, աղիքներ, ոտքեր և գլուխ»: Քիչ հետո գալիս են պաշտոնյաները՝ մեծ ու փոքր չինովիկները, Ներսես բեյը և ինքը՝ քաղաքագլուխ Մաթևոս բեյը՝ իրենց սպասավորների հետ: Իրարահաջորդ մանրամասները ցուցադրում են քաղբենիական կյանքի տարաբնույթ տեսարաններ՝ առաջ բերելով զայրույթ ու զարմանք, հիասթափություն ու կարեկցանք: Իսկապես, «Այդ ի՞նչ էր կատարվում բեզ հետ, իմ հայրենի քաղաք»: Վերջին բեյերի մուտքը անմիջապես փոխում է խանութներում ընթացող աշխատանքի դիմքը, վաճառականների ստրկահաճ վերաբերմունքը, նրանց կախվածության գինը չինովիկներին, որ փոխառուցվում է «Դու՛ ինձ, ես՛ բեզ» բանաձևի լուռ համաձայնությամբ: Գրողը բացում է փակ դարպասների դռները, մտնում տուն ու խոհանոց և ամենայն մանրամասնությամբ ներկայացնում բեյական ընտանիքների քաղբենիական կենցաղավարությունը, բամբասանքներով, նախանձով, անիմաստ մրցակցությամբ թունավորված ապրելու նրանց կենսակերպը:

Գրողի ամենատես հայացքի առաջ բացվում է այդ ընտանիքների մեծ ու փոքր անդամների հոգևոր աղբատության խորշակված դաշտանկարը, լսելի դարձնում նրանց տաղտկալի ու ձանձրալի գրույցները, ընտանեկան դաստիարակության խաբկանքի կիսաձայն շշուկները և ... կանանց դավաճանության անառակ պատմությունները: Քաղաքում կային շներ, որոնք «իրենց վարքն ու բնավորությունը նմանեցնում էին տերերին»: Նրանք տերերի համար թիկնապահներ և գործընկերներ էին: «Խանլար բեյի Ֆինդառ շունը, որ տիրոջ հետևից գնում էր գյուղերը հավ հավաքելու, այսինքն՝ աչքին ընկած հավը կուլ էր տալիս ու մնում էր անպատիժ, կարծես թագավորական խաղը հավաքող էր»: Այսպիսին են բեյերի շները: Նրանք էլ բեյերի նման քնում էին «հետկեսօրյա քնով... և նույնիսկ քնի մեջ պուժ էին անում»: Պատկերն իր լուռ-

մին է հասնում «Այոնյաց նախարարության հին և գալիք ժամանակների մասին» Պավլի բեյի ունեցած մտորումներով և Ավետիսի ընտանիքի և նրա աղջիկներին ամուսնացնելու զվարթ ու տխուր պատմություններով: Իսկ թե ո՞վ էր Ավետիսը, ի՞նչ տառապանքների միջով էր անցել, ի՞նչ ճամփով է հասել Գորիս, ոչ ոք չգիտեր: Զգիտեին ոչ թե և ոչ միայն, որ «Գորիսում խեղճ մարդկանց մասին երկար չեն խոսում», այլև որ բացարձակապես անտարբեր էին հայրենիքի բախտի ու ճակատագրի նկատմամբ: Այդ հարսանիքները տեղի էին ունենում տուն-տեղից, հանդ ու հողից, վար ու ցանքից կտրված և չին ճանապարհի վրա ապրող կյոթենցիների տիրական ներկայությամբ: Փոխվել էր վերջիններիս վարքն ու բարքը: Նրանք «աղ ու հացի եղբայրներ էին» և դարձել են խրախճանքների ու գինարբուքների սիրահարներ և շարունակում էին Յին կռիվը, բայց հիշեցնելով ոչ թե Ղաթրիկի Աղալոյի ուժեղ, պարտադրող ու խիստ ազդեցիկ, այլ Գյուրջի Օբիի թույլ ու վախվորած ժամանակները: Վիպակի վերջին դրվագները մի յուրօրինակ ամփոփում են, որտեղ գրողն առավել որոշակի է դարձնում ասելիքի ներքին հոսանքները, Գորիսի երկյեռ հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտը: «Գորիսում կային տեսակետ ունեցող տիկիներ», որոնց գրույցներն սկսում էին տարաբնույթ թթուների և մուրաբաների համ ու հոտի մասին տեղեկատվությամբ և ավարտվում փեսացուի և հարսնացուի շուրջ հանապատաստից հյուսվող բամբասանքներով: Այսպիսի դատարկ և անիմաստ գրույցներով էին զբաղվում «հոգևոր շահերից» զուրկ «Գորիսի բնակչությունը» և առավելապես բեյերը: «Նրանք հոգի չունեին, որ հոգևոր շահեր ունենային»: Հոգևոր շահերից զուրկ այս միջավայրում, հայրենի հողի վրա, հայրենի քաղաքում արհամարհվում, աղավաղվում են բարքերն ու սովորությունները, աղավաղվում է լեզուն, նսեմանում ու ծաղկվում, բամբասանքներ են ազգային արժեքներ: Անհեռատես ու նյութապաշտ, «հոգևոր շահերից» զուրկ բեյերից խորապես տարբերվում է Պավլի բեյ Օրբելյանը. տազնապաշտ է նրա հոգին, և նրա մտքերն անընդհատ պտտվում են ռուսացող Չանգեզուրի շուրջ, որի դեմն առնելու միակ պատենշը «Այոնյաց նախարարության վերականգնումն է»: Համընդհանուր անտարբերության մեջ նա միակն է, որ օթևան է տալիս Ավետիսի ընտանիքին: Սեփական գործությունն ապահովելու համար նա բարոգում է հայ տղաներին՝ ամուսնանալ միայն հայ աղջիկների հետ: Տեղի է ունենում երեկ և այսօր շատ տարածված մի սովորական դեպք, որ իր մատնանում արձանագրում է Պավլի բեյ Օրբելյանը. «Արյունարբու և գազանաբարո ավազակներ,

ազգով թուրք և դարա-մամադ ցեղից զինված՝ հարձակվեցան ուխտավորաց վրա», բայց կյոթենցիները «Միահամուռ արշավելով դարբադաշ արին ավազակեղանց...»: Այսպանից հետո Պավլի բեյ Օրբելյանը հատուկ իմացնել է տալիս, որ «... գավառամասի պրիստավն Կոսկրեսենսկի, ազգով ռուս, հովանավորել է վերոհիշյալ դարա-մամադ ավազակաբարո ցեղին և ինքն է մեծ կաշառու և հայատնաց...»: Ահա թե պատմության և պատմություն դարձող կենդանի օրերի որ դասն է արձանագրում մեծ գրողի աներկաբա վստահությունը շահած և ճշմարիտ տարեգրողի պարտականությամբ «Կյոթեն» վիպակի պատումի մեջ մտած Պավլի բեյ Օրբելյանը: Սա օտար քաղաքակրթություններով առաջնորդվելու գինն է, որ խրիսնացող բուռնակի պես վճարում է ազգային կյանքը «կանոնակարգող» քաղեքնիությունը: Բակունցագիտության մեջ կան կարծիքներ, որոնց հեղինակները գրողի սերն ու կարեկցանքը հավասարապես տարածում են թե Կյոթեսի, թե Գորիսի վրա: Հավատացած եմ, որ դա ոչ թե միամտության կամ սխալ մոտեցման արդյունք է, այլ արդյունք է քաղաքական զգուշավորության: Իհարկե, Բակունցը սիրում է իր ծննդավայրը մեծ ու անկրկնելի սիրով, և մի անգամ չէ, որ ափսոսանքի դառնությամբ ու ցավով կրկնում է. «... Այն ի՞նչ էր կատարվում բեզ հետ, իմ հայրենի քաղաք»: Բակունցագիտության մեծ երախտավոր Ռ. Իշխանյանը վկայում է, որ «Վիպակը նախապես կոչվել է «Գորիսի Կյոթեն», ապա հեղինակը գերադասելի է համարել «Կյոթեն» վերնագիրը, հավանաբար շեշտելու համար երկի բովանդակության մեջ էականը և հայտնելու իր համակրանքը գյուղական Կյոթեսի նկատմամբ»: Մեր կողմից ընդգծված այդ էականը շատ ավելի մեծ ընդգրկում ունի: Մենք մեր շարադրանքի սկզբում գրեցինք, որ «Կյոթեն» մեր վերաշատ ու վիրավոր հայրենիքի մանրակերտն է: Մեծ գրողը համազգային, համընդհանուր ցավի ու տառապանքի դիտակետից է նայում հայրենի քաղաքում ծավալվող դեպքերին: Երբ մարդկային, հասարակական հարաբերությունների մեջ իշխում էր փողը, բռնակը, ծառայամտությունը... աղավաղվում է մարդու ազգային նկարագիրը: Քաղեքնիությունը, ասել է թե քաղաքային բնակչությունը, հեռանում է իր ազգային ակունքներից: Ապագայնացումը դառնում է արբեյակերպ ու նպատակ, և այդ հորձանքի մեջ նսեմանում են ազգային արժեքները, աղավաղվում է ազգային դիմագծը: Ուժեղ է այն ժողովուրդը, որը հավատարիմ է մնում իր բարքերին ու սովորույթներին, և որոնց հիմքի վրա էլ բարձրանում է աշխարհի ու հարևանների հետ հարաբերվելու, երկիրը շենացնելու սեփական քաղաքակրթությունը: Իսկ այդ բարքերն ու

սովորությունները, տոհմիկ դաստիարակությունը բնականոն ընթացքով բյուրեղանում ու հարստանում են գյուղում: Պատահական չէ գյուղի և գյուղացուի նկատմամբ, օտար դասերով դաստիարակված քաղեքնու արհամարհական, անհարգալից վերաբերմունքը, որով հետև գյուղն է ազգային արժեքների կրողը: Քաղաքի «... Տների թիթեղյա կտուրները ցուցում են՝ գոյացնելով կաթնագույն լույսի ծով, որի մեջ, ինչպես դեղին յուղագունդ, լողում է ռուսաց եկեղեցու ոսկե գմբեթը»: Քաղաքացու աչքերը մշտապես շոյում են օտարի հաղթական ներկայությունը, ականջներում հնչում օտար բարբառի հնչերանգը: Գրողի մտահոգման հիմքում ընկած է գյուղաշխարհի կործանման ողբերգությունը և նույնպես ողբերգական հետևանքները: Նա անցել էր հեղափոխական վայրիվերումների միջով, տեսել ՆԵՊ-ի տնտեսական աշխուժացումները և... կոլեկտիվացման կործանարար հետևանքները: Վիպակի մեջ առավել լայն ու խորն են արմատական այն խընդիրները, որոնք պայմանավորել են մեր ժողովրդի պատմական ընթացքի առանձնահատկությունները: Պարզապես հայտնություն է Բակունցի հորինած վիպական այդօրինակ կառույցը, որ հնարավորություն է տալիս հանճարեղ գրողին ամբողջացնել իր բազմաշեշտ ասելիքը: Քաղաքում խոսում են տարբեր լեզուներով՝ վաճառականները՝ «չալ հայերեն, այսինքն ռուսախառն հայերեն, խոջանները՝ թուրքապարսկախառն մի լեզվով...»: «Գորիսի ոչ մի փողոցում լեզուն այնքան վճիտ չէր, ինչպես Յին ճանապարհի վրա: Այդ լեզու չէր, այլ կարոտ, տխրություն, զայրույթ, այդպես Ղաթրիկի ձորում երգում էր կաթավը, և մթնում կարկաչում էր Ցուրտ աղբյուրը»: Համոզված եմ, որ ամենասովորական ընթերցողն էլ զգում է, որ հեղինակային վերաբերմունքն առ Կյոթեն սկսվում է վերնագրից և ձգվում մինչև վերջին էջը: Այն էլ ինչպիսի էջ. այնքան գեղեցիկ և հնչել է Կյոթեսի լեզուն: Նա մի չքնաղ գորգ էր՝ նախշերով և վարդ ծաղիկներով մի հին գորգ, ինչպես Միևալի աղջիկ ժամանակ գործած գորգը, որ փռված էր Հաստ Ներսես բեյի դահլիճում: Ինչքան հնանում և մաշվում էր, այնքան շքեղանում էին գորգի գույները, և պատահում էր, որ Միևան, երբ այդ հին գորգը տանում էր գետը և լվանում էր, Միևան լաց էր լինում, և նրա հետ լաց էր լինում Կյոթեսի լեզուն... Պատմության փորձառությունները կրկնվելու սովորություն ունեն: Ուժեղ են այն ժողովուրդները, որոնք կարողանում են այդ փորձառություններից դասեր առնել: Այսօր էլ լսվում է Միևա Բիբու լացի ձայնը և կյոթեներենի մղկտոցը: Շարունակվում է Շենի Յին կռիվը: Մնացածը թողնում ենք բոլոր ժամանակների համար գրված այս հանճարեղ վիպակի նորոյա ընթերցողներին... //

ԽՈՍՔ ԲԱԿՈՒՆՑԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ձիապատկերի գունաձևումների խորհրդաբանությունը. Ա. Բակունց, Յ. Մաթևոսյան, Մ. Գալշոյան



ԱՐՄԵՆՈՒՅԻ ԱՐԾՈՒՄԱՆՅԱՆ
Բան.գիտ.թեկնածու, դոցենտ

Գրողի գեղագիտական համակարգի պատկերակերտման հետաքրքիր միավորը՝ գույնը, հաճախ է պատում մեջ ձեռք բերում խոհափիլիսոփայական բազմաշերտ տարածություն՝ դառնալով հեղինակի աշխարհայացքային գլխավորումների շեշտադրման միջոց, գաղափարական հոսքերի կենսական հենք։ Գույնը պատում մի մեջ խորհրդանշանականացման լայն ծիր ունի, որը բազմաթիվ իմաստային կազմալուծումներով հասնում է գաղափարական տարակերպ հանգրվանների, ուր բացվում են հեղինակի աշխարհայեցողության, մարդկային հարաբերությունների արժևորման մոտեցումները։ Հեղինակի կողմից գույների միջոցով հարուստ ներիմաստները դառնում են գրողի կենսափիլիսոփայության ատաղձը։ Հեղինակային գունամտածողության մեջ գունային հոսքը իր գունաձևումների տարակերպումներով ստեղծում է պատկերային հետաքրքիր զարգացումներ։

Տեսաբանների կարծիքով գունային պատկերն ունի երկու շերտ՝ սեմանտիկ և սեմիոտիկ ասպեկտներ։ Գույնի սեմիոտիկ ասպեկտը (արտաքին շերտ) ներկայացվում է գունային արտաքին երանգի ընկալման կողմով։ Այսինքն՝ այն

գույնով, որը մենք տեսնում ենք, առօրեական ասպեկտն է։ Սա միայն արտաքին պատկերացումն է գույնի մասին։ Իսկ բովանդակությունն ու ներքին առանձնահատկությունները վերաբերում են սեմանտիկ ասպեկտին (ներքին շերտ)։

Գեղարվեստական գրականության մեջ գունապատկերը ստանում է արտաքին և ներքին շերտերից բխող բովանդակային հետաքրքիր տարածումներ։ Գույնը գեղարվեստական պատկերում դուրս է գալիս իր արտաքին պատկերից, ստանում ներիմաստային տարակերպ շերտեր՝ դառնալով գրողի արտահայտած գաղափարական հարցադրումների հոսքային կենտրոնը։

Ըստ մի շարք տեսաբանների՝ գույների խորհրդանշային իմաստները ազգերի պատմության և հասարակական-քաղաքական տեղաշարժերի ընթացքում ենթարկվում են որոշակի փոփոխությունների։ Այս տեսանկյունից հատկանշական է Բ. Ա. Բազիմբայի «Գույնը և հոգեկան կառուցվածքը» աշխատությունը, որում հեղինակը գույների խորհրդանշային իմաստների զարգացումը բաժանում է երեք փուլի։

1. Տիեզերական – գույները՝ որպես աշխարհի ստեղծման գլխավոր ուժերի ու ակունքների խորհրդանշ (Արիստոտելի տեսություն)։

2. Աստվածաբանական կամ կրոնական – գույները՝ որպես վերին ուժերի, տարերքերի առանձին հատկանիշների խորհրդանշ։

3. Հասարակական-հոգեբանական – գույները՝ որպես հասարակական-քաղաքական կառուցվածքների և մարդկային հատկանիշների խորհրդանշ։

Բակունցյան, մաթևոսյանական, գալշոյանական գունամտածողությանը/հոգվածում կոդավորված միայն ձիապատկերները/առավել բնորոշ է գույների խորհրդանշային իմաստների երրորդ մոտեցումը։ Այսինքն՝ նրանց պատմումը ընդլայնվում է գունապնակը՝ ձեռք բերելով լեզվամշակութային պատկերային կառույցներում ազգային կենսամտածողության, հոգեբանական և խոհափիլիսոփայական ինքնատիպ տարածքներ։

Գունաձևումների հետաքրքիր

խորհրդանշային շերտեր կան վերոնշյալ հեղինակների ձիապատկերների կառուցվածքային շերտերում, որոնք զարգանում են սպիտակ ձի պատկերակառույցի խորհրդանշային իմաստավորումների տարածության մեջ։ Ձիապատկերի գունաձևումների ինքնատիպ զարգացումներ կան Ակսել Բակունցի «Սպիտակ ձի» պատմվածքում, որտեղ առանձնանում են ձիապատկերի տարբեր գունային դրսևորումներ՝ սպիտակ ձի, կապույտ գույնի երկու ձի (մեկը՝ մորթու սպիտակ բծերով), մոխրագույն ձի։ Ձիապատկերի գունաձևումների խոհական-գաղափարական շերտերը հասկանալուն կօգնի «Սպիտակ ձի» պատմվածքի երկու տարբերակային մշակումների գուգադրումը։ Նախ դիտարկենք անունների տարբերակային փոփոխությունները։ Պատմվածքի առաջին տարբերակում պատմվածքի գլխավոր հերոսը՝ Սիմոնը, կրում էր Միկի անունը, իսկ Ցուլակ ձին՝ Զալկա։ Անունների նախնական տարբերակները ներիմաստային շերտեր չունեն և համահունչ չեն պատումի սյուժետային ներհոսքային տրամադրություններին։ Ի տարբերություն Միկի անվան՝ Սիմոն անունը, պայմանավորված բանահյուսական մտածողությամբ, իր մեջ խտացնում է խեղճության, չարաշնչության, անգործության խորհրդանիշը։ Իսկ ձիու Զալկա անվանումը, թվում է, ներդաշնակ չէ գուղաշխարհի՝ սոցիալական անվերջանալի խնդիրներից ծանրացած կյանքի պատկերին։ Այն ավելի շատ համահունչ է քաղաքային միջավայրի փափկակենցաղ կյանքին։ Պատմվածքում փոխվել է նաև ձիու գույնը, և ավելացել են ձիապատկերի նկարագրական շատ շերտեր։ Ցուլակ ձին նախնական տարբերակում պատկերված էր կարմրագույն մորթով, իսկ մշակված տարբերակում՝ կապույտ գույն։ Մշակված տարբերակում ավելացել է նաև երկրորդ կապույտ ձիու խորհրդանշական պատկերը։ «Ցուլակը նրանց ձին էր, կապույտ մորթով, որի վրա, ինչպես աստղերը, ցրված էին սպիտակ նշաններ։ Երկար, ալիքաձև պոչ ուներ Ցուլակը։ Եվ ասում էին, թե մի հին և ազնիվ ցեղի շառավիղն էր այդ ձին, որ Սիմոնը գնել էր երկու տարի առաջ, փոխարե-

նր տալով իրենց էլը, մի անմայր հորթ, մի կարպետ և երկու բեռ ցորեն:

– Տուն եմ, երեխաների տեր եմ, առանց ձիու հնար չկա,– ասել էր նա և ուրախության ժպիտով առաջին անգամ ձին բաշել աղբյուրը: Յենց այդ օրն էլ նրան անվանել էին Ցոլակ, այն ձիու անունով, որ եղել էր նրանց տանը՝ Սիմոնի մանկության տարիներին... Ցոլակի ողորկ մարմինը և մորթու սպիտակ բծերը աստղալույսին մեղմ շողշողում էին» (ընդգծումները մերն են – Ա. Ա.)³: Իսկ նախնական տարբերակում այսպես է ներկայացվում ձին. «Չալկան նրանց միակ ձին էր, կարծիքի ու գնդիկ, կարմրագույն, պոչը երկար: Երկու տարի էր, որ Սիկին գնել էր, ավելի ճիշտ՝ փոխել էր էշի հետ, վրան էլ տվել էր մի հորթ, մի կարպետ, երկու բեռ էլ ցորեն» (էջ 533): Պատկերի տարբերակային համեմատությունից երևում են բակունցյան բառարկեստի՝ խոհական նոր տարածքների նվաճման իմաստային ներքին հոսքերը: Բառ-պատկերը ստանում է հետաքրքիր ժամանակային շարժ՝ ներկայից դեպի անցյալ, որտեղ խտացված է բակունցյան կենսափոխակերպության ընդգծված շեշտադրումը. մարդկային դժվարընթաց ճանապարհին միշտ ծնվում է կեցության՝ ծանր զգացողություններից դառնացած ներկա պահից դեպի անցյալ՝ մանկության՝ երանելի հույզերով պարուրված մաքրամաքուր ակունքները գնալու ցանկությունը: Կենսամտածողության այս շերտն է բացում ձիապատկերի փոխված գունային տարածությունը: Կարմիր ձի պատկերի գունաընկալման խոհական դաշտը ընդգրկում է մարդկային հարաբերությունների, մարդ-բնություն կապի արժևորումների այլ մոտեցումներ. ընդհանրապես կարմիր ձին ավելի խորհրդանշում է երիտասարդական երազներով ու կյանքի վայելումի տաք շնչառությունն ունեցող մարդու՝ երազի թևերին պատանեկան հոգու ճախրանքի զգացողությամբ համակված կենսակերպը: Իսկ Սիմոնի կյանքի պատմությունը ամենևին չէր ներդաշնակվում հուզապարունի այդ եռությանը: Նրա մաքուր, բնությանը ներ-

դաշնակ հուզաշխարհը փշրվում է կյանքի ծանր ու ցավոտ հարվածներից: Կապույտը բացում է նրա հոգու և բնության ձայների ներդաշնակ գոյապատումի խորհուրդը, որն, ավանդ, կեցության ճանապարհի ինչ-որ կետում աղճատվում է, և փոխվում են կապույտի ներմաստային սահմանները:

Կապույտի և սպիտակի գունաձևումների մեջ հյուսվում են հուզապարունի, ներաշխարհային հոգեվիճակների ինքնատիպ երանգներ, որոնց խորհրդավոր ալիքներում լսելի է դառնում մարդու և կենդանու կեցության նախաստեղծ գոյավիճակների, մաքրամաքուր հույզերի, մտապատրանքների նրբահյուս մեղեդին, որի ելևէջումների պտույտում հյուսվում է մանկության հեքիաթը՝ հուշերի թևերին մնացած երազ-պատրանքների քաղցրածոր լույսի ջերմությամբ հագեցած: Ցոլակ ձիու անվան կրկնությունը (այն Սիմոնի մանկության ձիու անունն էր) բակունցյան գեղագիտության մեկ այլ կառուցվածքային տարրի դրսևորում է. այն է՝ բառի մեջ իմաստային տևականության ժամանակային միահյուսումներից պատումի մեջ ծնվում է նույն հուզապարունի հոգևոր տարածությունը: Բակունցյան պատկերի մեջ կապույտի և սպիտակի գունաձևումները միահյուսում են Սիմոնի կեցության ճանապարհի շատ հեռավոր կետեր՝ մանկության և հասունության ափերի կենսահոսքերը: Սիմոնի մանկության եզերքի չքնաղ հեքիաթի լուսե տարածությունը վերահյուսվում է նրա կեցության՝ մանկությունից շատ հեռու տարածության՝ ներկայի մեջ: «Ձիու կապույտ մորթու սպիտակ բծերը աստղալույսի մեջ շողում էին» պատկերում կապույտի և աստղալույսի մեջ լողացող սպիտակի նրբահյուս միաձուլումից ծորում է հոգեթով մեղեդի, որի ալիքներում հյուսվում է բնության երկու տարրերի՝ մարդու և կենդանու կեցության ճանապարհի հոգևոր դաշնության ընթացքը: Սակայն կյանքի բարդ ու դժվարին պտույտում մարդու և կենդանու ներդաշնակ արարումի ընթացքն աղարտվում է (չարանեց պատերազմի օրենքները փլուզում են այդ հոգևոր

դաշնավորությունը. Սիմոնն իր կամքից անկախ ցավեցնում է կենդանուն), և սյուժետային զարգացումներին զուգահեռ՝ բացվում են կապույտ գունապատկերի իմաստային հոսքերը: Եթե պատումի սկզբում կապույտը մանկության երազ օրերի մաքրամաքուր զգացողությունների տարածությունն է, ապա հետո կապույտը դառնում է կյանքի օվկիանի խենթ փոթորկումներից ծնված հուզապարունների արտահայտման պատկերային դաշտ:

Պատմվածքում ընդլայնվում է կապույտի խորհրդանշային շերտը. պատումում ավելանում է երկրորդ կապույտ ձիապատկերը (այն պատմվածքի նախնական տարբերակում չկար), որը խորհրդանշում է բնության յուրաքանչյուր տարրի երազ-ցանկությունը՝ ազատաբաղձությունը. կապույտը դառնում է ազատության տեսլապատկերի խոհական ներհոսքային դաշտը: Երկրորդ կապույտ ձիապատկերը դառնում է դառն իրականության և բնության յուրաքանչյուր տարրի՝ դեպի ազատություն հավերժական ձգտումի պատկերային կենտրոնը: «Սի կապտավուն ձի՝ երկար, ծավլեծալ բաշով, բոլորովին մերկ, կատաղած վագում էր հրապարակով: Նա երամակի ձի էր, սնվել էր լեռներում, երբեք հեծվոր չէր ստեղծ մեջքին, սանձը չէր դիպել մոռպին, սմբակները պայտ չէին տեսել: Այդ ձին էին ուզում բռնել զինվորները... Գյուղացիները շունչը պահած, անսահման հետաքրքրությամբ դիտում էին կապտավուն նծույգի գազազած վագքը: Նրանք չէին թաքցնում իրենց հրճվանքը, երբ ձին թռչում էր օդակի վրայով: Նրանց բոլորի թաքուն ցանկությունն էր, որ ձին ճեղքեր զինվորների շղթան և հրեղեն հրաշքի պես աներևութանար, թռչեր դեպի հայրենի լեռները և այնտեղից պղնձաձայն վրնջար հատուցման և անսահման ազատության երգը» (ընդգծումները մերն են – Ա. Ա.) (էջ 304): Յետաքրքիր է այստեղ կապտավուն ձի և կապտավուն նծույգ պատկերային անցումը: Կապույտի խոհական շրջածիրում ձի-նծույգ հոմանիշային ձևանցումները ընդգրկում են կեցության ներկա պահից (ձի), որը շատ ցավոտ է, դեպի երազ-տեսիլներ (նծույգ) ընթացող ժամանակային հոսքերը, որտեղ աճում, խտանում են գույնի ներքին ձայները, որոնց մեջ լսելի է դառնում կապույտի գունաձայնումի ամենաուժգին ձայնային թրթռո՞ղ՝ ձիու պղնձաձայն վրնջո՞ղ՝ որպես անարդարության հատուցման և ազատության խորհրդանիշ: Կապույտի պղնձաձայն հնչեղությունը դառնում է գունաձևումի գազաթևակետը, ուր «մեռնող նծույգի ջինջ աչքերում ընդմիջտ սառչում էր հեռվի կապույտ լեռնաշխարհը...»: Իսկ ցավի ու երազանքի միջև ընկած պատկերային տարածության մեջ,

Կապույտի և սպիտակի գունաձևումների մեջ հյուսվում են հուզապարունի, ներաշխարհային հոգեվիճակների ինքնատիպ երանգներ, որոնց խորհրդավոր ալիքներում լսելի է դառնում մարդու և կենդանու կեցության նախաստեղծ գոյավիճակների, մաքրամաքուր հույզերի, մտապատրանքների նրբահյուս մեղեդին, որի ելևէջումների պտույտում հյուսվում է մանկության հեքիաթ՝ հուշերի թևերին մնացած երազ-պատրանքների քաղցրածոր լույսի ջերմությամբ հագեցած:



Լ դիպաշարի զարգացումներին զուգահեռ, ծնվում են բակունցյան մյուս ձիապատկերները՝ մոխրագույն ձի և սպիտակ ձի: Մոխրագույն ձիապատկերում գույնը բացում է խոհական նոր միջավայր, գույնի գեղագիտական ներուժի սահմանային տարածքները ընդգրկում են կյանքի, մարդկային հարաբերությունների գնահատման նոր շեշտադրումներ: Գունաբովանդակության մեջ սկիզբ է առնում խոհափիլիսոփայական նոր շերտ, որը բացում է արդարության և անարդարության սահմանագծին ձևավորված մարդկային տարբեր աշխարհընկալումներ: Գունապատկերն այստեղ ունի ներքին կոնֆլիկտ, որը տրոհվում է երկու հակադիր բևեռների՝ բացելով մարդկային հարաբերություններում հավերժորեն գոյապայքարի երկու իրարամերձ շերտեր: Գունապատկերի մեջ վեր են հանում մարդկային գոյակերպի երկու տեսակ. մեկը՝ Սիմոնը՝ հոգսի տակ կթած, սոցիալական խնդիրներից կուչ եկած, բայց արդարության, ազնվության զգացողությունը հոգում ամուր, անխաթար պահած՝ որպես արդար կեցության խորհրդանիշ, մյուսը՝ Կոստանո աղան՝ ընչաքաղցության, ազահության մոլուցքին խարսխված անարդարության, խաբեության, կեղծիքի կրող: Կոստանո աղա-Սիմոն և սպիտակ ձի-մոխրագույն ձի պատկերային հոսքերը հանգեցնում են բակունցյան գունամտածողության մի նոր դրսևորման՝ գույնի՝ որպես խորհրդապատկերի հակադիր ընկալման տիրույթից դիտարկմանը: Հեղինակը գունապատկերի ներքին խորհրդանշային շերտերի հակառակ կիրառմամբ շեշտադրում է մարդկային կեցության իրարամերձ ձևերի բազմափոփոխությունները՝ որպես արդարության և անարդարության հավերժ բախման ընթացք: Գույնը խորհրդապատկերի կիրառման հակադիր կշռույթով պատում ավելի ազդեցիկ է դառնում: Սպիտակ ձիապատկերին զուգահեռվում է սև գույնի խորհրդանշային տարածությունը՝ դառնալով պատմվածքի գաղափարական հարցադրումների ելակետային պատկերային միավոր: Թշվառության ճիրաններում գոյության հասապագայի որոնումների և ստի ու կեղծիքի հիման վրա կյանքը վայելող հարստահարողների բախման հիմքի վրա են խարսխվում «Սպիտակ ձին» պատմվածքի պլոտային ընթացքները:

Եվ ձևավորվում է աշխարհի արժեքների, մարդկային հարաբերությունների գնահատման բակունցյան չափանիշը՝ հաստատելով ժամանակների խելահեղ հողմերում արդար աշխատանքի կողքին միշտ թևածող հավերժական անարդարության գոյությունը: Մարդկային հարաբերությունների բախման այս պահը Բակունցը պատկերել է հետաքրքիր գուևավորմամբ:

«Արևն արդեն թեքվել էր, երբ գյուղացիները ճանապարհի ընկան տուն... Նրանք անընդհատ բարձրանում էին լեռը, կարծես պիտի գնային մինչև մութ երկինքը: Մայրամուտի արևը աչ կողմից նրանց ոսկևորել էր: Նեղ արահետով գնում էին նրանք իրար հետևից, ինչպես կռուսի երամ, և թվում էր, թե բեռների տակ կթած սև ստվերները հավիտյան պիտի բարձրանային մութ լեռը, մինչև մի խավար անդունդ հանկարծ կկաններ նրանց» (ընդգծումը մերն է – Ա. Ա.) (Էջ 307): Սև ստվերներ պատկերում տեսանելի է դառնում հերոսների ծանր հոգեվիճակը. կորցրածի անդառնալի մորմոքը նրանց կյանքի խավարն է ձգում: Նրանց հոգեվիճակը ծովվում է մայրամուտի հրդեհվող այլքներին, որոնք իրենց անհուն թևերին պահում են մարդկային ցավը: Կոտրված, անմորմոք ցավ կա նրանց աչքերում, մարդը մի հույս, որի միջից վեր է հանում կյանքի անարդար օրենքների շղթայում փշրված մարդկային հոգին:

Երկարաշունչ պատկերներ չկան պատմվածքում, սակայն ընդգրկում է դառնում խոսքը, գունապատկերը՝ տիպական և հագեցված: Բակունցյան տողերում ցավայի եղելությունը չի դիտվում աշխարհի շուրջ լայն խորհրդածությունների ոլորտում, ուղղակի սպիտակ ու սև գունային խորհրդապատկերների մեջ լսելի է դառնում մարդկային ցավը, որում աշխարհի հավերժ կրկնվող անարդարության խարանդ բախվում է մարդկային ազնիվ մղումին, որն անընդհատ իր պտույտն է գործում մարդկային գոյության հավիտենական շղթայում: Բակունցի բառարկեստի հնարանները ամբողջանում և կատարյալ են դառնում կյանքի երկու բևեռների՝ սևի ու սպիտակի զուգորդման պատկերում: Մի կողմում թշվառության մեջ խարսխվող գեղջուկը՝ որպես «սև ստվեր», մյուս կողմում արդար աշխատանքը հարստահարող ուժը՝ որպես կյանքի բարձունքներում թևածող «սպիտակ մարմարիոնե արձան»՝ սպիտակ ձին: Այս պատկերը առաջին տարբերակում դարձյալ թույլ է, անարկեստ. «Սպիտակ ձին խաղալով էր սլանում, ասես սմբակները գետնին չէին դիպչում: Ու եթե մի քիչ էլ վերև թռչեր, պիտի կորչեր Նարնջագույն ամպերի մեջ»: Երկրորդ տարբերակում պատկերն ավելի տպավորիչ է, սարսազող, որը հնչում է որպես սառը ապտակ՝ ուղղված աշխարհի անարդար օրենքներին: «Սպիտակ ձին մի վայրկյան ցուլաց մթնոլ արևի շողերում և չքացավ դեպի Նարնջագույն ամպերը: Կարծես մարմարիոնե մի արձան արշավում էր դեպի պատվանդանը, որի անհաս բարձունքից ահ ու սարսափ մաղի ռաժիկ գյուղացիների վրա» (ընդգծումը մերն է – Ա. Ա.) (Էջ 308): Այստեղ բառարկեստի նվաճումը ակնհայտ է, պատկերը՝ ինքնատիպ: Սպիտակի և սևի այս գունա-

յին ելակետներով պահը դառնում է երկույթի խտացում, ճշմարիտ իրավիճակ՝ ծանր ու տանջող: Գեղարվեստական պատկերի, գունաձևումների մեջ խտանում են մարդկային զգացումը, հույզը, ցավը, ապրումը՝ իր բոլոր դրսևորումներով: Սևի ու սպիտակի բախումից սկիզբ է առնում լույսային բորբոքվող մի ցատկ, որն անգոր է փշրելու անարդարության կապանքները, կյանքի դեմ ըմբոստացած, անարդարության ամենակույ շնչից սարսափած գյուղացիների դառնացած «սև հոգիները» անգոր են պայքարելու կյանքի բարձունքներում թևածող «սպիտակ անարդարության դեմ»: Եվ այդ ցավից դեպի «Նարնջագույն ամպերն» է ձգվում մի խավար լույսություն՝ որպես նզովք դաժան իրականության: Եվ այս պատկերը բակունցյան տողերում հնչում է որպես մարդկային հարաբերություններում գեղեցիկ կործանող ահավոր չարիք: Սևի ու սպիտակի հակադրումով Բակունցը հաստատում է մարդկային հարաբերություններում չարի ու բարու, արդարության և անարդար ուժի բախման հավերժական ընթացքը:

«Բակունցը գույնի ու խոսքի միջոցով հասարակ երևույթների մեջ արտահայտում է մեծ կեցության ոգին և մեծ կյանքի ներդաշնակ ուժը»⁴:

Սպիտակ ձին պատկերային հետաքրքիր գունային լուծումներ է ստանում Հր. Մաթևոսյանի գեղագիտական համակարգում /«Անկիծոր»/: Եթե Բակունցի կերտած ձիապատկերը՝ Ցուլակ ձին, կապույտ գույն ուներ՝ աստղալույսի մեջ շողացող սպիտակ բծերով, ապա Մաթևոսյանի ձիապատկերը ուներ սպիտակ գույն՝ կապույտ աստղերով: Ձիապատկերը՝ որպես խորհրդանիշ, տեսանելի է նաև մաթևոսյանական պատումում: Ձիապատկերի ներմաստային տարածության մեջ խտացված գաղափարական հարցադրումների տեսանկյունից հարազատանում են բակունցյան կապույտ ձին՝ Ցուլակը, և Մաթևոսյանի սպիտակ ձին:

Նշեցինք, որ կապույտ ձին՝ Ցուլակը, խորհրդանշում է մարդու և կենդանու մաքուր, անաղարտ, ներդաշնակ կեցության ուժը. անձայն միաձուլվում են մարդկային հոգու մեղեդին և բնության տարրերը:

Մաթևոսյանի կերտած կապույտ աստղերով սպիտակ ձին ևս խորհրդանշային նույն ծիրն ունի, ինչ բակունցյան պատումում: Մաթևոսյանական գեղագիտության մեջ սպիտակի և կապույտի գեղաձևումների մեջ դարձյալ խտացված է արդար աշխատանքի, ազնիվ մղումների, մարդու և բնության կապի հոգևոր ներդաշնակության խորհուրդը: Իգնատ-Սպիտակ ձի և Սիմոն-Ցուլակ ձի կապը երկու հեղինակների մոտ դառնում է մարդու և կենդանու ներքին ձգողական ուժի, աշխարհիկ նույն կետից նայելու, կեցության ձևի խաղաղ, հանգիստ ընթացքի, արա-

րումի, աշխատանքի ներքին խայտանքից հարազատացած տաք հույզերի ջերմության խորհրդանշ: Սակայն երկու դեպքում էլ տեսնում ենք մարդկային նենգ օրենքների հետևանքով աղարտվում է բնության և մարդու ներդաշնակ շնչառության խորհուրդը: Բակունցյան պատումում պատերազմի հարկադիր պահանջը պատճառ դարձավ այդ ներդաշնակ ճանապարհի փլուզմանը, մաթևոսյանական պատումում՝ նոր հասարակագի՝ խորհրդային երկրի կառուցողական նոր օրենքները: Կոլխուզ- սովխուզ կեցության ձևերի անցումները պահանջում էին, որ յուրաքանչյուր տուն կարող էր ունենալ միայն երեք ոչխար, մի կով, իսկ ձին թողնեցին «դիրեկտորի հայեցողությանը»: «Սա թույլատրեց, պայմանով՝ պետք է արտադրար տալ՝ ամիսը հարյուր ռուբլի: Ամեն տուն մի ձի ուներ, ծախեց, մթերեց: Եժան, դեն ածին»⁵: Եվ ձիու հետ հարազատի տաք շնչառությամբ կապված Իգնատը ստիպված ձիուն փոխարինեց ոչխարներով: «Ձիուն շոյելով գնաց, ոչխարներին հայիոյելով եկավ»/էջ 26/: Աղարտվում են կեցության այն տաք ալիքները, որտեղ մարդկային հոգու և կենդանու հարազատ շնչառությունն էր ... Իսկ այդ տաք շնչառությունը այնքան ցանկալի էր երկուսի համար էլ, որ հեռավորության ու բաժանումի սահմանները անկարող են նրանց միմյանց օտարացնել: Եվ մի գիշեր Իգնատի համար օդը լցվեց տաք ու հարազատ մի կանչով: Կապույտ աստղիկներով զամբիկը փախել էր նոր տիրոջից ... օդը թրթռաց կարոտի ծարավից: «Ել չես գնա, Խալլու ջան...»: Սակայն նոր տիրոջ հորդորներին ի պատասխան՝ ձին պետք է վերադառնար նոր տիրոջ մոտ... «Ձին չէր գնում, ետ-ետ էր նայում, խրիսնջում: Իգնատը նորից լցվեց»/ էջ 27/:

Երկու հեղինակների մոտ էլ գեղարվեստական պատկերը տրոհվում է հերոսի հոգեվիճակի, հուզապրումների ներմաստային շարժից... Երկու ստեղծագործություններում էլ ձիապատկերի մեջ խտացած բանաստեղծական մտածողության յուրօրինակ շնչառությունը խոհական կենսառաք ալիք է մղում գեղարվեստական խոսքի սյուժետային երակները: Յուսվում է հոգևոր դաշնության, փոխադարձ նվիրումի, բաժանման ներքին տաճարների, ցավի ու տիրության բանաստեղծական համակարգ՝ պարուրված հոգեման մեղեդայնությամբ:

Բակունցյան գեղագիտության մեջ սպիտակ գույնը/ սպիտակ ձի/ պատկերի խորհրդանշային տարրալուծումների ընթացքում դիտարկվում է գունամոտածողության գնահատումների հակադիր ներհոսքային կետից: Այսինքն՝ սպիտակ գույնը, որը խորհրդանշում է մաքրություն, ազնվություն, անկեղծություն, արդարություն, բակունցյան պատումում դուրս է գալիս խորհրդանշային այդ տիրույթի՝

տեղափոխվելով իմաստային հակադիր բևեռ: Պատմվածքում սպիտակ գույնը դառնում է կեղծիքի, խաբեության, անարդարության, անազնվության խորհրդանշային պատկերային տարածություն: Մաթևոսյանական խոսքում սպիտակ գույնը մնում է խորհրդանշային կենսահոսքի նախնական ընկալման դաշտում:

Սպիտակ գույնի խորհրդանշային մաթևոսյանական հետագիծն է նաև Մ.Գալշյանի «Սպիտակ ձին» անավարտ վեպի դիպաշարի հիմքում: Գալշյանական պատումում նույնպես ձիապատկերի գունաձևումը հանդես է գալիս փոխտիպայական, խոհական բովանդակությամբ: Գալշյանն էլ, ինչպես Ակ. Բակունցն ու Յր. Մաթևոսյանը, աշխարհադեհատումը սկսում է մարդու և բնության բանաստեղծական ընկալումից, նա էլ աշխարհը, մարդկային կյանքը արժևորում է տիեզերական լույսի ներքո՝ ցավով ընդգծելով հաճախ տրոպիկ գեղեցկության իրողությունը: Գալշյանը նույնպես մարդկայնորեն բարձր արժեքները, բարոյական գեղեցկությունները, բնության և մարդու անբաժանելի կապի խորհուրդը հայտնատեսում է բնությանը մոտիկ կանգնած, բնության տաք շնչառությունը զգացող, բնության հրաշք գույները, բույրերը, ձայները ընկալող, իրեն այդ ամենի տերը համարող, արարումի խորհուրդն արժևորող մարդկանց ներաշխարհում, ազգային գոյապատումի այն շերտերում, ուր կեցության ձևերի մաքրամաքուր ալիքները հարստև սփռում են բարության, գեղեցկության սերմեր:

Գալշյանի վեպում սյուժետային հոսքը ներքին շարժով բացվում է լարված ճակատագրերի, կենսականորեն և հոգեբանորեն բարդ և դրամատիկ շերտերի անընդհատ խորաթափանցումներով: Գալշյանական ձիապատկերը նույնպես սպիտակի խորհրդանշային զարգացման բնականոն ընթացքն է ստանում: Գունային միավորը ներմաստային ընկալման շրջանակում իր խոհական տարածության մեջ ամբողջացնում է մարդկային կեցության խոր շերտերը՝ սոցիալական ծանր կյանք, երազի և իրականության բախում, ազգային ճակատագրի ողբերգական ինչեղություն, տրոպիկ գեղեցկությունների լուռ շնչառություն:

Գալշյանական պատումն սկսվում է ձիու և տիրոջ՝ Աստղիկի լուռ գրույցով: Աստղիկի ամուսինը, սոցիալական խնդիրներով պայմանավորված, օտար ափերում է հանապազույց հացի խնդիրը հոգում: Ամուսնու՝ տնից հեռու լինելու հանգամանքը նրա սրտով չէ, սակայն գյուղում նա միակը չէր այդ կարգավիճակում: Տխուր, հոգաշատ օրերի շղթան շիթ առ շիթ քամում է նրա ներքին ուրախության զգացողությունը: Ձիու հետ գրույցում բացվում են նրա հոգաբարձու կյանքի ակունները: «- Դե, վրնչա, վրնչա,

անտեր ձի, վրնչա,- կինը ձեռքի հետ մի կողմ հրեց ամուսնու նամակը, որ անցած երեկոյից բացված էր սեղանին, ամանաճամանի արանքում,- ինչքան ուզում ես վրնչա, քո տերը սա չէ՞: Նա շեղ, մի տեսակ գողունի ու մեղանչական հայացք դիպրեց ամուսնու նամակին, որ պահ առաջ հրել էր:

Քո ձայնը նրան չի հասնում, Սպիտակ ձի, որքան ուզում ես վրնչա...»⁶:

Նրանց լուռ գրույցը շարունակվում էր ամեն օր. «Ձին միզը ձգել էր Աստղիկի ուսն ի վեր և փակել աչքերը»/ էջ 212/: Ժամանակի խելք պտույտի մեջ նրանք ավելի էին հարազատանում միասին կրելով ընտանիքի հոգաշատ բեռը:

Գալշյանական պատումում սպիտակ գույնի խորհրդանշային դաշտում խտանում են ստեղծագործության գաղափարական հարցադրումների ներքին հոսքերը: Աստղիկի հոգաշատ կյանքի պատումային հյուսվածքին զուգահեռվում են հայի պատմական իշխողության, ազգային ինքնության, հայոց կենսափոխտիպայության ինքնատիպ շերտերը: Ծերունի Սգրեն, ով հայի հավաքական կերպարն է խտացնում, հոգու խռովք ունի. խռովք ինքն իրենից, զավակներից, աշխարհից, ճակատագրից... «Հովիվը աչքերը տրորելով երկար նայում էր իր տանը (որը կարծես ամոթից կուչ էր եկել գույնզգույն դուռ ու պատուհաններով, տանիքներով տների արանքում) և իր դատարկ, անպտուղ տնամերձին, որը միշտ նրան երևում էր հորի մակադատեղի» /էջ 223/: Իսկ կար ժամանակ, երբ այդ ավեր տունը ընտանիքի ջերմությունից, աշխատանքի բերկրանքից, կյանքի տաք շնչառությունից լուսավորված մի օջախ էր. «Եվ Սգրեն սայլը բռնում էր կապույտ արշալույսի միջով, անիվները՝ ուսուսի քայլող ջուխտակ եղբայր, ճուլ-վըստ, ճուլ-վըստ՝ մանում էին դաշտի շաղոտ ճամփան, թռչունները սայլի երկնքում պար էին բռնում, նրանց կորեկատիկ աչքերից, շաղկապ կտուցներից երգ էր կաթում ոսկեհատիկ պարկերին, ճնճողվները երգ ու պարով Սգրենի ասլան տղերքին, Սգրենի սայլն ու սերմացուն ուղեկցում էին մինչև արտ և ցվվում տափտփվում սև ակունների մեջ: Սև ակոսով ծոցվոր արտերը, արշալույսի շաղով ու հույսով օծված Սգրենի արտերը: Տղերքը սուս ու փուս կանում էին գործի. Առաքելը շարունակում էր կիսատ ակոսը,- հի՛,եզո ջան, հի՛,- Առաքելը ճիպուտ չէր կացնում եզների, Եղոն սերմացուն լցնում էր գոգնոցը և առաջին բուռը շաղ էր տալիս դեպի երկինք, արդարանի կողմ, Սգրեն արտեզին նստած նայում էր իր արտին, իր որդիներին ու սպասում արևածագին...» /էջ 215/:

Գալշյանական պատկերի մեջ մեծ աշխարհի այս փոքրիկ անկյունում հյուսվում է կյանքի չբնադադույն



ԽՈՍՔ ԲԱԿՈՒՆՑԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բակունցը՝ Կինոսցենարիստ



ՎԱՅՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Բակունցը նշանակալի ավանդ է ներդրել հայկական կինեմատոգրաֆիայի ձևավորման մեջ: «Հայֆիլմում», որպես սցենարական բաժնի վարիչ, խթանել է ազգային կինոյի զարգացումը, զբաղվել կինոդրամատուրգիայով: Նա ոչ միայն կազմակերպում էր ազգային կինոյի համար կինոսցենարներ ստեղծելու դժվարին գործը, ոչ միայն խմբագրում էր կինոսցենարները, այլև ինքը զբաղվում էր կինոդրամատուրգիայով:

Եթե խոսենք Բակունցի տարեգրության էջերը՝ իմանում ենք, որ 1930թ. Բակունցի «Խաչի ստրուկները» սցենարով նկարահանվում է «Ան թևի տակ» համր կինոնկարը: Բեմադրիչ՝ Պ.Բարխուդարյան:

1933թ. Բակունցի սցենարով նկարահանվում է «Արևի գավալը» կինոդրաման՝ բեմադրիչ Պ.Բարխուդարյան:

1935թ. ելույթ է ունենում հայկինոյի հարցերին նվիրված ասուլիսում:

1935թ. սեպտեմբեր. զարնանը Ա.Խանջյանի արած առաջարկով սկսում է գրել «Չանգեզուր» կինոսցենարը: Հեղինակային տարբերակը ավարտում է 1936-ի հունվարի 23-ին, ըստ իր հիշատակարանի՝ «օգնականությամբ զանգեզուրցի մի խումբ կոմունարների, որոնց հեղինակը երախտապարտ է»:

1935թ. Բակունցի սցենարով (համահեղինակ՝ Ե.Գրեբեր) նկարահանվում է «Ալագյազ» ֆիլմը: Բեմադրիչ՝ Զ.Ժամիարյան:

1936թ. մարտ-ապրիլ 34/Բ/4 Կենտկոմում մի քանի անգամ քննարկվել է «Չանգեզուր» սցենարը: Արված դիտողությունների և առաջարկությունների համաձայն Բակունցը շարունակել է աշխատանքը՝ վերջնական տարբերակը ստեղծելու համար:

1936թ. 9 մայիս- Հայկինոյի հանձնարարությամբ երեք ամսով պետք է գործուղվեր Մոսկվա՝ «Չանգեզուր» սցենարը լրամշակելու համար: Որդու հիվանդության պատճառով մեկնում է մայիսի

սի կեսին (հավանաբար՝ 15-ին):

1936թ. 2 հունիսի-Մոսկվայում՝ «Նա-ցիոնալ» հյուրանոցում, Բակունցը հանդիպում է ՀԿ/Բ/4 Կենտկոմի առաջին քարտուղար Խանջյանի հետ: Քննարկում են Ն.Ստեփանյանի ձեռքակալության հարցը, որը տեղի է ունեցել մայիսի 21-ին: Խոսում են նաև «Չանգեզուր» սցենարի մասին: Ն.Ստեփանյանի ձեռքակալությունից հետո Մոսկվայում Բակունցի վրա սահմանվում է ՆԳԺԿ մարմինների հսկողություն:

1936թ. Մոսկվայից անսպասելի մեկնում է: Հայաստանում նրան սպասում էին ՆԳԺԿ գործակալները: Հավանաբար հասել է մինչև Թիֆլիս, այնտեղից գնացել Դիլիջան, ուր վերջին հրաժեշտն է տվել ընտանիքին: «Չանգեզուր» սցենարի աշխատանքը մնում է անավարտ: Հետագայում Բակունցի կյանքի հիման վրա ֆիլմի սցենարը գրում են Հ.Բեկնազարյանը, Յա.Դուկորը և Վ.Սողոմյովը: Նկարահանումներն ավարտվում են 1938-ին:

1936թ. 10 օգոստոսի - Երևան Նալբանդյան 80 հասցեով խուզարկվել է Բակունցի բնակարանը: Ըստ արձանագրության՝ տարել են վեց նամակ, երեք նոթատետր, մեկ ընդհանուր տետր, երկու ալբոմ, յոթ միավոր տարբեր գրառումներ, «Չանգեզուր» սցենարի երեք «վարիանտ» և այլ նյութեր:

«Չանգեզուր» բեմագրի մեծ տարբերակի մեքենագիր միակ պահպանված օրինակը գտնվում է կենտրոնական պահոցում (ֆոնդ 704): Կա նաև փոքր (15 էջ) տարբերակի միակ պահպանված օրինակը, որ պահվում է միևնույն պահոցում:

Հիշենք, որ «Չանգեզուրը» գրվեց այն օրերին, երբ Բակունցի դեմ կատարվող ամբաստանությունները սաստկանում էին, և Ա.Խանջյանն ու գրողի մյուս բարեկամները հորդում էին նրան շուտ ավարտել Չանգեզուրի քաղաքացիական կռիվներին նվիրված այդ բեմագիրը՝ հակառակորդներին լռեցնելու նպատակով: Ծրագրված էր կինոնկարահանումը նույնպես արագ ավարտել, որպեսզի 37թ.

հեքիաթը, ուր աշխատանքի արարումի տաք շնչառությունը արևի շողով ու շաղով է արբեցնում մարդկային հոգին, մարդու հոգաբույր երազները ձգվում են դեպի լուսե եզերքներ՝ ամբողջացնելով օրերի դաշնության շղթան: Սակայն մեծ աշխարհի աղետները փշրում են այս փոքրիկ մոլորակի՝ հայաբույր աշխարհի լուսավոր հեքիաթը: Պատերազմը երազաթափ է անում խաղաղ, ստեղծարար հոգիները, զավակների կորստի, օջախի մարման ներքին տագնապները ծվատում են ծեր հովվի սիրտն ու հոգին: Եվ ցավի ահագնացող ալիքների մեջ, միևնույն է, նա զգում է իր արտերի կենդանի շունչը այնքան մոտիկ, այնքան տաք, ինչ-

պես իր որդիների շնչառությունը... Ծեր հովվի տխուր օրերի գրուցակիցը դարձյալ կենդանին է՝ Բորե էջը: «Էջը, գլուխը ոտքերի արանքը խցկած, լսում էր տիրոջ երգը: Նրան թվում էր, թե տերը իր համար է երգում...» /Էջ 216/:

Կենդանապատկերի գունային - խոհական իմաստավորումների շղթան հասնում է իմաստային տրոհումների հիմնական տիկն. որտեղից էր Սպիտակ ձին: Հայոց հողի այս նվիրական անկյունում մի օր հայտնվել է Սպիտակ ձիավորը՝ Չորավար Անդրանիկը՝ իր գործով: Գյուղապետը, ի նշան հարգանքի, մի շարունակ ոսկի է կախել ձիու լանջին: Չայրացած զորավարը հրամայել է ոսկիների շարունակ հանել

ձիու վզից, որովհետև «Իր Սպիտակ ձին ճերմակ պսակաշորով հարս չէ, այլ կռվի ու խաղաղության դրոշակ»: «Եվ գյուղի ծերունիները դեռ մի առասպել են պատմում. այն գիշեր, երբ Անդրանիկը դարձրել է առեղ Աղբաբաբի վրա, այդ գիշեր, մթնշաղից մինչև աղամամուռ, Աստղասարը ճառագել է և որպես թե այդ ճերմակ շողքը եղել է Չորավարի Սպիտակ ձին: Այլանը: Լեզենդը՝ լեզենդ, բայց իրողություն է, որ Անդրանիկի հայտնվելուց ու գնալուց հետո գյուղում սպիտակ ձիերը շատացան և տարիներ հետո գյուղի բոլոր ձիերը ճերմակ էին: Եթե ձի է՝ պետք է սպիտակ լինի:

Եվ Աստղիկենց ձին, Անդրոյի ձին, Ան-

նոյեմբերի 7-ին, Յոկոհամայնի հեղափոխության 20-ամյակի օրը, կինոնկարը ցուցադրվի: Գործն արագացնելու նպատակով հյուրանոցում գործի տրամադրում են սեյյակ, քանի որ երեք սեյյականոց բնակարանում նրա առանձնասեյյակը տրամադրված էր ծանր հիվանդությամբ պառկած որդուն՝ Սևադային:

Ձերբակալությանը նախորդող երկուսուկես ամսվա ընթացքում Բակունցը զբաղվել էր «Չանգեզուրի» բեմագիրը մասնագետների ցուցադրումի օգնությամբ մշակելու, այն հաստատել տալու գործերով: Ուստի հետևելով այդ գործերի ընթացքին՝ հետևած կլինե՞նք այդ ամիսներին գործի կյանքի դեպքերին:

1936-ի սկզբներին «Չանգեզուրի» բեմագիրը երկու անգամ բնակարկվել է ԶԿ(Բ) Կ Կենտկոմում՝ Ա.Խանջյանի նախագահությամբ: Ապա որոշվել է, որ Բակունցը մայիսի սկզբին պետք է մեկնի Մոսկվա՝ կինոմասնագետների հետ բեմագիրը բարելավելու, այն հաստատել տալու և բեմադրող Յ.Բեկնազարյանի հետ խորհրդակցելու համար: Բակունցի մեկնումն ուշանում է որդու հիվանդության, ինչպես և կուսակցական տոմս ստանալու հետ կապված ձգձգումների պատճառով:

Կենտրոնական դիվանատան վերը նշված ֆոնդում պահպանված են բավական թվով փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս հետևելու դեպքերի ընթացքին: Մոսկվայից Բեկնազարյանը հեռագրելով խնդրում է ՅԽՍՀ Ժողկոմխորհին առընթեր կինոարդյունաբերության վարչության պետ Դ.Դևուկունուն արագացնել Բակունցի մեկնումը, քանի որ հակառակ դեպքում կինոնկարը նախատեսված ժամանակում չի կարող ավարտվել: Մայիսի 15-ին Բակունցը մեկնում է Մոսկվա, իր հետ տանելով բեմագիրը: Մոսկվայում սկսում են բեմագիրը մշակելու և հաստատել տալու աշխատանքները, որոնք խմացվում են Դ.Դևուկունու և Յ.Բեկնազարյանի փոխանակած հեռագրերից: Եվ հանկարծ հուլիսի 17-ին

Դևուկունու Բեկնազարյանին հեռագրում է. «Անմիջապես ուղարկե՞ցե՞ք «Չանգեզուրի» վերջին տարբերակը»: Բեմագրի օրինակը ուղարկում է Երևան:

Իսկ օգոստոսի 1-ին պաշտոնատար անձ Ուսինկին Մոսկվայից հեռագրում է Երևան. ««Չանգեզուր» բեմագրի հեղինակը Մոսկվայից անսպասելի մեկնեց: Խնդրում եմ տեղեկանա՞ք»: Յիշենք, որ մինչև այդ հուլիսի 9-ին տեղի էր ունեցել Ա.Խանջյանի սպանությունը:

Յետագայում «Չանգեզուրի» բեմագիրը պատվիրվել է Յ.Բեկնազարյանին, որը պետք է օգտագործեր Բակունցի գրածը («արդեն հավաքված նյութերի օգտագործմամբ»): Բեկնազարյանը համաձայնել է և անցնել գործի:

«Չանգեզուրի» այդ տարբերակը նկարահանվել է հիմնականում 1937թ. ընթացքում և չի ավարտվել ըստ նախատեսվածի՝ Յոկոհամայնի հեղափոխության 20-ամյակի հոբելյանին, ավարտվել է 1938-ին և նույն թվականին էլ սկսել է ցուցադրվել:

Բակունցի գրած բեմագիրը (մեծ և փոքր տարբերակներ), անշուշտ, գործի ստեղծագործությունների մեջ շատ թեթիչ աչքի ընկնող տեղ չի զբաղեցնում: Թե՛ գեղարվեստական տեսակետից ընդհանրապես և թե՛ մասնագիտական-բեմագրային տեսակետից հազիվ թե այն որևէ բնութային բռնի: Նկատելիորեն անմշակ է. կան փաստական, ժամանակագրական անձնությունների, արհեստականություն: Գործն օգտագործել է իր երկերից առանձին տեսարաններ: Բայց բեմագրում բացակայում է Բակունցի ստեղծագործություններին հատուկ արվեստի շունչը: Կան լեզվական օտարաբան արտահայտություններ. օրինակ, «Նրան դժվար է այդպես խմելը», «ինչ-որ նվագում է», «մայրը վազում է դեպի որդուն» և այլն:

Այս բեմագրում կան բակունցյան երկերից հայտնի անուններ՝ Աթա ապեր, Բադի, Չետանց, Վանես, Պուզան, Սուա, Մինա, սակայն սրանք սոսկ նույնանունություններ են, այսինքն՝ սոսկ հա-

մընկնում են անունները, և բնավ նույն կամ նման կերպարների մասին չէ խոսքը: Օրինակ, այս բեմագրի Աթա ապերը միայն անունով է հիշեցնում «Եղբայրության ընկուզենիների» հմայիչ հերոսին: «Չանգեզուրում» այդ գործող անձը զուրկ է բակունցյան գեղջուկ կերպարների կենդանությունից, իրապատում մարդկային հատկանիշներից, և ձևված է ըստ «մարգարեախոս» ծերունիների այն կաղապարի, որպիսին օգտագործում էին նույն շրջանի այլ գրողներ:

Բեմագրում կան նաև նախակերպարներ ունեցող հերոսներ. դրանցից է գլխավոր հերոս Մակիչը, նրա համար նախակերպար է եղել Չանգեզուրի բաղաձայնական պատերազմին մասնակից Մակիչ Մաշուկյանը, որը սպանվել է 1920թ. նոյեմբերին Գորիսի մոտ: Սպարապետի համար նախակերպար է եղել Նժդեհը և այլն:

Հայտնի է, որ Բակունցը ելույթ է ունեցել Հայկինոյի գործունեության մասին բանավեճի ժամանակ, որ տեղի է ունեցել 1936 թվականի ապրիլի 10-ին և 11-ին: Հիմնական զեկուցումով հանդես է եկել Հայկինոյի դիրեկտոր Դ.Դևուկունու, ելույթ են ունեցել Յ.Բեկնազարյանը, Հայ-Արտյանը, Ա.Բակունցը և ուրիշներ: Ա.Բակունցն իր ելույթում ընդգծել է, որ «Հայկինոյի արտադրությունների ոչ բարձր որակը պիտի բացատրել ոչ միայն գաղափարական և այլ սխալների, սցենարիստների՝ կյանքից կտրվածության և մեր մշակույթից անտեղյակ լինելով, այլև ժամանակի անխուսափելի պայմաններից, երբ Հայկինոն իր ժապավենների արտադրությամբ մրցման էր դուրս գալիս կարի գործարանի հետ»: Բակունցն իր ելույթում շեշտել է նաև այն միտքը, թե ինչպես ինքը և շատ գրողներ սկզբնական շրջանում կինոդրամատուրգիան համարել են հեշտ և միաժամանակ գրողի համար անարժան մի գործ, բայց նա արդեն ըմբռնում է կինոարվեստի՝ իբրև սինթետիկ արվեստի, ներկայացրած չափազանց մեծ դժվարությունները:

||

դրյի պապի այն ժամանակ ձեռք գցած սպիտակ ձիու վերջին շառավիղն էր» / էջ 249-250/: Սպիտակը՝ որպես կռվի ու խաղաղության խորհրդապատկեր, գերիշխող է դառնում պատումում՝ դառնալով հայրենասիրության, ազատաբաղձության, խաղաղատենչության հարատև շեփորակիր.... Անդրանիկի այցից հետո գյուղում շատանում են սպիտակ ձիերը, այսինքն՝ այնքանով է մեծ գորավարի գաղափարական հունձքը՝ տալով ապագայի կենարար սերմեր, որոնք նորովի են ծլարձակվելու՝ դառնալով վաղվա հաղթանակների կերտողը....

Այսպիսով՝ գույնը Բակունցի, Մաթևոսյանի, Գալշոյանի պատումում դառ-

նում է գեղագիտական-խոհական ընկալման իմաստային կենտրոն, որից սկսվում են գաղափարական ներքին հոսքերի տարրալուծումները, որոնք գրական երկի մեջ դառնում են գաղափարական շեշտադրումների նախակետ՝ բացելով ձիապատկերի ներքին խոհական շերտերը:

Ծանոթություններ

1. Hilbert David R., Color and Color Perception: A Study in Anthropocentric Realism, Stanford, 1987.
2. Տեն Բազմբա Բ.Ա., Գույնը և հոգեկան կառուցվածքը, Խարկով, 2001, էջ 43:
3. Բակունց Ակ., Երկեր, չորս հատո-

րով, հ. I, Երևան, 1976, էջ 287-288: (Այսուհետ բնագրային մեջբերումները կկատարվեն նշված գրքից):

4. Աթաբեկյան Ս., Ակսել Բակունց. Խոսքի ու ...ութության պոեզիան, Երևան, 2000, էջ 133:
5. Հր. Մաթևոսյան, Երկեր երկու հատորով, Եր., 1985, էջ 26: / Այսուհետ բնագրային մեջբերումները կկատարվեն նշված գրքից, հղումները կկատարվեն անմիջաբար:/
6. Մ.Գալշոյան, Պայուսակը, «Սով. գրող» հր., Եր., 1988, էջ 196: / Այսուհետ բնագրային մեջբերումները կկատարվեն նշված գրքից, հղումները կնշվեն անմիջաբար:/

||

ԽՈՍՔ ԲԱԿՈՒՆԳԻ ԱՏԵՐԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կանայք Ակսել Բակունցի
Լյանքում

ԹԵՅՄԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Շատ պետք է ջանալ Բակունցի
կենսագրության մեջ կանանց
մասին որևէ հիշատակում գտնե-
լու համար: Դժվար է ամբող-
ջական պատկերացում կազմել
Բակունցի հոգեկան-ներաշխար-
հային կյանքի մասին: «Խորունկ,
հանդարտ ու հստակ» խառն-
վածքի տեր գրողը անձնական
ապրումներ ու զգացմունքներ
արտահայտելու մեջ էլ չափա-
զանց զուսպ էր ու հավասա-
րակշիռ: Նրա կյանքում չեն եղել
հախուռն, աղմկոտ սիրային
պատմություններ, ինչպես, օրի-
նակ, Զարենցի կյանքում, բայց
եղել են նվիրական անուններ,
որոնք ուղեկցել են Բակունցին
կարճատև կյանքի որևէ շրջա-
նում, կերպարային ու պատկե-
րային յուրօրինակ նրբագծերով
հյուսվել ստեղծագործական
աշխարհին:

Մտերիմներից Ռաֆայել Աթայանը
ուշագրավ բնութագիր է
տվել գրողի խառնվածքին:
«Իսկական մտերմությունը խոր
հոգեկցություն էր Բակունցի համար,
որ առաջ էր գալիս միայն տևական
շփման, մնայուն հաղորդակցության,
բազմապիսի տպավորությունների
կուտակման հետևանքով: Այս դեպքում
նույնիսկ իր համակրանքին արժանացած
ու իրեն վաղուց մտերիմ կանանց ու
աղջիկների շրջանում նա անսովոր կեր-
պով պարկեշտ էր, վերին աստիճանի
զուսպ, մշտապես լի ինչ-որ երկյուղած
պատկառանքով: Նա պատանու նման
կը կարմիր, երբ ուզե՞նար իմա-
նալ մտերմիկ բնույթ ունեցող որևէ
բան, որն, անտարակույս, կարող էր
վստահ լինել, հաճույքով կպատմեին իր
բարեկամուհիները: Նրա այս պար-
կեշտությունը, որ վարվեցողության
ընդհանուր կոլտուրային զուգա-
կցված, ոչ մի առնչություն չունե-
ր գավառականության հետ, եսպես էլ
ավելի անդիմադրելի էր դարձնում
նրա մարդկային (և տղամարդկային
հմայքը)»¹:

Արվեստի ամեն մի գործ, գրական
ամեն մի ստեղծագործություն ծնունդ
է հոգեկան որևէ ապրումի: Աննա
Ախմատովան այսպիսի բանատող
ունի՝ «Կապկասի մի հույս, կավելանա
մի երգ»: Որքան հուզառատ ու
զեղեցիկ է մարդու ներաշխարհը,
նույնքան նրբափյուն է նրա ստեղծած
գործը: Բակունցը զգայուն, երագող,
ի բնե ռոմանտիկ էություն ուներ:
Հոգում կրում էր բանաստեղծական
անսահման մի տրամություն, որ, ինչպես
ժամանակակիցներն են վկայում,
խորապես արտահայտված էր նաև
դիմագծերի վրա: Հոգեկան այդպիսի
բյուրեղյա, անարատ նկարագիր ունեցող
մարդը կարող էր ստեղծել գրական
նույնատիպ մի աշխարհ՝ անտեղծ
զեղեցկությունների ու լուռ ցավերի
թանձր պատկերներով:

Բակունցի՝ 1918թ. հրապարակած
«Աղոթք» և «Անտառում» պատկե-
րում հիշվում է Հերոս խորհրդա-
նշական անունով հերոսուհի: «Տեր,
չէ՞ որ դու բարի ես և զթոտ, ինչպես

հայր... Աղերսանքս ընդունիր: Հին
լավ օրերը տուր, լավ օրերը բեր, ինձ
Հերդային տուր: Խնայիր Հերդային,
Նրա հոգուն խնայիր: Այնքան շատ են
Հերդաները: Քանիսներն են աղոթում,
կարոտը հոգում, լավ օրեր տեսնելու
հույսը սրտում: Շատերն են երագում հին
պալատները, որ կառուցել են խինդով,
եռանդով, վայելքի ու աղոթքի համար:
Հոգնել ենք, Տեր, էլ ուժ չունենք, էլ
դիմանալ չենք կարող» («Աղոթք»): «...
Ու հիշեցի Հերդային:

– Ու՞ր է նա, ո՞ր աշխարհում: Արդյոք
հիշում է նա ինձ, արդյոք գիտե՞, որ ես
մի մոլոր ճամփորդ եմ, մի անտուն շրջիկ,
որ քնում է անտառում, ճամփի եզրին:

Եվ կարոտը մարեց իմ հոգում,
այնպես, ինչպես առաջացել էր: Ոչ ոք
չէկավ ցավա հարցնելու, մեկը չկար,
որին պատմեի, թե ինչքան ծանր է նստել
հիմա՛վորը անտառում և հին օրերը
վերհիշել: Չգացի, որ մենակ եմ, մե՛ն-
մենակ...» («Անտառում»):


Միաժամանակ «Անտառում»
պատմվածքն ունի նվիրագրություն՝
«Ընկերոջս՝ Վաղոյին»: Բակունցի
մանկության ընկեր Վաղարշակ Հովա-
կիմյանի հուշերից իմանում ենք, որ
նվիրագրության «Վաղո»-ն ինքն է, իսկ
Հերդան՝ Բակունցի պատանեկության
ընկերուհիներից Թագուհի Սաֆրագ-
բեկյանը, ով առաջինն ավելորդակց
Ակսելի
զգայուն ներաշխարհը:

Թագուհի Սաֆրագբեկյանը հուշա-
գրել է Բակունցի հետ իր ծանոթության
մանրամասները՝ վկայելով, որ գրողը
պատանեկան տարիների իր լավ ընկերն
էր: Քաղաքի ակտիվ երիտասարդները
տեղի նորակառույց դպրոցի շենքում
թատերական ինքնագործ խմբակ
էին կազմակերպել և բեմադրում էին
փոքրիկ պիեսներ: Մի փորձի ժամանակ
տղաները Ալեքսանդրին ձեռքի ափի
վնասվածքով բերում են Թագուհու
մոտ՝ վիրակապելու: Բակունցը
դիտմամբ էր վնասել ձեռքը, որպեսզի
հնարավորություն ունենա ծանոթանալու
աղջկա հետ: Ինչպես վկայում է
Սաֆրագբեկյանը, առանց այդ «հնարի»
էլ Ալեքսանդրը կարող էր հասնել իր
նպատակին, սակայն «բնավորությամբ
ևս հակված էր դեպի ռոմանտիկան»:

Քաղաքի ակտիվ երիտասարդները տեղի նորակառույց դպրոցի շենքում թատերական ինքնագործ խմբակ էին կազմակերպել և բեմադրում էին փոքրիկ պիեսներ: Մի փորձի ժամանակ տղաները Ալեքսանդրին ձեռքի ափի վնասվածքով բերում են Թագուհու մոտ՝ վիրակապելու:
Բակունցը դիտմամբ էր վնասել ձեռքը, որպեսզի հնարավորություն ունենա ծանոթանալու աղջկա հետ:

Ի դեպ, Թագուհին հուշագրության մեջ համեստորեն նշում է, որ Բակունցին ձեռքը վիրակապելու համար բերում են խմբի մեկ ուրիշ աղջկա մոտ, բայց իրականում ինքն էր այդ «գթասիրտը», ինչի մասին և վկայել է Մոսկվայից Ռաֆայել Իշխանյանին հասցեագրած նամակում: «Երբ տուն եկա, եղբայրս՝ Գևորգը, ծիծաղում էր վրաս: Ասաց, որ Ալեքսանդրը դիտմամբ էր կտրել ափը, որպեսզի ես կապեի ու այդպես ծանոթանայի», – գրում է նա: «Շատ ամաչկոտ էր, մեծ երագող, միևնույն ժամանակ ինքնասեր էր, նպատակամետ: Ծանոթանալով մեր խմբի հետ, նա սկսել էր ակտիվորեն մասնակցել բեմադրություններին: Ինքն էլ խաղում էր և որոշ ժամանակ հետո փաստորեն դարձավ խմբի ղեկավարը: Նրա առաջարկով բեմադրվեց արտասահմանյան մի հեղինակի (չեմ հիշում ում) «Յերդա» պիեսը, որում Յերդայի դերակատարը ես էի, իսկ նրան սիրահարված երիտասարդի՝ Ակսելի դերակատարումը ստանձնեց Բակունցը: Անցել է կես դար, և ես մոռացել եմ այդ պիեսի բովանդակությունը, բայց հիշում եմ, թե ինչ հաստատականությամբ Բակունցն ասաց, որ սկսելու է իրեն կոչել Ակսել և, իրոք, նա իր խոսքի տերը եղավ»²: Խոսքը նորվեգացի թատերագիր Բյոռնստեն Բյոռնսոնի (1832-1910) «Նորապսակներ» (1865) պիեսի մասին է, որը բեմադրվեց Գորիսում 1916 թվականի ամռանը: Բակունցը կատարում էր նորապսակ Ակսելի դերը, ով սիրահարված էր Յերդային: Ահա թե ինչու Բակունցը վաղ շրջանի ստեղծագործություններում կերպավորում է Թագուհուն՝ Յերդա անունով, իսկ գրական անունը հաստատագրում «սրտամոտ» ու խորհրդանշական դերախաղից հետո: «Դրանից հետո հաճախ էր ինձ Յերդա անվանում և նույնիսկ մի բանաստեղծություն բերեց՝ «Յերդային» վերնագրով: Ես երկար ժամանակ պահում էի այդ բանաստեղծությունը՝ որպես հիշատակ իմ ջանքերի, բայց ... ցավոք, կորավ, ուր դրեցի, չգիտեմ», – վկայել է Թագուհին:

1917 թվականի ամռանը սերտանում են Թագուհու և Ալեքսանդրի հարաբերությունները, երբ Գևորգյան ճեմարանի դասարանական բաժինն ավարտած Բակունցը գտնվում էր հայրենի քաղաքում: Նա հաճախ էր լինում Սաֆրազբեկյանների տանը, որովհետև Թագուհու եղբոր՝ Գևորգի ընկերն էր: «Մի



Լուսանկարում՝ Թագուհի Սաֆրազբեկյան, Բակունցի առաջին սերը

անգամ բերեց իր մանրիկ, գեղեցիկ ձեռագրով արտագրած՝ Ա. Իսահակյանի «Աբու Լալա Մահարին», որը սիրում էր ասմունքել և ընթերցել մեզ մոտ: Նրա շնորհիվ ես հասկացա, թե որքան գեղեցիկ և երաժշտական է գրական հայոց լեզուն»: Թագուհին հիշում է Ակսելի վճռականությունը՝ չնայած ծանր կենսապայմաններին՝ անպայման ստանալու բարձրագույն կրթություն: Բակունցի առաջին սերը ափսոսանք է հայտնում, որ իրենց ծանոթության տարիներին Գորիսում խմբով լուսանկարվելը ընդունված չէր, և ինքը չունի մի հիշարժան լուսանկար Բակունցի հետ:

Գորիսի ծխական դպրոցում Բակունցի մտերիմ դասընկերներից Վաղարշակ Յովակիմյանը, որի հետ գրողն իր մտերմությունը պահպանեց մինչև կյանքի վերջը, հուշերում երկրորդում է Բակունցի առաջին սիրո ապրումները. «... այդպիսի գեղեցիկ օրերից մի օր նույն Յրագուհի ծորում մի անգամ Սանթրին պատմեց իր առաջին սիրո մասին...»: «Երբ 1910թ. ուղարկեցին ինձ ճեմարան, բացի ծնողներիցս ու բույրերիցս ես իմ հոգու խորքում տարա նաև Թագուհին: Երկար տարիներ, քնած թե արթուն, նա էր իմ անուրջների առարկան: Նրա կեցվածքը, սիրուն դեմքը, անմեղ ժայտը, սևորակ ու խելոք աչքերը, մեծ խնամքով հյուսած սև սաթի պես զույգ ծամերը ինձ հանգիստ էին տալիս: Զգիտեմ ինչպես որակեմ իմ այդ վաղ տարիքի ապրումները Թագուհու վերաբերմամբ՝ սկիզբը սիրո հրի բոցավառման, թե՞ լոկ համակրանք: Դե, դու գիտես, որ 1915թ. մեր արևմտահայ եղբայրների գաղթի հետևանքով ճեմարանի շենքը ժամանակավորապես վերածվեց հիվանդանոցի, և ես էլ ուրիշների պես մեկնեցի Գորիս՝ ծնողներիս տեսության: Որքան մոտենում էի Գորիսին, այնքան դեպի Թագուհին ունեցած կարոտից հոգիս լցվում էր այնպիսի մի հուզմունքով, որ սիրտս սկսում էր արագ բաբախել: Շատ անգամ մի պահ զգաստանում էի, զարմանում, կշտամբում ինքս ինձ, թե ինչու Թագուհին ավելի եմ կարոտել, քան թե մորս ու բույրերիս: Բայց կարծես թե մայրական անզուգական սիրո մի ձայն շոյում էր լսողությունս՝ շնչալով. «Ոչինչ, զավակս, բո սրտի կարոտն էլ իմ կարոտն է, շարունակիր պինդ սիրել Թագուհին, ես համոզված եմ, որ քո՝ դեպի ինձ ունեցած որդիական սիրո հուրը երբեք չի մարի զգայուն հոգուդ մեջ»: Վերադարձիս գիշերը, մինչև առավոտ, չկարողացա քնել: Իմ ամբողջ էությունը համակված էր նրանով, թե մեր երկարատև անջատումից հետո արդյոք Թագուհը կարձագանքի՞ իմ սիրո զգացումներին, թե սառը ջուր կլցնի իմ հոյսերին: Սակայն որքան մեծ էր իմ ուրախությունը, երբ հաջորդ օրը առաջին իսկ հանդիպումից մեր հայացքները կախարդեցին իրարու հենց իր՝ Թագուհի հայրական տան մեջ: Քիչ անց մենք արդեն փողոցում էինք և անխոս ու արագ քայլում էինք դեպի «Կալին





պաշը», որտեղից բացվում էր քեզ ծանոթ մեր բաղնիքի, գետակի և լեռների սթալայի տեսարանը: Երկար ատեն մեզնից ոչ ոք չէր համարձակվում դժվար բացատրելի լուսությունը խանգարել, կարծես հենց այդ վտեն լուսության մեջ էր ամփոփված վեհագույն իմաստը մեր հոգեկան Նուրբ գեղումների: Բայց հանկարծ, այդ լուսության պահին, կարծես թե գերբնական մի ուժով մենք ինքնաբերաբար սեղմվեցինք իրարու և մեր աչքերը լցվեցին արցունքով: Արձակվեցին մեր լեզվի կապերը, և մեր շուրթերը ըմբռնեցին առաջին սիրո քաղցրությունը: Ամեն ինչ ասված էր: Մենք պայմանավորվեցինք ցմահ սիրել իրար»³:

Թագուհի Սաֆրազբեկյանի հուշերից իմանում ենք Նաև, որ այդ ամառվանից հետո Նա Բակունցին հանդիպել է 1919թ. ամռանը Երևանում և ապա 1923թ.՝ դարձյալ Երևանում, երբ ինքն արդեն ամուսնացած էր... «Միայն այդ ժամանակ, – գրում է Թագուհին, – ես հասկացա, որ չեմ գնահատել Նրա զգացմունքների խորությունը, տևականությունը, Նրա անկեղծությունը և, ուշադրություն չդարձնելով, անցել եմ Նրա կողքով: Այդպես մենք հրաժեշտ տվեցինք միմյանց առհասարակ»:

Բակունցի համառոտ ինքնակենսագրության մեջ առաջին հայացքից կյանքի սովորական անկյունաքար՝ թվացող մի դրվագ կա, ինչը պատանեկան զգացմունքի մի գոլտրիկ պատմություն է բողբոջում. «1910 թվին «ուկթունվեցի» (այդպես էի արտասանում այն ժամանակ) ճեմարան: 1915-16 ուսումնական տարում, գաղթի պատճառով, փակվել էր ճեմարանը, և ես այդ տարին ուսուցիչ «հրավիրվեցի» Չանգեզուրի Լոր գյուղը: Ամռանը ես «չարություն» էի արել, որ և կարելի էր հաշվել իմ գրական մկրտությունը, եթե չհաշվենք «Հիմար մարդը» վերնագրով մի հեքիաթ, որ 1911 թվին տպեց «Աղբյուր» ամսագիրը: Այդ ամառ ես ֆելիետոն էի տպել Շուշվա կարծեմ սոցիալ-դեմոկրատական «Փայլակ» թերթում, մեր քաղաքագլխի և գավառական աղմկահարուցիչի դեմ (Բակունցի այդ «չարություն» արգասիք ֆելիետոնը՝ «Մաթվեյ Մաթվեիչ ... (Մի անհայտ մարդու անհրաժեշտ կենսագրության փորձ)» խորագրով և «Թեզ գնացող» ստորագրությամբ, տպվել է Շուշիի «Փայլակ» թերթի 1915թ. հուլիսի 26-ի № 40-ում): Ինձ բանտարկեցին, եղավ «փոթորիկ», և ես բանտարկության 34-րդ օրը ազատվեցի, որպեսզի ուսուցիչ գնամ այն հեռու գյուղը՝ Լորը: Առաջին անգամ ճանաչեցի գյուղը, Նրա մարդկանց: Յետո շատ անգամ այդ թվի հիշո-

ղությունները օգնել են ինձ»:

Բակունցի՝ Լորում ապրած օրերի գեղարվեստական վերհուշը «Խո-Նարի աղջիկը» պատմվածքն է: Այդ պատմվածքում ևս սիրո պատկերման հարցում գրողը ժայտ է: Մի քանի բնորոշումների մեջ, սակայն, խտացվում է չասված բառերի, հոգու խորքում պահված նվիրական ապրումների ոչ սովորական մի աշխարհ: Դա Բակունցի խոսքի բարձրագույն արվեստն է, որ բնորոշվում է որպես լուսության արվեստ: Պատահական հանդիպումը դարձել է մարդկային մի ջերմագին զգացում, որ մտովի վերապրվում է երկար տարիներ: Խոնարի աղջիկը դառնում է ուսուցչի կյանքի գեղեցիկ կետը, որի շուրջ պտտվում է ներքին աշխարհը: Խոնարիի հոգում էլ սիրո ապրում կար, բայց ներքին ամոթխածությունը թաքցնում է զգացմունքը: Լուսությունը ցավ է բերում Նրա հոգուն, քանի որ ուսուցիչը չի հասկանում չարտաբերված բառերի ներքին իմաստը: Այդ չհասկացված լուսությունն էլ տխուր վերջակետ է դնում Խոնարիի երջանիկ սպասումների վրա: Ուսուցիչը առանց խոստովանելու սիրո մասին թողնում է, հեռանում: Նա Նույնպես բառեր չի գտնում: Սիրո ճամփաբաժանին միայնակ կանգնած՝ Խոնարիը լաց է լինում հոգու խորքում:

«Խոնարի աղջիկը» պատմվածքն ամբողջովին գեղարվեստական փաստագրություն է: Գրեթե բոլոր կերպարները, վայրերը, ժամանակն իրական են: Բակունցը Լորում յոթ ամիս ուսուցիչ է աշխատել (1915թ. Նոյեմբերի 5-ից մինչև 1916թ. մայիսի 28-ը): Այդ ուսումնական տարում Նրա աշակերտների թիվը հասնում էր 33-ի՝ 29 տղա, 4 աղջիկ: Պատմվածքում գյուղը նկարագրված է ճշգրտությամբ: «Դպրոցը գյուղի ծայրին էր, բլրակի վրա: Հին գերեզմանատունը դպրոցի բակն էր», – սա լիովին համապատասխանում է իրականությանը: Իրականի համեմատ փոխված են որոշ անուններ: Օրինակ, Լորը դարձել է Ձորագյուղ, իրական տանտերը՝ Հակոբ ապերը (Հակոբ Հովհաննիսյանը) դարձել է Օհան ապեր, իսկ տանտիրոջ դուստրը՝ 14-ամյա Անահիտը դարձել է 10-ամյա Աշոտիկ: Փոխելով երկրորդական կերպարների անունները՝ Բակունցն անփոփոխ է թողել գլխավոր հերոսուհու անունը: Ո՞վ էր իրականում այդ խորհրդավոր հերոսուհին՝ Խոնարի աղջիկը...

Խոնարիը լորեցի Սուբիաս Առուս-տամյանի երրորդ դուստրն էր: Ծնվել էր 1899թ., այսինքն՝ Լորում Բակունցի գտնվելու ժամանակ եղել էր 16 և ոչ թե 15 տարեկան, ինչպես պատմվածքում ակնարկում է Բակունցը: Հեղինակը գրեթե չի նկարագրում Խոնարիի արտաքինը: Միայն մի տեղ ակնարկում է, որ

աղջիկն ուներ սպիտակ դեմք, մաքուր աչքեր, սև ու երկար վարսեր: Բակունցի՝ Լորից հեռանալուց հետո՝ 1917-ին, հայրը Խոնարիին ամուսնացրել է հարևան Շենաթաղ (այժմ Լեռնաշեն) գյուղից մի մարդու հետ, որը, սակայն, շատ չանցած մահացել է: 1921-ին Խոնարիը երկրորդ անգամ է ամուսնացել Դարբաս գյուղից Սուլթան (Անահիտ) Անդրեասյանի հետ: Ունեցել է երկու որդի՝ Արշավիրը (ծնված 1922թ.) և Սեդրակը (ծնված 1924թ.): Երրորդ որդու լույս աշխարհ գալու պահին՝ 1926թ., 27 տարեկանում Խոնարիը կնքել է մահկանացուն: Նրա մահից հետո ամուսինը կին է բերել Բաբու քաղաքից, ով և մեծացրել է երեխաներին: Որդիներից Արշավիրը զոհվել է 1941-ին՝ պատերազմում, Սեդրակն անհետ կորել է 1943-ին: Խոնարիը թաղված է Դարբաս գյուղում, ըստ որոշ տեղեկությունների՝ գերեզմանը մինչև այժմ պահպանվում է:

Լորեցի Յուրիկ Սահակյանը, ով գնացել էր Ալեքսանդր վարժապետի հետքերով, հուշագրության մեջ գրել է. «Լորեցիները լավ վարժապետներ էին ունեցել՝ Արամը, Ներսեսը, Հովհաննեսը, բայց ուրիշ էր Ալեքսանդրը... Նեղիկ, ծուռուժուռ փողոցներով ամեն օր դպրոց շտապող խաժ աչքերով, շիկակարմիր մազերով, բարձրահասակ երիտասարդը հարգանքով գլուխ էր տալիս գյուղացիներին, իսկ դասերից հետո, արևոտ անկյուններում երկար ժամանակ նրանց հետ զրուցում դեմից-դեմից: ...Անցավ ձմեռը, և երբ ամենաբարձր սառերն էլ արտասվեցին, և պղտոր առուններն աղմկելով վազեցին դեպի մոտակա ձորը, լորեցիները հրաժեշտ տվեցին վարժապետին, որն այնքան հարազատ էր դարձել նրանց հոգուն: Ինչ իմանար միևնույն ժամանակ գյուղացին, թե այդ «ամեն ինչին տեղյակ, հողի լեզուն հասկացող» երիտասարդը ապագա մեծ գրողն է, ինչ իմանար Նա, որ իր հոգսերն ու ցավերը, որ ինքն այնպես միանտորեն սիրող բացել էր Նրա առջև, պետք է գրվեն գրքերի մեջ: ... Ինչ իմանար Հակոբ ապերը, որ ինքը դառնալու է իր որդեգիր վարժապետի «Խոնարի աղջիկը» պատմվածքի Օհան ամին: Կամ ի՞նչ իմանար Դավիթ Առուստամյանը, որ իր գեղեցկուհի թույր Խոնարիը կարող էր դառնալ վարժապետի անխոս սիրո պայծառ վկան ու գրչի ներշնչանքը: Իսկ ի՞նչ իմանար Խոնարիի հայրը, թե իր աղջիկը մտքում դեռ փայլալույս է այն հույսը, որ կգա Ալեքսանդր վարժապետը... ու դրա համար է դեմ կանգնում հոր առաջարկին՝ ամուսնանալ հարևան գյուղից մի շահելի հետ»: Պատմվածքում Բակունցը կրկին հանդիպում է անուրախ կյանքով ապրող Խոնարիին և գեղարվեստական պատումը խտացնում ընչազուրկ ու թշվառ որբևայրու՝ օգնության

աղերսանքի պատկերով: «Աչքերն էլի առաջվանն էին, բայց առանց փայլի»: Իրականում այդ պատկերը գեղարվեստական գեղեցիկ հնարք է, որ սրտաշարժ է դարձնում պատմվածքի վերջավորությունը: 1926-ին Խոնարին արդեն մահացել էր, իսկ ամուսինն ապրել է շատ երկար՝ մինչև 1966թ.: Բակունցը Լոր է գնացել նաև 1926-ին՝ հողային երկարատև վեճը լուծելու համար, ինչն արտահայտություն է գտել նրա «Ծիրանի տափ»-ում:

Բակունցի կենսապատմության ուշագրավ դրվագներից մեկը կապվում է գյումրեցի մեծահամբավ նկարչուհի Մարիամ Ասլամազյանի հետ: Թանգարանում պահվում է Ասլամազյանի վրձնած նշանավոր դիմանկարը՝ «Ակսել Բակունցը մոր հետ»: Նրանք ծանոթացել էին 1935-ի ամռանը Գորիսում, երբ Մարիամ Ասլամազյանը քրոջ՝ Երանուհու հետ գնացել էին Գորիս՝ լեռնաշխարհի գեղեցկությունները վրձնելու: Նույն թվականի ամռանը Բակունցը նույնպես գնացել էր Գորիս՝ «Չանգեզուր» կինոթեմագրի համար նյութեր հավաքելու: Երբ ամառային խաղաղ երեկոյին քույրերը որոշել էին բարձրանալ Լաստի խութը կոչված սարի գագաթը, հանդիպում են Բակունցին, ով և առաջարկում է նրանց իր ընկերակցությունը, քանի որ այդ քաղաքի որդին էր ու գիտեր «ամեն քար ու թուփ»: Օրերի հետ հյուսվում է նրանց գեղեցիկ մտերմությունը՝ ի նվիրական պահերով, հանդիպումներով ու զրույցներով, որոնք թղթին է հանձնել նկարչուհին՝ հուշապատումը հնարավորինս ամբողջացնելով ու հրատարակելով 1982թ. «Գրական թերթի» սեպտեմբերի 17-ի համարում: «Անցել է 40 տարի, ամեն ինչ ծածկվել է մոռացության մշուշով»: Ի դեպ, 2016 թվականի սեպտեմբերին Հայաստանում վերահրատարակվել է Մարիամ Ասլամազյանի «Կյանքի դավթար» ինքնակենսագրական գիրքը, որ նկարչուհու դարատև կյանքի հիշողություններն են՝ սկսած մանկության ամենավաղ զգացողություններից: «Կյանքի դավթար» գիրքը նկարչուհին մահից առաջ՝ 2000 թվականին, հրատարակել էր Մոսկվայում, բայց շատ քիչ տպաքանակով: Գիրքը լույս է տեսել ռուսերեն, վերահրատարակվել է նույնպես Գյումրիի պատկերասրահի ու նրանց զարմուհի, գրքի մեկնեսա Գայանե Նիկողոսյանի ջանքերով: Ասլամազյանի օրագրություններն իրականում նրա կյանքի ու հանդիպումների մասին փոքրիկ թեմատիկ պատմվածքներ են: Շուրջ մեկ դար վրձինը ձեռքին ապրած նկարչուհին անդրադարձել

է իր տաղանդավոր մտավորական-ընկերների՝ Մարտիրոս Մարյանի, Ակսել Բակունցի, Սեդրակ Առաքելյանի, Վազգեն Առաջին կաթողիկոսի, Ինդիրա Գանդու և այլոց հետ հանդիպումների թանկ հուշերին: Նրա կյանքի երջանիկ դիպվածներից մեկը Ակսել Բակունցի հետ ծանոթությունն էր: «Ակսելին միշտ հիշում եմ՝ Նստած իրենց այգու մեծ տանձենու տակ, մուգ կարմիր գորգի վրա՝ հենված մութաթաներին ու բարձերին, առջևը պղնձե սինիի վրա սուրճ ու մրգեր, աչ ու ձախ թափված գրքեր ու տետրեր: Նա մեզ դիմավորում էր ժպիտը դնելով: Պետք է ասել, որ Ակսելի շուրթերի վրա խաղում էր ինչ-որ խորհրդավոր, անըմբռնելի մի ժպիտ: Երբեմն թվում էր, թե հեգնանք կա այդ ժպիտի մեջ, երբեմն էլ թվում էր, թե նա մի բան է ասել կամ մտածել և սպասում է, որ լսողը լրացնի իր միտքը»: Ասլամազյան քույրերի հետ Բակունցը եղել է Խնձորեսկում, Տաթևում, ծանոթացրել նրանց լեռնաշխարհի հարստություններին: Խնձորեսկում Ակսելի սիրած վայրը հին գերեզմանատունն էր, որտեղ թաղված էր Մխիթար Սպարապետը, Բակունցը ասում էր՝ «Այնտեղ՝ Մխիթարի մոտ լուռ է ու տեղանքը շատ գեղեցիկ դիրք ունի, լավ եմ աշխատում»: Մարիամը վկայում է, որ ամենուրեք Ակսելին ընդունում էին շատ լավ, մի տնից տանում էին մյուսը: Երիտասարդները հավաքվում էին, և Ակսելը պարծանքով պատմում էր, թե քանի գիտական ու պրոֆեսոր է տվել մեր հայրենիքին այդ փոքրիկ գյուղը, և ինչքան անելիքներ ունեն գյուղի երիտասարդները: Հատկանշական է հետևյալ դրվագը. Տաթև գնալու ճանապարհին Մարիամը ուզում է լուսանկարվել Բակունցի հետ, Բակունցը մերժում է: «Ինչ է, գտնում ես, որ մենք արժանի չենք քեզ հետ լուսանկարվելու»: Բակունցը դառն ժպտում և ասաց՝ «Մարիամ, իմ գլխին սև ամպեր են կուտակված, ես չեմ ուզում փոքր-ինչ սովոր գցել ձեզ վրա: Իմ սիրելիներ, դուք հեռու եք ամեն ինչից, այդպես էլ մնացեք»: «Չանգեզուրից վերադառնալուց հետո՝ Երևանում, մենք մի քանի անգամ հանդիպել ենք Ակսելին, ապա նա մեկնեց ծովափ՝ հանգստանալու, իսկ մենք Լենինգրադ: Այնտեղից մեզ հաճախ էր գրում: Նա պատմում էր, որ ծովափին պառկած գրում է, գրում, մյուս օրը կարդում ու թերթ առ թերթ նվիրում ծովին: Նա ինչ-որ մեծ պատմական թեմայի վրա էր աշխատում, հատուկ Խանջյանի պատվերով, ասում էր, որ շատ մեծ թեմա է: Երևան վերադառնալուց հետո նրան հյուրանոցում սենյակ էին հատկացրել աշխատելու համար, գրում էր, թե եզան պես աշխատում

է, բայց արդյունքն այնքան էլ լավ չէ: Գարնան մոտ նամակները դադարեցին»: Բակունցն այդ ժամանակ աշխատում էր «Չանգեզուր» կինոթեմագրի վրա: Այնուհետև հուշագիրը պատմում է իր ու Բակունցի երևանյան վերջին ճեպագրույցի սրտառու մանրամասները, Ակսելին այլևս չհանդիպելու չարագուշակ զգացողությունը, որ ունեցավ հրաժեշտի պահին, և ինչն իրականություն դարձավ:

«Կյանքի դավթար»-ում Մարիամ Ասլամազյանը Բակունցի մասին հուշագրությունը լրամշակել է 1967 թվականին՝ ուղիղ 32 տարի անց կրկին Գորիս այցելելու կենսադրվագով (ներկայացվում է թարգմանաբար): «Քաղաքը շատ էր փոխվել, դա ուրիշ քաղաք էր՝ մեծ մոխրագույն տներով: Գորիսը կորցրել էր իր գրավչությունը: Ժայռերի միջի հին տները դատարկվել էին, կիրճը ամառացել էր, միայն հատուկներս զբոսաշրջիկներ էին երևում այնտեղ: Այլևս չկային այն նրբագեղ, բարեկազմ, ազգային տարազով գործերի հպարտ կանաչ, որոնք այնպես ներդաշնակորեն էին համադրվում գորիսյան անկրկնելի ժայռերի հետ, որ ասես մեկ ամբողջություն լինեին: ... Մի երեկո որոշեցի գտնել Ակսելի տունը: Պարզվեց, դա այնքան էլ հեշտ չէ: Վերջապես շատ հարց ու փորձից հետո գտա: Բակունցը ամեն ինչ փոխվել էր, ապակեպատել էին պատշգամբը, այգու տարածքում նոր տուն էին կառուցել: Հին տան մեջ անփոփոխ էր մնացել միայն Ակսելի սենյակը: Ես թույլտվություն խնդրեցի և մտա այդ: Հին օրերի միակ վկան մնացել էր կիսով չափ սողոցված տանձենին, որի տակ աշխատում էր Ակսելը...

Հեռանալիս ինչ-որ մեկն ասաց. «Քաղաքում Ակսելի արձանն են տեղադրել, այնպես որ մենք նրան չենք մոռացել, եթե կուզեք՝ կուղեկցեմ»: Ես հրաժարվեցի և որոշեցի մենակ գնալ: Արդեն մութն ընկնում էր, երբ գտա Ակսելի արձանը: Այն կանգնած էր փոքր հրապարակում, շրջապատված անդամ և միանման տներով: Արձանի մոտ ոչ մի ծաղիկ չկար, չորացած խոտերի մեջ կանգնած էր քարացած Բակունցը:

Ես երկար նայեցի, պտտվեցի չորս կողմը, նստեցի ցանկապատի ծայրին, մտածեցի. «Լավ է, որ ինձ ոչ ոք չհանգարեց՝ նրա հետ մենակ մնալու...»: Բայց իմ մենությունը երկար չտևեց: Հետաքրքրասերների մի խումբ շրջապատեց ինձ՝ խանգարելով իմ մտորումները: Լուռ հեռանալով մտածում էի, թե որքան դաժան է ժամանակը, ինչ արագ է ամեն ինչ տրվում մոռացության: Ինձ միշտ հետաքրքրել է Բակունցի՝ ժամանակի ամենափայլուն գրողի





ճակատագիրը, բայց ոչինչ չգիտեի նրա վախճանի մասին: Երբ ես 1989 թ. վերջին անգամ եղա Յայաստանում, շատերը ինձ գրեթե նույնությամբ պատմեցին նրա կյանքի վերջին օրվա մասին....»⁵:

Բակունցի կյանքի սրտահույզ էջերից մեկը կապվում է ժեյյա Գյուզայանի, ինչպես գրող Յովիկ Չարխչյանն է բնորոշում՝ «Ալպիական կնոջ» հետ: Ժեյյայի ու «քնարական» Ակսելի մասին հիշողություններ է գրի առել գրողի ընկերներից Ռաֆայել Աթայանը: Հուշակնարկը լույս է տեսել 1980 թվականին Բեյրութի «Բազին» ամսագրում:

Երևանի հանրային գրադարանը, որը 1920-ական թվականներին գտնվում էր Կուլտուրայի տանը, Ակսել Բակունցի համար գրավիչ էր ոչ միայն գրքերով: Գրադարանի սպասարկման բաժնում աշխատող նորահաս օրիորդները անկեղծ համակրանքով էին լցված գրական մեծ կուլտուրայի ու կիրթ վարվեցողության տեր իրենց նորեկ ընթերցողի՝ Բակունցի նկատմամբ: Նրանք միևնույն ժամանակ Ակսելի համազգաց ընթերցակիցներից էին: Որքան էլ սուղ լինեին Ակսելի ժամանակը, գրադարան մտնելով՝ անպայման հետաքրքրվում էր, թե ինչ տոր գիրք են կարդացել, ինչն են հավանել, ինչը՝ չեն հավանել, ու համալ ոգևորությամբ հաղորդում էր կարդացած գրքերի շուրջ իր տպավորությունները: Այն գրքերը, որոնք Ակսելն էր պահանջում ու ապա ետ վերադարձնում, ձեռքից ձեռք անցնելով՝ երկար ժամանակ չէր վերադառնում գրապահոց: 1926-1927 թվականները Բակունցի կյանքի ամենաերջանիկ ու բեղուն տարիներն էին, երբ թերևս ոչինչ չէր խանգարում նրա ստեղծագործական հղացումների իրականացման համար:

1926 թվականին հենց Հանրային գրադարանում էլ առաջին անգամ տեսնում է ժեյյային, ով թեև չէր աշխատում գրադարանում, բայց պաշտոնավարելով Կուլտուրայի տանը՝ հաճախ էր լինում գրադարանում աշխատող ընկերուհիների մոտ: Հուշագիրը վկայում է, որ ժեյյան միջահասակ, բարեկազմ, նուրբ դիմագծերով, երազկոտ, անսեռնեթ շարժումներով աղջիկ էր, հագնվում էր պարզ ու ճաշակավոր, նախընտրում էր սպիտակը: Նա հայկական դպրոց էր ավարտել, լավ գիտեր ու շատ էր սիրում հայ գրականություն, թեև ազատ տիրապետում էր և ռուսերենին: Ժեյյայի հայրը՝ Տիգրան Գյուզայանը, մասնագիտությամբ գյուղատնտես էր, ով, 1921-ին Յայաստան գալով, աշխատել



1926 թվականին հենց Հանրային գրադարանում էլ առաջին անգամ տեսնում է ժեյյային, ով թեև չէր աշխատում գրադարանում, բայց պաշտոնավարելով Կուլտուրայի տանը՝ հաճախ էր լինում գրադարանում աշխատող ընկերուհիների մոտ:

Է որպես Օշականի գյուղատնտեսական տեխնիկումի վարիչ մինչև իր մահը: Ժեյյայի մայրը՝ Երանյակ Վարդանյանը, ախալքալաքցի էր, ինքնակրթությամբ մեծ զարգացման էր հասել ու Թիֆլիսում աչքի ընկել հասարակական գործունեությամբ: Դեռևս Ախալքալաքում նրա հետ ծանոթացել ու մտերմացել էր Յովհաննես Թումանյանը: Այդ բարեկամության վկայություններն են Թումանյանի բանաստեղծությունների ժողովածուն՝ ընծայագրված «Օր. Երանյակ Վարդանյանին, 1896» և Թումանյանի «Երանին» ընծայագրով բանաստեղծությունը՝ «Դու մի հավատա ժպտուն աչքերին...»: Երանյակ Վարդանյանի հետ մտերիմ են եղել նաև Ավետիք Իսահակյանը և Վահան Տերյանը: Երանյակը մահացել է երիտասարդ տարիքում՝ 39 տարեկան հասակում՝ «սև ծաղկից»: Ժեյյան, որ կրտսերն էր չորս զավակներից, շատ բան էր ժառանգել մորից: Շատ էին «նախասահմանյալ» հանգամանքները, որոնք կարող էին կանխորոշել ժեյյայի ու Բակունցի սրտամոտ բարեկամությունը:

1925 թվականին Երևան գալով՝ ժեյյան ընդունվում է պետհամալսարանի պատմագրական ֆակուլտետը: Նա ապրում էր «Անի» հյուրանոցից փոքր-ինչ վերև: Հուշագիրը վկայում է, որ ժամանակին այդ տարածքում հսկա

բարդիներ կային, դրանց հովանու տակ սև տուֆե միհարկանի տուն կար, որի երկու սենյակներում բնակվում էր Նկարիչ Հակոբ Կոչոյանը, իսկ երրորդում՝ Յայաստան սովորելու եկած Գյուզայան թույրերը: Ակսել Բակունցն այդ ժամանակ արդեն մտերիմ էր Հակոբ Կոչոյանի հետ, հաճախ էր լինում նրա տանը՝ հանդիպելով նաև Ժեյյային: Ժեյյան Ակսելի հետ

ընթերցողական սերտ «գործակցություն» ուներ, Ակսելի հավանած նոր գրքերն առաջինը նրա տրամադրության տակ էին անցնում, ժեյյայի «գտածոներն» էլ անպայման ընթերցում էր Բակունցը: Նրանք յուրովի մրցության մեջ էին իրենց ընթերցանությամբ: «Այդպես համազգացորեն նրանք կարդացել էին Մերիմեի վիպակներն ու նովելները ու մտքերի փոխանակություն ունեցել դրանց շուրջ»: Նշենք, որ Պրոսպեր Մերիմեն Բակունցի սիրած նովելիստներից էր:

1927-ին ժեյյան փոխադրվում է Լենինգրադի համալսարանի ազգագրական բաժինը: Այդ տարիներին նրանց հոգեկան կապը ամրապնդվում է ջերմ նամակագրությամբ: 1931-ին վերադառնալով Երևան՝ ժեյյան աշխատանքի է անցնում Պատմության թանգարանի ազգագրության բաժնում՝ որպես գիտաշխատող: Վկայում են, որ ժեյյան առաձևակի սիրով էր մասնակցում շանգեզուր ուղևորվող ազգագրական արշավներին: Պահպանվել է մի լուսանկար, որտեղ Բակունցի ցանկությամբ և ի պատիվ Բակունցի՝ ժեյյան նկարվել է զանգեզուրցի կնոջ ավանդական տարազով:

Ամենաուշագրավ տեղեկությունը, որ կապվում է ժեյյա Գյուզայանի հետ, «Ալպիական մանուշակ» պատմվածքում նրա նախակերպարի հարցն է: «Խորհրդային Յայաստան» թերթի 1927 թվականի հունվարի 1-4-ի համարներում շարունակաբար տպագրվում է «Ալպիական մանուշակ» պատմվածքը նվիրված հունվարի 1-ի գիշերը վախճանված Եղիշե Չարենցի կնոջ՝ Արփենիկ Չարենցի հիշատակին: Չնայած խորհրդանշական ընծայագրումին՝ Արփենիկ Չարենցը նախակերպարային որևէ առնչություն չունի ստեղծագործության հետ:

Պատմվածքի ձեռագիրը Բակունցն առաջինը կարդացել էր հենց ժեյյա Գյուզայանին: Ավելին, պատմվածքում ի դեմս այն «երկրորդ կնոջ», որ ծովափին «նշաններ է անում ավազի վրա ու ջնջում», հենց ժեյյային է նկատի ունեցել: Պատմվածքում Բակունցը պահպանել էր նրա շարժումն ու տարագի հատկանիշները (օրինակ,

թավշե գլխարկի նարնջագույն քորոցը), ինչպես նաև գունային տպավորությունը («մուգ մանիշակագույն աչքեր»), որ թողնում էր նրա աչքերի տամուկ հայացքը: Հուշագիր Ռաֆայել Աթայանը վկայում է, որ 1933 թվականին համատեղ ուղևորության ընթացքում, երբ Բակունցի հետ հանգրվանել էին «Բաբու» հյուրանոցում, հարցրել է նրան այդ մասին: «Նա վայրկենապես աշխույժ եկավ ու տեղի ու տեղը հաստատեց, որ 1926-ին հանդիպել է ժենյային Բաթումում, որտեղ նա հանգստանում էր մեծ եղբոր՝ Ռուբեն Գյուլապյանի հետ, և որ իրոք, նրան՝ ժենյային է նկատի առել «այն կնոջ» ուրվագծելիս»: Հիշենք այս պատկերը. «...Առավոտյան ծովը բրնձեց հայոցքի պես տարուբեր էր լինում և լիզում ափերի կրաքարը: Ծովափին սև թավիշե գլխարկով կինը հովանոցի ծայրով ավազի վրա նշաններ էր անում և ավերում: Իսկ ինքը ջարդում էր ձեռքի չոր ճյուղը, մանրիկ փշուրներ անում, և երբ ալիքները կաթիլներ էին ցողում նրանց ոտքերին ու ետ վազում, ալիքներն իրենց հետ տանում էին չոր ճյուղերի փշուրները: Այն կինը ծովափին խոստումի բառեր ասաց, աշխարհը թվաց լայնարձակ մի ծով, և սիրտը ձուլվեց ծովի հետ»: Բակունցը հաճույքով է վերհիշել ու հաստատել այն բերկրառիթ իրողությունը, որ դեռ սևագիր կարդացել է ժենյային «Ալպիական մանուշակ» ձեռագիրը, և որ նա սիրել է պատմվածքը...

Ժենյա Գյուլապյանը ընտանիքի մյուս անդամների նման նույնպես զոհ գնաց ստալինյան բռնություններին: Նրան հակապետական, հակահեղափոխական գործունեություն ծավալելու շինծու մեղադրանքով ձերբակալել են 1939 թվականին և աքսորել Միջին Ասիա՝ Կարազանդայի ճամբար, որտեղ և 1941-ին 38 տարեկան հասակում անհայտ հանգամանքներում մահացել է:

Ակսել Բակունցի կենսական անկյու- նադարների մասին գրականագետ Ռաֆայել Իշխանյանի վկայություններից մեկը կապվում է ժենյա Գյուլապյանի բրոջ՝ Նազիկ Գյուլապյանի հետ: Վաստակաշատ ուսուցչուհին, ով երկար ժամանակ նախ՝ բրոջ, ապա՝ ընտանիքի հետ բնակվել է Երևանում, պատմել է Բակունցի հետ վերջին հանդիպման ու գրողի վերջին խնդրանքի մասին: «Ակսելը հաճախ էր լինում մեզ մոտ: Երբեմն կնոջ ու որդու հետ, երբեմն՝ մենակ:Մեզ այցելելիս մանուշակներ էր բերում:Վերջին անգամ մեր տուն եկավ 1936 թվականի օգոստոսին: Ամբողջ երեկոն մեզ հետ էր: Ժենյան չկար: Ամուսինս, ես և աղջիկս էինք: Շատ զրուցեցինք: Տխուր էր: Հրաժեշտ տվեց, գնաց: Բայց անմիջապես

վերադարձավ և ասաց. «Նազիկ, բեզ մի բան պիտի խնդրեմ» - ես հարցական նայեցի նրան: «Աղջկադ կտաս հայկական դպրոց»: Մի փոքր զարմացա նման անսպասելի խնդրանքի և այն հայտնելու անսովոր եղանակի համար: Առանց խորանալու, ի միջի այլոց, համաձայնության թեթև նշան արեցի, մտածելով՝ «Ակսելն է էլի, ով գիտի, մոթով ինչ անցավ էս ոռպելին»: Մյուս օրը մեզ էլ հասավ մնայլ լուրը, և մենք այլևս չտեսանք Ակսելին: Հիշեցի նրա խնդրանքը և իմ տված կես-կատակ պատասխանը: Ես ու եղբայրս՝ Ռուբենը, գիմնազիա ենք ավարտել, ժենյան՝ հայոց Գայանյան դպրոցը, իսկ մյուս եղբայրս՝ Ներսիսյան դպրոցը: Նրանք հայերեն լավ գիտեին, իսկ ես՝ վատ: Ուստի որևէ մտադրություն չունեի աղջկաս հայկական կրթություն տալու, քանի որ չէի կարող նրա հետ պարապել: Երբ պարզվեց, որ Ակսելի այն իրիկնային այցելությունը վերջինն էր և խնդրանքն էլ վերջինը, ինքս ինձ հաստատ խոսք տվեցի աղջկա՝ Մերիին, հայկական դպրոց ուղարկել: Եվ այդպես էլ արեցի, ու հիմա գիտեմ, որ ճիշտ եմ արել ու դրա համար շատ երախտապարտ եմ մեր անմոռաց Ակսելին...»:

Ժամանակակիցները վկայել են, որ Խարկովում սովորելու տարիներին Բակունցը համակրել էր թուրքական գեհեկից փրկված ու Խարկովում հարազատների մոտ ապաստանած գաղթական մի աղջկա՝ Աստղիկին, ով Խարկովի հայկական գաղութի հայտնի դեմքերից ձեռնարկատեր Լեբլեբճյանի բրոջ աղջիկն էր: Բակունցը մեծահարուստի խնդրանքով հայերենի ու ռուսերենի դասեր էր տալիս Աստղիկին: Սկզբում նյութական վատ պայմաններում գտնվող Բակունցի վիճակը Խարկովում հետզհետե բարելավվում է՝ աշակերտներին մասնավոր դասեր տալու արդյունքում⁶: Ուսուցչի և աշակերտուհու միջև ձևավորվել էին սիրային փոխադարձ զգացումներ: Վկայում են, որ նրանք նույնիսկ նշանադրվել են, սակայն ոչ այնքան խանդավառ մթնոլորտում, քանզի Աստղիկի հարուստ մորեղբայրն ու ընտանիքի անդամները մի տեսակ բարձրից էին նայում իրենց աղքատիկ փեսացուին: Բակունցը չէր կարողանում տանել այդ վերաբերմունքը, ինչը հավանաբար ազդել էր իր ու Աստղիկի հետագա հարաբերությունների վրա: «Նրանք միայն հաշվի, նյութական շահի մարդիկ են, սիրտ չունեն... Ասում եմ այդպիսիներին»⁷, - գանգատվել էր Բակունցը: Կյանքը տարբեր ճակատագրեր էր վերապահել նրանց համար: Հուշագիր Մարիանե Լեբլեբճյանը, որ այդ տարիներին սերտ առնչություններ էր ունեցել

գրողի հետ, ցավով խոստովանել է, որ վախից ոչնչացրել են խարկովյան տարիներին Բակունցի հետ ունեցած բոլոր լուսանկարները. «Այդպիսի երիտասարդի, որ չխնայեցին, մեզ պիտի խնայեն, եթե այն տարիներին իմանային, որ մենք կապ ենք ունեցել նրա հետ...»:

Բակունցի ճակատագրական կինը դառնում է նորնախիջևանցի Վարվառա (Վարյա) Հիվիջյանը, ում հետ Բակունցը ծանոթացել էր Խարկովում՝ 1923 թվականին: «Մեր միջև միանգամից ստեղծվեցին բարեկամական հարաբերություններ,- գրում է Հիվիջյանը,- Որքան շատ էի ճանաչում նրան, այնքան շատ էի զարամում նրա ի բնե զարգացածությամբ, խելացիությամբ, ներքին մեծ մաքրությամբ ու շիտակությամբ առանձնացող և իր ժողովրդին խորունկ սիրող Բակունցով»⁸:

.... 1923-ի հուլիսին Բակունցն ավարտում է գյուղատնտեսական ինստիտուտը: Խարկովից մեկնելուց առաջ նա առաջարկում է Վարվառային ամուսնանալ և միասին մեկնել Հայաստան, բայց Վարվառան նախապատրաստվում էր բուհի ընդունելության քննություններին և մերժում է Բակունցի առաջարկը. «Ես նրան պատասխանեցի, որ իմ առջև հաստատ նպատակ եմ դրել ստանալու բարձրագույն կրթություն և մինչև ինստիտուտն ավարտելը չեմ կամենում կյանքս կապանքների մեջ դնել...»⁹: Դառնացած Վարվառայի որոշումից՝ 1923 թվականի հուլիսի 13-ին Բակունցը Խարկովից մեկնում է Խորհրդային Հայաստան: Մի քանի ամիս նրանք Նամակազրական կապ չեն ունենում: Գործուղման բացակայության պատճառով Վարվառային չեն թույլատրում մասնակցելու ընդունելության քննություններին: Այդ լուրը հասնում է Բակունցին, և նա նամակով առաջարկում է Վարվառային սովորել Երևանում: 1923 թվականի դեկտեմբերին Վարվառան գալիս է Երևան և ընդունվում պետական համալսարան: Հայոց լեզվի վատ իմացությունը դժվարացնում էր Վարվառայի ուսումնառությունը, 1924-ին նա թողնում է համալսարանը և ամուսնանում Բակունցի հետ: Բակունցը ստանձնում է Գորիսի գավառային գյուղատնտեսի պաշտոնը, և նրանք միասին մեկնում են Բակունցի հարազատների մոտ՝ Գորիս, որտեղ ապրում են մինչև 1926 թվականի մայիսը: Այդպես հյուսվում է Բակունցի խաղաղավետ ընտանեկան կյանքը: Մեծ է եղել Բակունցի զգացմունքը Վարվառայի հանդեպ, ով կիսեց գրողի





ճակատագիրը, դարձավ ինչպես Չարենցը կասեր, «կին, ընկեր և հերոսական բարեկամ»: Ի դեպ, Վարվառայի վկայությամբ՝ Բակունցը «Միրիադ» հրաշակերտ պատմվածքն իրեն է մատուցել 1924 թվականի մարտի 9-ին՝ իբրև ծննդյան օրվա նվեր, թեև պատմվածքն ընծայագրված չէ: Բնավորությամբ Վարվառան եղել է մեղմ ու սրտակից ընկեր, միշտ հոգեկան նեցուկ է եղել Բակունցին: Ցավոք, Բակունցի ընտանիքին վիճակված էր դառնադետ ճակատագիր: Դատապարտվեց ոչ միայն գրողը, այլև՝ նրա ընտանիքը: Վարվառան Բակունցի գնդակահարությունից հետո, որպես ժողովրդի թշնամու կին, բանտարկվեց և աքսորվեց, մանկահասակ որդին որբացավ: Բակունցի բանտում եղած ժամանակ կինը մի բանի անգամ այցելել է նրան: Վերջին երկու այցելության ժամանակ Վարվառայի հետ եղել է նաև նրանց միևնույն որդին՝ Սևադան, ով Բակունցի ձեռքակալությունից առաջ ծանր հիվանդացել էր և ըստ ելույթի փրկվել վերահաս մահից: Սոր և որդու այցելությունը բանտում գտնվող հորը ամենայն հավանականությամբ եղել է Բակունցի համառ խնդրանքներից հետո, որովհետև Բակունցի կնոջից դա պահանջում են նաև իրավական մարմինները: «Դժվար էր ինձ հետ վերցնել երեխային, բայց չհամարձակվեցի գնալ առանց նրա: Տեսակցությունը չափազանց ծանր էր: Բակունցը մեկ ամսվա ընթացքում այնքան էր փոխվել, որ ես դժվարությամբ ճանաչեցի այն մարդուն, որին գիտեի երկար տարիների ընթացքում: Ամբողջ տեսակցության ժամանակ Բակունցը հեծկլտում էր՝ կորցնելով ինքնատիրապետումը: Նա ինձ խնդրեց վերցնել թուղթ ու մատիտ, գրել այն ամենը, ինչ ինքը կասի: «Իմացիր, ասաց նա ինձ, այն ամենը ինչ ասում եմ քեզ՝ պատահական մտքեր չեն, այլ արդյունք են երկար ակնքուն գիշերների»: Եվ նա թելադրեց ինձ, թե ինչպես պիտի դաստիարակեմ և մեծացնեմ երեխային: «Որդիս, անդրադարձավ երեխային՝ բամբուլով արցունքից ամբողջովին խոնավ թաշկինակը, այնքան շատ բան եմ ցանկացել կյանքում անել քեզ համար, բայց ինձ չհաջողվեց, մայրդ կանի նաև իմ փոխարեն: Չզացվում էր, որ այդ տեսակցությամբ նա հրաժեշտ էր տալիս մեզ: Նա ինձ ասաց, որ ինքը գրել է լիազորագիր-կտակ, որով ինձ է փոխանցում իր հեղինակային իրավունքը»: Վարվառայի և Բակունցի վերջին տեսակցությունը եղել է Նոյեմբեր ամսին: «Հավանաբար, պետք է մեկնել, թեպետ դեռ կտեսնենք, – ասաց նա:

Ամուր եղիր, հաշվիր, որ ավտովթար է եղել, և ես վթարի եմ ենթարկվել:

Դիմելով որդուն, որ ներկա էր նա այդ վերջին տեսակցությանը, Բակունցն ասել է. «Դու շատ կամաջես, եթե քո հորը Երևանի փողոցներով տանեն դատարան»:

– Ոչ հայրիկ, պատասխանեց տղան:

– Ճիշտ է, զավակս, դու մի ամաչիր քո հոր համար, հիշիր, քո հայրն այնպիսի բան չի արել, որի համար կյանքում պետք է կարմրես, ասաց նա երեխային»¹⁰:

1937-ի հուլիսի 18-ին Վարվառան այցելում է բանտ, բայց նրան ասում են, որ Բակունցն աքսորվել է: Այդ ընթացքում Վարվառան ավարտել էր Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը և պետք է դիպլոմային աշխատանք պաշտպաներ: Ապրում էր ծանր պայմաններում՝ հիվանդ երեխայի ու մոր հետ: Բակունցի ձեռքակալությունից հետո նրան ոչ ոք աշխատանք չի տալիս: «Այնքանորի ձեռքակալությունից հետո մեզ ոչ ոք չէր այցելում: Մեր աղվկոտ տունը, որ միշտ լի էր հյուրերով, մարդիկ «մոռացել էին»: Փողոցում անգամ ինձնից խուսափում էին մեր բոլոր ծանոթները, բարեկամները: Հեռվից տեսնելով ինձ՝ ճանապարհը փոխում էին: Բոլորովին մեռակ էինք մնացել: Անասելի ծանր օրեր էին»¹¹:

1937 թվականի սեպտեմբերի 17-ին կալանավորում են նաև Վարվառային, բնակարանն ամբողջ ունեցվածքով արգելափակում են, երեխային հանձնում Բակունցի եղբորը, հիվանդ մորը թողնում պատշգամբում, իսկ նրան տանում բանտ: Առանց հարցաքննության 8 ամիս Բակունցի կնոջը պահելով բանտում՝ հատուկ խորհրդակցության որոշմամբ, որպես հայրենիքի դավաճանի ընտանիքի անդամ, ութ տարով աքսորում են Տեմինկովյան ճամբար, որտեղից վերադառնում է 1945-ի աշնանը:

Ժամանակակիցները վերհիշել են նաև Բակունցի կնոջ՝ Վարվառա Զիվիջյանի՝ աքսորից վերադառնալու պատմությունը: Հարևաններից մեկը բակում նստած տեսնում է մի դարպի (բոշա) և գալիս ու ասում է, որ կանչեն Բոխազյուկ մայրիկին, նա էլ ծառի վրա խնձոր քաղելիս է լինում: Ասում է՝ «Սոված կլինի, էդ խնձորից տար, տրիր թող գնա»: Բայց կինն ասում է, որ Բոխազյուկն է պետք: Վերջինս ինչ-որ բան է կանխագգում, գնում է ու տեսնում, որ հարսն է եկել: Պարկի կտորներից կեղտոտ, պատառնուկված շոր է լինում հագին: Մի կարծ ժամանակ Վարվառան մնում է Գորիսում, շրջանի Շինուհայր գյուղում զբաղվում է ուսուցչությամբ, այնուհետև աշխատանքի է անցնում Երևանում՝ Քանաքեռի մանկատանը

և զբաղվում արդեն բանամյա որդու խնամքով: Մահանում է 1965 թվականին:

1954 թվականին Վարվառա Զիվիջյան-Բակունցը հավանաբար պաշտոնական մարմինների թելադրանք-պահանջով գրել է «Ցուցմունքներ Բակունցի մասին»՝ Բակունցին արդարացնելու համար: Գրությունը թեև սրտագրավ հուշագրություն չէ, բայց և այնպես շատ տեղեկություններ է հաղորդում Բակունցի ընտանիքի ճակատագրի, կենսական տարբեր անկյունաքարների, շփումների, վերջին օրերի մասին:

Գուրգեն Մանուկյանը, ով Բակունցի կյանքի վերջին օրերին եղել էր նրա կողքին՝ որպես բանտակից ընկեր, սրտառու ինքնակենսագրություն է թողել՝ վկայելով «այդ մեծ հոգու տվյալաբեկը»: «Աշխարհին ասեք, բաժանման պահին հորդորել է բարեկամին Բակունցը, որ ես ժողովրդի թշնամին չեմ: Կնոջս ու տղայիս էլ հաղորդեցեք, որ իմ առիթով իրենց կրած տառապանքների համար ինձ չանիծեն...»¹²:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 «Բագին», Բեյրութ, 1980, հունվար, թիվ 1:
- 2 Ակսել Բակունցը ժամանակակիցների հուշերում, Գորիս, 1999, էջ 30:
- 3 Նույն տեղում, էջ 14:
- 4 Նույն տեղում, էջ 195:
- 5 Асламазян М., Давтар жизни, Е., 2016 г., с. 64-65.
- 6 Բակունցը Խարկովում ընտրվել է նաև հայ գաղութի ակումբի վարիչ: Կարգի է բերել լքված գրադարանը, Նորանոր գրքերով հարստացրել այն: Նկատելի ավելացել է ընթերցողների թիվը: Գաղութի անդամները, սակայն, ակումբում հավաքվելիս, հայերեն չէին խոսում, և հաճախ Բակունցը մոտենում էր նրանց, հորդորում հայերեն խոսել, բանի որ ակումբի նպատակն էր պահպանել հայ ժողովրդի դարավոր մշակույթը և հոգեկան կապ պահպանել մայր հայրենիքի հետ:
- 7 «Սփիւռք», 1965, 26 մայիսի, թիվ 20 (Առաքել Պատրիկ, «Մի դրուագ Բակունցի ուսանողական տարիներից»):
- 8 Զիվիջյան-Բակունց Վ., Ցուցմունքներ Բակունցի մասին, «Հայոց լեզու և գրականություն», Ե., 2011, թիվ 5(76), էջ 36:
- 9 Նույն տեղում, էջ 37:
- 10 Նույն տեղում, էջ 39:
- 11 Նույն տեղում, էջ 40:
- 12 Ակսել Բակունցը ժամանակակիցների հուշերում, էջ 192:

ԿՈՐՈՒՄՅԱԼ ՀԱՅՐԵՆՆԻՔԻ ՎԻՊԱՍՔԸ

Եղեռնական իրադարձությունների արձագանքները Ակսել Բակունցի արձակում



ԺԵՆԱ ԶԱՆԱԹԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Ի սերնդակից շատ երիտասարդների նման Գևորգյան ճեմարանի սան Ակսել (Ալեքսանդր) Բակունցը, պատմական հայրենիքն ու արյունակից եղբայրներին ազատագրելու ռոմանտիկ պատրանքներով տարված, 1917 թ. Նոյեմբերին իբրև կամավոր մեկնում է ռազմաճակատ՝ մասնակցելու Առաջին աշխարհամարտի կռիվներին: Հետագայում տարբեր տարիների ստեղծագործությունների մեջ, քաղաքական ու գաղափարական հանգամանքներով պայմանավորված, կամավոր մեկնելու իրողությունը նա պատմում է տարբեր հիշերանգով: Իրականությունն այն է, որ պատերազմը հայության սովորական զանգվածի մեջ արևմտահայության ազատագրության հույսեր էր արթնացրել, առաջադրել գուցե չպատճառաբանված ոգևորություն, ծնունդ տվել կամավորական շարժմանը: Գրականագիտության մեջ, մասնավորապես Զարեհի առիթով, բավականաչափ խոսվել է կամավորական շարժման պատճառների և այս հարցում ցարական կառավարության դիրքորոշման մասին: Կառավարությունը, խրախուսելով ժողովրդի ազգային զգացմունքները և շահարկելով նրա նվիրական նպատակները, հավելյալ զինվորներ ստանալով՝ լուծում էր սեփական խնդիրները:

Գևորգյան ճեմարանի մթնոլորտը հայրենասիրություն էր ներշնչում սաներին: Եկեղեցու բակից կամավորները հանդիսավորությամբ մեկնում էին ռազմաճակատ: Բակունցն ապրում էր համընդհանուր ոգևորության այդ միջավայրում: «Եվ մի օր, երբ արևի մարվող շողերը փայլում էին լեռան կատարին, ես իմ երագած աշխարհի ճամփեն բռնեցի»¹, - գրում է Բակունցը «Անտառում» էսյուդում: Հատկանշական է, որ երիտասարդ կամավորների (թերևս նաև ուրիշ շատերի) ըմբռնումներում հայրենիքի պատկերը բավականաչափ անորոշ էր ու վերացական: Նրանց պատկերացումներում պատմական հեթանոսական և ներկա Հայաստանի տեսիլները միահյուսվում էին: Գրքերի, ճառերի ու քարոզների ազդեցության տակ շատերը հայության ապագան տեսնում էին անցյալի հեթանոսական հզորության վերականգնման մեջ, իսկ հեթանոս հզոր աստվածների բնակավայրը նրանք փնտրում էին անպայման Արևմտյան Հայաստանում, Եփրատի ու Արածանիի ափերին, ուր վաղուց անհետացել էին Աստղիկի ու Վահագնի սովերները: Նման դիտարկման հիմք տալիս են և՛ Զարեհի, և՛ Բակունցի ռոմանտիկ տեսիլները, որոնք սկզբնական պատրանքների շրջանում բավականաչափ նման են: «Կապուտաշյա հայրենիք» պոեմի բնագրային տարբերակում Զարեհը 1915 թ. գրում էր.

Այնտեղ, մեռնող օրվա արնաթաթափ
հայացքում ես տեսա հանկարծ հեթանոս
Հարսանիքը Կապուտաշյա Սիրուհու
- Հայրենիքիս...

(ընդգծումը մերն է - Ժ. Բ.):

Նույն «Անտառում» պատկերում Բակունցը շարունակում է իր «երագի աշխարհի ճամփեն բռնելու» պատմությունը. «Ես ցանկացա մարմինս թողել սրբազան գետի մեջ («Հովիտի մեջ փրփրուն գետն է հոսում», - գրում է Զարեհը - Ժ. Բ.), և բարեպաշտորեն երկրպագել հեթանոս հայրերիս աստվածներին՝ ամենաճերմակ արջառները զոհելով: Ես կամեցա դիտել, թե ինչպես արևի հրաշեկ գունդը տաքացնում է այն պտղավետ երկիրը,

ուր ամեն բան առատ էր ու գեղեցիկ» (նույն տեղում, էջ 17): Կարելի է ասել, որ «հեթանոսական շարժման» արձագանքները մշուշի պես տարածվել էին երագող հոգիներում: Այս առումով հետաքրքրությունից զուրկ չեն նաև Համաստեղի վաղ շրջանի պատմվածքներն ու մանրապատումները, որոնց մեջ նաև հեթանոս Հայաստանը պատկերվում է իբրև հարուստ ու բարեբեր երկիր: «Հեթանոս պատարագը» մանրապատման մեջ, նկարագրելով Մեղրագետի ափի շքեղ քաղաքը, Համաստեղը գրում է. «Բազմետուններուն մեջ կը յորդեր խրախճանքը, հնձաններուն մեջ՝ զինին ու տուններուն մեջ՝ սերը: Գուսաններ իրենց նուագարաններուն վրայ հեթանոս աստուածներուն համար երգեր կը յօրինէին, կ'երգէին կեանքն ու կոիւր»²:

Իդեալականացված ու որոշակի հատկանիշներից զուրկ, մաքրված հեթանոսականությունը միջոց էր ներկա իրականությանը հակադրվելու: Բակունցի համար հեթանոսական տեսիլները նրա ռոմանտիկ պատրանքների ու հայրենասիրական նվիրումի բաղկացուցիչ մասն էին կազմում, և նա հավատում էր կամավորի իր առաքելությանը: Բայց մի քանի տարի անց՝ խորհրդային կարգերի ժամանակ, երբ Բակունցը, ականա ընդառաջ գնալով իր ազգական Երեմիա Բակունցի հորդորներին, մասնակցեց ՀԽՍՀ 1923 թ. ինքնալուծարման համագումարին և մամուլում հրապարակորեն հրաժարվեց դաշնակցությունից, հետագայում ստիպված էր անընդհատ «սրբագրել» իր կենսագրությունը: Ահա թե ինչու կոմունիստական կուսակցության մեջ մտնելու կապակցությամբ գրած իր ինքնակենսագրականի մեջ նա կամավոր գնալու փաստը ներկայացնում է իբրև կուսակցական հրահանգ. «1917 թ. վերջին (նոյեմբեր) եկել եմ Երևան, ապա Էջմիածին (ճեմարան), ուր կուս [ակցության] հրահանգի համաձայն, ճանապարհվել եմ Երզրում, որպես կամավոր»³: Պատճառը պարզ է. ռազմաճակատում դասալսություն քարոզող կոմունիստների համար կամավոր զինվորը դիտվում էր իբրև ազգայնական, ուստի Բակունցը կարծես փորձում է նվազեցնել իր քայլի կարևորությունը:

Կամավոր զինվոր Բակունցը Երզրումի «ԿԿԵՃԱՅԱ ԿՈՄԱՆԴԱ»-ում սովորելուց հետո մասնակցում է Երզրում-Սարիղամիշ-Ղարս-Սելիմ-Արդահան-Սարդաբադ շղթայով շարունակվող բոլոր մարտերին և մինչև 1918 թ. հոկտեմբերը մնում է բանակում:

Հետագայում գրած մի քանի գործերում Բակունցը ներկայացնում է այն ազգայնները, գործոններն ու մթնոլորտը, որոնք նպաստում էին հայ ազա-





տագրական պայքարի ծավալմանը: Սակայն այստեղ չպետք է անտեսել մի նրբություն. խորհրդային տարիներին գրած գործերում՝ «Էն տարին» (1924), «Ծանոթ բակը» (1926), «Կարմրաբար» (1929) գրողի խոսքի հնչերանգը հեզական-ժխտական է անցյալի նկատմամբ, որ միանգամայն հասկանալի է: Որքան էլ հեզական հնչի գրողի խոսքը, այնուամենայնիվ, փաստերն իրենք են խոսում իրենց մասին և թույլ են տալիս որոշակի վերապահությամբ մոտենալ գրողի դիրքորոշմանը: Այսպես, «Ծանոթ բակը» գրվածքից պարզ է դառնում, թե որտեղից էին սնվում ճեմարանի սաների հայրենասիրական, թեկուզ ռոմանտիկ մղումները: «Այստեղ «խմբեր» կային, «զենք ու զրահից թնդում էին լերինք» և դուք ամեն մի «սանի» պատմում էիք «Շուշանն Շավարշան», դրվագներ Ավարայրի օրերից, ավագի վրա զծում էիք կորած քաղաքներ, գովում Բասենը, Ալաշկերտը, որտեղ երբեք դուք չէք եղել: Մեր մասկական հոգիներում ձեր բառերը տղայական երազներ էին ծնում, և մեր ձեռքին բռնած կերոսները մեզ զենք ու նիզակ էին թվում» (II, 406-407): Ճեմարանի իր նախկին ուսուցչի հետ այսպես է մտովի գրուցում Բակունցը՝ ակնհայտորեն այլևս համամիտ չլինելով նրա մտքերին: Որքան էլ հանդիմանական լինե՞ր գրողի շեշտադրությունը, այնուամենայնիվ այդ դասերը կատարել էին իրենց դերը: «Կարմրաբար» վեպում ևս Բակունցը չի շրջանցում ժողովրդական զանգվածների մեջ Առաջին համաշխարհային պատերազմի ծնած հույսի և ոգևորության արձագանքների պատկերումը: Ինչ խոսք, համեմատած Զարենցի «Երկիր Նաիրի» երգիծական վեպի՝ ոճի առանձնահատկությամբ պայմանավորված հիպերբոլիկ պատկերների հետ, Բակունցն իր վեպի մեջ շատ ավելի զուսպ է և փորձում է տարբեր տեսանկյուններից գնահատել ժողովրդական ոգևորությունը՝ այն բնորոշ համարելով միայն ժողովրդի որոշ շերտերի, մասնավորապես քաղաքականների համար: Համեմատության համար կարելի է հիշել, որ «Երկիր Նաիրի» վեպի «խանդավառ» իրադարձությունները նույնպես տեղի են ունենում «Նաիրյան քաղաքում», իսկ ռազմաճակատ բռնկող «Նաիրյան տրեխավոր զինվորները», մեղմ ասած, անմասն էին այդ խանդավառությունից:

«Կարմրաբար» վեպում ևս խանդավառության լուրը զալիս է քաղաքից. «Մին էլ նաչալնիկը փոշտից դուրս եկավ, թե՛ ժողովուրդ, ուռռռ... - Զուռռա տվին, պատերից կարմիր, կապույտ թղթեր կայրին...» (III, 195): «Մեկ էլ դուբանները կայացին, զորքը, ժողովուրդը մեյդան թափվեցին... Ուռռռ... - հա ուռռռ» (III,

196): Դեռևս այս ամենի իմաստը չընկալող գյուղացուն առաջին հերթին իր առօրյա հոգսն է մտահոգում, նա դեռևս իր վարուցանքի ու հնձի հետ է, ուստի անտարբեր Սիմոնի պատմածին՝ անհամբեր հարց է տալիս.

«- Սիմոն, տեղեկացա՞ր, լավ գերանդին քանի է - հարցրեց մեկը:

- Անդարդի միև, գերանդու վախտ ե՞ս գտել, - վրա բերեց Իսոն»:

Սու. Չորյանի «Պատերազմը» պատմվածքի համապատասխան դրվագը հիշեցնող այս խոսակցությունը միանգամայն բնորոշ է գյուղացու հոգեբանությանը, որն ավելի արագ արձագանքում է սեփական շահը շոշափող խնդիրներին, և ինչը միաժամանակ չի բացառում ի՞նչ նրա հայրենասիրությունը, ի՞նչ էլ քաղությունը:

Վեպի հետագա դրվագներում գրողը ցույց է տալիս, որ աստիճանաբար գյուղացու գիտակցության մեջ ևս արթնանում են որոշակի հեռանկարներ. «- Մենք էլ մին ժողովուրդ ենք, չէ՞ ... Մեր մեծամեծերը մեզ համար պլան քաշած կլինեն: Եսօր-եգուց Տաճկաստանն էլ է կռվին հասնելու... բա մենք սուս պիտի նայե՞նք» (III, 202):

Վեպի հերոսներից դարբին Վանեսը փորձում է ժողովրդին նախապատրաստել հնարավոր իրադարձություններին՝ զգուշացնելով, որ «կռվի ժամանակ հայրի մեջ խառնակություն չպիտի լինի»:

Խոսել եղեռնի ընթացքի ու նրա հետևանքների մասին, առանց անդադրառնալու ժողովրդական հույսերին, նրանց գիտակցության վրա ազդող հանգամանքներին, անշուշտ, իրավացի չէր լինի: Իսկ հույսերն ու սպասելիքները խմորվում էին տարիների ու տասնամյակների ընթացքում: Այս առումով «Կարմրաբար» վեպում կան ուշագրավ հատվածներ: Հետաքրքրականն այն է, որ Բակունցը ազգային գաղափարների արմատավորման համար կարևորում է գրքի դերը ոչ միայն Գևորգյան ճեմարանի սաների, այլև գյուղացիների համար: Գիրքն է գաղափարախոսության աղբյուրը: Պատահական չէ, որ սեփական անունը հազիվ գրող դարբինը երկաթի կտորտանքի, ժանգոտ մեխերի ու գերանդիների հետ իր դարբնոցում մի քանի գիրք էր պահում՝ «Կայծերը», «Բուլղար ավազակապետի պատմությունը» և այլն, որոնք ինքը կարդում էր ու ավելի շատ կարդալ տալիս մյուսներին և լսում ինքնամոռաց՝ գործը թողած: Այդ գրքերը ազգային-ազատագրական գաղափարներ էին սերմանում կարդացողների ու լսողների մեջ, ուստի եթե ոչ գյուղն ամբողջությամբ, ապա որոշ շերտեր անպայման ունեին որոշակի պատկերացում ազգային խնդիրների մասին: Սակայն այս դրվագում կա մի կարևոր հանգամանք ևս. դա ԲաժՖիո «Կայծերի» հիշատակությունն է առանց հեղինակի

անվան: Իբրև ազգայնական գրող ԲաժՖիոն արգելված հեղինակ էր «Կարմրաբարը» գրելու տարիներին, բայց, անկախ դեպքերի հեղինակային գնահատականից, որ ամենայն հավանականությամբ ավելի հստակ պետք է հնչեր վեպի չափապանված հատվածներում, նույնիսկ այս քանով ԲաժՖիոն ներկայանում է իբրև ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոս:

Պատմության ընթացքը, խորտակելով հայության բոլոր հույսերը, հանգեցրեց 1915 թ. ցնցող ողբերգությանը: Հիասթափությունն ու հուսահատությունը համատարած էին: Կամավոր զինվոր Բակունցը, որ «Գարնանային» կամ «Գարնանամուտ» անվանումով գրառումների տետր էր պահում պատերազմի ընթացքում, գրի առավ իր տպավորությունները, որոնցից են «Աղոթք», «Անտառում» պատկերները: Դրանց մեջ պատանի հեղինակն արտահայտում է իր ժխտողական վերաբերմունքն ընդհանրապես պատերազմի նկատմամբ, երազում խաղաղ կյանքի մասին: «Հոգեվ ենք, Տեր, էլ ուժ չունենք, էլ դիմանալ չենք կարող: Ծանր է բեռը, մեր ուսերը կքվեցան, մեր ծունկերը կորացան: Մարեցին, մարեցին քյուրավոր հույսեր, և խավարի մեջ հանգան մատաղ կյանքեր, երազներով, հույզերով հարուստ, մոմի պես հավելցին, ոչնչացան սերունդներ:

Տեր, հզոր ես, ավերը դադարեցրու...» (II, 11): Սա «Աղոթք»-ում է, որ տպվել է 1918 թ.: Նույն թվականին տպագրված «Անտառում» էտյուդում Բակունցն արդեն արտահայտում է իր երազների փլուզումից առաջացած հուսահատությունը. «Մեր ոտքերը մաշվեցին քայլելուց, մեր ծնկները կքվեցին ծանր բեռից, բայց մենք մեր աշխարհը չտեսանք:

Իգճուր, իգճուր, իգճուր...

Եվ արյուն, և՛ քրտինք, և՛ զոհ ու զրկանք, և՛ արցունք:

Մենք վերադարձանք այդ ճամփաները Նզովելով, այդ ճամփաները, որ հազար-հազար մատաղ կյանք լափեցին և չհագեցան: Մեր ուժերը մեզ անմիտ թվաց, մեր ճամփան կորստաբեր, և մնացինք շվարած: Մեկը չեղավ, որ մեզ նոր ճամփաներ ցույց տար, որ ամոքեր մեր հիվանդ սիրտը և թև տար, նոր թևեր, ապրելու, ստեղծելու» (II, 17):

Այս ոգով գրառումների այլևս չենք հանդիպում: Հավանականությունից հեռու չէ մտածել, որ գրառումների տետրում եղել են նաև էտյուդներ ու պատմվածքներ, որոնց ոգին չի համապատասխանել օրերի տրամադրությանը, և Բակունցը նպատակահարմար չի համարել տպագրել: Հաջորդ ստեղծագործությունների տպագրության թվականներն արդեն խորհրդային ժամանակաշրջանին են վերաբերում և տիրության ու հուսահատության փոխարեն անթաքույց քննա-

դատություն են պարունակում հույսի և հուսահատության այդ օրերի վերաբերյալ: «Են տարին» պատմվածքում (1924) արդեն խորհրդային գրող Բակունցը փոխում է խոսքի շեշտադրությունը՝ քննադատությունն ուղղում է որոշակի հասցեով՝ «Մի արտոնյալ դաս կար միայն, որի համար իզուր չէին ծխում իրկիզվող գյուղերը, մայթերի վրա, ավերակ շենքերի մեջ և խաներում աղտոտ իզուր չէր մահանում գաղթական ամբոխն անտեր»:

«Չինված, պատրաստված» դասն այդ շրջանում էր թալանը, ջարդում, ավերում: Այն տարին նրանց համար չկար ոչ դատ ու օրենք, ոչ կարգ ու կանոն:

«Սահման տղերանցն էին մաուզերեն յուրյանց» (II, 21):

Դաշնակցությունից դեռևս 1919 թ. հեռացած Բակունցը, որն իրոք կապերը խզել էր այդ կուսակցության հետ, քննադատության թիրախ է դարձնում նրա մաուզերիստ ներկայացուցիչներին: Խնդիրը, սակայն, միայն դաշնակցությունը չէր, դա հրաժարումն էր անցյալի ռոմանտիկ պատրանքներից և բավականաչափ կոշտ ու ժխտական հայացքն էր նաև այդ անցյալը հիշեցնող այլ երևույթների նկատմամբ. «Հիշողության մեջ աղտոտ՝ այն տարուց մնացել է իմ պատկերը՝ անկարգ, աղտոտ մազեր, ինչպես մացառուտ, բեղի տեղերը նոր ծած մազ և զգեստի պես մի բան, որի մեջ ես ավելի խրտվիլակի էի նման:

Չինվորի ոչլուտ շորերից նոր էի ազատվել» (II, 22):

Կամավորական բանակի հայրենասեր զինվորը բոլորովին այլ լուսավորության տակ է երևում այստեղ:

1920-30-ական թվականներին խորհրդահայ գրողն այլևս երեկվա մասին անկեղծ խոսելու հնարավորություն չունեի: Ավելի ճշգրիտ՝ նա չէր կարող խոսել ոչ ազգային երազանքների, ոչ հայ ժողովրդի ակնուր ողբերգության մասին: Ինչո՞ւ: Ինչո՞ւ խորհրդային պետությունը վախենում էր ազգային խնդիրներին և արգելում խոսել դրանց մասին: Խորհրդային գաղափարախոսությունը մարդկային պատմությունը դիտում էր իբրև դասակարգային պայքարի պատմություն, որը թույլ էր տալիս մեկ միասնական պետության մեջ միավորել կայսրության հսկայածավալ տարածքում գտնվող բազմաթիվ ազգերի ու ազգությունների: Իսկ յուրաքանչյուր ազգի պատմությունը քանդում էր այդ միասնությունը, շեղում ընդհանուր ուղուց և գաղափարից, ճեղքվածք առաջացնում ունիտար պետության կառուցի մեջ: Դա լավ էին ըմբռնում նաև ազգային գրողները, այդ թվում՝ և Բակունցը: 1934 թ. կուսակցական ճնշման տակ հրատարակած «Տեղական նացիոնալիզմի մի քանի արտահայտությունները մեր գրականության մեջ» հոդվածում, որտեղ

ստիպված էր մատնանշել իր և Չարենցի, Մահարու, Արմենի, Թոթովենցի ստեղծագործությունների մեջ նացիոնալիզմի արտահայտություններ, նկատում է. «Արմենի սխալն այն է, որ նա գլխավորը համարում է ազգային ձևը և ոչ սոցիալիստական բովանդակությունը, իսկ դա նշանակում է խորացնել այն, ինչ անջատում է զանազան ազգություններին»⁴: Սա 1934 թվականն է, երբ օղակն ավելի ու ավելի էր սեղմվում ազգային գրողների շուրջը, իսկ մինչ այդ Բակունցն իր մի շարք ստեղծագործություններում անդրադարձել էր թուրքերի կազմակերպած մեծ ու փոքր եղեռներից մազապուրծ հայ մարդկանց հետագա ճակատագրին:

Ակսել Բակունցը տարբերվում է թե՛ 1895-96 և թե՛ 1915 թ. եղեռնը պատկերող մյուս գրողներից: Կարելի է ասել, որ նա բուն եղեռնական իրադարձություններ չի նկարագրում, ոչ մահ, ոչ կոտորած, ոչ տեղահանություն: Արդեն ասվեց, որ ժամանակը դրա հնարավորությունը չէր տալիս, բայց միևնույն ժամանակ պատմական Յայաստանի տարածքը կռվով անցած զինվորը և ընդհանրապես հայ գրողը չէր կարող լռել այդ մասին: Եղեռնի ու տեղահանությունների մասին Բակունցը խոսում է մշուշոտ, ակնարկներով, կարելի է ասել՝ ինչ-որ տեղ վերացական ու անորոշ: Ընդհանրապես, Բակունցի ստեղծագործության առանձնահատկություններից մեկը վերհուշի գեղարվեստական հնարանն է: Նրա արձակված գործողությունները մեծ մասամբ գեղարվեստական ներկա ժամանակում չեն կատարվում, այլ պատմվում են իբրև անցյալում կատարված դեպք: Սիա «Լառ-Մարգար» պատմվածքում նա ինչպես է ներկայացնում հերոսի անցյալը. «Պոտոր հեղեղի բերանն ընկած տաշեղի պես Լառ-Մարգարը շատ ափերի է զարկվել, վերջը ալիքը լափու է տվել և Լառ-Մարգարին իր թռռան հետ գցել այդ գյուղը» (I, 164): Աշխատանքի կարճաժամ դադարներին Լառ-Մարգարը մտովի վերադառնում է դեպի աղետի սկիզբը, հիշում, թե ինչպես է սկսվել այն. «Գեղը խռովուրդ կա, մարդ, կանչում է պառազ: ...Տեղահանության օրերն էին: Սայլը ճռնչում էր օր ու գիշեր, փոշի կար ճանապարհին, չիվար դեմքեր: Գյուղերը խառնվել էին իրար, ճանապարհին նոր խմբեր էին միանում քարավանին, նորեկներից հարցնում էին ետ մնացած հարազատների մասին, հարցնում էին գնալիք ճանապարհի մասին: Եվ ոչ ոք հաստատ ոչինչ չէր ասում, մարդիկ կասկածից ավելի էին շվարում» (I, 167):

Գեղարվեստը կյանքի ընդհանրացված արտահայտություն է, այնտեղ նշվող տեղանունները, մարդիկ պայմանականություններ են իրականությունը վերարտադրելու համար, և այս տեսակետից Բակունցը հավատարիմ է մնացել

արվեստի սկզբունքներին. ստեղծել է գեղարվեստական լիարժեք կերպար ու մարդկային հուզիչ պատմություն: Միայն հայ ընթերցողը կարող է կռահել, թե ինչ տեղահանության մասին է խոսքը, և ինչու էին գյուղերը խառնվել իրար: Պատմվածքում խոսք չկա թուրքերի վայրագությունների մասին, ուստի գրողից մեծ վարպետություն էր պահանջվում առանց պատճառների և տեղահանության հեղինակների մասին խոսելու, գեղարվեստորեն հավաստի եղանակով պատկերելու արաբական ավազուտներով տանջանքով ու կորուստներով անցած իր հերոսի ճակատագիրն ու հոգեբանությունը:

«Լառ-Մարգար» պատմվածքներից առաջինն է, ուր Բակունցն ավելի լայն է բացում անցյալը փակող փակագծերը, նրա մյուս պատմվածքներում ավելի սակավ են դառնում անցյալի պատկերները:

«Սև հացը» (1931) պատմվածքում գրողը իրերը կոչում է իրենց անուններով՝ ջարդ, հրդեհ, զաղթ, բայց անորոշության պատճառով դեպքերը մի տեսակ հեքիաթային երանգ են ստանում: Իհարկե, ընթերցողի համար այդ ժամանակն այնքան էլ հեռու և անորոշ չէ, որովհետև խորհրդային վարչակարգի սկզբնական շրջանում ապրող նրա հերոսները՝ Մաջիտա մայրիկն ու նրա ամուսինը՝ «պապեն», չէին կարող դարավոր տարիք ունենալ, և նրանց անցյալը համընկնում էր 1910-ական թվականների հետ: Բակունցն «արագ» է անցնում այդ թվականների վրայով՝ սեղմ տողերի մեջ ամփոփելով մոտ անցյալում ապրած և տուն ու հայրենիք կորցրած սերունդների ողբերգությունը. «Նրանց սկիզբը պարզ և հանդարտ էր հոսել: Այա հանկարծ սևացել էր երկինքը, սևացել էր և գետինը, պայթել էր ջարդը, հրդեհը, զաղթը: Անցած ճանապարհների թողել էին բազմաթիվ անքար դամբարաններ, որոնց մեջ ամփոփված էին սովից, սրից, տապից և ծարավից մահացած մշակներ ու մանուկներ: Բաղդադում «պապեն» ստացել էր տենդ, որից հյուծվել էր և դեղնել» (I, 263):

Իհարկե, կոպիտ սխալ կլինեի Բակունցի, այսպես ասած, համառոտագրությունը բացատրել սոսկ գաղափարական ու գրաքննական արգելքներով: Սեղմությունը նախ և առաջ Բակունցի ոճի առանձնահատկությունն է: Ասվածը հասկանալի դարձնելու համար կարելի է բնորոշ օրինակ բերել բոլորովին այլ թեմա շոշափող նրա պատմվածքներից: 1920-30-ական թվականներին խորհրդային գրականության մեջ, կարելի է ասել, կենտրոնական տեղ էին գրավում դասակարգերի հարաբերության և սոցիալական խնդիրները, բայց դրանք Բակունցի ստեղծագործություններում կամ բացակայում են, կամ արծարծվում են





գեղարվեստական բարձր վարպետությամբ և նրբորեն: «Միրիադ» պատմվածքում ցույց տալու համար, որ Սոնայի և Դիլանի սերը տխուր վախճան ունեցավ հատկապես սոցիալական պատճառներով, Բակունցը ընդամենը մեկ նախադասություն է գրում. «...ամեն տեղ այդ սերը ծիծեռնակի պես ճռվողում էր, մինչև հասունացան նրանք, և մի օր էլ մեծատուն հարևանի շեմքով ներս մտավ Սոնան, հարսի բողը երեսին, բողի տակ արցունքից կարմրած աչքերը՝ պայծառ, որպես լեռնային ծովակ» (I, 75, ընդգծումը մերն է - Ժ. Բ.): Ընդգծված փոքրիկ հատվածն իր մեջ պարունակում է մի մեծ ողբերգություն:

Կար եղեռնական իրադարձություններին համառոտ անդրադառնալու ևս մեկ պատճառ: 1915 թ. եղեռնը ժողովրդի սրտում դեռևս բաց վերք էր, որ միում էր շարունակ, այն դեռ չէր վերածվել հիշողության, որ անհրաժեշտ լիներ թարմացնել: Բակունցը չի փորձում թարմ վերքը, բայց և չի կարող լռել այդ մասին: Նա իր ժամանակաշրջանի այն սակավաթիվ գրողներից է, որ շարունակաբար արծարծում է հատկապես եղեռնը վերապրողների խնդիրը:

Այսուհանդերձ, առաջացող ժամանակը ավելի ու ավելի էր դժվարացնում ազգային մեծագույն ողբերգության և նրա հետևանքների պատկերումը, թեև Բակունցը այդ խնդիրը չի շրջանցում ինչ «Կարմրաբար» վեպում, ինչ «Կյոթես» քրոնիկոնում, ինչ էլ մասնավոր «Ծիրանի փողը» պատմվածքում, որը ճակատագրական դեր ունեցավ Բակունցի համար: Այս պատմվածքում ևս Բակունցը հավատարիմ է իր սեղմ ոճին: Պատմվածքի հերոս Զազրոն պատկերավոր ու այլաբանորեն է ներկայացնում եղելությունը. «Ինչ եղեր է չեղեր է, գացեր է: Եղանք գոմշու կոտոշ, կպանք զիրար: Սև թոն եկավ, արուն առու ելավ: Մեր փողպատ ագատիկն Մոսկվա երկրեն, մեր Տալկոյիկի հողերեն» (I, 197): Զազրոն պատմում է ժողովրդական-բանասիրական ոճով, ինչ-որ ասքային երանգ է հաղորդում իր պատմությանը, որ միանգամայն համապատասխանում է սասունցի գյուղացու երևակայությանն ու մտածողությանը: Բակունցի խոսքի եղանակը փոխվում է, երբ ինքն է պատմում կատարվածի մասին, բայց դարձյալ գեղարվեստական պատկերավոր լեզվով: «... Երբ թերթում եմ իմ տետրը, սիրտս լցվում է կսկիծով ու դառնությամբ: Նրա սերունդը տեսել է և՛ հուր, և՛ պատերազմ, և՛ ջարդ, և՛ գաղթ: Երբ նրանք թշուղի են հարավ, խփում են և՛ հարավից, և՛ հյուսիսից: Զրդեփում էր մի անտառ, և նրանք եղևիկների խմբերի նման, այրվող ծառերի միջից, եղջյուրներով բացում էին իրենց ճանապարհը:

Նրանց քել են արևմուտք, ապա ձիերի գլուխը դարձրել են հյուսիս և բնակություն հաստատել այս բարձր լեռան վրա»: Բակունցը տողերի արանքից կարծես հուշում է, որ իր պատմածը սոսկալի իրադարձությունների սոսկ ընդհանրացումն է («Երբ թերթում եմ իմ տետրը...»), և նրա տետրում շատ ավելի ծանր գրառումներ կային:

Եղեռնից մազապուրծ բակունցյան հերոսներն ունեն ծանր և թախծալի հիշողություններ ու անսահման կարոտ կորցրած հայրենիքի հանդեպ: Բակունցն առաջինն է խորհրդահայ գրողներից, որն իր ստեղծագործություններում շոշափում է կարոտի և վերադարձի խնդիրները, որոնք սերտորեն կապված են իրար հետ, որովհետև ով կարոտում է, երագում է վերադարձի մասին: Միայն երագում է, որովհետև ոչ երագողը կարող էր ելք փնտրել, ոչ էլ մասնավոր գրողը կարող էր ակնարկել այդ մասին: Կարոտի տանջագին զգացմանը առաջին անգամ հանդիպում ենք «Լառ-Մարգար» պատմվածքում: Լառ-Մարգարի կարոտը սրտի խորքում է, ուրիշների համար ոչ այնքան տեսանելի, բայց այդ զգացումը անբաժան է հայրենիքի ու հարազատների (կնոջ ու որդու) կորցրած մարդուց: «Եթե բարձրանար ամպի վրա, Լառ-Մարգարը հեռու սարերի ետև պահված իրենց գյուղը կտեսներ, կտուրները եղեգով ծածկած, գյուղի մոտ կարասի կտոր կար, մեջը ջուր՝ հավերի համար» (I, 166): ՌՎ կարող է ասել, թե օրը քանի՞ անգամ է Լառ-Մարգարը ստիկի վերականգնել այս պատկերը և ի՞նչ կսկիծ է ապրել այս ամենը հիշելիս: Ինչ խոսք, նրան չէր լքում նաև ավազուտների ծանր հուշը, որն էլ ավելի բաղձալի էր դարձնում հայրենի գյուղի խաղաղ կյանքն ու կարոտը անցած-գնացած երանելի օրերի հանդեպ:

1930-ական թվականներին Բակունց արվեստագետն ավելի է հասունանում, տաղանդը դառնում է ավելի ընդգրկուն, գրիչն՝ ավելի համարձակ: Դրա վկայություններից մեկը «Ծիրանի փողը» պատմվածքն է, որտեղ գրողն ավելի որոշակի է անդրադառնում արևմտահայության փրկված բեկորների կարոտի խնդրին: Իհարկե, հարցն ավելի նուրբ է և վերաբերում է ոչ այնքան գրողի համարձակության աճին, որքան իր պատկերած հերոսների հոգեբանության ու զգացումների մեջ թափանցելու տաղանդի գործընթացը: Զազրոն կսկիծով է խոսում իր կարոտի և վերադարձի հնարավորության մասին: Նա պզտիկ ձգտումներ չունի, ուզում է վայելել իր ծննդավայրի գեղեցկությունը և երագում է մարդկության խաղաղ կյանքի մասին: «Չաղ մը երթամ տեսության մըր քարերին, մըր ձորերին, մըր Մարութա բանձր սարին: Առնիմ զիմ ծիրանի փող, ժողովմ մարդերու, նստիմ անուշ խոսերու վրեն, հանց գառներ

մարդիկ նստեն զիմ չորս բոլոր, երգեմ Էնոնց խաղաղության զիմ երգեր...» (I, 204): Զազրոյի նվագի մեջ և՛ հասկանալի թախիծ կա, երբ թվում է, թե մեկը մոլորվել է ձորերում ու տխուր հեկեկում է, և՛ ուրախություն, երբ նվագը ծագող արևի և մշակի խաղաղ աշխատանքի հիշողությունն է արթնացնում:

Ժամանակի գռեհիկ-սոցիոլոգիական բնադատությունը թշնամանքով ընդունեց պատմվածքը և գրողին մեղադրեց անցյալը կարոտելու և այն հովվերգական գույներով ներկայացնելու մեջ: Խորհրդային բնադատին ամենևին չէր հետաքրքրում նախախորհրդային անցյալը, մարդկանց կյանքն ու ճակատագիրը, և նա կարող էր իր դատավճիռը. «Ակսելի ներկայացրած այդ գյուղացին թեև ասում է, թե «Լենինի լույս մեզ ազատություն տվեց», սակայն նրա պատմվածքի լեյտմոտիվը ափսոսանքն է իր անցյալի վերաբերյալ (որ հեղինակը ներկայացրել է իդիլիկ գույներով), վերադառնալու և նույն պրիմիտիվ կյանքով ապրելու ձգտումը: Այլ միանգամայն ակներև է (ինչպես այդ երևում է նրա վերը գրված տողերից), որ հեղինակը ինքը բաժանում է նրա այդ հույզերը»⁵: Վերջին կետում բնադատն իրավացի էր, բայց որ Բակունցը ապրում էր իր հերոսների ճակատագրով և խորապես ըմբռնում նրանց ողբերգությունը: Բնադատը, սակայն, չի բավարարվում այս «մեղմ» եզրակացությամբ և «կարողում է» ահեղ դատավճիռը. «Իսկ ճշմարտությունն այն է, որ Ակսելն իր «Ծիրանի փողը» պատմվածքով արտահայտել է մեր թշնամու գաղափարախոսությանը մոտևոր տվող նացիոնալիստական տրամադրությունները»: Մարդն ու նրա հոգեբանությունը բնադատին չէին հետաքրքրում կամ քիչ էին հետաքրքրում, բնադատության գործը դարձել էր քաղաքական պիտակավորումը... Ահա այս տիպի բնադատություններին էլ հաջորդում է Բակունցի վերը հիշատակված մեղայական հոդվածը մեր գրականության մեջ դրսևորված նացիոնալիզմի մասին: Խնդիրը դրանով չի փակվում. բնադատությունը շարունակվում է երկար՝ ստանալով անհեթեթ ձևեր:

«Ծիրանի փողը» պատմվածքի հարուցած աղմուկը պայմանավորված էր առաջին հերթին նրանով, որ գրողն այստեղ առավել ընդգրկուն և բացահայտ է արծարծում արևմտահայության ողբերգության հարցը: Պատմվածքում խոսվում է և՛ ջարդերի, և՛ գաղթի, և՛ վերաբնակվողների՝ Նոր պայմաններին հարմարվելու դժվարության, և՛ տանջող կարոտի ու վերադարձի հեռավոր հույսերի մասին: Թեև իր ոճին բնորոշ է ավելի սեղմ-հուշագրական, քան նկարագրական եղանակը, այնուամենայնիվ Բակունցը շոշափում է շատ ցավոտ հարցեր, անդրադառնում ոչ միայն ֆիզիկական կո-

րուստների անդամակցությանը, այլև հոգեբանական հետևանքներին, որոնք, կարելի է ասել, շարունակվում են առ այսօր: Ուշագրավ է մի նույն դիտարկում. հայերի և թուրքերի միջև անջրպետն այնքան է խորացել, որ նրանք նույն հողում չեն ուզում թաղվել, հանդերձյալ աշխարհում ևս նրանք պետք է հեռու մնան միմյանցից: «Իմ ծանոթը պատմում էր, որ ոմանք հին սերնդից հրաժարվում էին հերկել ձյանքերի հողերը, որովհետև նրա սահմաններում թաղված են և թուրքեր: Որ դեռ երկար տարիներ նրանք իրենց մեռելները ուներին վրա, լեռներից իջել են դաշտի գյուղերը, որպեսզի նրանց թաղեն հին վանքերի պատերի տակ», - ստացած տեղեկություններն է վերհիշում գրողը (I, 198):

Տարդերից փրկված արևմտահայերի հոգեվիճակը երկակի է: Նրանք, անշուշտ, ուրախ են, որ փրկվել են ստույգ մահից, բայց և տխուր են ու չքավարված, քանի որ գտածը ի՞նչ կարող է մոռացնել հանդիմանի կորցրածը, ի՞նչ է կարող է փոխարինել նրան: Քարքարոտ լեռնաստանում վերաբնակված սասունցիները ջուր չունեն, մի կտոր հացը կրկին նրանց տրվում է դժվարությամբ, բայց նրանց տրտուռի մեջ ավելի շատ փաստի հաստատագրում ու հարմարվողականություն կա, բան թե բողոք. «Մըր բախտ կապած ենք գլալ ջրի... մըր հողեր լե ցրվուկ: Էհ, հացի տեղ արուն շատ կերանք: Յիմա որ սերմ թաղինք, սերմ վերունք, էի գոհություն»: Գոհություն այնքանով, որքանով որ երբ «քարափների վրա նստեց այրվող գյուղերի մուխը», և այրվեցին «Լ՛ սերմ, Լ՛ սերմնացան», իրենք կենդանի մնացին: Գոհություն, որովհետև «Լենինի լույս մեզ ազատություն տվեց: Մենակ մըր սահման եղ է, շնորհիվ սահմանի նեղության, ժողովուրդ կենդիվ: Մըր հողերի սահման ղըռ քար է: Ժողովրդի նեղություն ղըռ քարից է: Մըր հողին լե կառավարության, մըր ջան լե...» (I, 197): Ո՛չ Լենինի լույսի հիշատակությունը, «ի՞նչ ջանն ու հողին» կառավարությանը նվիրաբերելու ցանկությունը չեն փրկում ի՞նչ գյուղացուն, ի՞նչ Բակունցին: Սահմանի նեղությունը և հողերի քարքարոտ լինելը ակնհայտ է դառնում կորցրածի և գտածի համեմատության մեջ: Իհարկե, Սասունը լեռնային երկիր է, բայց «ինքը և իրեն հասակակից մարդիկ դեռ հիշում են իրենց ձորերը և դուրանը, որտեղ խոտը բարձրանում էր մինչև կովի կուրծք, այնպես, որ կովերը հորը էին բերում խոտերի միջին, և կովի հետքով գտնում էին հորթին՝ խոտերի մեջ նստած»: Սահմանի նեղության մասին ճակատագրական տրտուռն արդեն արտահայտված էր, որն էլ շարդարարական բնադատությանը առիթ տվեց Բակունցին հալածելու համար: Ցավալիս այն է, որ Բակունցը սահմանի ընդարձակման մասին ամբողջովին ուրիշ ծրագիր ու-

ներ՝ բոլորովին տարբեր քննադատների վերագրումից: «Նա հույս ուներ,- գրում է Բակունցն իր ծանոթի մասին,- որ ձյանքերի ժողովրդի հողերի սահմանները կայանան, քար ու քարափ կանաչով կպատեն, լեռան գագաթին, սառույցների տակ կկառուցեն ջրամբարներ և լեռնային լճակներ, և այլևս գիշերները ձորերով անպտուղ չեն հոսի սառույցների ջրերը» (I, 197): Բակունցի խոսքը ընդամենը վերաբերում էր երկրի տված հնարավորությունների լիարժեք օգտագործմանը: Բակունցին չփրկեցին հարկադրական մեղայականները, իսկ բնադատությունը, հատկապես Խանջանի սպանությունից հետո, էլ ավելի սանձարձակ ձևով գրողին մեղադրեց էլ հարևան ժողովրդին «հրդեհաձիգ» անվանելու, էլ կարոտի մասին «թունավոր լիրիզմով» հագեցած «քաղցր-մեղք» մեղեդի հնչեցնելու, էլ սահմանը լայնացնելու մասին «շովինիստական» ձգտումներ ունենալու, ԲաճՖու «ռասայական թեթատեցության հետևորդ» լինելու մեջ... «Ծիրանի փողը» պատմվածքում Բակունցը փորձել է հավատարիմ մնալ և՛ պատմական ճշմարտությանը, և՛ գեղարվեստական չափի զգացմանը: Իբրև ճշմարիտ արվեստագետ՝ Բակունցը չի սքողել պատմական իրողությունները և չի գունազարդել սոցիալիստական ներկան, ինչպես պահանջում էր խորհրդային գաղափարախոսությունը:

Պատմվածքն ունի յուրահատուկ կառուցվածք, որը թույլ է տալիս գործողությունները ոչ թե ուղիղ գծով շարունակել անցյալից ներկա, որն արդեն իսկ ենթադրում է որոշակի հակադրություն, այլ անցյալի ու ներկայի այնպիսի միահյուսում, երբ անցյալն անվերջ գոյատևում է ներկայում: Պատմվածքի և՛ գլխավոր հերոս Յագրոն, և՛ մյուս գրուցակիցները (Ջրբաշի և Ուրիշներ) իրենք են երկակի կյանքով ապրում. անվերջ համադրում են կորցրածն ու գտածը, արտահայտում և՛ վիշտը, և՛ սփոփանքը: Նոր գյուղը ինչեղանում է ինը, այստեղի հողերը՝ այնտեղի: Ժամանակների նման ներթափանցումը հոգեբանորեն համոզիչ է դարձնում հերոսների խոսքն ու վարքագիծը և միաժամանակ համապատասխանում է իրականությանն այն առումով, որ մարդը չի կարող դանակի մի հարվածով կտրել իր կենսագրության մի հատվածը ու ապրել առանց հիշողության:

«Ծիրանի փողը» պատմվածքի վերնագիրն արդեն խորհրդանշային իմաստ ունի: Ծիրանի փողով են հնչել հայրենի ժողովրդի երգն ու երաժշտությունը, սասունցի հայը դրանով է արտահայտել կյանքի իր ցնծությունը, կարոտն ու վիշտը, նրանով է նվագել «կապույտ լեռների երգերը»: Յագրոն իր հետ նոր հայրենիք էր բերել կարմրավուն այդ սրինգը և կրկին նվագում էր այն երգը, որ «իբրև երի-

տասարդ ֆավն նվագել էր իր հայրենի քարանձավներում, այնտեղ, որ ամպերը հյուղակներից ցածր են լողում, և երբ զարկում է կայծակի լախտը, մի վայրկյան բռնկվում են ձորերը» (I, 203): Ծիրանի փողը հայ, այս պարագայում ավելի որոշակի՝ արևմտահայ երգի ու երաժշտության, իսկ ավելի լայն առումով՝ մշակույթի խորհրդանշն է, որ Յագրոն ժառանգություն պիտի թողնի թոռնիկին: Բակունցը հեռու է իրապարակախոսությունից, նա իր ասելիքն ընթերցողին է հասցնում գեղարվեստական խոսքի, պատկերի, զգայական ընկալման, ենթատեքստի միջոցով: Ոճի սեղմության հետ միասին սա ևս Բակունցի արձակի առանձնահատկությունն է: Ծիրանի փողի փոխանցումով գրողն ակնարկում է արևմտահայ մշակույթի հետագա շարունակության, նրա գոյատևման, կարոտի և հիշողության խորհուրդը, որ այդամբ էր ժառանգվելու գալիք սերունդների կողմից:

«Ծիրանի փողը» պատմվածքի սեղմ ծավալի մեջ Բակունցին հաջողվում է ազգային ճակատագրի, ժողովրդի երեկվա և ներկայի խնդիրները բնեղ պատմական ճշմարտության լույսի տակ, նկարել լույսն ու սովերը, հակակշռել կորցրածն ու ստացածը: Բայց պատմվածքն ամենևին էլ չէր ունենա սպասված ազդեցությունը, եթե գրողը չպահեր գեղարվեստական չափի զգացումը և, փոքր-ինչ զիջում անելով «Լենինի լույսի» կարևորությանը, տեսանելի չդարձնել վերապրողների ապրած ողբերգությունը: Տրամադրությունների աննկատելի անցումները, բնարականության ու առնականության, պատմության ու առօրյայի վարպետ գուրդորումները, ոչ միայն բառապաշարի, այլև հերոսների լեզվամտածողության հարազատ վերարտադրությունը «Ծիրանի փողը» պատմվածքը դարձնում են գեղարվեստորեն անխցելի:

Քանակական առումով գուցե ոչ այնքան շատ, բայց Բակունցի ստեղծած կերպարների պատկերասրահում կարևոր տեղ ունեն շարդերի հետևանքով տեղահանված արևմտահայերի կերպարները, որոնց գրեթե բոլորին միավորում է նույնանման ճակատագիրը: Բակունցի գեղարվեստական համակարգում այդ կերպարները թե՛ իրենց սոցիալական վիճակով, թե՛ բարոյական ըմբռնումներով ու հոգեվիճակով հոգեհարազատ են բակունցյան արձակի տեղաբնակ կերպարներին: Իր հերոսներին Բակունցն ընտրում է Լախապիրած միջավայրից՝ գյուղացիներից, որոնք հասարակության մեջ իրենց գրաված դիրքով, մարդու և մարդկային մասին ունեցած պատկերացումներով չեն տարբերվում Աթա ապր, Արթին պապի կամ Ավան ամու



Լ կերպարներից: Սա նշանակում է, որ արևմտահայ վերապրողների և առհասարակ հայկական ջարդերի թեման որևէ ճեղքվածք կամ անհարազատ տարր չի մտնում Բակունցի գեղարվեստական համակարգում, այլ օրգանապես ձուլվում է հայության ճակատագրի, նրա անցյալի գեղարվեստական արժարժույթների: Նրա գաղթական հերոսները՝ Լառ-Մարգարը, Յազունը, ռուստա Լազարը, հայաստանցի Ավետիսը, հասարակ մշակներ են, որոնք ջուր են բաշխում, հող մշակում, պատ շարում: Ընդհանրության մեջ նրանք բոլորը անցյալի մղձավանջից ձերբազատվելու և նոր պայմաններին հարմարվելու խնդիր ունեն, բայց անհատապես նրանցից յուրաքանչյուրի ճակատագիրը դասավորվում է յուրովի:

Բակունցը գեղարվեստական վարպետությամբ է լուծում հոգեբանական մի խնդիր ևս՝ ցույց տալով, որ իր վերապրող արևմտահայ հերոսները մաս են կազմում նոր հասարակության, ձեռք են բերում աշխատանք ու ապրուստ, բայց, այնուամենայնիվ, մենակ են: Մենակ են իրենց այրող հուշերի ու անցյալի հետ, հասարակության մեջ են, բայց ապրած ներքին խռիչքով ու հույզերով՝ նրանից անջատ: Ահա Լառ-Մարգարը: Գյուղում նրան «ջրվոր են վարձել»՝ մտածելով՝ «Դարիք մարդ է, ազգ ու բարեկամ չունի, ջուրը արդար բաժին կանի»: Իր ազնիվ աշխատանքով նա արդարացում է գյուղացիների հույսը: Հատկանշական է, որ տեսածից ու ապրածից Մարգարի մարդկային նկարագիրը չի խաթարվել, ապրած դառնությունը նրան անարդար ու հարմարվող չի դարձրել, և նա շարունակում է հավատալ արդարությանն ու բարությանը և ջանում է ներշնչել մարդկանց, որ չար ու անարդար գործը լավ արդյունք չի տա: «Ծառդ պտուղ չի տա, յավրիս...», – խրատում էր նա: Այսուհանդերձ, նա հաճախ է առանձնանում ծիրանենու կամ բարդու տակ և «ծառի ճղերի արանքից» նայելով կապույտ երկնքին ու այնտեղ լողացող ճերմակ ամպերին՝ մտովի տեղափոխվում հայրենի գյուղ: Իսկ գյուղում «շատ քչերն էին իմանում, թե ինչ դառնությամբ է Լառ-Մարգարը այդ հասակը քաշել»: Հետաքրքրական է, որ «Ծիրանի փողը» պատմվածքում Բակունցը թռուցիկ մի դիտարկում էլ է անում, որը հետագա զարգացում չի ստանում այլ երկերում: Խնդիրն այն է, որ որոշակի անջրպետ գոյություն ուներ ոչ միայն տեղացիների ու գաղթականների, այլև հենց գաղթականների միջև, որոնք իրենց բնօրրանում աշխարհագրական բարդ ռելիեֆի՝ սարերի ու ձորերի պատճառով կտրված էին միմյանցից, ամեն բնակավայր ուներ կեցության իր կերպը, և ահա այդ տարբեր մարդիկ ճակատագրի բերումով հայտնվել էին նույն տեղանքում և դժվար էին համատեղվում: Ան-

շուշտ, այդ դժվարության հաղթահարման համար ժամանակ էր պետք: «Նա պատմում էր, որ գյուղի երկու թափաները՝ «բարակ» և «հաստ» թափան հետզհետե հաշտվում են, առաջանում է նոր սերունդ, որն իրեն չի համարում ոչ Մոսկվա երկրից և ոչ Տավրիդից, այլ Ձյանբերդից» (I, 197), – զարգացման ընթացքն է ներկայացնում գրողը:

Բակունցն առաջիններից մեկն է, որ նկատում է բնիկների ու եկվորների միջև գոյություն ունեցող անջրպետը: Ընդ որում, հարցը միայն հոգեբանական չէր, որ կարող էր պայմանավորված լինել նիստուկացով, վարքաբարձով: Որոշակի էր նաև գուցե հատկապես սոցիալական անջրպետն այն առումով, որ գյուղերում տեղավորված գաղթականները տեղահանվածների առավել ընչազուրկ մասն էին, և բնիկները որքան էլ աղքատ լինեին, սոցիալապես ավելի բարվոք վիճակում էին եղեռնի ճիրաններից մազապուրծ տնակների նկատմամբ: Այստեղից էլ որոշակի բամահրանք է ձևավորվում գաղթականների նկատմամբ, որն ավելի ակնառու երևում է «Կարմրաբար» վեպում և «Կյորես» քրոնիկոնում:

«Ու մի օր էլ գյուղում «հայաստանցի» մի գաղթական եկավ իր մոր հետ: ... Մի քանի ամիս գաղթական Լազարն ու իր մայրը ապրեցին իրենց տան ներքևի հարկում, հետո խնդրեցին մի մարագում տեղ տալ: Մարագները դեռ կանգուն էին: Եվ այն օրից մարագների թաղը կոչվեց Դարիբանց» (III, 104): Ավերակ մարագներում (թեև դեռ կանգուն) տեղավորված գաղթականները, այսպես թե այնպես, մյուս գյուղացիներից անջատված, ապրում էին անասելի ծանր պայմաններում, ծայր աղքատության մեջ: Մի անգամ Տեր-Նորընծա բախման գնում է Դարիբանց՝ հաղորդություն տալու մեռնողին և ստկում է իր տեսածից: «Տվոր երեխաներ, մի քանի պղինձ, մի կապ ցախ և աթարի մուխով լցված կիսաքանդ մարագ: Ոչ ծալք ունեին, ոչ փալաս ու կարպետ, երեխաները մտնում էին հարդի մեջ, կույզ գալիս...»: Իհարկե, ուրիշ աղքատներ նույնպես կային, բայց գյուղի գաղթականների վիճակն ընդհանրական էր: Դա չի նշանակում, թե քաղաքում գաղթականների համար ավելի լավ պայմաններ էին ստեղծված: Գորիսում ապրող «Հայաստանցի Ավետիսի» ընտանիքը («Կյորես») ավելի վատ պայմաններում էր ապրում, քան Դարիբանցի մարդիկ Կարմրաբարում: Այնպիսի ցուրտ ու խոնավ կլիմայում՝ «գերզամբայում», որ տիկին Վարսենիկը ձմեռվա թթու, կարտոֆիլ և զանազան հնոսիներ էր պահում, այդպիսի մի «գերզամբայում» էր ապրում Ավետիսի ընտանիքը, որի ու զորտեղացի լինելը ոչ ոք ստույգ չգիտեր, այլ միայն այնքան, որ նա «փախստական է Հայրստունի կողմերից»: Միայն պատմության

ուսուցիչ պարոն Արշակը Հայաստանի տեղը բացատրելու համար հիշատակում էր Ավ. Ահարոնյանի «Արցունքի հովիտը» և բացատրում. «- Ահա Հայաստանցի Ավետիսն այդ երկրից է: Այդ արցունքի հովիտից, որ կոչվում է Հայաստան, իսկ հնում՝ Նաիրի երկիր» (III, 461):

Տեղացիների խոսքում «հայաստանցի», «գաղթական», «ղարիք» արտահայտությունները հոմանիշ էին «աղքատ» բառին: «Հայաստանցիների» հարսանիքներն անգամ աչքի էին ընկնում խեղճությամբ, որ և՛ նյութական իմաստ ունի, և՛ հոգեկան. «... այդ գյուղերում, ինչպես և Կյորեսում, կա հայրստունցու հարսանիք արտահայտությունը, որ նշանակում է անաղմուկ հարսանիք՝ առանց կերուների, առանց մականների ...» (I, 463): Նման հարսանիքները խորհրդանշում էին աղքատությունն ու պակասությունը. «Եվ երբ պատահում էր, որ գինին քիչ էր, մակարապետը կանչում էր. «- Մենք հո հայրստունցու հարսանիք չենք անում...»:

Հայաստանցի Ավետիսը Կյորեսում հայտնվել էր 1897 թ., այսինքն՝ 1895-96 թթ. ջարդերից հետո, և ծանր աշխատանք էր կատարում՝ բար էր կտրում:

Դաժան ճակատագրի տեր այս մարդիկ աշխատասեր են, բարի ու համակերպիկ: Նրանք բոլորն իրենց մեջ ուժ են գտել ոչ միայն գոյատևելու, բարիք գործելու, այլև իրենց ունեցած լավագույնը սերունդներին ժառանգելու: Լառ-Մարգարը ծիրանի տակներ էր աճեցնում՝ նվիրելու համար, Յազունը ծիրանի փողն էր ժառանգություն թողնում ու հավատը վաղվա օրվա նկատմամբ, Մաջիտա մայրիկը՝ իր բարությունը...

Այս հերոսներից փոքր-ինչ տարբերվում է «Քեռի Դավիթ» պատմվածքի նույնանուն հերոսը: Նա ևս աշխատասեր է, բանիմաց և վայելում է համագյուղացիների հարգանքը, որոնք նրա խորհուրդներով են շարժվում: Սակայն քեռի Դավիթ, որի կյանքում ապագա գրիչը «շատ կատիկ հերոսություններ», ապրում է բարեկեցիկ կյանքով, աշխատում է կոլտնտեսությունում և կարգին «տունուտեղ է սարքել»: 1934 թ. գրած այս պատմվածքում Բակունցը որոշակիորեն ընդառաջ է գնացել ժամանակի պահանջներին և կոլտնտեսային ներկա կյանքը հակադրել անցյալի տխուր կյանքին, ընդ որում, այդ տխրությունը վերաբերում է ոչ թե ջարդի օրերին, այլ նրանից առաջ ապրած կյանքին: «Նրանք և նրանց պապերը այդպիսի տուն չեն ունեցել, նրանք ապրել են մի մութ երկրում, մորտ տների թոնրածխի մեջ: Նրանք ունեին եղեգնա խսիր, որ փռում էին օջախի առաջ, և ամբողջ գերդաստանը պառկում էր խսիրի վրա, ինչպես քարայրի գազանը՝ չոր տերևների վրա» (I, 398): Նոր, կոլտնտեսային կյանքի առավելությունը ցույց տալու համար Բակունցը դիտմամբ խտացնում է անց-

յալ կյանքի գույները, որպեսզի նոր կյանքը արևմտահայ վերաբնակներին թվա ձմեռվա սաստիկ բուքից տաք կրակի մոտ հայտնված պահի նման ապահով ու երջանիկ: Այնուամենայնիվ, Բակունցը չի մոռանում հիշելու իր պատկերած «վատ» կյանքին հաջորդած վատթարը. «Եվ նույնիսկ այդ կյանքը շատ եղավ նրանց համար, և ինչպես կրակվող եղեգնուտից փախչող թռչուններ, նրանք հեռացան իրենց բարձր քարափներից և քարափների խեղճ տներից»:

Սակայն անգամ այս որոշակի միտումով գրված պատմվածքը որպես մեղադրանք ծառայեց Բակունցի համար: Արևմտահայ վերաբնակի կոլորիտային, ասքային կերպար է նաև «Մուրդի գրուցը» ակնարկի Մուրուն՝ ներկայացված, սակայն, ժամանակի գաղափարական պահանջներին համապատասխան:

1920-ական թվականների վերջերից և արդեն 30-ական թվականներին հայ գրողները՝ Գ. Մահարին, Վ. Թոթովենցը, Զ. Եսայանը, հատկապես ինքնակենսագրական երկերում գրականության նյութ դարձրին, ինչքան որ գրաքննությունը թույլ կտար, եղեռնի ու գաղթի թեման՝ մասամբ «փակ» տեքստով, մասամբ ուղղակի, մասամբ ակնարկով: Ի տարբերություն հիշյալ գրողների, որոնց երկերի նյութը արևմտահայերի նախաեղեռնյան կյանքն ու հետագա տեղահանությունն էր՝ ողբերգության ու սարսափի առանձին դրվագներով (Մահարի, Թոթովենց), Բակունցը ավելի բազմակողմանի արծարծեց եղեռնից մազապուծ վերապրողների հետագա ճակատագրի թեմաները: Արևմտահայ վերաբնակները մտան նրա համեստ, արդար ու աշխատասեր կերպարների շարքերը, հարստացրին նրա կերպարների պատկերասրահը նոր կողմերով ու խորքով: Ու թեև Բակունցը ծանր հատուցեց իր արդար ձգտման և համարձակության համար, բայց կարևոր սկիզբ դրեց հայ արձակուրդ, ուր հետագա զարգացում ստացան նրա ավանդները Յրայեա Քոչարի, Խաչիկ Դաշտենցի, Մուշեղ Գալշոյանի և այլոց ստեղծագործություններում:

Ծանոթագրություններ

- Ակսել Բակունց, Երկեր չորս հատորով, հատոր II, Եր., 1979, էջ 16: Մյուս բաղվածքները կարվեն այս հրատարակությունից, հատորը և էջը կնշվեն շարադրանքում:
- Համաստեղ, Մոռացված էջեր, Եր., 2005, հ. Ա, էջ 52:
- Դավիթ Գասպարյան, Փակ դռների գաղտնիքը, Եր., 1997, էջ 623:
- «Գրական թերթ», 1934, թիվ 19:
- Ռ. Աթայան, «Սև ցելերի սերմնացանը», «Գրական թերթ», 1934, թիվ 17:
- Տեն «Գրական թերթ», 1936, թիվ 19:

ԿՈՐՈՒՄՅԱԼ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԻՊԱՍՔԸ

Ծիրանի փողը

Ես թերթում եմ ուղեգրությունների իմ տետրը և նրա էջերի արանքում գտնում եմ սուսամբարի երկու տերև՝ չոր ու գորշ, ինչպես հանգած մոխիր: Կռնում եմ թղթի վրա, ռունգերս լայնանում են սուսամբարի հոտից, ու դողալով թերթում եմ տետրը... Զետո պատից վերցնում եմ ծամի նման պիրկ մտրակը: Ես շոշափում եմ մտրակը, և Ցոլակը խելոք աչքերով նայում է ինձ, նայում է և հանդիմանում: Ինչո՞ւ էիր մտրակում: Մտրակը դառնում է սև օձ, որ զարկում էր ձիու ողորկ մարմնին:

Ես նորից եմ թերթում իմ տետրը, և սրտիս վրա իջնում է անդորր: Ցոլակը կայտառ վրնջում է, խաղացնում ականջները: Անընդհատ բարձրանում ենք, անցնում առապար ու քարափ: Քրտնած ձին մռուրդ կոխում է ջրերի սպիտակ փրփուրի մեջ և սանձերի երկաթների միջով ծծում սառցահամ ջուրը: Ինչքան վեր ենք բարձրանում, այնքան մոտ է արևը, և արևը խանձում է դեմք, զգեստ, ձեռք,՝ այնքան սառն են ջրերը, օդը ջինջ, և լսելի է ծաղիկների մեջ մոլորված մեղվի հանդարտ բզզոցը:

Ցոլակը վրնջում է և արագացնում բայերը: Ճանապարհը լայնանում է: Ահա մի արտ՝ քարե պատով: Նոսր հասկերը սկսվում են լեռան հովից: Գյուղը մոտ է, ձին փռաացնում է ռունգերը և խայտալով կրծում սանձը:

Ճանապարհից վերև, բլուրի լանջին մեկը ջրում է մուգ-կանաչ առվույտը: Ես լսում եմ, թե ինչպես առվի ավազի մեջ զննվում է նրա ծանր բախը: Իսկ երբ բարձրացնում է բախը, արևը լուսավորում է բախը, և թվում է, թե ջրվորի ուսին բռնկված ջահ է:

– Սա՞ է Ձյանբերդի ճանապարհը...

Ջրվորը բացականջում է ոչ «հա», ոչ «հո»: Զարցս կրկնում եմ: Մարդը բախը խրում է առվի ավազի մեջ և գալիս է դեպի ինձ: Ինչքան մոտենում է ջրվորը, այնքան ավելի բարձրահասակ է երևում: Ես նայում եմ նրա բաց կրծքին. թվում է, թե նրա ձայնը պիտի խրոխտ թնդա: Ջրվորը լայն ու ծանր ձեռքը մեկնում է ինձ, ասում է «մեր աչքում» ու ձեռքը տանում դեպի ճակատը:

Ամենևին էլ խրոխտ չի նրա ձայնը, այլ բարակ ու քաղցր: Ծերունի է. սպիտակ են ոչ միայն բեղերը և ունքերը, այլև կրծքի մազերը, որ հիշեցնում են խճճված մա-

ցառուտ:

Զարցս կրկնում եմ:

– Զա, – ասում է, – մըր գուղն ի... Իդա դար լե շըջվի... ու գրպանից հանում է ծխախոտի քիսեն: Առաջարկում եմ գլանակ: Նա ժպտում է, կարծես ուզում է ասել, որ բարակ գլանակը նուրբ է նրա համար, սակայն վերցնում է և դնում ականջի հետևը: Ապա ոլորում է մատի չափ հաստ «ծգարան»:

– Յոնջան քո՞նն է:

Նա կուշտ ծծում է ծխախոտը, կուրծքն ուռչում է, չոր կաշվի նման ճռռում են թոքերը: Ռունգերից և բերանից ծխի բուլբուլները թաց թողնելով, գլխով է անում:

– Վարկայության նախակահ բերեց հերոս: Անուշ բուս է: Ինչ կուտ (ցորեն) լե մեր է, – գլխով նշան է անում քարոտ սարալանջի կողմը, որտեղ կանաչին են տալիս ցորենի մանր արտերը: Ես դժվարանում եմ որոշել նրա արտը, բայց գիտեմ, որ ջրվորը հեռվից ճանաչում է նույնիսկ իր արտի կարմիր պուտերը:

– Մըր թախտ կապած ենք գոյալ ջրի... Մըր հողեր լե ցրվուկ: Էհ, հացի տեղ արուն շատ կերանք: Զիմա որ սերմ թալիսք, սերմ վերունք, էլի գոհություն:

Նրա ուսից կախված է հարդի տոպրակը: Տարվա այս ժամանակ նրան ինչի՞ է պետք հարդը և ինչո՞ւ է տոպրակը ուսից կախ:

Նա ինձ պատասխանում է, որ ինքը գյուղի ջրբաժանն է, և գիշերները առունների ջրերն ինքն է բաշխում մանր և ցրված հողակտորների վրա:

– Իսկ հա՞րդը:

Զարդը ջրաչափն է: Ջրբաժանը ոսկեգույն հարդը շաղ է տալիս առունների ջրերի վրա և որոշում հոսանքի արագությունը, ջրի ծավալը:

– Մուրճո... Մուճ... րճո, – վերևից լսվում է մի է գիլ ձայն, – ջուր խլամմ:

– Տղա լա՞ր...

Ծերունին առավ բախը ու վազեց վերև, երևի ջրի բախը:

Զետո ես և Ցոլակը շրջեցինք «դարը», իջանք ծորակը, նորից բարձրացանք, և սարահարթի վրա երևաց լեռնային գյուղ՝ առանց ծառերի, առանց այգիների, օղակված կանաչ մարգագետիններով և բաց առուններով, որոնց ջրերը արևամուտին վարարում են, կեսգիշերին աղմկում





խոր ծորերում, իսկ երբ արևը զարթոնում է, լուռ է՝ լեռան սառույցներից իջնող այդ առուները:

* * *

Սպիտակ եզան հետ մտանք բակը: Եզը գնաց դեպի միակ դուռը, որի ճակատին փակցրած էր աղբ, աղբի վրա՝ ձվերի ներկած կճեպներից խաչ: Եզը միակ դռնից ներս մտավ, և մենք՝ նրա հետևից: Գնացինք մուգ միջանցքով, ապա մի դուռ բացվեց դեպի ձախ, մթնի մեջ կորավ սպիտակ եզը, նրա հետևից՝ իմ հոգևած ձին, որ լեռների մաքուր օդից հետո անախորժությամբ էր շնչում գոմի կծու հոտը:

Յետո միջանցքի աջ կողմը նույն հանգով երգեց մի այլ դուռ, և բոցերի լույսով, մութի մեջ երևաց ոսկե ծամիկներով մի աղջիկ, Ազնոն, դուռտը իմ վաղեմի ծանոթի, որի տանը գիշերելու էինք ես և իմ ձին:

Ազնո, Ազնիվ... Երբ հիմա թերթում եմ իմ ուղեգրությունների տետրը, որի էջերի արանքում գտնում եմ չորացած ծաղիկներ և սուսամբարի տերևներ, ես երկամր, երկար նայում եմ դաշտային թիթեռնիկի թևին, որի ոսկեփողիկ փայլում է, ինչպես այն օրը, երբ մարգագետնի վրա թիթեռը ծծում էր ջրախոտի ծաղիկները: Թիթեռնիկի թևի վրա ես կարդում եմ «Ազնո»... Եվ մտածում եմ, որ Ազնոն հիմա դպրոց է գնում և կտուրների վրա ջինջ ձայնով այլևս չի երգում:

Քանց լուսին ամայի տակով,

Դու ջուր կերթաս ջուխտ դորակով:

Եվ այլևս չի պատասխանի այնպես, ինչպես այն օրը, երբ միասին նստել էինք իրենց բարձր կտուրին, և լեռան միամիտ աղջիկը պատասխանում էր իմ հարցերին:

– Ազնո, կիսո տեսե՞լ ես:

– Հաբա օրի չըմ տեսե. ջուր մը գարկեր է պատ, կցուցե ձի, աղջիկ, օրիորդ, կարտոֆել:

– Կարմիր բանակ լսե՞լ ես:

– Կարմիր բանակ ջուր է, քցեր են դրոշակի վրա:

– Ազնո, աստված կա՞:

– Հաբա, Աստված կանաչ ճնճղուկ է:

– Հապա երկի՞նքը:

– Երկինքը զինջիլով կապուկ է եզան կտուռին:

– Ազնո, որ մեծանաս ի՞նչ ես դառնալու:

– Կեղևիմ օրիորդ:

Ազնո, Ազնիվ...

Բոց էր բարձրանում խոր թոնրից, գվկում էր օդը սնդուխ խողովակների մեջ, և թվում էր, թե գվկում էր գետինը բոցերի ուժից, միսի սև թուլաներից, որ հրեղեն այրանի հետ գալարվելով՝ ձգվում էր մինչև լեռնային երկնքի սառն աստղերը:

Իմ վաղեմի ծանոթը կրակի մոտ

պատմում էր ջրի և ջրբաժանության, բարոտ հողերի և հանդերի մասին:

– Ինչ եղեր է չեղեր է, գացեր է: Եղանք գոմշու կոտոշ, կպանք զիրար: Սև թոն եկավ, արուն առուն ելավ: Մըր փողպատ ազատինք Մոտկանա երկրեն, մըր Տալվորիկի հուղերեն: Ախ ու փախ, գիշեր ցերեկ չփախ, սոված ռուբ: Լենինի լույս մեզ ազատության տվեց: Մենակ մըր սահման եղ է, շտորիկ սահմանի նեղության, ժողովուրդ կենդիվ: Մըր հողերի սահման դըռ բար է: Ժողովուրդի նեղության բարից է: Մըր հողին լե կառավարության, մըր ջան լե...

Նա հույս ուներ, որ Ձյանբերդի բար ու բարափ կանաչով կպատեն, լեռան գագաթին, սառույցների տակ կկառուցեն ջրամբարներ և լեռնային լճակներ, և այլևս գիշերները ծորերով անպտուղ չեն հոսի սառույցների ջրերը:

Նա պատմում էր, որ գյուղի երկու թայֆաները՝ «բարակ» և «հաստ» թայֆան հետզհետե հաշտվում են, առաջանում է նոր սերունդ, որն իրեն չի համարում ընդ Մոտկանա երկրից և ընդ Տալվորիկից, այլ Ձյանբերդից: Եվ որ ինքը և իրեն հասակակից մարդիկ դեռ հիշում են իրենց ծնրերը և դուրանը, որտեղ խոտը բարձրանում էր մինչև կովի կուրծք, այնպես որ կովերը հորթ էին բերում խոտերի միջին, և կովի հետքով գտնում էին հորթին՝ խոտերի մեջ նստած:

– Երեկ ամպ էր, Էսօր՝ պարզ արև...

Իմ ծանոթը պատմեց այնպիսի բաներ լեռների մարդկանց մասին, որ այժմ էլ, երբ թերթում եմ իմ տետրը, սիրտս լցվում է կսկիծով և դառնությամբ: Նրա սերունդը տեսել է և՛ հուր, և՛ պատերազմ, և՛ ջարդ, և՛ գաղթ: Երբ նրանք քնում էին հարավ, խփում էին և՛ հարավից, և՛ հյուսիսից: Հրդեհվում էր մի անտառ, և նրանք եղևիկների խմբերի նման, այրվող ծառերի միջից, եղջյուրներով բացում էին իրենց ճանապարհը: Նրանք քշել են արևմուտք, ապա ձիերի գլուխը դարձրել են հյուսիս և բնակություն հաստատել այս բարձր լեռան վրա:

Իմ ծանոթը պատմում էր, որ ոմանք հին սերնդից հրաժարվում էին հերկել Ձյանբերդի հողերը, որովհետև նրա սահմաններում թաղված են և թուրքեր: Որ դեռ երկար տարիներ նրանք իրենց մեռելները ուներին վրա, լեռներից իջել են դաշտի գյուղերը, որպեսզի նրանք թաղեն հին վանքերի պատերի տակ: Նա ասում էր, որ Ձյանբերդում ես կտեսնեմ շատ խաչեր՝ դռան ճակատին, եզների եղջյուրներից կախ, կապե կարասների վրա, թոնրի շրթունքներին, նույնիսկ այն խրտվիլակների կրծքին, որոնց ցցում են արտերում՝ ճնճղուկների դեմ: Որ Ձյանբերդում ապրում է մուկը Սևդոն, որը հագնում է մագեղեն կոշիկ՝ «խարուկ», ինչպես Մոտկանա երկրում, որն «իր բերնին նալ է զարկեր և չի խոսում նրանց հետ, որոնք Մոտկա-

նից չեն:

Ձյանբերդում միայն մի մարդ կա, որի առաջ խոնարհվում է համառ Սևդոն: Այդ մարդը Հագոն է, ինչպես անվանեց իմ ծանոթը՝ լեռան գյուղերի ամենալավ մարդը:

Բայց մեր գրույցը խանգարվեց, որովհետև լավեց ոչխարների մայունի աղմուկը: Ազնոն տեղից թռավ, դուրս թռավ, դուրս եկան և մյուսները, նրանց հետ՝ ես:

Լեռներից գյուղի վրա իջնում էին այծերի ու ոչխարների հոտերը: Ինչ աշխույժ աղմուկ էր, ինչպիսի գվարթություն, կանչեր, շան կաղկանձ, պղնձե կովկիթների զրնգոց, բառաչ, մայուն և հովիվների սուլոցներ: Կարծես ավար էին բերում գյուղ, և կին, աղջիկ, երեխա ու տղամարդ փողոցներից դեպի բակերն էին քշում այծ, ոչխար, հորթ:

Իմ ծանոթի բարձր կտուրից ես նայում էի Ձյանբերդին, Արարատյան դաշտին, որտեղ կանաչներով շրջապատված գյուղերը հետզհետե սուզվում էին երեկոյան մութի մեջ, և ավելի պայծառանում էին բաղաբների կրակները:

Երբ հիշում եմ այդ երեկոն, բաղաբների կրակները և դաշտի վրա իջնող գիշերը, Ձյանբերդի ներքևի կտուրի վրա տեսնում եմ մի մարդոտ, թիկունքը դեպի ինձ, դեպի լեռան գագաթը, երեք դաշտի կողմը, և լուռ եմ լեռան գյուղերի ամենալավ մարդու նվազը:

* * *

Նրա հայրենիքը եղել է բարոտ Սասունը, այդ խուլ երկրի ամենախուլ անկյունը, որտեղ ծորերը դառնում են կիրճեր և լեռների գագաթները՝ ապառաժներ: Տաք կիրճերում, լեռնային վտակների ափերին, կանաչում էր վայրի խաղողը, և նրա որթը մազցում էր պղնձագույն ժայռերի վրա: Աճում էր և վայրի հոնը, երբեմն թուզը: Իսկ բարձրերում, որտեղ բարափների վրա ցրված էին նրանց աղբառ հյուղակները, ցանում էին կորեկ և վաղահաս ցորեն: Երբ հասնում է կորեկը, ծորերից բարձրանում էին գագաթները: Մարդիկ արտերի եզրին խարույկ էին վառում, որպեսզի արջերը չտորոն կորեկը:

Նրա մանկությունը խաղացել է այդ բարափների վրա: Ինչպես Ֆավն, այդ պատանին փող է նվագել բարանձավների ստվերում, և նրա պարզ երգերին արձագանքել են ծորերը: Երբեմն կարկուտն է ջարդել նրան, երբեմն բարերն են քերծել դեմքը, ցուրտը, և արևը խանձել են նրա կուրծքը, ինչպես լեռան լանջը: Նա կռվել է գագաթների հետ, և նրանց հետ, որոնք հրացանների կրակոցների աղմուկով քնում էին նախիրը, ոչխարը, առևանգում կին ու երեխա:

Թվում էր, թե մինչև մահ կապրի այդ ժայռերի վրա, ինչպես իր պապերը, կցանի կորեկ, աշնանը կիջնի ծորերը, կհավաքի միրգ և ցախ, ձմեռը կլիսի



գրույցներ՝ Ձենով Օհանի, Մարա Մելիքի և Թլոր Մանուկի մասին:

Բայց պայթեց պատերազմը, եղավ զորածողով, բռնություններ, հրդեհեցին դաշտի գյուղերը, հրդեհաձիգները ձորերով բարձրացան մինչև լեռների գագաթները, մինչև նրանց խեղճ խրճիթները, հրացանները որոտացին, և շողացին սրեր, ամպերի փոխարեն բարափների վրա նստեց այրվող գյուղերի մուկը: Բոցը հասավ դեղնած արտերին, կրակը լափեց և՛ սերմ, և՛ սերմնացան:

Հագրոն առավ իր կնոջն ու աղջկան և ծերպերով, քարայծի արահետներով անցավ լեռից-լեռ, քարանձավից-քարանձավ, կերավ ընդեղեն և այլոճ, և մասուր,- ապա հոգնած, ահը աչքերի մեջ գնաց հարավի կողմը, գնաց մերթ իբրև քուրդ հովիվ, մերթ իբրև քաղցած գայլ և հասավ անծանոթ մի աշխարհ, որտեղ ոչ լեռներ կային ոչ լեռնային լույս աղբյուրներ: Շոգ հարթավայր էր, պղտոր դեղին գետերով, որոնց ջրերի մեջ չէին երևում այն կապույտ առվակները, որ իջնում էին իրենց լեռների սառույցներից:

Նա հանեց ծիրանի փողը, այն կարմրավուն սրինգը, որի վրա նվագել էր կապույտ լեռների երգերը, և նրա մատները խաղացին ծիրանի փողի վրա: Հագրոն

Մարաթունկ լեռ կամ Մարութա սար - գտնվում է Հայկական լեռնաշխարհում՝ Սասուն գավառում: Եղել է սասունցիների սիրած և պաշտելի սարը: Կոչվել է Նան Մարաթունկ: Լեռան գագաթին՝ 2967 մ բարձրության վրա կառուցված է Մարութա Սուրբ Աստվածածին վանքը:

”

շոգից խանձված շրթունքներով գրկեց փողի բերանը, ինչպես լեռնային գյուղերում ջուր են խմում կավե դորակներից: Ձրի նման գլզում էր նրա նվագը, լեռների երգը՝ շոգ հարթավայրում:

Լաց լացեց կինը, փոքրիկ աղջիկը քնեց մոր ծնկների վրա, լացեց և Հագրոն, հետո թեթևություն իջավ սրտի վրա, ինչպես կապույտ ամառը նստում էր Մարութա բարձր սարին: Ապա սրբեց արցունքը, ուսն առավ աղջկան, առավ կնոջն և հետևայեց: Փռչի էր նստել հեռվի լեռների վրա, և չէին երևում իրենց բարձր լեռները:

Հագրոն ասավ կնոջը.

- Էսօր դուման է մեր լեռան վրա, վաղը նորից արև կծագի;

Բռնեցին մի ճանապարհ, մոլորվեցին հազար ճանապարհներում, հետո, երբ արդեն սպիտակ մազեր կային նրա գլխին, Հագրոյի քոչը ելավ այս բարձր լեռը:

* * *

Հանդարտվում էր գյուղի երեկոյան աղմուկը:

Լեռան սպիտակ սառույցները լույս էին տալիս: Մարգագետինները ծխում էին դաղձի բույր: Բարակ լուսինը դողդողում էր, և նրա լույսի տակ եզների շողիքը օրորվում էր արծաթյա օղակների նման:





Դադրած եզները նկատվում էին, և լուսնի տակ նրանք նման էին մարմարե արձաններին:

Ներքևի կտուրի վրա հավաքվել են գյուղի հոգևած մշակները: Երեկոյան մութի մեջ նրանք ավելի հաղթամարմին են, ինչպես գեր եզները:

Ես բարձրանում եմ կտուրը:

Այնտեղ չորս փոքրիկ աղջիկներ կան և մի տղա: Մի բարձրահասակ մարդ զբաղվում է նրանց հետ: Աղջիկները հարձակվում են փոքրիկ տղայի վրա, իսկ տղան հրում է նրանց, ապա իրար են խառնվում և գլորվում կտուրի վրա: Բարձրահասակ մարդը քթջում է, մյուսների խոսակցությունը դադարում է, և լեռնու բոց աչքերով նրանք նայում են երեխաների կովին: Ցավից ճչում է մի աղջիկ և վազում կտուրի վրա նստածներից մեկի, ըստ երևույթին հոր, գիրկը: Հայրը ծիծաղում է:

– Հաբա աղջիկ, գոյի տոհմը ե:

Բարձրահասակ մարդը բաժանում է մյուսներին, գրկում է տղային, որ կորյունի նման կռվում էր հասակակից երեք աղջիկների հետ:

– Բաբեն դուրբան, հերիք,– ասում է մարդը: Իսկ տղան նրա գրկի մեջ թաքտում է, կարծես հիմա պիտի թռնի շիվար աղջիկների վրա:

Մեկը աղջիկներին պատվիրում է տուն գնալ, և նրանք փայտե սանդուղքով իջնում են ցած:

Տիրում է լռություն: Միայն բարձրահասակ մարդը զվարթ քթիցով հանգստացնում է տղային:

– Բաբեն դուրբան, չե՞ աղջիկ լե մեղք ե...

– Միկչև. էնի չգարկեր, ես լե չգարկի,– բողբոլում է տղան:

– Հագրո,– կանչում է նստած ստվերներից մեկը,– չալե:

Ուրեմն այս բարձրահասակ մարդն է Հագրոն, որի մասին պատմել էր ինձ իմ վաղեմի ծանոթը:

– Խնամին, խնամին...

– Յար խուշտա...

Տղան արագ իջնում է նրա գրկից և վազում ներքև: Հագրոն մոտենում է ինձ և մեկնում ձեռքը:

– Բարի տեսանք:

Նա ունի լայն ճակատ, որ լուսնի տակ պղնձագույն է երևում, ճերմակ մազեր և կեռ արծաթիթ: Նրա աչքերը փայլում են երիտասարդական ավյունով:

– Կխաղա՞ք,– նայում է մյուսներին: Ես երբեք, երբեք չեմ մոռանա այդ լուսնյակ գիշերը բարձր լեռան մի գյուղում: Հագրոյի տան կտուրը, նրա նվազը և հսկաների հին պարը:

Տղան տևից բերեց սրինգը, այն ծիրանի փողը, որ քիչ ավելի երկար էր մեր հովիվների սովորական սրնգից: Նա

կանգնեց կտուրի ծայրին, փողի բերանը դարձրեց դեպի գյուղի կողմը, և հետզհետե, ինչպես լուսաբացը լեռներում, զարթնեց «Յար խուշտա»: Նա սկսեց դանդաղ և մեղմ, հետո ձայները զորացան, արագացավ չափը: Հետո վայրենի կանչով վեր թռավ ջրբաժանը, կանգնեց կտուրի մեջտեղ, նրան հետևեց երկրորդը, երրորդը, և շուտով նրանց երկու շարքը, ինչպես երկու վիթխարի ապառաժ, զարնվեցին իրար՝ ձեռքերով, ձևներով և կրծքով: Նվազն ավելի թուլեց. դողում էին կտուրի գերանները, կարծես իրար վրա արշավում էին բանակներ: Նրանց ձեռքերի հարվածը պողպատի ձայն էր հանում, և կայծեր էին թռչում նրանց բորբոքված աչքերից:

Հարևան կտուրների վրայից, տների բակերից կանայք և աղջիկները դիտում էին լեռնականների պարը: Երբ մի շարքը մյուսին ետ էր մղում ձեռքերի հարվածով, կարծր կրծքերի զարկով, նահանջողները արշավում էին նոր թափով, որպեսզի վրիժառու լինեն ամիթի և պարտության համար:

Հագրոն նվազում էր իր ծիրանի փողը, նվազում էր նոր զվարթությամբ այն երգը, որ իբրև երիտասարդ Ֆավն նվագել էր իր հայրենի բարանձավներում, այնտեղ, ուր ամպերը հյուղակներից ցածր են լողում և երբ զարկում է կայծակի լախտը, մի վայրկյան բռնկվում են ձորերը:

* * *

Նրանք գնացին:

Կտուրի վրա մնացին Հագրոն և ես: Տուն գնաց և այն փոքրիկ տղան, նրա թռու: Լուսնի տակ ես դիտում էի նրա կարմրավուն փողը: Նա ծանր էր և կարծես ծոված էր ծանր մետաղից: Ես բռնում էի այդ փողը գիշերային զովի դիմաց, և փողը մեղմ բամուց մետաղի ձայն էր հանում:

Իսկ Հագրոն պատմում էր, որ իր կյանքում ամենածանր հարվածը եղել է կնոջ մահը: Աղջիկն ամուսնացել է դաշտի գյուղում: Պապի մոտ հաճախ է լինում այն փոքրիկ տղան, նրա առաջին թոռը:

Աստղերի և լուսնի տակ փռվել էր Արարատյան դաշտը: Մասիսների ձյունոտ գագաթների սպիտակ ցուլը լույս էր ցցում միկչև երկնքի խորքը: Հեռվում, ուղտերի բարավանի նման ձգվել էին Հայկական պարի լեռները:

– Կտեսնե՞ս էն գուղ, կրակների ձախ կողմ:

Հովվական կրակների ձախ կողմը, դաշտի վրա երևում էր մի սև կետ:

– Հոնի գիմ նշանած ա թաղուկ:

Երբեմն նա իջնում է լեռան գյուղից, վերցնում է չոր ցախ և կնոջ գերեզմանի գլխավերևը կրակ վառում: Նա նստում է այնքան, միկչև հանգչում է կրակը, հետո տխուր, տխուր նվազում է ծիրանի փողը և այն երգերը, որ նվազում էր իրենց հեռու երկրում, որտեղ ինքը հովիվ էր, կի-

նը՝ գյուղական աղջիկ: Հետո թեթև հոգով գնում է աղջկա տունը, լսում է նրա տան աղմուկը, խաղում է թռուների հետ և մեռնակ ճանապարհ ընկնում դեպի լեռը, դեպի լեռան գյուղի իր պարզ խրճիթը:

– Հագրո, դու լա՞վ էիր ապրում քո գյուղում:

– Մեր բարավների վրա՞: – Եվ լռում է:

– Հեյ վա՛խ ջահելություն, թռար...

Եվ նորից վերցնում է փողը:

Նվազում է, այս անգամ ոչ թե լեռնականների կորովի երգը, որից բորբոքվում է արյունը, – այլ հովվական պարզ մի երգ: Կա և թախիծ այդ երգի մեջ, կարծես մեկը մոլորվել է խոր ձորերում և տխուր հեկեկում է, կա և ջինջ ուրախություն, երբ լեռների վրա ծագում է արևը, ելնում է ծովը, մշակը գնում է աշխատանքի, վերջապես կան և կարոտի հնչյուններ՝ վերադարձի և վերջին հույսի:

– Հաղ մի երթամ տեսության մըր բարերին, մըր ձորերին, մըր Մարութա բանձր սարին: Առնիմ գիմ ծիրանի փող, ժողվիմ մարդերու, նստիմ անուշ խոտերու վրեն, հանց գառներ մարդիկ նստեն գիմ չորս բուր, երգեմ էնոց խաղաղության գիմ երգեր, մարդիկ հալալ-գուլալ ախարտոց պես գրկեն գիրար, չեղնի ոչ տեր, ոչ մշակ, ոչ թուր, ոչ բռնություն: Փչեմ գիմ ծիրանի փող, էլման ծովա բարձրանա երդիկներեն, խմեմ մըր լուս աղբյուրներեն, գիմ քրտիք կաթա մըր բարերու վրեն, մըր բանձր սարի ամպ թող լիզա գիմ սիվտակ ոսկորներ...

– Հագրո, իսկ ո՞ւմ կտաս քո ծիրանի փողը:

– Հիմ փող կիտամ իմ բաջարով թռու-նիկին:

* * *

Փողոցում խաղաղություն է:

Քնել են հոգևած մարդիկ, և փողոցի լապտերների լույսի տակ օրորվում են բաղաձայն տները, նրանց սև պատուհանները: Լեռներից գով է իջնում բաղաձայն վրա, և գիշերային զովը բերում է սուսամբարի բույրը, լեռների հստակ օդը և մաքուր ջրերի ձայնը:

Ես գոցում եմ ուղևորության իմ տետրը, նրա մեջ սուսամբարի երկու տերև՝ գորշ ու չոր, ինչպես հանգած մոխիրը: Լեռների վրա վրնջում է իմ ձին՝ ինչպես սանձարձակ ուրախությունը, ինչպես սպիտակ ջրվեժը, որ իջնում է բարձրերից, թափով կտրում դաշտը, խառնվում մի պղտոր գետի և ուրիշ ջրերի հետ գնում դեպի անեղ ծովը:

Ձյանբերդ... Ձյանբերդ...

Դու դառնում ես անպարտելի ամրոց, քո բարձր լեռները զարթնել են, և քո լանջերին հնչում են հաղթության երգերը:

Մի վիթխարի ծիրանի փող, առանց հին ահի և նոր խնդրությամբ հնչեցնում է մեր արդար երգերը:

//

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՄԱՐԵՅ ՀԱՅ ԱՐՁԱՎԻ ԱՄԵՆԱՇՈՐՈՒՆ ԱՍՏՂԸ



ԱԿԱՆԵԼ ԲԱԿՈՒՆԺ

**ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾ
ԿԻՅՈՒ, ԶՈՒԴ ՅՈՅԶ,
ՈՒՅՑ ԴԱՏՈՐՈՎ,
ՅՅԿ ՎԱԿԵՐԱԳԻՐ**

Սա ամենամեծ գործն է, որն սկսվել է 1936 թ. մայիսի 21-ին, ավարտվել նույն թվականի նոյեմբերի 6-ին: Սա նաև խմբակային գործ է՝ մարդկային 9 ճակատագրի ողբերգությամբ: Ահա նրանք՝ ճակատագրով դատապարտվածները.

1. Ներսես Միքայելի Ստեփանյան, ձերբակալված 1936 թ. մայիսի 21-ին,
2. Ալեքսանդր Ստեփանի Բակունց, ձերբակալված 1936 թ. օգոստոսի 9-ին,
3. Դրաստամատ Ասքանազի Տեր-Սիմոնյան, ձերբակալված 1936 թ. օգոստոսի 9-ին,
4. Մնացական Յովհաննեսի Խաչատրյան, ձերբակալված 1936 թ. հունիսի 21-ին,
5. Գուրգեն Գեորգիի Բաղիկյան, ձերբակալված 1936 թ. մայիսի 27-ին,
6. Կենսաբեր Սերգեյի Բոխյան, ձերբա-

- կալված 1936 թ. օգոստոսի 31-ին,
7. Աղասի Կյազի Գալոյան, ձերբակալված 1936 թ. նոյեմբերի 5-ին,
8. Ռաֆայել Միքայելի Աղամալյան, ձերբակալված Թիֆլիսում, 1936 թ. օգոստոսի 23-ին,
9. Միխայիլ Դավիդովիչ Կիրշենբլատ, ձերբակալված Թիֆլիսում, 1936 թ. հոկտեմբերի 1-ին:

Այս խմբի համար հետաքննության ժամկետ էր նշանակվել նախ՝ մինչև 1936 թ. հուլիսի 21-ը, ապա՝ քննիչ Նիկողոսյանի պահանջով երկարաձգվել մինչև նույն թվականի օգոստոսի 21-ը, երրորդ, չորրորդ, հինգերորդ անգամ՝ մինչև սեպտեմբերի 23-ը, հոկտեմբեր, նոյեմբերի 10-ը: Երկարաձգումը պայմանավորված էր նորանոր ձերբակալություններով: Իսկ գործի հետ կապված հետաքննությունները շարունակվել են նաև նոյեմբերի 10-ից հետո:

Դատական մարմինները խմբի պարագլուխ են համարել Ն. Ստեփանյանին, իսկ առավել եռանդուն ղեկավարներ՝ Ա. Բակունցին ու Ե. Չարենցին:

Այս գործի մեջ կան վավերագրեր նաև Ե. Չարենցի, Վ. Թոթովենցի, Չ. Եսայանի և այլոց մասին, որոնց ևս կանոնադաշտանք:

1937 թ. փետրվարի 27-ին հետաքննչական մարմինները առանձնացնում են «մեղադրյալների» երկու խումբ՝ ա) Ն. Ստեփանյան, Դ. Տեր-Սիմոնյան, Ա. Բակունց, Մ. Խաչատրյան, Գ. Բաղիկյան, Կ. Բոխյան, Ա. Գալոյան, առանց Ռ. Աղամալյանի և Մ. Կիրշենբլատի, որոնց գործը (N 8946) 1937 թ. փետրվարի 10-ին միացրել էին Ն. Ստեփանյանի «խմբի» N 4131 գործին, բ) Վ. Ալազան, Գ. Վանանդեցի, Գ. Մահարի, Վ. Նորենց, Ս. Մարտիկյան, Ե. Չարենց, Վ. Թոթովենց, Ն. Ղազարյան: Ավագ լեյտենանտ Նիկողոսյանը գտնում է, որ վերջիններս «իրենց հանցավոր գործունեությամբ ուղղակիորեն կապված չեն վերոհիշյալ մեղադրյալների հետ» (հ. 1, թերթ 111):

Ն. Ստեփանյանի «խմբի հանցավոր գործունեությունը» բացահայտելու համար գործին կցված են քաղվածքներ հետևյալ անձանց հարցաքննություններից (տե՛ս հ. 5, 6), Վ. Մարտիկյանի (5.05.36., 13.08.36., 14.08.36., 16.09.36., 17.09.36., 26.09.36., 2.10.36., 10.10.36.), Ն. Ղաբադյանի (21.07.36., 24.07.36.), Զ. Գյուլիբեկյանի (5.07.36., 25.07.36., 7.08.36., 8.08.36.), Գ. Վանանդեցու (7.07.36., 19.07.36., 2.08.36., 3.08.36., 14.08.36.), Ա. Աղոյանի (19.07.36), Վ. Ալազանի (25.07.36., 15.08.36., 25.08.36., 2.10.36., 4.11.36.), Արա Սարգսյանի (27.07.36.), Մուշեղ Աղոնցի (28.07.36., 29.07.36.),

◀ 9. Մահարու (14.08.36., 15.08. 36, 28.08.36.), Վ. Նորենցի (16.08.36., 21.08.36, 31.10.36.), Մ. Հասարայանի (7.09.36.), Մ. Արմենի (7.09.36.), Դ. Դեմիրճյանի (30.10.36.), Ռոզա Վինսբերգի՝ Ա. Խանջյանի կինը, որն աշխատել է ժողկոմի տեղակալ, Նրանից ֆինանսական հարցերի մասին ցուցմունք են վերցրել Ա. Գալոյանի գործի կապակցությամբ (31.10.36.), Արտաշես Գևորգյանի՝ Ջենալ փաշային ապանողը (3.11.36.), Ե. Չարենցի (16.11.36.), Ա. Տիգեջյանի՝ Վիվանի (19.07.36), 2. Եսայանի (28.07.36.):

Այս գործից կառանձնացնենք Ա. Բակունցին ու Ն. Ստեփանյանին վերաբերող մանրամասները, իսկ մյուսները ի մի կբեռնենք ընդհանուր շարադրանքով:

«Իմ գրքերը արգելված են, իմ սահմանափակ խցիկը կտրված է նորմալ չափով, ես գրկված եմ օրենքով նախատեսված իրավունքով պաշտպանելու իմ շահերը»:

Ա. ԲԱԿՈՆՑ

Ամենալուսավոր, ամենապայծառ, «արցունքի պես ջիւն» գրողը, արձակի նուրբ քնարերգուն, ամենադրամատիկ կերպարը ամբողջ 1930-ական թթ. գրական-հասարակական կյանքի անցուղործի մեջ:

Ակսել Բակունցը... Հայ գյուղերի վիշտն ու թախիծը, հայ մարդու խոնարհ ու տխուր կյանքի գեղագիրն ու օրհներգուն: Մեն կարոտների ու անդառնալի կորուստների լռակյաց խնկարկուն, որը պիտի տասնմեկ ամիս շարունակ ստորացվեր ՆԳԺԿ հետաքննիչների կողմից և, պայծառ հայացքը արդարությանը հառած, կանգնած իր իսկ ձեռքով փորած գերեզմանի եզրին, գնդակահարվեր, երբ դեռ նոր էր լրացել կյանքի 38 տարին:

Ծանր ու մղձավանջային օրեր էին երևանում տազնապալի գարուն, ահաբեկիչ ամառ, ներկված արյան շառագույնով: Ռ՝ԼԻ էր հեռավոր օգոստոսների «պղնձե ծնծղան», կյանքի պոթեկուն կրակը: 1936 թ. օգոստոսի 9-ը դարձավ հերթական շուրջկալների օր: Նույն օրը միաժամանակ ձերբակալվեցին Ա. Բակունցը, Գ. Մահարին, Դ. Տեր-Սիմոնյանը, Վ. Ալազանը... Հետո նրանցից երկուսը միևնույն օրն էլ պիտի գնդակահարվեին, երկուսն էլ՝ քիչ ավելի ուշ ճանապարհ բռնեին դեպի Սիբիր:

Բակունցի դեմ գործ է հարուցվում ԶԽՍՀ Քրեական օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածներով: Այդ որոշումը նրան հայտնել են 1936 թ. օգոստոսի 25-ին: ԶԿ(Բ)Կ Կենտկոմի քյուրոն Բակունցին «Կուսակցությունից հեռացնելու և հակահեղափոխական, նացիոնալիստական գործունեության համար ձերբակալելու մասին» որոշումը կայացրել է նույն օրը՝ օգոստոսի 9-ին (արձանագրություն № 114/4, կետ 3): Չեկուցել է Մոլոդտսին,

ելույթ են ունեցել Հաստավարովը, Գուլյանը, Լուկինան (Արիսյանի հրեա կինը), Հանեսօղյանը և Ամատունին: Նույն որոշումով կուսակցությունից հեռացվել ու ձերբակալվել է նաև Ալազանը (հ. 1, թերթ 40):

Հետագայում լրացուցիչ ավելացվել են մեղադրական նոր հոդվածներ. 1936 թ. նոյեմբերի 3-ին՝ 19-65-րդ (նրան հաղորդվել է հաջորդ օրը), նույն թվականի նոյեմբերի 30-ին՝ 78-րդ (նրան հաղորդվել է նույն թվականի դեկտեմբերի 13-ին): 19-65-րդ հոդվածի հարուցումը կրկնվել է նաև 1937 թ. փետրվարի 4-ին և հաղորդվել հաջորդ օրը: 19-65-րդ հոդվածով ներկայացված մեղադրանքի առիթով (այսինքն՝ տեղորի նախապատրաստում դեկավարության դեմ) Նիկողոսյանի հարցին՝ իրեն մեղավոր ճանաչում է, թե՞ ոչ, պատասխանել է. «Ո՛չ, չեմ ճանաչում» (հ. 3, թերթ 64-65):

Մոլոդտսու ստորագրությամբ Նախարարության № 80 հասցեով Բակունցի ձերբակալման և խուզարկման օրդերը (№ 4/17) տրվել է 1936 թ. օգոստոսի 9-ին: Ձերբակալությունը և խուզարկությունը կատարել է պետանվտանգության քննիչ Ա. Մարգարյանը (հ. 1, թերթ 33): Խուզարկությունը կատարել են օգոստոսի 10-ին: Ըստ արձանագրված ցուցակի՝ տարել են վեց նամակ, երեք նոթատետր, մեկ ընդհանուր տետր, երկու ալբոմ, յոթ միավոր տարբեր գրառումներ, կուստոմսը (№ 1314942), զինգրքույկը, անձնագիրը (ԺԴ № 013159), «Չանգեզուր» սցենարի երեք «վարիանտ», առանց փամփուշտների լրիվ անպետք մի ատրճանակ: Նույն օրը կազմել են № 32 անդորրագիրը, ըստ որի նրանից վերցրել են 200 ռ. գումար և գոտի: Անդորրագրի տակ կա Բակունցի ստորագրությունը:

Գործին կցված է բժշկական տեղեկանք, տրված 1936 թ. նոյեմբերի 11-ին: Դրանից պարզվում է, որ նա տառապել է աջ ականքի մշտական բորբոքումով, մշտական ռևմատիզմով, զարկերակների կարծրացումով:

Բակունցին առաջին և երկրորդ անգամ հարցաքննել են ձերբակալությունից առաջ՝ 1936 թ. օգոստոսի 5-ին և 7-ին, այնուհետև կալանման օրը, դրանից հետո՝ 1936 թ. օգոստոսի 10-ին, 14-ին, 15-ին, 16-ին, հոկտեմբերի 17-ին, նոյեմբերի 4-ին, 1937 թ. փետրվարի 4-ին: 1936 թ. հոկտեմբերի 17-ին և 1937 թ. փետրվարի 4-ին, հարցաքննություններից հետո, նրա և Ն. Ստեփանյանի միջև կատարվել է առերեսում, արձանագրվել են նրանց տրված հարցերն ու պատասխանները:

Բակունցին հարցաքննել են Անդր-Ֆեդերացիայի ՆԳ ժողկոմի տեղակալ, պետանվտանգության մայոր Ստեփանովը, Մոլոդտսին, Մալկովը, Գևորգովը, Նիկողոսյանը: Հարցաքննությունները կրել են շատ ծանր ու դժան բնույթ: Բա-

կունցը ենթարկվել է ամեն տեսակի հալածանքների, ֆիզիկական բռնությամբ նրան ստիպել են ստորագրել նախապես կազմած արձանագրությունների տակ: Որպեսզի պարզ լինի, թե ինչպիսի հոգեկան կտտանքների է ենթարկվել նա՝ մի հայացք գցենք այդ արձանագրություններին:

1936 թ. օգոստոսի 5-ի արձանագրությունից.

ՀԱՐՑ. Հետաքննության կողմից պարզվել է, որ դուք եղել եք Հայաստանի գրողների հակախորհրդային, նացիոնալիստական խմբի ղեկավարներից մեկը: Դրանում դուք ձեզ մեղավոր ճանաչո՞ւմ եք:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո, ես ընդունում եմ, որ եղել եմ մինչև 1927 թվականը «Նոյեմբեր» անունը կրող, իսկ հետագայում իր գործունեությունը առանց հատուկ անվան շարունակող Հայաստանի գրողների խմբի ղեկավարներից մեկը: Մեր այդ խումբը, իր ստեղծագործությունների մեջ կատարելով նացիոնալիստական մի քանի սխալներ, հետագա զարգացմամբ, հատկապես 1933 թվականից հետո, դուրս եկավ գրական-ստեղծագործական խմբի շրջանակներից և վերաճեց հակախորհրդային քաղաքական խմբի... Իմ ստեղծագործության մեջ չեն եղել հակախորհրդային տարրեր, իսկ իմ նացիոնալիստական սխալները ես բացահայտել եմ իմ մի քանի բանավոր և գրավոր ելույթներում:

Այն, որ Բակունցի մտքերը քննիչը շարադրել է մեղադրանք հարուցելուն նպաստող ձևակերպումներով, ակնհայտ է: Միաժամանակ ասենք, որ 1934 թ. հետո Բակունցը, իրոք, մի քանի գրավոր և բանավոր ելույթներում՝ տակտիկական նպատակներով արել է այդպիսի խոստովանություններ: Այդ քայլն ուներ միայն մեկ պատճառաբանություն՝ խոստովանել, որպեսզի հակառակորդները՝ լռեն: Ընդ որում, այդ քայլին նրան միշտ մղել են կողքից (Երեմիա Բակունցը, Լևոն Արիսյանը):

Վերոհիշյալ արձանագրության հետագա շարադրանքի մեջ ասվում է, որ «խումբը» ղեկավարել են ինքն ու Չարենցը: 1933-ից «խմբին» են միացել Ն. Ստեփանյանը, Վ. Ալազանը, Վ. Նորենցը, Գ. Վանանդեցին: Գյուլի սոցիալական վերակառուցման դժվարությունների պայմաններում 1930-1933 թթ. Հայաստանում առաջացած տնտեսական դժվարությունները «խմբի» տրամադրությունը ավելի ու ավելի դարձրեցին «հակախորհրդային ու նացիոնալիստական»:

Ձերբակալությանը նախորդած հաջորդ արձանագրության մեջ ասվում է, որ Դավալովի ցեմենտի 60 տոկոսը տանում էին Վրաստան, իսկ Երևանում ժողովրդական տան շինարարությունը, ցեմենտ չլինելու պատճառով, կանգնած էր: Եր-

ևան-Աղստաֆա երկաթգծի շինարարությանը խանգարում է Բերիան: Ըստ ՀԽՍՀ լուստոգրումատի 1932 թ. որոշման՝ տարրական դպրոցներում՝ ուսուցիչներին՝ ռուսերեն չիմանալը համարվել է ինտերնացիոնալիզմի խորթ երևույթ՝ ևացիոնալիզմ: Բողոքելով այս որոշման դեմ՝ Բակունցն ասել է, որ Հայաստանի դեկավարներից ոմանք, օրինակ՝ Կենտկոմի քարտուղար Հակոբովը, հայերեն չգիտեն: Իսկ նրանց, նաև ինժեներատեխնիկական մտավորականության, երեխաները սովորում են ռուսական դպրոցներում: Այստեղից էլ՝ նրանց ատելությունը հայ մշակույթի, հայոց լեզվի նկատմամբ և հանրապետությունը ռուսականացնելու չքողարկված միտումը:

Արձանագրվել են նաև այս մտքերը. «Մեր խումբը հատկապես մեծ կազմակերպչական և գործնական աշխատանք է տարել Հարենցի «Գիրք ճանապարհի»-ի կապակցությամբ: ...Խմբում բազմիցս քննարկելով գրքի արգելման հարցը, մենք այդ արգելքը դիտում էինք որպես Անդրերկրյան կողմից Հայաստանի ազգային գրականության դեմ ուղղված արշավանք: ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախկին քարտուղար Խանջյանի կողմից այդ գիրքն արժանացավ խանդավառ գնահատանքի: Կարողավ դեռևս ձեռագիր վիճակում՝ նա հանձնարարեց դրա հրատարակությունը»:

Գիրքը փրկելու համար, առանց կուսակցությունից հեռացվելու վախի, «խմբի» անդամները որոշում են նամակով դիմել երկրի ղեկավարությանը: Արձանագրված է նաև այն միտքը, որ Խանջյանը ձեռագիր վիճակում կարդացել ու տպագրության է երաշխավորել ոչ միայն Հարենցի ժողովածուն, այլև Թոթովենցի «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա» վիպակը և Բակունցի «Ծիրանի փողը» պատմվածքը:

Իր և Հարենցի հարաբերությունների մասին 1936 թ. օգոստոսի 9-ին Բակունցն ասել է. «1934 թ. հետո էլ Հարենցի հետ խզել եմ կապերս և նրա հետ չեմ հանդիպել»: Այս կապի մասին խոսակցությունը շարունակվել է նոյեմբերի 4-ին:

ՀԱՐՑ. Հետաքննությանը հայտնի է, որ Հարենցը ստանձնելով դեկավար դեր, գործում էր որոշ չափով ինքնուրույնաբար: Ճշգրտե՞ք ձեր ցուցմունքները Հարենցի ղեկավար դերի մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում եմ, որ Հարենցը ոչ միայն եղել է մեր հակահեղափոխական կազմակերպության կենտրոնի անդամ, այլև նրա գաղափարական ղեկավարներից մեկն էր: Նա անձամբ ինձ ավելի մտերիմ համախոհ էր, քան Ստեփանյանը: Ճիշտ է այն, որ իր բնավորության բերումով նա երբեմն գործում էր ինքնուրույնաբար: 1935 թ. փետրվարին նրա ինքնուրույն ելույթների ու գործողություն-

ների պատճառով, նրա հետ ունենալով սկզբունքային տարաձայնություններ, ես Հարենցի հետ խզեցի իմ հարաբերությունները: Իմ հետագա հակահեղափոխական գործունեությունն ընթացել է առանց նրա և առանց գրողների խմբի, բայց այլ անձնավորությունների հետ, այդ թվում՝ Ն. Ստեփանյանի (հ. 3, թերթ 59):

Բակունցի և Հարենցի հարաբերությունների մասին այստեղ ճշմարտություն կա: Իրոք, 1934-ից նրանք հեռացել էին իրարից. փոխադարձ վերաբերմունքի մեջ դա արտացոլվել է նույն 1934 թ. լեզվի հարցեր վերաբերյալ Հարենցի գեղուցման մեջ և 1935-ին, Հարենցին գրողների միությունից հեռացնելու կապակցությամբ, Բակունցի ելույթում: Բայց խորքում նրանք շարունակում էին իրար գնահատել և արժեքավորել: Ապացույցը Հարենցի մի քանի բանաստեղծություններն են, Բակունցի գրավոր կամ բանավոր ելույթների առանձին արտահայտություններ: Թեև «թաքունը» խարխվել էր, բայց հոգևոր կապը չէր խզվել:

Աստիճանաբար ճնշումն ուժեղանում է: Արձանագրվում է հետևյալը. իբր Հարենցի «Գիրք ճանապարհի» տպագրության հարցը քննելիս հավաքներից մեկի ժամանակ Ն. Ստեփանյանն ասել է. «Ա՛յ, եթե մի տղա գտնվեր, որ կարողանար շարքից հանել Բերիային, ապա դա հայ ժողովրդին ավելի օգուտ կտար, քան ձեր գրքերը» (հ. 3, թերթ 17): Օգոստոսի 14-ի հարցաքննության ժամանակ արձանագրվել է նույն Ստեփանյանի այն միտքը, ըստ որի «ձևով՝ ազգային, բովանդակությամբ՝ սոցիալիստական» լոգունգը վերցված է վրաց մենշևիկներից (Ժորդանիա) և կապ չունի լենինիզմի հետ: Վրաց գրողները ԽՍՀՄ գրողների առաջին համագումարին գնացել են կյուբանյան ավելի լավ ապահովված, քան հայ գրողները, որը Բերիայի վարած խտրական քաղաքականության հետևանք է: 1934-ին Թիֆլիսում անց է կացվել Անդրկովկասի ժողովուրդների արվեստի օլիմպիադա, որտեղ վրացիները ծաղրել են հայ մշակույթը: Ն. Ստեփանյանը, լինելով լուստոգրում, բողոքել է այդ արարքի դեմ և, տեղի իշխանությունների ստեղծած արգելքները հաղթահարելով, հաղորդակցման եզրեր գտել տեղի հայերի հետ:

1936 թ. օգոստոսի 10-ին խոսվում է Բակունցի և Վաղարշակ Տեր-Վահանյանի գաղափարական զինակցության մասին: Վերջինս մեղադրվել էր Հիմով-Կամենսկի խմբի՝ «Միասնական կենտրոնի» գործունեությանը հարելու մեջ, ձերբակալվել և դատապարտվել պատժի առավելագույն չափի՝ գնդակահարության: Բակունցի տունը խուզարկելու ժամանակ գտել էին Տեր-Վահանյանի երկու նամակ՝ գրված 1932 թ. սեպտեմբերի 30-ին և 1935 թ. փետրվարի 2-ին: Առաջին նամակը 10

էջ ծավալով գրվել էր Բակունցի «Խաչատուր Աբովյանի «անհայտ բացակայում»» (1932) գրքի կապակցությամբ, որը հեղինակը նվիրել էր նրան: Նամակում Տեր-Վահանյանն անդրադարձել է Բակունցի սկզբունքային հարցադրումներին և ցույց տվել նրա վրիպումները: Նույն թվականին Տեր-Վահանյանը Բակունցին էր նվիրել իր կազմած «Խաչատուր Աբովյան. Պարապ վախտի խաղալիք» գիրքը, որը «Դասակարգային պայքար» հրատարակչությունը 1932-ին հայերեն լույս էր ընծայել Մոսկվայում: Գրքում տեղ էր գտել «Պարապ վախտի խաղալիք» հավաքածուի 1864 թ. հրատարակության լրիվ արտատպությունը, որին կցված էր ծավալուն մի ուսումնասիրություն: Ավելի ուշ Տեր-Վահանյանը՝ Բակունցին նվիրել էր «Նշանավոր մարդկանց կյանքը» մատենաշարով իր հրատարակած «Խաչատուր Աբովյան» գիրքը (Մոսկվա, 1934, ռուսերեն): Աբովյանի կյանքով ու ժառանգությամբ զբաղվող երկու մտավորականների կապը՝ Նախ համարվում էր նացիոնալիստական տրամադրությունների արտահայտություն և ապա՝ քաղաքական ընդդիմություն:

Արձանագրվել է նաև այն միտքը, թե, «Հոկտեմբեր-Նոյեմբեր» (1932) տարեգիրքը հրատարակելով, Հարենցն ու Բակունցը հրապարակավ ցույց են տվել, որ պաշտպանում են Խանջյանին: Գիրքը, ինչը, իրոք, հրատարակչական բարձր արվեստի արտահայտություն է, նվիրված էր Հայաստանի խորհրդայնացման 12-րդ տարեդարձին: Սա էլ իր հերթին մի նոր շերտ է ավելացնում նրանց տրված նացիոնալիզմի մեղադրանքին:

Խոսք է լինում ժամանակի մտավոր ուժերի համախմբման մասին, որի անհրաժեշտությունը Հարենցը պատճառաբանել է այսպես. «Ներկայումս տեղի է ունենում Հայաստանի վերածնունդ. մեր երկրում՝ բանվոր դասակարգը երիտասարդ է, իսկ գյուղացիությունը՝ հետամնաց: Հետևաբար, միայն մտավորականությունը կարող է կատարել ազգային վերածննդի կազմակերպչի դերը» (հ. 3, թերթ 58):

Հարցաքննությունների և դրանց հաջորդող մեղադրանքների շրջանակը պատկերացնելու համար անդրադառնալ նաև այլոց հարցաքննությունների կյուբերին: 1936 թ. օգոստոսի 16-ին Վ. Նորենցի անուկից արձանագրվել է հետևյալը. «Հարենցի «Գիրք ճանապարհի» դարձավ մեր հակահեղափոխական տրամադրությունների արտահայտման միջոց: Մեր խմբի գաղափարական ղեկավարը Բակունցն էր: Թեև Հարենցն ավելի մեծ հեղինակություն ուներ, բայց Բակունցը հարցերն ավելի սուր էր դնում: Դառնալով ինձ ու Ալազանին՝ Բակունցն ասաց. «Ահա մենք երեք կուսակցականներ ենք: Կուստոմից»



«գրկվելու գնով անգամ մենք այդ գիրքը («Գիրք ճանապարհին»՝ Դ. Գ.) կպաշտպանե՞նք, թե՞ ոչ»: Ես ու Ալազանը պատասխանեցին, որ հազիվ թե հարցն այդպես դրվի մեր առջև, բայց եթե դրվի՝ մենք կպաշտպանենք գիրքը» (հ. 6, թերթ 127-130): Նույն թվականի օգոստոսի 21-ի հարցաթանկության ժամանակ Նորենցը նաև ասում է, որ Չարենցի գրքի պաշտպանության նպատակով մտադիր էին գրել ՀամԿ(Բ)Կ Կենտկոմ, բայց չգրեցին, մտածելով, որ դա կուղարկվի Անդրերկրյում՝ Բերիային, որի դեմ էլ փաստորեն գրում էին:

1936 թ. նոյեմբերի 3-ին հարցաթանկվում է խոտրոցության Արտաշես Գևորգյանը՝ Ձեմալ փաշային սպանող հերոս վրիժառուն: Նա ասում է, որ Բակունցին ճանաչել է 1920 թվականից: Յետո խարկվում միասին ներկա են եղել հայկական ակումբի բացմանը: Յոգոդովսկու ասում է աշխատելու տարիներին խոտրոցի կոմունայի հարցով դիմել է Բակունցին: Գևորգյանը նաև ասել է, որ Բակունցը իր ներկայությամբ երբեք հակապետական խոսակցություններ չի վարել, Ձեմալին սպանելու մասին «ես նրան չեմ պատմել, ինքն իմացել է ուրիշներից»: Հաջորդ հարցաթանկության ժամանակ նա երբեք անգամ պնդում է, որ Բակունցը իրեն Բերիային տեղորի ենթարկելու մասին հանձնարարություն չի տվել: Բայց ո՞վ էր հավատացողը: Առաջ ընկնելով դեպքերի ընթացքից՝ ասել, որ Բակունցի գնդակահարության օրը գնդակահարվեց նաև Ա. Գևորգյանը:

Հարցը ճշտելու նպատակով էլ 1937 թ. փետրվարի 4-ին առերեսման են բերում Բակունցին և Ն. Ստեփանյանին: Սա հետաքննության ամենաստոր միջոցն էր, երբ դաժնությունը կրկնում են մեղադրյալների անունից արձանագրված կեղծիքները և ստիպում, որ, մեկը մյուսի աչքերին նայելով, պնդեն դրանց իրավացիությունը: Դա մահվան թակարդ էր: Ներկայացնում ենք առերեսման արձանագրությունը որպես այդ տարիների հալածանքների պատկերը ներկայացնող վավերագիր:

Առերեսման արձանագրություն կայացած 1937 թ. փետրվարի 4-ին՝ ձերբակալվածներ Ն. Ս. Ստեփանյանի և Ա. Ս. Բակունցի միջև

Փոխադարձաբար մեկը մյուսին ճանաչելուց հետո և հայտարարելով, որ իրենց փոխհարաբերությունները Նորմալ են, որ անձնական հաշիվներ իրենք չունեն, ձերբակալվածներին տրվել են հետևյալ հարցերը:

ՀԱՐՑ ԶԵՐԲԱԿԱԼՎԱԾ Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ. Դուք հաստատո՞ւմ եք 1937 թ. փետրվարի 4-ին ձեր տված ցուցմունքը՝ ըստ որի ձերբակալված Բակունցը ձեզ ասել է Ձեմալ փաշային սպանողի մասին որպես ընկ.

Բերիայի դեմ տեղորիստական գործողություն կատարելու ունակ մի անձնավորության, կապված Բերիային սպանելու ձեր առաջարկության հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Իմ այդ ցուցմունքը ես պնդում եմ:

ՀԱՐՑ ԶԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԲԱԿՈՒՆՑԻՆ. Ընդունո՞ւմ եք որ այդ մարդասպանի անունը դուք տվել եք Ստեփանյանին՝ կապված Բերիային սպանելու Ստեփանյանի առաջարկի հետ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ո՛չ, չեմ ընդունում:

ՀԱՐՑ ԶԵՐԲԱԿԱԼՎԱԾ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ. Բակունցին հիշեցրե՞ք ե՞րբ և որտե՞ղ է տեղի ունեցել այդ խոսակցությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ խոսակցությունը տեղի է ունեցել 1933 թվականին, Արովյան փողոցում: Ա. Բակունցի հետ մեկտեղ բնակարանում էինք Հայաստանի լեռնային գյուղերի և ընդհանրապես Հայաստանի դրոշմները: Գալով այն եզրակացության, որ այս ծանր կացության մեղավորը Բերիան է, ես չարությամբ ասացի նրան. «Հայաստանի համար Բերիային սպանելն ավելի կարևոր է, քան ձեր 100 գիրքը»: Ա. Բակունցը, որն ավելի պակաս չարացած չէր Բերիայի և Անդրերկրյումի դեմ, ասաց, որ ինքը մի մարդու է ճանաչում, որն ի վիճակի է դիմելու այդ քայլին, այսինքն՝ տեղորի, այդ ընթացքում հիշատակելով Ձեմալ փաշային սպանողին, որի ազգանունը ինձ չասաց:

ՀԱՐՑ ԶԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԲԱԿՈՒՆՑԻՆ. Այսքանից հետո դուք կփախե՞ք, որ տվել եք Ձեմալ փաշային սպանողի անունը հատկապես Բերիային սպանելու Ստեփանյանի առաջարկից հետո:

ՊԱՏԱՍԽԱՆ. Դա ես կտրականապես ժխտում եմ: Ձեմալ փաշային սպանողի մասին Ստեփանյանին իմ ասածը Բերիային սպանելու նրա առաջարկության հետ կապված չէ: Սպանողի մասին ես խոսել եմ նույն չափ գրույցի սկզբում, պատասխանելով նրա այն հարցին, թե որտե՞ղ եմ անցկացրել ամառը:

Առերեսումը մեր խոսքերից ճիշտ է գրանցված, մեզ կարդացվել է՝ Ն. Ս. Ստեփանյան, Ա. Ս. Բակունց:

Առերեսումը կատարել են՝ ՆԳ ժողկոմի տեղակալ, պետանվտանգության մարտի Գևորգովը, ՆԳԺ 4-րդ բաժանմունքի 1-ին բաժնի պետ, պետանվտանգության լեյտենանտ Աբգարովը (հ. 6, թերթ 328-329):

Հայտնի չէ, թե որքանով է առերեսման պատկերը ճիշտ արձանագրված, բայց այն, որ ծանրագույն հոգեկան տառապանք է պատճառել նախկին ընկերներին ու համախոհներին, ակնհայտ է: Կարոտի ու սրտակցության ինչպիսիք հոգեկան

ավելոծում, բայցև չոր ու կտրուկ հարցեր, օտար ու կասկածամիտ դեմքեր, որոնց միակ նպատակն էր նախկին բարեկամներին տրամադրել մեկը մյուսի դեմ, միայն թե մահվան նշանաբանով լրացվեն հարցաթանկության էջերը:

Հայտնի է, որ բանտից Բակունցը Նամակ է հղել Ամատունուն և Մուղղունուն: Այդ նամակը, գրված 1936 թ. հոկտեմբերի 6-ին, հատվածաբար կիրառարկվեց Բակունցի կենսագրության էջերը լրացնող հոդվածում (տես սույն գրքի առաջիկա էջերը): Այդ նամակը պահվում է ՀԶԿՓՊԿԿ-ում: Ի լրումն դրա, պահպանվել է ևս երեք նամակ-հայտարարություն, գրված՝ երկուսը 1937 թ. հուլիսի 2-ին, երրորդը՝ հուլիսի 3-ին, այսինքն՝ գնդակահարությունից 5-6 օր առաջ: Իրադրությանը ծանոթանալու համար թերևս սխալ չի լինի հրապարակել առանձին հատվածներ այդ նամակներից, որոնք գրված են ռուսերեն, մանուշակագույն մուգ թանաքով, պահվում են այս գործի երրորդ հատորում: Դրանցից մեկի մեջ Բակունցը վկայակոչում է վաղուցվա մի միջադեպ և ապացուցում իր անմեղությունը: Նացիոնալիզմի մեղադրանքը թուլացնելու նպատակով միջանկյալ ակնարկում է նաև ռուսերենին տիրապետելու անհրաժեշտության մասին:

Հայկական ԽՍՀ ներքին գործերի ժողովրդական կոմիսարին ԶԵՐԲԱԿԱԼՎԱԾ Ա. ԲԱԿՈՒՆՑԻՑ

Հայտարարություն

1934 թ. օգոստոսի վերջին գորղեն-րի համագումարի պատվիրակների հետ Մոսկվայից վերադառնալիս ես գրուցել եմ Գուրգեն Մահարու, Նաիրի Չարյանի, Ալազանի հետ: Չորսը տեղի է ունեցել վազոնում: Վերոհիշյալ անձանց ես հայտնեցի համագումարին իրենց բերած պատիվ մասնակցության մասին, քանի որ ռուսաց լեզվի չմացությունը նրանց զրկում է հարկվալի մեծ միջավայրի հետ շփվելու հնարավորությունից:

< . . . > Վերադարձից մեկ ամիս անց կուսկուլեգիայի աշխատակից ընկ. Մինասը, հանդիպելով ինձ, հայտնեց, որ ստացել է ինչ-որ անստորագիր հայտարարություն, որի մեջ արևմտահայի լեզվով և բավականին ճշմարտացիորեն, ինչպես ես համոզվեցի՝ կարդալով այն, պատմվում է այն ամենը, ինչ տեղի է ունեցել վազոնի խցիկում: Նամակը ուղարկված էր այլ քաղաքից: < . . . > Որքանով ինձ հայտնի է, Մինասը ընթացք չստացավ այդ նամակին՝ պատճառաբանելով հեղինակի անհայտ լինելը...

Այս փոքրիկ միջադեպից սարքվել է այնպիսի մի պատմություն, որ մահվան աչքերին նայող գորող ստիպված էր մտաբերել ու հերքել այն:

Նույն օրը երբեք էջի վրա մանր, խիտ ձեռագրով՝ Բակունցը շարադրել է մեկ

ուրիշ նամակ ևս, փորձելով պաշտպանվել դրսից իր դեմ ուղղված մեղադրանքներից: Իսկ այդպիսիք կային: Գրական և կուսակցական մամուլը խաչակրաց արշավանք էր սկսել նրա դեմ: Ի՞նչ աներ նա, երբ, իր մահը տեսնելով հանդերձ, կարծում էր, թե դեռևս ունակ է ինչ-որ կերպ իրեն պաշտպանել: Իր միակ հույսն ու ապավենը ինքն էր, ուստի նորից գրիչ է վերցնում ու գրում:

Հայկական ԽՍՀ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիս ՁԵՐԲԱԿԱՆՎԱԾ Ա. Ս. ԲԱԿՈՒՆՅԱՆ Հայտարարություն

Իմ ձերբակալությունից հետո հայ բանաստեղծներից մեկը, այն է՝ Ն. Չարյանը, կարծեմ «Խորհրդային Հայաստան» թերթում < . . . > տպագրել է հոդված, որի մեջ վերլուծել է իմ որոշ գործեր, իմ հասցեին խոսելով՝ ինձ համարել է «դաշնակցական», «դաշնակցական խմբապետ» և այլն: Իհարկե, չարժեք ուշադրություն դարձնել այս հորինվածքին, եթե հոդվածը տպագրված չլիներ «Խորհրդային Հայաստան» թերթում: < . . . > Ես երբեք դաշնակցական չեմ եղել, չեմ եղել դաշնակցություն կուսակցության անդամ ոչ հեղափոխությունից առաջ, ոչ էլ բաղաժանցական կռիվներից առաջ, երբեք: Այդ առասպելը հորինված է իմ գրական հակառակորդների՝ Ավերբախի և Բեգիմենսկու սաների՝ Նաիրի Չարյանի և Նորայր Դաբաղյանի կողմից: Երբեք ոչ մի կուսակցական հանձնաժողով ոչ կուսգտման ժամանակ, ոչ կուսատուգման՝ ինձ չի մեղադրել դաշնակցականների կուսակցությանը իմ երբեմնի պատկանելության մեջ: Կուստոմները փոխելու կապակցությամբ վերջին ստուգումը 1936 թ. ապրիլին արձանագրության մեջ գրանցել է, որ մինչև 1917-ի նոյեմբերը ես եղել եմ հայ աշակերտական միության անդամ: Ստուգող հանձնաժողովի կազմում էին ընկ. Ս. Հակոբյանը, Գ. Հանեստյանը, Լ. Արիսյանը, եթե հիշողությունս չի դավաճանում նաև Աբրահամ Գուկոյանը: Այն հարցի պատասխանը, թե ո՞ւմ գաղափարական ազդեցության տակ էր գտնվում այդ միությունը (ես հայտարարեցի, որ միությունը գտնվում էր դաշնակցականների կուսակցության ազդեցության տակ) հաստատվել է ընկ. Ամատունու հետ զրույցից հետո, որը լավ գիտեր այդ միությունը:

Ինչ վերաբերում է դաշնակցություն կուսակցությունը լուծարել ենթարկող համագումարին, ես հայտարարել եմ այն, ինչ հայտնի էր նաև ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոյին կից հանձնաժողովին, որի կազմում էին Ա. Շահումյանը, Զ. Գյուլիբեկյանը և Ս. Լուկաշինը: Այսինքն՝ դաշնակցական չլինելով հանդերձ, այն ժամանակվա ՀԿ(Բ)Կ Ալեքսանդրապոլի գավկոմի քարտուղար Ե. Բակունցը

ինձ առաջարկեց մասնակցել այդ համագումարի կազմակերպմանը: Համագումարի արխիվը գտնվում է ձեզ մոտ, եթե անհրաժեշտ է՝ ասեք թող գտնեն ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոյի գաղտնի որոշումը, որի մեջ թվարկված են ինձ վրա դրված պարտականությունները: Հայտնի է, որ համագումարում շատ պատվիրակների իմ ազգանունը անձանոթ էր, իսկ արտասահմանյան դաշնակցական մամուլը այդ տարի միանգամայն իրավացիորեն գրել է, որ դաշնակցություն կուսակցությունը Ալեքսանդր Բակունց անուն ազգանունով անդամ իր կազմում չի էլ ունեցել:

Լինելով անկուսակցական, ես միանգամայն գիտակցաբար ընդունեցի ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջարկությունը. մասնակցել եմ համագումարին, կատարել եմ ընկ. Ս. Մելիք-Օսիպովի հատուկ հանձնարարությունները և իմ բոլոր քայլերը համաձայնեցրել եմ Ա. Շահումյանի հետ (կազմակերպչական հարցեր) կամ Գյուլիբեկյանի և Հովհաննիսյանի (տեսական հարցեր): Համագումարի հաշվետվության հրատարակությունը հանձնարարված էր Գյուլիբեկյանին, գիրքը տպագրվեց ՀԿ(Բ)Կ Կենտկոմի գումարներով, որ երևում է կազմից և խմբագրված է ՀԿ(Բ)Կ Կենտկոմի հատուկ հանձնաժողովի կողմից: Այնտեղ շատ բան խիստ է խմբագրված, իսկ Ֆոյսանի զեկուցումը գրված է նորից:

Ի՞նչ է ստացվում այսպիսով: Ես չեմ, որ պիտի գրեմ այն մասին, թե Նաիրի դաշնակցականների լուծարելի համագումարը ո՞վ էր կազմակերպել, ո՞վ էր ղեկավարում և այլն: Ձեզ հայտնի է, որ նման բաների մասին չեն գրում: Այսպիսով ի՞նչ է ստացվում: Նման բաների մասին չեն գրում, և ես չեմ գրել լինելով ՀԿ(Բ)Կ շարքերում, երբեք ինձ չեմ մեղադրել դաշնակցականների կուսակցությանը կեղծ պատկանելության մեջ, որովհետև դրա մասին գիտեին նրանք, ովքեր պարտավոր էին իմանալ, ես անցել եմ կուսամբարում և ստուգում, < . . . >, իսկ հիմա, իմ ձերբակալությունից հետո, Նաիրի Չարյանը հարվածում է ինձ բոլոր միջոցներով՝ դավաճանաբար խաբելով և՛ կուսակցությանը, և՛ խորհրդային հասարակությանը:

Դուք անձամբ, ընկեր ժողկոմ, վաղուց աշխատում եք Հայաստանում, հանդիպել եք դուք որևէ մի փաստի կամ նյութի, որն ապացուցի, թե ես ինչ-որ կազմակերպչական կապ եմ ունեցել դաշնակցականների կուսակցության հետ: Կարո՞ղ եք գտնել մեկ ապոող կամ երկու մեռած դաշնակցական, որոնք ապացուցեն, թե ես երբևէ լուսնի տակ եղել եմ դաշնակցական: Իմ կենսագրությունը գաղտնիք չէ: Ձեզ մոտ՝ ՆԳԺԿ-ում աշխատում են ինձ լավ ճանաչող ընկերներ: Կրթարկեմ նրանց ազգանունները՝ Վարդանով Սերգայ, Պողոսյան Գոգա, Մելքունյան Գևորգ, նրանք լավ գիտեն իմ կենսագրությունը մանկությունից

սկսած մինչև ձերբակալման օրը: Եվ մի՞թե միայն նրանք գիտեն: Հանձնարարեք թող տակնուվրա անեն արխիվները և թող գտնեն մեկ իսկական և ոչ թե կեղծ դաշնակցականի ցուցմունք, որ հաստատի, թե ես որևէ առնչություն եմ ունեցել այդ կուսակցության հետ: Այդպիսի ցուցմունք չկա և չի կարող լինել, իսկ ես չարքային գյուղացի չեմ, որ ինձ գտնե երկու դաշնակցական չճանաչեին:

Երբ վերջանա իմ գործը, ես մանրամասնորեն կգրեմ և կներկայացնեմ այս գործի կազմակերպման բոլոր աշխատանքների մասին և գաղտնի ծրարով կներկայացնեմ այնտեղ, որտեղ ներկայացնում են այդպիսի նյութեր: Իսկ եթե ամեն տեսակի Նաիրի Չարյաններ անամոթաբար տրորեն ինձ, կուսակցական մամուլը, ժողովները և այլն օգտագործելով զբաղվեն կեղծիքով ու զրպարտությամբ, ապա ես երբեք զրկված չեմ ապացուցելու հնարավորությունից, թե ո՞վ է կազմակերպել համագումարը և ինչ չի եղել, ինչ չի տպագրվել հաշվետվության մեջ: Դա հետաքրքրություն է ներկայացնում թե պատմության համար և թե ամբողջությամբ կապացուցի իմ այլբին:

Նորություն չէ ինձ համար, որ պետք է ցեխ բռնե մարդու վրա այն դեպքում, եթե նա որևէ հանցանք է գործել: Իմ գրքերը արգելված են, իմ սահմանափակ խցիկը կտրված է Նորմայի չափով, ես զրկված եմ օրենքով նախատեսված իրավունքով պաշտպանելու իմ շահերը: Որպես սցենարի հեղինակ այս ամենը հասկանալի է, բայց ինչո՞ւ պիտի Նաիրի Չարյանները լկտիաբար ստեն < . . . >: Ինչի՞ համար է այս ամենն արվում, չեմ հասկանում: Մի՞թե իմ ցուցմունքների մեջ քիչ նյութեր կան, որպեսզի խիստ, բայց արդար հոդված գրվի: Եթե Նաիրի Չարյանը իրոք սրբազան ատելությամբ է բորբոքված կուսակցության թշնամիների դեմ և ոչ թե անձնական վրեժով մի մարդու հանդեպ, որը ոչ թե կեղծ, այլ իրականում ապտակել է նրան այն բանի համար, որ նա՝ Նաիրի Չարյանը, համառոտորեն պաշտպանում էր տապալված ՌԱԴԴ-ի դիրքերը: ԶԷ՞ որ այս պատմությունն այն ժամանակ շատերը գիտեին, և ես իմ անվայել արարքի համար առանց հապաղելու զղջանքի էի զնում ՀԿ(Բ)Կ Երևանի քաղկոմի քարտուղար Հանեստյանի մոտ...

Բակունցի այս հայտարարությունը դեռևս շարունակվում է՝ շարունակելով նաև թերթի ընթերցողներին մոլորությունից փրկելու նրա մտահոգությունները: Բայց բանի՞ հոգի կարդաց նրա նամակը: Ամբողջությամբ այս վավերագիրը լուրջ ու հանգամանալի մեկնաբանության ու բացատրության անհրաժեշտություն ունի՝ ի հայտ բերելու թե մահապարտի հոգեբանության վերջին ալեկոծումները և թե հեռացող աշխարհին ուղղված նրա գնահատ



Լ տության շեշտերը: Այն դեպքում, երբ ազատության մեջ գտնվող իր գրչակիցները գրավոր թե բանավոր առավելագույն իրիկուն հայտնում էին դաշնակցությանը, Բակունցը առանց ինքնապաշտպան հայտնական բառերի ընդամենն ասում է, որ ինքը չի եղել այդ կուսակցության անդամ: Այս առիթով ասելն սակայն, որ 1924 թ. գրած ինքնակենսագրականում, որ հրապարակում ենք սույն գրքի «Բակունց. Նյութեր» կենսագրության համար» հոդվածում, գրողը նշում է, որ ինքը եղել է դաշնակցություն կուսակցության անդամ: Ահեղ դատաստանի առջև կանգնած՝ մի կերպ կյանքը փրկելու հույսով նա հիմա այլ կերպ է ձևակերպում իր խոսքը:

Տազնապալի ու խռովահույզ ապրումների մեջ, զգալով, որ ամեն ինչ չէ, որ հասցրել է գրի առնել, վեց կետից կազմված մի ծավալուն նամակ էլ Բակունցը շարադրում է հաջորդ օրը: Հասցեատերը Մուղղուսուց բացի նաև Անդրֆեդերացիայի զինվորական օկրուգի զինվորական կոլեգիայի վերահսկիչ դատախազն էր: Դիմողը՝ նույն «ծերբակաված Բակունցը»: Սկիզբն այս է. «Ի լրացումն իմ ցուցմունքների, գրավոր հայտարարում եմ հետևյալը...»: Ինքնապաշտպանական նպատակներով Բակունցն այստեղ մտաբերում է գրույցների առանձին պատահիկներ Ա. Խանջյանի, Ա. Ադոյանի և այլոց հետ: Երրորդ կետում նա խոսում է նաև իր «Հայկական մանրէ» («Эрмениян манр») երգիծական գործի մասին, որը պետհրատի տնօրեն Չոփուրյանը կարծիքի համար տվել էր Խանջյանին և Արիսյանին: Երկուսն էլ դրական կարծիք են հայտնել: Խանջյանը «պայթուցիկ ուժ» տեսնելով այդ գործում՝ Չոփուրյանին կարգադրում է գնել ձեռագիրը, բայց առայժմ չտպագրել: Այնուհետև Բակունցը գրում է. «Խնդրում եմ կցել իմ գործին իմ ձեռքով գրած հայերեն բնագիր օրինակը, լուսանկարներում կարմիր թանաքով նշումներ»: Այս խնդրանքը նա կրկնում է երկրորդ և երրորդ կետում: «Միայն խնդրում եմ իմ գործին կցել մեկ օրինակ այդ երկից, որ այն անվնաս վիճակում պահվի այնքան ժամանակ, ինչքան արխիվարիուսին անհրաժեշտ կլինի պահել նաև իմ գործի հաստ հատորները»: Հեռավոր մի հույսով Բակունցը դեռևս մտածում էր «լրացումներով ու մշակումներով» անպայման տպագրել այդ երկը:

Ինքնապաշտպանական այս վերջին, ամենավերջին հայտարարությունը նա ավարտում է՝ խնդրելով որպես վկաներ կանչել Ա. Ադոյանին և Վ. Սիմոնյանին, գործին կցել Ամատունուն և Գուրյանին հայտնած իր դժգոհությունները Հայաստանի ղեկավարությունից, ինչպես նաև սույն հայտարարությունը: Հայտարարությունը կցվել է, իսկ «Հայկական մանրէ» գործը և Բակունցի ակնկալած

վկայությունները չեն կցվել: Բակունցի ժառանգության անհայտ էջերին ավելանում է ևս մեկը: Մի նոր խնդիր՝ դրված ներկա և գալիք բանասերների առջև:

Բակունցին այլևս ոչինչ չէր օգնելու: Ասված էր ամեն ինչ, լրացված էին «գործի» բոլոր էջերը:

1937 թ. հուլիսի 6-ին Մուղղուսին հաստատում է Նիկողոսյանի, Կոստիկյանի և Գևորգովի կազմած «Մեղադրական եզրակացությունը» (հ. 3, թերթ 213-215): Բերվում են Բակունցի և այլոց ցուցմունքները, որից հետո արձանագրվում է, որ նա

իրեն մեղավոր ճանաչեց 1930 թվականից գործերի հակախորհրդային, նացիոնալիստական կազմակերպությանը հարելու, 1933 թվականից Հայաստանի տրոցկիստական, նացիոնալիստական, տեռորիստական կենտրոնի կազմի մեջ մտնելու հարցում, կիսել է Ստեփանյանի տեռորիստական հայացքները, կապի մեջ է եղել Տեր-Վահանյանի հետ և կազմակերպչական հարաբերություններ ստեղծելու նպատակով նրան տեղեկացրել կազմակերպության հակահեղափոխական աշխատանքների մասին:

Ահա մեղադրական եզրակացությունը.

1. Հանդիսանում է հակահեղափոխական, տրոցկիստական, նացիոնալիստական կազմակերպության անդամ, որը 1934 թ. դեկտեմբերի 1-ին սպանեց Կիրովին և հետագայում նախատեսում էր այդպիսի տեռոր ընդդեմ ՀամԿ(Բ)Կ-ի և խորհրդային իշխանության:

2. 1930 թ. Զարենցի հետ կազմակերպել է հակահեղափոխական գործերի կազմակերպություն: 1933 թվականից գլխավորել է կենտրոնը, որը նպատակ ուներ սպանելու Ստալինին, նախապատրաստում էր մահափորձ Բերիայի դեմ:

3. Կազմակերպությունը կապված էր Մոսկվայի կենտրոնի հետ (Տեր-Վահանյան և ուրիշներ):

Մեղադրական այս եզրակացությունը Բակունցին հայտնվում է նույն օրը՝ հուլիսի 6-ին:

ՀԽՍՀ Քրեական օրենսգրքի 65-րդ և 68-րդ հոդվածների մեղադրանքով Բակունցի գործն ուղարկվում է ԽՍՀՄ գերագույն դատարանի զինվորական կոլեգիայի տնօրինությանը:

Հաջորդ օրը՝ հուլիսի 7-ին լսվում է նրա գործը ԽՍՀՄ գերագույն դատարանի զինվորական կոլեգիայի արտագնա նիստի փակ դատական խորհրդակցությունում: Խորհրդակցությունն սկսվել է ժամը 11.20-ին, ավարտվել 11.55-ին: Բակունցը գտնվել է դահլիճում: Վկաներ չեն կանչվել:

«Որոշումից».

Նա լիովին իրեն մեղավոր է ճանաչում և հաստատում նախնական հետաքննության ժամանակ իր տված ցուց-

մունքները: Դատական հետաքննությունն ավարտված է:

Վերջին խոսքում դատապարտյալը խնդրում է իրեն հնարավորություն տալ ազնիվ աշխատանքով քավել իր հանցանքները:

Դատարանը առանձնանում է խորհրդակցության:

11.55-ին հրապարակվում է դատավճիռը, և նիստն ավարտվում է (հ. 3, 218-218 հակառակ):

Ընդունված դատավճռով... Այստեղ այն պահն է, երբ, ինչպես Կարսի անկումը նկարագրելիս Զարենցն էր ասում, գրիչը ձեռքից ընկնում է վար... բայց ինչ արած, պատմությունը պիտի հասցնել ավարտի:

Ընդունված դատավճռով... Ակսել Բակունցը դատապարտվում է պատմի առավելագույն չափի՝ զնդակահարության, անձնական ունեցվածքի բռնագրավումով: Դատավճիռն ի կատար է ածվում հաջորդ օրը՝ 1937 թվականի հուլիսի 8-ին:

Տեղեկանք / Գաղտնի

Ալեքսանդր (Ակսել) Ստեփանի Բակունցի զնդակահարության դատավճիռը ի կատար է ածվել Երևան քաղաքում 1937 թվականի հուլիսի 8-ին: Դատավճիռն ի կատար ածելու արձանագրությունը պահվում է ԽՍՀՄ ՆԳԺԿ-ի հատուկ արխիվում, հատոր 8, թերթ 107:

**ԽՍՀՄ ՆԳԺԿ 12-րդ ԲԱԺԱՆՍՈՒՆԵԻ
1-ԻՆ ՀԱՏՈՒԿ ԲԱԺՆԻ ՊԵՏ,
ՊԵՏԱՆՎԱՆԱԳՈՒԹՅԱՆ ԼԵՅՏԵՆԱՆՏ՝
ՇԵՎԵԼՅՈՎ**

Ավարտվում է մեծ ու լուսավոր կյանքը, մարում է հայ արձակի ամենաշողունն աստղը...

Բակունցին արդարացնելու համար 1954 թ. սեպտեմբերի 20-ին հարցաքննել են Վ. Դազանյանին, նույն թվականին՝ Ս. Մարտիրոսյանին, Դ. Դզունուն, Ա. Հովհաննիսյանին, Ն. Դաբալյանին և Ս. Հասարայանին: 1954 թ. սեպտեմբերի 18-ի հարցաքննության ժամանակ Հասարայանը փոխհանձնում ասել է, որ Բակունցը իրենց գրույցների ժամանակ կրկնել է, թե ինքը երբեք չի եղել դաշնակցություն կուսակցության անդամ, որ 1923-1924 թթ. եռանդուն մասնակցություն է ունեցել այդ կուսակցության համագումարի հրավիրման և ինքնալուծարքի գործում և որ այդ քայլին իրեն մղել է իր ազգական, կուսակցական գործիչ Երեմիա Բակունցը, որը ևս զնդակահարվեց 1938 թ. (հ. 8, թերթ 32): Այսինքն՝ արդարացման համար ասվում է այն, ինչ Բակունցն էր ասում իր վերջին հայտարարությունների մեջ:

Մեծագույն գրողն ու անբասիր քաղաքացին, հայրենիքի նվիրյալ որդին ու անմեղ նահատակը արդարացվեց 1955 թ. մարտի 2-ին:

Դ. ԳԱՄԱՐՅԱՆ

Թե ինքդես սարեք ճնշ արջսկի ԱՄԵՆԱՇՈՐՈՒՆ ԱՍՏՂԸ



ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ԿՆՈՋ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԸ

Տպագրության ենք ներկայացնում Ակսել Բակունցի կնոջ՝ Վարվառա Զիվիչյան-Բակունցի «ցուցմունքները» ամուսնու մասին: Ասում ենք «ցուցմունքներ» և ոչ թե հուշեր, որովհետև «ցուցմունքներ Բակունցի մասին» արտահայտությունը օգտագործված է շարադրանքի մեջ: Սա նշանակում է, որ այս գրությունը ոչ թե ազատ, տաք ու հոգեշահ հուշագրություն է, այլ ցուցմունք: Հոդվածը խմբագրությանն է տրամադրել Դավիթ Գասպարյանը:



Վարվառա Զիվիչյան-Բակունցն այն գրել է 1954 թ. սեպտեմբերի 15-ին, երբ դեռ նոր-նոր սկսվել էր ստալինյան քաղաքական բռնությունների հաջորդող խրուշչովյան ձևալը: Պիտի ենթադրել, որ այս գրությունն ստեղծվել է պաշտոնական մարմինների թելադրանք-պահանջով՝ Բակունցին արդարացնելու համար:

Ա. Բակունցին ծերեակալել են 1936 թ. օգոստոսի 9-ին, ենթարկել են դաժանագույն հարցաքննությունների, մեղադրել են հակահեղափոխական-հակախորհր-

դային, ազգայնամոլական, ահաբեկչական գործունեության մեջ, գնդակահարել են 1937 թ. հուլիսի 8-ին, պաշտոնապես արդարացրել 1955 թ. մարտի 2-ին:

Բանտում եղած ժամանակ Բակունցի կինը մի քանի անգամ (ըստ այս գրության՝ երեք անգամ՝ սեպտեմբեր-հոկտեմբեր-նոյեմբեր) այցելել է ամուսնուն: Վերջին երկու այցելության ժամանակ նրա հետ է եղել նաև նրանց միևնույն օրինակ, ով Բակունցի ծերեակալությունից առաջ ծանր հիվանդացել էր և ըստ էության

փրկվել է վերահաս մահից:

Բակունցի որդին՝ Սևադա Բակունցը (1925-1983), հետագայում դարձել է բժիշկ, եղել ՀԽՍՀ ԳԱ Ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրենը, ընտրվել ԳԱ թղթակից անդամ, դարձել ԳԱ Նախագահության գլխավոր գիտնական քարտուղար:

Մոր հետ որդու այցելությունը բանտում գտնվող հորն ամենայն հավանականությամբ եղել է Բակունցի համառ խնդրանքներից հետո, որովհետև Բակունցի կնոջից դա պահանջում



Լ Են նաև իրավական մարմինները: Գուցե նաև որդուն տեսակցության բերելով՝ Բակունցից իրենց ցանկալի ցուցմունքներ են կորզել:

1937 թ. սեպտեմբերի 17-ին ձերբակալում են նաև Վարվառա Զիվիչյան-Բակունցին (1902-1965): Ծնվել է Նոր Նախիջևանում, Բակունցի հետ ծանոթացել և մտերմացել է Խարկովում: Ամուսնացել են 1924 թ. հոկտեմբերի 14-ին:

Նրան մեղադրանք են ներկայացրել որպես ժողովրդի թշնամու կին, ով տեղյակ է եղել ամուսնու հակահեղափոխական ու հակախորհրդային գաղտնի գործունեությանը և այդ մասին չի հայտնել համապատասխան մարմիններին: Նրան ձերբակալելուց հետո որդու խնամքը հանձնում են հարազատներին, իսկ քաղցկեղով հիվանդ մայրը մնում է պատշգամբում, որովհետև ունեցվածքը, այդ թվում՝ Բակունցի ձեռագրերը և տուները բռնագրավում են:

Ութ տարվա աքսորից հետո Վարվառա Զիվիչյան-Բակունցը 1945-ի աշնանը վերադարձել է, մի կարճ ժամանակ մնացել է Գորիսում, շրջանի Զինուկայր գյուղում զբաղվել է ուսուցչությամբ, այնուհետև աշխատանքի անցել Երևանում՝ Քանաքեռի մանկատանը, և զբաղվել արդեն քսանամյա որդու խնամքով:

Բակունցի մայրը՝ Բոխագյուլ Խուրշույանը (1875-1957), 1946-ին դիմում է ՆԳՎ Կարմիր զորքի կողմից՝ որդու մասին լուր իմանալու ցանկությամբ: Նրան պատասխանում են, թե Ա. Բակունցը ծանր հիվանդությունից հետո մահացել է 1945-ի նոյեմբերին: Այսինքն՝ քողարկում են զնդակահարության փաստը և կեղծում մահվան հանգամանքները:

Այդպիսի կեղծիքները տարածված էին այդ տարիներին:

Գրության մեջ խոսվում է նաև Բակունցի հոր՝ Ստեփան Թևոյանի (1869-1939) մասին:

Յուրովում են այլ անուններ: Դրաստամատ Տեր-Սիմոնյանի անվան հիշատակությունը պատահական չէ, քանի որ Բակունցի դեմ հարուցված քրեական գործը համարվում էր խմբային: Դատավարության ներկայացված խմբի մեջ ինը անձ էին, այդ թվում՝ Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, ով 1934-1936 թթ. եղել է Զայաստանի գործերի միության վարչության նախագահը:

Այս և հարակից այլևայլ հարցերի մասին, նաև գրության մեջ հիշվող այլ հեղինակությունների հետ Բակունցի ունեցած հայտարարությունների մասին, տես՝ մեր «Ակսել Բակունց: Կյանքը և ստեղծագործությունը» (Ե., «Չանգակ», 2009) գրքում:

Չրապարակվող գրությունը թարգմանվել է ռուսերենից:

Ցուցմունքներ Բակունցի մասին

Մոր հետ որդու այցելությունը բանտում գտնվող հորն ամենալին հավանականությամբ եղել է Բակունցի համառ խնդրանքներից հետո, որովհետև Բակունցի կնոջից դա պահանջում են նաև իրավական մարմինները: Գուցե նաև որդուն տեսակցության բերելով՝ Բակունցից իրենց ցանկալի ցուցմունքներ են կորզել:

”

Վարվառա Զիվիչյան-Բակունց

Ալեքսանդր Ստեփանի Բակունցը (Ակսել Բակունց) ծնվել է 1899 թվականին Գորիսում, գյուղացու ընտանիքում: Ընտանիքը բազմանդամ էր (տասը երեխա) և չբավոր: Զայրը հաշմանդամ էր, որովհետև նրա երկու ձեռքերից բացակայում էին չորս մատները: Բակունցն ընտանիքի չորրորդ երեխան էր և ավագ որդին: Նախնական կրթությունը ստացել է Գորիսում: Դասագրքեր գնելու համար չունենալով դրամական միջոցներ՝ նա սովորում էր ընկերների դասագրքերով, ինչի համար առավելության դպրոց էր գնում զանգը տալուց կես ժամ առաջ. դա չի խանգարել նրան՝ լինելու դասարանի լավագույն աշակերտը: Գորիսի հնգամյա դպրոցն ավարտելուց հետո հայրը նրան որոշում է դարձնել կոշակարի աշակերտ: Բակունցի հեռավոր ազգականը՝ Երեմիա Բակունցը, սովորում էր Էջմիածնի ճեմարանի ավարտական լսարանում: Երբ Երեմիա Բակունցն ամռանը վերադառնում է տուն, նրան շատ են պատմում Ալեքսանդր Բակունցի ընդունակության մասին, որին ցանկանում են դարձնել կոշակար: Երեմիա Բակունցը հետաքրքրվում է տղայով, գրուցում նրա հետ և համոզվում, որ նա իրոք շնորհաշատ պատանի է:

Էջմիածնի Գևորգյան ճեմարանն ուներ ավանդույթ՝ ամեն տարի Զայաստանի յուրաքանչյուր շրջանից (գավառից) մեկ ընդունակ տղայի ընդունել անվճար ուսուցման: Այդ տարի Չանգեզուրի գավառն առաջ քաշեց Ալեքսանդր Բակունցի թեկնածությունը, և նա իր համար անս-

պասելի հայտնվեց Էջմիածնի ճեմարանում: Նա լավ էր սովորում, հատկապես սիրում էր լեզու, գրականություն, պատմություն, կենսաբանություն: Դեռ այդ ժամանակ նրա գրական հակումները գրավեցին մանկավարժների ուշադրությունը: 1918 թվականին Բակունցն ավարտում է Էջմիածնի ճեմարանը՝ ստանալով միջնակարգ կրթություն: Այդ նույն թվականին նա գորակոչվում է բանակ: Մեկ տարի անց նա ծանր հիվանդանում է և ռազմաճակատից վերադառնում է Գորիս:

Նրա ազգական Երեմիա Բակունցը, ով այդ ժամանակ Գորիսում ընդհատական աշխատանք էր կատարում, հին բուշակի էր, Ալեքսանդր Բակունցը ազգակցությունից բացի նրա հետ կապված էր սիրով և հարգանքով՝ որպես մի մարդ, ով մեծ դեր է կատարել նրա կյանքում: Երեմիա Բակունցն այդ ժամանակ մեծ ազդեցություն է ունեցել Ալեքսանդր Բակունցի քաղաքական հայացքների ձևավորման վրա: Չանգեզուրում նա վերջնականապես համոզվում է, որ ժողովրդի ճակատագրի հարցում դաշնակցության քաղաքականությունը կործանար է: Դա մասնավորապես մի հավաքությունում նրան մղում է կտրուկ, բացահայտ ելույթի ընդդեմ ականավոր դաշնակցական գործիչ Զիվիչյանի (զնդակահարված 1920 թվականին): Զամոզված լինելով, որ իր հանդեպ դաշնակցականների կողմից սպասվում են ծայրահեղ ահաբեկչական գործողություններ (ուղղակի ասած՝ դաշնակցականները նրան կսպանեն), նա այդ նույն գիշեր գաղտնի և շուտափույթ թողնում է Գորիսը և հետիոտն անցնում ոչ անվտանգ Կիզիլ-Բողազի ձորով, որտեղ այդ ժամանակ գործում էին մուսաֆայականները: Դրանից հետո՝ այսինքն՝ 1920 թվականին, Բակունցը հեռանում է Զայաստանից և մեկնում Խարկով՝ ավարտելու ուսումնառությունը: Մեկնելով Խարկով՝ նա ընդունվում է գյուղատնտեսական ինստիտուտ: Դժվարին տարիներ էին. Խարկովում, չճանաչելով ոչ ոքի, ապրում էր կյուբական շատ ծանր պայմաններում:

Բակունցի հետ ես ծանոթացել եմ 1923 թվականին: Մեր միջև ստեղծվեցին բարեկամական հարաբերություններ: Որքան շատ էի ճանաչում նրան, այնքան շատ էի զարմանում նրա ի բնեզարգացածությամբ, խելացիությամբ, ներքին մեծ մաքրությամբ ու շիտակությամբ առանձնացող և իր ժողովրդին խորունկ սիրող Բակունցով: Այդ ժամանակ Զայաստանը խորհրդայնացվել էր. նա ոգևորված էր և անհամբեր սպասում էր ինստիտուտն ավարտելուն, որպեսզի վերադառնար հայրենի եզերք: Բակունցը ինձ, որ անտեղյակ էի Զայաստանին, սիրում էր պատմել այն սարսափների մասին, որոնք իրենց իշխանության օրերին գործել էին դաշնակցականները, և երջա-

նիկ էր, որ այդ ամենն անցյալ է:

1923 թ. հուլիսին Նա ավարտեց ինստիտուտը: Խարկովից մեկնելուց առաջ Բակունցն ինձ առաջարկեց ամուսնանալ իր հետ և միասին մեկնել Հայաստան, բայց ես Նախապատրաստվում էի բուհի ընդունելության քննություններին: Ես նրան պատասխանեցի, որ իմ առջև հաստատու չեմ: Երբեք ստանալու բարձրագույն կրթություն և միևնույն ժամանակ ավարտել չեմ կամենում կյանքս կապանքների մեջ դնել...

Այս խոսքերն Նրան դառնացրեցին, 1923 թվականի հուլիսի 13-ին Խարկովից Նա մեկնեց Խորհրդային Հայաստան: Մի քանի ամիս մենք Նամակագրական կապ չունեինք: Գործուղման բացակայության պատճառով ինձ չթույլատրեցին մասնակցել ընդունելության քննություններին: Այդ լուրը հասավ Բակունցին, և Նա Նամակով հայտնեց, որ ես կարող եմ սովորել Երևանում: 1923 թ. դեկտեմբերի 15-ին ես մեկնեցի Երևան և ընդունվեցի պետական համալսարան: Իմ գալուց հետո Բակունցն ինձ պատմեց, որ Հայաստանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեն իրեն հանձնարարել է կազմակերպել դաշնակցություն կուսակցության լուծարքը, ինչը կատարվեց 1923 թվականի երկրորդ կեսին: Այդ ժամանակ Հայաստանի կոմկուսի Կենտրոնի առաջին քարտուղարը Աշոտ Գարեգինի Յովհաննիսյանն էր, ով Գևորգյան ճեմարանում եղել էր Բակունցի ուսուցիչը, գիտեր և վստահում էր նրան: Եթե Բակունցն ունենար թեկուզ փոքր-ինչ կասկածելի տրամադրություններ, Աշոտ Գարեգինի Յովհաննիսյանը երբեք Նրան չէր հանձնարարի այդ մեծ ու պատասխանատու աշխատանքը:

Այն, որ թեև Բակունցն ինքն է ստանձնել այդ աշխատանքը, բայց դրան Նպաստել է Նաև Երեմիա Բակունցը, ով այդ ժամանակ արդեն Հայաստանի կոմկուսի Կենտրոնի քարտուղար էր կամ կուսակցության Երևանի կոմիտեի քարտուղար: Ինքը՝ Բակունցը, այդ շրջանում աշխատում էր «Ղզազ» խորհրդային տնտեսությունում, փոխարինում էր այդ տնտեսության տնօրենին, ով ներկայումս հանգուցյալ, ակադեմիկոս Միքայել Գալուստի Թումանյանն էր: Նրանք միասին աշխատել են Նաև գյուղատնտեսական ինստիտուտում, որտեղ Բակունցը Թումանյանի ընթերցական էր:

Հայոց լեզվի վատ իմացությունը դժվարացնում էր իմ ուսումնառությունը: 1924 թ. ես թողեցի համալսարանը և ամուսնացա Բակունցի հետ: Նա ստանձնեց Գորիսի գավառային գյուղատնտեսի պաշտոնը, և մենք մեկնեցինք Բակունցի հարազատների մոտ: Մինչև 1926 թվականի մայիսը ապրում էինք Գորիսում:

Բակունցի գրական հակումները տակավին Երևան են եկել դարձրածական տալիսներին, բայց առաջին անգամ սկսեց

տպագրվել 1924 թվականին: Այդ շրջանում Նա գրում է ճամփորդական տպավորություններ՝ ակնարկներ, որոնք ուղարկում էր «Զարյա Վոստոկա» թերթին: Այդ ակնարկները հանրության կողմից ընդունվեցին մեծ ջերմությամբ՝ թերթերի խմբագրության խրախուսանքը, քննադատության լավ արձագանքները, հատկապես Ավետիք Իսահակյանի քննադատական հոդվածը (ներկայումս գրողների միության Նախագահ): Իր քննադատական հոդվածում Ավետիք Իսահակյանը մատնացույց էր անում Բակունցի հարուստ, պատկերավոր լեզուն, բնության հանդեպ Նրա մեծ սերն ու ըմբռնումը և մեծ ապագա կանխորոշում Նրա համար: Այդ ամենը Բակունցին Նկատելիորեն թեմայություն էր: Նա արդեն ավելի համարձակ սկսեց տպագրել իր պատմվածքները, որոնք գրել էր տակավին 1923 թվականին: Գործուղումից վերադառնալով՝ Նա ասում էր ինձ, որ ինքը մշտապես ցանկություն է ունենում փարվելու հեռագրասյուններին՝ որպես մշակութային աշխարհի միակ ներկայացուցիչների այս կտրված ու խուլ գավառում:

Մենք մեկնեցինք Երևան և ապրեցինք Երևանում մինչև Նրա ձերբակալությունը: Բակունցը՝ որպես տան ավագ որդի, ամբողջ ընտանիքի համար պատասխանատվություն էր կրում:

Ստեղծագործական աշխատանքը չէր ապահովում ամբողջ ընտանիքի կյանքական կարիքները, այդ իսկ պատճառով չէր կարողանում ամբողջովին տրվել գրական աշխատանքին և ստիպված էր մինչև 1933 թ. աշխատել որպես գյուղատնտես:

Ապրել միայն ստեղծագործական կյանքով՝ Նրա նվիրական երազանքն էր: Այդ Նրան հաջողվեց միայն 1934 թվականին:

Որպես գրող Նա աճեց արագ և Նկատելի: Զգալի էր Նրա մեծ ներուժը: Նրա գրական հաջողությունները ոմանց սկսեցին անհանգստացնել:

Այդ ընթացքում Բակունցը հաճախ էր ինձ պատմում իր հանդեպ բանաստեղծ Նաիրի Զարյանի, քննադատներ Նորայր Դաբաղյանի, Դրատամատ Տեր-Սիմոնյանի, Լևոն Արիսյանի թշնամական վերաբերմունքի մասին (վերջինը այդ ընթացքում չգիտեմ որտեղ էր աշխատում. 1936 թվականին լուսավորության մինիստր էր):

1934 թ. ամռանը մի հավաքույթի ժամանակ Նաիրի Զարյանը Բակունցին ասում է դաշնակցական: Այդպիսի գրադարձությունից զայրացած, կորցնելով ինքնատիրապետումը, Բակունցն ապտակում է Նրան: Նաիրի Զարյանը Նրա հանդեպ իր հոգու խորքում ոչ է պահում, բայց արտաքուստ դա Նրան չի խանգարում լինել Բակունցին մոտ, Գորիս գնալիս վայելել Բակունցի մոր հյուրասիրությունը:

1935 թ. գարնանը Բակունցին կանչում են Հայաստանի կոմկուսի Կենտրոն և տալիս են հատուկ հանձնարարություն՝ ֆիլմի համար գրել սցենար, որում արտացոլվի հայ ժողովրդի հերոսական պայքարը խորհրդային կարգերի հաստատման համար: Հայաստանի բոլոր շրջաններից առավել լավ իմանալով Չանգեզուրը՝ 1935 թ. ամռանը Բակունցը մեկնում է այնտեղ, ամբողջ ամռան ընթացքում կինոսցենարի համար հավաքում կույր-թեր: Վերադառնալով Նա սկսեց գրել «Չանգեզուր» կինոնկարի սցենարը: Այդ կինոնկարը ցայսօր ցուցադրվում է մեծ հաջողությամբ, բայց, իհարկե, առանց Բակունցի անվան:

1935 թ. նոյեմբերի 15-ին մեր միակ որդին ծանր հիվանդացավ. անգինայից հետո Նա ստացավ արյան վարակում (սեպսիս) և ութ ամիս շարունակ պայքարում էր մահվան դեմ: Երեխայի հիվանդությունը ծանր անդրադարձավ Բակունցի վրա, օրերով չէր կարողանում հեռանալ հիվանդ երեխայից: Բայց հանձնարարությունը շտապ էր և հարկավոր էր աշխատել: Մեր բնակարանը փոքր էր՝ հիվանդ երեխային պահում էինք Նրա աշխատասենյակում: Որպեսզի Բակունցը կարողանար աշխատել, հյուրանոցում սենյակ տրամադրեցին, որտեղ Նա գիշերներն անգամ աշխատում էր «Չանգեզուր» սցենարի վրա: Չնայած անձնական վշտին՝ այդ աշխատանքը Նա կատարեց սիրով և հպարտությամբ:

Աշխատանքից հետո, գիշերվա ժամը 3-4-ին վերադառնալով տուն, հարցնելով երեխայի վիճակի մասին՝ Նա ինձ ծանոթացնում էր տան, գործի ընթացքին:

1936 թ. գարնանը Բակունցն այդ աշխատանքը հիմնականում ավարտել էր: Հայաստանի կոմկուսի Կենտրոնի Նախկին քարտուղար Ա. Խանջյանը համառորեն պնդում էր, որ Բակունցը 2-3 ամսով մեկնի Մոսկվա՝ կինոսցենարը քննարկելու: Նրա համար շատ դժվար էր հիվանդ երեխային թողնել ծանր կացության մեջ, բայց, գիտակցելով հանձնարարության կարևորությունը, մեկնեց: Ես հիվանդ երեխային տեղափոխեցի Դիլիջան: Բակունցը Երևան վերադարձավ օգոստոսի սկզբին և 1936 թ. օգոստոսի 9-ին ձերբակալվեց:

Կալանքի ժամանակ Նրա հետ ունեցել եմ երեք տեսակցություն՝ 1936 թ. սեպտեմբերի վերջին, հոկտեմբերին և նոյեմբերին: Առաջին տեսակցության ժամանակ Նա քիչ էր փոխվել: Նրա տրամադրությունը համեմատաբար առույգ էր, զգացվում էր, որ իր ձերբակալությունը համարում էր ինչ-որ թյուրիմացության հետևանք, որը շատ շուտ պիտի բացահայտվեր: Հոկտեմբերին ես Նրան տվեցի հերթական սննդամթերքը և ստացա Նրա օգտագործված սպիտակեղենը: Վերադառնալով տուն՝ մերկ մարմնին

հազած նրա վերնաշապիկի վրա նկատեցի արյան հետքեր:

Հոկտեմբերի վերջին ինձ կանչեցին տեսակցության, ընդ որում զգուշացնելով, որ ես պարտադիր ներկայանամ երեխայի հետ: Դժվար էր ինձ հետ վերցնել երեխային, բայց ես չհամարձակվեցի զնալ առանց նրա: Տեսակցությունը չափազանց ծանր էր: Բակունցը մեկ ամսվա ընթացքում այնքան էր փոխվել, որ ես դժվարությամբ ճանաչեցի այն մարդուն, ում ես գիտեի երկար տարիների ընթացքում:

Ամբողջ տեսակցության ժամանակ Բակունցը հեծկոտում էր՝ կորցնելով ինքնատիրապետումը: Նա ինձ խնդրեց վերցնել թուղթ ու մատիտ, գրել այն ամենը, ինչ ինքը կասի: «Իմացի՛ր, - ասաց նա ինձ, - այն ամենը ինչ ասում եմ քեզ՝ պատահական մտքեր չեն, այլ արդյունք են երկար, անթուն գիշերների»: Եվ նա թելադրեց ինձ, թե ինչպես պիտի դաստիարակեմ և մեծացնեմ երեխային: «Որդիս, - անդրադարձավ երեխային՝ բամբուլով արցունքից ամբողջովին խոնավ թաշկինակը, - այնքան շատ բան եմ ցանկացել կյանքում անել քեզ համար, բայց ինձ չհաջողվեց, մայրդ կանի նաև իմ փոխարեն»: Չզացվում էր, որ այդ տեսակցությամբ նա հրաժեշտ էր տալիս մեզ: Նա ինձ ասաց, որ ինքը գրել է լիազորագիր-կտակ, որով ինձ է փոխանցում իր հեղինակային իրավունքը:

Հաջորդ օրը ես մտա ԼԳԺԿ, տարա նրա համար ընթերցելու գրքեր (առաջին երեք ամիսներին թույլատրեցին տանել գեղարվեստական գրականություն) և ետ ստացա այն գրքերը, որոնք նա արդեն կարդացել էր: Քննիչի օգնական Մակովն ինձ փոխանցեց լիազորագիր-կտակը՝ գրված Բակունցի ձեռքով և հաստատված ԼԳԺԿ-ի կողմից, ինչի պատճենը ներկայացնում եմ:

Տուն վերադառնալով՝ ես մեքենայաբար թերթատեցի գրքերը, որ նա վերադարձրել էր: Այդ գրքերի մեջ էր Գի դը Սոլասանի պատմածքների նոր ժողովածուն: Այդ գրքի ցանկում «Պարան» պատմվածքի տակ ես նկատեցի մատիտով դրված փոքր կետեր: Այդ ինձ զարմացրեց, որովհետև այդ գիրքը նոր էր (նրանցից, որ կալանքից առաջ բերել էր Մոսկվայից): Բացեցի պատմվածքը, որի լուսանկարներն ամբողջովին սեղմված ընդգծված էին եղունգով: Պատմվածքի բովանդակությունը բացահայտեց նրա բարոյական ծանր կացությունը: Նույններ ամսին ինձ թույլատրեցին վերջին տեսակցությունը: Նա իրեն պահում էր հանդարտ:

«Հը, ընթերցե՛լ ես պատմվածքը, այն քեզ դո՛ւր է եկել», - հարցրեց նա ինձ: «Ծանր է», - պատասխանեցի ես նրան: Նա ասաց, որ հարցաքննությունն ավարտված է և սպասում է դատի: «Հավանական է, պետք է մեկնել, թեպետ դեռ

կտեսենք, - ասաց նա: - Ամուր եղիր, հաշվիր, որ ավտոլթար է եղել, և ես վթարի եմ ենթարկվել»: Դիմելով որդուն, ով ներկա էր նաև այդ տեսակցությանը, Բակունցն ասաց. «Դու շա՛տ կամաչես, եթե քո հորը երևանի փողոցներով տանեն դատարան»:

- Ո՛հ, հայրիկ, - պատասխանեց տղան:

- Ճիշտ է, տղաս, դու մի ամաչիք քո հոր համար, հիշիր, հայրդ այնպիսի բան չի արել, ինչի համար կյանքում պետք է կարածես, - ասաց նա երեխային:

- Իսկ դու, - դիմեց ինձ, - անպայման հետաքրքրվիր «Չանգեզուր»-ով, նույնիսկ եթե չկամեան ինձ համարել սցենարիստ, բայց կյուբերի հեղինակը միայն ես եմ: Սցենարի պատճենը կա Մոսկվայում, Հայաստանի կոմկուսի Կենտկոմում և ԼԳԺԿ-ում, դու այդ գործը չանտեսես, - և թփթփացնելով երեխայի թիկունքին, ասաց, - դա պատկանում է նրան:

1937 թ. հուլիսի 18-ին չընդունեցին իմ տարածքը, ասելով, որ Բակունցն արդեն աքսորվել է:

Այդ ընթացքում ես ավարտել էի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը: Չբաղվում էի դիպլոմային աշխատանքով: Ելույթապես (հիվանդ երեխայի և մայրիկիս հետ) ապրում էի ծանր պայմաններում: Նրա ձերբակալությունից հետո ինձ աշխատանք չտվեցին: 1937 թ. սեպտեմբերի 17-ին ինձ կալանավորեցին, մեր բնակարանն ամբողջ ունեցվածքով արգելափակեցին, իմ երեխային հանձնեցին Բակունցի եղբորը, բացկուցվող հիվանդ մորս թողեցին պատշգամբում, իսկ ինձ տարան բանտ:

Բակունցի ձեռագրերը տարան ինձ ձերբակալելու ժամանակ: Առանց հարցաքննության՝ ութ ամիս պահելով ինձ բանտում, հատուկ խորհրդակցության որոշմամբ՝ որպես հայրենիքի դավաճանի ընտանիքի անդամ, ութ տարով աքսորեցին Տեմինկովյան ճամբար, որտեղ ես մնացի ութ տարի: Վերադարձիս մեկնեցի Գորիս, ստացա անձնագիր ըստ 38-39 հոդվածների գրանցման՝ իմ բնակավայրի տարածքային սահմանափակմամբ:

Իմ վերադարձից հետո Բակունցի մայրն իր որդու կապակցությամբ 1946 թվականին դիմում էր տվել: Գուլագից նրան պատասխանել էին, որ ծանր հիվանդությունից հետո նա մահացել է 1945 թ. նոյեմբերին:

Բակունցը մտերիմ էր ներկայումս հանգուցյալ ակադեմիկոս Միքայել Գալուստի Թումանյանի հետ, իր դպրոցական ընկեր, սննդարդյունաբերության նախկին մինիստր Արամ Կոստանյանի հետ, ով 1937 թ. հուլիսի 9-ին կյանքին վերջ տվեց ինքնասպանությամբ:

Գրողներից մտերիմ էր Հարենցի հետ, ում ստեղծագործությունները չափազանց բարձր էր գնահատում: Ատում էր Մուդրուսուն (ներքին գործերի ժողկոմ միևն

1937 թ.): Նա խորապես վրդովվել էր այն բանից, որ այդ մարդն ահռելի գումար էր վատնել անձնական կարիքների համար, հայտնելով ինձ թվեր, որոնք, իհարկե, ես հիմա չեմ հիշում և վերջում ասելով, որ միայն իր երեխայի խաղալիքի համար (մանկական երկաթուղի) վատնել է 4000. «Իսկ մեր երեխաները գյուղերում ոչ բոլորն են ապահովված դպրոցական շենքերով և բանի՞ր դպրոց կարելի էր կառուցել այդ միջոցներով»:

Այդ արտահայտությունները, անշուշտ, հասել էին Մուդրուսուն և, հավանական է, Բակունցի համար ունեցել ծանր հետևանքներ: Վերջացնելով իմ ցուցմունքները Բակունցի մասին՝ չեմ կարող չհիշատակել մի փաստ: Բակունցին կալանավորելու հենց առաջին օրերին մամուլում հրապարակվեցին նրան սևացնող հոդվածներ, ընդ որում՝ նրա անունը կապում էին Դրաստամատ Տեր-Սիմոնյանի և այլոց հետ: Թե ինչ առնչությունների մեջ էր նա ուրիշների հետ, ես չգիտեի, բայց նրա թշնամական հարաբերությունը Դրաստամատ Տեր-Սիմոնյանի հանդեպ՝ ինձ հայտնի էր: Ես դա գիտեի, ինչը ինձ խորապես մտահոգում էր և հանգիստ չէր տալիս:

Մոտս էր Բակունցի նամակը՝ ինձ հասցեագրած 1934 թ. Մոսկվայից, որտեղ գրողները մեկնել էին որպես գրողների համամիութենական առաջին համագումարի պատգամավորներ: Այդ նամակի մեջ Բակունցն ինձ գրել էր Դրաստամատ Տեր-Սիմոնյանի մասին՝ որպես անարժան, անմաքուր մարդու, նրա մասին իր ընդհանրական կարծիքն արտահայտելով այսպես. «Նա ոչիլ է ժողովրդի մարմնի վրա, այդպիսիներին պետք է անխնայ ճզմել, որպեսզի դրանք չպոծեն հողը»: Միամտորեն խորհելով, թե քննիչները նրանց փոխհարաբերությունների կապակցությամբ, ըստ երևույթին, գտնվում էին մոլորության մեջ, ես որոշեցի իմ միջամտությամբ պարզաբանել այդ: Նամակի մասին հայտնեցի Բակունցի քննիչի օգնական Արամ Մարգարյանին (ով Մուդրուսուն և խմբի ձերբակալությունից հետո իր կյանքն ավարտեց ինքնասպանությամբ): Նա այդ նամակով շատ հետաքրքրվեց, ասելով ինձ, որ ինքը կգա ընթերցելու այդ նամակը, և որ այն կարող է գործին շատ օգտակար լինել: Այդ նույն օրը նա եկավ ինձ մոտ: Ես նրան ցույց տվեցի նամակը: Նա խնդրեց ինձ իրեն տալ այդ նամակը՝ խոստանալով վերադարձնել երկու օրից: Այդ նամակը նա ինձ, իհարկե, այլևս չվերադարձրեց, հավանաբար օգտագործեց՝ Տեր-Սիմոնյանին էլ ավելի տրամադրելու Բակունցի դեմ:

ՎԱՐԿԱՌԱ ԲԱԿՈՒՆՑ (ԶԻԿԻՅԱՆ)

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 1954 թ.

«ՀԱՅՈՑ ԼԵՇՈՒ և

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2011, ԹԻՎ 5:

ԹԵ ԻՆՏԵՆՍԻՎ ՄԱՐԵՑ ՀԱՅ ԱՐԶԱՎԻ ԱՄԵՆԱՇՈՐՈՒՆ ԱՍՏՈՐ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ԲԱՆՏԱՅԻՆ ԿՅԱՆՔԻՑ

1937 թ. փետրվարի 22-ին, մռայլ ու սարսուռ մի երեկո, ինձ համար միանգամայն անսպասելի, կանչվեցի Հայկական պետական անվտանգության կոմիտեի ու ինձ կալանավորեցին... Խուզարկվելուց հետո ինձ տարան ու հրեցին Ներքնահարկի Նկուղներից մեկը, կարծեմ Նո. 21 կամերան, ուր գտնվում էր գործը Ակսել Բակունցը: Դուռը գրեզալով իջավ վրաս, և բանալին շառաչելով պտտվեց նրա մեջ ու վերջ...



Կամերայի լույսն աղոտ էր, դեղ-նակարմիր, մեռելային ու ճշող: Չգացվում էր գաղջ բույր, որին միախառնված էր այնտեղ պառկածների արտաշնչած հեղձուցիչ օդը: Մարդկանցից շատերը անտարբեր եղան իմ նկատմամբ, չնայած նոր էի մտել: Նրանցից առաջինը, գունդ վերմակի տակից / տնից ուղարկած / գլուխը վեր բարձրացնող ու ինձ նայողը Սկսել Բակունցն էր. հինգ օր առաջ մենախցից էին նրան փոխադրել այդ կամերան, բանի որ նախնական քննությունն արդեն ավարտված էր: Բոլորն էլ բավականաչափ գունատ էին ու տկար: Բակունցը մենախցում արդեն նստել էր, իր պատմելով, ինն ամիս: Այստեղ նա համեմատաբար իրեն թեթև էր զգում, որ գտնվում է մարդկանց մեջ և հետևաբար՝ աշխարհում:

Նա մեղմ շնչաց. «Մոտ արի, նստիր այստեղ, կողքիս»: Խոսում էր նվաղած: Նրա դեմքը գունատ էր, ինչպես արև չտեսած բույս, բայց աչքերը առկայծում էին: Իմ շփոթվածությունը նկատելով՝ ճիգով ժպտաց և այդ ժպտի մեղմադճուտ մի ցուլ անցավ նրա դեմքի վրայով ու դանդաղորեն մարեց՝ անհետացող ծիածանի պես:

Նրա գլուխը ծածկված էր կիսաշիկավուն, ավելի շատ թուփսին տվող մազերով, իսկ հոնքերի մազերը թավ էին, սովորականից երկար և մի քիչ թեթևած դեպի աչքերը: Քիթը երկարավուն էր ու ներդաշնակ դեմքին: Նա նայում էր պրոֆիլային դիրքով, այսինքն՝ փոքր-ինչ՝ թեք: Աչքերը կապտավուն էին, խոհական, խոշոր ու գողտրիկ, բայց նրա գունատ, անգական լույսով դեմքի վրա հոգեկան տագնապից, զայրույթից ու ջղագրգռվածությունից՝ խիստ էին փայլատակում:

Չնայած այդպես, բայց դեմքին ու ներքնական խորխտություն և նայողին

կթվար, որ այդ խորխտությունը ներդաշնակում է նրա մարմնի ողջ կազմությանը: Նրա ժպիտը ծաղկում էր դանդաղորեն, ամպի տակից սահող լուսնի նման ու նորից համրորեն մարում, դեմքն մնում էր վշտահար, առանց ժպտի: Կամերայում իրար կողքի պառկածները հողի աշխատավորներ էին, միայն մի ուսուցիչ կար՝ Ապարանի շրջանի Դրիստաշիման / Լինաբերդ / գյուղի ուսուցիչ Մամիկոնը: Մյուսներին հայտնի չէր, որ իրենց հետ տառապում է «Ալիական մանուշակի» հեղինակը: Այդ գիշերը ինձ երեք անգամ վեր ու վար տարան քննության համար: Բակունցն ինձ նախապես զգուշացրեց. «Գիտեմ, դու ևս անմեղ ես, բայց ուրիշ անմեղների անուն չտաս, իմացիր, որ շատերը այդ ճանապարհով անմեղ զոհեր են դարձել»: Առավոտյան կես շերեփի չափ վարսակի կաշ ու 400-500 գրամ տարեկանի հաց տվեցին ամեն մեկին, դա մեր օրվա սնունդն էր: Բեկված էր սիրտս, ուսելը դուրս էր իմ ցանկությունից: Այս անգամ բազմաթիվ աչքեր ինձ էին նայում, բայց ուսելիքը վիճակվեց Բակունցին, որը վերցրեց իմ պարզած ձեռքից:

Բակունցի նախնական քննությունն ավարտված էր, սպասում էր... Նրա գործը պետք է լավեր Գերագույն դատարանի հատուկ կոլեգիայում: Շատերի գործը հեռակա կարգով լուծվում էր Մոսկվայի եռյակով: Իր պատմելով՝ նա մեղադրվում էր 11 հոգու հետ, որոնք իբրև թե ունեցել են տեռորիստական խմբակ՝ Բերիայի և պետության մյուս ղեկավարների դեմ տեռոր իրականացնելու նպատակով: Որբան հիշում եմ՝ նա ասաց, որ իր վրա դրված

է եղել մեղադրական չորս հոդված, որոնցից ամեն մեկը նախատեսում է մահապատիժ, և երևել էր տալիս ինձ, որ իմ հոգվածը թեթև է, և ես կապրեմ...

Բակունցը օրեցօր սպասում էր, որ շուտով իրեն կկանչեն դատարան, և կիրականացվի մահապատիժը:

Նա ինձ պատմում էր, որ դատարանը տառաջիկորեն կատարում է անվտանգության կոմիտեի ղեկավարների նախապես կազմած սանկցիան և անհնար է, որ դատարանը մեկնում էր նկատմամբ շեղում կատարի, թեկուզ դատարանում գործի տվյալներով պարզվի, որ նա անմեղ է: Բակունցը գիտեր, որ կարճ ժամանակից հետո կանչվելու է դատարան և դատական պրոցեսից հետո ինքը չի լինելու: Բակունցի կամքի պողպատյա պլանը երեք էր նրա քննիչը, ափսոս, մոռացել էմ նրա անունը, ինքը նրա անունը նոր կանքով էր հիշում հատուկ դիտավորությամբ, որպեսզի նրանից խլեր՝ մտածելու, զգալու, կարոտելու, սիրելու հոգեկան բարձր հատկությունները և ինչ ցանկանար գրեր նրա մասին, իբրև նրա սեփական ցուցմունք և ստորագրել տար: Բակունցը ցավով էր հիշում, որ իր ուղեղը ցամաքում է առանց կարողալու և գրելու: Նրա մեծ տառապանքը գրելու հնարավորությունից զրկվելն էր, այդ մասին միշտ հայտնում էր իր միտքը: Եվ նա ինչքան պիտի գրեր իր հուզումնալից սրտով՝ աշխատանքի, կյանքի և մարդու մասին:

Անգործին նրան առաջարկված մահը բռնում էր նրա գլխի վերև, բայց նա չէր սարսում դրանից և քանզի ապրում էր, նրա մտքից երբեք չէր հեռանում այն ժամանակ երևանի ժողտան կառուցումը, Սևան տանող երկաթգծի շինարարությունը, քաղաքի և գյուղերի բարեկարգումն ու անընդհատ տեղեկություններ էր պահանջում ինձնից, որ նոր էի «մուտք գործել» այդ վայրը: Նա ապրում էր դառն ողբերգություն, երբ զգում էր, որ բանտերն ու նրանց հարմարեցված շենքերը օրեցօր լցվում են մարդկանցով և նա խորհելով չէր կարող գտնել այդ ահավոր աղետի բուն պատճառները: Երբեմն կսկիծով էր հիշում, թե ինչ դժբախտություն է, երբ մարդուն մեղադրում են առանց իրական ապացույցների, և ինչ դժբախտություն է, որ մեզ ինչ ուզում են ճանաչել, և ինչ էլ հասկանալ ու հավատալ: Կալանքից առաջ չգիտեմ Բակունցն ինչ պիտի է եղել, բայց այդ ժամանակ շատ դյուրագրգիռ էր, վերին աստիճանի ջղագար: Նա հաճախ դուռը ծեծում էր, երբ հսկիչը այդ ժամանակ դրան նեղակցեց բացում էր, նա պահանջում էր թաքնվել, բայց հսկիչը նրան հեղանքով ասում էր. «տեղդ նստիր, այստեղ քեզ համար սանատուրիա չէ»... Այսպիսի պատասխաններից նա շատ էր տանջվում:

Մենք բոլորս օրվա սնունդը ստանալուն պես միանգամից էինք



սպառում ու սպասում մինչև հաջորդ առավոտ: Բակունցը որոշեց օրվա ստացած հացը թողնել հաջորդ օրը, որպեսզի ունենալով երկու բաժին, կարողանա օրը երկու անգամ մսկել, սակայն չկարողացավ նախատեսած ռեժիմը պահպանել, այդ նույն օրը երկուսն էլ միասին գործածեց և հայտնեց, որ չի ցանկանում տարբերություն ստեղծել մեր և իր միջև:

Օրական երկու անգամ մեզ տանում էին զուգարան, բայց մի քանի րոպեով: Բակունցի տրամադրությունն այդ ժամանակ մի թեթև բարձրանում էր: Նա հափշտակված մոտենում էր ջրի ծորակին, լվացվում, գլուխը թեթում ջրի ծորակի տակ ու լսում ջրի ձայնը: Շատ էր սիրում ջուրը և նրա ձայնը, չէ՞ որ բնության հազարերանգ երևույթներից, գեղեցկություններից միայն ջրի նվազ զվարճանք էր մուտք գործել բանտ, որի համար նա անհազուրդ ակնաչ է դնում ջրի ձայնին: Նա անզուսպ կերպով կարոտում էր բնությունը: Չուգարանից վերադառնալիս պառկում էինք, տրամադիր չէինք կանգնելու, իսկ քայլելու տեղ չկար: Այդ պահին, ինչպես հաճախ, նա երևակայությամբ թռչում էր դեպի բնությունը և երբեմն էլ բացականչում: Ինչ երանություն՝ շնչել արևի, ջրի, հողի, բույսի, կանաչի բույրը, տեսնել լեռների երկնասույգ գագաթները, ամպերի հսկա դեզերը՝ հորիզոնի գծի վրա կուտակված:

Նա անընդհատ ինչ-որ բանի մասին խորհրդածում էր, փրփուփայում և ամեն բան, որ ասում էր գեղեցիկ ու պատկերավոր: Մի անգամ նա խոսեց մարդու աչքերի մասին և մենք ունկնդրում էինք նրան: «Աչքերն են, որ տեսնում են երկնի կապույտը, սպիտակ ու մռայլ ամպերը, արևի շափաղը, աստղային կրակները, մարդկանց գեղեցիկ ու տգեղ դեմքերը, նծուգների վարդը: Ինչեր ասես, որ չեն տեսնում մարդկային այդ փոքրիկ աչքերը, այդ աչքերն են, որ տեսնում են արձանները գեղաբանական, վրձնային նախշերն իրենց խորհուրդներով, դերասանների խայտառամուկ խաղերը՝ բեմահարթակներում... Ե, աչքեր, աչքեր, հոգու պատուհաններ...»: Բակունցը շատ կենսասեր էր, ապրել ու տեսնել էր ուզում, բայց միաժամանակ չէր սարսում նրանից, ինչ որ գալու էր իր գլխին: Նա միայն տանջվում էր նրանից, որ անսպասակ, քմահաճ ու մութ գործերի գոհ է դառնում: Նա երբեք իրեն չցուցեց, որ գրող է ու կարևոր գործեր է ստեղծել: Նա ափսոսում էր, որ անավարտ է մնացել «Արուսյան» և «Կարմիրաբար» վեպերը, բացի այդ, քանիցս ասում էր, որ նպատակ է ունեցել՝ վիպերգության վերածել թոնդրակեցոց շարժումը, այդ մասին դրվագներ էր պատմում մեզ: Որևէ դեպք նա պատմում էր սրտով, հուզիչ, դեպքերի մեջ դնում էր իմաստություն, կյանքի թրթիռ: Պատմելիս երբեմն ծպտում էր, երբեմն թախծում,

ճակատը շոյում ու խաղում մազերի հետ:

Այդ օրերին նա ինձ հարցրեց, թե իրենց մասին մամուլում ի՞նչ է գրվում. ես պատմեցի...

Նա հետաքրքրվեց Չարենցով, ես ասացի, որ Չարենցի մասին թերթերում լուրջություն է: Նա խորն ախ բաշեց.

«Ես ցավում եմ Չարենցի դեռ չգրված պոեմների համար, իսկ նրա գրածները, թեկուզ փակված լինեն դիվային սնդուկներում, մի օր վեր կբարձրանան պոեզիայի պառնասում»: Բակունցը սիրում էր Չարենցին անչափելիորեն, մի տեսակ երկնային սիրով: Կախարդված էր նրա պոետական թափով, հոգու անսահման ուժով, մաքառումների ծիրով:

– Չարենցը, շարունակում է Բակունցը, իր պոեզիայով ուրազան էր հին հանդես և կառուցման կորով էր նորի համար:

Ես և ուսուցիչ Մամիկոնը շատ էինք հետաքրքրվում Բակունցի և Չարենցի մտերմությամբ, և միշտ հակված էինք, որ նա պատմի Չարենցի բնավորության և նրա բանաստեղծական արվեստի մասին: Չարենցի անունը լսելիս, նա լցվում էր խանդավառությամբ և սկսում էր երկար պատմություններ նրա մասին.

– Չարենցը պոռթկացող բնավորություն ուներ, ասում էր Բակունցը, գիտեր խոսել գավեշտներով, սուր և երբեմն էլ նուրբ հեգնանքներ նրա խոսակցական ոճի բնորոշ առանձնահատկություններն էին: Նա ըմբոստ էր ու շիտակ: Սորմոքվում եմ նրա համար, որ աքիլոսյան սրի մի հարվածով նա ստացել է մահացու վերք:

Հաճախ գրականությունից և հունական առասպելներից օրինակներ էր բերում որևէ միտք իմաստասիր արտահայտելու համար: Նրա կարծիքով Չարենցը ոչ միայն պոետ է, այլ նաև գրականագետ ու մեծագույն գիտակ՝ համաշխարհային գրականության: Նա հաճախակի կրկնում էր, որ Չարենցը օժտված է եղել կռահելու ծիրով:

Ես սիրում եմ Չարենցի պոեզիան, որովհետև ներծծվում է ընթերցողի հոգու մեջ այնպես, ինչպես ջուրը՝ երաշտից խարկված հողում: Չարենցի արժեքը դրանով չի սահմանափակվում, շարունակում էր նա, նրա մեջ շատ է զարգացած ներքին ուժը, որով նա հաղթահարում է ստեղծագործության ճանապարհին եղած բոլոր դժվարությունները, որպեսզի կյանքին հավատարիմ մնալով՝ նրանից բարձր կանգնի: Չարենցը ունի պոետական գերազանց ֆանտազիա: Նա անխնայ հետախույզ է, պոեզիայի կախարհ մոգ, նա շրջել է դանթեների և հոմերոսների բանաստեղծական պարտեզներում ու ծծել նրանց բույրը: Բակունցը հաճախ կրկնում էր Չարենցի հետևյալ երկտողը.

Լավ եմ գրել, թե վատ, սրտով իմացիր, Չկա ուրիշ քննադատ, քո սրտից բացի:

Մի օր Բակունցը քնից զարթնեց ու

պատմեց իր տեսած երազը: «Չարմանալի երազ տեսա, որ Չարենցը նստած մի կապույտ նոսրագույն վրա, սկսում էր Արուսյան փողոցն ի վեր, ժողովրդի հսկա ալիքը փութկոտությամբ ճանապարհ էր բացում նրա առջև, վախից կծկվում էր սիրտս, ասում է Բակունցը, թե հիմա ինչքան մարդ կարող է տորոել իր ձիու սմբակների տակ: Թեկուզ երազ, բայց կարոտս առա Չարենցից:

Չարենցի պոեզիան նման է իր նստած կապույտ նոսրագույն, դարձյալ խոսում է Բակունցը, որ ինչքան թողնի նրա սանձը, թեկուզ երկինք, էլի կսլանաք»:

Բակունցի պատմելով՝ Չարենցը շատ էր սիրում ձիակառք նստելը, սմբակների դոփյունը, ձիերի համաչափ վարձը նրան հիացմունք էին պատճառում:

1937 թվի, կարծեմ, ապրիլ ամսի 3-ին էր, Բակունցին կանչեցին քննիչի մոտ: Վերադարձին շատ հուզված էր ու մռայլ: Քննիչը նրան կարդացել էր իր կողմից կազմած մեղադրական եզրակացությունը և պահանջել էր ստորագրելու մեղադրական եզրակացության տակ, որ իրեն հայտնված է այդ մասին: Ամբողջ գիշերը նա չքնեց... Առավոտյան չէր կարողանում վեր կենալ անկողնուց, դժվար էր նայել նրա դեմքին: Նրա շրթունքները սպիտակել էին, դեմքը գունատվել, դեմքի մկանները շարժվում էին, աչքերն էլ՝ ամկայծում: Լուռ նայում էինք նրան: Նա շուտ եկավ կողքի վրա ու չէր ցանկանում խոսել: Մի քանի րոպեից հետո հենվեց արմունկի վրա, հետո նստեց... Բոսորացավ քիչ առաջ նրա նիհար ու գունատ դեմքը, և սկսեց խոսել. «Ես ներկայացրել եմ մի քանի տասնյակ էջ կազմող գրական երկեր, այդ էջերում են շաղ տրված իմ սիրտն ու հոգին, իմ կարոտն ու տենչանքն, իմ անձնական տառապանքն ու հույսը: Եվ ահա ես ու իմ երկերը, ահա երկու անմեղ գոհեր...»:

Երկար լուրջությունից հետո վեր կացավ ու կանգնեց, ճակատը շոյեց արև չտեսած դալուկ ձեռքով ու արտաբերեց, կարծեմ, Պուշկինի հետևյալ երկտողը՝

– Кто клеветы про нас несет?,

Кто нас заботливо лелеет...?

Որևէ հարցի մասին խոսելիս, թվում էր, նա երազում էր, ընկնում էքստազի մեջ, մոռանում իր ապրած տառապանքները, իր վիճակը:

Նրա մեջ կար գրելու ծարավ, կուտակված մտքեր ու պատկերներ, բայց ոչ թուղթ կար, ոչ էլ՝ թանաք: Որևէ բան գրում էր ծխախոտի փոքրիկ թղթիկների վրա լուցկու այրված ծայրով, որոնց պահպանելը հնարավոր չէր, քանի որ այրված լուցկու փոշին թղթի վրայից անեւնում էր:

Բակունցը՝ պարզ ու գրականության մարդ, խորամանկ քննիչը նրան առել էր իր ճանկերի մեջ ու տորոել նրա անարատ ու անբասիր հոգին ու մարմինը:

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄՐԵՎԵԼՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՁՐՏՈՒՄԸ՝ ՄԵԾ ԻՇԽԱՆԱՍՄՈՐԻՑ ՄԻՆԳԵՎ ՃԱԿԱՏԵՆ



Չանգեզուրի և Քյուրդիստանի սահմանագծման հանձնաժողովում Հայաստանի հողօժողկոմի ներկայացուցիչ Ակսել Բակունցի գեկուցագրերը

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆ

6 ՅՈՒՆԻՍԿՈՒ 1925 թ.

ա) Չանգեզուրի գավառը, համաձայն
վիճարկության տվյալների, գրավում է 3926
քառ. վերստ տարածություն: Այդ թիվը
վերջերս ենթարկվել է փոփոխության,
որովհետև օգոստոս ամսին Ղափանի
շրջանում Չանգեզուրին է միացված 20
գյուղ: Բացի այդ, Չանգեզուրի և Քյուր-
դիստանի միջև այժմ գծվող նոր սահմա-
նը փոփոխության է ենթարկելու գավառի
ընդհանուր տարածությունը: Գավառը
կազմված է երեք գավառակից. Ղափան՝
86 գյուղ, Սիսիան՝ 37 և քաղաքի շրջան՝
25 գյուղ, ընդամենը՝ 148 գյուղ: Ազգաբ-
նակչության թիվը երեք շրջաններում էլ
համարյա թե հավասար է, 21-22 հազար,
3 շրջանում՝ 65 հազար:

բ) Գավառում շրջանային գյուղատն-
տեսներ չեն եղել: Գյուղատնտեսները ապ-
րել են Գորիս քաղաքում: Շրջագայության
տարածությունը՝ մաքսիմալ շառավիղը

հասնում է հարյուր վերստի, մինիմալը՝ 36
վերստ Սիսիան գետի և 59 վերստ Ղա-
փան գետի ուղղությամբ:

ՀՈՂԱՐՁՈՒԹՅՈՒՆ

18 ՅՈՒՆԻՍԿՈՒ 1926 թ.

Չանգեզուրի և Քյուրդիստանի սահ-
մանագծման հանձնաժողովը, կազմով՝
Անդրկենտրոնական լիազոր Կապտանովի,
Ադրբեջանի Կենտրոնական ներկայացու-
ցիչ Ա. Կարանի և Հայաստանի հողօժո-
ղկոմի ներկայացուցիչ Ա. Բակունցի, իր
աշխատանքներին անցել է սեպտեմբերի
10-ին, տեղում երկու օր սպասելով Ադր-
բեջանի ներկայացուցչին:

Աշխատանքը հետևյալ ձևով էր տար-
վում: Դեռ 1925 թ. այդ նույն հանձնաժո-
ղովը շրջել էր սահմանները միևնույն Սյու-
սան-Թափա, տեղում ծանոթացել եղած
վեճերի հետ: Այս տարի Անդրկենտրոն-
կոմի երկու հողաչափն արտանկարել են
սահմանավեճերը, երկու կողմի գյուղերից

էլ հավաքել զրավոր տեղեկություններ,
զանազան փաստաթղթեր՝ այս կամ այն
վիճելի հողամասի տիրապետության մա-
սին:

Հիմք ընդունելով այդ աշխատան-
քը՝ հանձնաժողովը սեպտեմբերի 10-ից
սկսեց տեղում ծանոթանալ վեճերին,
դարձյալ հարցաքննել գյուղերի ներկայա-
ցուցիչներին և ապա՝ մաս առ մաս գծել
սահմանները:

Առաջին կուրսանը դրված է Գորիս-
Ղափան ճանապարհի այն կետում, որ-
տեղից խճուղին իջնում է դեպի Եվազար
գյուղը, որը 1924 թ. հուլիսի 11-ի հանձ-
նաժողովի որոշմամբ մտնում է Քյուրդիս-
տանին, թեպետ գյուղը տնտեսապես
կապված է Չանգեզուրի հետ: Մինչև այդ
կուրսանը սահմանը որոշված էր դեռ
անցյալ տարի, նույն հանձնաժողովի մի-
ջոցով:

Հանձնաժողովն իր աշխատան-
քի հիմք է ընդունել 1924 թ. հուլիսի



11-ի համաձայնությունը, որ կայացել էր ընկ. Երզնկյանի և Բաղիրովի միջև: Տեղ-տեղ միայն հատուկ պատճառաբանությամբ նրանց սահմանագիծը փոփոխության է ենթարկված:

1924 թ. հուլիսի 11-ին հանձնաժողովը սահմանն ընդունել էր Գորիս-Ղափան խճուղին: Սակայն տեղական զննությունը և գյուղացիների ցանկությունը եկան որոշ փոփոխություն մտցնելու այդ սահմանագծի մեջ: Այսպես, օրինակ, ըստ այդ համաձայնության՝ սահմանը խճուղու հետ միասին անցնում էր Բազարչայ գետի վրայով: Զյուրդիստանի կողմը թողնելով Շահվերդիլար և Պաշարաջուր թուրք գյուղերը: Սակայն գյուղացիների ցանկությամբ փոխվեց սահմանագիծը, այդ երկու գյուղը թողնելով Չանգեզուրին: Նոր սահմանը խճուղուն խառնվում է Մագրա գյուղի տափարակում, անտառի ծայրին:

Անտառի մեջ սահմանը թողնված է խճուղին: Որովհետև Զյուրդիստանին անցնող Մագրա գյուղը խճուղուց վերև հողեր ունի, իսկ Չանգեզուրին անցնող Շուռնուփին հողեր ունի խճուղուց ներքև, հանձնաժողովը որոշեց. գյուղերին թողնել իրենց հողերը, արտանկարելով այդ հողերը, որոշելով նրանց սահմանները, որպեսզի հետագայում այդ գյուղերն ի հաշիվ պետական անտառների, որոնց մի մասը Զյուրդիստանին է, մյուսը Չանգեզուրինը, չկարողանան ավելացնել հողերը՝ կտրատելով անտառները:

Համաձայն 1924 թ. հուլիսի 11-ի սահմանագծի՝ Չեյվա գյուղի մոտ խճուղին կտրում է Չայգամի գետը, անցնում գյուղի գլխով դեպի հակերը: Խճուղուց ներքև մնում էին մի շարք գյուղեր՝ Չեյվա, Սևաքար, Մողես, Ուժանիս, Եղավարդ, Ագարակ, որոնք մինչ այդ ենթարկվում էին Ղափանին, ունենալով վեճեր հարևան թուրք գյուղերի հետ:

Հայաստանի ներկայացուցչի առաջարկը՝ սահմանագիծն անցկացնել ինչ թե խճուղով, այլ Չայգամի գետով, մերժվեց և՛ ընկ. Կաչետկովի, և՛ ընկ. Կարանի կողմից, թեկուզ երկու կողմերի համար անվիճելի էր այն, որ վերոհիշյալ գյուղերը պիտի միանան և մինչ այդ էլ միացած էին Ղափանին: Վեճը Վալի-Դուգ անվանյալ անտառամասի շուրջն է, մոտ 200 դես. տարածությամբ:

Վալի-Դուգը Չայգամի գետի աջ ափին է, խճուղու և գետի միջև, Չեյվա գյուղին կպած: Հետագայում առաջանալիք անախորժություններին ընդմիջող վերջ տալու համար Հայաստանի ներկայացուցչի առաջարկն էր բնական սահմանն ընդունել գետը, ամսավանդ որ Չեյվա գյուղը գետի ձախ ափին էլ ունի վարելահողեր: Այդ առաջարկն արվում էր անտառը պաշտպանելու նկատառումով, որովհետև Զյուրդիստանի ներկայացուցիչ ընկ. Ա. Կարանի հայտարարության համաձայն՝ այդ անտառամասն իրենք մտա-



Գյուղ Ճակատեն



Գյուղ Ագարակ

դիք են որպես խոտհարք և արոտատեղ տալ քոչվորներին:

Իմ զեկուցման հետ ներկայացնում եմ Չանգեզուրի անտառապետ ընկ. Գանիկի գրությունն այդ մասին, ուղղված հանձնաժողովի նախագահին և Հայաստանի ներկայացուցչին:

Չեյվա գյուղի սահմանները որոշելուց հետո հանձնաժողովն անցավ մյուս գյուղերի՝ Սևաքարի, Մողեսի, Ուժանիսի, Եղավարդի և Ագարակի սահմանները որոշելուն: Չեկուցմանս հետ միասին ներկայացնում եմ հանձնաժողովի արձանագրությունները՝ կայացած սեպտեմբերի 12-ին Փարիզյան գյուղում, սեպտ. 14-ին Ագարակում և սեպտ. 15-ին Գոյդարա-Խաշտաք գյուղում[3]: Առայժմ ձեռքի տակ չունենալով թվական տեղեկություններ եղած վիճելի տարածության մասին, ինչպես և այն մասին, թե այդ վիճելի տեղերից բանի դեպատին է անցել այս կամ այն կողմը նոր սահմանագծումից հետո, այժմ միայն մի ընդհանուր

եզրակացություն կարելի է հայտնել, այն է, որ զիջող եղել է մեծ մասամբ Չանգեզուրը: Հողփոխումատի ներկայացուցչին հրահանգված էր ամեն գնով վերջ տալ սահմանավեճերին, որպեսզի հնարավոր լինի շուտափույթ սկսել հողաշինարարություն, որպիսի աշխատանք մինչև այժմ կատարված չի, և պատճառ է եղել աչքի ընկնող անարդարացի հողօգտագործման:

Հանձնաժողովի աշխատանքները վերջացնելուց հետո հողաչափներն այժմ անցել են կուղզանների դրման, որից հետո նրանք նկարելու են սահմանագիծը և ուղարկելու հողվարչության, քարտեզի հետ միասին, նաև տեղեկություն այն մասին, թե նոր սահմանագծումից հետո բանի դեպատին հող է մնացել սահմանից այն կողմ:

Հիմնական թերությունն այդ աշխատանքի այն էր, որ հողահանձնաժողովը սահմանն անցկացնելիս ի նկատի չէր առնում ինչ երկու կողմի հողերի բանակը,



Թասի լեռնանցք

թե այս կամ այն գյուղը ինչքան հող ունի, ինչ կապեր ունի հարևան շրջանների կենտրոնների հետ, տնտեսապես ավելի շատ դեպի որ շրջանին է ձգտում և այլն: Ստացվեց այնպիսի արդյունք, որ սահմանն անցկացնելու միակ հիմքն այն էր, թե այս կամ այն գյուղն ինչ ազգի բնակչություն ունի: Հայ գյուղերը մնացին Չանգեզուրին, թուրք գյուղերն՝ Ադրբեջանին:

Սահմանն անցկացնելիս մի ուրիշ արգելք էլ կար: Քյուրդիստանի գյուղերի մասին ճշգրիտ տեղեկություն չկար. հայտնի չէր ո՞չ Նրանց բնակչության թիվը և ո՞չ էլ հողերի քանակը: Բացի այդ, սահմանն անցկացնելիս հիմք չընդունվեց երկու կողմի գյուղերի հողերի նորման. արդյունքն եղավ այն, որ Չանգեզուրին անցող գյուղերը մնացին հողի նվազ նորմայով:

Մի ուրիշ հանգամանք: Սահմանին կից թուրքական գյուղերն ունեն գյուղակներ (отселок), կազմված 5-8 տնից: Այդ գյուղակները խանգարում էին սահմանագծման աշխատանքին: Ցանկանալով միանալ Քյուրդիստանին՝ այդ գյուղակները պահանջում էին սահմանագիծը գյուղից որոշ հեռավորության վրա դնել, այդ դեպքում վիճելի հողերի մեծ մասն անցնում էր Նրանց կողմը: Այդ հանգամանքը շատ մեծ վեճեր առաջ բերեց, մասնավորապես Ուժանիսի և Եղավարդի սահմանն անցկացնելիս: Թուրք գյուղակները՝ Սուլթանլու, Հաջի-Ղուրբանլար, Սալաշ և այլն,

որոնց ծխերի թիվը 8-ից չի անցնում, տեղավորված են այն հողերի վրա, որից դեն Ուժանիսն ու Եղավարդն ունեն վարելահողեր: Որովհետև այդ գյուղակները միանում էին Ադրբեջանին, Նրանց և հայ գյուղերի միջև սահման անցկացնելիս հայ գյուղերի հողերից մի մասը մնաց սահմանից դեն:

Վիճելի հողերից մեծ մասը Նախկին բեգական հողեր են, որոնք բեգերը վարձով են տվել մեկ այս, մեկ այն գյուղին: Հոգոգտագործումը խառն է եղել, հայ և թուրք գյուղերը կողք-կողքի կամ իրար հողերի վրայով անցնելով միևնույն այժմ օգտվել են այդ հողերից: Սահմանն անցկացնելիս հարկավոր եղավ ընդունել մի գիծ, որ քիչ թե շատ բնական սահման լիներ:

Միակ թյուրիմացությունը եղավ Ագարակում: Հողաչափը կուրգանները դնելիս՝ գյուղացիք արգելում են: Հողաչափը վերադառնում է և զեկուցում հանձնաժողովի Նախագահին: Առանձին արձանագրությամբ այդ դեպքից հետո ագարակցիք ստացան մոտ 60 դես. վարելահող, որով և վեճը հարթվեց:

Հանձնաժողովի աշխատանքներն Ագարակից հետո մնացին թերի, որովհետև ընկ. Ա. Կարանը ճանապարհվեց Բաբու, զեկուցելու կատարած աշխատանքի մասին, Ադրբեջանի Կենտրոնական հավանությունն առնելու, ինչպես գրված էր Նրա լիազորականում: Նրան

փոխարինելու պիտի գար ընկ. Մամեդխանովը, որը Գորիս եկավ միայն հոկտեմբերի 10-ին:

Որովհետև Հայկենտգործկոմը հեռագրով ընկ. Բ. Հարությունյանին Նշանակել էր իր Ներկայացուցիչ՝ հանձնաժողովի հետագա աշխատանքներին մասնակցելու, հողժողովմանի ներկայացուցչի մալն ավելորդ եղավ, քանի որ Ադրբեջանի համապատասխան հիմնարկից Ներկայացուցիչ չէր Նշանակված: Ադրբեջանի Կենտրոնական լիազորել էր միայն ընկ. Մամեդխանովին, որի հետ միասին Հայկենտգործկոմի Ներկայացուցիչ ընկ. Բ. Հարությունյանը հոկտ. 11-ին ճանապարհվեց սահմանների մնացած մասը գծելու:

**ՀՈՂՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝
Ա. ԲԱԿՈՒՆՑ**

ՀՈՂՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Սահմանագծման ժամանակ Քյուրդիստանի գյուղերին է անցել մոտ 100 դես. հող, որ վաղուց մշակելիս է եղել Ուժանիս գյուղը: Այդ հողերից մշակության հարմար է 45 դես. ոչ ավել:

Ուժանիսցիները բավարարված կլինեն, եթե սահմանը գծվի ո՞չ թե Մովսիս-Ջալաղով, ինչպես արված է, այլ Ջալաղի գլխի ճանապարհով:

Սահմանագծման հանձնաժողովը սահմանը գծել է Ջալաղով, որպես բնական սահման, թեկուզ անհրա-





ժեշտ էր ճանապարհը թողնել սահման:

Ավելացնում եմ, որ ամենից շատ տուժել են ուժանիսցիք:

Ա. ԲԱԿՈՒՆՑ
30. X. 26

<ՀԱՅԱՍՏԱՆԻ> ԺՈՂՎՈՄԻՈՐՈՅԻՆ՝
<Չեկուցագիր Անդրկենտգործկումի

սահմանագծման հանձնաժողովի գործունեության մասին>

<13 Նոյեմբերի 1926 թ., Երևան>

Իմ զեկուցման մեջ գրել եմ սահմանագծման հանձնաժողովի աշխատանքների և այն պատճառների մասին, որոնք առիթ են տալիս դժգոհությունների:

Այդ խնդրի շուրջը լարված մթնոլորտ է ստեղծվել սահմանին կից գյուղերի միջև:

Որոշ տարր աշխատում է օգտագործել այդ դժգոհությունը՝ լարելով գյուղերին իրար դեմ: Կազմում էին դիմումներ, շատ անգամ այդ բոլոր դիմումները մի ձեռքով էր գրված և միակերպ խմբագրած:

Ամենից մեծ սխալն այն է եղել, որ հանձնաժողովը փաստորեն ազգային սահման գծեց, թուրք գյուղերին թողնելով Ադրբեջանի կողմը, հայ գյուղերը՝ Հայաստանի: Այդ ձևի դեմ ես բողոքել եմ շատ անգամ հանձնաժողովում:

Իհարկե, գյուղացիները տրտնջում էին, հազար ու մի կարծիքներ հայտնում: Ուժանիս գյուղում գյուղացիները խանգարեցին հանձնաժողովի աշխատանքները, լսելով որ հանձնաժողովը մտադիր է ուշադրության չառնել այն մատյանը, որով նրանք ապացուցում էին իրենց տիրապետությունը վիճելի հողերի նկատմամբ: Ուժանիսը տուժեց, գրկվելով իր վարելահողերի մի մասից: Հանձնաժողովի նախագահ ընկ. Կաջետկովը և ԱզՑԻԿ-ի ներկայացուցիչ ընկ. Ա. Կարաևը պնդում էին Մովսիս-Հայկազ անվանյալ ձորակի վրա, որից դեն ուժանիսցիք հողեր ունեին: Սակայն սահմանն անցավ այդ ձորով, որպես «բնական» սահման, թեկուզ և ես հակառակ էի, պնդելով ճանապարհի վրա:

Ազարակում ավելի մեծ աղմուկ եղավ: Գյուղնախագահի պաշտոնական գրության համաձայն իբր թե գյուղացիք բանտարկել են նրան և գյուղի ներկայա-



Որոտան (Գորիս)

ցուցիչներին, որպես գյուղի շահը չպաշտպանողի: Հարձակվել են հողաչափի վրա, նրա աշխատանքը խանգարել: Ընկ. Կալեյտկովի Ազարակ գնալն էլ չի օգնում, մինչև որ նոր գիշում չի արվում Ազարակին: Այդ դեպքում բնակությունը հանձնված է Չանգեզուրի դատախազին:

Ինձ հայտնի չէ եղվարդ գյուղացիներին ծեծելու դեպքը: Ես ուրիշ վերսիս եմ լսել, որ նախահարձակ եղել են եղավարդցիները, որոնք իբր թե հրացանով հարձակվել են թուրք գյուղացիների վրա և բռնել նրանց իրենց հողից: Այդ եղել է անցյալ տարի: Այդ մասին ինձ ասաց Քյուրդիստանից հողբաժնի վարիչ ընկ. Իմրան Հաջինը, ավելացնելով, որ հրացանները գտնվում են Քյուրդիստանում:

Այն տրտուները, որ իբր թե ասել են գյուղացիք այն մասին, թե «Ադրբեջանի ներկայացուցիչները միշտ լինում են հողաչափերի հետ և ցուցմունքներ են անում», ստուգման կարոտ են: Գուցե և եղել են, բայց այդ հակառակ է ընդունված որոշման: Հողաչափերը նախօրոք երկու կողմից գյուղերի ներկայացուցիչներից հարցրել են վիճելի հողերի սահմանները, նշանակել պլանշետի վրա, որից հետո միայն հանձնաժողովը տեղում ծանոթանալով վեճերին՝ անց է կացրել այս կամ այն սահմանը:

Թե նախօրոք ի՞նչ ներկայացուցիչներ են շրջել հողաչափերի հետ, ինձ հայտնի չէ: Համենայն դեպս, նրանք պաշտոնական մարդիկ չեն եղել, այլ տեղացիներ. կային անհատներ (օրինակ՝ Փարիջան գյուղացի Բաբան, Խաչատուր գյուղում Նիսանյան և ուրիշները), որոնք նպատակով էին երկու կողմի հարաբերությունների սրման, աղմկում, դիմումներ տալիս, սպառնում և այլն: Իմ ներկայությամբ՝ փարջանցի Բաբան իբր թե թուրք գյուղացիների անունից հայտարարեց, որ իրենք չեն ուզում նայել «Արարատի հուբումաթին», որովհետև նա աղբատ է, գյուղացիներից տուրք շատ է վերցնում, նրա պայմանները ծանր են և այլն: Այդ հայտարարությունը լսեցին Ա. Կարանյան և Կալեյտկովը: Իմ կարծիքով՝ Բաբան այնպիսի մութ անձնավորություն է, որի հայտարարությունը որոշ նպատակ ունի և, համենայն դեպս, ծրագրված: Բաբայի նման մարդիկ պակաս չեն և հայ գյուղերում:

Մի բան պարզ է: Սահմաններն անցկացնելիս ընդունվում է գյուղի այս կամ այն ազգի պատկանելը որպես գլխավոր հիմք: Նման սահմանագիծ անցկացնել անթույլատրելի է: Արդյունքն եղավ այն, որ գյուղերը գրգռվեցին իրար դեմ:

Ընդհանրապես, սահմանագծային աշխատանքի սկզբունքն ու ձևը շատ թերություն ունեն: Հարկավոր է ավելի մեծ ուշադրություն դարձնել՝ խնդիրն ավելի ճիշտ լուծելու համար:

Ա. ԲԱԿՈՒՆՑ

ԱԿՍԵՆ ԲԱԿՈՒՆՑԸ՝ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԲԱՆ ՈՒ ՊԱՏՄԱԲԱՆ

Ճառ խորհրդային գրողների համամիութենական առաջին համագումարում (Կրճատումներով)

Ես նկերներ, բոլոր գեկուցողները, այդ թվում նաև ազգային հանրապետությունների ներկայացուցիչները, խոսեցին ազգային գրականությունների բուռն աճի մասին, գրականություններ, որոնց զարգացման հիմքում դրված է պոլիտարական հեղափոխության մեծ գաղափարը: Տարբերվելով ազգային ուրույն ձևերով՝ խորհրդային միասնական գրականությունը իր ժանրերի և թեմատիկայի բազմազանությամբ մարդկության ամբողջ պատմության մեջ երբևէ չտեսնված գրականություն է: Խորհրդային գրողների միասնական բանակը՝ սկսած Նոր միայն իրենց անգրագիտությունը վերացրած աշուղներից ու լեռնցիներից մինչև խոսքի մեծ վարպետ Մաքսիմ Գորկին, վիթխարի մուրճով կործանում է հոգևոր ստրկության, քաղցեմիության, ազգային սահմանափակվածության, նորկալիության հասնող սեփականատիրական զգացումի շղթաները:

Միաժամանակ, այդ գրականությունը դաստիարակում է միլիոնավոր աշխատավորների՝ նրանց մեջ զարգացնելով խորհրդային հայրենիքի ու իրենց աշխատանքի նկատմամբ սեր...

Միանգամայն բնական էր գեկուցումների որոշ «խոյընթացը»: Դա մի յուրատեսակ «դարաշրջանի նախանշան» էր. բուրժուազիային դուրս վերջած բանվոր դասակարգը զգում է իրեն լիիրավ ու անսասան տեղը ոչ միայն գործարանների ու հողի, այլև ամբողջ պատմության, մարդկության անցած ամբողջ ճանապարհի:

Միայն այժմ է հնարավոր նոր ձևով գնահատել անցյալը, մեր մեծ կուլտուրայի բոլոր նշանավոր մարդկանց: Դրանից էլ բխում են այս հորդացող բերրությանը, այս ուրախ երգերը, որոնք հնչում են մեզ մոտ ամենուրեք՝ Միսկից մինչև Վադիկոստով, Արխանգելսկից, մինչև Երևան: Խոսել սկսեց մեծ համրը՝ խոսեցին աշխատավորները, խոսեցին առաջներում ճնշված ժողովուրդները:

Ի՞նչ կար մեր անցյալում: Ես ոչ անուններ եմ հիշատակելու, ոչ էլ առանձին պատմական թվականներ. կհիշեցնեմ միայն այն, ինչի մասին միանգամայն ճիշտ նկատեց Ալեքսեյ Մաքսիմովիչը. «Մենք, այսինքն՝ ռուս գրականությունը, ռուս գրողներս, իրավունք չունենք շրջանցելու ազգային փոքրամասնությունների գրական ստեղծագործությունը միայն այն հիման վրա, որ մենք թվով շատ ենք: Արվեստի արժեքը չափվում է ոչ թե քանակով, այլ որակով: Եթե մեզանում անցյալում կար Պուշկինի նման հսկա, ապա դրանից չի հետևում, որ հայերը, վրացիները, թաթարները, ուկրաինացիները և մյուս ժողովուրդները ընդունակ չեն տալու գրականության, երաժշտության, գեղանկարչության, ճարտարապետության մեծ վարպետներ»:

Ելույթ ունեցողներից շատերը բերում էին անցյալի ազգային կուլտուրայի հսկաների անուններ: Բայց ես ցանկանում եմ այդ առթիվ ասել հետևյալը. ժողովուրդների նախնի բանտում՝ ցարական հին Ռուսաստանում, վերը հիշատակված ժողովուրդները չտվեցին և չէին կարող տալ այնպիսի հսկաներ, ինչպիսին էր Պուշկինը: Պուշկինի ծաղկման տարիներին կայսրության ծայ-

Իրամասերում դեռևս հոնդում էին հնազանդեցող արշավախմբերի թնդանդանները: Փոքր ժողովուրդների մի լուծող փոխարինվում էր մյուսով: Նվաճվելուց հետո, նրանք ընթանում էին հոգևոր աղբատացման ուղիով, իրենց վրա կրելով կրկնակի ճնշում՝ ռուսական և իրենց հայրենական բուրժուազիայի, որը ատելություն էր բորբոքում մյուս ազգերի մարդկանց նկատմամբ և դրանով էլ իր ժողովրդի մեջ խլացնում էր ճնշվածների դասակարգային ատելությունը ճնշողների դեմ:

Կբերեմ երկու օրինակ: Մեր գրականության հիմնադիր Աբովյանը (19-րդ դար) հիմնադրել էր ինչպես իր գրական նշանակությամբ, այլև իր կյանքով: Նա մի մարդ էր, ով տեսել էր պարսկական տիրապետությունը, պատահաբար ընկել Դորպատի համալսարան, շփվել Գյոթեի ընթերցողների հասարակության հետ, ծանոթ է եղել ժուկովսկուն և այլն: Երկուսը Առաջինի գազանային ռեժիմի դաշտից անցնում վերադառնալով Ֆայաստան՝ նա անհետ կորել է, իր ետևից թողնելով «սև կառնի» առասպելը և Օխոտյան երկրամասում իր նույնքան առասպելական գերեզմանի պատմությունը:

Ուսումնասիրելով մեր գրականության այդ նշանավոր մարդու ժառանգությունը, հետևելով նրա աճմանը, իսկ նա անհետացավ բոլորովին երիտասարդ, կարելի է լիակատար իրավունքով ասել, որ հայ ժողովրդի զարգացման բնականոն պայմաններում Աբովյանը կդառնար մեծ գրող:

Կամ վերցնենք Միքայել Նալբանդյանին: Սա ևս հայ գրականության մեջ խոշորագույն դեմք է, Բակունինի, Օգարյովի և ռուսական պատմության ուրիշ առաջավոր մարդկանց մերձավոր բարեկամ՝ կապված լուրջ նյալի պրոպագանդայի գործի հետ և այլն, դեմոկրատական գրականության հիմնադիրներից մեկը: Նա բանտարկվեց Պետրոպավլովսկի ամրոցում և այնտեղ էլ գոհվեց, ինչպես և այդ տասնամյակի բոլոր պայծառ մարդիկ:

Բերելով այս օրինակները՝ ես ուզում եմ ասել, որ միայն այժմ մեզանում հնարավորություն կա դուրս գալու մեծ գրականության ասպարեզ...

Մի փոքրիկ դիտողություն. այստեղ լսեցինք Շևչենկոյի, Ռուսթավելու, Յուլիանսե Թումանյանի և այլոց մասին: Ես պետք է ասեմ, որ ճիշտ չի լինի հիշատակել այդ անունները՝ չափելացնելով, որ նրանք պատկանում են բոլոր ժողովուրդներին: Ես՝ հայ գրող, նրանց համարում եմ ինձ հարազատ այնպես, ինչպես Թումանյանին: Ես Ռուսթավելուն համարում եմ ինձ համար այնպիսի հարազատ գրող, ինչպես Խորենացուն, ՝ նրա ստեղծագործությունը արդեն մտել է մեր ընդհանուր գանձարանը:

Բայց արդյո՞ք այժմ խոսքը միայն

պատմության մասին է: Իմ կարծիքով բանն այն է, որ մեր գրականության հայկական ջոկատը, ինչպես և վրացական ու մյուս ջոկատները, պետք է օգտագործեն իրենց ամբողջ ստեղծագործական հարստությունը, որպեսզի Չարենցի, Ջավախիշվիլու և մյուսների գրքերի միջոցով այդ հարստությունը մուծվի ընդհանուր խորհրդային գրականության մեջ:

Այստեղ Ուկրաինայի ներկայացուցիչը պարզ և համոզիչ ցույց տվեց, թե ինչպես Շևչենկոյի ժառանգության ոչ ճիշտ, անբնական օգտագործումը հանգեցնում է խառնաշփոթության: Ուկրաինայի ներկայացուցիչ գեկուցումից հետո պարզ դարձավ, որ Շևչենկոյի ստեղծագործության նոր գնահատությունը անչափ բարձրացրել է նրա նշանակությունը որպես ուկրաինական հանճարեղ բանաստեղծի:

Ես խորհուրդ կտայի մեր բոլոր գրողներին ու գրականագետներին՝ վերանայել գրական վիթխարի ժառանգությունը, այդ բանն անել արագ, որովհետև դրանով մենք կարող ենք մեծ ու լայն ուղիներ գծել մեր խորհրդային գրականության համար:

Ընկերներ, ես ուզում եմ մատնանշել երկրորդ աղբյուր, որից ազգային գրողները կարող են բաղել կոնկրետ նյութ: Որոշ ազգային ջոկատներ օգտագործել են այդ ուղին, բայց այստեղ քիչ խոսեցին դրա մասին: Եթե մենք վերցնենք առաջներում ճնշված ժողովուրդների պատմությունը, ապա կտեսնենք, որ նրանցից շատերը հազարամյակների ընթացքում կրել են գանազան պատմական ազդեցություններ: Չայ ժողովուրդը, օրինակ, կրել է պարսիկների, հելլենների, Արևմուտքի, Արևելքի, պարթևների և ուրիշների ազդեցությունը: Դա պատմական ուղու հարստություն է՝ հազեցած պատմական բազում ազդեցություններով, ազդեցությունների այդ վիթխարի խտացումը, ես կասեմ, ավելի կարևոր աղբյուր է, քան հին գրողների ծանոթ անունները:

Ի՞նչ է այժմ տեղի ունենում մեզանում: Մեր գրական ջոկատը ի՞նչ է պարտավոր մուծել ընդհանուր խորհրդային գրականության մեջ:

Պատմական իրադարձությունների բնադատական վերանայման ուղին արժեքավորագույն միջոց է գրականության մեջ նոր ավանդներ մուծելու համար: Այդ բանը ցույց տալիս է մի քանի օրինակով:

Փոփոխվում է ինչ միայն տնտեսությունը, այլև վերափոխվում է ամբողջ ժողովուրդը: Դուք հիշում եք, թե ինչպես Գոգոլը իր «Մեռած հողիներում» մատնացույց է անում գյուղացիների ծախսուտությունը: Սակայն նա, ով այժմ ճանաչում է մեր կոլտնտեսականներին, կասի, որ հիմա ծախսուտություն չկա: Այժմ գյուղացին խոսում է միանգամայն ուղիղ, ճշգրիտ և գունդ:

Վերցրե՛ք երեխաների նկատմամբ

ցուցաբերվող վերաբերմունքը: Մի՞թե դա ցույց չի տալիս ժողովրդի հոգեբանության մեջ կատարված փոփոխությունները և նրա կոլտնտեսականության աճը: Ոչ մի կասկած չի կարող լինել, որ հնում, հատկապես մեր արևելյան ժողովուրդների մեջ, երեխաների նկատմամբ հոր կողմից սեր արտահայտելը տղամարդուն վայել գործ էր համարվում: Այժմ փոխվել են թե՛ այդ և թե՛ հին կենցաղի ուրիշ շատ գծեր:

Ընկերներ, վերին աստիճանի հետաքրքրական են ժանրի հարցերը: Այստեղ այդ մասին քիչ խոսեցին: Ես պետք է ասեմ, որ ազգային գրականությունների հիմնական թերությունը համարում եմ ժանրերի հնացած լինելը, այն, որ այդ գրականություններն ընկնում են խոշոր վարպետների կողմից արդեն հաղթահարված ձևերի ազդեցության տակ: Այժմ ոչ ոք չի կարող գրել այնպես, ինչպես գրում էր Ռուսթավելին: Ես նույնիսկ այսպես կասեմ, այն ձևերը, որոնք 19-րդ և 20-րդ դարերում հաղթահարվել են հայ կամ վրացի որևէ վարպետի կողմից, հաճախ ընդօրինակման պատճառով արգել են հանդիսանում գրական նոր ձևերի զարգացման համար:

Որտե՞ղ է ճշմարիտ ուղին. այդ ուղին վերադարձն է դեպի սկզբնաղբյուրները, դեպի ժողովրդական ստեղծագործությունը: Ես նկատի ունեմ ոչ թե վերադարձը դեպի ժողովրդական ստեղծագործության հին աղբյուրները, դեպի բանահյուսությունը, թեև բանահյուսությունը նույնպես ապրում ու զարգանում է, այլ վերադարձը դեպի ժողովրդական ստեղծագործության իսկական և նոր արմատները:

Ժանրի հարցի կապակցությամբ ես պետք է ասեմ, որ մեծ հետաքրքրություն ունի գեղարվեստական պատմական ժամանակագրության ժանրը: Չայկական պատմական ժամանակագրությունների վիթխարի քանակությունը բոլորովին չի օգտագործված գեղարվեստական գրականության կողմից: Մեր գրողների պարտականությունն է քննել, ուսումնասիրել դրանք, բնադատորեն վերցնել այնտեղից էպիկականությունը, արտահայտման խստությունը, լեզվի հարստությունները, բառերի ժլատ տնտեսումը:

Մի դիտողություն լեզվի մասին՝ թարգմանությունների կապակցությամբ: Եթե ազգային լեզուները այժմ զարգանում են ռուսաց լեզվի ազդեցությամբ, որը ես համարում եմ միանգամայն բնականոն, ապա ռուսերեն թարգմանելու ժամանակ՝ վերջինիս տարողունակությունն ընդլայնելու համար անհրաժեշտ է նրա մեջ մուծել ազգային լեզուների բոլոր նվաճումները: Ռուսաց լեզուն նույնպես փոփոխվում է՝ հարստանալով նոր դարձվածներով ու բառերով:

ԱԿՍԵՆ ԲԱԿՈՒՆՑ, 1934 թ.

ԱՎԱՅԵԼ ԲԱԿՈՒՆՑԸ՝ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՄԱԲԱՆ ՈՒ ՊԱՏՄԱԲԱՆ

Բակունցը հայ գրականության լեզվի մասին



ՈԱՖԱՅԵԼ ԻՇԽԱՆՅԱԼ

Անդրադառնալով լեզվական հարցերի նկատմամբ Բակունցի ունեցած հայացքներին ու տեսակետներին, դրանով ավելի ամբողջական կդառնա նրա ստեղծագործությունների լեզվաբանական առանձնահատկությունների բնութագրումը: Ցավոք, լեզվի հարցերին նվիրված բանավեճերի ժամանակ գրողի ունեցած ելույթների մի մասը չի պահպանվել, բայց այն, ինչ կա այսօր հրապարակում, բավական կոչվի և տալիս գրողի այդ կարգի պատկերացումների մասին:

Նախ ուշադրություն է գրավում Բակունցի ըմբռնումը յուրաքանչյուր ժողովրդի ազգային լեզվի և մասնավորապես հայերենի դերի ու կշռի մասին: Երբ հանրագումարի ենք բերում Բակունցի գեղարվեստական երկերում, հատկապես «Կյորենում» ու «Կարմրաքարում» արված ակնարկները լեզվի մասին, նկատում ենք, որ հեղինակը խորապես ըմբռնել է բոլոր ժողովուրդների առաջավոր մարդկանց կողմից պաշտպանված այն թեզը, որ մայրենի լեզուն մի ժողովրդի բոլոր (առանց բացառության) հատվածների ու խավերի հաղորդակցման միջոց պիտի լինի: Բակունցի որոշ ստեղծագործություններից հաճախ զգացվում է Գրիբոյեդովի կամ 60-ական թվականների ռուս առաջադեմ մարդկանց մերժողական վերաբերմունքը այն բաղբերանների նկատմամբ, որոնք երես էին դարձնում սեփական ժողովրդի լեզվից ու մշակույթից:

«Կյորենում», օրինակ, ծաղրվում են այն «պոդգրեսիստ» բաղբերանները, որոնց գեղջուկները «պալատնավորներ» են անվանում: Այդ այն ապագայնացած անձինք էին, որ արհամարհում էին հայ աշխատավոր գյուղացուն, նրա կյանքն ու սովորությունները, նրա լեզուն, այսինքն՝ հայոց լեզուն և չէին բարեհաճում գործածել այն: Բակունցը անխնա երգիծում

է նաև այդ մարդկանց «բուլկի ուտող» փափկասուն զավակներին, որոնք պետք է գնային միայն գիմնազիա կամ «թագավորական ռուսաց շկուլ», բայց ոչ երբեք՝ հայոց ուսումնարան, ուր գեղջուկների, վաղարարուհիների ու բրուտների զավակներն էին սովորում:

Հայ եսասեր բաղբերանի դժվար էր վերափոխվում, և նրա դեմ պայքարը հարկ էր շարունակել, որ և անում էր Բակունցը: Նա մի կողմից ընդգծում էր, որ հայ գյուղացու լեզուն չպետք է գրական լեզվից ինչ-որ հեռու բան համարել և որ հայ գրական լեզուն թափանցում է գյուղ. «*Մեր մամուլը, ինչպես և մեր գյուղացիությունը աշխատում են խոսել մաքուր գրական լեզվով*»¹, – ասում էր նա 1934 թվականին, և ապա՝ «*Այժմ գյուղացին խոսում է միանգամայն ճիշտ, ճշգրիտ և գունեղ*»²: Մյուս կողմից Բակունցը ամեն առիթով պայքար էր տանում այն ցավագին երևույթի դեմ, երբ անցյալի բաղբերանական մտայնությամբ ոմանք շարունակում էին արհամարհել սեփական ժողովրդի լեզուն: Բակունցն իր ակնարկներից մեկում, օրինակ, գայրույթով է խոսում այդպիսի մի բաղբերան՝ Կարապետ Չախնազարիչի մասին. «*Յոթ տարի է անցել հոկտեմբերից, – գրում է Բակունցը, – և դեռ մարդիկ կան՝ հին պիսարներ, որոնք հայերենը համարում են գյուղացու լեզու, անվայել «իրենց» շրջանի համար: Գլուխը բարդ, թող համարի, բայց զայրանում են, երբ ժողովում է այդ ասում... ձայն է խնդրում և խոսում ռուսերեն (երբ խոլների կեսից ավելին իրենց բաղբերան ուրիշ բաղբերան են գնացել): Հայերեն խոսելիս էլ խառնում է այնքան ռուսերեն, որ շիլաճաշ է դուրս գալիս, անհամ, անհոտ*»³:

Ուշագրավ է Բակունցի պատկերացումը խորհրդային Միության եղբայրական ժողովուրդների ազգային լեզուների փոխներգործության վերաբերյալ: Մեր հեղինակի կենսագրությունից հայտնի է, թե որքան լավ գիտեր նա ռուսերեն ու որքան բարձր էր գնահատում այդ լեզվի հարստությունները: Մի քանի առիթներով նա ցույց է տվել ռուսաց լեզվի նշանակությունը խորհրդային Միության ազգերի լեզուների, այդ թվում հայերենի համար⁴: Դրա հետ միասին Բակունցը դնում էր ազգային լեզուների ու մասնավորապես հայերենի օգնությամբ ռուսերենի հարստացման հարցը. «*...ռուսերեն լեզվով թարգմանությունների ժամանակ վերջինիս տարողունակությունն ընդլայնելու*

համար անհրաժեշտ է նրա մեջ մտցնել ազգային լեզուների բոլոր նվաճումները»⁵, – ասել է Բակունցը գրողների I-ին համագումարում իր ունեցած ելույթում:

Դիտելի է նաև Բակունցի նախանձախնդիր մտահոգությունը հայոց լեզվի ու գրականության ծաղկման նկատմամբ: Կտրուկ հայտարարություններն այն մասին, թե պետք է մերժել հայ գրականության ու նրա լեզվի զարգացման այս կամ այն ուղղությունը, Բակունցի հակահարվածին էին հանդիպում: Ըստ որում, ամեն դեպքում Բակունցը մի ազգի լեզվի ու գրականության զարգացման համար իբրև կազդուրիչ աղբյուր մատնացույց էր անում ժողովրդի կենդանի խոսքն ու բանահյուսությունը, որը նա համարում էր թե՛ գրականության, թե՛ նրա լեզվի սկզբնաղբյուր. «*Որտե՞ղ է ճշմարիտ ուղին. վերադարձ դեպի սկզբնաղբյուրները, դեպի ժողովրդական ստեղծագործությունը*»⁶:

30-ական թվականների սկզբին տեղի ունեցած բուռն բանավեճերի ժամանակ Բակունցը հետևողականորեն պաշտպանում էր հայերենի գեղարվեստական մշակման թունայնական ավանդները ամեն կարգի հարձակումներից:

Բանավեճերի ժամանակ հաճախ էր դրվում արևելահայ լեզվի զարգացման երկու գլխավոր ուղղությունների հարցը (մի կողմից՝ Աբովյան, Պռոշյան, Թումանյան, մյուս կողմից՝ Նազարյան, Շահազիզ, ապա նոր որակով՝ Տերյան և այլն), ըստ որում մեծ մասամբ հնացած էր դիտվում լեզվի խոր ժողովրդայնության համար մաքառող ուղղությունը, որ մենք անվանեցինք թունայնական:

Ե. Չարենցը, օրինակ, թունայնական այդ ուղղությունը համարում էր հայ գրականության լեզվի զարգացման մայրուղուց դուրս մնացած և հնացած: Հայաստանի գրողների համագումարում տված զեկուցման մեջ Չարենցն ուղղակի ասաց. «*Հանձին Յ. Թումանյանի՝ մեր գրական լեզվի շինարարության ասպարեզում մենք տեսնում ենք վերջին և ամենացայտուն ներկայացուցչին լեզվական այն տեղեկեցի, որի բնորոշ կողմն են կազմում լեզվական գավառական հատկանիշները (թե՛ բառակազմության և թե՛ համաձայնության մեջ): Լեզվական այս տեղեկեցը սկիզբ առնելով Խ. Աբովյանից՝ իր հետագա ներկայացուցիչների մոտ հետզհետե ազատագրվում է գավառական հատկանիշներից (առանձին է մտնում Գ. Սուրդուկյանը) և Յ. Թումանյանի երկերում դառնում է մի լեզու, որ կիսով չափ պահում է իր մեջ դեռևս գավառական հատկանիշները, և այդ վերջիններն են, որ մենք հասկանում ենք «Թումանյանի լեզու» ասելով: Եթե մենք Յ. Թումանյանի լեզուն գրկենք այս հատկանիշներից, կստանանք մաքուր գրական լեզու, բայց սա արդեն չի լինի այն գրա-*

կան լեզուն, որ բնորոշ է Թումանյանի համար: Թումանյանի լեզվի այդ յուրահատուկն ու բնորոշը, որ նրա լեզվին տալիս է գյուղական ինտոնացիա, մեր խորին համոզմունքով պատմականորեն դատապարտված է մահվան, ինչպես այդ ցույց է տալիս մեր գրական լեզվի հետագա զարգացումը, մեր գրական ներկա լեզուն, առանց բացառության»:

Իհարկե, Չարենցը մինչև իր կյանքի վերջը Թումանյանին համարում էր հայ գրականության անհաս Արարատը, շատ բարձր կարծիք ուներ նաև նրա լեզվական մշակույթի մասին, սակայն ահա այդ մշակույթը համարում էր ժամանակակից գրականության օգտագործման տեսակետից ոչ պետքական, պատմականորեն մահվան դատապարտված, հայերենի լեզվաշինարարության մայրուղուց դուրս ընկած: Ահա Չարենցի այս տեսակետի դեմ վճռականորեն դուրս եկավ Բակունցը, որ հայերենի որևէ լեզվաշինարարություն չէր պատկերացնում առանց ժողովրդական լեզվի, առանց այդ սկզբնաղբյուրի կենսական հյութերն օգտագործելու: Ու թեև նա իր ստեղծած լեզվական արվեստի խորապես ժողովրդային բնույթով արդեն գործնականում ցույց էր տրվել թումանյանական ուղղության մեծ կենսականությունը, բայց անհրաժեշտ համարեց տեսականորեն էլ որոշակի դնել այդ հարցը:

Ի պատասխան Չարենցի, Բակունցը համագումարում ասաց հետևյալը. «Պետք է դնել մաքուր լեզվի, կենտրոնաձիգ լեզվի խնդիրը, և ես գտնում եմ, որ այդ լեզուն խարսխված պետք է լինի ժողովրդական լեզվի վրա: Դրա համար մենք պետք է ուսումնասիրենք Թումանյանի լեզուն, հասկանանք, թե իր ժամանակին Թումանյանն ինչպես է կարողացել օգտագործել բարբառները և ժողովրդական լեզուն, գրաբարը, զանազան պատկերներ և այլն»⁸: Բակունցը գտնում է, որ Թումանյանը պետք է դառնա նոր զարգացող լեզվի նախահայրը, «քանի որ Թումանյանը այս տեսակետից ավելի շատ տվյալներ ունի օգտակար լինելու, քան Տերյանի լեզվաշինարարության փորձը»⁹:

Բակունցը գտնում էր, որ հայ գրականության լեզուն երկու ուղղությամբ պետք է օգտագործի հայ ժողովրդական խոսքը՝ մի կողմից վերցնելով այնտեղից բառեր, դարձվածքներ, արտահայտություններ, մյուս կողմից լեզվի հիմք դարձնելով ժողովրդական լեզվամտածողությունը, այսինքն՝ այն, ինչ ժամանակին արել է Թումանյանը, իսկ հետո նաև ինքը՝ Բակունցը: Ասենք նաև, որ Չարենցի այն միտքը, թե լեզվամշակման թումանյանական ուղղությունը «մեր գրական ներկա լեզուն առանց բացառության» չի օգտագործել, անզգույշ էր նաև այն պատճառով, որ այս անգամ բանաստեղծը, չգիտես ինչու, ուշադրության չէր առել մի

հսկա «բացառություն»՝ իր բարեկամ Բակունցին: Իհարկե, Բակունցը համագումարում չէր կարող հայտարարել, թե ինքը լեզվի խնդրում օգտագործել է թումանյանական ավանդները, բայց նրա խոսքից պարզ զգացվում է, որ իր ասելիքներում նկատի ունի նաև այդ հանգամանքը:

Միաժամանակ, Բակունցը, հասկանալի է, որ մերժում էր ժողովրդական խոսքի հակագեղագիտական օգտագործման բոլոր փաստերը: Այդ էր պատճառը, որ հայ գրողների ուշադրությունը նա ավելի շատ բեռնում էր գրական երկերի լեզվի հիմքը, լեզվական տրամաբանությունը ժողովրդային դարձնելու հարցի վրա, քանի որ միայն այդ պարագայում է գրական լեզուն ազատ ընդունում նաև ժողովրդական խոսքին հատուկ բառերն ու արտահայտությունները:

Այնուհետև, Բակունցը չխրախուսելով նոր բառեր հնարելու չափազանց մեծ հակումը որոշ գրողների մոտ՝ բազմիցս այն համոզում է հայտնել, որ գեղարվեստական խոսքի համար ամենահարմար բառերը հնարում է ժողովուրդը, և անհրաժեշտության դեպքում պետք է նախ դիմել ժողովրդական խոսքի անսպառ բառազանձին: Հայաստանի գրողների համագումարում նույնպես նա շեշտեց այդ հանգամանքը. «Իմ կարծիքով լեզվաշինարարության խնդիրներում մենք դժվարությունների ենք հանդիպում առարկաներ անվանելու ուղղությամբ. այսպիսի դեպքերում պետք է ելակետ ունենալ ժողովրդական բարբառը»¹⁰:

Իհարկե, Բակունցը չէր մերժում գրողի իրավունքը որոշ դեպքերում բառեր, հատկապես արտահայտություններ ստեղծելու գործում, սակայն այստեղ ևս նրա կարծիքով պետք է առաջնորդվել ժողովրդական բառաստեղծման օրենքներով: «Պետք է բարբառները կշռել դեղատան կշռքի ճշտությամբ,– ասում է նա,– և վարվել այնպես, ինչպես այդ անում են ռուսական գրողները, որոնցից ես կբերեմ մի փորձ: Նրանք վերցնում են ժողովրդական մի արտահայտություն, մեկնաբանում այդ արտահայտության օրենքը, և հետո իրենք այդ օրենքի հիման վրա կառուցում են նոր բառը, որն անհրաժեշտ է ստեղծել: Այս տեսակետից Թումանյանի փորձը շատ ուսանելի է մեզ համար»¹¹:

Ժողովրդական խոսքի մեջ տեսնելով մի ժողովրդի լեզվի ազգային հատկանիշների շտեմարանը և ամեն կերպ խրախուսելով այդ խոսքի առատ ներթափանցումը գրական լեզվի մեջ, Բակունցը միաժամանակ հեռու էր «կամ այս, կամ այն» կտրական ձևով մտածողներից: Թե նրա գրական փորձից և՛ թե հայտնած տեսակետներից պարզ է դառնում, որ Բակունցը մեծ տեղ էր տալիս անցյալի գրական աղբյուրների լեզվական հարստությունները օգտագործելու հարցին: Թումանյան

նի լեզվամշակման փորձը գերադասելով Տերյանի փորձից՝ Բակունցն, ըստ էության, պաշտպանում էր նաև Տերյանի տեսակետներն այդ հարցում: Պատահական չէ, որ Թումանյանի փորձի ավելի օգտակար լինելն արժարժող իր խոսքից առաջ Բակունցը բերում է Տերյանի հիացական խոսքերը Թումանյանի լեզվի բարձր հատկանիշների մասին¹²: Թումանյանի լեզվամշակման փորձին գերապատվություն տալը, անշուշտ, չէր նշանակում Տերյանի փորձի նվազ օգտագործման մասին հարցադրում: Տերյանը, որ Բակունցի սրտին ամենից ավելի մոտ բանաստեղծներից է եղել, թերևս ոչ մի հայ արձակագրի խոսքի մշակման մեջ այնպիսի դեր չի կատարել, որքան Բակունցի:

Ասում են, կան գրողներ, որոնց լեզվագիտական հայացքները հակասության մեջ են նրանց ստեղծագործությունների լեզվական մշակույթի հետ, այսինքն՝ իբր այդ գրողները լեզվի մասին առաջ են քաշում այնպիսի սկզբունքներ, որպիսիք իրենք չեն կիրառում ստեղծագործելիս¹³: Գուցե և լինեն նման դեպքեր, ինչ վերաբերում է Բակունցին, ապա աչքի է ընկնում այն միասնությունը, որ կա նրա լեզվագիտական հայացքների և ստեղծած լեզվական մշակույթի միջև: Բակունցի ստեղծագործությունների լեզուն նրա արտահայտած լեզվագիտական հայացքների գործնական կիրառման օրինակն է: Իհարկե, ճիշտ չի լինի մտածել, թե Բակունցը նախօրոք հայացքներ է մշակել, հետո դրանք կիրառել ստեղծագործելիս: Այստեղ ուղղակի դեր են խաղացել գրողի ներքին լեզվազգացողությունը, գեղագիտական հակումները, մտածելակերպը ու աշխարհայացքն առհասարակ, որոնց շնորհիվ մի կողմից մշակվել է բակունցյան լեզուն, մյուս կողմից ձևավորվել են նրա ըմբռնումները լեզվի ու գրականության վերաբերյալ:

Այդ միասնությունն զգացվում է նաև հին ու միջին հայերենի հուշարձանների լեզուն ու ոճը գնահատելու և օգտագործելու խնդրում: Արդեն ասվել է, որ Բակունցին շատ են զբաղեցրել այդ հարցերը: Նույնիսկ գրողների համամիութենական համագումարի ամբիոնից նա դրեց այդ հարցը, մասնավորեցնելով այն պատմական ժամանակագրությունների (բրոնիկների) նկատմամբ. «Վիթխարի բանակությամբ հայ պատմական ժամանակագրությունները բոլորովին չեն օգտագործված գեղարվեստական գրականության կողմից: Մեր գրողների պարտականությունն է՝ քննել, ուսումնասիրել դրանք, քննադատորեն վերցնել այնտեղից վիպականությունը, արտահայտվելու խստությունը, լեզվի գունագեղությունն ու արտահայտչական ողջ հարստությունը, բառերի ժլատ տնտեսումը, որոնք չափազանց բնորոշ են գեղարվեստական ժամանակագրության համար»¹⁴:

Ինչպես տեսնում ենք, շեշտված են անցյալի հայ մատենագրության մի շարք նմուշների լեզվական այն հատկանիշները, որոնց հիմուն օգտագործումը գտնում ենք նախ հենց իր՝ Բակունցի մոտ:

Վարդան Այգեկցու առակների ժողովածուի կցած իր առաջաբանում Բակունցը շատ բարձր գնահատական է տալիս միջնադարյան մշակույթի այդ, Բակունցի խոսքով ասած, գազաթնեից մեկի լեզվաոճական մշակույթին¹⁵: Նա, ինչպես ինքն է գրում, առակները աշխարհաբարի վերածելիս աշխատել է «ըստ կարելույն պահել բնագրի ոճը»:

Բակունցը հայ հին և միջնադարյան արձակի լեզվական գոհարները ժողովրդից անջատ ստեղծված, ինչ-որ տեսաբան հորինվածքներ չէր համարում: Դրանց աղբյուրը նա դարձյալ տեսնում էր ժողովրդական խոսքի մեջ: Խոսելով Վարդան Այգեկցու առակների մասին՝ Բակունցը գրում է. «Բոլոր առակագիրներից և պատմիչներից առաջ առակը հորինել և պատմել է ինքը՝ ժողովուրդը»: Այստեղից էլ միջնադարյան հայ արձակի վերաբերյալ Բակունցը եզրակացնում է. «Առակախառն բարոյների հետ գրականության մեջ խուժել է առակը և մանրավեր, իսկ վերջիններս իրենց հետ բերել են նաև ժողովրդական լեզու և ոճ, և, այսպիսով, սկսել է ձևավորվել միջնադարյան հայ «աշխարհիկ» արձակը»:

Առողջ ու խորաթափանց հայացքով Բակունցը հիմնադրորդ դարի հայ արձակի լավագույն հատկանիշների աղբյուրը դարձյալ ժողովրդական խոսքն է համարում: Ն. Գոգոլի «Տարաս Բուլբայի» իր թարգմանության (որի լեզուն, ի դեպ, արժանի է հատուկ ուսումնասիրության) առաջաբանում կա հետաքրքիր դիտողություն այդ մասին: Բակունցը Գոգոլի այդ գեղեցիկ դյուցազներգությունը համարում է ժողովրդական ավանդավետի նմանությամբ ստեղծված երգ-պատմություն, ուր հեղինակը գործ է ածել «պատմիչի սառն ու զուսպ ոճը»: Ապա այդ ստեղծագործությունը անսպասելիորեն համեմատում է եղիշեի «Վասն Վարդանանց»-ի հետ, գրելով՝ «Ի դեպ, հարցի այս առումով որքան են իրար նման «Տարաս Բուլբան» և ... Եղիշեի «Վասն պատերազմի Վարդանանց» պատմությունը, և սխալ կլինեք արդյոք ենթադրել, որ վերջինս ևս սոսկ գրական գործ է, որի հեղինակն առավել կամ պակաս չափով օգտվել է յուր ժամանակի գուսանների երգերից»¹⁶:

Բակունցը թե՛ իբրև գյուղատնտես աշխատած տարիներին և թե՛ այն ժամանակ, երբ մասնագետ գրող էր, գործուն մասնակցություն է ցուցաբերել հայերենի լեզվաշինարարությանը: Նրա մի շարք ամենատարբեր բնույթի հոդվածներում ու գրախոսականներում, ինչպես նաև բանավոր ելույթներում տեղ են գտել

լեզվաշինարարական մի շարք կարևոր հարցեր՝ ինչպես գեղարվեստական գրականության լեզվի, այնպես էլ գիտական անվանումների (տերմինների) վերաբերյալ:

Ժամանակակիցների վկայությամբ Բակունցը մի շարք հայկական թերթերի խմբագրություններում գեղուցումներ է կարդացել, զրույցներ ունեցել լեզվի հարցերի շուրջը:

Բակունցը անգիշող էր հատկապես լեզվական տգիտության, ինչպես և օտարաբան ու խրթին լեզվի նկատմամբ: Դեռևս 1925-ին հրապարակած «Յործանք» թե «Փորձանք» վերնագրով գրախոսության մեջ¹⁷ խիստ քննադատելով Ա. Տեր-Յովհաննիսյանի «Յործանք» պատմվածքների ժողովածուն, վերջում անդրադառնում է նաև պատմվածքների լեզվին՝ գրելով. «...հեղինակն աչքի է ընկնում իր ...տգետ հայերենով»: Ահա նմուշներ. «Տեր դառած իր ապրումի դասավորման», «կանգնած է մի թղթանոթ», «դրված են երկու գնդացի, իրենց գործադրող գիկներով», «մի խումբ գյուղացիներ, կիսապառկած կանաչին», «սպասավորներ ծալվող ոտքերով», «տերևները հորդ անձրևի պես մաղվում են գետին», «նիհար մարմին, վրան հագցրած լայն ու երկար բաճկոնակ» և այլն:

Ինչպես կարելի է նկատել, բերված նմուշների մի մասը ուղղակի լեզվական սխալներ են, մյուսը՝ տվորական սխալից բացի նաև օտարաբանություններ (հայերեն ճիշտ չէ «կանգնած է» ասել թղթանոթի վերաբերյալ, ինչպես և «դրված են» ասել գիկների մասին, օտարաբան է նաև վերջին նախադասությունը):

Գրական լեզվում ճիշտ ու սխալը, օտարաբանն ու հայացին իրարից տարբերելու համար ամենալավ միջոցն է դիմել հայերենի սկզբնաղբյուրին՝ ժողովրդի, գյուղացու խոսքին, – սա է բակունցյան մի շարք մտորումների տրամաբանությունը, որ հատկապես զգացվում է գյուղատնտեսական անվանումներին նվիրված հոդվածների մեջ:

Լինելով ժողովրդական խոսքի մեծ գիտակ՝ Բակունցը շատ խստապահանջ էր՝ ժողովրդաբարբառային բառերի օգտագործման հարցում: Նրա ծանոթներից շատերն են հիշում այն բազմաթիվ բանավոր դիտողությունները, որոնք Բակունցը արել է տարբեր բնագավառների գրավոր խոսքում բարբառային բառերի գործածության կապակցությամբ: Պահպանվել են նաև մի շարք այդպիսի գրավոր դիտողություններ, որոնք արվել են Բակունցի կողմից գյուղատնտեսական գրականության լեզվում բարբառային բառերի ոչ ճիշտ կամ անհարկի գործածության կապակցությամբ: Ահա մի երկու այդպիսի օրինակ. «Շատ անհաջող է «աշնակի» գարի, ցորեն և այլն: «Գարնակին» գարնան ցորենն է կամ գարին. գյու-

ղացին չի ասում «գարնակի ցորեն», այլ միայն «գարնակի»¹⁸: «Մենք «ծյունահալ» չենք ասում, այլ՝ «հալոցք»: Մոռացված է «եկահալը», երբ եկող ծյունը հալվում է իսկույն»¹⁹: «Յորթին չեն «թիմարում», այդ էլ անսազական մի բառ է, սարքովի մի խոսք...»²⁰: «Առաջին կաթը կոչվում է «դալամա» (դալ), նույն էջի ծանոթության մեջ ասված է, որ մի բանի գավառներում առաջին կաթին «խիժ» են ասում: Այդ այնքան էլ ճիշտ չէ: «Դալաման» առաջին կաթը (որին շանգեգուրում «արղուց» են ասում) եփելուց հետո են ստանում, իսկ «խիժը» կամ «խեժը» (շանգեգ.)՝ առաջին կաթը մակարդելուց: Բանի դեռ որոշ տերմին չկա ավելի լավ էր գործ ածել միայն «առաջին կաթ», բան ընթերցողին մոլորեցնել ոչ ճիշտ տերմիններով»²¹, «...թարքը մարմնի մասի անուն չէ, ուրեմն և շատ անտեղի է գործածվում: Գյուղացին ծիծաղում է, երբ կարդում է հորթի թարքի մասին»²² և այլն:

Ինչպես տեսնում ենք, ճշտության չափանիշն ամեն դեպքում ժողովրդի մեջ գործածվելու, ընդունված լինելու հանգամանքն է:

Ի միջի այլոց, «Գյուղատնտեսական կյանքում» տպագրված մի շարք հոդվածներով, գրախոսականներով Բակունցը 20-ական թվականներին մասնակցություն է ունեցել հայ գյուղատնտեսական անվանումների մշակման գործում՝ այստեղ ևս առաջ մղելով բարբառների բառային հարստությունները լայնորեն օգտագործելու իր սկզբունքը: Թեև դա այլ կարգի բնության հարց է, բայց բանի որ առիթը եկել է, ավելացնենք նաև, որ Բակունցը հայերեն գիտական անվանումներ ստեղծելու գործում մեծ տեղ էր հատկացնում նաև գրաբարին, ահա թե ինչ է ասել նա այդ մասին. «Յարք է առաջ գալիս՝ ի՞նչ ասպարեզում, ի՞նչ չափով կարելի է օգտագործել գրաբարը: Ես կարծում եմ, որ այն կարելի է օգտագործել պետականության, փիլիսոփայության և ռազմական տերմինալոգիայի ասպարեզում, և ասպարեզված է, որ այս ուղղությամբ օգտագործված գրաբարը դրական հետևանքներ է տալիս: Իսկ եթե գրաբարով փորձում ենք նկարագրել բնությունը, այս կամ այն երևույթը մեր գրվածքներում, տեսնում ենք, որ ունենում է բացասական հետևանք: Այս իսկ տեսակետից նայած նյութին, այս կամ այն չափով էլ դրվում է գրաբարի օգտագործման խնդիրը»²³:

Գեղարվեստական գրականության լեզվի վերաբերյալ մի շարք կարևոր գեղագիտական հարցեր է Բակունցն առաջ բաշել Վ. Ավագանի «Վաթսուներորդ հորիզոնում» վեպի լեզվի մասին կարդացած գեղուցման մեջ, որի սոսկ համառոտ ամփոփումն է պահպանվել²⁴:

«Գրական երկի լեզուն որպես գեղարվեստական ամբողջություն, ▶

«...հեղինակն այս գրքում օգտագործել է մեր լեզվի գրեթե բոլոր աղբյուրները՝ և՛ բարբառները, և՛ գրաբարը, և՛ արևմտահայերենը, և՛ այսօրվա խոսակցական ու գրական լեզուն: Ես գտնում եմ, որ դա նոր գրականության մեջ առաջին փորձն է, և որպես այդպիսին շատ բանում հաջողված է: Հեղինակը փորձել է օգտվել վերոհիշյալ բոլոր աղբյուրներից և ստեղծել է իր լեզվական ամբողջությունը: Այդ փորձը տեղ-տեղ հաջողվել է, տեղ-տեղ մատնվել է անհաջողության: Անհաջողության հիմնական պատճառն այն է, որ հեղինակն անհրաժեշտ ջանք չի գործադրել տարբեր աղբյուրներից վերցրած նյութերն այնպես ծուլել իրար, որ ստացվեր մի կոռ լեզվական ամբողջություն, գեղարվեստական ամբողջություն»:

Ինչպես տեսնում ենք, ընդհանրապես, Բակունցը դրական է համարում ոչ միայն բարբառների, խոսակցական լեզվի ու գրաբարի, այլև արևմտահայերենի հարստությունները արևելահայ գրական լեզվում օգտագործելու հակումը:

Սա, պետք է ասել, որ բավական լայն ու հեռատես հայացք է հայերենի զարգացման հետագա ուղիների նկատմամբ: Սակայն այդ սկզբունքը ճիշտ ընդունելով՝ Բակունցը նրա կիրառման մասնավոր փորձը գոհացուցիչ չի գտնում, բանի որ, ինչպես նա ցույց է տալիս, չի ստացվել գրական երկի բովանդակությանը ներդաշնակ լեզվական միաձուլ ամբողջություն: Այնուհետև, որպես Ալազանի վեպի լեզվի լուրջ թերություն Բակունցը նշում է մի շարք «գրաբարայնություններ, խրթնաբանություններ»:

Իբրև թերություն բերում է նաև այն, որ «Հերոսները չեն խոսում իրենց համար տիպականական լեզվով, տեղ-տեղ հերոսների և հեղինակի լեզուն չի տարբերվում իրարից: Գավառաբարբառներից չեն վերցված տիպականական արտահայտություններ ու բառեր, բարբառները խառնված են, բացի այդ վերցված են աղավաղված և օտար բառեր, որոնք ոչ միայն բնորոշ չեն տվյալ բարբառի համար, այլև աղավաղում են մեր գրական լեզուն: Գրաբարից և արևմտահայերենից որոշ բառեր գործածվում են ոչ ըստ տեղի»: Արվում է նաև այսպիսի դիտողություն. «Կան անտեղի գործածված ռուսական բառեր, որոնց փոխարեն մեր լեզուն ունի միանգամայն հաջող և շատ տարածված բառեր»:

Բառը, արտահայտությունը, ողջ լեզվական ոճը տեղին, գրական երկի բովանդակության պահանջով գործածելու

կարևոր հարցն է այս գեղագիտական մեջ հետևողականորեն զարգացնում Բակունցը, որ և գեղարվեստական գրականության լեզվի նկատմամբ մշտապես ապրող կարևորագույն պահանջն է: Իրոք, գեղարվեստական երկի մեջ լավ է այն բառը, արտահայտությունը, նախադասությունը, խոսքը, որն ամենից ճիշտ ու հստակ է արտահայտում հեղինակի մտահղացած բովանդակությունը: Հիշյալ վեպի մասին Բակունցն արել է նաև այսպիսի մի դիտողություն. «Կան դարձվածքներ, պատկերներ, համեմատություններ, որոնք ընդհանրապես կարող են մերժվել չիղեն, բայց տվյալ երկում տեղին չեն գործածվում, չեն միահյուսվում երկի բովանդակության ոգուն»:

Խստապահանջ էր Բակունցը գեղարվեստական խոսքի նկատմամբ: Այդ են վկայում գրողի մասին գրված մի շարք հուշերը, բանավեճերի ժամանակ նրա խիստ դիտողությունները որոշ (այդ թվում հայտնի անուն ունեցող) հեղինակների երկերի լեզվի մասին, ինչպես և այն, որ իր ժամանակի բոլոր հեղինակների մեջ (չհաշված հին սերնդի գրողները) Բակունցը միայն Հարենցի ստեղծագործությունների լեզուն է հավանել. «Ես, դժբախտաբար, – ասում է Բակունցը Հայաստանի խորհրդային գրողների համագումարի ամբիոնից, – մեր գրողների մեջ չեմ գտնում այնպիսին, որը լեզվի տեսակետից օրինակելի լիներ, բացի ընկ. Հարենցի լեզվից, և այդ պատիվը պատկանում է մեր մեծ գրող Հարենցին»²⁵:

Ինչպես տեսնում ենք, անգիջում հակադրվելով՝ Հարենցի հայտնած տեսակետին հայ գրականության լեզվի կարևոր տեսական հարցերում (ուրիշ առիթով քննադատելով նրա «Գովք...»-ի նորաստեղծ բառերով լի խրթնաբան լեզուն)՝ Բակունցը կարողանում է ըստ արժանվույն գնահատել Հարենցի ստեղծած ինքնօրինակ լեզվական մշակույթը: Ինչպես կարելի է նկատել նաև, Բակունցի բոլոր մտորումների մի կարևոր հատկանիշը անկեղծությունն է և ճշմարտությունը տարբեր հաշիվներից բարձր դասելը: Ըստ երևույթին, մարդկային այս գեղեցիկ հատկությունը իր դերն է կատարել որոշ գրողների մեջ թշնամանք ու մաղձ կուտակելու գործում, մի հանգամանք, որ շատ ծանր նստեց մեծ գրողի և ողջ հայ մշակույթի վրա:

* * *

«Դողդողացող ձեռքերով գրում եմ իմ պատմության վերջին էջերը», – այսպես էր գրում Բակունցը երեք տասնամյակ առաջ իր մանկության վերինուշին նվիրված մի պատմվածքի վերջում: «Բայց ինչո՞ւ են դողում մատներս», – հարցնում էր ինքն իրեն հուզված բանաստեղծը:

Ահա այսպիսի մի հուզմունք է մարդ ապրում այժմ ամեն անգամ, երբ գրիչ է առնում գրելու ավելի քան բառորդ դար

առաջ գոհված պայծառ հանճարի մասին:

Ասում ենք՝ բանաստեղծը, գրողը պետք է գրի միայն ներշնչանքով: Իսկ գրականագետը, իսկ լեզվաբանը, միջ-թե նրանց պետք չէ ներշնչանք: Թվում է, որ նրանց էլ է պետք, ամեն մի գործում պետք են ներշնչանք ու նվիրաբերում: Սակայն գրողի համար ներշնչանքի աղբյուրը ծովածավալ է՝ ողջ կյանքն ամեն քայլափոխի: Գրականագետի համար ասպարեզը փոքր է՝ գրողները, նրանց կյանքն ու գործը: Ել ավելի փոքր է ներշնչանքի ու ոգևորության ասպարեզը մի լեզվաբանի համար, երբ նա այս կամ այն հեղինակի ստեղծագործությունների միայն լեզվի մասին է գրում: Որքան ոյու-թիչ, որքան բարձրարվեստ պետք է լինի այդ լեզուն, որպեսզի ոգևորվի լեզվաբանը: Այդպիսին է Բակունցի ստեղծած լեզվական արվեստը:

Բայց ոգևորությունը քիչ է մեծ ստեղծագործողի լեզվի բոլոր հատկանիշները ճշտորեն գտնելու ու գնահատելու, այդ լեզվի ոյութանքի պատճառները, աղբյուրները վերլուծելու համար:

Ահա վերցնում ենք՝ Բակունցի երկերի գիրքը, բացում մի պատահական էջ, կարդում պատահական հատվածը: «Սպիտակ ծիւղ» է: Այդ: Կարդում ու զգում ենք, որ հայերեն սովորական խոսքի մեջ ահա ինչ-որ մի ուրիշ անսովորություն կա, մի ջերմ, շատ ջերմ քեքշանք կամ, ավելի ճիշտ, իր՝ Բակունցի խոսքով ասած, մի «պայծառ տխրություն»: Ո՞ր բառի մեջ է այդ «պայծառ տխրությունը», ո՞ր նախադասության մեջ՝ անհնար է որոնալ, առանձին-առանձին ամենը ամենօրյա, գործածական մեր լեզուն է, սովորականից սովորական:

Գեղամ Սարյանը հիշում է, թե ինչպես է մի անգամ Բակունցը գեղարվեստական ստեղծագործությունը համեմատել գորիսեցի մի բրուտի աշխատանքի հետ: Վերջինս իր պատրաստած կավե ամանը թրծման վառարանից հանելուց հետո պետք է անպայման աչ ձեռքով բռներ ու փչեր վրան, շունչ տար ամսին: «Ես չգիտեմ իսկապես, – շարունակել է Բակունցն իր խոսքը, – բրուտության արհեստի մեջ այդ փչելը նշանակություն ունի՞, թե՛ ոչ, բայց այս պատմությունը շատ բնորոշ է ստեղծագործական աշխատանքի համար: Արվեստագետը պետք է իսկապես շունչ ու ոգի տա իր երկին»²⁶:

Ահա Բակունցի ստեղծագործությունը այսպիսի ոգի, շունչ ունի, որն ինչ-որ ձևով պահվում է նրա լեզվի մեջ, ծուլված այդ լեզվին: Պետք է զգալ այդ շունչը Բակունցին հասկանալու համար, այլապես կվրիպի ընթերցողը:

Բակունցի լեզվական արվեստի դեռևս չլուսաբանված հատկությունները, չմեկնված առեղծվածները դեռ կգտնեն իրենց նոր, ավելի հմուտ մեկնիչներին: Իսկ այժմ մեր համեստ աշխատանքն ամ-

փոփոխվելու՝ ուզում ենք նորից շեշտել արևելահայ գեղարվեստական գրականության լեզվի զարգացման ճանապարհին այն մեծ դերը, որ կատարեց Բակունցը՝ իր ստեղծագործության մեջ միաձուլելով գրականության լեզվի զարգացման երկու գլխավոր ուղղությունները, որոնց պայմանականորեն տալիս ենք թուրքական և տեղական անունը: Դրանք գալիս են հայ նոր գրականության սկզբնավորման շրջանից ու թեև երկուսն էլ լեզվամշակման դասական ուղիներ են, բայց հաճախ գնահատվել են իբրև հակադիր: Բակունցը տվեց նրանց ավանդները հավասարապես օգտագործելու, նրանց միահյուսելու դասական օրինակը:

Այսօր հատկապես ուշադրության արժանի է լեզվի ժողովրդայնության բակունցյան փորձը: Բակունցն է, որ տալիս է հայ գրականության լեզվի ժողովրդայնացման ամենաժամանակակից, ամենաթարմ օրինակը: Հայ գրողներից շատերն են փորձում ժողովրդական լեզվից բառեր, հարադրություններ, դարձվածքներ, առածներ ու ասացվածքներ օգտագործել իրենց ստեղծագործություններում և երբեմն էլ բավական առատ են օգտագործում: Սակայն, ցավոք, ավելի հաճախ լեզվի ժողովրդայնության փոխարեն ստացվում են ժողովրդական բառ ու բանի արհեստական կուտակումներ, կարկատաններ, ընդհանուր առմամբ լրագրային, անհրապույր խոսքի մեջ:

Ա. Բակունցի լեզվամշակման փորձը ցույց է տալիս, որ գրականության (հատկապես իրապաշտական գրականության) լեզվի խնդրում շատ կարևոր է սերտ կապը, շփումը խոսակցական լեզվի հետ: Գրողի մի ակնյուղ միշտ պետք է ուշադիր լսի, թե ինչպես են խոսում իր կողմից նկարագրվող մարդիկ, աշխատի որքան հնարավոր է մոտ պահել իր ստեղծագործության լեզուն մարդկանց ամենօրյա գործածական լեզվին: Ահա այդպիսի լեզվամշակման օրինակն է, որ այսօր տալիս է Բակունցը մեր գրողներին:

Հասկանալի է, որ Նույն եզրակացության է հանգեցնում նաև Հ. Թումանյանի հոյակապ աշխատանքը հայ գրականության լեզվի բնագավառում: Թումանյանի համար բարբառը կամ՝ գավառաբարբառը ինչ-որ ինքնանպատակ բան չի եղել. խորապես սխալվում են այն բանասերները, որոնք Թումանյանի մոտ տեսնում են ինչ-որ ինքնանպատակ բարբառասիրություն: Կարևորը կենդանի խոսքն է, հազարավոր մարդկանց կողմից գործածվող լեզուն, լինի դա մաքուր գավառաբարբառ, կիսաբարբառ, ժողովրդախոսակցական լեզու, թե մի այլ բան: Կարևորը ժողովրդի կողմից ամենօրյա խոսվող լեզուն է, որից չպետք է կտրվի կամ անջուրկվի գրականության լեզուն:

Հագիվ թե հնարավոր լինի ցույց տալ Հ. Թումանյանից հետո մի ուրիշ հայ գրո-

ղի, որին հաջողված լինե՞ր ժողովրդական, խոսակցական լեզվի ներթափանցման միջոցով հայ գեղարվեստական գրականության լեզուն այնպես ճոխացնել, գրել այնպես հայացի, ինչպես այդ տեսնում ենք Բակունցի ստեղծագործություններում:

Ընկնելով Բակունցի անսման գրույցների հեքիաթային աշխարհը՝ մարդ զարմանում է. մի՞թե այդքան կախարդիչ է մեր հայերենը, մեր մայրենի լեզուն, մեզ ամբողջովին ծանոթ, մեր առօրյա գործածության այդ լեզուն, ինչ հրաշքներ ունի նա իր մեջ... Եվ պետք էր բակունցյան ուժգին ներշնչանքը այդ հրաշքները գտնելու ու գործի դնելու համար:

Ռուս բնագետ Կ. Չեխովսկին Բակունցի մասին գրել է. «Մենք հաճախ փնտրում ենք այն բանի օրինակը, ինչ կարելի է անվանել ազգային առանձնահատուկը: Իմ պատկերացմամբ Բակունցը իսկական հայ ազգային գրող է, որը հայկական առանձնահատուկը ճանաչելու համար ավելի շատ բան է տալիս, քան ամբողջ գիտական աշխատություններ»²⁷: Այս ճշմարտությանը անհրաժեշտ է ավելացնել նաև այն, որ Բակունցի ստեղծագործությունների ազգային յուրահատկությունը արտահայտվում է նաև նրանց լեզվով, որ Բակունցը խորապես ազգային բանաստեղծ է նաև լեզվի բնագավառում, քանի որ այստեղ ևս ազգային նշանակում է ժողովրդային: Բակունցյան լեզվական արվեստի մշակումը, անշուշտ, շատ բանով պայմանավորված է գրողի տաղանդի զորությամբ, նրա մասը կազմող լեզվական ներբնագազցողությամբ, ինչպես և հին ու նոր հայերենի խոր իմացությամբ: Բայց սխալ կլինե՞ր նաև Բակունցի լեզվի արժանիքները, մանավանդ, նրա ժողովրդայնությունը միայն վերոհիշյալ հանգամանքներով բացատրելը: Այս հարցում անպայման կարևոր դեր է խաղացել հարազատ ժողովրդի նկատմամբ բանաստեղծի ունեցած հորդացող, հսկա ու անվերապահ սերը: Կարողավո՞ր Բակունցի երկերը՝ զգում ենք, որ հեղինակը ուղղակի սիրահարված է իր Աթա ապերներին, Արթին պապերին, Մինա բիբիներին ու Անա զիզներին, նա անսահմանորեն սիրում է նաև այն ամենը, ինչ կապված է այդ մարդկանց հետ՝ նրանց աշխատանքը, սովորությունները, նրանց բնակավայրը՝ ձորերն ու անտառները, նրանց լեզուն...:

Արհամարհելով և ծաղրի ենթարկելով աշխատավոր գյուղացիությունից հեռացած ու խորթացած հայ մտավորականության քաղթենիական հատվածն ու ապազգայնացած վերնախավը՝ Բակունցը սրամտորեն ծաղրի է ենթարկում նաև վերջիններիս՝ աղավաղված լեզուն: Այդ ալյանդակված հայերենն է, որ Բակունցը ժողովրդի խոսքով «Կյոթեսում» անվանում է չալ հայերեն կամ շան լեզու և

Նույն «Կյոթեսում» էլ բանաստեղծական մեծ խանդավառությամբ անում է հասարակ, աշխատավոր ժողովրդի լեզվի գովքը. «Չուտեիր և չխմեիր, այլ միայն այդ լեզվով խոսեիր կամ լսեիր, թե ինչպես բաղդը և Նուրը հնչյուններով խոսում էր լվացարարուհի Մինան, ինչպես էր ծոր տալիս, ասես ոչ թե խոսում, այլ ճախարակի առաջ բարակ երգ էր ասում, և բառերը Նստում էին ինչպես փափուկ մալանչներ»:

«Այդ լեզու չէր, այլ կարոտ, տխրություն, զայրույթ. այդպես Ղաթրի-նի ծորում երգում էր կաթավը, և մթնում կարկաչում էր Ցուրտ աղբյուրը»:

Լեռնային աղբյուր է Բակունցի ստեղծագործությունը, և այդ աղբյուրի անուշ խոխոջը՝ բակունցյան սքանչելի լեզուն, իր մեջ առել է այն ամենը, ինչ հրաշալի է հայ ժողովրդական խոսքում:

Ծանոթագրություններ

1. Բակունց, Գրականության մասին, Երևան, 1959, էջ 121:
2. Նույն տեղում, էջ 135:
3. «Մարտական», 1924, № 298:
4. Ա. Բակունց, Գրականության մասին, էջ 123, 125, 136 և այլուր:
5. Նույն տեղում, էջ 137:
6. Նույն տեղում, էջ 136:
7. Ե. Զարենց, Գրականության մասին, Երևան, 1957, էջ 195:
8. Ա. Բակունց, Գրականության մասին, էջ 123:
9. Նույն տեղում:
10. Ա. Բակունց, Գրականության մասին, էջ 124:
11. Ա. Բակունց, Գրականության մասին, էջ 125:
12. Նույն տեղում, էջ 1-123:
13. Տե՛ս, օրինակ, Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Երևան, 1948, էջ 140:
14. Первый Всесоюзный съезд советских писателей. Стеногр отчет, М., 1934, էջ 214:
15. Ա. Բակունց, Գրականության մասին, էջ 78-83:
16. Նույն տեղում, էջ 92:
17. «Խորհրդային Հայաստան», 1925, № 278:
18. «Գյուղատնտեսական կյանք», 1925, № 11, էջ 55:
19. Նույն տեղում:
20. Նույն տեղում, № 4, էջ 46:
21. Նույն տեղում, № 11, էջ 47:
22. «Գյուղատնտեսական կյանք», 1925, № 11, էջ 47:
23. Ա. Բակունց, Գրականության մասին, էջ 124:
24. «Գրական թերթ», 1934, № 16:
25. Ա. Բակունց, Գրականության մասին, էջ 125:
26. «Գրական թերթ», 1960, № 7:
27. «Дружба народов», 1956, № 5, стр. 167:



ԸՆԿՈՒՆՑԱՊԱՏՈՒՄ. ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ԷԶԵՐ

1926-ի ուշ գարնանը կամ ամռանը Բակունցը երկրաբան Տիգրան Ջրբաշյանի հետ այցելեց Մեղրիի պատմական հնավայրեր. Ռաֆայել Իշխանյանը հենց այդ ուղևորության հետ էր կապում «Ալպիական մանուշակի» ծնունդը



ԲԱԿՈՒՆՑԱՊԱՏՈՒՄ. ԱՅՈՒՆԻՔՅԱՆ ԷԶԵՐ

ԿՈՐԻՍԵՑԻ ԱՆՈՒՆԵԱՍԻ
ՂԻՄՈՒՄԸ

Այս պատմությունը սկսվում է այն օրից, երբ հողաբաժանության հերթը հասնում է Մեդրու գավառի Կորիս գյուղին: Հողաչափը ջորու վրա նստած հենց որ հասնում է գյուղ և իր թղթերը ցույց տալիս, հավաքվում են, ժողով անում, հողկոմ ընտրում, հողերի ցուցակը կազմում: Մյուս օրը սկսում են հողերը չափել:

Այսպես տևում է տասներկու օր: Կորիսը փոքր գյուղ է, ունի մոտ հիսուն ծովա: Հողն էլ քիչ է, շնչին հասնում է 800 քառ. սաժեն: Տասներկու օրում հողերը բաժանելուց հետո, հողաչափը համայնքի ժողով է գումարում: Կորիսի համայնքը հաստատում է հողերի բաժանքը, չբավորները ուրախությամբ ստորագրում են արձանագրությունը: Ով մինչ այդ հող չունեի, ուրիշի հողերն էր վարձով վարում, հող է ստանում:

Թղթերը խուրջիկի մեջ դրած, հողաչափը նստում է ջորին, մնա բարով ասում Կորիսին, ուրիշ գյուղ գնում: Այսպես անցնում են ամիսներ, մոռացվում է Կորիսն էլ, նրա հողաբաժանքի պատմությունն էլ:

ԿՈՐԻՍԻ ՀՈՂԱԲԱԺԱՆՔԸ

Աշունքվա մի օր փոստը բերում է մի դիմում, վրան գրած՝ «Հայաստանի Գերագույն Խորհուրդին»: Փոստի ցրիչը միտք է անում, թե այս ինչ «Գերագույն Խորհուրդ» է և որոշում է, որ երևի Կենտրոնական կոմիտեի: Եվ իսկապես ցրիչը չի սխալվում, դիմումը պիտի հասներ հենց այդտեղ:

Ո՞վ էր գրել դիմումը և ինչի՞ մասին: Կորիս գյուղացի Անդրեաս Հովհաննիսյանը նույն գյուղի հողաբաժանքի մասին: Կարողում են, զարմանում: Այսպե՛ս էլ դիմում, մի՞թե այդքան անարդարություն է եղել հողերը բաժանելիս: Ի՞նչ էր գրել կորիսեցի Անդրեասը իր սեփական ձեռքով, թղթի չորս երեսի վրա:

«Կորիսում հողերը չափելիս ոչինչ չեն խնայել: Քարերը, քոլերը, պատերը, անպետք հողերը չափել են, բաժանել»:

Եվ դրանից տուժել է «չբավոր դասակարգը», հողաչափը ոչ մի ուշադրություն չի դարձրել գյուղացու բողոքին, սպառնացել է ծեծով, գյուղացիք էլ սուս են արել, համաձայնվել բաժանքին: Այդ գրեցող հետո Անդրեասը իր ցավից է գրում.

«Ինձանից խլեցին իմ սեփական հողերս, որոնք ինձ ապրուստի միջոց էին

տալիս: Հինգ հարյուր վազ ունեցող խաղողի այգի եմ տվել, կարծելով թե ձեռք կվերցնեն ինձանից: Սակայն որտեղ... Առանց իմ կամքը հարցնելու խլել են ինձանից ամենալավ հողերս, ինձ զրկելով ապրուստից...»:

Դիմումի վրա, վերև բերած այս խոսքերի դիմաց «Գերագույն Խորհուրդից» մի ընկեր կարմիր մատիտով նշանակել է «չբավոր դասակարգ», երևի քննիչին հիշեցնելու համար Անդրեաս Հովհաննիսյանի այն խոսքը, թե «հողաչափը չբավոր դասակարգին ճնշել է»:

Հողաբաժանքի դեմ բողոքելուց հետո կորիսցի Անդրեասը ավելորդ չի համարել նկարագրել գյուղի ներքին կյանքը, նրա պակաս կողմերը, որպեսզի կարողացողի համար պարզ լինի, թե ինչքան ծանր դրության մեջ է Կորիսը և ինչքան արդար է ինքը՝ Անդրեասը:

ԳԱՅԼԵՐՆ ՈՒՏՈՒՄ ԵՆ ԳԱՌՆԵՐԻՆ

«Մեզանում այն է նկատվում,– գրել է Անդրեասը,– որ ջուրս պղտորել են, պետք է քեզ ուտեն»:

Երևի ուզում է հիշեցնել՝ գայլի և գառան պատմությունը, ցույց տալու համար, թե ինչպիսի գայլեր կան Կորիս գյուղում, գայլեր, որոնք մի պատճառ են փնտրում Անդրեաս Հովհաննիսյանի «չբավոր դասակարգին» գառան պես կոլ տալու: Դրանից հետո Անդրեասը գրել է.

«Տեղն է գալիս Միքայել Նալբանդյանի խոսքը, թե ազատություն կա, բանտից շատ նեղ է: Կորիսում մի ահեղի ուսումնարան ենք կառուցել և ես 2 տարի տուժել եմ, մեջքիս զած ու քար կրելով, որից ավելի քայքայվել եմ»:

Եվ դարձյալ խոսքը շուռ է տալիս հողի մասին:

«Իսկ հողը շնչի են վերածում: Խնդրում եմ հինգ շնչի իսկական հող թողնել ինձ: Հավատացնում եմ, որ իմ հողերն ինձ համար իբրև կանոնավոր ապրելու միջոց շատ քիչ են: Նաև մի սխալ, որ ինձ տվել են չորս շնչի, այնինչ ես հինգ շնչի եմ»:

Այս բոլորը կարդալուց հետո մարդ ակամա զարմանում է այն հողաչափի վրա, որ ջորու վրա նստած եկավ, չափեց ու գնաց և գրեց, թե հողաբաժանքը կանոնավոր է, և բողոք չկա:

ԱՆԴՐԵԱՍԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Ե
ՀԶԱՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻՆ

«Ձեզանից բարձր էլ ո՞ւմ դիմեք,

– հարցնում է Անդրեասը «Գերագույն Խորհուրդին» և ավելացնում.

Տեղն է գալիս Ռաֆայել Պատկանյանի «Վանեցոց գանգատը». «Աստված, որ դու շատ բարի ես, մենք վար, դու վեր, շատ հեռու ես, խոշոր գործերով կապարավես, ապա որին մենք գանգատվե՞նք»:

«Վանեցոց գանգատն» անելուց հետո կորիսեցի Անդրեասը բողոքում է գյուղում կատարված մի շարք գողությունների մասին, որի դեմ խորհուրդը ոչ մի միջոց ձեռք չի առել: Օրինակ, ամառվա ընթացքում նրա պատշգամբից գողացել են մի կարպետ, գողն այդպես էլ անպատիժ մնացել է: «Մեզանում օրենքները գոյություն չունեն, թալանում են ամեն բան ազատ կերպով: Հույս ունեմ, որ Գերագույն Խորհուրդը ուշադրություն կդարձնե այս չարիքը՝ վերացնելու»:

Ներողություն խնդրելով, որ երկար է գրում, Անդրեասը, գանգատվելով՝ գյուղի... հավերից («Ինչո՞ւ հավերը չեն բանտարկում, որ ցանքը չփչացնեն», – գրում է կորիսցին) հայտնում է, որ փոստի ծախքը չկարողանալով գտնել, դիմումն ուղարկում է շատ ուշ:

Հիշ գիտի «չբավոր դասակարգ»:

ԴԻՄՈՒՄԸ ՀԱՍԱՎ «ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՐԴԻՆ»

Հենց որ գործավարը այս դիմումը դնում է «Գերագույն Խորհուրդի» մի ընկեր սեղանի վրա և այդ ընկերն էլ ուշի ուշով կարդում է կորիսցու գրածը, հենց նույն օրն էլ կարգադրվում է քննել, տեղում մանրամասն ստուգել, թե ինչե՞ր է կատարվում Կորիսում, ի՞նչ թալանի մասին է խոսքը, ո՞վ էր այն հողաչափը, որ ցեխը ձյունով ծածկեց, ձյունը հալվեց ու տակից ցեխը երևաց:

Բավականին ժամանակ անցավ, մինչև այդ կարգադրությունը ձեռք է ձգվել, հասավ Կորիս գյուղը: Փոքրիկ թղթի հետ միասին գյուղ գնացին և մի բանի մարդիկ, ժողով անելու և քննելու, թե երբ է թալան եղել, ինչ գողեր են, որ ազատ մասն են գալիս և ինչիցն է, որ Կորիս գյուղում օրենքները չեն գործում և գառներին, ջուրը պղտորելու համար, գայլերն ուտում են:

Ժողով են կանչում, ժողովում հողաբաժանքի հարցն են դնում, գողության, թալանի, կորած կարպետի, մի խոսքով այն բոլոր հարցերի, որի մասին կորիսցին գրել է իր դիմումի մեջ:

Հնարավորություն չկա ժողովին մասնակցող գյուղացիների ասածները մեկ-մեկ գրելու, ինչպես և նրանց գրավոր ցուցմունքները տալու: Եթե Կորիսի գյուղախորհուրդը մի թուղթ էր ստացել «շտապ քննություն կատարելու» մասին, այդ ժողովից հետո Կորիս գյուղի հողաբաժանքի և Անդրեաս Հովհաննիսյանի գրած հարցերի մասին դրանից ավել թուղթ է գրվում:



Ի՞նչ է պարզել բնությունը, ի՞նչ է ասում Կուրիսի չքավոր դասակարգը Անդրեաս Յովհաննիսյանի մասին:

Ամենից առաջ հաստատվում է, որ Նրա հինգերորդ շունչը, որին հող չեն տվել, ծնվել է հողը բաժանելուց հետո: Իհարկե, հողաչափը հանցավոր է, որ հուլիսին է հողերը բաժանել և երեք ամիս չի սպասել, որ Անդրեասը մի ժառանգ էլ ունենար:

Անդրեասը՝ Կուրիսի հողով հարուստ մարդն է եղել: Տարիներ շարունակ Նրա հողերի վրա ուրիշներն են մշակություն արել, իսկ ինքը՝ քաղաքներում ապրելով, ազատ ժամերին կարողացել է Ռաֆայել Պատկանյանի վանեցոց գանգատները:

Ոչ մի այգի չի տվել, հինգ հարյուր վագով: Անդրեասը հողով լրիվ բավարարված է և Նույնիսկ մի քիչ էլ ավելի: Այդպես էլ գրված է համայնքի արձանագրության մեջ. «Անդրեաս Յովհաննիսյանը Պատվակ անվանվող տեղում ուներ երկու մեծ հողամաս: Այդ հողամասերից մեկը,

որ ավելի վատ էր, կտրված է, իսկ մյուսը, որն ավելի լավ է, թողնված է իրեն: Նա ստացել է հողատերի Նորմայով և լավ կատեգորիա»:

Մարկայի փող չունեցող Անդրեասը, որ իր դիմումն ուշացրել էր դրա պատճառով, միջակից բարձր տնտեսություն ունի, գյուղի ունևորներից է: Իսկ ի՞նչ գողություն է, որ կատարվել է Կուրիսում և գողերին անպատիժ են թողել:

ԿՈՒՐԻՍՈՒՄ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹԱՆԱԸ

Կուրիս գյուղում երկու տարվա ընթացքում անթիվ անհամար գողություն է եղել: Տարել են մի ուլ և երկու հավ: Ուլը հետ է մնացել հոտից, կուրիսցի երկու ջահել ուլին պատկեցրել են փոսի մեջ և դանակը խրել կոկորդում: Ուլը բղավել է, օգնություն կանչել գյուղխորհրդից, բայց Նախագահը չի լսել և կուրիսցի երկու ջահել ուլը անուշ են արել, բայց մյուս օրն ևեթ վճարել են ուլի արժեքը: Իսկ հավերը գողացել են անհայտ չարագործներ: Կա-

լը կախելիս հարևանի երկու հավ դեզի վրա քուջուջ անելու համար արժանացել են մահվան և տապակվել են կալատիրոջ կաթսայում:

Կուրիս գյուղում եղել է մի չտեսնված թալան, որի համար իրավունք ուներ Անդրեասը բողոք տալու «Գերագույն Խորհրդին»: Գյուղի հովիվը ամառվա շոգին անցնում է մի բոստանի կողքով, աչքն ընկնում է կանաչ վարունգին: Սարի չոբան, Կուրիսի վարունգ... Յովիվը թռնում է ցանկապատի վրայով, ծոցը լցնում է վարունգով: Յարմ-հրոց, աղմուկ-աղաղակ: Յովիվը կարողանում է միայն վարունգի կեսը՝ կուլ տալ, որովհետև տերը վրա է հասնում, բլից բռնում: Ահա միակ թալանը երկու տարվա ընթացքում:

Ժողովում բնում են Անդրեաս Յովհաննիսյանի պատշգամբից գողացած կարպետի պատմությունը: Այս ամենից զարմանալին է: Դուրս է գալիս, որ կարպետն ուրիշին է եղել, կարպետը կորել է գյուղի դպրոցից: Մեկը վեր է կենում և հայտարարում, որ ինքը «կասկածում է Անդրեաս Յովհաննիսյանի վրա Նույն կարպետի մասին»:

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՄԻՆՉԵՎ «ՅՈՐ» ԴՈՐՏԸ»

Ասում է ինչքան անտառի խորքը մտնես, այնքան շատ ցախ կհավաքես: Քննում են Անդրեասի «յոր պորտը», և պարզվում է, որ հնում կուրիսցին ինչ-որ պատմություն է ունեցել, որի համար Նրան գյուղից հեռացրել են:

«Անդրեաս Յովհաննիսյանը խարդախ մարդ է: Յողաբաժանքից հետո լարված դրության մեջ է մեր գյուղում: Նա անցյալում էլ խարդախ մարդ էր, որին հեռացրինք գյուղիցս: Եվ միայն վերջերս է եկել գյուղ...»:

Այսպես են ասել գյուղացիք Նրա մասին, քննության ժամանակ:

Կա մի հեքիաթ, թե ինչպես երկու տված մարդ թագավորի ախոռի կտրան մի հատ չամիչ են գտնում, փորում են կտուրը, ավելի շատ են գտնում, վերջը ծակում են և ընկնում չամիչով լի ախոռը: Քննության ժամանակ փորել են, մի չամիչ են գտել, մի քիչ հետո երկուսը, երեքը, և վերջն ընկել են Անդրեասի ախոռը, այսինքն գտել են իսկական պատճառը, որի մասին արձանագրության մեջ միայն երկու խոսք է ասված:

Անդրեասը՝ մի ուրիշ գյուղացու շատ ծածուկ հայտնել է.

– Դու մի քիչ հեռու կաց, ես խորհուրդը ցրեմ: Այդ մասին ես աշխատում եմ:

Եվ Նույն ճանապարհով մի թուղթ էլ գնաց, ուղղված Կուրիս գյուղի բնակիչ Անդրեաս Յովհաննիսյանին: Կուրիսցին կարողաց, աչքերը չռեց:

– Ձեր դիմումը թողված է անհետևանք...

ԱԿՍԵՆ ԲԱԿՈՒՆՑ



ԲԱԿՈՒՆՑԱՊԱՏՈՒՄ. ՄՅՈՒՆԻՔՅԱՆ ԷԶԵՐ



Մեղրու «Գյուղատնտեսի այգին», որը հիմնվել է Ակսել Բակունցի հոգածությամբ

Տարեց մեղրեցիները սիրով և ավստանքով են հիշում Մեղրի բազմաթիվ «Փոքր թաղի» այգիներին գեղեցիկ տեսք տվող, դեպի վեր խոյացած մշտադալար հաստաբուն բրգաձև լոճու ծառերը, հայարտանում և վերին շրջանում են անցյալ դարի ուրախ-տխուր էջերով ու սրամտություններով զրույցները: Շատ-շատերն են աշխատել այդտեղ, տեսել, հիացել ու հպարտացել...

Ներկա սերնդի՝ սկսած դպրոցական տարիքի երեխաներից մինչև Մեղրիին անծանոթ տարեց մարդկանց մոտ հարց է առաջանում՝ ինչպե՞ս և որտեղի՞ց են հայտնվել Մեղրի բազմաթիվ յուրահատուկ տեսք տվող գեղեցիկ այս ծառերը, ո՞վ է դրանք բերել, տնկել, խնամել, ինչո՞ւ են հենց այդ այգին ընտրել, ինչո՞ւ է այն անվանվում «Գյուղատնտեսի այգի» և էլի շատ հարցեր...

Ինչպես տարեց մեղրեցիներն են վկայել (և վկայում)՝ Սոցիալիստական աշխատանքի հերոս Արշավիր Հայրապետյանը (անվանի պտղաբույծ, Նախկին Լոյս-բերյանի շրջանի «Հաղթանակ» գյուղի տնտեսության հիմնադիր), վաստակավոր բժիշկ Խաչիկ Մխիթարյանը, սիրված ուսուցիչ Արտաշես Ասլանյանը, Հայրենական մեծ պատերազմի վետերան Սերոբ Օհանյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ ծնունդով Կարճևան գյուղից, երջանկահիշատակ Արտաշես Մաթևոսյանը, Մեղրիի ու մեղրեցիների պատմությանը բաջազի-

տակ Գուրգեն Վաչյանը և ուրիշներ «Գյուղատնտեսի այգու» հիմնադրման մասին հաստատել են հետևյալը. մեղրեցի մեծահարուստ, առևտրական Խաչատուր Շահումյանյանն ու իր որդի Մաթևոսը, ով Գողթան գավառում հայտնի էր Շահաց Մաթևոս անունով, Պարսկաստանի Էնզելի, Ռեշտ և Սև ծովի առափնյա շրջաններից պարբերաբար՝ 19-րդ դարի վերջին, որոշ տեսակի մերձարևադարձային բույսեր էր ներմուծում Մեղրու տարածք՝ կլիմայավարժեցնելու նպատակով:

Ներմուծված ծառերի, թփերի տեսակները Մաթևոսը տնկել է իր Նախկին կնոջը որպես օժիտ՝ Միդյանների ընտանիքի կողմից տրված հողամասում: Հաջողությամբ հարմարվելով տեղի բնակլիմայական պայմաններին՝ բրգաձև լոճին, վայրի կիտրոնը, ազնիվ դափնին, վարդի Նոր տեսակները գեղեցիկ տեսք են ընդունում. շատերն էին հիանում ներմուծված այդ ծառերով ու թփերով:

Ըստ ականատեսների պատմածների՝ 1925-1927 թթ. հայ մեծ գրող Ակսել Բակունցը, ով այդ տարիներին աշխատում էր Հայաստանի Հանրապետության գլխավոր գյուղատնտես, Մեղրի այցելելիս հետաքրքրվում էր այդ եզակի ծառերի տեսակաշարով:

Անդրֆեդերացիայի կառավարության հանձնարարությամբ Հայաստանի կառավարությունը 1928 թվականից սկսած Մեղրիի տարածքում կլիմայավարժեց-

ման նպատակով՝ փոքր խմբաբանակով, ներմուծում է մերձարևադարձային մշակաբույսեր (ցիտրուսային մշակաբույսեր, տունգի ծառ, ձիթենի, ֆեյխոյա...) և այլ ծառերի, թփերի ու ծաղիկների տեսակներ:

Նշված հողակտորի վրա էլ սկսվում է կազմավորվել Հայաստանի գյուղատնտեսության Նախարարությանը կից մերձարևադարձային պտղաբանաշարաբուծության գոնալ կայանի հենակետը:

Մինչ այդ Ակսել Բակունցը փնտրել ու գտել էր իր վաղեմի ծանոթ ընկերներին՝ մեղրեցի գյուղատնտես, անվանի բժիշկ Կարապետ Մեծլումյանի եղբորը՝ Սուրենին, ում գրողը ծանոթ էր Խարկով բաղաբուն ուսանելու տարիներից, և Նորավարտ գյուղատնտես Պետրոս Արսենյանին:

Ակսել Բակունցի հետ հանդիպումից հետո, Նրա խորհրդով Պետրոս Արսենյանն ու Սուրեն Մեծլումյանը որոշում են Մեղրիի Նորաստեղծ կոլեկտիվ տնտեսությունում տնկարանային տնտեսություն հիմնելու համար Շահաց Մաթևոսի այգին ընտրել որպես հենակետ, միաժամանակ պահպանել վաղուց արտերկրից բերված բրգաձև լոճիների, վայրի կիտրոնի, սիրիական վարդերի, ֆեյխոյայի և այլ թփերի, ծաղիկների տեսակների գեոֆունդը:

Պ.Դ. Յարոշենկոն և Ն.Ֆ. Գրիգորյանն իրենց «Субтропический Мерзи» (Ереван, АрмФАН, 1941г.) աշխատության մեջ նշում են, որ ուսումնասիրությունների, ծառագիտական չափագրումների ընթացքում «Գյուղատնտեսի այգում» պահպանված բրգաձև հինգ հատ լոճին ունեցել են մոտ 25-30 մետր բարձրություն և 20-35 սմ բնի տրամագիծ:

Տնկարանային տնտեսություն





հիմնելու հայրենական գործին լծված Պետրոս Արսենյանի, Սուրեն Մեծյանյանի և այգեպան Սկրտիչ Մեթյանի շնորհիվ բազմացվում ու Մեղրիի շրջանի մերձարևադարձային գոտու նորաստեղծ կոլտնտեսություններին, ինչպես նաև Աղրբեջանի Չանգելանի ու թուրք բուլշակների կողմից Հայաստանից բռնագաղթած Նախիջևանի ինքնավար Հանրապետության Օրդուբադի շրջաններին մատակարարում են թզենու, դեղձենու, ունաբենու, խնձորենու, խաղողի, սերկևիլի, ծիրանենու և այլ արժեքավոր ծառերի ու սորտերի տնկապուտեր:

1938 թվականին՝ զոպարտությամբ, կամայականությունների զոհ է դառնում հարգված գյուղատնտես Սուրեն Մեծյանյանը:

Իսկ Նրա՝ Սուրեն Մեծյանյանի և Պետրոս Արսենյանի կատարած մեծ աշխատանքի ու Մեղրու կոլտնտեսության ձեռք բերած նվաճումների համար Մեղրու մերձարևադարձային մշակաբույսերի հենակայանը 1939 թ. մտցվում է ԽՍՀՄ գյուղնախարարության չոր մերձարևադարձային մշակաբույսերի Մարդաբան-դի գիտափորձարարական-հետազոտական կայանի կազմի մեջ:

1941 թ. Պետրոս Արսենյանը Մեղրու հենակետում կատարած աշխատանքներն ամփոփում է իր՝ АРМФАН-ի կողմից 1941 թ. հրատարակված «Մեղրու շրջանի պտղատու կուլտուրաները» աշխատությունում:

Պետրոս Արսենյանը 1944թ. զոհվում է Հայրենական մեծ պատերազմում:

Այնուհետև գյուղատնտեսների կողմից հիմնադրված տնկարանում (Մեղրու կոլտնտեսության ղեկավարները) հետագա տարիներին շարունակվում է արժեքավոր բերքատու ծառերի և թփերի սորտերի բազմացման գործընթացը:

Ի պատիվ երջանկահիշատակ գյուղատնտեսներ Ասլեյ Բակունցի, Սուրեն Մեծյանյանի, Պետրոս Արսենյանի՝ Մեղրիի հասարակությունը Հահաց Մաթևոսի այգին վերանվանեց «Գյուղատնտեսի այգի»:

Ցայսօր էլ այդ այգում պահպանվում են 20-րդ դարի սկզբին Հահուվարյանների ընտանիքի կողմից տնկված հաստաբուն բրգաձև նոճիներից չորսը, վայրի կիտրոսի մացառները, սիրիական վարդերը, ալբիցիան (Հայրենական մեծ պատերազմից հետո նոճու երեք ծառը հատվեց, որից մեկը տապալել էր քամին):

Չնայած այդ հողամասը 1991 թ. սեփականաշնորհվել է Մեղրի քաղաքի Փոքր թաղի բնակիչ Արտու և Ռոյ Ղազարյանների ընտանիքին, բայց այն պահպանվում է «Գյուղատնտեսի այգի» անվանումը՝ ի հիշատակ այգին հիմնադրողների:

ԳԵՎՈՐԳ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԲԱԿՈՒՆՑԱՊԱՏՈՒՄ. ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ԷԶԵՐ



Վահրավարում Բակունցին հետաքրքրում էր Կարմիր վանքը

Գյուղատնտեսական բարձրագույն կրթություն ստանալով՝ Խարկովում՝ Ակսել Բակունցը որոշ ժամանակ զբաղվել է այդ մասնագիտությամբ՝ 1924 թ. հոկտեմբերից մինչև 1925 թ. հուլիսը Չանգեզուրի գավառի գյուղատնտես էր, այնուհետև Չանգեզուրի գավառային կոմիտեի որոշմամբ Նշանակվել է հողբաժնի վարիչի տեղակալ, այնուհետև՝ վարիչ: Երևանում մասնակցել է համահայաստանյան գյուղատնտեսական համագումարին, հանդես եկել զեկուցումով: Երկար չի տևել Նրա գյուղատնտեսական գործունեությունը, բայց այդ կարճ ժամանակամիջոցում եղել է Չանգեզուրի տարածաշրջաններում, խորհուրդներով օգտակար եղել գյուղացիներին այս կամ այն գյուղատնտեսական կուլտուրայի մշակման հարցով, նաև լուծում տվել որոշ հողային վեճերի:

Մեղրիում՝ Բակունցի լինելու վերաբերյալ «Այոնյաց երկրին» ժողովրդի մեջ պահպանված հիշողությունները ներկայացրեց մասնագիտությամբ անտառագետ և գյուղատնտես Գևորգ Մարգարյանը, ով այժմ բնապահպանության մասնագետ է «Լիճքվազ» ՓԲ ընկե-

րությունում: Ըստ մեր զրուցակցի՝ Բակունցը գավառի հողաշինարար լինելով՝ քանիցս այցելել է Մեղրի, ուսումնասիրել է շրջանի բնակիչմայական պայմանները՝ ըստ գոտիականության, խորհուրդներ տվել գյուղացիական տնտեսություններին, որոշ գյուղերում մի շարք մերձարևադարձային մշակաբույսերի տնկման առաջարկություն արել, որոնք եկամտաբեր են համարվել: Նաև մերձարևադարձային մշակաբույսերի բազմացման նպատակով Հողօժոկոմատին առաջարկություն է արել Մեղրիում նռնենու, թզենու և մյուս արևադարձային ծառատեսակների բազմացման վերաբերյալ:

Երբ 1930 թ. սկսվեց գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացումը, ձևավորվեց Մեղրու կոլտնտեսությունը, որն ամենախոշորն էր տարածաշրջանում և ամենանպաստավորը՝ բնակիչմայական պայմանների տեսակետից: Կառավարությունը որոշում է Մեղրիում ստեղծել հենակետային տնկարան: Բակունցը հանդիպել է մեղրեցի վաղեմի ծանոթներին՝ որպեսզի այդ հարցը քննարկեն և լուծել տալու համար ուղիներ գտնեն:

Արձակագիրը եղել է նաև Կուրիս գյուղում: Նրան հյուրընկալել է ուստա



Գրիգորը, ով հայտնի ատաղձագործ է եղել, փայտամշակման մասնագետ: Որպես հեղինակավոր անձնավորություն՝ Բակունցը նրա տանն է իջևանել: Ընդհանրապես գյուղացիները հավաքվում էին Գրիգորի տանը, նստում աստիճանների վրա, զրուցում, քննարկում ինչ-ինչ հարցեր, խոսում իրենց դարդ ու ցավից: Այդպիսի հանդիպումների մասնակից է եղել նաև Բակունցը:

Լինելով Վահրավարում՝ Բակունցը նախևառաջ հետաքրքրվել է Կարմիր վանք եկեղեցիով: Ասել է՝ լսել եմ, որ գորավոր վանք է, և պատմություններ կան՝ կապված դրա հետ: Գյուղացիների ուղեկցությամբ, ի վերջո, Բակունցն այցելում է Կարմիր վանք...

Վահրավարում Բակունցի ծիուկ կերպարում են, գազար, կաղամբ, կարտոֆիլ լցնում առաջը: Բակունցն ասել է՝ այս ամենը դո՛ւք պիտի ուտեիք, թե՞ ձին: Հաբեթ ապին ասել է. «Ձիուն պիտի մարդու պես կերակրես, որ չհիվանդանա և բեզ ծառայի»:

Վահրավար հասնելիս Բակունցի ծիուկ պայտը շարժվելիս է եղել, կանչել են Հաբեթ ապուն, ում շնորհիվ պայտը փոխվում է: Նրա կինը՝ Փառան-

ծեմը, գյուղացիների պատմելով, շատ լավ տիրապետում էր ժողովրդական բժշկությանը, ժողովրդական անասնաբուժության հիմունքներին: Երբ մի վերք էր լինում, նա ծիծեռնախոտը լցնում էր կաթսան, եռացնում, որի թուրմով ախտահանում են ձիու սմբակները: Նա նաև առաջարկում է պայտելուց հետո մինչև հողերը ձիու ոտքերն ընկղմել՝ նավթի մեջ և ավելացնում էր՝ սմբակավոր կենդանիների ոտքերը պիտի միշտ մաքուր և ախտահանած լինեն, որ չհիվանդանան և մարդուն կես ճանապարհին չթողնեն: Այդպես էլ խնամում են Բակունցի ծիուկը:

Երբ մի անգամ Վահրավարից ծիուկ հեռանում էր, կանանցից մեկը հարցնում է ընկերուհիներին. «Աղջի, սպիտակ ծիուկի լիա նստած այդ քաթուկավոր խախշուտ մարդն ո՞վ էր, ի՞նչ էր հարցնում»:

Ընդհանրապես նրան գյուղում ամեն ինչ հետաքրքիր էր. լինում էր կալատեղում, հանդերում, զրուցում մարդկանց հետ:


Օրերից մի օր, երբ Բակունցը եկել է Վահրավար, գյուղի տանուտեր Հարություն Մարգարի Հարությունյանին լուր են ուղարկում, թե գյուղատնտեսը

եկել է, ժողովրդին հավաքիր, տեսնե՛ք՝ ինչով նա կարող է օգնել: Կալը ջրելիս են եղել՝ խախապատրաստելով ցորենը կալսելու, քանի որ Բակունցին չի ճանաչել, չի շտապել: Երբ գնում են, գյուղի ղեկավարին ներկայանում, ասել է՝ ձեռքիս գործը կավարտեմ ու Նոր կգամ: Բանից պարզվում է՝ Հարությունը գյուղի աչքաբաց երեխաներին, ովքեր տառաճանաչ չէին, կալի վրա բրիչով տառերը նկարում է՝ այդպիսով նրանց սովորեցնում տառերը, որ գոնե իրենց անուն-ազգանունը գրել իմանան: Բակունցը, տեսնելով, որ ուշանում է, ասում է՝ ինձ ուղեկցե՛ք այնտեղ: Տեղում նկատելով, թե ինչով է զբաղված տանուտերը, քաջալերանքի խոսքեր է ասում և հայտնում է մարդկանց, որ շուտով գյուղում դպրոց կունենան: Բացի այդ՝ խուրջինից հանում է մի մատիտ և մի քանի թուղթ, ասելով՝ սա էլ պահիր քեզ մոտ՝ գրանցումներ անելու համար:

Վահրավարի դիրքը շատ է դուր եկել Բակունցին: Գյուղը տեղավորված էր ձորում, կլիման ինքնատիպ էր: Իսկ Մեղրիում այգի հիմնելու պատմությունը խոսակցության մի առանձին կյուպե է...

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ԲԱԿՈՒՑԱՊԱՏՈՒՄ. ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ԷԶԵՐ



Ներքին Հանդում

...**Գ**որիսից մինչև Հանդ շուրջ հարյուր տասը կիլոմետր ճանապարհ կտրելով՝ եկել է մեկը՝ իր սպիտակ ձին նստած, կաշվե բաճկոնը հագած, կապույտ աչքերով մի անձնավորություն, գյուղամիջում

կանգնել, գրուցել գերանին ու քարերին նստած ծերունիների հետ, որոնք ծխում, գրուց էին անում, ծնկներին դրած կաշվից տրեխ գործում։ Նա եկել էր այն ժամանակ Ղափանի շրջգործկոմի քարտուղար Արտաշես Ծատուկյանի ուղեկցությամբ և բերել էր իր հետ վիկի ու վարսակի սերմացու։ Ճանապարհին ճակատեն, Շիկահող, Սրաշեն գյուղերին բաժանելով՝ բաժին էր հասցրել նաև հանդեցիներին։ Այն ժամանակ այդպիսի օգտակար խոտաբույսերի սերմ մեր կողմերի գյուղերում չկար։ Դա 1926 թվականի գարնանն էր։ Այդ մարդը Հայաստանի հողօժոկոմատի հողվարչության բաժնի վարիչի տեղակալ Ակսել Բակունցն էր, գրող, գյուղատնտես։

Շիկահողից հետո Բակունցը Սրաշենով գալիս է Ն. Հանդ։ Երբ հասնում է Ղզլաղաջի մոտ, շատ է հիանում մեր հանդամասի բարձր ու հաստաբուն չիւարիներով, ծառերի տակով հոսող Բասուտա գետով, նրա ափին բուսած գունազեղ ու բուրավետ ծաղիկներով. այդ մասին գրել է մի շարք պատմվածքներում։

Ն. Հանդում ծերունիների հետ գրուցելիս Բակունցին մի հետաքրքիր պատմություն է անում որսորդ Ավագը։ Բակունցը հափշտակությամբ է լսում որսորդ Ավագի պատմությունը, ով ոչ միայն գյուղի լավագույն որսորդներից էր, այլև հետաքրքիր ու գրավիչ գրույցներ ու պատմություններ անող։

Ավագը գրուցակից գրողին պատմում





Ե, թե ինչպես մի որսի ժամանակ ընկերներով նկատում են արջին, որը գերան է դնում ձորի մի ափից մյուսը և ապա մի մեծ քար վերցնում, որ իր պատրաստած կամրջից զգի ձորում գտնվող հովազի վրա:

Գերանը ջարդվում է, արջն ընկնում է ձորը ու սկսում կռվել հովազի հետ: Իրենք երկուսի վրա էլ կրակում են, արջը դեռ կենդանի է լինում, Ավագը հրացանը բարձրացնում է, որ արջի վրա մեկ անգամ էլ կրակի, բայց տեղի է ունենում անսպասելի, մահամերձ արջը թաթը բարձրացնում է ու աչքերը ծածկում, որ հրացանի զարկը չտեսնի...

Ես գյուղի ծերունիներից ժամանակին հարցրել և իմացել եմ, թե ով է եղել այդ որսորդ Ավագը:

Պարզվել է, որ նա մեծ պապիս՝ Խա-

չատուրի եղբոր՝ Առուշանի տղան էր:

Բակունցը դարձյալ ուզում էր գրուցել ծերունիների ու որսորդ Ավագի հետ, բայց նրան կանչում են գյուղի «կանցիլարը», չէ՞ որ հիմնականում եկել էր գյուղատնտեսական գործերով՝ իմանալու նրանց հուզող խնդիրները...

Այդ գիշեր Բակունցը մնացել ու հյուրընկալվել է գյուղում, գրուցել Աթապապի, դարբին Չափարի և տատիս հետ: Երբ ես ուսանող ժամանակ նրանց ցույց տվեցի Բակունցի նկարը, նրանք հիշեցին և ասացին՝

– Դա մեր Ալեքսանն է:

Չարմանալի է, թե այդ մի օրվա մեջ ինչպես է կարողացել մտերմանալ գյուղացիների հետ, որ նրան իրենց Ալեքսանն են համարել:

ԼԵՆԴՐՈՇ ՅԱԿՈԲՅԱՆՅԱՆ

**ԲԱԿՈՒՆՑԱՊՈՍՏՈՍ.
ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ԷՋԵՐ**

Կապանցի Արտաշես Ճատուրյանի հուշերը

■ Կրճատումներով

...Մյուս առավոտ ընկ. Կապանցիյանն ինձ կանչեց գրասենյակ և ասաց.

– Պատրաստվիր, քիչ հետո ընկ. Բակունցի հետ պիտի գնանք Շիկահողի ենթաշրջան, վերցրու հետո գյուղխորհուրդների կերպերով գործերը՝ տեղում այդ խնդիրները լուծելու համար: Շուտով մենք ձիով ճանապարհվեցինք Շիկահող:

...Դրսի աղմուկը լսելով Բակունցը դուրս եկավ գրասենյակից և գնաց բակում հավաքված գյուղացիների մոտ: Այդտեղ պատի տակ հին գերանների վրա նստոտած ծերունիները գրուցում էին ու վիճում: Բակունցը մոտեցավ նրանց՝ ողջունեց և նստեց գերանի ծայրին՝ լսելու նրանց գրույցը: Գյուղացիք հյուրերի խաթրին դադարեցրին վիճաբանությունը և անցան խաղաղ գրույցի:

– Ասում են ձեզ մոտ մեծ անտառներ կան,– դարձավ դեպի նրանց Բակունցը,– գրելու ժամանակ ես տեսա ձեր «Կռնասը», շատ ուշագրավ են վիթխարի կաղնիները:

Ծերունիներից մեկը, որ ահագին մորթե փափախը թեթած ճակատին, համրիչը ձեռքին հանդարտ շրխկացնելով գրուցում էր, քմիծաղ տվեց ու ասաց.

– Տեսա՛ն, անտառ կա, որ իր օրում կացնի ձեն չի լսել, «Կռնասը» ինչ է որ, արի քեզ տանեմ Մթնածոր՝ դու տես ինչ կաղնիներ կան, հալա որ արջից չվախենաս, մի քիչ խորանաս ծմակում՝ կկարծես թե գիշեր է, այնքան մթին ու խոր, դրա համար էլ այդ անտառին էլ Մթնածոր ենք ասում:

– Ուրեմն արջեր չա՞տ կան այդ անտառում,– հարցրեց Բակունցը, ավելի հետաքրքրվելով:

– Արջ, թե որն է,– ասաց ծերունին, էլ հովազը, էլ վայրի խոզը, եղջերուն, մարդագելը, ինչ ասես, որ չկա Մթնածորում:

– Շատ հետաքրքիր է, լավ որսորդի տեղ է,– ասաց Բակունցը:

– Հա, բա ինչ,– ասաց ծերունին և սկսեց պատմել որսորդների կյանքից ու պատահած արկածներից և թե



Լեռքին Հանդ, Սոսիների պուրակ





Քաջուր



Ծավի կամուրջ

հնչալես մի տասը տարի առաջ որսորդ Ավուս արքը խոշտանգեց անտառում:

Բակունցը ցանկացավ տեսնել Ավուս ու ծերունու հետ գնաց նրա մոտ: Ես ու Կարապետյանն էլ գնացինք նրա մոտ: Նրանք նստած էին տան բակում: Ավին գլուխը ծածկած սպիտակ սփածանելիքով, խոզի կաշվից տրեխ էր գործում, դեմքը միանգամայն բողբոջված էր ու խոսելիս թավ ձայնը լսվում էր ոնց որ խոր քարանձավից: Երբ մենք մոտեցանք նրան, Կարապետյանը հարցրեց.

– Բա ինչի՞ է դեմքը պինդ բողբոջել այդ մարդը, ո՞նց է առանց տեսողության աշխատում, – չիմանալով իհարկե եղելությունը, իսկ ես լսել էի նրա պատմությունը և գիտեի, թե ինչու է բողբոջել դեմքը: Այդ հարցին որպես պատասխան Ավին վայր դրեց ձեռքի գործը և արձակեց դեմքի սփածանելիքը: Բոլորս մնացինք ապշած, մեր աչքերի առաջ պատկերացավ մի չոր գանգ՝ կենդանի մարմնի վրա, որն ամեն ոք կարող է միշտ տեսնել քաղաքի մասնագիտական խանութի ցուցափեղկում, որպես պլաստմասայից պատրաստված արտադրանք: Նրա վրա չկան ոչ աչքուհոնք, ոչ քիթ ու շրթունք, դեղնավուն ատամների շարն է միայն միշտ


էր գայրույթով ձգել գլխի մորթին, աչք ու հունք, քիթ ու բերան քերթելով վայր էր բերել միևնույն պարանոցը, ու մերկացրել գանգը: Այն ժամանակ գյուղում բժիշկ չկար, պառավները բուժել էին վերքը տեղական միջոցներով, ու նա ապրում էր:

– Մյուս առավոտը մենք գնացինք Ծավ գյուղը:

Բակունցը շատ էր հետաքրքրվում գյուղի կենցաղով ու ժողովրդական ասացվածքներով, երկար զրուցում էր գյուղացիների հետ. մանավանդ շատ բան տեսած ու լսած տարիքով մարդկանց հետ ու նրանց աշխուժացնելու համար մեկ-մեկ մի բան էլ ինքն է պատմում գանգեզուրցուց հատուկ հարուստ ու հնչեղ բարբառով:


Ծավում ես ու ընկ. Կարապետյանը զբաղվել էինք գյուղխորհրդի գրասենյակում գյուղի հողաբաժանման, ճանապարհաշինարարության և այլ տնտեսական հարցերով, իսկ Բակունցը զրույցներ էր ունենում գյուղի ծերերի ու բանիմաց մարդկանց հետ՝ ուսումնասիրելով տեղի միջավայրը, ավանդությունները:

Ծավից մենք գնացինք Ներքին Հանդ գյուղը: ...Այդտեղից մենք Հիկահողի վրայով վերադարձանք Ղափան: ... Ամբողջ ճանապարհին Բակունցն ինչ-որ խոհեքով խորասուզված դիտում էր շրջակայքը և անգամ թփերի տակ մողեսները չէին խուսափում նրա սուր հայացքից ու հաճախ դիմում էր նա մեզ՝ «Ինչ շատ մողեսներ կան այս վայրերում». ամեն մանրուք հետաքրքրում էր նրան: Նա Ծավ, Ն. Հանդ, Հիկահող գյուղերում խորը ծանոթացավ գյուղացիների կենցաղին ու վերադարձավ տպավորությունների հարուստ պաշարով: Այդտեղից էլ նրա բեղմնավոր գրչի տակ ծնունդ առավ «Մթնածոր» պատմվածքը: //



Ծավ

ԲԱԿՈՒՆՑԱՊԱՏՈՒՄ. ԱՅՈՒՆԻՔՅԱՆ ԷԶԵՐ



Հարյուրամյա պատերազմ... օրեր և մարդիկ (հատված)

Օգոստոսյան իրադարձություններից հետո լռություն է սահմաններում: Ոչ մի միջադեպ: Աշուն է, աշնան արև: Միայն մի միջադեպ կարող է լարվածության ու անցանկալի դեպքերի տեղիք տալ:

Քյուլուբի դիմաց՝ Կիոլում, արքե իռոշտել էր Քյուլուբ գյուղացի Քեմալին: Անծանոթ մարդ չէր նա հայկական գյուղերում: Հրաշալի շինարար-վարպետ էր, տասնյակ տներ էր կառուցել մեր շենքերում, կառուցել է դպրոցներ, իսկ վերջերս կառուցում էր Շիշկերտ գյուղը: Պատահարից մի քանի օր առաջ ընկույզ էր հավաքում և սահմանի վրա հանդիպել էր Շիկահող գյուղացի իր ծանոթ ընկերներին, զրուցել նրանց հետ: «Ո՛րն էք, ի՛նչ էք անում, ի՛նչ ա լինելու: Եսպես որ տեսնում եմ, էս կռիվը հարուստների կռիվն է, բայց կոտորվելու են աղքատները, – ասել էր, ապա ավելացրել. «Մարդ վախենում է ձեզ հետ զրուցել, թե չէ մերոնք հազար բան կարող են մտածել» (ի դեպ, մերոնք էլ նրանց հետ զրուցողների մասին են հազար ու մի բան մտածում):

Ասել էր ու շտապ հեռացել:

Գտնվեց իռոշտված մարմինը, թե չէ հարևաններն արդեն ակնարկում էին պատանդ տանելու մասին: Հանդեցները ներկայացան Քեմալի թաղմանը:

– Մեր գյուղը նա է կառուցել, – ասում էին նրանք: Գյուղացիները հանդեցներից գոհ էին, իսկ Բաբլից ժամանածներն ընդունել էին թշնամաբով, սառը: Հասկացրել էին, որ հայերի ներկայությունն իրենց դուր չի գալիս:

Քեմալի հետ կատարվածը Շիկահողում հին իհշտություններ արթնացրին: Կովսական գավառում նման դեպք եղել է 1911 թ.-ին, որը հետո հիմք է դարձել Բակունցի «Մթնածորի» համար: Բակունցը փոխել է անունները: Իսկ դեպքն իրականում այսպես է եղել:

Հայտնի որսորդներ ու կռվողներ էին եղել (աչքի էին ընկել 1906-07-ի հայ-թաթարական կռիվներում) Ղազարն ու Գաբրիելը: Երկուսն էլ ֆիզիկական մեծ ուժի տեր էին, երկուսն էլ շրջում էին անտառներում: 1911 թ. ձմեռն էր: Հարևան աղրբեջանցի որսորդները մի արջ են վիրավորում, որը մտնում է Կիոլ կոչվող անտառը: Անմիջապես հրացաններն առնում և Կիոլ են մտնում Ղազարն ու Գաբրիելը: Թաքնված ու վիրավոր արջը թիկունքից բռնում է Ղազարին, որն էլ գոտեմարտի մեջ է մտնում գազանի հետ: Գաբրիելը կրակում է գազանի վրա, վերջինս բաց է թողնում Ղազարին, ապա թաթով հարվածում դեմքին, և Ղազարը ուշագնաց գլորվում է: Արջը հարձակվում է Գաբրիելի վրա: Նոր գոտեմարտ է սկսվում: Գաբրիելը ձախ ձեռքը մտցնում է արջի բերանը, բռնում է լեզուն, փորձում է կտրել այն, բայց դաշույնը հանել չի հաջողվում, քանի որ կապված է լինում ձախ կողմից: Գաբրիելը օգնության է կանչում ընկերոջը, բայց Ղազարն ընկած էր ուշագնաց (ոմանք ասում են՝ նա վախեցել է, թեև վախեցող չէր): Արջը կրծքում է մարդու թևը, թաթով հարվածում նրա գլխին: Ապա ճանկերը խրում է որսորդի ծոծրակի մեջ և բաշելով պոկում է դեմքի ու գլխի ամբողջ մաշկը՝

մինչև ծնոտը:

1926 թ. Բակունցը, երբ Չանգեզուրի գավառի գյուղատնտես էր, Շիկահողում հանդիպում է Գաբրիելին, որն իրականում վերածվել էր կենդանի կմախքի և ճիշտ նման էր «Մթնածորում» նկարագրվածին:

Հայտնի՞ էր, արդյոք, Բակունցին, որ Գաբրիելն անեծք էր դիպել:

«Մթնածորի» նախապատմությունն էլ իր նախապատմությունն ունի:

Շիկահողի Մինասն իր որդուն՝ Սարգսին, ամուսնացնում է գեղեցկուհի Ղանաթելի հետ: Մինչև ամուսնությունը շատերն աչք ունեին աղջկա վրա: Այս ամուսնությունն ինչ-որ տեղ հաշվենկատ էր եղել: Մինասն ունևոր էր, Սարգիսը՝ նրա միակ որդին: Շուտով տղա է ծնվում՝ Խաչատուր են անվանում:

Կարճ է տևում երջանկությունը: Սարգիսը հանկարծամահ է լինում: Հայրը որբերգություն է ապրում, սա էլ կրկնապատկում է... Հարսը՝ տանը թողնելով ծծկեր երեխային, գյուղի տղաներից մեկի՝ Գաբրիելի հետ փախչում է անտառները: Ասում են՝ հարսը փախել է գյուղից՝ ամաչելով իր արարքից, վախենալով մարդկանց պարսալանքից:

Մինասը գնում, հանդիպում է հարսին առևանգողին ու դիմում անսովոր, բայց չափից դուրս մարդկային խնդրանքով. «Գաբրիել տղա, ինչ եղել է, եղել է: Իմ միևնույն էլ չկա: Բայց կա նրա երեխան, որ պիտի ապրի: Աղաչում եմ քեզ՝ եկեք երկուսով իմ օջախը, դու փոխարինիր որդուս, ամուսնացե՛ք եկեղեցու պսակով, ունեցվածքս էլ ձեզ լինի: Ապրե՛ք իմ տանը, միայն թե տեր կանգնեք երեխային»:

Չլսեց Գաբրիելը, անհոգի եղավ, արհամարհեց աղաչանք-պաղատանքը: Օրերն անցնում էին: Երեխային տատն էր մի կերպ պահում: Մի օր իմանալով, որ զույգը վերադարձել է, Մինասը, ում տուները եկեղեցու դեմ դիմաց ժայռի պռնկին էր, դեմքն ուղղում է եկեղեցուն ու անեծք կարդում. «Ա՛յ եկեղեցի, ներքև՝ դու, այ՛ իրիզակալ (արեգակ), վերև՝ դու, դու՛ վերին կապույտ, ձեզ եմ դիմում, աղաչում, պաղատում եմ ձեզ: Թող իմ հարսին բան չպատահի, նա իմն է, նրան սիրել է տղաս: Բայց խնդրում եմ՝ Գաբրիելին այնպիսի օր տաք, որ հարսս բառատուն տարի նրա ձեռքից բռնած դուրս տանի, ներս բերի»:

1911 թվականին կատարվում է «Մթնածորի» դեպքը: Ու երբ Կիոլի անտառից պատգարակի վրա բերում էին իռոշտված Գաբրիելին, Մինասը դիմավորում է նրան իր տան բարձր կտուրից, նորից շրջվում է դեպի եկեղեցին. «Տե՛ր Աստված, մեռնեմ քո զորությանը, մեռնեմ քո արդար դատաստանին»:

Ոչինչ հնարված չէ այս պատմության մեջ, ոչինչ չի ավելացված: Գաբրիելն ապրեց մինչև 1944 թվականը:

ԳՐԻՇԱ ՍՄԵԱՏՅԱՆ



Լոր

ԸՆԿՈՒՆՑԱՊԱՏՈՒՄ. ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ԷԶԵՐ

Արևը բարձրանում է սարից...

ՀԱՏՈ ՍԱՀՅԱՆ

Այդ գարնանը մերոնք դարձյալ բոց սարն էին տարել և կանգ էին առել սարահարթի սահմանում, Մարգերի բլուրների վրա: Հենաթաղցիները դարձյալ դիրք էին բռնել՝ հոնի կարմիր մահակներով, ավանդական եղանակներով և մղանի կոթերով «զինավառ»: «Օխտը տարի ծիծը կերածը դարձյալ իր խոսքն էր կրկնում օրենքի մասին և իր համագյուղացիներին ոգեշնչում՝ ի մարտ:

Հենաթաղի երեխաներն իրենց մեծերի խրախուսանքով շները «բժն» էին տալիս մեզ վրա: Իսկ մեր գյուղացի Վանեսանց Պողոս ամին մեզ սաստում էր, որ շներին բարով չտանք:

– Ա՛ խոխեք, սաքիթ կացեք, կռիվը մազից ա կախված, հենց որ շներին բարով տաք՝ կսկսվի:

Երկու կողմից էլ պատվիրակներ էին հավաքվել այն բլուրի վրա, որտեղ ամեն տարի կանգնել ու փլվել էր սահմանի «կուրգանը»: Բանակցություններ էին վարում: Իսկ մենք՝ երեխաներս, թաքնվել էինք քարերի ետևում, որ «թամաշա անենք կովին»:

Այդ ժամանակ, հեռվում, «Խոզ» աղբյու-

րից եկող ճանապարհի վրա, երևացին երեք ձիավոր: Հենաթաղցիներն ավելի բորբոքվեցին, մեր գյուղացիներն ավելի հանդարտվեցին: Ձիավորները մոտեցան: Երկուսը գյուղախորհուրդների նախագահներն էին, իսկ երրորդը քաղաքից եկած մարդ էր երևում... Տիրեց կարճատև լռություն, և հետո, հանկարծակի երկու կողմերի ուրախ ձայները խառնվեցին իրար, – Ալեքսանդր վարժապետը, Ալեքսանդր վարժապետը...

Քաղաքից եկածը Ալեքսանդր վարժապետն էր, այն մարդը, որին ես այնքան երազել էի տեսնել: Նախ շենաթաղցիներին մոտեցավ, ընդհանուր բարև տվեց, և հետո սկսվեցին անհատական գրկախառնությունները: Հետո բարևեց մերոնց:

– Ի՞նչ սիրուն սարեր ունեք, բա մարդ ես ծաղիկների ծովի մեջ կռիվ կանի՞, – ասաց նա, նստեց քարին, գյուղացիներին հարց ու փորձ արեց մեռնող-ապրողի, նրանց ապրուստի մասին, ապա բավականին ժամանակ խոսեց: Նրա խոսքերից շատ բան չլսեցի, չհասկացա և հիմա չեմ հիշում...

Խոսքը վերջացրեց, տեղից վեր կացավ և կարգադրեց, որ քարեր հավաքեն «կուրգանի» համար:

«Կուրգանը» բարձրացավ Մարգերի ամենաբարձր բլուրի վրա: Ալեքսանդր վարժապետը կանգնեց «կուրգանի» մոտ, նայեց դիմացի սարերին, ձեռքը երկաթեց և ասաց, – Մյուս «կուրգանն» էլ դրեք, այ էնտեղ, «Դավաբոյնու» գլխին:



Շենաթաղ

Սահմանը որոշվեց: Երկու գյուղերի դարավոր վեճի վերջին շիկացած կծիկները թաղվեցին Նրա «կուրգանների» տակ:

– Դե գնացե՛ք, մեր պապերի գերեզմանները օրհնեցե՛ք, հալալ լինի ձեզ, բարով վայելե՛ք, ա ճուտ լորեցի՛ք, – ասաց «օխտը տարի ծիծ կերած» Սարու Ավանեսն իր խռպուտ ձայնով և հոնի կոպալը տնկեց հողում՝ իբրև հավիտենական հաշտության նշան:

– Շնորհակալ եմք, ա շենաթաղցի՛ք, – պատասխանեց Վանեսանց երկար բեղավոր Պողոս ամին և կծերով ու կաթասներով բեռնված էֆն հրելով՝ սահմանն անցկացրեց: Մեր բռնը գնաց՝ վրաններ գարկելու Արագեղի «Յուրդատեղում»:

Ես տեսա իմ երագած մարդուն՝ Ալեքսանդր վարժապետին: Հիմա ես չեմ կարող վերարտադրել իմ այդ օրվա ապրումները: Գրիչս անգոր է: Միայն երկու բան լավ հիշում եմ. մեկ այն, որ մտածում էի՝ թե ինչ ուժ ունի Ալեքսանդր վարժապետը, որ Նրա առաջ շենաթաղցիները ծալուկ չհանեցին, այլ, ընդհակառակը, սիրով հրավիրեցին և տարան իրենց գյուղը: Մեկն էլ այն, որ Նախանձից պայթում և արտասուքից խեղդվում էի, թե ինչո՞ւ» Նրա ձիու սանձը ես չեմ բռնել, այլ իմ դասընկեր Համբարձումը...

Նրա գնալուց հետո Կուբի ապերն ասում էր՝ տեսա՞ք, թե Ալեքսանդր վարժապետը ոնց արևի պես բարձրացավ

մեր սարից ու լույս տվեց ձորերին: Դե թող մեր գյուղի կովերը Արագեղի ծաղիկն արածեն, ու կաթից էլ թող ծաղկի հոտ գա:

Ես տեսա Ալեքսանդր վարժապետին, որն այնքան մեծ հարգանք և հեղինակություն ուներ մեր գյուղում: Եվ հիմա էլ տասնամյակների միջով տեսնում եմ Նրան՝ կանգնած Մարգերի ամենաբարձր բլուրի վրա, «կուրգանի» մոտ, ձեռքը դեպի Դավաթյուկ օբատեղերը պարզած: Տեսնում եմ Նրան... Եվ հուշերիս մեջ Նրա ասպետական կերպարի առաջ իրենց ճերմակ գլուխներն են խոնարհում իմ ծննդավայրի երախտապարտ լեռները... Ես տեսա Ալեքսանդր վարժապետին... Նորից տարիներ անցան: Իմ դասագրքում կարդացի «Ծիրանի տափը»: Դա մեր երկու գյուղերի դարավոր վեճի պատմությունն էր, միայն անուններն էին փոխված:

– Ո՞վ է այս Ակսել Բակունցը, որ այսօր լավ գիտեր մեր Արագեղի պատմությունը...

Վանեսանց Կուբի ապերն ասում էր՝ Ալեքսանդր վարժապետը կլինի, ուրիշներն ասում էին՝ չէ..

Հետո ես «Խոնարի աղջիկը» կարդացի: Պատմությունը դարձյալ մեր գյուղից էր:

– Ո՞վ է այս հեղինակը, ե՞րբ է եղել մեր գյուղում, ի՞նչ լավ է ճանաչում մեր գյուղացիներին, – մտածում էի ինքս ինձ, և գաղտնիքը պարզել չէի կարողանում:

Գաղտնիքը պարզվեց: Տարիներ հետո Ակսել Բակունցի ինքնակենսագրության մեջ կարդացի. «1915-16 ուսումնական տարում, գաղթի պատճառով, փակվել էր ճեմարանը, և ես այդ տարին ուսուցիչ «հրավիրվեցի» Չանգեզուրի Լոր գյուղը: Առաջին անգամ ճանաչեցի գյուղը, Նրա մարդկանց: Հետո շատ անգամ այդ թվի հիշողությունները օգնել են ինձ»:

Ես տեսա Ալեքսանդր վարժապետին... Բայց ի՞նչ իմանայի, որ Նա իմ հայրենի գյուղում ապրելով միայն ինն ամիս, կդառնար Նրա հավիտյան կենդանի բնակիչը:

Ի՞նչ իմանայի, որ Ալեքսանդր վարժապետը մի օր կդառնար Ակսել Բակունց, կբանդակներ իմ հայրենակիցների ազնիվ կերպարները և կավանդեր սերնդեսերունդ:

Ի՞նչ իմանայի, որ Նա կգար ու կգնար, և Նրանից հետո եկող մեր արձակագիրները Նրա չքնաղ «Միրհավի» փետուրներով կգարդարեին իրենց պատմվածքների էջերը և «Ապիական մանուշակի» ցողերը շաղ կտային իրենց տողերի վրա:

Ի՞նչ իմանայի, որ Նա լուսնի պես կշողար մեր գրականության երկնակամարում, կունենար ողբերգական մայրամուտ և հետո արևի պես կբարձրանար սարից, ինչպես բարձրանում է այսօր:

«ԳՐԱԿ. ԹԵՐԹ» Ե., 1959թ., 23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

ԱՎՍԵՆ ԲԱԿՈՒՆՅԻ ՀԵՏՔԵՐՈՎ

**1917-ի դեկտեմբերի
26-ին մի խումբ
ճեմարանական
ուսուցիչների հետ
Բակունցը մեկնում է
ռազմաճակատ**



Էրզրում ▲

▼ Սարդարապատ



Սարիղամիշ ▲



Սուրմալու ▲



◀ Կարս, Սուրբ
Առաքելոց հայկական
եկեղեցին, որը
կառուցվել է 930-
ական թվականներին
Բագրատունյաց
Աբաս թագավորի
կողմից

ԱՎՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Մթնաձոր ▶



Սբ. Հռիփսիմե
եկեղեցին, Գորիս
▼



Մեծ ▶
Իշխանասար



Լաստի խուփ, Գորիս
▼



ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՀԵՏՔԵՐՈՎ

1932թ. եղավ Բղենո Նորավանքի վերահայտնությունը, եղավ վերին պարզևումով՝ Ակսել Բակունցի կողմից

Բղենո Նորավանք. Սյունիքի միջնադարյան վանական համալիր: Գտնվում է Սյունիքի մարզի Բարձրավան գյուղից 3 կմ արևելք, Շուշուի տանող ճանապարհից աջ, անտառապատ կիրճերով շրջապատված եռանկյունաձև հրվանդանի վրա:

Վանքի տեղն անհայտ էր գիտության համար: Պատահաբար հայտնաբերել է Ակսել Բակունցը 1932 թվին: Հետո պարզվել է, որ այստեղ է օրինակվել «Էջմիածնի ավետարան» կոչվող նշանավոր ձեռագիրը՝ 998 թվականին:



ԱՎՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՀԵՏՔԵՐՈՎ

▶ Խարկովի
ազգային
ազդարային
համալսարանը



◀ Թբիլիսի.
պոլիտեխնիկական
ինստիտուտի գլխավոր
մասնաշենքը

Գևորգյան ճեմարանի
շենքը Էջմիածնում ▼



ՀԻՇՈՐՈՒԹՅՈՒՆ...

Չի մամռոտվի դեպի այս հուշարձանը տանող ճամփան...

Դանդաղ սահում է սպիտակ սավանն ու... Խոհուն հայացքը հառած իր սիրած սարերին, ասես ուր որ է կվերցնի գրիչն ու կգրի:

«Բարձր են Մթնածորի սարերը, դրանից է, որ ամռան երկար օրերին էլ արևը մի քանի ժամ է լույս տալիս Մթնածորի անտառներին: Եվ երբ հեռավոր հարթավայրում արևը նոր է թեքվում դեպի արևմուտք, Մթնածորում ստվերները թանձրանում են, սաղարթի տակ անթափանց խավար է լինում, արջերը որսի են դուրս գալիս, վարազներն իջնում են ջուր խմելու, իր որջի առաջ զիլ ոռնում է գայլը, ոռնոցը հազարբերան արծազանքով զրնգում է Մթնածորում...»:

Հիմա էլ կա Մթնածորը, բայց ոչ այդպես մութ ու խավար, քանզի հեղինակն

այս տողերի, ինչպես աստղ լուսատու, ծագեց մթնում և իր լույսով ողողեց այն, ողողեց իր հայրենի ձորերն ու լեռները, միանգամից տեսանելի դարձնելով նրանց մեր հայրենիքի բոլոր ծայրերից:

Կա Մթնածորը, կան Ցուրտ աղբյուրն ու ծառն այն, որի ստվերում այնքան սիրում էր նստել: Կա քարափը, այն քարափը, որի մասին գրել է. «Հիմա էլ է մնում քարափը, իբրև հսկայի մաս. ցից քարը՝ մեր թաղի գլխին: Ուզում եմ, որ այս տողերը մնան այնքան, որքան կմնա մեր քարափը»:


Գիտե՞ր նա արդյոք, որ կգա մի օր, որ իր անունը կրող դպրոցի սաներից մեկը, հազիվ զսպելով արցունքները, կասի.

«Սիրելի, սիրելի Բակունց, քո տողերը ու դրա հետ նաև քո անունը կմնան մեր

սրտերում անվերջ, անմոռաց, մինչև իսկ այն ժամանակ, երբ գուցե արդեն չլիկի քարափը»:

Գիտե՞ր արդյոք, որ իր կերտած մեծ առաջնորդի, Դիան դայու, Արթին պապի, Խոնարի աղջկա, բրուտի տղայի կերպարները կմտնեն մեր գրականության (և ոչ միայն մեր գրականության) ոսկե ֆոնդը, կբերեն նրան այն հռչակը, որն ունի այսօր, կհանեն ժամանակավոր մոռացումից, կվերադարձնեն իր ծննդավայրը, և իր անունը կրող հրապարակում կկանգնեցվի այս հուշարձանը, թեպետ, ինչպես ճիշտ նկատեց արձակագիր Ս. Խանզադյանը. «Մենք չէ, որ պետք է հուշարձան կանգնեցնենք Սկսել Բակունցին, նա ինքն է կանգնեցրել իր հուշարձանը և նրա ամեն մի պատմվածքը մի-մի քար են դարձել այդ հուշարձանի պատվանդանի համար»:

– Այսօր տոն է մեր ժողովրդի, նրա կուլտուրայի համար, – դիմելով հավաքվածներին՝ ասում է Գորիսի գյուղական արտադրական պարտիական կոմիտեի քարտուղար Ք. Պետրոսյանը: – Իր հայրենի քաղաքում բացվում է սովետահայ գրականության ականավոր վարպետներից մեկի՝ Ակսել Բակունցի հուշարձանը,



որը լավագույն ապացույցն է այն ջերմ սիրտ ու երախտագիտության, որ մեր ժողովուրդը ցուցաբերում է իր տաղանդավոր զավակի նկատմամբ:

— Մեծ Բակունցի դերը հայ հնադարյան, բայց հավետ երիտասարդ գրականության զարգացման գործում, ասաց գրող Ս. Խանգադյանը: Իր սքանչելի ստեղծագործություններով նա նոր ուղի հարթեց հայ արձակի համար: Բակունցը մեր գրականության մեջ բերեց միևնույն չգրված հմայքներ, բաց արեց աշխատավոր մարդու հոգեբանության ու խոհերի ծալքերը, գտավ ժողովրդի ոգու ոսկե երակը և հանելով այնտեղից արվեստի սքանչելիքներ, տվեց իրեն՝ ժողովրդին:

Ի՞նչ իմաստ, տարիներ առաջ, հենց այստեղ չի նստել նա չեչուտ մի քարի և դիտել, թե ինչպես էր Միհրա բիրին գորգը տանում գետը՝ լվանալու: Իսկ այսօր, այդ քարի տեղը վեր է խոյանում մեծ արվեստագետի հուշարձանը:

Թող հավերժ լինի այն, ինչպես հավերժ է Բակունցի ստեղծագործությունը:

Ս. Խանգադյանը հրապարակում է Հայաստանի գրողների միության ողջույնի տեքստը: Բեմ է բարձրանում և մեծ գործի անվան միջնակարգ դպրոցի աշակերտության անունից ողջույնի խոսք ասում աշակերտուհի Լորենտա Գրիգորյանը:

— Սիրելի գրողի անունը կրող այս նորակառույց փողոցն էլ տարիներ առաջ մի արահետ է եղել, որով անցել է նա խոհուն, խորունկ հայացքով, ոլորան ու զով ճանապարհների անխառն սերը հոգու մեջ և սրտի խորքում նոր ծնունդ առնող հուզիչ մի ստեղծագործություն: Գուցե և նստել է այստեղ մի քարի և մտաբերել մանկության մի ամսոնաց հուշ, մտաբերել է Արթին պապին իրիկամուտի նարնջե շողերի տակ՝ հոնի կարմիր մահակին կոթնած...

Մեծ գրողի հարազատների անունից շնորհակալության խոսք է ասում նրա եղբայրը՝ Վահան Բակունցը:

Բանաստեղծ Համո Սահյանը կարդում է Բակունցին նվիրված իր բանաստեղծությունը:

Շատերն են ցանկանում ելույթ ունենալ, սրտի խոսք ասել սիրելի գրողին՝ նրա այս հիասքանչ կոթողի բացման օրը: Ելույթներ են ունենում Գորիսի միկրոէլեկտրաշարժիչների գործարանի բանվոր Ռ. Շահնազարյանը, Ս. Բակունցի դասընկեր Ռ. Պետրոսյանը, բանաստեղծ Վ. Լորենցը, ժողովրդական նկարիչ Էդ. Իսաբեկյանը, գրաքննադատ Ս. Աղաբաբյանը և ուրիշներ:

Լ. ԿԱՐԱԿԵԼՅԱՆ

**«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԹԵՐԹ
16 Հունիսի 1964 թ.,
№ 141 (13179)**



ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ...



Հայ արձակի մեծանուն վարպետ Ակսել Բակունցի ծննդյան 120-ամյակը

Գրական հոբբեյանի առթիվ հունիսի 14-ին Գորիսի պետական համալսարանում «Սյունիքի հոգևոր և նյութական ժառանգությունը» գիտական ծրագրի շրջանակում կազմակերպվեց հանրապետական գիտաժողով, որին մասնակցում էին գիտության հինգ դոկտոր, մեկ տասնյակից ավելի գիտության թեկնածու, հետազոտողներ ՀՀ ԳԱԱ Մ.Արեղյանի անվան գրականության ինստիտուտից, Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտից, պատմության ինստիտուտից, հնագիտության և ազգագրության ինստիտուտից, Երևանի պետական համալսարանից, Վանաձորի պետական համալսարանից, Հայաստանի ազգագրության թանգարանից, Կրթության ազգային ինստիտուտից, Արցախից, ինչպես նաև Գորիսի պետական համալսարանից:

Գիտաժողովին ներկա էին նաև ՀՀ Սյունիքի մարզպետարանի ներկայացուցիչներ, մտավորականներ, ուսուցիչներ, ուսանողներ:

Բացման խոսք ասաց Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Արտուշ Դուկասյանը: Ողջունելով հյուրերին ու գիտաժողովի մասնակիցներին գրական տոնի առթիվ՝ նա նշեց, որ գիտաժողովի նպատակը Ակսել Բակունցի ստեղծագործության նորովի արժևորումն է, այնպիսի հարթակի ստեղծումը, որը հնարավորություն կտա քննարկելու գիտատեսական նոր հարցադրումներ՝ կապված մեծանուն արձակագրի գրական ժառանգության ուսումնասիրության հետ:

Նա կարևորեց գեկուցումների թեմատիկ բազմազանությունը, ոչ միայն գրականագետների, այլև պատմագետների, բանագետների ու ազգագրագետների մասնակցությունը գիտաժողովին՝ Բակունցի ստեղծագործության հարուստ շերտերը բացահայտելու և գիտական նորություններ բացահայտելու նպատակադրումով:

Չեկուցումները առանձնանում էին գրողի ստեղծագործության նոր հատկանիշների բացահայտումով, խորքային, հետաքրքիր դիտարկումներով: Չեկուցողները փորձեցին նորովի բացահայտել Բակունցի ստեղծագործական ու անձնային կողմերը, արժևորել նրա ուրույն

Գիտաժողովին ընթացավ լիագումար երկու նիստով, որոնք նախագահում էին համալսարանի պատվավոր հյուրերը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ Դավիթ Գասպարյանն ու Վանո Եղիազարյանը:

”

կենսագրագրությունը, արձակի գեղարվեստականության չափանիշները, լեզվի ու ոճի զարգացման ընթացքը, կենսական երևույթների խորքային ընդգրկման, ավանդականի ու նորարարականի բարձրարվեստ համաձուլման գրական ու գրականագիտական ձիրքը:

Չեկուցումներով հանդես եկան բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Գասպարյանը (Ակսել Բակունցը 1930-ական թթ. գրապայթարի բովում), բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վանո Եղիազարյանը (Ռոստոմ Թումանյանի կերպարը Ակսել Բակունցի ստեղծագործության մեջ), բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ Թամար Չայրապետյանը (Ակսել Բակունցի ստեղծագործության ժողովրդագիտական և մշակութաբանական հեռքը), բանասիրական գիտությունների դոկտոր Չայկանուշ Մեսրոպյանը (Չայերենի բարբառները Բակունցի ստեղծագործություններում), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Ստեփանյանը (Ակսել Բակունցը՝ Գորիսի ծխական դպրոցի աշակերտ), Արցախի պետական արխիվի վարիչ Լեռնիկ Չակոբյանը (Գաղթականի կերպարը Բակունցի ստեղծագործության մեջ), ազգագրագետ Սվետլանա Պողոսյանը (Չայկական տարագի ու զարդարանքի արտացոլանքն Ակսել Բակունցի երկերում), ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող Գայանե Ղազարյանը (Ակսել Բակունցի դերը հայ-ադրբեջանական սահմանների ճշման խնդրում (1920-ական թվականներ), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Նարինե Շամամյանը («Յար խուշտա» պարի վկայություններն Ակսել Բակունցի «Ծիրանի փողը» պատմվածքում), ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության



րության ինստիտուտի գիտաշխատող Սիրանուշ Առաքելյանը (Ակսել Բակունցը «Խաչատուր Աբովյան» վեպի շուրջ), բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Թեմիկա Մարությանը (Ակսել Բակունցը և Ն.Գոգոլի «Տարաս Բուլբան»), բանասիրական գիտությունների թեկնածու Սվետլանա Մանուչարյանը (Դարձվածային միավորներն Ա.Բակունցի «Կարմաբար» վեպում), պատմական գիտությունների թեկնածու Արմեն Կարապետյանը («Ակսել Բակունցն անխարդախ ժողովրդայնության առաջամարտիկ խորհրդակցի գրականության մեջ» աշխատությունը), Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Հասմիկ Գրիգորյանը (Ա. Բակունցի «Պրովինցիայի մայրամուտը» պատմվածքի բառապատկերային շերտերը), հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Նազելի Չախվերդ-

յանը (Ա. Բակունցի «Մթնածորի չարքը» պատմվածքի հոգեբանական վերլուծություն), ԳԴՀ ՄՀ ամբիոնի դասախոսներ Նելլի Բաղդասյան և Ռեմիկա Ալավերդյանը (Գեղագիտական դաստիարակության դրսևորումներն Ա.Բակունցի ստեղծագործություններում), Կարինե Միրաբյանը (Ա.Բակունցի ստեղծագործությունների մանկավարժական-դաստիարակչական նշանակությունը): Գիտաժողովին հեռակա մասնակցություն էին բերել բանասիրական գիտությունների թեկնածու Արմեն Ավանեսյանը (Տեսիլը Ակսել Բակունցի պատմվածքներում), բանասիրական գիտությունների թեկնածու Մերի Չովհաննիսյանը (Գունային խորհրդանիշները Տեղյանի և Բակունցի ստեղծագործություններում), պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Համո Սուքիասյանը (պրոֆեսոր Վաղիմիր Ղազախեցյանի ներդրումը բակունցագիտության բնագավառում) և ուրիշներ:

Գիտաժողովն ընթացավ լիազումար երկու նիստով, որոնք նախագահում էին համալսարանի պատվավոր հյուրերը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ Դավիթ Գասպարյան և Վանո Եղիազարյանը:

Գիտաժողովի փակմանը ԳԴՀ ղեկավար Ա.Ղուկասյանի շնորհակալական խոսքից հետո նիստերի նախագահողները ներկայացրին իրենց տպավորությունները՝ բարձր գնահատելով զեկուցումների գիտականությունը, արդիականությունը, գիտաժողովի կազմակերպչական մակարդակը:

Ակսել Բակունցի 120-ամյակին նվիրված գիտաժողովը Բակունցի ստեղծագործության գնահատությունը ևս մեկ էջով լրացնելու փորձ էր, որը կլինի շարունակական:

**ՆՈՒՆԱ ՄԻՐՈՅԱՆ
27 ՀՈՒՆԻՍԻ 2019 Թ.**



ՀԻՇՈՐՈՒԹՅՈՒՆ...



Չրույցներ Ակսել Բակունցի մասին՝ Մեծ Իշխանասար կատարած ուխտագնացության ընթացքում

Հատված «Ուխտագնացություն Մեծ Իշխանասարի երկնահաս և աստղաթաթախ գագաթ» հոդվածից

...Կ երեքը պետք է շարունակեիք ձիերով: Նախապես այդտեղ էր հասել Գուրգեն Մինասյանը՝ վեց ձիով. երեքը բռնկիկ էին՝ եկել էին զամբիկի՝ իրենց մոր հետևից: Դրանք Սպարտակ Մինասյանի երամակի լավագույն երիվարներից էին: Եվ մոտ մեկ ժամ ձիերով ճանապարհ անցանք...

Գորիսի պետական համալսարանի էներգետիկայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Գուրգեն Մինասյանը, ով քաջածանոթ է այս կողմերի ամեն սար ու ձորի, ամեն քար ու կապի, գնում էր առջևից՝ իր Սևուկ Նժդեհով:

Այնուհետև Մարիամն էր՝ Լուսն ձիով: Վերջում ես էի՝ Չեյրանը հեծած:

Գուրգենն ընթացքում պատմում էր երեք այդ Նժդեհի արժանիքների մասին. Լուսն իմաստուն զամբիկ է՝ ձիավորին հնազանդ, երեք անհանգիստ բռնկիկների անվերջ խաղն անգամ նրա վարձին չէր խանգարում:

Իսկ Չեյրանը...Ազնվացեղ հովատակ

Է. ասում են՝ ձի չէ միայն, նաև ձիապան է, ձիերի երամակն ինքն է հավաքում և ամեն մայրամուտի յայտադատողի բերում, նրա ներկայությամբ երամակից որևէ ձի չի կարող փախչել:

Ձիերն այնքան վստահ էին վերելքը հաղթահարում, քարակույտերը շրջանցում, որ նրանց գավակներին խփելու կարիք չէր լինում: Եվ, այդուհանդերձ, որպեսզի վստահ լինեիք հարմար թամբերի վրա, ոտքներս դրել էիք ոչ պակաս հարմար ասպանդակների մեջ: Ավելի թեք տեղերում էլ, սանձը բաց թողած, բռնում էիք ձիերի բաշից...

* * *

Մի կանաչ, հեքիաթային աշխարհ էր բացվել մեր առաջ, և ամեն մի թմբի ու բարձունքի հետևում նոր պատկերների էիք ականատես լինում, երբեմն դադար առնում և վայելում այդ գեղեցկությունը:

Եղանակը սկզբնապես զով էր, մի պահ նույնիսկ պայթեցին ամպերը, բայց հետո երկնակամարում երևաց արեգակը:

Ալպիական այդ վայրերում (ասում են) խոտը համով է և յուղաբեր. պատահական չէ, որ սարերի լանջերին՝ տարբեր տեղերում, երևում էին ոչխարի հոտեր, կովերի նախիրներ:

Մեր գլխավերևում ժամանակ առ ժամանակ երևում էին թևերն ամպերի մեջ թռչված արծիվներ, ագռավներ, ուրիշ հավքերի երամներ:

Մի փոքր ավելի ներքև արտույտներն ու տատարակներն էին սեր անում, երբեմն էլ հայրեններ կարողում: Իսկ գետնի վրա... Ծաղիկների ու գույների իրարանցում:

Մեզ տեսնելով՝ քնաթաթախ ու կապույտ զանգակներն էին ամենուր վեր թռել ու բացվել, ալպիական մանուշակներն էին հանդեսի ելել:

Ծաղիկների մի մասը մեզ անծանոթ էր, ուստի և Գուրգենի պարզաբանումն էիք ժամանակ առ ժամանակ ունկնդրում:

Այդ ամենից, ակամա, մեր հոգու կրակն էր թեժանում, այդ ամենից համոզվում էիք վերստին՝ Մեծ Իշխանասարի լանջերը, մերձակա հովիտները միայն բարոյություն և մաքրություն են շաղ տալիս:

* * *

Մեկ ժամ անց եռագագաթ Իշխանասարի հարավ-արևելյան գագաթի ստորոտում էիք:

Ձիերն այլևս անկարող էին բարձրանալ. երկար պարաններով կապեցինք քարերից՝ հանգստանալու և բուրդու-նավետ արտից օգտվելու հնարավորություն տալով նրանց:

Առջևում մեր ուխտագնացության ամենադժվարին փուլն էր. ամբողջովին քարերով պատված-ծածկված լեռն պետք է բարձրանայինք ոտքով. պահանջվում էր խիստ թեք այդ լանջով բարձրանալ մոտ 700 մետր:

Իրար թիկնած ու ժանիքները սրած քարեր՝ մամռակալած, ծալ-ծալ փեշերով բարձունքներ, միմյանց գլխի թառած ապառաժներ...

Վերելքի այդ հատվածը պահանջեց մոտ մեկ ժամ. ժամը 12-ին լեռան առաջին (հարավ-արևելյան) գագաթին էիք: Այդտեղից ավելի հստակ ու պարզորոշ երևաց երկրորդ և երրորդ գագաթ գնալու ուղին:

* * *

Քիչ հանգստանալուց հետո շարժվեցինք դեպի երկրորդ գագաթ:

Ավելի պարզորոշ դարձավ, որ լեռան լանջերը ոչ բոլոր տեղերում են ձմեռային շրջագգեստը հանել:

Տեղ հասնելու համար պետք է հաղթահարեիք ձյան շերտը, ինչը հաճույքով արեցինք:

Երկրորդ գագաթում արդեն մեզ դիմավորեց և Գուրգենի սկսեց զմրուխտե գեփյուռը, որը, սակայն, երրորդ ու վերջին գագաթ բարձրանալուն զուգահեռ

աստիճանաբար փոխակերպվում էր քամու՝ ձորերի տապից խրտնած և լեռնագագաթ բարձրացած քամու:

Ուրցն էր իր խոնավ աչքերը բացել և հեքիաթային բույրը տարածել:

Երկրորդ լեռնագագաթից դեպի արևմուտք և դեպի հարավ մեր առջև բացվեց Սիսիանի ամբողջ տարածաշրջանը:

Հենց այդտեղից սկսած մեզ հետ, կարծեք, զրույցի բռնվեցին Աղոթարանը, Ուխտասարը, Արամազը, Կապուտջուղը...

...Եվ ահա երկնքի մեջ մարգարեացած լեռան ամենաբարձր և սրբացած գագաթին ենք:

Ահա Աստծո աստղաշրած՝ սյունիքյան գահաթոռ վայրում ենք:

Այդտեղ երկնքից մեր ականջին բան են ասում ամպերը, դարերը...

Ներքևում մեր ոտքերի տակ՝ իրար գլխի թառած, իրար ծոց մտած սարեր են, ձորեր, կիրճեր:

Բազմաթիվ լճակներ են՝ մանկան արցունքի պես ջինջ: Դրանց մարգարիտը, անշուշտ, Սև լիճն է, Իշխանալիճը:

Ամենագագաթին երկաթե խաչն է. ասում են՝ Սիսիանի տարածաշրջանի Իշխանասար գյուղի երիտասարդներն են տարիներ առաջ տեղադրել՝ Նախկին մատուռի տեղում:

Խաչի ստորին մասում իրար գլխի ժողոված ոչ մեծ քարեր են՝ ներսում վառած մոմեր, կողքը մի քանի շիշ՝ ներսում գրվածքներ պարունակող թղթեր, որոնք չբացեցինք ու չնթերցեցինք (ասում են՝ այդտեղ այցի եկող ուխտավորներն իրենց անուններն ու երազանքները գրում են և շի մեջ դրած պահ տալիս սրբավայրին):

Կար նաև մի քար՝ սրբապատկերով, որ համեմատաբար նոր էր:

Մոտ մեկ ժամ լեռնագագաթին մալուց, առ Աստված աղոթք բարձրացնելուց և հավերժից ու հավիտենականությանից մի պտղունց վայելելուց հետո բռնեցինք հետդարձի ճանապարհը:

Իշխանասար Մեծը՝ Սուրբ Հովհաննես, Սուրբ Ավանես, Սուրբ Օհանես, Սարի սուրբ Վանես, Սարի սուրբ

Մեծ Իշխանասարը կոչվել է Նաև Սրբասար: Իշխանասարի պաշտամունքային նշանակության անդրադարձել է Ստեփան Լիսիցյանը (Չանգեզուրի հայերը, էջ 275). «Վարդավառի օրը հավատացյալները մեծ բազմությամբ դիմում էին սրբազան լեռների գագաթներին գտնված սրբավայրերի այցելությանը: Այստեղ գտնվում էին հրաշագործ գերեզմաններ՝ որևէ պարզ խաչքարով զարդարված կամ շատ նոր ժամանակների շինված անարվեստ մատուռով հովանավորված: Բարձրանում էին Սարվարդի (Սավարդի), Իշխանասարի Սուրբ Օհա-

նեսը և մանավանդ Խուստուկի գագաթները...»:

Ստեփան Լիսիցյանը ներկայացնում է Նաև տոնակատարության ընթացքն Իշխանասարում. «Մեծ Իշխանասարը տեղացիներին հայտնի է Նաև որպես Սրբի Օհանեսի սար: Նա ավելի մատչելի է հյուսիս-արևելյան կողմից, որտեղ նրա ստորոտից ոչ հեռու կանաչ ափերի մեջ ծփում է Սև լճի կապտավուն հայելին: Հին ժամանակ այժմյան Գորիսի վարչական շրջանի գրեթե բոլոր գյուղերից բազմաթիվ ուխտավորներ, որը ծիծիկ կամ ջորիով, որը բոքիկ ոտով, անողորմաբար բզգելով ծանր անասունը, ընտանիքի մեծ ու փոքրով շրջապատված՝ շտապում էին Վարդավառի տոնին սարը բարձրանալ: Իրենց բեռը ներքևում՝ սարի ստորոտին թողնելով, նրանք մի քանի արահետներով շարան-շարան ձգվում էին սարն ի վեր դեպի գագաթը, որտեղ կոպիտ խաչքանդակներով զարդարված վիմաքարեր են կուտակված մի անհայտ գերեզմանի վրա: Այստեղ լույսեր՝ մոմեր վառելով՝ կացնում էին քարերին, վառում էին կոպիտ կավե ճրագների բամբակե պատրուկները, բարեպաշտությամբ համբուրում էին քարերը և իրենց ջերմեռանդ աղոթքները դեպի արևելք առաքելով՝ հայցում էին մուրազների կատարում: Այնուհետև իջնում էին սարերից և լճից ոչ հեռու մի տափարակ հրապարակի վրա, բերած մատաղացուն մորթում: Քահանաներն իրենց տիրացուների հետ մեկի մոտից մյուսի մոտ վազվզելով՝ իրենց հասանելիք ոչխարի կամ գառան բուրդն ու մորթին էին հավաքում: Շուրջը վիստում էին մանրավաճառներ, խնձորեսկի աշուղներն այս և այն խմբին միանալով՝ իրենց երգի ու նվագի համար մեծարվում էին և իրենց վարձատրությունը ստանում»:

Ուխտագնացության վերջին կանգառում. զրույց ամենալուսավոր, ամենապայծառ, «արցունքի պես ջինջ» Բակունցի մասին

Մեր վերջին կանգառն Ակներ գյուղի յայլադատեղին էր: Հյուրընկալվեցինք Սպարտակ Մինասյանի ընտանեկան ուրթում, որ քարե տնակ էր:

Սպարտակի հրաշալի մայրը՝ տիկին Սոսիկն առատալի սուփրա բացեց և ամենակարևորը՝ մեզ գոմշի մածուն առաջարկեց:

...Սպարտակ Մինասյանը շուտով մեր զրույցը տարավ այլ՝ գրականագիտական, ավելի ստույգ՝ Բակունցյան թեմայի ուղղությամբ:

Մորական կողմից Բակունցը սերում է Վերիշենից: Եվ ամենայն հավանականությամբ նա իր հարսություն (Արթին) պապի հետ մանկության տարիներին բազմիցս եղել է Իշխանասարի հովիտներում: Այնպես որ՝ Բակունցը գրական-

նություն էր մտել իր աշխարհից՝ Գորիսից ու Չանգեզուրից և դրանց հիման վրա էր ստեղծել իր աշխարհը:

Սպարտակ Մինասյանն Ակների և Վերիշենի տարեցներից է լսել՝ տեղանունները, դարձվածքները, որոնցով վերնագրված են Բակունցի շատ գործեր, գրողը վերցրել է հենց այս վայրերից:

Օրինակ «Ալպիական մանուշակ» գլուխգործոցային ստեղծագործությունը...

Նուրբ և քնարական այդ պատմվածքի վերնագիրը կարող էր ծնվել միայն Մեծ Իշխանասարի լանջերին փռված դեղնավուն (ծիրանագույն) մանուշակներից: Միայն այդ մանուշակների ազդեցությամբ կարելի էր կյանքի բանաստեղծական ընկալման այնպիսի համադրության հասնել, որ տեսնում եք պատմվածքում:

Կամ «Կարմրաքար» վեպը, որից մեզ հատվածներ են հասել:

Անշուշտ, վեպը Կարմրաքար անունով գյուղի մասին է, որն ավելի ճիշտ 1914-ից առաջ եղած հայկական գյուղերի ընդհանրական պատկերն է:

Արդյո՞ք այդ տեղանունը Բակունցը չի վերցրել Մեծ Իշխանասարի ճանապարհին գտնվող Մթնածորի Կարմիր քարից, որ նաև Կարմրաքար է կոչվում:

Իսկ Մթնածորի ասքը (և՛ պատմվածքների շարքը, և՛ նույնանուն պատմվածքը, և՛ «Մթնածորի չարքը»)...

Հիշո՞ւմ եք, թե ինչպես է սկսում «Մթնածորը» պատմվածքը. «Մի ուրույն աշխարհ է Մթնածորը...»:

Այդ վայրերում 20-րդ դարասկզբին դեռ հզոր էին առասպելները, հեթանոս դարերի շուկը, որոնց ազդեցությունը տեսնում ենք «Մթնածորը» շարքի պատմվածքներում:

Արդյո՞ք Իշխանասարի ստորոտում գտնվող Մթնածոր տեղանունը չէ, որ գրական աշխարհ է տեղափոխել Բակունցը: Ի վերջո Մթնածորը դա ձոր չէ սոսկ, այլ...

Մթնածորը դա Չանգեզուր-Սյունիք աշխարհն է: Մթնածորը Բակունցի համար դարձել է մեծ աշխարհ, մի ուրույն աշխարհ: Եվ այնքան էր Բակունցը խորացել այդ աշխարհում, որ Չարենցը զգուշացրեց՝ «Աշխատիր, սակայն, որ մույթ այդ ձորում/ Քո պայծառ ուղին անդարձ չկորչի»:

3.4. ...Երանի այն հավերժին, որ ամեն օր բարձրանում են Իշխան Մեծ սարի գագաթ:

Երանի այն ամպերին, որ ժամանակ առ ժամանակ գրկում են Մեծ Իշխանասարի կատարները:

Երանի այն ուխտավորներին, որ նոր-նոր պիտի բարձրանան Սրբասարի գագաթ:

ՀԻՇՈՐՈՒԹՅՈՒՆ ...



Հայոց Արցախում ամեն տարի նշվում էր Ակսել Բակունցի ծննդյան օրը

120-ամյակին նվիրված հուշ-ցերեկույթի մասին՝
ահապատիկ...

Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի և ԱՀ գրողների միության համատեղ նախաձեռնությամբ հունիսի 14-ին բուհում կայացել է հուշ-ցերեկույթ՝ նվիրված Ակսել Բակունցի ծննդյան 120-ամյակին:

Միջոցառմանը բացման խոսքով հանդես է եկել ԱՀ գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանը: Նա, ողջունելով ներկաներին, նշել է, որ իրենք հավաքվել են իրենց երախտագիտության տուրքը մատուցելու հայ գրականության ամենավառ ներկայացուցիչներից մեկին՝ Ակսել Բակունցին:

«Բակունցը հայ արձակի ամենախնթափա երևույթներից մեկն է, ով

իր ձեռագրով ու մտածողությամբ ստեղծեց մի Նոր աշխարհ: Նա թողել է սնուցող, հողդեղեն ժառանգություն, որից սնվել ու դաստիարակվել են սերունդներ: Հայ գրականությունն առանց Բակունցի շատ աղբատ կլիներ: Նա կարողացավ բնության մեջ խոսեցնել մարդուն և Նրան տանել դեպի բնություն: Գրողի նորույթն ու անմահությունը Նրա ստեղծած իրականության մեջ է: Բակունցի մահը եղավ շատ դաժան: Նրան սպա-

նեցին՝ թաղելով իր իսկ ձեռքով փորած փոսի մեջ», – մասնավորապես ասել է Նա:

Գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ամալ-

յա Գրիգորյանն էլ իր ելույթում նշել է, որ չնայած Ակսել Բակունցն ունեցավ մեկ տասնամյակի գրական կյանք, սակայն իր գունեղ արվեստով խոր հետք թողեց հայ արձակի զարգացման մեջ:

«Բակունցի նկատմամբ գրական հակառակորդների կողմից ծայր էին առել բամբասանքն ու բանասարկությունը: Գրողի հասցեին քաղաքական ծանրագույն մեղադրանքներ էին բարդվել: Նրան ձերբակալել են՝ եղերական մահով գրկելով կյանքից: Ակսել Բակունցը, լիովին նվիրված լինելով գրականությանը, պատկերել է իր վերածնված ժողովրդի դաժան անցյալն ու պայծառ ներկան: Գրողի աշխատություններին փառավոր կյանք ու ապագա է վիճակված», – մասնավորապես ասել է Նա:

Հուշ-ցերեկույթին ներկա բանաստեղծ Ռոբերտ Եսայանն էլ մասնավորապես ասել է, որ Բակունցի ստեղծագործություններն ալպիական ներդաշնակություն ու Նոր լիցք են հաղորդում ժողովրդի ապրելակերպին ու ներաշխարհին:

Ելույթներով հանդես են եկել Նաև ԱՀ գրողների միության անդամներ, բուհի դասախոսներ:





13 Հունիսի 2022թ., ԱՐՑԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԻՍՈՒՄ ՎԵՐՋԻՆ ԱՆՁԱՄ ՍԱՍՆԱԿՑԵՑ ԲԱԿՈՒՆՅԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱՍԵՆԱՄՅԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆԸ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՅԻ ԾՆՆՈՅԱՆ 123-ԱՄԿԱԿԻ ՕՐՆ ԷՐ

Իմաստախոսությունն ասում է՝ «Միլիոնավոր մարդկանցից, որ ժողովուրդ են կազմում, ծնվում է միայն մի հանճար, ապարդյուն անցնող միլիոնավոր ժամերից միայն մեկն է դառնում իրոք պատմական: Եվ դա մարդկության աստեղային ժամն է»: Հայ ժողովրդի համար այդ աստեղային պահերից մեկն էլ 1899 թվականի հունիսի 13-ն էր՝ հայ արձակի բյուրեղային վարպետներից մեկի՝ Ակսել Բակունցի ծննդյան տեսլաժամը:

Այսօր Գորիսում մեծ շուքով նշվեց մեծանուն արձակագրի ծննդյան 123-ամյակը: Միջոցառումները մեկնարկեցին Բակունցի հուշարձանի մոտ ծաղկեղման արարողությամբ, ապա շարունակվեցին գրողի տուն-թանգարանում:

Բակունցի լուսաճառագ հարկի տակ հավաքված պաշտոնատար անձինք՝ Գո-

րիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի գլխավորությամբ, մտավորական ընտրանու ներկայացուցիչները, մայրաքաղաքից ժամանած հյուրերը, որոնց թվում՝ մայր թանգարանի տնօրեն Վահագն Սարգսյանը, Հայաստանի գրողների միության նախագահ Էդուարդ Միլիտոնյանը, Արցախի գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանը, գրականագետ, բ.գ.դ., պրոֆեսոր Դ.Գասպարյանը և ուրիշներ, իրենց ելույթներում շեշտեցին Բակունցի ստեղծագործության պատմական նշանակությունը, կարևորեցին բոլոր այն ձեռնարկները, որոնք միտված են նրա գրական հեղինակության ամրապնդմանը, ստեղծագործության հանրայնացմանը և սերունդներին Բակունցի իմաստուն ու լուսավոր մտքի ճանապարհով ուղղորդելու առաքելությանը:

Օրվա առթիվ Բակունցի տուն-թանգարանը Գորիս համայնքի, Նաև մյուս համայնքների մշակութային, կրթական

ու ստեղծագործական կառույցների համատեղ ուժերով բակունցասերներին ներկայացավ միջոցառումների հարուստ ծրագրով: Այցելուները անգնահատելի հնարավորություն ունեցան հաղորդակցվելու Բակունցի՝ «մյուռնի նման սրբազնագույն» աշխարհին, ներշնչվելու նրա հոգևոր ներկայությամբ:

Օրվա առթիվ թանգարանում բացվեց նոր, բացառիկ ցուցադրություն՝ «Հովհաննես Թումանյանի ծննդավայրը Ակսել Բակունցի լուսանկարներում» խորագրով: Առաջին անգամ ցուցադրվեցին 1932թ.-ին Բակունցի կողմից Դսեղում արված և մայր թանգարանի Թումանյանի ֆոնդում պահվող արխիվային լուսանկարները՝ հեղինակի ձեռագիր նշումներով: Ցուցադրությունը ներկայացրեց նախաձեռնության հեղինակ, բ.գ.թ., դոցենտ Թեմիմա Մարությանը: «Այս լուսանկարները թանգարանում ցուցադրվող լուսանկարչական սարքով գրողի կողմից արված բացառիկ գտածոներ են: 1932 թվականին Բակունցը Հովհաննես Թումանյանի դստեր՝ Նվարդի հետ այցելել է Դսեղ և լուսանկարել իր սիրելի բանաստեղծի ծննդավայրը», - նշեց Մարությանը և հավելեց, որ Բակունցի ծննդյան օրվա առթիվ ցուցադրության են նախա-

Կատարաստվել այդ լուսանկարներից միայն 9-ը, որովհետև հստակ գրառումներ ու թվագրումներ ունեն, իսկ մյուս 10-ը հեղինակային հստակեցման, լրացուցիչ ճշգրտման կարիք ունեն, որից հետո հնարավոր կլինի ամբողջացնել հավաքածուն և ցուցադրել ամբողջությամբ:

Հիգիյանի անվան գեղագիտության կենտրոնի Գորիսի մասնաճյուղի տնօրեն, գեղանկարիչ Արամ Մաշուկյանի ջանքերով Բակունցի հարկի ներքո կյանքի կոչվեց ևս մեկ կարևոր իրադարձություն: Գորիսը գեղանկարիչների մի փայլուն համաստեղություն է տվել, որոնց շարքում առանձնանում է ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Գուրոսը և նրա ոչ պակաս տաղանդավոր որդին՝ Գևորգ Պարոնյանը: Տեսական ժամանակ անց նրա ժառանգների պատրաստակամության արդյունքում թանգարանում բացվեց Գևորգ Պարոնյանի ցուցահանդեսը:

Օրվա խճանկարին վառ գույներ հաղորդեցին Տաթևի վանական համալիրի «Տաթևի զանգակներ» երգչախումբը (գեղարվեստական ղեկավար՝ Լուսինե Սարգսյան), Գորիսի «Լիլի Լարիսյան» պարային համույթը (գեղ. ղեկավար՝ Լիլի Լարիսյան), «Վահե Մելքումյան» երգի ու պարի դպրոցի վոկալ խումբը (գեղ. ղեկավար՝ Վահե Մելքումյան), Խնձորեսկի Ա.Աթոռնցի անվան երաժշտական դպրոցի երգչախումբը (գեղ. ղեկավար՝ Սոնա Մանվելյան):

Հյուրերը գրողի ստեղծագործությունների բույրն ու հմայքը մեկ անգամ ևս վայելեցին Ակսել Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոցի աշակերտների շնորհիվ, որոնք հանդես եկան Բակունցի գրական դիմանկարն ամբողջացնող գեղարվեստական կոմպոզիցիայի մատուցմամբ (ուսուցչուհի՝ Գոհար Մկրտչյան):

«Ալպիական մանուշակ» երգի կատարմամբ Բակունցյան օրվան ծաղկաբույր լիցքեր հաղորդեց գորիսեցի ճանաչ-



ված երգիչ Արկադիա Մարոյանը:

Միջոցառումների շարքն ամփոփվեց մի գեղեցիկ իրադարձությամբ: Գեղանկարիչ Սևադա Գրիգորյանն իր վրձնած «Ակսել Բակունցի դիմանկարը» նվիրեց գրողի տուն-թանգարանին:

Երեկ, այսօր, վաղը և հավիտյանս հավիտենից Դու մեզ հետ ես, մեր աչքերի մեջ ու մեր հայացքի առջև, քո տանն ես՝ իբրև հավերժական տանտեր և դարձյալ մեզ հետ գեղարվեստական խոսքի քո եղանակն է, քո խոսքի հազարը: Եվ այս փոթորկահույզ օրերին քո ոգու նշանի ներքո չկամ նահանջ, չկամ պարտություն, որովհետև դու քո «հերոսական կենսունդին» անցար առանց ետ շրջվելու, քո ցեղի նահատակաց ու ողջերին քո գիրկն առած, նրանց խինդ ու լացը քո սրտի խորքերում պահած...

Դու քո կենդանի տաճարը կառուցեցիր գրիվ և հավերժության համար, և որտեղ ոգեղեն հացը իրավամբ բաշխվում է ձրի, ձրի, քանզի դրա համար դու հատուցել էիր կանխավ և հատուցել էիր կյանքով: Եվ սրբազան է հար տառապանքով ծնված ճշմարտությունը քո՝ դարեդար և սերնդեսերունդ. «Աշխարհքս միշտ կմնա, ասա մարդը սևերես չմնա...»:

Ծնունդդ շնորհավոր, Մեծ գորիսեցի...

**ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ
13 Հունիսի 2022 թ.**



ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆԳԻ ՏՈՒՆ-ԹԱՆՁԱՐԱՆԸ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆԳ-125. տուն, որ միշտ մեզ հետ է...

Երկրի ու ազգի համար այս տաղնապալի օրերին Գորիսը նշում է հայ մեծանուն գրող Ակսել Բակունցի 125-րդ տարեդարձը: Ակսել Բակունցի տուն-թանգարանն ինչպե՞ս է դիմավորում այն, ինչպիսի՞ աշխատանքներ են կատարվում հորեյանին ընդառաջ, և ի՞նչ ծրագրեր ունեն: Այս հարցերի շուրջ է գրույցը տուն-թանգարանի վարիչ Վարդան Սարգսյանի հետ:



- 3 արգելի Վարդան, հունիսի 13-ին լրանում է մեր մեծ հայրենակցի՝ Ակսել Բակունցի 125-րդ ամյակը: Ինչպե՞ս եք պատրաստվում դիմավորել գրողի տարեդարձը, այդ առթիվ՝ ձեր և մայր թանգարանի անելիքները:

– Տարվա մեջ ոչ միայն տուն-թանգարանի, այլև ողջ քաղաքի համար Բակունցի տարեդարձը նշելն ամենակարևոր իրադարձությունն է:

Դեռ ամիսներ առաջ ենք նախապատրաստական աշխատանքների մեկնարկը տվել, աշխատում ենք այդ ուղղությամբ:

Տարեդարձի նախաձեռնող խմբով ծրագրել ենք գրողին արժանի մակարդակով՝ պատվով նշել, ինչը հաջողությամբ առաջ է ընթանում:

Մտահղացումները շատ են, կառանձնացնեմ կազմակերպվելիք մի շարք միջոցառումներ. պատրաստվում ենք կազմակերպել մեկ տասնյակ հայ նկարիչների սիմպոզիում, որին կմասնակցեն Հայաստանի տարբեր բնակավայրերից ճանաչված նկարիչներ: Հինգ օր շարունակ օթևանելով այստեղ, և ապահովելով նրանց գիշերակացը, բակունցյան թեմաներով

2024-ը հայտարարվել է Բակունցյան տարի և այն կնշանավորենք գրողի ստեղծագործական կյանքի ուսումնասիրմամբ ու բացահայտումներով, նրան նվիրված տարբեր միջոցառումներով, որոնցից մեկն էլ կլինի Գորիսի պետական համալսարանում կազմակերպվելիք գիտաժողովը, որին կմասնակցեն ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ներկայացուցիչներ, բակունցագիտության ոլորտում հայտնի գրականագետներ:

կստեղծագործեն, այնուհետ՝ կտավները կցուցադրվեն գրողի տարեդարձին:

Կտավներից մեկական ստեղծագործություն կնվիրեն թանգարանի ֆոնդին...

Մայրաքաղաքից կիրավորենք հայտնի երաժշտախմբեր, որոնք կարժևորեն տունը դասական ու ազգային երաժշտության, երգերի կատարումներով:

Ունենք Գորիս-Վիեն մշակութային ջերմ կապեր, գործի կղզվեն Նաև դրանք:

Գորիսի Վ. Վաղարշյանի անվան պետական թատրոնը, ավանդույթի համաձայն, իր ստեղծագործական կազմով հանդես կգա բակունցյան թեմաներով, նրա ստեղծագործությունների տիպաժների ցուցադրությամբ:

Տոկին կներգրավվեն քաղաքի մշակութային-ստեղծագործական բոլոր ուժերը:

2024-ը հայտարարվել է Բակունցյան տարի, և այն կնշանավորենք գրողի ստեղծագործական կյանքի ուսումնասիրմամբ ու բացահայտումներով, նրան նվիրված տարբեր միջոցառումներով, որոնցից մեկն էլ կլինի Գորիսի պետական համալսարանում կազմակերպվելիք գիտաժողովը, որին կմասնակ-



Լ ցեն 33 ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ներկայացուցիչներ, բալունցագիտության ոլորտում հայտնի գրականագետներ:

– **Նախորդ գրույցներից հիշում եմ, որ տուն-թանգարանը նախաձեռնել էր Ակսել Բակունցի ստեղծագործությունների բազմալեզու հրատարակություն. իրականացվե՞լ է այդ ծրագիրը:**

– Ցավոք, ոչ՝ ամբողջությամբ, բայց գրողի ընտրանուց առանձնացվել են որոշ պատմվածքներ, ներկայացվել հրատարակության, և հիմա պատրաստի գիրքը տպարանում է, կարոտ՝ տպագրության:

Բակունց գրողին թարգմանելն այդքան էլ հեշտ չէ, ժամանակատար էր, բայց այն խիստ անհրաժեշտ է՝ տուն-թանգարան այցելող օտարալեզու մեր հյուրերին տրամադրելու, գրողի հետ ծանոթացնելու, նրանց միջոցով Բակունցի ստեղծագործություններն օտարալեզու ընթերցողին հասանելի դարձնելու, նրա ստեղծագործությունները հանրայնացնելու համար:

– **Գրողի տարեդարձին ընդառաջ՝ տուն-թանգարանում կատարվելիք թարմացման, տեխնիկական աշխատանքների մասին:**

– Հաշվի առնելով մեր անուրախ իրականությունը, ավելին՝ ժողովրդի տխուր տրամադրությունները՝ կապված տարածաշրջանի, ողջ Հայաստանի, մասնավորապես՝ Արցախյան ողբերգական անցքերի հետ, մեր ջանքերը պետք է տասնապատենք, մի փոքր կարողանաք տոնական դարձնել մթնոլորտը, ավանդույթի համաձայն քաղաքը ողողենք բակունցյան շնչով ու կոլորիտով:

Մեր հայրենակից գրողի հորեղանդ պետք է նշվի ըստ արժանվույն, բնականաբար, նախապես կկատարվի տարածքի բարեկարգում, այս տարի նաև կթարմացվեն տան պատշգամբն ամբողջությամբ, դարպասներն ու նստարանները:

Միջոցառումների, կատարվելիք աշխատանքների ցանկն արդեն ներկայացրել ենք մայր թանգարանին, պայմանավորվածության համաձայն՝ շուտով նրա իրավասուները կայցելեն մեզ, մոտիկից կծանոթանան խնդիրներին ու ծրագրերին:

Փառք Աստծո, չունենք շենքի անվտանգության համակարգի, ջեռուցման, հիմնանորոգման խնդիր:

– **Քանի որ խոսեցինք տեխնիկական բնույթի խնդիրներից, քաղաքի առաջին հայկական՝ ծխական դպրոցի շենքից էլ խոսենք, որտեղ սովորել է գրողը:**

Տեղյակ եմ, որ այդտեղ հանդիսավոր պայմաններում տեղադրվել է հուշատախտակ, միաժամանակ, բոլորիս հայտնի է, որ շենքը բակի

կողմից գտնվում է ծայրահեղ անսխիթար վիճակում:

Հէ՛ք ուզում պատկան մարմիններին ներկայացնել նաև այդ հարցը, գոնե՝ մասնակի, թեկուզ մեկ դասարան, որտեղ գրաճանաչ է դարձել մեծ արձակագիրը:

– Հարցը, ցավոք, առայժմ երազանքների շարքից է, բանի որ տարիների ընթացքում շենքում բնակություն են հաստատել և սեփականաշնորհել մարդիկ, որոնց տներից գրկելը ողջամիտ չի լինի:

Բայց, ինչ խոսք, մեկ դասարանի վերականգնման հարցը, կարծում եմ, դժվար չի լուծել, լավ հարց է, այսպիսի հարցեր էլի ունենք, որը ժամանակի ընթացքում պետք է առաջադրվեն:

Իսկ ընդհանրապես, ճիշտ կլինի՝ շենքն ամբողջությամբ դարձնել Գորիսի պատմամշակութային արժեք, սրբոցն պահպանել այն՝ որպես քաղաքի առաջին ծխական կոթոջախ:

Առհասարակ, գրողի հետ կապված ամեն մասունք՝ իրեղեն, թե հուշի տեսքով, պետք է վեր հանվեն ու որպես մշակութային արժեք՝ հղկվեն ու պահպանվեն:

– **Տուն-թանգարանի հաստիքների կարգավորման, աշխատակազմի բարոյահոգեբանական մթնոլորտի մասին էլի ենք խոսել, կարելի՞ է դրանք համարել լուծված: Ունե՞ք այս հարցում բաց տեղեր:**

– Այո, հաստիքների հարցը կարելի է համարել լուծված, այժմ յուրաքանչյուր աշխատող իր տեղում է՝ այգեպան, գիտաշխատող, թե՛ հավաքարար ու հսկող, ճանաչում են իրենց հիմնական պարտականությունները, բարոյահոգեբանական մթնոլորտն էլ անհամեմատ լավ վիճակում է:

Բաց տեղեր, այնուամենայնիվ, կան: Թանգարանի աշխատանքները ժամանակակից պահանջներին համահունչ կազմակերպելու համար մեզ անհրաժեշտ են նոր՝ համակարգչային, օտար լեզվի իմացության, կրթական ծրագրերի մասնագետներ, որոնց առկայությունն ուղղակի պարտադիր է:

Գրողի 125-րդ հորեղանակյան տարեդարձը պետք է տարբերվի նախորդ բոլոր տարեդարձներից՝ բոլոր առումներով, և, ինչպես տեսնում եք, ուրվագիծն արդեն ենթադրում է այդ մասին:

– **Վերջին հինգ տարում կա՞ն հիշարժան և իրագործված մտահղացումներ՝ Բակունց գրողին հավերժացնող՝ հաշվի առնելով, իհարկե, համաճարակի, 44-օրյա պատերազմի, երկրում տիրող ռազմաքաղաքական արհավիրքի՝ դեռ շարունակվող առկայությունները:**

– Իրոք, վերջին հինգ տարում արհավիրքների միջով անցանք ու դեռ անցնում ենք, բայց, բարեբախտաբար, կան իրա-

գործված ծրագրեր, և դրանցից հատուկ կառանձնացնեմ Ակսել Բակունցի անունը կրող քաղաքի թիվ 1 դպրոցի մուտքի մոտ վերջերս տեղադրված գրողի բազալտե հուշարձանը:

Կուգեի նշել հուշարձանի հեղինակ, քանդակագործ, լուսահոգի Միքայել Դուկասյանի անունը, ով 2014-ին հանձն էր առել նաև տուն-թանգարանի շենքի մոտ տեղադրված հուշարձանի պատրաստումը:

Կա մեկ կարևոր խնդիր, որի շուրջ մտորումս վարդուց է:

Մեծ գրողի հուշարձաններ, անվանակոչված հրապարակներ, դպրոցներ կան 33 տարբեր բնակավայրերում, բայց այս ուղղությամբ անելիքներ դեռ ունենք. ահա մեկը՝ հայոց մայրաքաղաքում միևնույն չկա նրա հուշարձանը:

Ընդամենն Ազգային գրադարանում տեղադրված է գրողի կիսանդրին...

Այս թերացումը, վստահ եմ, հուզում է ոչ միայն ինձ, նաև՝ Գորիսի հասարակությանը:

Ինչպե՞ս կարելի է հայ մեծ բանաստեղծ Եղիշե Զարենցի ամենամոտ ընկերոջ, հայ արձակի երևելի դեմքի հուշարձանը չկանգնեցնել Երևանում, ինչը համալիր լուծում է պահանջում համապատասխան այգում, ներդաշնակ՝ տարածքի հետ, ինչի համար պահանջվում են ֆինանսական ծախսեր, հարցին՝ լուրջ և մասնագիտական մոտեցում:

Ժամանակին հարցը ներկայացրել էմ 33 չորրորդ նախագահ Արմեն Սարգսյանին, ով քննարկել էր այն, նույնիսկ տեղն էր որոշվել Օղակաձև այգում, բայց, ցավոք, կիսատ մնաց...

Ինչ արած, պարտավոր եմ նորից հարցը բարձրացնել, ամեն ազնիվ հայի սրբազան պարտքն ու պատիվն է՝ մեծ գրողին գնահատել ըստ պատշաճի, հանուն վաղվա սերունդների, հայ ու հայեցի մալու, հայ մշակույթը պանծացնելու մեր տան սրտում:

Առանց ձգձգելու՝ հարցը նորից հստակ կդնենք պատկան մարմինների առջև:

Վստահ եմ այս խնդիրը վաղ թե ուշ կլուծվի, Երևանը մայրաքաղաքին վայել՝ Բակունցի հուշակոթող կունենա...

– **Ի՞նչ կասեք տուն-թանգարանի ցուցասրահի, նրա նոր ցուցադրությունների, առհասարակ, բակունցյան մասունքները վեր հանելու ձեր առաքելության մասին:**

– Թանգարանի ցուցասրահը բացվել է տաք տարի առաջ: Պետք է ասել, ցուցադրվող նմուշներն էլ ֆիզիկապես փոքր-ինչ մաշվել են, կարիք ունեն թարմացման ու նորացման:

Գրողի տարեդարձին ընդառաջ՝ որոշել ենք արխիվային նոր նյութերով թարմացնել ցուցադրությունները, ավելի մանրամասն ներկայացնել Բակունցի կյանքի

դրվագները:

Ծրագիրը ներկայացվել է մայր թանգարանի ղեկավարությանը, սպասում ենք համապատասխան մասնագետի այցին՝ ծանոթացնելու բովանդակային և որակական առումով՝ մեր առաջարկներին:

Արխիվային որոշ նյութեր արդեն առանձնացրել ենք՝ նոր ցուցադրության ներկայացնելու:

Առաջիկայում նախատեսված է արխիվի ամբողջությամբ թվայնացնելու՝ հանրամատչելի և այցելուներին հասանելի դարձնելու, Բակունցի կյանքով և ստեղծագործություններով հետաքրքրող յուրաքանչյուր անձի համար:

– Հաջողվում է բակունցյան նոր հիշողություններ հայտնաբերել շառավիղից դուրս եկած, մեր անկանխատեսելի, վստահորեն՝ սրբուրաց ժամանակներում: ԶԷ՝ որ վերջին երեք տասնամյակում մարդկային ու մշակութային արժեքների պղծումի և ուրացումի միտումը կարծես խորացել է:

– Դա այդպես է, բայց թանգարանի համար յուրաքանչյուր բակունցյան պատահիկ մեծ ձեռքբերում է, մեզ հետաքրքիր է մեծ գրողի մասին յուրաքանչյուր պահպանված մանրամասնություն՝ իր սիրելի Կյորենի անգլագական և գրնգուն գույներով:

Գրողն այնքան կարճատև կյանք է ունեցել, նրա մասին և հուշերն են քիչ, և հուշ պատմողները ֆիզիկապես վաղուց չկան:

Բարեբախտաբար, գրողի 120-րդ տարեդարձից առաջ ծանոթացա պատրաստի, ցավի՞ր՝ անտիպ գրքի տեսքով, ձեր գրի առած հուշապատումներին:

Ցավալի ու նաև մեր թերացումն է, որ հինգ տարում չկարողացանք գիրքը տպագրության հանձնել:

Այն Բակունցի ու նրա ընտանիքի մասին հուշերի մի գեղեցիկ համադրություն է, ընդհանուր առմամբ՝ թանկ հիշատակություններ՝ Գորիս այցելած հայ մեծերի՝ Վիլյամ Սարգսյանի, Պարույր Սևակի, Վահրամ Փափազյանի, Վախթանգ Անանյանի, հայ մյուս երևելիների մասին, ովքեր պատմվել են առաջին ղեմքերի վկայությամբ՝ ձեր ծնողների կողմից, գրողին անմիջական առնչված և արյունակից մարդկանց՝ Բակունց Ավագի միտումնաբերական շուշան տատի, պապի՝ քաղաքի երբեմնի մեծահարուստ, Ավագիմովների կրտսեր եղբայր Դանիել Զովակիմյանի պատմությունների հետ, ով ժամանակին իր տան կտուրում թաքցրել, ամիսներ շարունակ պահել է գրողի միտումնաբերական որոնում՝ 12-ամյա Սևադային, այսպիսով՝ տղային փրկելով մոր հետ աքսորվելու աղետից, վտանգելով իր և իր մեծ գերդաստանի՝ յոթ երեխաների ու կնոջ՝

Շուշան Բակունցի կյանքը...

Ձեր մի հրապարակումից հիշում եմ, որ Նույնիսկ Ակսել Բակունցը, ով հանձարեղ «Կյորեն» վիպակում, լրագրական նոթերում անխնայ ծաղկել է Գորիսի մեծահարուստներին, բեգերին, նրանց ճոթերին, «աչք է փակել» մեծահարուստ պապի՞ր՝ Ավագիմով Դանիելի վրա, և ոչ թե նրա համար, որ իր զարմուհու ամուսինն էր, այլ հաշվի էր նստել Կյորենի ու Գորիսի թյախի խախտի քաղցր աչքով նայելու, նրանց պարտքերը բաշխելու, «ծանր կշռելու և քիչ առնելու» նրա մեծասրտության հետ:

Ցնցող էր, երբ իմացա, որ Դուք հասցրել եք Բակունցի ընտանիքի և նրա կնոջ՝ Վարվառա Զիվիչյանի մասին հուշեր քաղել նաև Բոխազգյուղ մայրիկի ու Ստեփան դայու լուսահողի հարևաններից՝ Մարգո տատիկից և Խասան Հարությունյանից, և նրա մայր Հազարավարդից:

Ցավալի է, որ մինչ այժմ այս հուշապատումների գիրքը չի տպագրվել, դրանք արժեքավոր և բացառիկ գրառումներ են, որոնք կարող են կորչել, եթե չտպագրվեն ժամանակին:

Սա նաև մեր՝ տուն-թանգարանի խնդիրն էմ համարում, հույս ունեմ՝ այդ հարցն էլ առաջին իսկ հնարավորության դեպքում կլուծվի՝ գրողի 125-րդ տարեդարձին ընդամենը կամ տարվա ընթացքում:

Այս և այլ բարի մտորումներով, մտահղացումներով, ծրագրեր-առաջարկներով ենք նաև դիմավորում մեր մեծ հայրենակցի՝ Ակսել Բակունցի ծննդյան 125-րդ տարեդարձը, և, ինչպես ասացի, նոր ու հետաքրքիր անակնկալներ են սպասվում տարեդարձի մասնակիցներին, գրականության, մշակույթի գործիչներին, հեռավոր վայրերում ապրող գրողի հարազատներին, ի վերջո, մեր սիրելի Գորիս քաղաքին:

– Հնորակալություն հուշագրություններին փոքրիկ մատյանի մասին հիշատակելու, լավ ազդակներով գրույցի համար: Բարին ընդամենը՝ բողոք:

ԶՈՐԻՅՑԸ՝ ՍՈՒՄԱՆԱԸ ԲԱԲԱՏԱՆՅԱՆԻ



ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆԳԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ



ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆԳԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱԳՈՒՄԸ

Հանդիսավոր պայմաններում երեկ (1970 թ. սեպտեմբերի 17) Գորիսում բացվեց սովետահայ ականավոր գրող Ակսել Բակունցի տուն-թանգարանը: Այն տեղավորված է բաղաձիգ Լենինի փողոցի № 31 տանը, որտեղ ծնվել, իր մանկությունն ու պատանեկությունն է անցկացրել գրողը:

Տուն-թանգարանի բացման առթիվ այստեղ էին հավաքվել շրջանի աշխատավորության հազարավոր ներկայացուցիչներ, գրողներ, արվեստագետներ, կուսակցական, սովետական աշխատողներ:

Բացման խոսքով հանդես եկավ ՀԿԿ Գորիսի շրջկոմի առաջին քարտուղար Զ. Պետրոսյանը: Հայաստանի գրողների միության անունից ողջույնի խոսք ասաց Հմայակ Սիրասը: Բանաստեղծ Սարմենն արտասանեց Բակունցին նվիրված իր ստեղծագործությունը: Այնուհետև ելույթ ունեցան Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրի տեղակալ Ս. Գասպարյանը, № 2 միջնակարգ դպրոցի դիրեկտոր Ռ. Պետրոսյանը և ուրիշներ:

Ներկաները ծաղկեփնջեր դրեցին Բակունցի հուշարձանին, ապա տուն-թանգարանում ծանոթացան Ակսել Բակունցի կյանքին ու գրական գործունեությանը: Ուշագրավ են գրողի դպրոցական և ուսանողական տարիների մասին պատմող ցուցանմուշները: Անվանի արձակագիրը

սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Թբիլիսիի պոլիտեխնիկումում, Խարկովի գյուղատնտեսական համալսարանում, որն ավարտելուց հետո ուսուցչություն է արել Սիսիանի շրջանի Լոր գյուղում, աշխատել որպես գյուղատնտես:

Այստեղ պատկերված են նաև ճեմարանի նրա ուսուցիչների՝ Կոմիտասի, Մանուկ Աբեղյանի, Աշոտ Յովհաննիսյանի և այլոց դիմանկարները:

Առանձին տեղ է հատկացված Բակունցի գրական ստեղծագործություններին, հոդվածներին ու ճառերին: Այս բաժնում կան «Եղբայրության ընկուզենիները», «Սև ցեղերի սերմնացանը», «Մթնածորը» պատմվածքի առաջին հրատարակությունները, «Խաչատուր Աբովյան» անավարտ վեպը, գրողի մի քանի ստեղծագործությունների գերմաներեն, անգլերեն և ֆրանսերեն թարգմանությունները: Ցուցադրված են նաև Բակունցի մասին Մարտիրոս Սարյանի, Մարշակի, Եղիշե Չարենցի, Արշակ Չոպանյանի, Մարիետա Շահինյանի, Վահրամ Ավագանի և մյուս ականավոր գործիչների նամակներն ու ասույթները, նրանց ծայնագրված ելույթների ժապավենները:

Ցուցասրահի կողքին նախկին տեսքով պահպանվել է գրողի սենյակը, որտեղ կարելի է տեսնել հացենու փայտից պատրաստված մահճակալը, իսկ վերևում՝ գրողի մոր յուղաներկ նկարը, որը պատկանում է Մարտիրոս Սարյանի վրձնին: Այստեղ են նաև գրողի անձնական իրերը: Գրապահարանում նրա սիրելի հեղինակների՝ Թումանյանի, Այգեկցու, Չարենցի, Գոգոլի, Չեխովի, Նեկրասովի, Լերմոնտովի ստեղծագործություններն են: Այս բոլորը տուն-թանգարանին են նվիրել գրողի հարազատները, ընկերներն ու ժամանակակիցները:

**«ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆ», № 219, 18
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1970 թ.**



ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ

Պատառիկներ Ակսել Բակունցի տուն-թանգարանի հուշամատյանից

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գաբրիել Սունդուկյանը ստեղծագործել սկսեց այն տարիքում, ինչ տարիքում վայրագաբար ու հրեշաբար կտրեցին գեղարվեստական խոսքի մեծագույն վարպետ, Սյունյաց աշխարհի բառ ու բանի անգերազանցելի գիտակ Ակսել Բակունցի կյանքի թելը...

Ակսել Բակունցի, իբրև աստվածատուր գրողի, մեծությունը շատ ավելի պարզ կդառնա հետագա դարերում, և այնքան կապրի նա, որքան կապրի ու կգոյատևի հայ ժողովուրդը...

Այս տուն-թանգարանն իր ցուցանմունքներով հիշեցնում է Ակսել Բակունցի կյանքի եւ ուրախ, և դառն, ցավալի օրերը...

19.07.86. Թ.**ՍԻՆԱ ՎԱՊՈՒՏԻՅԱՆ**

Բանաստեղծ

Մեր մեծաթիվ մեծերից շատ քիչ մասունքներ են պահպանվել առհասարակ՝ ոչ տները, ուր նրանք ծնվել են, և ոչ էլ, մանավանդ, շիրիմները...

Ահա թե ինչու այս տունը սրբություն է մեզ համար, կրկնակի սրբություն, որովհետև փոխարինում է նաև Բակունցի չեղյալ շիրիմին...

Անհնար է առանց խոռվքի և ընդվճման շրջել այս տուն-թանգարանով, որի ցուցանմունքներն արծարծում են մեր մեջ մեծ գրողի կյանքի ճանապարհը՝ մաքուր, ազնիվ, ժողովրդականներ:

Խորին շնորհակալությամբ ուզում եմ հիշել թանգարանի դիրեկտոր Քաջիկ Միքայելյանի երկյուղած սերը դեպի իր գործը, դեպի Ակսել Բակունցը: Այդ սիրո արդյունքն են թանգարանային բարձր կուլտուրան, ճաշակը, հնարամտությունը:

14.09.71 Թ.**ՎԱՐԴԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Գրող, հրապարակախոս

Ակսել Բակունցի տուն կատարած այցս զանգեզուրյան իմ երկու օրվա վերջին երեկոյին էր: Եվ դրա մեջ, երևի, խոր իմաստ կա: Հիմա, մեր նոր արձակի մեծագույն դեմքի, մեր նոր արձակի առ-



ջևից գնացողի անըմբռնելի վախճանից տարիներ անց դժվար է պարզ բառեր գտնել՝ ասելու...ինչը զգում ես: Առջևից գնացողներն ընկնում են, ցանկության դեպքում Բակունցը կարող էր չգնալ առջևից և հիմա «երջանիկ» ծերություն կապեր ու հուշեր կգրեր: Բայց, այդ դեպքում, նա չէր լինի Ակսել Բակունց...

Միտիթարվեմք, որ նա այսօր էլ գնում է մեր նոր արձակի առջևից և, փառք Աստծո, որ այստեղ նա ապահով է ընդմիշտ:

23 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 71 Թ.**ՎԱՅՆ ԲԱԿՈՒՆՑ**

Ահա և Ակսել Բակունցի տուն-թանգարանում ենք գտնվում...

Մեր հարազատ տանը...

Նորից ու նորից հիշողությանս մեջ մերթ երևում ու մերթ անհետանում են դեպքերն ու շատ հարազատ դեմքերը...

Ալեքսանդրն աշակերտ է, ծանոթ են նրա ուսուցիչները, հարազատ է «Րևան»-ի ճամփեն, որով Ալեքսանդրը պիտի գնար ճամբարան՝ շապիկի ծոցի գրպանում ունենալով «Գորիսի հասարակության համախոսականը»:

Ահա նրա ճամբարանական ճաշափսեն «ՃՀԵ» տառերով:

Ակսելը ճամբարանի սան, Լոր գյուղ...

Ահա քաղաքագլուխ Մաթևոս Բեյը, որը մամայիս աղերսանքին, թե ինչու է ֆեյխտոնի համար բանտ խառնացրել «Էդ երեխային», ասել էր՝ դեռ նա պիտի փոթի բանտում, թող լեզուն իրեն պահի...

Ահա Ակսելը Խարկովի գյուղինստիտուտի ուսանող, հետո Չանգեզուրի գավառի գյուղատնտես, հետո գրող...

Ակսելը՝ Սևադան գրկած, ծնողներս...

Ամեն ինչ դասավորված է, մտածված ու տեղին:

Մեմորիալ սենյակը՝ մեր «կուճի» սենյակն է իր ամեն կահույքով...

Ահա հիմա ներս պիտի մտնի Ակսելը ու խոսի իր սիրած սեղանի մոտ՝ գրելու, գրելու... մինչև լույս աշխատելու...

Հիմա պիտի ներս մտնի հայրս...

Ա՛խ, ինչքան հուզիչ է ամեն ինչ...

Շնորհակալ եմ տուն-թանգարանի ստեղծողներին: Հույս ունեմ, որ մեր երիտասարդությանը այն դպրոց կհանդիսանա:

16.09.70 Թ.

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆԳԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆԳԻ ՈՂԵՂԵՆ ՕՋԱԽՈՒՄ

Բակունց գրողին տակավին դպրոցական տարիներից սիրեցի՝ ընթերցողական վայելում ունենալով Նախ Նրա «Ալպիական մա-նուշակ» գոհարակերտ պատմվածքը: Հետո, արդեն դպրոցական ծրագրերից գատ, հափշտակված ընթերցեցի «Միրիադ», «Սպիտակ ձի», «Խոնարհ աղջիկը», «Ծիրանի փողոց», «Այու սարի լանջին» ու էլի շատ սթանդարտ գրվածքներ: Եվ քանի որ չունեի բանասիրական կրթություն, շահեկանորեն միառժամանակ զերծ էի կանխակալ գրականագիտական, հաճախ սուբյեկտիվ ուղղորդումներից, տա-րակարծիք մեկնաբանություններից, ուստի կարդացածս ընկալում էի զուտ պատանեկան ջինջ հոգով՝ անմիջական ու յուրովի: Բակուն-ցը կյանքիս ուղեկիցն է. տասնամյակներ շարունակ վերընթերցում եմ ոսկեգրիչ սիրելի գրողին կրկին ու կրկին: Եվ ամեն անգամ զար-մանալիորեն չնկատված բակունցյան մի նրբերանգ, նոր ծալք եմ հայտնաբերում կամ բացահայտում ինձ համար...



ՍԵՐԺ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2020-ի սեպտեմբերի 20-ին, վերա-հաս աղետաբեր պատերազմից ու-ղիվ փախա՞ց, Ակսել Բակունցի ծննդավայր Գորիս մեկնեցի: Նպատակս տարիներ առաջ իմ ձեռք բերած, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Հենրիկ Մամյանի՝ Ակսել Բակունցին վայելուչ հագուկապով պատկերած գեղարվեստական ուշագրավ գրաֆիկ աշխատանքը գրողի տուն-թանգարանին նվիրելն էր: Միշտ խորհում էի, որ նկարի ճշմարիտ հասցեատերը, արդարև, թանգարանը և Նրա հազարավոր այցելուներն էին:

...Բացվող օրվա վաղ առավոտյան իմ մե-քենայով ճամփա ելա: Նորածագ արևի առա-ջին շողերի հետ արդեն Աշտարակից Գորիս՝ 280 կիլոմետրանոց երկարուծի՞ց ճանապար-հին եմ:

...Մայրուղու վերջնամասի աջ կողմում հին օրերի մի ցուցանակ կա՝ Օդանավակայան: Այո, մոտեցում էր Գորիսի երբեմնի աշխույժ առօրյայով ապրող ու գործող օդանավակայա-նը, որից այսօր ընդամենը բարի հիշողություն-ներ են մնացել:

Մտքիս կիզակետում դարձյալ մեր ժողովր-դի պանծալի գավակ Ակսել Բակունցն է, լու-սավոր, անհասանելի հանճարը, նա, ում հո-գու թարգման գրիչը խոսքարվեստի ինչպիսի՞ նոր որակ, ինչքան շուայլ, անխամբելի գույներ բերեց գրականության...

Խորին հարգանքով եմ աչքերիս մեջ առ-նում Բակունց ծնած այս լեռնաշխարհը...

Վերջին կեռմանի բարձունքից, լեռնագոգ տափարակի վրա, մեկնե բացվում է հիասթափե-թաղաք Գորիսի համայնապատկերը՝ կանոնա-վոր, ուղիղ փողոցներ, վարչական ու բնակե-լի շենքեր: Իսկ կանաչավետ պարտեզներով պարուրված առանձնատները բնաշխարհիկ, հայկական ժողովրդական, նաև ավանդական և արդի ճարտարապետական տարրերի հա-մադրումով զուտ գորիսյան ոճի ինքնատիպ գեղեցկագույն նմուշներ են և որոնք քաղաքին առանձնահատուկ կոլորիտ են հաղորդում: Այ-նուամենայնիվ, Գորիսի «առանձնաշնորհայլ» դիմագիծ են երկինք միտող կոնաձև «ցից» քարաժայռերը՝ քերծերը: Դրանցից փոխերի ներսում հնում համառ մարդիկ անձավ-կացա-րաններ են փորել և այդ յուրատեսակ քարա-փոր տներում ապրել սերունդներով...

Բարձունքից զնայված դիտում եմ քաղա-քը, շրջակա լեռներն ու ձորերը: Մտաբերում եմ գորիսյան տեղանունները, սակայն առանց տեղացի օգնական-հուշարարի, դժվար է որո-շակիորեն զանազանել, թե որն է Լաստի խու-թը, որը՝ Դրեզանը, Գյունեյ թաղը կամ Գալ-լաբունի ձորը, Պղնձաքարը, Շորը... Զե՞ որ դրանց մասին իրենց գրվածքներում բազմիցս հիշատակել են Ակսել Բակունցը («Կյոթես», «Բրուտի տղան» և այլն) և Վահան Բակունցը՝ իր հեղինակած «Մեծ հույզերի սերմնացանը»՝ ավագ եղբորը նվիրված հիշողությունների հիանալի գրքում:

Հատում եմ Մեղրի-Իրան և Արցախ տա-նող ճանապարհների հանգույց-խաչմերուկը, ավտոմեքենան վարում նվիրական անուններ կրող քաղաքի՝ Դավիթ-Բեկ, Գարեգին Նժդեհ, Անկախության փողոցներով և Մաշտոցի 41-ում կայանում իմ փնտրած նշանավոր տան մոտ:

Գրանիտե եռալեզու ցուցանակը ծանու-ցում է՝ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆԳԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ, ցուցատախտակի վերնամասում գրողի պրո-ֆիլով պատկերված դիմանկարն է: Տան պա-տի ոճավորված խորշում Բակունցի բազալտե կիսանդրին է՝ բարեհարմար ագուցված:

Փողոցում ուշադրությունս գրավում է սի-զամարգում ամուր ու աներեր կանգնած վիթ-խարի ընկուզենին՝ բուռն դալար լիանաներով ընդելուզված (հետո կիմանամ, որ ծառը պա-տանի Սանթրի-Ալեքսանդրի տնկածն է՝ դա-րահասակ կենդանի մասուկ-հուշարձան... Ցանկանք, ուրեմն, որ այն էլի մեկ դար այսպես խշշա կանաչ...):

Կամարածն փայտե դարպասի բաց փեղ-կով ներս եմ մտնում՝ սալարկված կոկիկ բակ, խնամված, ընդարձակ այգի և, իհարկե, գրողի հորենական տունը: Այն, կարելի է ասել մեկու-կես հարկանի է՝ լայն պատշգամբով, հնաճ



Քանցապատ դռներով ու լուսամուտներով: Տունը 19-րդ դարի վերջին կառուցել է Ակսել Բակունցի խոհեմ հայրը՝ Ստեփան Թևոսի Բակունցը:

Ծանոթանում եմ թանգարանի տնօրեն Վարդան Սարգսյանի, աշխատակցուհիներ Անժելա Միքայելյանի, Անահիտ Զարուբանյանի, Լարիսա Սարգսյանի հետ:

Ավարտվել է հերթական էքսկուրսիան: Այցելուները մոտենում, երախտագիտության անկեղծ խոսքեր են ասում աշխատակիցներին՝ սիրելի գրողի կյանքի ու գործունեության մասին Նոր, հարուստ ու հանգամանալի տեղեկություն ստանալու համար: Այցելուներից ճանաչում, ողջունում եմ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Արամ Վարդանյանին, ում հայրենի Թալինի Նշանավոր Աշխատակիցներին («Դու ծանոթ ես Աշնակ գյուղին, / Ուր ծիրանն է հասնում ճյուղին...», Գ. Եմին, «Սասունցիների պարը») մենք ընդհանուր շատ ընկերներ ու բարեկամներ ունենք: Նա տիկնոջ հետ է երևանից Գորիս եկել, և պարզապես հաճելի է իմանալ, որ նրանք էլ են բակունցապաշտներ...

Վարդան Սարգսյանն է ինձ առաջնորդում թանգարան: Նրանից տեղեկանում եմ, որ մշակութային այս օջախը 1970թ. բացվել և կայացել է տեղական իշխանությունների ջերմագին հոգածության շնորհիվ, իսկ 1976-ից՝ դարձել էրևանի Ե. Զարենցի անվան արվեստի և գրականության թանգարանի մասնաճյուղ: Զետազայում գրողի ծննդյան բարեառիք հոբելյանների՝ 90 և 105-ամյակների կապակցությամբ, այն հիմնովին նորոգվել ու բարեկարգվել է՝ վերափոխվելով հուշահամալիրի: Գովելի է սրտացավ վերաբերմունքը՝ անխաթար պահպանվել են տան բնօրինակ ճակատը և, ընդհանրապես, նրա ճարտարապետական կերպը գրեթե այնպես, ինչպես Բակունցի բնակության ժամանակ էր: Բակունցների տունը գրավիչ ու ակնահաճո է նաև իր պարզության, ինչն այցելուներին հնարավորություն է ընձեռում լավագույնս պատկերացնելու զանգեզուրյան հայկական օջախի կենդանի կյանքն ու կենցաղը:

Տնօրենը գործիմացորեն, սիրով ու արժանի հպարտությամբ է ներկայացնում թանգարանը: Անցնում ենք բոլոր չորս սրահներով, ծանոթանում հարուստ ու բազմաբովանդակ ցուցանմուշներին: Դրանք տան հնաճո կահույքը, գրողի անձնական իրերն են, գրքերը, տետրերն ու փաստաթղթերը, ժամանակի պարբերական մամուլում հրապարակված նյութերը՝ գրական և մասնագիտական (ճիշտն ասած, թող ինձ ներվի, հոգուս խորթում ափսոսանք եմ զգում, որ մեր արձակի անգուցական վարպետը, մասնագիտության և աշխատանքի բերումով, թանկագին ժամանակ է վատնել բազմաբանակ գյուղատնտեսական թեմաներով հոգվածների, ուղեցույցների ու գրքույկների վրա...):

Գրողի ննջարանում նրա մահակալն է, հագուստը, աշխատասեղանն ու աթոռը, մայրիկի գործած գունագեղ գորգերից: Զարևանությամբ նաև փոքրիկ խոհանոց կա և թոնիր, որտեղ հոգատար, անխնայ Բոխչագյուղ մայրիկը լավաշ է թխել, հեաը մեջը համով բաղարջ ու



Երախտագետ Սարիամ Ասլամազյանն էլ է բարի հիշատակ թողել տուն-թանգարանին, ասել է թե՛ Բակունցների հյուրընկալ օջախին:
Նկարչուհին, ի սեր անմոռաց ընկերոջ՝ Ակսելի, հետագայում պատկերել է նրան սիրելի մայրիկի հետ՝ Գորիսի երկնամուխ, արևառ ժայռերի ֆոնին: Զիմա թանգարանին մի առանձնակի շուք ու հմայք է տալիս այս բազմախոսուն հոյակապ յուղաներկ կտավը:

գաթա...

Չաջորդ սրահի պատին «Ակսել Բակունցի մոր դիմանկարը» յուղաներկ աշխատանքն է, որի հեղինակը մեծն Սարտիրոս Սարյանն է: Կտավից՝ Վարպետի հավերժացրած անթարթ հայացքով Նայում է Բոխչագյուղ մայրիկը: Այստեղ անհրաժեշտ փոքրիկ նախապատմություն.

1935թ. ամռանը նկարիչ ընկերների հետ Գորիս է գալիս Մ. Սարյանը և իր պարտքն է համարում անպաման այցելելու Ակսել Բակունցին:

– Ակսելի հրճվանքին չափ ու սահման չկար, – գրում է Վահան Բակունցը: – Նրանք երկարատև ուրախ գրուցում են:

– Այստեղ ինչ-որ կարոտ էր առաջացել գույների ու խոսքի մեծ Վարպետների միջև, – դիպուկ նկատում է Վ. Բակունցը:

Եվ Վահան Բակունցը, և՛ Սարիամ Ասլամազյանն ակնատես են եղել նկարի կերտմանը: Իրենց հուշագրություններում նրանք հաճույքով են պատմում այդ եղելությունը: Վ. Բակունցն իր «Մեծ հույզերի սերմնացանը» գրքում հիշում է, որ Մ. Սարյանը Գորիս էր եկել նկարելու «ինքնատիպ ու գեղեցիկ բնությունը»: Գորիսով հիացած Վարպետին արդեն հասկանալի է դառնում, «թե որտեղից են Ակսելի սքանչելի սյուժեները... Այդ բոլորը Գորիսի անսման բնությունն է նվիրել նրան»:

Սարիամ Ասլամազյանն էլ «կյանքիս դավթար»-ում հիշատակում է. «Ակսելը Սարյանին հրավիրեց իր տանն ապրելու և ստեղծագործելու:

Այս ընթացքում Սարտիրոս Սերգեյիչը նկարեց Ա. Բակունցի մայրիկի դիմանկարը և նվիրեց նրան»: Ակսելը երեխայի պես ուրախացել էր նկարի համար: Նա հիացմունքով մորն ասում էր. «Դու գիտե՞ս, թե ո՞վ է նկարել թո դիմանկարը: Մենք բոլորս էլ կիռնանանք այս աշխարհից, իսկ այս նկարը կմնա հավերժ»:

Այստեղ արժե մեջբերել նաև Վահան Բակունցի հիշատակած այն դրվագը, թե ամոթխած մայրն ինչքան է նեղվել նկարվելիս: Նա հետո զանգատվել է, որ իրեն անշարժ «մին ժամից ավել էր մարդը նստացրել ա չոր աթոռին, թա պատկերդ բաշտում եմ: Զոգիս տյուս եկավ, համույթից քիչ էր մնում տափը ճովեր, մեջը մտնեմ: Բա կնիկարմատը եղբան վախտ խալիսի տղամարդու երեսին կշեշի»:

Երախտագետ Սարիամ Ասլամազյանն էլ է բարի հիշատակ թողել տուն-թանգարանին, ասել է թե՛ Բակունցների հյուրընկալ օջախին:

Նկարչուհին, ի սեր անմոռաց ընկերոջ՝ Ակսելի, հետագայում պատկերել է նրան սիրելի մայրիկի հետ՝ Գորիսի երկնամուխ, արևառ ժայռերի ֆոնին: Զիմա թանգարանին մի առանձնակի շուք ու հմայք է տալիս այս բազմախոսուն հոյակապ յուղաներկ կտավը:

Կանգ ենք առնում ցուցանակի պատին փակցված մի հնօրյա փաստաթղթի առջև և ուշադիր ընթերցում եմ:

Դարձյալ փոքրիկ ծանոթագրություն. Ակսել Բակունցի կենսագրության հայտնի փաստ է, որ 1910թ. մայիսին նա բարձր առաջադիմությամբ ավարտում է Գորիսի հնգամյա ծխական դպրոցը: Ծակատագրորեն բախտորոշ է լինում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանի առաջադեմ սան, ազգակից Երեմիա Բակունցի խորհուրդն Ալեքսանդրին՝ ուսումը շարունակելու հեղինակավոր Նոյն կրթօջախում՝ ճեմարանում: Գործը հաջող ընթացք է ունենում. մի մեծ խումբ համախոհ, մտավոր գորիսցիներ «ԽՈՒՆԱՐԶ ԽՆԴԻՐ»-ով և «որդիա-

կան վստահությամբ» դիմում են հղում Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Մաթեոս Բ-ին՝ «Ձեր հայրական խնամքը վայելիղ ճննարանի գիշերօթիկ սաների շարքում ընդունելու տեղույս ծխական դպրոցը ամենագովելի ու առանձնահատուկ ընդունակությամբ ավարտած Ալեքսանդր Ստեփանի Թևոսյան Բակունցին»։ «Առ որ միամբ Ձերո Սրբազան Օծուխյան Սրբազնագույն աջը համբուրող ամենախոնարհի որդիք։ 1910թ. 10-ն օգոստոսի, քաղ. Գորիս»։

Խնդրագրի վերջում հերթով ստորագրել են 152 մարդ: Այսպիսով, բարի կամքի տեր արժանապատիվ այդ մարդիկ, տաղանդավոր, օժտված պատանու առջև բացեցին լույսի ու լուսավորության Նախադուռը՝ ժամանակի հետ գիտության դժվարավերել, բարձրագույն աստիճաններով ելնելու ... հայ արձակի գագաթը...

Դրում, արևոտ պատին հենած ցանցավանդակներում, զանազան թռչուններ են պահվում: Դրանցից ամենաշքեղը, իհարկե, փասիանն է՝ միրիավը՝ իբրև կենդանի խորհրդանիշ Ակսել Բակունցի անմահ «Միրիավի»: Խորհրդանշական է և այն իրողությունը, որ տուն-թանգարանին կից գործող գրական ակումբը նույնպես «Միրիավ» անունն ունի: Այստեղ հանրության համար պարբերաբար կազմակերպվում են գրական-երաժշտական միջոցառումներ, ընթերցումներ, գրքերի շնորհանդեսներ, ավելի խորությամբ է ուսումնասիրվում Բակունցի գրական ժառանգությունը, անդրադարձվում կատարվում Ջայաստանի գրական և մշակութային կյանքին:

Իշխում ենք ներքևահարկ: Այստեղ
Բակունցի ընտանիքի մառանն է, հա-
ցատուկը և խոհանոցը՝ մեծ թոնիրով,
առաստաղից չորս լարով կախված՝
դարս-դարս լավաշի տախտակամա-
ծով, հևառն կոմոդով, մեծ ու փոքր
կճուճներով, կուժ ու կովայով,
պղնձե, փայտյա և խեցեղեն կեցեա-
ղային իրերով:

Այցելել եմ նաև Վահան Տեր-
յանի և Հովհաննես Թումանյանի
տուն-թանգարան դարձած հայրա-
կան օջախները: Ճշմարիտ է՝ բոլորն
էլ հայկական-հայաշունչ են, սակայն
առաջինում Ջավախքին, մյուսում՝ Լոռուն,
իսկ այստեղ Չանգեզուրին բնորոշ իրերն ու
կենցաղավարությունն են՝ նկատելի զանազա-
նություններով: Եվ դա բնական է. չէ՞ որ Պատմահայր
Խորենևացու համար Հայաստանի ամեն երկրամաս մի ...
աշխարհ էր ...

Հուշահամալիրի ունագրավ մաս են բազալտյա ժանեկազարդ խաչքար-շատրվանը՝ ցայտադյուրով և ծառաբների վրա արված քանդակները: Հատկանշական է, որ ժամանակին Ակսել Բակունցի ծնեթով տնկված թթենի և երկու ընկուզենի, մոտ 80-90 տարի մարդկանց առատ պտուղներ շրայելուց հետո, երբ ծերացան ու չորացան, գորիսեցի շնորհաշատ նկարիչ ժիրայր Մարտիրոսյանը դրանց հաստարուն բնափայտը կերպավորելու իրեն բակունցյան գրական հերոսներ՝ Սոնա («Միրհավ»), Արթուր պապ («Նամակ ոռուս թագավորին») և գրողի մարիկին՝ գանգեղության գլխախապով:

Քայլում ենք այդու բարձր ծառերի և վարդենիների միջով: Ուղեբերս գետնին եմ դնում մի տեսակ երկյուղածորեն, ավելի հուզումնային... Ախր ուրիշ խորհուրդ ունի այս այգին, ուր մեծն Բակուկցի հեռավոր ոտնահեռեթերն են...Այգին թթթում է կանաչ շնչով ու արևահամ պտուղներ տալիս: Թանգարանի ստորեկնին խնդում են ցույց

տալ բաղադրանքի այն ծառը, որի զովասուն սաղարթների ստվերում փռված կարպետների ու գորգերի վրա հանգստացել է Բակունցը, պարապել ժամերով ու զրել, հաճախ էլ՝ խնջոյքներ արել։ Ահավասիկ, հիշատակման արժանի էլի բանի պերճախոս տողեր Մ. Ալամազյանի «Կյանքիս դավթար»-ից.

«Մի անգամ Գիշուկը (Բակուկոսի փոքր եղբայրը-Ս. Մ.) եկավ մեզ մոտ սովորականից շուտ: Ակսելն էր ասել, որ թողնենք ամեն ինչ և շտապենք նրա մոտ: Բակ մտնելով՝ բոլորս մնացինք զարմացած. չորս կողմը հյուրեր: Սեղանի գլխամասում Ակսելն էր. նա թամադա էր: Մոտեցավ մեզ և ասաց. «Ես կատարում եմ Շիրվանի պատգամը: Նա ինձ պարտավորեցրել է, որ իր մահվան օրը մեծ սեղան գցեմ, հրավիրեմ նրանց, ում ես կցանկանամ, ինքս լինեմ թամադա ու բեֆ անենք և հիշենք նրան առանց տխուր խոսքերի՝ որպես ընկերոջ և գրող Ալեքսանդր Շիրվանզադեի: Այսօր առավոտյան ես հեռագիր ստացա և հիմա կատարում եմ հանգուցյալի կամքը»: Այդ երեկո Ակսելը ավելի տրամիկ ու նրբախոս էր, երկար պատմում էր իր ու Շիրվանի հանդիպումների և արկածների մասին»:

4. Սարգսյանն ասաց, որ, ցավով արտի, այլևս չկա այդ «պատմական» տանձենին, սակայն «մի հուսադրող փաստ. Նախկին ծառի դեռևս կենտուկակ արմատից ահա այս դալար շիվն է աճում, և մենք հատուկ խնամք կտանենք, որպեսզի աճի, կրկին մեծ տանձենի դառնա»: Ձեռնահաս տնօրենը տևկարան է հիմնել, որով շարունակաբար կազմակցելի, կերիտասարդացնի այս նշանավոր այգին: (Ես էլ, ի դեպ, խոստացա Աշտարակի իմ այգուց այստեղ հասցնել արտավոր խոշոր պտուղների տվով ընկուզենու, որի «հայրը», ասում են, սերում է Յդու Նախկին պրեմիեր-մինիստր Ինդիրա վարյի այգուց...):

...Արևը դեպի մայրամուտ է թեքվում: Ես տուն-թանգարանին եմ հանձնում բերածս նկարը:

Այգու տաղավարում եղավ հյուրասիրություն: Թարմ լավաշ, ընկույզ ու ծաղկաբույր մեղր, մրգեր... Յուրթեր իսնձորների «հեղինակն» էլ է Բակունցը: 1920-ականնե-
րի կեսին գյուղատնտես Ալեքսանդր Բակունցի ներմու-
ծած ծառերի «ժառանգներից են», որոնք պատվաստի
եղանակով վաղուց ի վեր տարածվել են Գորիսում և
շրջակայքում:

Թե՛ եւ մատուցում Բակունցի ընտանիքի մեծ ինքնատեղի: Բուրավետ է, բանգի Գուսան Աշոտի գովերգած «ծաղկավառ Չանգեգուրի հազար տեսակ վարդերից» ու լեռնային թեյախոտերից է «առել սևուկ»:

Եւ շնորհակալություն եմ հայտնում և հրաժեշտ տալիս մեծն Ակսել Բակունցի հիշատակը վառ պահող նկիրթ աշխատակազմին: Հրաժեշտ եմ տալիս և Ակսել Բակունցի նորոգյա ոգեղեն, հայաշունչ օջախին ու բռնում վերադարձի ճանապարհին:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ», 2021 թ., N 15

**Ճակատագրորեն
բախտորոշ է լինում Մայր
Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան
ճեմարանի առաջադեմ սան, ազ-
գակից Երեմիա Բակունցի խորհուրդն
Ալեքսանդրին՝ ուսումը շարունակելու
հեղինակավոր նույն կրթօջախում՝ ճեմա-
րանում: Գործը հաջող ընթացք է ունե-
նում. մի մեծ խումբ համախոհ, մտավոր
գորիցիներ «ԽՈՆԱՐՀ ԽՆԴԻՐ»-ով և
«որդիական վստահությամբ» դիմում
են հղում Ամենայն Հայոց կաթո-
ղիկոս Ս. Ս. Մաթեոս Բ-ին**



ԱՎՍԵՆ ԲԱԿՈՒՆՅԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ




Տուն-թանգարանի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 1970 թ. սեպտեմբերի 17-ին: Մինչ այդ տան կեսը վաճառված է եղել: 1970 թվականին Բակունցի 90-ամյակի կապակցությամբ տունը հետ է գնվել: 2011 թ. կատարվել է հիմնանորոգում: Տուն-թանգարանը հիմնադրվել է 1968 թ. Գորիսի այն տանը, որտեղ ծնվել է Ավսեյ Բակունցը: Գտնվում է Գորիս քաղաքում՝ Մաշտոցի փողոցի 41 հասցեում: Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի մասնաճյուղն է:



ԱՎՍԵԼ ԲԱԿՈՒՆՅԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ



Թանգարանն ունի շուրջ 500 ցուցանմուշ, այդ թվում լուսանկարներ, իրեր, առկա են նաև հազարավոր գիտաօժանդակ նյութեր: Դրանք ներկայացնում են գրողի ուսումնառության տարիները, զինվորական կյանքը, զրական բեղմնավոր գործունեությունը: Այստեղ է պահվում նաև հարուստ գրադարանը:



ՀԻՇՏԱՍԱԿԻ ՀԱՎԵՐԺԱՅՈՒՄ

Ակսել Բակունցին Նվիրված տոն Խարկովում. բացվեց հուշաքար

Ակսել Բակունցի ծննդյան 120-ամյակին ընդառաջ՝ 2019 թվականի մայիսի 25-ին, Խարկովի Վ. Դոկուչանի անվան ազգային ագրարային համալսարանում տեղի ունեցավ հիշարժան իրադարձություն՝ հանդիսավորությամբ բացվեց հուշաքար՝ պատմական հավերժախոս վկայությամբ, որ 1920-1923 թվականներին այդտեղ ուսանել է հայազգի մեծանուն արձակագիր Ակսել Բակունցը՝ ստանալով ագրոնոմի որակավորում:

Ազգանվեր Նախաձեռնությունը պատկանում է Խարկովաբնակ Նվիրյալ մի ընտանիքի՝ ի դեմս Արմեն Թամազյանի, ով Նաև հուշակոթողի հեղինակն է և Սուսաննա Ղազարյանի, ով, լինելով Վասնդորի Ակսել Բակունցի անվան միջնակարգ դպրոցի և տեղի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արժանավոր շրջանավարտը, երկար տարիներ Խարկովի հայկական կիրակնօրյա դպրոցում հայոց լեզու և գրականություն է դասավանդել հայ երեխաներին՝ օտար ափերում վառ պահելով հայ մշակույթի ջահը: Ձեռնարկի իրագործմանն իրենց նպաստն էին բերել Նաև Խարկովի հայ հոգևոր դասի ու հայկական համայնքի ներկայացուցիչները, ԽԱԱՀ-ի ղեկավարությունը՝ հանձին ղեկավարող Ա. Ուլյանցենկոյի:


Հուշաքարի բացմանը ներկա էր Խարկովի բարձրաստիճան էլիտան, որոնց թվում Խարկովի մարզային խորհրդի Նախագահ Ալեքսեյ Չերնոկը, Խարկովի տարածաշրջանային պետական վարչության պետի տեղակալ Անատոլի Բաբիչևը, Խարկովի շրջանի վարչակազմի ղեկավար Յուրի Ռախնան, Հայ առաքելական եկեղեցու Ուկրաինայի թեմի առաջնորդ Մարկոս Սրբազանը, Հայ Առաքելական Ուղղափառ եկեղեցու «Սուրբ Հարություն» եկեղեցական համայնքի Նախագահ Արմեն Բակմանյանը, Ուկրաինայի հայերի միության գործադիր տնօրեն Հովակիմ Հարությունյանը, Խարկովի հայ համայնքի

Հայաստանից՝ Բակունցի ծննդավայր Գորիսից, Նույնպես պատվիրակություն էր այցելել Խարկով, որոնց թվում՝ Գորիսի պետական համալսարանի գիտական քարտուղար, գրականագետ Թեմիլա Մարությանը, ՀՀ Նկարիչների միության Սյունիքի մասնաճյուղի Նախագահ, գեղանկարիչ Ժիրայր Մարտիրոսյանը, գրողի ազգականներից Արմիկ Բակունցը:

”

քի Նախագահ Արամայիս Հովհաննիսյանը, Խարկովի հայ հոգևոր հովիվը՝ Սուրբ Հարություն եկեղեցու քահանա Տեր Սկրտիչ Գրիգորյանը և ուրիշներ: Հուշաքարը բացվեց Խարկովի ազգային ագրարային համալսարանի ղեկավար Ա. Ուլյանցենկոյի անմիջական մասնակցությամբ, թեմի առաջնորդ Մարկոս Սրբազանի օրհնության աղոթքով:

Հայաստանից՝ Բակունցի ծննդավայր Գորիսից, Նույնպես պատվիրակություն էր այցելել Խարկով, որոնց թվում Գորիսի պետական համալսարանի գիտական քարտուղար, գրականագետ Թեմիլա Մարությանը, ՀՀ Նկարիչների միության Սյունիքի մասնաճյուղի Նախագահ, գեղանկարիչ Ժիրայր Մարտիրոսյանը, գրողի ազգականներից Արմիկ Բակունցը: Հանդիսության պատվավոր հյուրերից էր Ուկրաինայում հայտնի հայագետ, բազմաթիվ հայագիտական ուսումնասիրությունների հեղինակ Իրինա Գալուկը՝ Լվովից: Մոսկվայից հանդիսությամբ մասնակցում էր արմատներով Գորիսից,



Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Մարտիկ Գասպարյանը, ինչպես նաև Ուկրաինայի հայազգի վաստակավոր գեղանկարիչ, արմատներով Կապանից Գառնիկ Խաչատրյանը՝ Դնեպրից:

Ներկաները բարձր գնահատեցին Նախաձեռնությունը՝ համարելով այն հայ-ուկրաինական մշակութային հարաբերությունների սերտացման յուրօրինակ կամուրջ, որ կապում է հայ ժողովրդի նշանավոր գրողն ու Խարկովի ագրարային համալսարանի շրջանավարտը՝ Ակսել Բակունցը: Ինչպես իր խոսքում նշեց ԽԱԱՀ-ի ղեկավար Ուլյանցենկոն՝ պատահական չէ, որ այդ կարևոր իրադարձությունը տեղի է ունենում հենց շրջանավարտների խորհրդանշական օրը, ինչը նշանավորվեց նաև հայազգի գրողի՝ Խարկովի ագրարային համալսարանի երբեմնի տաղանդավոր շրջանավարտը լինելու պատմական փաստով և գրեթե 100 տարի անց դրա փառահեղ վկայա-



կոչմամբ:

Հուշաքարի բացմանը հաջորդեց համալսարանի 203-ամյա պատմությունը ներկայացնող թանգարանում Բակունցին նվիրված ցուցափեղկի բացմամբ, թանգարանի տնօրեն Էլենա Գոլիկովայի բովանդակային ելույթով ու ներկաների ջերմ տպավորությունների փոխանցմամբ: Համալսարանի արխիվից առաջին անգամ թանգարանում ցուցադրվեց 1923թ. ավարտական փաստաթուղթը, որը վկայում է Ակսել Բակունցի՝ Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտի (հիմա՝ ԽԱԱՀ) շրջանավարտը լինելու բարեշահ փաստը:

Հրավիրված էր նաև կլոր սեղան, որն ուղեկցվեց մեծարման ելույթներով, Բակունցի կյանքի ու ստեղծագործության շուրջ թեմատիկ զեկուցումներով, բազմաթիվ շնորհակալագրերի ու հուշանվերի հանձնմամբ, ուղերձների ներկայացմամբ: Համալսարանի ղեկավարությանն ու Թամազյան ընտանիքին շնորհակալագրեր փոխանցվեցին Հայաստանի գրողների միության, Հայաստանի գյուղատնտեսության նախարարության, Գորիսի պետական համալսարանի, Գորիսի համայնքապետարանի, Ռուսաստանի արվեստի ակադեմիայի, հայկական այլ կառույցների ու կազմակերպությունների, ինչպես նաև անձամբ Բակունցի ընտանիքի՝ Նրա թոռնուհիներ Ալլա ու Իրինա Բակունցների կողմից:



Միջոցառման մասնակիցները համայն հայության անունից երախտագիտություն հայտնեցին Թամազյան ընտանիքին, Խարկովի հայ հոգևոր դասի ներկայացուցիչներին, խարկովաբնակ հայերին, Բակունցի ուսանած համալսարանի ղեկավարությանը՝ ի դեմս ռեկտոր Ա.Ուլյանցենկոյի, պրոռեկտոր Ս.Վասիլիշինի, ովքեր ամենայն սիրով ու պատրաստակամությամբ ուղջունեցին մշակութամեր գաղափարը և ամեն կերպ աջակցեցին դրա իրականացմանը՝ ի նշան երկու երկրների բարեկամության,

Խարկովի հայ համայնքի հետ կապերի ամրապնդման:

Բացառիկ նվիրումի ու համատեղ ջանքերի շնորհիվ հեռավոր Խարկովում՝ իր ուսանած բուհի երկրորդ մասնաշենքի կենտրոնական մուտքի դիմաց հուշաքարի տեսքով այսուհետ հազարավոր ուսանողներին կողջունի Ակսել Բակունցի իմաստուն հայացքը՝ մնայուն գրով առ այն, որ հայ ժողովրդի մեծանուն զավակն է և այդ տարաշխարհիկ, բայց սիրելի կրթօջախի արժանավոր շրջանավարտը:

ՆՆՆԱ ՄԻՇՈՅԱՆ

ՀԻՇՏԱՎԿԻ ՀԱՎԵՐԺԱՅՈՒՄ



Բակունցի կիսանդրին՝ Գորիսի Ա. Բակունցի անվան դպրոցի բակում



Գորիսի Ակսել Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոցի համար 2022-2023 ուսումնական տարվա մեկնարկը ոչ միայն առանձնահատուկ էր կապիտալ վերանորոգված շենքային նոր համալիրի գործարկմամբ, այլև մուտքի մոտ Ակսել Բակունցի կիսանդրու բացման արարողությամբ:

Նախաձեռնության կյանքի կոչման գործում իր համեստ ավանդը ունի Նաև Ակսել Բակունցի տուն-թանգարանը, որ ի սկզբանե հետամուտ էր գրողի անունը կրող դպրոցի բակում նրա հուշարձանը տեղադրելու գործին:

Քանդակագործը սյունեցի տաղանդավոր արվեստագետ Միխայել Ղուկասյանն է, ով, ցավոք, երկրային կյանքին հրաժեշտ տվեց կիսանդրին ավարտին հասցնելուց օրեր անց... Ակսել Բակունցի հերթական քանդակը դարձավ նրա վերջին կոթողային գործը՝ որպես նվիրում գրողին և նրա անունը կրող դպրոցին:

Բակունցի կիսանդրու բացումն իր անունը կրող դպրոցի բակում կատարեցին Միխայել Ղուկասյանի դպրոցահասակ թոռնիկները, ինչպես և ցանկացել էր քանդակագործը:

ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՎԵՐԺԱՅՈՒՄ



Հուշատախտակ և հուշասյուն Ա. Բակունցի երևանյան տան առջև (Նալբանդյան 96) 1970թ., ճարտ.՝ Օ. Շոկարև, քանդ.՝ Է. Աղայան



2019թ. հունիսի 13-ին հուշատախտակ տեղադրվեց Գորիսի Կոմիտասի փողոցի այն շենքի պատին, որտեղ գործել է քաղաքի երբեմնի ծխական դպրոցը, որտեղ 1905-1910թթ. ուսում է ստացել Բակունցը

Ակսել Բակունցի անվան N7 հիմնական դպրոցը Վանաձորում



ՀԻՇՏԱՎԿԻ ՀԱՎԵՐԺԱՅՈՒՄ

2016 թ. հոկտեմբերի 7-ին Ազգային գրադարանում տեղադրվեց Ակսել Բակունցի կիսանդրին


Կիսանդրին կերտվել է Սուրեն
Խաչատրյանի նախաձեռնությամբ և
հովանավորությամբ: Քանդակագործ՝
ՀՀ ժողովրդական նկարիչ Գեորգի
Բաղդասարյան



Ա. Բակունցի կիսանդրին՝
տուն-թանգարանում



Բակունցի տուն-թանգարանի մուտքի մոտ
գտնվող արձանը, քանդակագործ՝ Միխայել
Ղուկասյան



Տուն-թանգարանի բակի խաչքարը, քանդակագործ՝ Ռազմիկ
Արզումանյան: Խաչքարը կերտվել է Սուրեն Խաչատրյանի
նախաձեռնությամբ և հովանավորությամբ

Աշխարհքս միշտ կմնա, ասա մարդը սևերես չմնա...

«...Թե հայերը թուրքի են սպանում, ախր դուք էլ հայ եք, բա ձեզ ինչո՞ւ են սպանում»:

* * *

Մի անծանոթ մարդ եթե անցներ փողոցով, պապս մեզանից մեկն ու մեկին շտապ կասեր.
– Դեհ էր դարձրի լիներ... Շուտ հասի կանչի, թող մեր տունը գա...

* * *

Իմ խոսքն էն է, որ էլի մենք իրար ցավ կիմանանք: Սրտից սիրտ մի բարակ կամուրջ է, էն է մարդուն մարդ դարձնողը: Էն էլ որ չլինի, գետը թող քշի տանի մարդուն: Էն որ կռունկը թուխայի մեջ ցրիվ է գալիս, լսե՞լ եք ոնց են իրար կանչում, ու մինն էլ է չի կորչում: Ուրեմն մենք էն երկնային թռչունի չափ էլ չկանք... Իրար ձեռք բռնեցեք, միևեկ դուրս գանք էս դժվար տարին:

... Դրե հա՛... Մեղրաբերծը կարմրեց: Էսօր վերին թաղում ասում էին, որ Եղաբար ծյուն չկա: Դիմացեք հա՛, ձեզ մատաղ, շատը գնացել է, մնացել է քիչը: Եղաբարում որ ծյուն չկա, ուրեմն Էսօր-Էբուց Միջևառի հանդերը կբացվեն, Եզնարածի առվի տակ դաղծ կլինի, ի՞նչ դաղծ... Քիչ է մնացել, Աթա ապերը

ձեզ մատաղ: Մանր-մունրին մի կերպ արեք, դուք էլ գոտիներդ պնդացրեք...

* * *

Այդքան գեղեցիկ և հնչեղ էր Կյորեսի լեզուն: Նա մի չքնաղ գորգ էր՝ նախշերով և վարդ ծաղիկներով մի հին գորգ, ինչպես Մինայի աղջիկ ժամանակ գործած գորգը, որ փռված էր Զաստ Ներսես բեյի դահլիճում: Ինչքան հնանում և մաշվում էր, այնքան շքեղանում էին գորգի գույները, և պատահում էր, որ Մինան, երբ այդ հին գորգը տանում էր գետը և լվանում էր, Մինան լաց էր լինում, և նրա հետ լաց էր լինում Կյորեսի լեզուն...

* * *

...Չուտեիր ու չիմեիր, այլ միայն այդ լեզվով խոսեիր կամ լսեիր, թե ինչպե՛ս քաղցր ու նուրբ հնչյուններով խոսում է լվացարարուհի Մինան, ինչպե՛ս էր ծոր տալիս, ասես ոչ թե խոսում, այլ ճախարակի առաջ բարակ երգ էր ասում ու բառերը նստում էին, ինչպես փափուկ մալանչներ... Այդ լեզու չէր, այլ կարոտ, տիրույթյուն, զայրույթ, այդպես Ղաթրինի ծորում երգում էր կաթավը և մթնում կարկաչում էր Ցուրտ աղբյուրը...



...Էսօր դուման է մեր լեռան վրա, վաղը նորից արև կծագի

– Հաղ մի երթամ տեսության մըր քարերին, մըր ձորերին, մըր Մարութա բանձր սարին: Առնիմ զիմ ծիրանի փող, ժողվիմ մարդերու, նստիմ անուշ խոտերու վրեն, հանց գառներ մարդիկ նստեն զիմ չորս բոլոր, երգեմ էնոնց խաղաղության զիմ երգեր, մարդիկ հալալ զուլալ ախպրտոց պես գրկեն զիրար, չեղնի ոչ տեր, ոչ մշակ, ոչ թուր, ոչ բռնություն: Փչեմ զիմ ծիրանի փող, էլման ծուխ բարձրանա երդիկներեն, խմեմ մըր լուս աղբըրներեն, զիմ քրտինք կաթա մըր քարերու վրեն, մըր բանձր սարի ամպ թող լիզա զիմ սիվտակ ոսկորներ...

ՀԱՅՐՈՒ, ԸՍՏ ԲԱԿՈՒՆՑԻ «ԾԻՐԱՆԻ ՓՈՂԸ» ՊԱՏՄՎԱԾԵԻ

